ԷՋԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

ՀԱՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

СТРАНИЦЫ ИСТОРИИ И ФИЛОЛОГИИ АРМЯНСКОГО НАРОДА

(СБОРНИК СТАТЕЙ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1971

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷՋԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ

(ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Ա II
կ 63/55

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1971

Э (С 43)
Է 2

Տպագրվում է Հայկական ՍՍՀ
ԴԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Վ. Բ., ՀԱԿՈԲՅԱՆ Վ. Ա.

1—6—4



Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ն վ ի ր վ ու մ է
Հայկական ՍՍՀ Գիտությունների
ակադեմիայի իսկական անդամ
ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ծննդյան 80-ամ յակին

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Միջնադարյան Հայաստանի և հայ ժողովրդի պատմության նոր ժամանակաշրջանի պատմական և բանասիրական բնույթի բազմազան խնդիրներ շոշափող այս ժողովածուն նվիրվում է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակին: Աշոտ Հովհաննիսյանը իր գիտական, հեղափոխական, հասարակական-քաղաքական և մանկավարժական երկարամյա գործունեության ընթացքում անբասիր աշխատանք է կատարել մեր ժողովրդի հոգևոր կյանքի անդաստանում և պատվավոր տեղ գրավել նրա արժանավոր զավակների շարքում:

Գործունեության ասպարեզ մտնելով դեռևս նախահեղափոխական ժամանակաշրջանում, նա ամբողջովին ծառայագրվեց իր ժողովրդին, զարմանալի հմտությամբ կարողացավ զուգակցել հեղափոխական գործչի դժվարին աշխատանքը գիտնականի անխոնջ պրպտումներին, հանդես գալով իբրև քաղաքացի և գիտնական:

Աշոտ Հովհաննիսյանը, որպես հեղափոխական-քաղաքական գործիչ, գործուն մասնակցություն ունեցավ հեղափոխական պայքարին, մարտեց սովետական կարգերի հաստատման համար մղված գոտեմարտերում, ակտիվորեն մասնակցեց մեր երկրում սոցիալիզմի կառուցման աշխատանքներին: Նա կուսակցական մեծ աշխատանք տարավ մեր հանրապետությունում ժողովրդական տնտեսության վերականգնման և ինդուստրացման տարիներին՝ վարելով Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղարի պարտականությունը:

Այդ ամենին զուգընթաց, Աշոտ Հովհաննիսյանը հայ իրականության մեջ հանդես եկավ որպես պրոֆեսիոնալ մարքսիստ-պատմաբան, իր գիտական հետազոտություններ ի շրջանակների մեջ առնելով հայ ժողովրդի բազմադարյան պատմության կարե-

վորագույն պրոբլեմները՝ հատկապես հասարակական-քաղաքական հոսանքների և սոցիալական-ազգային ազատագրության պայքարի առանցքային հարցերը: Նրա տարիների ուսումնասիրության արդյունքները հետագայում ամփոփվեցին «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկուական հատորներից բաղկացած կապիտալ աշխատություններում, որտեղ դրվեցին և գիտական լուծում ստացան բազմաթիվ բարդ ու կենսական հարցեր:

Աշոտ Հովհաննիսյանը հայ պատմագրության մեջ առաջիններից մեկն էր, որ ձեռնարկեց սովետական իշխանության համար հայ ժողովրդի մղած պայքարի պատմության գիտական ուսումնասիրությանը, իբրև մասնակից ապրելով դեպքերը և որպես պատմաբան՝ վերլուծելով դրանք:

Ներկա ժողովածուն գիտական հարցերի լայն շրջանակներ է ընդգրկում: Եվ դա պատահական չէ, որովհետև նույնքան լայն և բազմակողմանի են Աշոտ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունները:

Սույն ժողովածուն հարգանքի և գնահատության մի տուրք է այն մեծ ծառայություններին, որ մատուցել է ու մատուցում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը հայ պատմագրությանը:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

Աշոտ Հովհաննիսյանը այն գիտնականներից է, որոնք իրենց կյանքը իմաստավորել են ստեղծագործական անդուլ աշխատանքով — ստեղծագործության մեջ տեսել կյանքի իմաստը։ Վաղ պատանեկության տարիներից մինչև իր կյանքի ներկա իններորդ տասնամյակը գիրը և գրականությունը, ստեղծագործական անդադար ոգորումները եղել են նրա կյանքի անբաժան ուղեկիցը։ Դեռ այժմ էլ նույն ինքնամոռացությամբ և անձնվիրությամբ է նա ձեռնամուխ լինում աշխատանքի, ինչպես այն տարիներին, երբ հաճախում էր ռեալական ուսումնարան և առաջին ծանոթությունն էր հաստատում գիտության հետ։

Հայ ժողովրդի և ռուսական կայսրության մյուս ժողովուրդների համար նշանակալից մի ժամանակաշրջանում ծնվեց ու գործունեության ասպարեզ իջավ Աշոտ Հովհաննիսյանը։ Դավառական փոքրիկ հայկական քաղաքում, ուր գրեթե լիովին տիրում էին ազդայնական տրամադրություններ, նոր աչք բացած պատանին, անձնատուր չլինելով այդ տրամադրություններին, իր ժողովրդի փրկության ուղին տեսավ նրա սոցիալական ազատագրության, Ռուսաստանի բոլոր ժողովուրդների համատեղ մղվելիք հեղափոխական պայքարի մեջ, որդեգրեց մարքսիզմի գաղափարախոսությունը և կանգնեց պրոլետարիատի դասակարգային կուվի դիրքերում։ Նա մեկն է քսաներորդ դարասկզբի հայ մարքսիստ այն մտավորականներից, որոնք բոլորանվեր լծվեցին հայ և մյուս ժողովուրդների սոցիալական ու ազգային ազատագրության վեհ գործին։

Քսաներորդ դարասկզբի հայ իրականության մեջ լինելով առաջին պրոֆեսիոնալ մարքսիստ պատմաբաններից մեկը, Աշոտ

Հովհաննիսյանը մեծ ծառայություններ մատուցեց ոչ միայն հեղափոխության գործին, մարքսիզմի բանավոր ու գրավոր պրոպագանդային, այլև դարձավ հայ մարքսիստական և սովետահայ պատմագրության հիմնադիրներից։

Աշոտ Հովհաննիսյանը ծնվել է 1887 թվականի հունիսի 17-ին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում՝ հայ իրականության այն վայրերից մեկում, որը նշանակալից հետքեր է թողել մեր ժողովրդի վերջին ավելի քան երկու հարյուրամյակի պատմության մեջ։ 18-րդ դարի տասական թվականներին հայկական սղնախներից Սվան-Յուզբաշու հիմնած նշանավոր «Շօշ» բերդը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին դաղափարական իրարամերժ բախումների ասպարեզ էր դարձել, ծնունդ տվել գործիչների, որոնք տարբեր ուղիներով էին ընթանալու, տարբեր ուղիներում փնտրելու իրենց ժողովրդի ազատագրությունը։ Գավառական ծայրամասային քաղաքի բավական անձուկ, մանրբուրժուական մթնոլորտում խիստ ուժեղ էին և տիրապետող ազգային նկրտումները, ուստի և դժվարին մարքսիստական գաղափարների պրոպագանդման գործը։

Չնայած այդ ամենին, սկզբից ևեթ Աշոտ Հովհաննիսյանը գրավվեց մարքսիստական ուսմունքով։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին նա ուսանում էր Շուշիի ռեալական ուսումնարանում, որտեղ և նախապես ծանոթացավ մարքսիստական գրականությանը, ազդվեց սոցիալ-դեմոկրատական գաղափարներից, անցավ վերջինիս դիրքերը և 1906 թվականին դարձավ ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության անդամ՝ անվերապահորեն որդեգրելով բոլշևիկյան ուղղությունը։

1906 թ. Աշոտ Հովհաննիսյանը ավարտում է Շուշիի ռեալական ուսումնարանը և բարձրագույն կրթություն ստանալու նպատակով մեկնում Գերմանիա, ուր ուսանում է Ենայի, Հալլեի և Մյունխենի համալսարաններում։ Ուսումնառության տարիներին նա խորանում է փիլիսոփայության, պատմության, տնտեսական գիտությունների մեջ, տիրապետում գերմաներեն, ֆրանսերեն և լատիներեն լեզուներին։ Նա Գերմանիայում գտնված տարիներին էլ անմասն չի մնում հեղափոխական գործունեությունից, ընդգրկվում է ռուսական սոցիալ-դեմոկրատական արտասահմանյան կազմակերպության մեջ և մասնակցում նրա աշխատանքներին։

Տոգորված լինելով իրեն ծնունդ տված ժողովրդի ազատագրության գաղափարով, Գերմանիայում ուսումնառության տարիներին Աշոտ Հովհաննիսյանը սկսում է ուսումնասիրել նրա ազգային-ազատագրական դարավոր պայքարի պատմությունը: Երկարատև պրպտումներից ու մտորումներից հետո լույս աշխարհ է գալիս գերմաներեն լեզվով գրված նրա դիսերտացիան՝ «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» վերտառությամբ, որի համար նրան շնորհվում է փիլիսոփայության դոկտորի աստիճան և որը հրատարակվում է Մյունխենում՝ 1913 թվականին:

Գիտության մեծ պաշտոով պինված Աշոտ Հովհաննիսյանը վերադառնում է Անդրկովկաս և աշխատանքի անցնում հայրենի Շուշի քաղաքի հայկական հոգևոր սեմինարիայում, որի 75-ամյա հոբելյանը լրանում էր 1913 թվականին: Այստեղ նա սկսում է ավանդել գերմաներեն, ընդհանուր պատմություն, միաժամանակ հանդիսանալով 5-րդ դասարանի դասախարակ: Ընդհանուր պատմության առարկան նա օգտագործում է աշակերտներին մարքսիստական ոսմունքին ծանոթացնելու, մարքսիզմի գաղափարները նրանց մեջ տարածելու:

Մեկ տարի Շուշում մնալուց հետո, 1914 թվականին, Աշոտ Հովհաննիսյանը մեկնում է Վաղարշապատ և աշխատանքի անցնում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Նրան Էջմիածին տանողը դեպի գիտությունն ունեցած ջերմ սերն էր՝ Գևորգյան ճեմարանի հայագիտական մթնոլորտը և մատենադարանում պրպտումներ կատարելու հնարավորությունը: Գևորգյան ճեմարանում նա դասավանդում էր ընդհանուր պատմություն, քաղաքատնտեսություն, լատիներեն և գերմաներեն: Այս առարկաների սոսկ թվարկումն իսկ ցույց է տալիս երիտասարդ գիտնականի ու ուսուցչի տեսական լայն պատրաստությունը, համակողմանի հետաքրքրքրությունները:

Դասախոսական աշխատանքին զուգահեռ Աշոտ Հովհաննիսյանը գիտական հետազոտություններ է կատարում Էջմիածնի մատենադարանում, գրում որոշակի հետաքրքրություն ներկայացնող մի շարք հոդվածներ, որոնք հրատարակվում են «Արարատ» ամսագրի էջերում և կամ լույս տեսնում առանձին բրոշյուրներով: Այդ ուսումնասիրություններում նա շարունակում էր իր պրպտումները հայ ազատագրական մտքի ուսումնասիրության ուղղությամբ, երևան հանում մոռացված ու անցյալի փո-

շիներում թաղված հետաքրքիր փաստեր, տալիս դրանց մեկնաբանությունը։

Սակայն Աշոտ Հովհաննիսյանը չէր մոռանում, որ ինքը նաև հեղափոխական է։ Նա ընդհատակյա հեղափոխական-պրոպագանդիստական աշխատանք էր տանում ճեմարանի ուսանող երիտասարդության շրջանում՝ Ա. Ի. Միկոյանին, Ս. Դանիելյանին, Ա. Խանջյանին, Ա. Շահգելդյանին, Ե. Մկրտումյանին հաղորդակից էր դարձնում իր յուրացրած մարքսիստական աշխարհայացքին, նախապատրաստում հեղափոխական ապագա գործիմարտերին։ Աշոտ Հովհաննիսյանի այդ շրջանի և հետագա ամբողջ գործունեությունը խիստ լավ է բնորոշված նրա 80-ամյակի կապակցությամբ Ա. Ի. Միկոյանի հղած ողջույնի նամակո

«51 տարի է անցել այն օրից, երբ մենք հանդիպեցինք էջմիածնում։ Այն ժամանակ դու արդեն մարքսիզմի թեորիային լավ տիրապետած հայտնի բոլշևիկ էիր... Մեր կուսակցության, սոցիալիստական հայրենիքի կյանքում դու միշտ գործուն դեր ես խաղացել, երբեք չես հեռացել հեղափոխական աշխատանքից, միշտ կանգնած ես եղել մեր կուսակցության լենինյան դիրքերում։ Իսկ դա դյուրին չէր. ամեն բան չէ, որ այն ժամանակներում պարզ էր, ինչպես որ հիմա է թվում։ Գիտական հիմնավոր պատրաստությունը օգնեց քեզ կյանքում անցկացնելու մարքսիստական-լենինյան հաստատուն քաղաքականություն։ Քեզ մոտ երբեք չի մարել հետաքրքրությունը դեպի թեորիան, գիտությունը. դու երբեք չես դադարել մեր կոմունիստական գիտության զարգացման համար տքնելուց։ Դրա ապացույցն են՝ քո աշխատանքը որպես կուսակցական ղեկավար, քո աշխատանքը որպես գիտնական-մարքսիստ, քո գիտական բազմաթիվ աշխատությունները։ Վերջապես այն, որ դու 80 տարեկան ես, բայց շարունակում ես գիտական թեղմնավոր ստեղծագործական աշխատանքը։

Քաղաքական գործունեության երկար տասնամյակների ընթացքում, հաղթանակների առթած խնդության կողքին քեզ վիճակվել է նաև ճաշակել դառնություն. սակայն դու երբեք չես կորցրել հոգու ամրությունը, անսահման հավատ ես տածել դեպի կոմունիզմի հաղթանակը։ Քո կյանքը մշտապես եղել է ևկա որպես աշխատանք հանուն մարքսիստական հասարակական գիտությունների զարգացման։ Հատկապես շատ բան ես դու արել, շա-

արժեքավոր աշխատություններ ստեղծել հայ հեղափոխական մտքի ուսումնասիրության գործում»:

1917 թվականի փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ցնցեցին ռուսական հսկա կայսրությունը, հեղափոխական պայքարի մեջ ներգրավեցին ազգային ծայրամասերը: Պատմական այդ օրերին Աշոտ Հովհաննիսյանը նախապես դալիս է Շուշի, որտեղ հրատարակում է բոլշևիկյան «Նեցուկ» լրագիրը: Լրագրի էջերից նա եռանդուն կերպով պրոպագանդում է լենինիզմի գաղափարները, հանդես գալիս ժողովներում և հավաքույթներում, իր գրավոր ու պրակտիկ գործունեությամբ մեծապես նպաստելով ժողովրդական զանգվածներին «Դաշնակցության» կուսակցության գաղափարական ազդեցությունից ազատագրելու և բոլշևիկյան, սոցիալիստական գաղափարներով տոգորելու գործին:

Շուշուց Աշոտ Հովհաննիսյանը անցնում է Բաքու, հեղափոխության այդ միջնաբերդը Անդրկովկասում, ուր Կոմունայի օրերին ղեկավարում է սկզբում Բաքվի սովետի կուլտուր-լուսավորական բաժինը, իսկ 1918 թվականի հուլիսից՝ Բաքվի Կոմունայի լուսավորության կոմիսարիատի դպրոցական բաժինը:

Բաքվի Կոմունայի անկումից հետո նրան հաջողվում է անցնել Աստրախան, ապա Մոսկվա: Աստրախանում գտնված օրերին նա որոնումներ է կատարում գտնելու այնտեղ թաղված Իսրայել Օրու գերեզմանը, հայ ազատագրական շարժման այն մեծ երախտավորի, որի գործունեությանը և գաղափարախոսությանն էր նվիրել իր գիտական երախայրիքը:

Մոսկվայում Աշոտ Հովհաննիսյանը աշխատանքի է անցնում Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի հայկական գործերի կոմիսարիատում, ուր ղեկավարում է գրական-հրատարակչական բաժինը: 1919 թվականին նա աշխատում էր ՌՍՖՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատում, վարելով Հայկական բաժինը: Այդ աշխատանքներին զուգընթաց, որպես պրոֆեսոր, նա հայ ժողովրդի պատմություն էր ավանդում ակադեմիկոս Մառի ղեկավարությամբ վերակազմված Լազարյան ճեմարանում:

Դաշնակցության տիրապետության օրերին Հայաստանում տնտեսական ու քաղաքական ծանր կացություն է ստեղծվում: Ազգայնական անհաշտության ոգով թունավորված Անդրկովկասում

Հայաստանը այդ օրերին մեկուսացվել էր և դրվել թուրքական հարձակման ու բնաջնջման վտանգի տակ։ Քաղաքական խոր ճգնաժամ ապրող իր ժողովրդի փրկության միակ և ցանկալի ելքը տեսնելով սովետական կարգերի հաստատման և Սովետական Ռուսաստանի հետ ունեցած սերտ դաշինքի մեջ, Աշոտ Հովհաննիսյանը անդուլ աշխատանք էր տանում այդ ուղղությամբ։ Այդ աշխատանքը առավել արդյունավետ է դառնում 1920 թվականի հոկտեմբերին, երբ նա Լեգրանի գլխավորած ՌՍՖՍՀ դիվանագիտական միսիայի կազմում ժամանում է Հայաստան։ Սակայն դաշնակցականների գլխավորած Հայաստանի կառավարության հակահեղափոխական քաղաքականությունը հայ ժողովրդի համար այս անգամ ևս նորանոր դժվարությունների պատճառ է դառնում, մինչև որ Հայաստանում հաստատվում են սովետական կարգեր։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո Աշոտ Հովհաննիսյանը վարում էր Լուսավորության ժողովրդական կոմիսարի պաշտոնը, ստորագրում առաջին դեկրետները, որոնք մեր սոցիալիստական մշակույթի հիմքը դրեցին։ 1922 թվականին, Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին համագումարում, Աշոտ Հովհաննիսյանն ընտրվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար և այդ պաշտոնը վարում է մինչև 1927 թվականը։ Ս. Կասյանի, Ա. Մռավյանի, Ալ. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի և կուսակցական ու պետական այլ գործիչների հետ մեկտեղ նա մեծ նվիրվածությամբ ու եռանդով մասնակցում էր պատերազմի հետևանքով քարուքանդ եղած հայրենի երկրի վերականգնման աշխատանքներին, ջանասիրաբար դնում սոցիալիստական նորոգ մշակույթի հիմնաքարերը։ Կուսակցական խիստ պատասխանատու և դժվարին աշխատանքին զուգահեռ նա հայ ժողովրդի պատմություն և լենինիզմ էր դասախոսում Երևանի նորաստեղծ պետական համալսարանում, խմբագրում էր «Նորք» հանդեսը, զբաղվում գիտական գործունեությամբ, բազմաթիվ հոդվածներով հանդես էր գալիս հանրապետական պարբերական մամուլի էջերում՝ անհաշտ պայքար մղելով գաղափարական հակառակորդների դեմ, պրոպագանդելով լենինյան գաղափարներ, արձագանքելով երկրի կյանքի բոլոր կարևոր հարցերին։

1928 թ. Աշոտ Հովհաննիսյանը կրկին հաստատվում է Մոսկվայում· այստեղ նա երկու տարի գլխավորում է Մարքսի-

էնգելսի ինստիտուտի միջազգային հարաբերությունների պատմության կաբինետի աշխատանքները, միաժամանակ վարելով ինստիտուտի կուսակցական կազմակերպության առաջին քարտուղարի պաշտոնը։ 1929—1934 թթ. նա ՍՍՀՄ Ազգությունների ինստիտուտում Արևելքի ժողովուրդների ազգային-հեղափոխական շարժումների պատմության առարկայի պրոֆեսոր էր, իսկ 1934—37 թթ. ընտրվել էր Նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի իսկական անդամ և վերջինիս Մոսկվայի բաժանմունքի դիրեկտոր։ 1936—1937 թթ. Աշոտ Հովհաննիսյանը հանդիսացել է ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ։ Սակայն առժամանակ ընդհատվեց կուսակցական-պետական գործչի և վաստակավոր գիտնականի բեղուն գործունեությունը։

1954 թ. Աշոտ Հովհաննիսյանը աշխատանքի է անցնում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, որպես ավագ գիտական աշխատող։ 1955 թվականին Աշոտ Հովհաննիսյանը պաշտպանեց դոկտորական դիսերտացիա, իսկ 1960 թվականին ընտրվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։ 1961 թվականից նա ղեկավարում է պատմության ինստիտուտի նոր պատմության բաժինը։ Միաժամանակ նա գլխավոր խմբագիրն է և հեղինակներից մեկը տպագրության պատրաստվող «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորանոց աշխատության։ 1967 թվականին, ծննդյան ութսունամյակի կապակցությամբ և հասարակական-քաղաքական ու գիտական բեղմնավոր գործունեության համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ակադեմիկոս Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Մեծ են Ա. Հովհաննիսյանի ծառայությունները հատկապես գիտական երիտասարդ կադրերի պատրաստման և դաստիարակության գործում, նրա բազմաթիվ աշակերտներ գիտական, հասարակական և մանկավարժական աշխատանք են տանում Սովետական Միության տարբեր վայրերում։

* * *

Հայ պատմագրության մեջ յուրահատուկ կարևորություն ունեցող և առանցքային հարցերից մեկը եղել է և մնում է աղ-

գային-ազատագրական շարժումների ուսումնասիրությունը։ Եվ պատահական չէ, որ ազգային-ազատագրական շարժումների հանգամանալից հետազոտությունը գտնվել է հայ պատմաբանների ուշադրության կենտրոնում, պատահական չէ, որ հայ մարքսիստ-պատմաբաններից Աշոտ Հովհաննիսյանը առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ դրա հետ կապված պրոբլեմների մարքսիստական ուսումնասիրությանը։ Հարազատ ժողովրդի սոցիալական և ազգային-քաղաքական ազատագրության վեհ գործին նվիրված հասարակական-քաղաքական գործիչը, բնական է, որ որպես գիտնական խորանալու էր նրա ազատագրական պայքարի կարևոր հարցերի վերլուծության մեջ։ Այդ առավել ևս կարևոր էր հայ ժողովրդի պատմության զարգացման հեռանկարների գիտական ճշտորոշման տեսանկյունից։

Դեռևս 1913 թվականին Մյունխենում հրատարակված իր „Israel Ory und die armenische Befreiungsidee“ դիսերտացիոն աշխատության մեջ Աշոտ Հովհաննիսյանը գտնում էր, որ պատմաբանները պետք է անաչառ և քննադատական վերաբերմունք ցուցաբերեն թե՛ պետությունների, դրանք չկտրեն զարգացման նախորդող և հաջորդող ժամանակահատվածներից, պատմականորեն ընկալեն անցյալը, ինչ որ հնարավորություն կընձեռի դասեր առնել նաև ապագայի համար։ Մարքսիստ պատմաբանը այս դրույթներով է առաջնորդվել ոչ միայն իր գիտական անդրանիկ գործը շարադրելիս, այլև հետագա ողջ գիտա-մանկավարժական բազմարդյուն գործունեության ընթացքում։

Խիստ յուրահատուկ է եղել Առաջավոր Ասիայի մատույցներում ռազմա-ստրատեգիական կարևոր դիրք գրավող Հայաստանի պատմական ճակատագիրը։ Դարեր շարունակ այն կուվախնձոր է հանդիսացել Արևելքի և Արևմուտքի աշխարհակալ պետությունների միջև, դարձել արյունալից գոտեմարտերի ասպարեզ և բազմաթիվ ծանր հարվածներ կրել։ Ֆեոդալական տարանջատվածությունն ու անընդմեջ երկպառակությունները խանգարել են կենտրոնացված միասնական և ուժեղ պետության կազմակերպմանը, թուլացրել երկրի ռազմունակությունը և հաճախ անզոր դարձրել արտաքին հարվածների դիմաց։ Հայաստանի համեմատական ինքնուրույնության ու երբեմնի անկախության վերջ դրեցին Արևելքից ներխուժած վաչկատուն նվաճողների վայրագ արշավանքները՝ խաթարելով երկրի արտադրողական ուժերի զարգացումը, ետ շրջելով պատմական առաջընթացի անիվը, նետելով երկիրը օտար-

երկրյա բռնատերերի գարշապարի տակ։ Իր տիրակալների ինքնահաճ ու եսակենտրոն շահագրգռությունների զոհ դարձած ժողովուրդը զինազրկվեց, կքեց բռնակալական ահավոր լծի տակ։ Պատմական հանգամանքների նման դժբախտ ընթացքը, հարկադրյալ գաղթականությունը, որպես փրկության դյուրին ու հնարավոր ելք, օտարամուտ տարրերի ներգաղթը Հայաստան և բնակության հաստատելը առավել ևս թուլացրին հայ ժողովրդի դիմադրական կարողությունն ու դժվարացրին նրա ազատագրական պայքարը։ Հայ ժողովրդի ազատագրական բաղձանքները ստացան որոշ չափաստով միստիկական երանգ, ընդունեցին կրոնական գունավորում՝ ծնունդ տալով դրսի ուժերից փրկում ակնկալող տեսիլների ու լեգենդների։ Սոցիալական ամեն մի միջավայրում առանձնահատուկ գունավորում ընդունելով հանդերձ, այդ տեսիլներն ու լեգենդները միաձույլ ու միաբնույթ էին մի էական հարցում՝ անպայման հայ ժողովուրդը ազատագրվելու է և այդ ազատագրությունը հնարավոր է միայն արտաքին օգնության ձեռքիվ, որը բերելու էին հեռավոր, բայց հզոր քրիստոնեական տերությունները։ Սակայն ազատագրական պայքարի հարցում բոլորովին այլ դիրքավորում ուներ հայ գյուղացիությունը, որը «ֆեոդալական մասնատվածության պայմաններում իսկ կարողացավ մեծ չափով պահպանել իր տերիտորիայի ու լեզվի, կենցաղի ու բնավորության, ինչպես նաև սոցիալական և քաղաքական իր ազատագրական ձգտումների շեշտված ընդհանրությունը»։ Հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը ղեկավարող հայ ֆեոդալները օտար բռնատերությունների դեմ պայքարելիս հենց գյուղացիական զանգվածների վրա էին հենվում. վերջիններս էին նաև հայրենի սահմանապահները։ Այստեղից էլ հասկանալի է, թե ում էր հայ գյուղացիության ուրույն դիրքավորումը ազատագրական պայքարի հարցում։ Նա հույս չէր կապում օտար միջամտության հետ, այլ մշակում էր ազատության հասնելու իր տեսությունը, այն է՝ փրկության ուղին դա ժողովուրդն ինքն է, նրան ծնած հերոսները։ Ուստի և հայ աշխատավորական զանգվածները, անշուշտ, հակադրվելով շրջող տեսիլներին ու գուշակություններին, ստեղծում էին իրենց ազատարարին՝ «Սասնա ծռերի» մռերին, որը կյանքի էր կոչվում ժամանակագրական նույն շրջանակներում և նույն տերիտորիայում, որտեղ և երբ ծնունդ էր առնում նաև հայ ազատագրական լեգենդը։ Միայն շատ ավելի ուշ, 18-րդ դարի քսանական թվականներին էր, որ Ռուսաստանից օրը

Ա 46355

ՀԱՅԿ ԱԱԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅՈՒ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

օրին սպասվող ռազմական օգնության ակնկալությունների եռուն շրջանում, այն պետք է համակեր նաև ժողովրդական լայն խավերին, դառնար նաև նրանց գաղափարախոսությունը։

Ահա հայ ազատագրական մտքի այդ յուրատեսակ դրսևորման, գաղափարախոսության պատմագիտական քննությանն էլ նվիրեց Աշոտ Հովհաննիսյանն իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» արկհատոր մեծարժեք աշխատությունը, որտեղ հանգամանալից վերլուծության ենթարկեց հայ ազատագրական մտքի զարգացումը՝ սկսած վաղ միջնադարից մինչև նոր ժամանակաշրջանի շեմը։ Այդ աշխատության մեջ նա չի սահմանափակվում միայն հայ ազատագրական տեսիլների ու լեգենդների տեսության վերլուծությամբ, այլև ցույց է տալիս պատմական տարբեր ժամանակաշրջանների առանձնահատկությունները, տվյալ ժամանակահատվածի բնորոշ սոցիալական միջավայրը և դրանցում տեսիլների կրած ձևական ու որակական փոփոխությունները։ «Դրվագներում» հեղինակը բավական հանգամանորեն կանգ է առնում նշված շուրջ հազարամյա ժամանակահատվածում հայ ժողովրդի որդեգրած սոցիալական և քաղաքական ընթացքի վրա. և այդ պարագան հնարավորություն է տվել, նրա խոսքերով ասած, ազատագրական «շարժման գեղեցիկ տարբերակումներն ու բախումները լուսաբանելու կամ նրան մատնակցած դասակարգերի ու խմբավորումների, հոսանքների ու գործիչների նպատակադրումներն ու հայացքներն ըմբռնելու համար»։

Վերլուծելով պատմության պահպանած և մեզ ընձեռած փաստերը, բազմավաստակ պատմաբանը ցույց է տալիս այն զարտուղի կածանները, որոնցով ընթացել է հայ ժողովրդի ազատագրական միտքը, քննարկում հայ ազատագրական շարժման գործիչների ունեցած երբեմնի սին պատրանքները։ Պատմաբանի ուշադրության հանգուցակետում է դրվել հատկապես այն փաստերի ուսումնասիրությունը, որոնք նախապատրաստեցին և սկզբնավորեցին ազատագրության համար պայքարող հայ ժողովրդական զանգվածների քաղաքական, պատմության կողմից արդարացված շրջադարձը դեպի Ռուսաստան, որոնք Իսրայել Օրուն, Եվրոպայում կատարած երկարատև ու ապարդյուն դիմումներից հետո, տարան Մոսկվա։ Իմաստավորելու և տրամաբանորեն ըմբռնելի դարձնելու համար հայ ազատագրական մտքի շրջադարձը, Աշոտ Հովհաննիսյանը մանրակրկիտ կերպով մեկնաբանում է արևմտաեվրոպական տերությունների հետ կատարված բանակցությունները, ցույց

տալիս քաղաքական նախորդ ուղեծրի սնանկությունը և դրա հիմնապատճառները:

«Դրվագների» երկրորդ գրքում հայ ժողովրդի ազատագրական նկրտումները ցույց են տրված տոցիալ-տնտեսական հարաբերությունների և քաղաքական զանազան ուղղությունների միջև գոյություն ունեցած պայքարի առումով լայն հետնախորքի վրա: 18-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստանում ծավալված ազատագրական բուռն շարժումը Աշոտ Հովհաննիսյանը դիտում է սերտորեն առնչված Անդրկովկասյան հարևան ժողովուրդների մղած պայքարի հետ: Նա խիստ համոզիչ բացահայտում է, որ ազատագրական շարժման գլխավոր շարժիչ ուժը և առաջատարը ժողովրդական լայն զանգվածներն էին, որոնց վրա էր հիմնականում ծանրացած բռնակալական տաժանելի լուծը: Այստեղ հատուկ կարևորություն ունեն Աշոտ Հովհաննիսյանի ձևակերպված դրույթները հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման, նրա համընդհանուր ճանաչում գտնելու ժամանակի, ազատագրական շարժման ազգային ու դասակարգային բովանդակության և քաղաքական ուղղվածության վերաբերյալ:

Պատմական նախընթաց ամբողջ զարգացումը բնորոշող փաստերի հետազոտության հիման վրա Աշոտ Հովհաննիսյանը «Դրվագներում» ցույց է տալիս, որ եթե սկզբնապես ռուսական կողմնորոշումը կրում էր էպիզոդիկ բնույթ, մասնակիորեն արտահայտվելով մշակութային և առևտրական տիպի առնչություններում, հաճախակիորեն ցուցադրելով լոկ հայ դեկավար դասակարգերի առանձին ներկայացուցիչների տրամադրությունները, ապա հետագայում արդեն, 18-րդ դարի 20-ական թվականներին, երբ Արևելյան Հայաստանում մահու և կենաց պայքար էր մղվում պարսկական ու թուրքական բռնակալությունների շղթաները թոթափելու համար, երբ ստեղծված դժվարին կացության մեջ անհավասար գոտեմարտ մղող հայ ժողովուրդը օգնության և փրկության ողջ հույսը կապում էր բացառապես Կասպիականի արևմտյան ծովեզրը գրաված ռուսական բանակի հետ, ռուսական կողմնորոշումը ստացավ իսկապես համաժողովրդական երանգավորում, որով և վերջ ի վերջո պայմանավորվեց նրա հաղթանակը:

«Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատությունը հեղինակի տասնյակ տարիների ոգորումների, պրպտումների, խոհերի և տքնաջան աշխատանքի արդյունքն է: Աշոտ Հովհաննիսյանը չի բավարարվել միայն հարցի վերաբերյալ

գոյություն ունեցող գրականության ուսումնասիրությամբ: Մատենադարանի ձեռագրերում կատարած պրպտումները նրան հնարավորություն են տվել գիտության սեփականություն դարձնել, արժեքավորել և օգտագործել բազմաթիվ նոր նյութեր, որոնք պատասխան են տալիս շատ և շատ գիտական հարցադրումների, առատ լույս են սփռում ոչ միայն միջնադարյան Հայաստանի, այլև հարևան երկրների պատմության ամենատարբեր կողմերի վրա: Այդ ամենը բարձրացնում է աշխատության գիտական արժանիքները, մասնագետներին խորհելու առատ նյութ է տալիս, իսկ ընթերցող զանգվածներին՝ հիմնավորված քաղաքական կողմնորոշում միջնադարյան Հայաստանի և սահմանակից երկրների ազատագրական շարժումների մասին:

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրու առաքելության և 18-րդ դարի առաջին երեսնամյակի ազատագրական շարժումներին է նվիրված ռուսերեն լեզվով 1964 և 1967 թթ. երկու մատով Աշոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ և նրա ընդարձակ ներածականով լույս տեսած «Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին երեսնամյակում» խորագիրը կրող վավերագրերի ժողովածուն: Աշոտ Հովհաննիսյանի ներածությունը սերտորեն առնչվում է «Դրվագների» հետ և նրա օրգանական շարունակությունն է կազմում. այստեղ հեղինակը քննաբար վերլուծում է հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը բնորոշող կարևորագույն իրադարձությունները, երկու ժողովուրդների մեջ եղած առևտրական, քաղաքական և ռազմական առնչությունները: Խոսելով հիշյալ ժամանակահատվածի հայ-ռուսական առևտրական կապերի մասին, Աշոտ Հովհաննիսյանն ընդգծում է ինչպես ռուսական կառավարության, այնպես էլ Նոր Ջուղայի հայ վաճառականական դասի հետամտած նպատակները այդ հարաբերություններում:

Չնայած ժամանակ առ ժամանակ առևտրական հարաբերությունները խաթարվում են, որովհետև ռուսական կառավարությանը չի հաջողվում իրագործել իրանական ողջ տարանցիկ առևտուրը դեպի Ռուսաստան ուղղելու մտադրությունը, դրանք, այնուամենայնիվ, խոշոր դեր են խաղում և մեծապես նպաստում են հայ և ռուս քաղաքական կապերի սերտացմանը և հետագա զարգացմանը, չհանդիսանալով, սակայն, այդ կապերի միակ և հիմնական հենարանը:

Ներածականում Աշոտ Հովհաննիսյանը ցույց է տալիս, որ

17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին Պարսկաստանում ծայր առած ժողովրդական շարժումները մեծ չափով նպաստեցին նաև Անդրկովկասի ժողովուրդների, առաջին հերթին հայերի և վրացիների ազատագրական ոգորումներին: Այս շրջանում հանդես գալով որպես հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ոահվիրա, Իսրայել Օրին կատարում է քաղաքականորեն դարակազմիկ նշանակություն ունեցող շրջադարձ: Աշոտ Հովհաննիսյանի վերլուծությունից պարզ երևում է, թե որպիսի հեռատես քաղաքական գործիչ էր Իսրայել Օրին: Նա հասկանում էր, որ Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու փորձն իսկ անպայման հակադարձ ռեակցիա կառաջացնի ինչպես Թուրքիայի, այնպես էլ դեպի Թուրքիան հակված լեհգի ֆեոդալների կողմից և ըստ երևույթին ևեթ չէր հանում էր չեզոքացնել այդ վտանգը: Այդ նպատակին ծառայելու էր ոչ միայն Սրբազան Հռոմեական կայսրության և Ռուսաստանի հակաթուրքական կոալիցիան, այլև, ինչպես արդարացիորեն նշում է Աշոտ Հովհաննիսյանը, Օրիի «ձգտումը՝ դուրս բերելու հայերի ազատագրական պայքարը ազգային պարփակվածության փակուղուց»: Այդ էր շարժառիթը, որ Օրին սերտ հարաբերությունների մեջ էր մտնում Մոսկվայում ապաստանած իմերեթական Արչիլ Բագրատի հետ, իսկ պարսկական դեսպանության տարիներին ձգտում ադրբեջանական գործիչներին հակել դեպի Ռուսաստան:

Եթե Օրու գործունեությունը նպատակամղված էր Հայաստանի և Անդրկովկասի ազատագրմանը, ապա իր հերթին ռուսական կառավարությունը շահագրգռված էր ծավալվելու դեպի Արևելք, ինչ նպատակով և նախաձեռնվեց պարսկական արշավանքը: Ներածականում Աշոտ Հովհաննիսյանը բացահայտում է այն հիմնական մոմենտները, որոնք բնորոշում են Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը այդ տարիներին: 1722 թ. հետո ծավալված իրադարձությունները եկան հաստատելու, թե որքան խորաթափանց և իրատես էր ոմանց կողմից «բախտախնդիր» հռչակված Իսրայել Օրին՝ ռուսական արշավանքի հետևանքով հնարավոր բարդությունների ստեղծման հարցում իր կանխատեսություններ մեջ:

Ուշադրության արժանի է պարսկական արշավանքի տարիներին Շամախի քաղաքի ստացած ռազմա-ստրատեգիական նշանակության մասին Աշոտ Հովհաննիսյանի տված ապառիչ բացատրությունը, որի գրավումը ռուսական զորքերի կողմից կանխվեց

1724 թ. Կոստանդնուպոլսի պայմանագրով։ Շամախու գրավումը կոչված էր դյուրացնելու հայերի ազատագրական պայքարը և ապահովելու ռուսական օգնություն։ Ռուս-թուրքական պայմանագրի կնքումից հետո բացառվում էր վերջին պարագան, որը և հրամայական պահանջ դրեց հայկական ցանուցիր ուժերի առջև միավորվելու, աղնախներ կազմելու։ Միաժամանակ ստեղծված իրավիճակը բոլորի համար պարզ էր դարձնում, որ ռուսական օգնությունը կենսական անհրաժեշտություն է հայկական ազատագրության համար։ Ուստի և խիստ արդարացի է Աշոտ Հովհաննիսյանի հետևյալ ընդհանրացումը. «Եթե մինչ այդ պահը (ռուսական զորքերի հայտնվելը Արևելյան Անդրկովկասում—Վ. Դ.) որպես Ռուսաստանի օգնությամբ հայերի ազատագրության գաղափարի արտահայտիչներ հանդիսանում էին սոսկ առաջավոր գործիչները, ապա այժմ այդ գաղափարը կենդանի արձագանք է գտնում հայ ժողովրդի լայն զանգվածների դիտակցության մեջ։ Շնորհիվ Ռուսաստանի զինված միջամտության, պարսիկների և թուրքերի բազմադարյան տիրապետության հետևանքով ծնունդ առած հայ ժողովրդի ազատագրական շարժումը, Սեֆյանների իշխանության սկիզբ առած փլուզման և Անդրկովկասում օսմանյան հին ու առելի տիրապետության վերականգնման վտանգի պայմաններում ընդունել էր համաժողովրդական շարժման բնույթ»։

Ներածականում ճիշտ ընդգծվում է Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետի խաղացած կարևոր դերը հայ-վրացական ու ադրբեջանական միացյալ հակաօսմանյան ճակատի ստեղծման հարցում, Գանձակի պայմանագրի կնքման, հայ ֆեոդալական վերնախավի շարքերում տիրող ներքին երկպառակություններին վերջ տալու գործում։ Աշոտ Հովհաննիսյանը իրավացիորեն հանգել է այն եզրակացությանը, որ, չնայած տարաձայնություններին, Ղարաբաղի հայ մելիքների և յուզբաշիների մեջ փոքրիշատե ցայտուն կողմնորոշում դեպի Պարսկաստան կամ Թուրքիա գոյություն չի ունեցել։

Հիշյալ ժողովածուի Ներածությունը կարևոր ուսումնասիրություն է, որն ամբողջացնում է տվյալ ժամանակահատվածին նվիրված Աշոտ Հովհաննիսյանի աշխատությունները և այդ հարցում նոր մղումներ հաղորդում հայ պատմագիտության մարքսիստական մտքին։

***

Աշոտ Հովհաննիսյանի գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում հայ հեղափոխական-դեմոկրատական մտքի ռահվիրա Միքայել Նալբանդյանի կյանքին և գործունեությանը նվիրված ուսումնասիրությունները: Դեռևս 1930-ական թվականներին, Մոսկվայի և Լենինգրադի կենտրոնական արխիվներում պրպտումներ կատարելիս, Աշոտ Հովհաննիսյանը հայտնաբերեց հայ մեծ հեղափոխական-դեմոկրատի մի շարք անտիպ երկասիրությունները, որոնք գալիս էին նոր լույս սփռելու նշանավոր գործչի ողջ գործունեության վրա: 1935 թ. բովանդակալից առաջաբանով և ընդարձակ բացատրականներով հրապարակ հանելով Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերը», Աշոտ Հովհաննիսյանը համոզիչ կերպով ցույց տվեց, թե ինչպես մշակվեց Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական աշխարհայացքն ու ծավալվեց նրա գործունեությունը՝ շաղկապվելով հարազատ ժողովրդի ազատագրական ձգտումների հետ: Դրանով իսկ ցրվում էր Մ. Նալբանդյանի անձի շուրջը հյուսված այն առասպելը, թե նա և իր շուրջը համախմբված կողմնակիցները կտրված էին հայկական իրականությունից և հանդիսանում էին սոսկ ռուս «նիհիլիստների» հայացքների խոսափողներ: «Անտիպ երկերում» առաջին անգամ Աշոտ Հովհաննիսյանը բացահայտ դարձրեց հայ հեղափոխական շարժման կապը ռուս «վաթսունականների»՝ Գերցենի, Բակունինի, Օգարյովի, Չերնիշևսկու հետ, քննարկեց Նալբանդյանի հեղափոխական ստրատեգիան և տակտիկան՝ սերտորեն առնչված Գերցենի և Օգարյովի հեղափոխական գաղափարներին:

Սակայն «Անտիպ երկերը» սոսկ նախաքայլ հանդիսացան Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության, նրան ծնունդ տված, սնած և դաստիարակած միջավայրի և ժամանակաշրջանի ամբողջական ուսումնասիրության և քննական վերլուծության ուղղությամբ: Շարունակելով Մ. Նալբանդյանին նվիրված իր հետազոտությունները, գիտնականը դրանք ամփոփեց երկու ստվար հատորներում և 1955—1956 թվականներին հրատարակեց «Նալբանդյանը և նրա ժամանակը» վերտառությամբ:

Փիլիսոփայական և բանասիրական մարքսիստական պատրաստությունը, եվրոպական և ռուսական հասարակական-քաղաքական ու հեղափոխական շարժումների խոր իմացությունը, ժամանակի հայկական իրականությանը հուզող խնդիրների գիտակ-

ցությունը հնարավորություն ընձեռեցին հեղինակին ստեղծելու մի աշխատություն, որտեղ իրենց լուծումն են գտել 50—60-ական թվականների հայ հասարակական մտքի պատմության մի շարք կարևոր ու բարդ հարցեր։ «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատությունը հնարավորություն տվեց բազմակողմանի ու հլուստակ պատկերացում կազմելու ինչպես Նալբանդյանի կյանքի ու գործունեության, նրա աշխարհայացքի հեղափոխական-դեմոկրատական հեղաբեկման, այնպես էլ նրա միջավայրի և ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական այլևայլ երևույթների ու իրադարձությունների գործադրման մասին։ Աշխատության հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ 1859—1861 թվականներին Ռուսաստանում ստեղծված հեղափոխական իրադրությունը խոր բեկում է առաջացնում Մ. Նալբանդյանի ազգային-լուսավորական ողջ գործունեության մեջ։ Այդ տարիներից է, որ նա սկսում է մարտնչել հանուն հայկական դեմոկրատիայի ազատագրական ձգտումների միավորման ռուսական գյուղացիական հեղափոխության և Արևմուտքի մի շարք երկրներում ծավալված ազգային-ազատագրական շարժումների հետ։ Այստեղից էլ այն ուղենշող նշանակությունը, որ ստանում է Մ. Նալբանդյանը հայ ժողովրդի և ՍՍՀՄ ժողովուրդների պատմության մեջ, որպես մի գործիչ, որը պատռում է ազգային մեկուսացման կարծր կեղևը, դուրս գալիս դեպի համառուսաստանյան հեղափոխական շարժման և համաեվրոպական հեղափոխական շարժումների լայն ասպարեզ։

Մ. Նալբանդյանը, միևնույն ժամանակ, հայ իրականության մեջ այն գործիչն էր, որ միմյանց կապեց արևելահայ և արևմտահայ դեմոկրատիան, համընդհանուր մղումներ ու նպատակադրումներ հաղորդեց հայ ժողովրդի տարանջատ հատվածների ազատագրման պայքարին, ջանալով այն տանել մեկ ու միասնական հունով։ Նա նույնպիսի եռանդուն ու անդիջում պայքար մղեց արևմտահայ կյանքում իշխող ռեակցիոն ուժերի դեմ, ինչպիսին մղում էր արևելահայ իրականության մեջ։ Ճիշտ դիտակցված համազգային խնդիրների լուծումը նա հանձնեց հայ ժողովրդի երկու խոշոր հատվածների դեմոկրատիային, որոնց ձգտում էր միավորել նպատակի ու գործողությունների միասնությամբ։

«Նալբանդյանը և նրա ժամանակը» հանգամանալից ուսումնասիրության մեջ ներկայացված են և փայլուն կերպով բնորոշված անցյալ դարի 50—60-ական թվականներին հայկական իրականության մեջ գոյություն ունեցող հասարակական-քաղաքական շրջ

հոսանքները՝ կղերա-աղայական, լիբերալ-բուրժուական, ազգային-պահպանողական և հեղափոխական-դեմոկրատական, իրենց գործելակերպով և նպատակադրումներով, տարաձայնություններով և պայքարի ուրույն մեթոդներով։ Հասարակական-քաղաքական հիշյալ հոսանքների գաղափարական ու քաղաքական բնութագիրը միաժամանակ հնարավորություն է տալիս բացահայտել նրանց հետագա էվոլյուցիան, 70—80-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական կյանքում կատարված վերախմբավորումների մեջ։ Այդ առումով հատկապես հարկ եղավ հետազոտել արևելահայ իրականության մեջ երևան եկած նարոդնիկական շարժման առաջացումը և նրա հետագա վերաճումը ազգային-քաղաքական կուսակցությունների, որոնց դեմ հետագայում անհաշտ պայքարի պիտի ելներ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան։ Այս հարցին են նվիրված գիտական տարբեր հանդեսներում վերջերս տպագրված Ա. Հովհաննիսյանի մի շարք հոդվածները։

Նարոդնիկական շարժումը Ռուսաստանում ասպարեզ իջավ որպես գյուղացիական սոցիալիզմի գաղափարախոսություն, ընդ որում նարոդնիկները հանդես էին գալիս որպես համայնական գյուղացիության շահերի արտահայտիչներ, չտարբերանշելով այն խրամատը, որ գոյություն ուներ գյուղացիության տարբեր խավերի միջև։ Նարոդնիկության գյուղացիական սոցիալիզմը մի պատրանք էր, որի ծնունդը սոսկ Ռուսաստանում արդյունաբերական կապիտալիզմի և նրա արդյունքն հանդիսացող պրոլետարիատի բացակայությամբ էր պայմանավորված գրեթե։ Համադեմոկրատական կարգեր հաստատելու, գաղութային ծայրերկրներում ազգային-ազատագրական խնդիրները համառուսաստանյան դեմոկրատիայի հեղափոխական խնդիրներին ձուլելու 70-ական թթ. հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսների ձգտումը լայն արձագանք էր գտնում ուսանող երիտասարդության շրջանում, որին արձագանքում էին նաև անդրկովկասյան մտավորականության առաջավոր ներկայացուցիչները՝ ընդգրկվելով նարոդնիկական համընդհանուր շարժման մեջ։ Այդ ամենին անմաս չէր մնում նաև Ռուսաստանի բարձրագույն դպրոցներում սովորող արևելահայ երիտասարդությունը։

80-ական թթ. ռեակցիայի պայմաններում նարոդնիկությունը, սակայն, սկսեց անտեսել ազգային հարցը, թերևս այնպես սեպելով, որ ցարիզմի անկմամբ ինքնաբերաբար կլուծվի նաև ազգային հարցը։ Հեղափոխական նարոդնիկներին հաջորդած լիբերալ նա-

րոդնիկները սահմանափակվում, անգամ ժխտում էին ազգերի ինքնորոշման իրավունքը։ Նարոդովոլչյան կազմակերպությունների ջախջախումից հետո դա վտանգավոր երևույթ էր, որը պետք է հեռացներ և իսկապես հեռացրեց նարոդնիկությունից մանավանդ ոչ-ռուս ժողովուրդների ներկայացուցիչներին։ Ազգային այդ տարանջատման մեջ, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է հայ նարոդնիկներին, փոքր դեր չխաղաց այն հանգամանքը, որ 70-ական թվականներին արևելահայ նարոդնիկների հեղափոխական սերունդը կտրված էր հայ կյանքը հուզող խնդիրներից, չկարողացավ արձագանքել դրանց և պարզել իր դիրքը վերջիններիս նկատմամբ։ Այդ պատճառով էլ 80-ական թվականներին արդեն հայ նարոդնիկությունը մեծ մասամբ սկսում է կղզիանալ ու տարանջատվել ազգային-նարոդնիկական կազմակերպությունների մեջ՝ կտրվելով համառուսաստանյան հեղափոխական շարժումից, իր ուշադրության կիզակետում տեսնելով միայն արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը։ Այդ հարցում փոքր դեր չխաղացին արտաքին-քաղաքական այնպիսի ազդակներ, ինչպիսին էին 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը, հայկական հարցի առաջացումը Սան-Ստեֆանոյում և Բեռլինի կոնգրեսում և վերջինիս ծնած հուսախաբությունը։

***

Հիշյալ խոշոր մենագրությունների կողքին Աշոտ Հովհաննիսյանն ունի բազմաթիվ մանր հետազոտություններ, գիտական հոդվածներ, որոնք նվիրված են հայ ժողովրդի պատմության ամենատարբեր ժամանակաշրջանների առանձին հարցերին։ Դժվար է գերագնահատել այդ հետազոտությունների նշանակությունը, որովհետև դրանք նոր լույս են սփռում այնպիսի հարցերի վրա, որոնք տարակարծություններ են առաջացրել հետազոտող մասնագետների մոտ։ Այսպես, օրինակ, «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ» գրքույկում, ելնելով Ֆրիկի իսկ բանաստեղծությունների տվյալներից, Աշոտ Հովհաննիսյանը նոր մեկնաբանությամբ է ներկայացնում հայկական միջնադարի այդ նշանավոր դեմքի կենսագրության որոշ էջերը, նոր ձևով բացատրում տարբեր մեկնաբանություններ ստացած տերմիններ։ Ուշադրության արժանի են նաև Թոնդրակյան շարժմանը և նրա ղեկավար Սմբատ Զարեհա-

վանցուն նվիրված հոդվածները (հայերեն և ռուսերեն), «Զաքարիա Ագուլեցու օրերն ու գործերը» հոդվածը, «Պետրոս դի Սարգիս Գիլանենց» և «Ազգության հարցերը Նալբանդյանի հրապարակախոսության մեջ» (ռուսերեն) գրքույկները և շատ ուրիշներ։ Սրանք բոլորը գալիս են լրացնելու բազմավաստակ գիտնականի ընդգրկած բազմաթիվ հարցերը, նոր շտրիխներ ավելացնելու այն բազմաբովանդակ լայն կտավների վրա, որոնք նա կերտել է իր մոտ 60 տարիների ստեղծագործական կյանքի ընթացքում։

***

Վաղ հասակից ընգրկվելով հեղափոխական պայքարի ոլորտը, Աշոտ Հովհաննիսյանը գրչով պրոպագանդել է մարքս-լենինյան վեհ գաղափարները, հանդես եկել ժամանակի հուզող հարցերի մարքսիստական մեկնաբանմամբ։ Նրա հրապարակախոսական տաղանդը երևան եկավ դեռևս 1917 թվականին, երբ Շուշիում սկսեց հրատարակել բոլշևիկյան «Նեցուկ» և 1918 թ. Բաքվում լույս տեսած «Բանվորի խոսք» թերթերը։ Հետագա տարիներին նա աշխատակցել է տարբեր վայրերում լույս տեսնող բոլշևիկյան մամուլին։

Ինչպես հեղափոխական բուռն պայքարի տարիներին, այնպես էլ սովետական իշխանության հաստատումից հետո՝ երկրի սոցիալիստական վերակառուցման տարիներին, մշտապես գտնվելով պայքարի առաջավոր դիրքերում, Աշոտ Հովհաննիսյանը արձագանքել է կյանքի առաջադրած կենսական ու առաջնահերթ հարցերին։ Նա բազմաթիվ մեծ և փոքր հոդվածներ ունի՝ ուղղված մեր գաղափարական հակառակորդների դեմ, որոնցում մերկացնում է նրանց և ժողովրդին ցույց տալիս այն իդեալը, հանուն որի պետք է պայքարել՝ առանց խնայելու կյանքը։ Աշոտ Հովհաննիսյանի գրչին պատկանող այդ հոդվածներից շատերը ժամանակի հրատապ հարցերի պատմական խոր վերլուծություններ են, որոնք իրենց արժանի տեղն ունեն սովետահայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ։

1920-ական թվականներին Աշոտ Հովհաննիսյանը մարքսիստ պատմաբաններից առաջիններից մեկը պայքար ծավալեց դաշնակցության գաղափարախոսության դեմ։ Այդ կապակցությամբ Աշոտ Հովհաննիսյանը գրեց «Դաշնակցությունը և պատերազմը», «Դաշ-

նակցական գաղափարախոսության ընթացիկ կուրսը», «Դաշնակցության սոցիալական ծագումը» «Դաշնակցության առիթով» ուսումնասիրությունները, որոնց մեջ մերկացնում էր դաշնակցության հակասովետական, հակահեղափոխական էությունը։

Աշոտ Հովհաննիսյանը առաջիններից մեկը ձեռնամուխ եղավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմությունը շարադրելուն։ «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» աշխատության մեջ նա քննության ենթարկեց Մայիսյան ապստամբությունը, իսկ «Համազգային կրիզիսը» նվիրված է Հայաստանում սովետական կարգերի հաստատման նախապայմանների վերլուծությանը։ Այս աշխատություններում ընդհանուր գծերով տրված են Հայաստանում սովետական իշխանության համար մղված պայքարի կարևորագույն էտապները, փորձ է արված բացահայտելու Հայաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարի օրինաչափությունները։ Բոլշևիկյան կրքոտությամբ գրված վերոհիշյալ բոլոր աշխատությունները հարուստ են լայնախոհ պատմաբանին հատուկ կարևոր ընդհանրացումներով։

Աշոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ լույս են տեսել բազմաթիվ պատմագիտական աշխատություններ, որոնք իրենց վրա կրում են պատկառելի խմբագրի աղդեցության կնիքը։

Այսպիսին է, ընդհանուր գծերով, սեղմ բնութագրությունը Աշոտ Հովհաննիսյանի գիտական ժառանգության, որն իր խոր հետքն է թողել սովետահայ պատմագրության մեջ։ Անձնվեր քաղաքացու և խոշոր գիտնականի անուրանալի ծառայությունները հարազատ ժողովրդին և հայրենի գիտությանը ըստ արժանավույն են գնահատվում այժմ և կգնահատվեն ապագա սերունդների կողմից։ Նրա կյանքը գիտությանը և ժողովրդին բոլորանվեր ծառայելու ուսանելի օրինակ է։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՑ

Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

Առաջին իսկ ուսումնասիրությունը՝ «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը», որ լույս տեսավ Մյունխենում 1913 թվականին, կանխորոշեց գիտնական ու հետազոտող Աշոտ Հովհաննիսյանի նախասիրած բնագավառը՝ հայ հասարակական-ազատագրական մտքի պատմությունը։ Նախընտրած ասպարեզն ինքնին. ենթադրում է այն դժվարությունը, որին պիտի դիմաներ հետազոտող միտքը, պարտադրելով սրան իմացություններ մի հանրագիտական մասշտաբ, ուր պիտի միահյուսվեին փիլիսոփայության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության, գրականագիտության և հասարակագիտության այլևայլ ճյուղերի նստվածքները։ Ինքնին յուրահատուկ դիտելով այս Աշոտ Հովհաննիսյանի գիտական խառնվածքին և ունակությանը, տեղին ենք գտնում հատկապես շեշտել այն առանձնահատուկ հետաքրքրությունն ու հետևողական հակումը, որ պատմաբանն ի հայտ է բերել հայ գրականության պատմության հարցերի նկատմամբ։ Այս իմաստով, պատմագիտությունն ու գրականագիտությունը նրա ուսումնասիրություններում ցուցադրում են նեղքին միասնություն և լրացնող մերձեցում։ Ավելի դիպուկ բնորոշում, քան պատկերավոր խոսք կլիներ ասել, որ Աշոտ Հովհաննիսյանը հմուտ պատմաբան է գրականագիտության բնագավառում և հազվագյուտ գրականագետ՝ պատմագիտության ասպարեզում։ Պատմաբան-գրականագետի հետազոտական շրջանակները բավականաչափ լայն են. դիմել է աղբյուրագիտական որոնումների, կատարել է տեքստաբանական աշխատանք (Միքայել Նալբանդյանի «Անտիպ երկերը») գրել է մենագրական հետազոտություններ («Խաչատուր Աբովյան», «Ֆրիկը

պատմաքննական լույսի տակ», «Մքիթար Նալբանդյանը և նրա ժամանակը»), հանդես եկել հոդվածներով ու ուսումնասիրություններով՝ հայ գրականության պատմության առանցքային հարցերի վերաբերյալ:

Մեր նպատակը չէ համակարգել պատմաբանի՝ գրականագիտության բնագավառին հարող հետազոտությունները, և մանավանդ թե ղբաղվել դրանց քննական վերլուծությամբ: Մեր հետաքրքրությունը տվյալ դեպքում հանգում է մասնավոր խնդրի՝ ցույց տալ Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական հետազոտությունների գիտական նշանակությունը հայ գրականագիտության մեթոդաբանության տեսակետից:

1

Առաջադրված հարցը առանձնահատուկ գիտական խմաոս ւ ստանում այն իրողությամբ, երբ ներկայանում է պատմական պրոցեսի հսկայական տարածության, երևույթների պատմական ղարգացման տրամաբանական կապակցության վրա: Փաստ է, ոլ հայ հասարակական-ազատագրական մտքի պատմաբանը քննական հետազոտության որորտի մեջ է առել հայոց պատմության դարերն իր ամբողջական ընթացքով՝ սկսած հնագույն շրջանից մինչև մեր օրերը: Գրեթե բաց տարածություն չկա. եթե «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» կապիտալ աշխատությունը ներառնում է հարցի պատմությունը խոր միջնադարից մինչև 18-րդ դարասկիզբը, եթե առանձին ուսումնասիրություններում գիտնականն արծարծել է 18-րդ դարի ազատագրական մտքի գլխավոր ուղղությունները և եթե ընդունենք, որ նա գերազանցապես ղբաղեցրել է իրեն 19-րդ դարի հասարակական կյանքի բարդ հանգույցների քննաբանությամբ, ապա ակներև կլինի այն հսկայական ուղեգիծը, որ ակոսել է պատկառելի գիտնականի քննախույզ միտքը: Ինքնին հասկանալի է, որ հայ գրականության պատմության մեթոդաբանության հարցերն իրենց հերթին հանձնառուն են ուրույն պատմական շղթայակցում՝ ներառնելով ինչպես հին ու միջնադարյան, նոյնպես և նոր շրջանը:

Վաղ և ուշ միջնադարի գրականության պատմության մեթոդաբանության տեսակետից բացառիկ նշանակություն ունի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատությունը՝ հայ

գրքի և մատենագրության պատմության բացառիկ երևույթներից մեկը։ Հենց միայն աշխատության կոնցեպցիայի՝ ազատագրության տեսիլային լեգենդի կռահումը և սրա դարավոր ուղիների քննական վերլուծությունը, հենց միայն փաստա-աղբյուրագիտական հսկայական նյութի համակարգումը բավական են հավաստելու գիտնականի երևակայության թռիչքն ու տեսահորիզոնի լայնությունը, ինքնակարողության չափն ու ենթարկող ուժը։ Հովհաննիսյանը, հիրավի, գիտական նոր բարձունքի վրա դրեց հայ տեսական-պատմագիտական միտքը և իր տեղը վավերացրեց հայագիտության պատմության դասականների շարքում։

Հայոց հին և միջնադարյան գրականության պատմության մեթոդական սկզբունքները ուղիղ թելերով կապակցվում են գիտական այն առաջադրությին, որ գիտնականը հատկացնում է իր ուսումնասիրությանը։ «Ազատագրական մտքի պատմության գաղափարաբանական ոլորտն ընդգրկող այս երկում,— գրում է հեղինակը,— հայ ժողովրդի սոցիալական և քաղաքական զարգացման ընթացքի և, հատկապես, ազատագրական շարժման թեր ու դեմ ուժերի պատմության վրա ծանրանում ենք այն չափով, որ չափով այդ անհրաժեշտ է շարժման իդեական տարբերակումներն ու բախումները լուսաբանելու կամ նրան մասնակցած դասակարգերի ու խմբավորումների, հոսանքների ու գործիչների նպատակադրումներն ու հայացքները ըմբռնելու համար»[1]։

Գիտնականի խորաթափանց միտքը հայոց պատմության բարդ մթնոլորտի սոցիալական ու մտավոր-գաղափարական տեղումները իմաստավորում է նոր լուսաբանությամբ, հիրավի ընդլայնում Հայաստանի պատմության ներքին բովանդակությունը՝ կապակցելով այն համաշխարհային իրադարձությունների ու մտավոր որոնումների լայն հորիզոններին։ «Դրվագները» տալիս է միջնադարյան Հայաստանի ներքաղաքական, սոցիալ-դասակարգային հարաբերությունների այնպիսի վերլուծություններ, որոնք մինչ այդ անհայտ էին հայ պատմագրությանը։ Էական է դիտել, որ գիտնականը հետամուտ է ոչ այնքան պատմական դեպքերի ժամանակագրական վավերագրությանը, որքան նրանց պատմա-փիլիսոփայական իմաստի բացահայտմանը։ Նյութի գիտական մշակումը և նրա փիլիսոփայական իմաստավորումը ուրույն որակներ են։ Ամեն

---

[1] Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, հատ. 1, Երևան, 1957, էջ 7։

մի գիտության այնտեղ է հասնում դասական կատարելության, երբ ստանում է փիլիսոփայական կերպարանք, իսկ այնտեղ, ուր այն վերաճում է փիլիսոփայության, ինքնին վավերացնում է օրինաչափություններ, որոնք ստանձնում են մեթոդաբանական ելակետի նշանակություն։ Ամենից առաջ հենց պատմության փիլիսոփայության իմաստի մեջ պետք է կռահել «Դրվագների» նշանակությունը գրականագիտության մեթոդաբանության տեսակետից։

Մի ավանդական տրվածքով հայ գրականագիտությունը միջնադարյան Հայաստանի գաղափարաբանության հարցերը շարունակում է դիտել առերևույթ ընդհանրության կեղևի տակ, չփորձելով կռահել սոցիալական որոշակի շերտերի, դասերի ու դասակարգերի տարընթաց միտումները։ Այս տեսակետից առավել «միասնական» էր ներկայանում ազատագրական շարժման գաղափարաբանությունը։ Այստեղ արդեն հետազոտողների հետաքրքրությունը կանգ է առնում իրողությունների ընդհանուր-ազգային միավածության փաստի հանդեպ, ընկրկելով իրողությունների սոցիալական ներհակությունները զատորոշելու դժվարության առջև։ Ա. Հովհաննիսյանը գրում է միջնադարյան Հայաստանի գաղափարաբանության միասնականության պատրանքը և հասարակական կառուցվածքի բարդ շերտավորումների ոլորտում ի հայտ բերում գաղափարական տարընթաց ուղղությունների սոցիալական, դասակարգային ներհակ միտումները։ Գիտնականի վերլուծող միտքը փայլուն արդյունքներ է բացահայտում, երբ քննում է ազատագրության լեգենդի դասային կողմնորոշումները, այն դիտարկում հոգևոր դասի, ֆեոդալների, գյուղացիության ու քաղաքաբնակների սոցիալական շահերի կիզակետում։ Ինքնին հասկանալի է, որ հայոց պատմության, հայկական մտքի ազդեցիկ գաղափարաբանությունը չէր կարող չարտացոլվել դարաշրջանի գեղարվեստական մտածողության մեջ, յուրովի անդրադարձնելով ժամանակի գաղափարաբանության սոցիալ-դասակարգային կողմնորոշումները։ Եվ այսպես, «Դրվագների» էջերում իրար հաջորդում են գրողներն ու մատենագիրները, որոնց երկերում գիտնականը կարդում է դարաշրջանի մտայնության նստվածքները, որտում այն երակը, որը տանում է դեպի միջնադարի մտածող մարդկանց աշխարհայացքային հենքի բացահայտումը։ Մի սխեմա է վավերացրել արդի գրականագիտությունը, որն իբրև հավիտենական ճշմարտություն հատկացվում է բոլոր ժամանակների և բոլոր գրողների աշխարհայացքին։ Ընդհանուր առմամբ բանը հանգեց-

վում է մի երկվության, ուր վերջնական գնահատականի է ենթակա գրողի աշխարհիկ տրամադրությունների և ժամանակի մխիթարական մտածողության հակադրությունը։ Իսկ թե կոնկրետ ի՛նչ սոցիալական նախադրյալներից է ելնում կամ գաղափարական ի՛նչ հեռուներ է գծում այդ աշխարհայացքը, այնպես էլ մնում է չբացահայտված։ «Դրվագների» հեղինակը ոչ միայն հետաքրքրական, նոր հիմնավոր բնորոշումներ է տալիս դարաշրջանի մտածող մարդկանց սոցիալ-փիլիսոփայական հայեցողությանը, գտնում նոր երանգներ միջնադարյան գրողների աշխարհայեցության սիստեմում (Նարեկացի, Շնորհալի, Դոշ, Ֆրիկ, Առ. Դավրիժեցի, Ասողիկ, Լաստիվերացի, Համբրոնացի և ուրիշներ), այլև առաջադրում է տեսական դրույթներ, որոնք սկզբունքային նշանակություն ունեն հայ միջնադարյան գրականության պատմության մեկնաբանման տեսակետից։

Թե առաջադրված մեթոդաբանական սկզբունքները հետազոտական ինչ արդյունքներ են խոստանում, կարելի է դատել հենց իր՝ Ա. Հովհաննիսյանի «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ» մենագրական ուսումնասիրությունից։ Միջնադարյան տաղերգուներից Ֆրիկը թերևս ամենից ավելի է արժանացել գիտական քննության՝ թե բանասիրական տեսակետից և թե քննական վերլուծության իմաստով։ Չի կարելի չնշել, օրինակ, այն խորիմաստ մեկնաբանությունները, որ տվել է Մանուկ Աբեղյանը Ֆրիկի անհատականության ու ստեղծագործության պատմական ու գեղարվեստական արժեքին։ Այսուհանդերձ պատմաբանի ուսումնասիրությունը ոչ միայն բացում է շատ առեղծվածներ, այլև իր մեկնաբանություններով նոր սկզբի վրա է դնում գրողի աշխարհայացքի սոցիալական ակունքների ու փիլիսոփայական սևեռումների գիտական մեկնակետը։

Դեռ մի կողմ թողնենք բանասիրական այն նորագյուտ մեկնաբանությունը, որ գիտնականը պատմական վավերաթղթերից որսում է Ֆրիկի ստեղծագործության մեջ «յնքան առեղծվածային դիտված «մասաս» և «մասասչի» արտահայտություններին։ Առավել էականն այն է, որ նա բացում է դարաշրջանի սոցիալական հարաբերությունների բարդ կծիկը և դրա ոլորտներում հայտաբերում բանաստեղծի արտահայտած տրամադրությունների սոցիալ-պատմական ենթիմաստը։

Միջնադարյան տաղերգուների հետազոտողները դարաշրջանի իրենց բնութագրություններում չեն խուսափել «տրադիցիոն և պրի-

միտիվ» մի ըմբռնումից, հայկական մոթի մաքառումները հանգեցնելով «քաղաքակիրթ հայերի» և «բնածին ելուզակների» հավերժական պայքարն արտահայտող եզրերի հակադրության։ Այստեղ դիցուկ թե կա մի պատմական ճշմարտություն, բայց պատմական այդ ճշմարտությունը պատճառի ու հետևանքի հանրագումարի մեջ սքողում է ներքին-սոցիալական, թերևս առավել էական, մի ճշմարտություն, որը չէր կարող վրիպել մարքսիստ պատմաբանի տեսադաշտից։ «Մի ժամանակ էր այդ,— մեկնում է Ա. Հովհաննիսյանը,— երբ ագրարային և խաշնարածային տնտեսության կողքին նշանակություն էին ստանում առևտրական ու ֆիսկալ եկամուտները։ Պետական հարկերի ձև ստացած հողային rենտան իրացվում էր առևտրի համաշխարհային շուկաների հետ հանդուցավորվող քաղաքներում, վերածվում ապրանքի ու փողի։ Քաղաքներում կենտրոնանում էին զորքերի մատակարարման, հարկահավաքման, հանքերի շահագործման, պետական շինարարությունների հետ կապված կապալային և առևտրա-վաշխառուական գործարքները, կրպակների, քարվանսարանների, ջրաղացների շինարարությունն ու մասնավոր շահագործումը։ Գյուղացիներից գանձվող rենտայից ու առևտրա-արդյունաբերական շահույթներից զատ քաղաքներում կուտակվող հարստության աղբյուրներ էին նկատվում ավարառումները, հափշտակությունները, տուրկավաճառքը, կեղծումներն ու կաշառքը։ Չարաշահումներն ու կեղեքումները կազմալուծում և քայքայում էին քաղաքային տնտեսության հիմքերը, վերարտադրում կամ նոր կաղապարների մեջ մտցնում տընտեսության հին ֆեոդալական սիստեմը, տալով նրան ավելի դաժան ու դիշատիչ բնույթ և հանգելով գյուղացիների ճորտացման, երևույթ՝ որ օրինական տանկցիա է տտանում 13-րդ դարի կեսերից՝ Հուլավու և Ղազան էլխանների ժամանակներից ի վեր»[2]։

Ահա պատմական այն բարդ ոլորանները, որոնց ծալքերում ձև էին առնում ժամանակի մտածող մարդկանց տրամադրությունները, նրանց ապրումներն ու խոհերը։ Գիտական եզրահանգումները այնուհետև տրամաբանական փայլ են ստանում, երբ պատմաբանը դարաշրջանի այդ բարդ կացություններին լծորդում է Ֆրիկի՝ որպես անհատականության «սոցիալական կենսագրությունը»։ «Մուրհակների տարափից նեղված, պարտատերերից

---

2 Ա. Հովհաննիսյան, Ֆրիկը պատմաբանական լույսի տակ, Երևան, 1955, էջ 8—9։

սրտագրած, կշտամբանքներից ամոթահար, բոլոր հեռանկարներից ձեռնաթափ, հոգսերի ու վշտերի հատակն իջած՝ բանաստեղծը փորձում էր խեղդել իր տառապանքը գինու գավաթի մեջ, երբեմնակի մարում ինքնամոռացության գրկում:

Բարեկեցության վերնահարկից նա իջնում է կարիքի այն ներքնատունը, որը տկար բնավորությունների համար դառնում է բարոյալքման խորխորատ: Այդպիսիների համար չկա արդեն ոչ մի վերելք և նրանց չի կարող սփոփել անգամ մարդկային ձրի կարեկցությունը...

Սակայն Ֆրիկը չէր պատկանում տկար մարդկանց թվին: Կյանքի դառն փորձերը միայն պատճառ էին, որպեսզի նա բարձրանար անձնական մտահոգությունների նկուն մակերևույթից և նշմարեր այն ճշմարտությունները, որոնց յուրացման կամ կենսագործման համապարհով, ինչպես ուզում էր հավատալ նա, պիտի կործանվեն տիրող անարդարությունները[3]»:

Այստեղ է, որ կազմավորվում է Ֆրիկի անհատականությունը և այստեղ է, որ նրա անձնական կենսագրությունը բախվում է դարաշրջանի իրապարձությունների մեջ, ստեղծելով այն միասնությունը, որը գիտական ելակետ պիտի դառնար ըմբռնելու նրա ստեղծագործության պատմական խմատտը. «Նրա ստեղծագործությունը,— գրում է պատմաբանը,— լրիվ ըմբռնելի են միայն նրա կյանքի ու ժամանակաշրջանի միասնության մեջ: Հանցանքի ու հատուցման, մեղքի ու ղջման, տանջանքի ու փրկագործման տրամադրություններով լի իր ոսկեմատյանում նա պատմում է ալեկոծ իր կյանքի ողջ ողբերգությունը, որի մեջ արտացոլված են փաստորեն միջին դարերի հայ ժողովրդական մասսաների և առաջին հերթին քաղաքային պլեբսի դաժան չարակրությունները, ապրումներն ու տրամադրությունները, երազներն ու հոսսախաբությունները»[4]:

Պետք է դիտել միայն, թե գիտական միտքը ինչ թափանցումների ու նորագյուտ կռահումների է ընդառաջում, երբ ճիշտ գտնված հայեցակետի վրա քննաբանում է Ֆրիկի «բանքերը»: Դարերի խորքից հառնում է մի մեծ անհատականություն, որ իր անձնական կյանքի մեջ անդրադարձնելով դարաշրջանի պատմական հեղաբեկումների հակասական միտումները, իր դեգերումները բարձրաց-

---

3 Նույն տեղում, էջ 55—56:

4 Նույն տեղում, էջ 119:

նում է համամարդկային խոհերի, կյանքի, աշխարհի, աստծո առեղծվածների փիլիսոփայական քննախույզ որոնումների: Հենց այստեղ էլ պատմաբանը կռահում է Ֆրիկի աշխարհայացքի սոցիալ-փիլիսոփայական մտորումների իրական բովանդակությունը. «Ֆրիկը,— գրում է Ա. Հովհաննիսյանը,— ազատ չէր միջնադարյան քերթողներից շատերին հատուկ միստիցիզմից: Սակայն նրա միստիցիզմը իդեոլոգիական շղարշ է սոսկ, որ սքողում է նրա հակաֆեոդալական տրամադրությունները: Նրա միտքը տվայտում է կրոնական կապանքների մեջ, սակայն նա ակտում է արդեն ազատագրվել այդ կապանքներից: Նրա ուշադրությունը թեքվում է դեպի մարդը, դեպի նրա հասարակական կացությունը, կարիքներն ու հույզերը: Նա բևեռում է իր հայացքը ոչ միայն նրա վրա, ինչ հատուկ էր բոլոր մարդկանց, այլ շեշտում է այն, ինչ տարբերում է նրանց և առաջացնում նրանց միջև լուծման սպասող ներհակություններ:

Հին, իդեալիստական աշխարհայեցողության մեջ նա մտցնում է քննադատության ու վերլուծության պայթուցիկ նյութը: Հասկանալի է, որ մտրակող ու բողոքող նրա խոսքը պիտի ընդառաջեր հիմա հասարակության զարկված ու ջրկված այն խավերին, որոնք տրտունջի և բողոքի ձայն են բարձրացնում տիրող անարդարությունների և իշխող աշխարհայեցողության դեմ[5]»:

Որքան Ա. Հովհաննիսյանի վերլուծող միտքը կաշառում է արտաքուստ սահմանազանց լայնատեսությամբ, նույնքան նրա գիտական մեթոդը պարտադրված է պատմականության սխալ ըգռայողությամբ: Բացելով Ֆրիկի գաղափարական ներաշխարհի խիզախ դեգերումները, պատմաբանը ճիշտ տեղում է գտնում այն հանգրվանը, որին կարող էր հասնել միջնադարյան Հայաստանի որոնող միտքը: Աստծու, վերին նախախնամության, օրենքի ու արդարության դեմ Ֆրիկի ծառացումները բնավ հիմք չպիտի ունենային բարձրանալու միջնադարը հերքող հեղափոխական ընդվզումի և պիտի հնչեին որպես վաղորդյան սկեպտիցիզմ, «որ պատմականորեն կանխում է մտքի ազատագրմանը», իսկ նրա աշխարհայացքը չպիտի կարողանար փարատել միջնադարյան մտածողության շամանդաղը՝ հասարակական իդեալը հանգեցնելով անհատական աշխատանքի և անհատական ունակության ազատ կենսա-

---

5 Ա. Հովհաննիսյան, Ֆրիկը պատմաքննական լույսի տակ, էջ 61:

գործման վրա խարսխված դեմոկրատական հավասարականության երազանքին[6]:

«Ծրիկը պատմաքննական լույսի տակ» ուսումնասիրությունը չի հանձնառում բանաստեղծի ստեղծագործության տիպաբանական քննությունը, նրա արվեստի զգացական-հոգեբանական երբեմն հանգների կամ խոսքի, պատկերի գեղարվեստական կառուցվածքի վերլուծությունը: Իր բնույթով նա պատմաքննական հետազոտություն է և որպես այդպիսին առանձնահատուկ տեղ է գրավում հայ բանասիրական գրականության մեջ: Պատմատոպոլոգիական վերլուծության նրա մեթոդը բացառիկ հեռանկարներ է տալիս հայ միջնադարյան գրականության առանցքային հարցերի գիտական լուսաբանության համար:

Հարկ ենք համարում նորից անդրադառնալ «Դրվագներին» ուշադրության առնելու ևս մի երկու դրույթներ, որոնք առնչվում են գրականության պատմության սկզբունքային հարցերի հետ: Դիտենք, օրինակ, հայ գրականության պատմության պարբերացման, գրականության միջնադարյան և նոր շրջանների սահմանագծի խնդիրը: Ինչպես հայտնի է, արդի գրականագիտությունը շրջանառության է օրինական իրավունք տալ մի քանահատ տեսության, որը հայ նոր գրականության ծննդյան վերագրում է 19-րդ դարասկզբին: Գիտական հիմնավորում չստացած մի վարկած է այդ, որ չկարճեց ստուգել իրեն գիտության պատմությամբ և զանց առավ այն ամենը, ինչ վավերացրել էին հայ գրականության պատմագիրները՝ Սոմալյան, Նազարյան, Գաթրճյան, Պալասանյան, Զարբհանալյան, Դուրյան, Լեո, Մանվելյան, Փափազյան, Աճառյան, Զամինյան... ընդհուպ մինչև Մ. Աբեղյան, որոնք հայ մտավոր-գրական շարժման նոր շրջանի սկզբնավորումը վերագրում են 17—18-րդ դարերի սահմանագծերին: Հավանաբար սույն դարասկզբին կերպ առած «ռուսահայոց» և «թուրքահայոց» գրականությունների բաժանումն էր, որ մեխանիկորեն վերաճեց գրականության նոր շրջանի սկիզբը վավերացնող տեսության: Որ այժմ հայ նոր գրականության պարբերացման հարցը գիտական լուծման արժանի խնդիր է, ինքնին ակներև է, և այս իմաստով էական նշանակություն է ստանում պատմագիտության փորձը:

Կարծում եմ, որ հասարակական-ազատագրական մտքի այն պարբերացումը, որ առաջադրում է Ա. Հովհաննիսյանը իր «Դրր-

---

6 Նույն տեղում, էջ 74:

վագներում», ուրույն գիտական արժեք է ստանում նաև հայ գրականության պարբերացման տեսակետից: Հարկավ, կանխակալ մխտում չէ, որ պատմաբանը ազատագրության միջնադարյան լեգենդի բազմադարյան դեգերումները հանգեցնում է գործնական-քաղաքական ծրագիր ակնկալող ռուսական կողմնորոշման: Արտաքուստ լինելով դիվանագիտական կողմնորոշում, այն էապես արտացոլում էր պատմական մի շրջադարձ, որին թևակոխել է հայկական իրականությունը: «Միջնադարյան Հայաստանի իշխող գաղափարաբանությունից» կատարած քաղաքական մի շրջադարձ էր դա, որին ընդառաջում էր հայկական իրականությունը 17-րդ դարի վերջին և որը «Դրվագների» եզրափակիչ էջերում պատմաբանը գնահատում է որպես «հայ նորադարյան պատմության սկզբնակետ[7]»:

17-րդ դարը, հիրավի, բեկում է նշանավորում հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական և մտավոր գրական կյանքում: Մի կողմից աշխուժանում է հայ բուրժուազիան, մյուս կողմից վերանորոգությամբ է համակվում հայ եկեղեցին և շահերի ընդհանրությամբ այդ երկու խավերը մտահոգություն են հանդես բերում ազգային միասնության ու պետական անկախության հասնելու ուղղությամբ: Մի յուրահատուկ համընկնում է տեղի ունենում հայ եկեղեցու և վաճառական դասի տնտեսական ու քաղաքական շահերի միջև: Ա. Հովհաննիսյանն այսպես է բացատրում այդ փոխղությունը. «Իր հերթին վանական-եկեղեցական տնտեսությունները զբաղված էին իրենց հողերի ու կալվածքների, կրպակների, տների, ջրաղացների, դինգերի և այդ կարգի այլ գույքերի ու ձեռնարկների «աշխարհային» գործերով: Վանքը հանդես էր գալիս ոչ միայն որպես կալվածատիրական ձեռնարկների կազմակերպող, այլև որպես դրանց արտադրանքի վաճառահանող: Վանք և շուկա, ուխտագնացություն և կարավանագնացություն սերտ շաղկապված են միմյանց: Եկեղեցին տուզվում էր շուկայի նյութական հոգսերի մեջ, շուկան կարիք էր զգում եկեղեցու «հոգևոր» ապասարկման: Պատահական չէ, որ 17-րդ դարի վանական դիտության և ուսումնասիրության մեջ տեղ էր տրվում «արտաքին գիտություններին» աշխարհային,

---

7 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. 2, էջ 625—633:

գործնական առևտրական պետքերին ծառայող ձեռագրերի բազմացմանը»[8]:

Վանքը բավարարում էր վաճառականության պահանջները՝ ընթերցանության նյութ, գործնական դիտելիքներ, դպրոցական ձեռնարկներ հրատարակելով, մյուս կողմից՝ հայ խոջաներն իրենց ղեցումներն ու ձաշակն էին պարտադրում հրատարակվող գրքերի բովանդակությանն ու արտաքին ձևավորմանը՝ վերջինիս հաղորդելով պարզության ու բնականության, աշխարհային պայծառության ու շքեղության, նպաստում և օժանդակում հայ տպագիր գրքի ծավալմանը: Ինչպես նկատում է պատմաբանը, այդ նախաձեռնությունների քաղաքական միտումն էր «կրթել և դաստիարակել հայրենատիրական ոգով հայ երիտասարդներին ու ընթերցողներին», «հայադավան եկեղեցու առաջավոր մարդիկ ձգտում էին տիրանալ գիտության և ուսուցման գենքին՝ եկեղեցու և ազգի հարատևությունը ապահովելու նպատակով[9]»:

Ստեղծվում են հայկական մտավոր օջախներ, պեղվում են հայոց հին ձեռագրերը և հայտնաբերում պատմական Հայաստանը՝ քաղաքացիական ու մտավոր կյանքի վեհությամբ, տպագիր մեքենան շատ շուտ դառնալով հայերի սեփականությունը, հրապարակ է հանում ինքնուրույն ու թարգմանական ձեռագրեր, հայկական միտքը մերձենում է քաղաքակիրթ աշխարհի իրագործություններին և սրանց օրինակով շարժում հայկական կյանքը: Ազգը, հայրենիքն ու հայրենասիրությունը հայկական մտավոր կյանքի գլխավոր նշանաբանը դարձան:

Կուլտուր-լուսավորական ու կրթական այդ ձեռնարկումները, որ իմաստ տվեցին մտավոր-գրական կյանքի վերանորոգությանը, ինքնին նշանավորեցին հայ մշակույթի ու գրականության պատմության նոր շրջանի սկիզբը: «Դրվագների» հեղինակը հայ ազատագրական մտքի պատմության անցուդարձերի խորագրկիտ վերլուծությամբ, հաստատում է այն դրույթը, որ առաջադրում էր Մ. Աբեղյանը հայ միջնադարյան և նոր շրջանների գրականության հաջորդականության վերաբերյալ. «Ինչպես մեր՝ 19-րդ դարու կյանքի ձգտումը,— գրում է Աբեղյանը,— նույնպես և գրաբար գրականությունը բնական շարունակություն է նախորդ երկու դարերի: Այն, ինչ որ 17-րդ դարն սկսել էր և որ այդ և հաջորդ դարում շատ

---

8 Նույն տեղում, էջ 170—171:

9 Նույն տեղում, էջ 171—172:

դանդաղ կերպով և մեծ ընդհատումներով էր առաջ գնացել բուն երկրի մեջ, 19-րդ դարն ստանում է իբրև ժառանգություն և ավելի հաջող հանգամանքների մեջ ավելի արագ է առաջ տանում և զարգացնում: Անցած դարու նոր գրաբար գրականության սկիզբն, ուրեմն 17-րդ դարու շարժման մեջ պետք է տեսնել և ոչ 18-րդ դարու մեջ:

...Մեր նոր գրականությունն սկսվում է 17-րդ դարում և այս վերջին երեք դարերը շարունակություն են միմյանց: 17-րդ դարն է միայն, որ շարունակողը չէ նախորդին, այլ միայն վերածնող[10]»:

«Դրվագներում» պատմա-քննական լույսի տակ ներկայացված աղատագրության տեսիլային կոնցեպցիան գիտական նախադրյալներ է տալիս բացատրելու նաև 18-րդ դարի և 19-րդ դարասկզբի գրականության որոշ առանձնահատկություններ: Ճշմարիտ է, որ խոր միջնադարից ծնունդ առած ազատագրության լեգենդը նախապես կառչած լինելով քրիստոնեական գուշակություններին, 18-րդ դարում ուղիներ է որոնում դեպի դիվանագիտական-քաղաքական ռեալիզմ: Սակայն ակներև է, որ հայ գրականությունը հետագայում ևս շարունակում էր ազատագրության պատրանքը վերապրել տեսիլքի մեջ: Որքան դա 19-րդ դարասկզբին արդեն պատմական անաքրոնիզմ էր, այնուամենայնիվ արտահայտություն էր ազգային մեսիանիզմի այն նորահայտ մտայնության, որով հոստավառվում էին զարթոնք ապրող փոքր ազգերը, և որ մի առանձին հավատով էր հնչում Արարատը խորհրդանշող բիբլիայի երկրում: Ազգային այդ միսիանիզմը, որ աստվածային նախախնամության կամքին էր հանձնել «Դրախտ Հայաստանի» հեռապատկերը, քիչ չէ հայկական գեղարվեստական երևակայությունը սնուցել սուրբ նահապետի հայտնության տեսիլքին: Մի իրողություն էր սա, որ իր արտահայտությունը գտավ ոչ միայն հայ կլասիցիզմի գրողների երկերում, այլև հայկական վաղ ռոմանտիզմի ներկայացուցիչների ստեղծագործություններում՝ Ալամդարյան, Թաղիադյան, Ալիշան, Պեշիկթաշլյան և անդամ Թափանցեց Աբովյանի, Պատկանյանի, Շահազիզի, Րաֆֆու գեղարվեստական մտածողության ուղրտները:

Բայց երևույթի գրական-պատմական շառավիղները սրանով չէին վերջակետվում: Այն, ինչ ծնունդ էր առել հայկական մտածողության բուն ակունքներից և դարեր շարունակ արմատացել ազգային հոգեբանության նստվածքներում, երևի սիտի ձև տար մի

10 Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, հատ. 2, Երևան, 1946, էջ 439—440:

յուրօրինակ ազգային գեղարվեստական մտածողության։ Եվ այս ուղիներո՞ւմ չպիտի որոնել արդյոք գաղտնիքն այն բանի, որ պատրանքն ու տեսիլը բանաստեղծական մտածողության որուշ ոճ ձևավորեցին հայկական պոեզիայում՝ Թումանյանից ու Իսահակյանից մինչև Զարենց ու Պարույր Սևակ։

Ա. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատությունը ուրվագծում է մեթոդաբանական սկզբունքներ, որոնք օգնում են գիտականորեն լուսաբանելու գրական-պատմական այս իրողությունների դիալեկտիկական օրինաչափությունները։

2

Հետազոտությունների գրականագիտական մերձեցումներն առավել անմիջական դարձան, երբ պատմաբանը թևակոխեց 19-րդ դարը։ Այստեղ արդեն նրա իսկական հերոսները հայ դասական գրողներն ու գործիչներն էին՝ Թաղիադյան, Աբովյան, Նալբանդյան, Նաղաշյան, Պատկանյան, Րաֆֆի, Պռոշյան, Շահազիզ, Սրվանձյան, Ոսկան և շատ ու շատ ուրիշներ։ Պատմա-գրականագիտական ուսումնասիրություններում Ա. Հովհաննիսյանը հետամուտ եղավ մի հիմնական նպատակի՝ վեր հանել գրականության սոցիալական բազիսն ու գաղափարական հիմնաշերտերը, գտնել այն ընդհանուր օրինաչափությունները, որոնք գեղարվեստական գրականությունը մերձեցնում էին հասարակական մտքի պատմությանը և յուրովի արտացոլում 19-րդ դարի հայկական կյանքի իրադարձությունները։ Գիտնականի քննական հայացքը նախապես միտված էր հայ մտավոր-մշակույթի պատմության ըմբռնումը ավանդական-ազգային մեկնաբանությունների նեղ ոլորտից դուրս բերելու և մարքսիստական մեթոդոլոգիայի ուղեգծի վրա դնելու մտահոգությամբ։

1933 թվականին լույս տեսավ Ա. Հովհաննիսյանի «Աբովյան» մենագրություն-տրակտատը։ Հախուռն ներշնչանքի մի արգասիք էր դա, ուր գրչի տրամախոսական փայլը այսօր էլ պահպանում է իր էսթետիկական հրապույրը։ Բանավեճի առիթը Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» (1932) հետազոտական էսսեն էր։ Հետաքրքրական է դիտել, որ 19-րդ դարի մտավոր-գրական շարժման մեծ հիմնադրի կերպարը 30-ական թվականներին առանձնահատուկ ուշադրության էր արժանանում։ Գրողներին գբաղեցնում էր նրա գեղարվեստական բարդ կերպարի

հայտնությունը, պատմաբաններին ու գրականագետներին մղում էր տալիս նրա ստեղծագործության գիտական հետախուզումը: Պատմա-կենսագրական վեպի մտահղացումը գրող Բակունցին նույնպես մղեց դիմելու Աբովյանի կյանքի և ստեղծագործական անհատականության առեղծվածին, և ի պատիվ նրա պիտի ասել, որ վերծանելով մեծ լուսավորչի փոշեծածկ ձեռագրերը և թափանցելով նրա ներքին աշխարհի թաքուն անկյունները, նկատեց իրողություններ, որոնք մինչ այդ անհայտ էին բանասիրությանը: Եվ այժմ արդեն ակներև է, որ գրողի ինտուիցիան Աբովյանի աշխարհայացքի համակարգում կռահել է երևույթներ, որոնց դեռևս անհաս էր գիտական միտքը: Բայց որքան դա նրա ուժն էր, նույնքան էլ այն պիտի ի հայտ բերեր իր թուլությունը՝ այդ կռահումների սոցիալ-պատմական պատճառականության գիտական բացատրության հարցում, որը ինքնաբերաբար ստպարեց պիտի տար եղրահանգումների վարկածային լուծմանը: Հենց այս կետում էր, որ բանավեճ հարուցեց գիտական միտքը: Բանավեճն, իհարկե, կողմերը ներկայացնում է հակառակ բևեռներում, բայց մեր կարծիքով մի ինչ-որ տեղում գրողի ձգտումը մեթոդաբանական եղր է գտնում պատմաբանի առաջադրույթի հետ: Ակնարկելով ժամանակի աբովյանագիտության անբարեհույս մակարդակը, Բակունցը գրում է. «Աբովյանի կյանքով, մանավանդ նրա անհայտացման առեղծվածով հետաքրքրվողները մանրակրկիտ չեն ուսումնասիրել նրա ժամանակը... Հենց միայն «ընկերություններ» կազմելու գաղափարը, որ ինչպես տեսանք, համարյա մինչև անհայտացումը նա ունեցել է, շատ ավելի կարևոր է նրա կյանքն ու գործունեությունը ճիշտ հասկանալու, քան ուսումնասիրողների հայրենասիրական դրվատումները, որոնց առանցքը եղել է մեծ մասամբ «Վերք Հայաստանին[11]»: Ոստի որքան էլ բակունցյան դոկտրինան ավելի լեգենդ էր, քան գիտություն և որքան էլ այդ լեգենդը հերքող պատմաբանի փայլով գրված տրակտատը երանգավորված էր ժամանակին հասկանալի, բայց այժմ արդեն հնացած որոշ հայեցողությամբ, այնուամենայնիվ թե՛ գրողի և թե՛ պատմաբանի աշխատություններն ուշագրավ էին այն իմաստով, որ «հայրենասիրական դրվատումների» վարժապետական մեթոդին հակադրում էին գրողի ստեղծագործության և ժամանակի միակցված ու համակողմանի ուսումնասիրության պահանջը:

[11] Ս. Բակունց, Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը», Երևան, 1932, էջ 33:

Բանավեճը մնում է բանավեճ և առաջին պլանի վրա է մղվում այն սկզբունքները, որ կողմերը հանդես են գալիս տրամագծի հակադիր կետերում: Ա. Հովհաննիսյանը փորձում է վիճարկել քակունցյան լեգենդը գիտական ճշմարտությամբ: Նա վերլուծում է ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունների, քաղաքական կացության իրական հանգամանքները, ձգտում Աբովյանի աշխարհայացքի նստվածքները հայտաբերել դարաշրջանի բարդ հարաբերությունների հակասական ուղիներում, գիտական ապացույցի ուղենիշ պարզելով գաղափարների պատմականության սկզբունքը: Թող տարօրինակ չհնչի, եթե ասենք, որ ճշմարտությունները էլ հաճախ վրիպում են: Որքան էլ պատմաբանի մոտեցումը տեսականորեն իրավացի է և ինչքան էլ գիտական վերլուծության նրա եղանակը զարմացնում է տրամաբանության ուժով, այնուամենայնիվ, նա չի խուսափում իր տուրքը տալ ժամանակի մեթոդաբանական նախապաշարմունքին, հենց գաղափարների պատմականության իր դրույթը ենթարկելով սոցիոլոգիական մոդեռնիզմի կոպտացումներին: Բայց նշելով այս, չենք կարող անտեսել Ա. Հովհաննիսյանի «Աբովյան» աշխատության, այսօր իսկ արժեք ներկայացնող այն էջերը, որոնք վերաբերում են անցյալ դարի առաջին կեսի Հայկական իրականության սոցիալ-տնտեսական հարաբերությունների ու քաղաքական կացության խորամիտ վերլուծությանը:

19-րդ դարի հայ գրականության պատմության մեթոդաբանության հարցերի համակողմանի քննության է նվիրված Ա. Հովհաննիսյանի «Գրական նկատողություններ» («Խորհրդային գրականություն, 1934, № 3—4, 1935, № 1) ընդարձակ հոդվածը: Այս անգամ առիթը Հայաստանի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ձեռնարկած «Հայ գրականության պատմության» յոթհատորյակի երկրորդ հատորի հայտնությունն էր (1933), որն ընդգրկում է 1830—60-ական թվականների գրականությունը: Հայոց նոր շրջանի գրականության մարքսիստական պատմության առաջին փորձը, հիրավի, մեթոդաբանական լուրջ ճեղքվածքներ ուներ, որը չէր կարող անտես մնալ քննադատության ուշադրությունից: Նկատենք, որ գռեհիկ սոցիոլոգիզմի բեռը չափազանց ծանր նստեց գրականության պատմության հեղինակների գիտական հայեցության վրա: Իրականում ստացվեց ոչ թե գրականության պատմություն՝ գեղարվեստական զարգացման օրինաչափությունների բացահայտման հիմքի վրա, այլ մի տեսակ հասարակական հոսանք-

գիական ուղղափառության սղոսկումները։ Բայց փաստը դիտելուց ավելի էական է երևույթի պատմական ճիշտ գնահատականը։ Ինչ խոսք, Ա. Հովհաննիսյանի սխալներն ու ծայրահեղությունները ենթակա են պատմական քննադատության, սակայն գիտության պատմության տեսակետից առավել կարևորություն է ստանում ա՛յն քննադատությունը, որ գիտնականի հետազոտական մեթոդը պարտադրում է դոգմատիզմի և դոգմատիզմի հանդեպ։

Մի բան, որ հատուկ շեշտով էր հնչում Ա. Հովհաննիսյանի աշխատություններում և ինքնին ստանում մեթոդաբանական ուղեցույցի նշանակություն, դա գիտության հնարավորությունների դերադասությունն է դոգմատիզմի ու սխեմատիզմի հանդեպ։ Ամեն բանից առաջ պետք է լինել հետազոտող, ուսումնասիրել փաստերը, հայտաբերել փաստերի ներքին կապակցությունը և ենթարկել այն պատմության տրամաբանությանը, որսալ օրենքն ու օրինաչափությունը գաղափարական արտահայտությունների բարդ ու հակասական ուղիներում։ Գիտական մկիզբը, ինքնին, ներքին տրվածք ունի մերձենալու օբյեկտիվ օրինաչափությունների ճշմարիտ ըմբռնմանը և հենց այս սկզբին պիտի վերագրել ռացիոնալ այն տարերքը, որ պարփակում է Ա. Հովհաննիսյանի 30-ական թվականների գիտական ստեղծագործությունը։ Գիտական-հետազոտական ունակության պահանջը տակ պոլեմիկական պատրվակը չէ, որ իբրև կշտամբանք պարզում է նա իր քննախոսականներում, այլ ներքին տարերքի գիտակցված արտահայտություն։ Եվ հազիվ թե այս իրողության խոստովանանքը վրիպած լիներ նրա ներքնազգացողությունից, երբ գրական պոլեմիկայից անցում պիտի կատարեր դեպի հետազոտության ասպարեզը։ «Խմբագրական մեր լուսաբանությունների մեջ,— գրում է Ա. Հովհաննիսյանը Միքայել Նալբանդյանի «Անտիպ երկերի» առաջաբանում,— խուսափել ենք գրեթե գրական բանավեճից։ Ոչ այն պատճառով, որ սկզբունքորեն հրաժարվում ենք հակառակ հայացքների քննադատությունից, այլ որ խոսքի քննադատությունից գերադասում ենք գործի քննադատությունը, առձեռն գրականության մեթոդաբանական ֆորմալ քննադատությունից առավել կարևոր գործ համարելով աղբյուրների քննադատական յուրացումը, նյութի գրական վերլուծությունն ու շարադրանքը։ Ինքյան քննադատության ավելի դժվարին ու պատասխանատու տեսակն է այս, որից հետո վերանում է հաճախ նույնիսկ բանալ ու շահագուրկ պոլեմիկայի նյութ դարձած հին

խնդիրը և կամ խնդրի լուծումն իսկ փոխադրվում պոլեմիկայի սկզբունքային ու փաստական ավելի բարձր մի աստիճան։

Ջարգացման միասնական պրոցեսի տարբեր աստիճաններից բաղված պատմական կցկտուր դեպքերի ու օրինակների կուտակումը պատմություն չէ տակավին, ինչպես նաև պատմական պրոցեսի սխեմատիկ ընդհանրացումը չի նույնանում պատմական իրական ու ամբողջական պրոցեսի հետ։ Պատմությունը գրվում է կապակցվող փաստերի հիման վրա, և պատմական պրոցեսի դիալեկտիկական ընդհանրացումն իսկ արվում էր կոնկրետ նյութի մանրազնին վերլուծության ու առկա աղբյուրներն ապառող ուսումնասիրությունից հետո միայն[14]»։

Թե ինչ էր ակնկալում գիտնականի ձգտումը, ինքնին ցույց տվեց Մ. Նալբանդյանի «Անտիպ երկեր» ստվար հատորը՝ իր ամբողջ կառուցվածքով՝ առաջաբան, ծանոթագրություններ, կոմենտարներ՝ գիտական հաղվագյուտ մի հրատարակություն, որն այսօր իսկ պահպանում է իր օրինակելիությունը։ Առաջին անգամ լույս աշխարհ հանելով Նալբանդյանի ստեղծագործության մի պատկառելի, ի դեպ և արժեքավոր բաժինը, Ա. Հովհաննիսյանը մեկնաբանեց այն բացառիկ արժեքավոր «կոմենտարներով» որոնք փաստերի հարստությամբ, ընդհանրացումների ուժով և գիտական խորությամբ նոր լույս են սփռում ոչ միայն գրողի կյանքի ու ստեղծագործության, այլև ժամանակաշրջանի գրական-հասարակական շարժման հանգուցային հարցերի վրա։ «Անտիպ երկերը» գիտական նոր մակարդակի վրա դրեց և շատ կողմերով ուղենշեց Նալբանդյանագիտության ապագան։

Գիտական հրատարակության հասկացությունն արդի իմաստով դժվար թե տպարիչ լիներ արտահայտելու հետազոտական աշխատանքի այն հսկայական չափը, որ իրագրել է Ա. Հովհաննիսյանն «Անտիպ երկերում»։ Այն, ինչ անվանվում է առաջաբան, ծանոթագրություններ, կոմենտարներ, անվանական բառարան և որոնք ներկայանում են որպես գիտական հրատարակության բաղադրիչներ, շուրջ 600 էջեր են զբաղեցնում, ուր փաստական ու գիտական արծարծումների մի հսկայական պաշար է տեղակայված։ Գիտական-բանասիրական նշանակությամբ բացառիկ արժեք են ներկայացնում «Կոմենտարները» (շուրջ 400 էջ), որոնք

---

14 Մ. Նալբանդյան, *Անտիպ երկեր*, Երևան-Մոսկվա, 1935, էջ XI—XII

Նալբանդյանի նորատիպ երկերի խորակրկիտ մեկնաբանումներից զատ, արծարծում են գրող-հրապարակախոսի աշխարհայացքի հարցերը, քննարանվում ժամանակի հասարակական հոսանքների գաղափարական հայեցությունը, բնութագրվում մի շարք գրողների ու գրական-հասարակական գործիչների տեղն ու դերը մտավոր կյանքի բարդ ոլորաններում: Որքան էլ նորից ստիպված լինենք ակնարկելու գաղափարական ձախսության արտահայտություններն աշխատության էջերում, այնուամենայնիվ, անառարկելի փաստ է, որ «Անտիպ երկերը» ամենաուշագրավ երևույթներից մեկն էր ժամանակի հայ մարքսիստական պատմա-գրականագիտական ուսումնասիրությունների շարքում: Հետազոտող գիտնականը հաղթահարում է «խոսքի քննադատի» իր իսկ երբեմնի ծայրահեղությունները և փաստերի տրամաբանության վրա խարխում 19-րդ դարի հասարակական մտքի պատմության մեթոդաբանական գիտական ուղեգծերը:

Հենց այստեղ էլ, առիթի բերումով, մենք տեղին ենք գտնում անդրադառնալ էական նշանակություն ունեցող մի խնդրի, որը առնչվում է արդի գրականագիտության ինչ-որ շրջաններում կարծիք ստեղծող մի որոշ մտայնության հետ: Հարցն այն է, որ հետին թվով «տաբուկ անկյունում» իրենց գտած որոշ գրագետներ, այլ ձևրպ են նայում անցյալի ժառանգության վերաբերյալ երբեմնի «կամայականություններին» քան այն իրապես արժանի է: Տարբերակված մոտեցումը տվյալ դեպքում ոչ միայն անձնավորության հանդեպ նախասիրության տուրք չէ, այլ գիտական անհրաժեշտություն: Գրական անձնապաշտ ստահակների խեղաթյուրումները երբեք չպետք է նույնացնել գիտության իսկական կոչվածների (Ա. Հովհաննիսյան, Ա. Կարինյան, Հ. Գյուլի-Քեխյան և ուրիշներ) որոնումներին, որոնք միտում ունեին հայ հասարակագիտական մտքի պատմության ուսումնասիրությունը դնել գիտական-մարքսիստական մեթոդաբանության ուղիների վրա, որոնումներ, որոնք բնականաբար պիտի ուղեկցվեին անխուսափելի վրիպանքներով ու ծայրահեղություններով: Իսկ թե դա ինչպիսի բարդ խնդիր էր, քան կարելի է ենթադրել առաջին հայացքից, ինքնին ապացուցվում է ժամանակակից գրականագիտության փորձով, որը տակավին շարունակում է դեգերել մեթոդաբանական որոնումների բավիղներում:

Վերջին երկու տասնամյակը առանձնապես արգասավոր ժամանակաշրջան հանդիսացավ գիտնականի կյանքում։ Հասարակական-քաղաքական գործունեությունից, գիտական աստիճարելից օտարված մտավորականը, վերջապես գտնում է խաղաղ հանգրվան և իր բեղմնավոր գրիչը տրամադրում տասնամյակների մտորումների ու մտահղացումների գիտական իրացումներին։ Այդ տարիներին են վերաբերում Ա. Հովհաննիսյանի «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ», «Դրվագներ հայ հասարակական մտքի պատմության» (երկու հատորով), «Նալբանդյանը և նրա ժամանակը» (երկու հատորով), «Ուրվագծեր 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական հոսանքների և ազգային-քաղաքական կուսակցությունների պատմության» (իր ամբողջության մեջ անտիպ) մենագրական հետազոտություններն ու բազմաթիվ հոդվածներ ու ուսումնասիրություններ նվիրված 19—20-րդ դարերի հասարակական մտքի պատմության հարցերին։

Կյանքում փոխվել էր շատ բան, կատարվել են գաղափարական լուրջ տեղաշարժեր, վերանայվել են անցյալի ժառանգության գնահատության երբեմնի գռեհիկ մոտեցումներն ու մեթոդաբանական դոգմանները։ Այս ամենի հանդեպ, հարկավ, անդրդիռ չմնաց գիտնականի որոնող միտքը։ Բայց Ա. Հովհաննիսյանը այն պատեհապաշտներից չէր, որ իր կարծիքների ու համոզմունքների սլաքը հանձներ օրընթաց ոգևորությունների դյուրաշարժ տատանումներին։ Նա գիտնականի բացառիկ խառնվածք ուներ և այն արդյունքները, որին նա հասավ իր ուսումնասիրություններում, որքան կրում էին իրենց վրա հասարակագիտության բնագավառում վերջին տասնամյակների տեղաշարժերի ազդեցությունը, նույնքան էլ հետևանք էին մտքի դիալեկտիկական այն տրվածքին, որ յուրահատուկ էր նրա հետազոտական ունակությանը։ Ահա թե ինչու նրա հայացքներն ու ընթռնումները ցուցադրելով անցյալի նախապաշարմունքների թոթափումը, միաժամանակ աղերսակցվում են 20—30-ական թվականների մեթոդաբանական որոնումների ռացիոնալ մտաշերտերին։

Այս տեսակետից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում 19-րդ դարի հայ հասարակական-ազատագրական մտքի պատմության հարցերի ուսումնասիրությունը գիտնականի վերջին տասնամյակների հետազոտություններում, ուստի տեղին

ենք գտնում անդրադառնալ դրանց քննությանը, հասկանալի է, խնդիրը դիտելով մեզ հետաքրքրող՝ հայ գրականության պատմության մեթոդաբանության տեսանկյունից։

19-րդ դարի հայ հասարակական մտքի գիտական հետազոտության առումով բացառիկ արժեք է ներկայացնում Ա. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր աշխատությունը, որն իր բնույթով նորույթ էր հայ պատմա-բանասիրական գրականության մեջ։ Պատմա-կենսագրական ուսումնասիրության տիպն, իհարկե, անհայտ «ժանր» չէր անցյալի հայ բանասիրությանը։ Այդ ուղղությամբ ուշագրավ փորձեր են արել շատ հետազոտողներ, ինչպես, օրինակ, Լեոն դարասկզբին հրատարակած «Ստեփանոս Նազարյան» երկհատոր և «Գրիգոր Արծրունի» եռհատոր ուսումնասիրություններով։

Ա. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատությունը իսկական գլուխ-գործոց էր պատմա-կենսագրական մենագրության բնագավառում ոչ միայն իր մեթոդաբանական սկզբունքներով, այլ գիտական հետազոտական մասշտաբների համապարփակ իրացումներով։ Գիտնականը հիրավի, հետազոտական ընդգրկումների նոր չափանիշների վրա է դնում մենագրական ուսումնասիրությունը՝ հարցասիրությունների լոկալ-ինքնաբավ շրջանակները բացառելով քննախույզ մտքի լայնատես հորիզոններով։ Եվ դա ոչ այնքան ժամանակագրական սահմանների տարածական չափումներով, որքան երևույթների ներքին օրբիտների խորությունը թափանցելու կարողությամբ։ Հասարակական մտքի պատմության հանգուցակետում գտնելով Նալբանդյանի անհատականությունը, հետազոտողը գիտական համակարգի տակ դրեց ժամանակաշրջանի գրական-հասարակական կյանքի իրադարձությունները, դեմքերն ու դեպքերը, հետադարձ ու առաջադարձ տարածումներով բացահայտեց բոլոր այն կապերը, որոնք «Նալբանդյանի ժամանակը» միացնում են անցյալի ու ապագայի հետ և դիալեկտիկական այս միասնության մեջ ի հայտ բերեց դարաշրջանի հայ հասարակական մտքի գլխավոր օրինաչափությունները։ Ինքնին հասկանալի կդառնա այդ օրինաչափությունների գիտական նշանակությունը հայ գրականության պատմության մեթոդոլոգիայի տեսակետից, եթե դիտենք, որ գիտնականը ուսումնասիրության շրջանակների մեջ է առնում Բաղիշատյանի, Աբովյանի, Նազարյանի, Ոսկանի, Սվաճյանի, Շահազիզի, Պատկանյանի, Պռոշյանի, Րաֆֆու, Ալիշանի և շատ ու շատ գրողների ու

հրապարակախոսների ստեղծագործության ու աշխարհայացքի հարցերը, վերլուծում հասարակական հոսանքների ազգային, քաղաքական և սոցիալական հայեցության առանձնահատկությունները, անդրադառնում գրական ուղղությունների ու հոսանքների տեսական արծարծումներին, մի խոսքով, տարրալուծում է դարաշրջանի հասարակական մտայնության այն մթնոլորտը, որի մեջ գոյակցում էր հայ գրականությունը։

«Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատությունը հետազոտական մի մեթոդ է պարտադրում, որը կարելի է անվանել գիտական ռեալիզմ։ Ուսումնասիրել նյութը, կռահել փաստերի ու գաղափարների պատմականության գաղտնիքը, գրողի կամ գործչի հայացքներն ու համոզմունքները դիտել ձևավորման ու զարգացման դիալեկտիկական պրոցեսի մեջ՝ իր լույսերով ու ստվերներով, բարդություններով ու հակասություններով, երևույթներն իմաստավորել պատմա-քննական դիտակետով, առանց պատմական իրողությունների մակերեսային համահարթման, որին քիչ չէ տուրք տալիս մեր պատմա-գրականագիտական միտքը։ «Դժբախտաբար,— նկատում է Ա. Հովհաննիսյանն իր աշխատության առաջաբանում,— եղած հրատարակությունների զգալի մասը տառապում է սխեմատիզմով ու փաստագրական անճշտություններով։ Մեծ գրողի ու գործչի կյանքն ու աշխատանքը լուսաբանվում է առանց աղբյուրների բազմակողմանի ընդգրկման ու քննարկման։ Նրա երկերի ու մտքերի շարադրանքն ու գնահատականները տրվում են պատմական վայրկյանից ու իդեոլոգիական մթնոլորտից պոկված կամ առանց հաշվի առնելու երևույթների առաջացման ու զարգացման կարևոր ասպեկտները։ ...Այս կարգի հեղինակների մոտ Նալբանդյանը հանդես էր բերվում որպես մեկընդմիշտ կազմակերպված գրող ու հրապարակախոս, որպես տրամադրությունների ու մտքերի հակասություններ ու վարանումներ չունեցող մի գործիչ, կամ գիտակցության դիալեկտիկայից զերծ մի բնավորություն[15]»։

Ակնարկը վերաբերում է Նալբանդյանագիտությանը, բայց դա առհասարակ հատկանում է գրականագիտության մեթոդոլոգիայի ընդհանուր թերությանը։ Դժվար չէ նկատել, թե հաճախ ինչ իդիլիկ տեսարան է գծում գրողի կյանքի ու ստեղծագործության ուր-

---

15 Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, Երևան, 1955, էջ 6։

վագիծը գրականագիտական շատ ու շատ ուսումնասիրություններում: Համահարթված ժամանակի ու տարածության մեջ նախախնամությամբ հայտնված գրողը կամ գործիչը մեկընդմիշտ տրված իր միայնար եղանակն է նվագում՝ չունկնդրելով արտաքին աշխարհի աղդակներին: Մի որոշ տեսակետ նույնիսկ հավակնում է զանց առնել պատմական պրոցեսի ըմբռնումը որպես օբյեկտիվորեն կապակցված իրողություն և գրականության պատմության հասկացությունը նույնացնել գրողների մեխանիկական հաջորդության սխեմային: Եթե դա այդպես է, ուրեմն ամեն բան կարելի է սկսել գրողից և վերջացնել նույն գրողով, մտահայաց սկզբունքներ հորինել նույն գրողի անհատական աշխարհի պատահական շարժումներից, անգիտանալով, որ այդ հորինաբանությունները մի ակնթարթում կարող են փշրվել տեսական ու պատմական ճշմարտության բախվելով: Հետազոտական այս եղանակը տանում է դեպի, այսպես ասած, մասնագիտական մի անցանկալի սեպատոիզմ, ուր գրական երևույթները անջատ են ներկայանում մտավոր գործունեության մյուս բնագավառներից և ապավինում են միայն ու միայն իրենց սեփական «օրենքների» քմահաճ կամքին: Այստեղից է սկիզբ առնում արդի գրականագիտության մեթոդաբանական հիմնական թերությունը՝ սոցիոլոգիական վերլուծության պակասը: Մոռացվում է, որ գրականագիտությունը պատմական գիտություն է, ուրեմն և ենթակա է օբյեկտիվ այն օրինաչափություններին, որոնք բնորոշ են մտավոր-հասարակական կյանքի շարժման ընդհանուր ընթացքին: Ուստի բնական է, որ այդ օրինաչափությունների գաղափարական և էսթետիկական սկզբունքները չի կարելի գիտական համակարգի ենթարկել, առանց գրականության և հասարակական գիտակցության մյուս բնագավառների ընդհանրությունը հայտաբերելու, առանց գրականության և դարաշրջանի մտածողության մյուս ձևերի կապն ու պայմանավորվածությունն ըմբռնելու: Ահա թե ինչպես է Ս. Հովհաննիսյանն ընդունում այդ միասնության անհրաժեշտությունն իր հետաքրքրած գիտական խնդիրները լուծելիս. «Յանկություն չունենք նաև անկամրջելի խրամատներ փորել Նալբանդյանի գործունեության առանձին մարզերի միջև, մեկուսացնելով Նալբանդյան-փիլիսոփային Նալբանդյան-տնտեսագետից կամ Նալբանդյան-հրապարակախոսին Նալբանդյան-բանաստեղծից: Այդ նպատակահարմար կամ անհրաժեշտ կլիներ թեմատիկ հետազոտությունների կամ

դպրոցական ձեռնարկների մեջ, սակայն անտեղի՝ պատմակենսագրական մենագրության համար[16]»:

Եթե պատմակենսագրական ուսումնասիրությունը ենթադրում է տեսանկյունների համադրում, ապա գրականագիտական մենագրությունը չի բացառում հարցերի կապակցությունների միասնական քննությունը: Բայց այս կապակցության անտեսամա՞նը չպետք է վերագրել արդյոք այն ցավալի իրողությունը, երբ գրողի էսթետիկական սիստեմի փիլիսոփայական բացատրությունը գրականագիտական շատ ուսումնասիրություններում փոխարինվում է վարժապետական էնտուզիազմով: Գաղափարական համահարթման սկզբունքը դժբախտաբար շատ ամուր է նստած հայ գրականագիտության մեթոդաբանության վրա: Ժողովրդասիրության, տիրող անարդարությունների՝ սոցիալական անհավասարության քննադատության փաստարկների վրա ձևած դեմոկրատիզմը որպես աշխարհայացքային պիտակ փակցվում է բոլոր գրողներին, մոռացության տալով այն հասարակ ճշմարտությունը, որ դա ինքնին այլ բան է, քան աշխարհայացք հասկացությունը: Էլ չենք խոսում այն մասին, որ սա էլ իր հերթին զրկվում է ամեն մի փաստից՝ գրողի ստեղծագործության գաղափարն ու բովանդակությունը մեկնաբանելու խնդրում: Այնինչ ակներև է, որ առանց գրողի աշխարհայացքային նստվածքների իմացության, անհասկանալի կմնա նրա գեղարվեստական համակարգի էությունը, քանի որ հենց հասարակական հայացքներն ու գաղափարական ելումներն են ձև տալիս գրողի փիլիսոփայական աշխարհընկալմանը, գեղագիտական իդեալին, կերպարների ընտրությանն ու կյանքի պատկերների դասավորությանը: Ինքնաբերաբար պիտի նույնացվեն, օրինակ, գյուղացիական իրականությունն արտացոլող Պռոշյանի՝ նույն իրականությունը պատկերող Մուրացանի, կամ կապիտալիզմի քննադատ Շիրվանզադեի և նույն կապիտալիզմը մերժող Նար-Դոսի աշխարհայացքը, վերջապես, անբեռնելի պիտի ներկայանա այն տարբերանքը, որ գոյություն ունի Րաֆֆու և Մուրացանի՝ կապիտալիզմի ռոմանտիկական քննադատության և Շիրվանզադեի ռեալիզմի՝ նույն կապիտալիզմի սոցիալական վերլուծության միջև: Գրականության պատմության առանցքային խնդիրներ են սրանք, որոնց գիտական մեկնաբանությունը հնարավոր չէ առանց պատմա-սոցիոլոգիական հիմնավոր վերլուծությունների:

---

16 Նույն տեղում, էջ 9—10:

Թե մեթոդաբանական այս պահանջները ինչպես են խախտում պատմության իդիլան՝ հանդիպադրելով գիտական տրամաբանության անակնկալներին, կարելի է դատել այն բանավեճից, որ հարուցեցին Ռ. Պատկանյանին վերաբերող էջերը «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության մեջ։ Գրականագետ Հ. Մուրադյանին պատմաբան Ա. Հովհաննիսյանի մեկնաբանումները տարօրինակ թվացին, բայց ոչ անակնկալ։ Փաստը նրան ներկայացավ ոչ այլ կերպ, քան որպես երբեմնի գռեհիկ-սոցիոլոգիական նիհիլիզմի արձագանք, որին, որպես թե, երբևէ տուրք է տվել պատմաբանը, հենց Պատկանյանի մասին իր վաղեմի ասույթներում։ Մեր նպատակից դուրս է հանգամանորեն շարադրել բանավեճի ընթացքը կամ անդրադառնալ այն հարցերի քննությանը, որ շրջանառության մեջ են առնում բանավիճող կողմերը։ Բանավեճը վերջին հաշվով հանդիպադրում է գրողի ստեղծագործության էրականագիտական մոտեցումը պատմա-սոցիոլոգիական մոտեցմանը, ուստի անտեղի կլիներ չակնկալել այն բացառումները, որ պիտի ցուցադրեին երկու մոտեցումները գրողի ամբողջական դիմապատկերն ընդգրկելու և մասնագիտորեն քննաբանելու տեսակետից։ Անտեղի կլիներ հայցել, որ պատմաբանը սպառեր գրողի ստեղծագործության գրական-գեղարվեստական բնութագիրը, ինչպես և մասնագիտական շրջանակների անտեսում կլիներ պահանջել, որ գրականագետը հանձնառներ պատմա-սոցիոլոգիական անհայտների մանրազնին քննությունը։ Փոխադարձ ներթափանցումը որքան անհրաժեշտ է, նույնքան էլ ենթարկվում է ուսումնասիրության մասնագիտական շրջանակների պահանջին։ Բայց կա մի սկիզբ, ուր մասնագիտական բնագավառներն այնուամենայնիվ, լծորդվում են՝ մեթոդաբանական ելակետը և հենց այստեղ է, որ բանավեճը խորհրդածության առիթ է տալիս։ Մի բան ակներև է, որ Ա. Հովհաննիսյանն ավելի հիմնավոր է օգտվում Պատկանյանի գրական-գեղարվեստական ժառանգությունից, քան նրան վիճարկող գրականագետները՝ հարցերի պատմա-սոցիոլոգիական գործակիցներից։ Ավելին, այստեղ մի որոշ միտում կա ոչ միայն շրջանցելու Պատկանյան-մտածողի հայացքների սոցիոլոգիական վերլուծությանը, այլև՛ չիք դարձնելու սրա նշանակությունը. գրողի գրական ժառանգության գնահատության խնդրում, որպես թե իրենք գործ ունեն բանաստեղծի հետ և պարտավոր են ունկնդրելու այն ձայնին, ինչ հուշում են նրա գեղարվեստական պատկերները։ Այս գծի վրա Պատկանյանը ներկայանում է որպես ժամանակի

ազգային-հայրենասիրական ընդհանուր տրամադրությունների մերկապարանոց ջատագով, որի ստեղծագործությունը չի դիմահարվում ազատագրական մտքի գաղափարական բարդ մթնոլորտի տարընթացություններին: Այստեղ է, որ գրականագիտության հետազոտական մեթոդը ակամա տուրք է տալիս պատմական իրողությունների սրբագրմանը: Նա ընտրում է փաստերի այն խումբը, որ գրողի դիմապատկերի լույսերն է երևցնում և անտեսում այն, ինչը «ստվերում է» այդ դիմապատկերի անհարթ մակերեսը: Ենթադրում են, որ անցյալի ժառանգության մեջ պետք է գնահատել այն, ինչ դրական է: Բայց դա ոչ միայն չի բացառում, այլ առավել ևս շեշտում է իրողությունների քննական ու քննադատական իմաստավորման անհրաժեշտությունը, այլապես պատմությունը կդրկվի ներքին շարժումների բարդ դիալեկտիկայից և իր ընթացքը կհանձնի մխոտիկական նախախնամությանը: Բանաստեղծը-բանաստեղծ, բայց ով-ով՝ Պատկանյանն՝ այն բանաստեղծներից չէր, որ ինչ-որ տեղ իր քնարը հանձներ էսթետիկական ինքնաբավության: Նրա պոեզիան շատ ավելի անմիջական էր կրում իր իսկ հասարակական հայացքների գաղափարական ազդակները, քան կարող է թվալ առաջին հայացքից: Նրա մասին տեղին է հնչում Հայնեին բնութագրող խոսքերը, թե նա «ոչ միայն գրականությունը դարձրեց իր անձնական գործը, այլև իր անձնական գործն անում էր գրականությամբ»: Այնուհետև. Պատկանյանի որպես պատմական անհատականության ամբողջական կեցվածքի նեղացում կլիներ, զրան դիտել սոսկ որպես բանաստեղծ. նրա հասարակական գործունեության շրջանակներն անհամեմատ լայն էին և որպես մտածող ու գործիչ նա իր ուժեղ դրոշմն է դրել գրական-հասարակական շարժման ընթացքի վրա, ձևավորելով մտքեր, կողմնորոշելով հայացքների մի որոշակի ուղղություն, արտահայտելով գաղափարական մի ուրույն մտայնություն: Ուստի նրա պատմական դերի ամբողջական գնահատականը ոչ միայն թերի կլիներ այս կողմի բացառմամբ, այլև գիտականորեն սխալ կլիներ գրող Պատկանյանի և մտածող ու գործիչ Պատկանյանի միասնության անտեսումը: Որ նման անտեսում կա պատմաբանին վիճարկող գրականագետների մեթոդաբանական ելակետում, միանգամայն որոշակի է, այլապես, եթե խոսքը վերաբերեր սոսկ բանաստեղծ-Պատկանյանի թերագնահատմանը, ապա գրականագետները հանձն կառնեին գիտնականի պատմա-սոցիոլոգիական առաջադրույթների լույսի տակ որոնելու Պատկանյանի գեղարվեստական ժառանգու-

թյան գրականագիտական ինչ-որ նոր մեկնաբանություններ, մինչդեռ, ինչպես երևում է, նրանք ըստ էության հակված են կասկածի տակ առնելու Պատկանյան-մտածողի և Պատկանյան-գործչի հայացքների այն գնահատությունը, որ առաջադրում է պատմաբանը։ Կրքոտության մի ինչ-որ ջիղ, հիրավի, տրամադրություն է ստեղծում պատմական գործիչների հանդեպ Ա. Հովհաննիսյանի «սուբյեկտիվ» նախասիրություններում, զատորոշելով համակրելիներին ոչ համակրելիներից, բայց հազիվ թե սուբյեկտիվ այդ թուլությունը ուժ ունենա խոցելու նրա մեթոդի գիտական օբյեկտիվությունը, որ հաստատված է պատմության զարկերակի զգացողությամբ. «Ջեմ կամենում երաշխավորել,— խոստովանում է գիտնականը,— թե պատմական դեպքերն ու դեմքերը դիտել եմ սառն ու անտարբեր աչքով։ Սակայն մոլի կիրքը կամ նախապաշարված դոգմատիզմը չի եղել իմ խորհրդատուն և ոչ էլ պատմական դեմքերն ու դեպքերը «մեկը մյուսից անկախ» մատուցելու քննադատի հանձնարարած, ամենակեր օբյեկտիվիզմը, այլ պատմական պրոցեսները, անձերն ու իրադարձություններն իրենց բարդ հարաբերակցություններում մեջ ընդգրկելու գիտական աննահանջ ձգտումը[17]»։

Այստեղ արդեն «Նալբանդյանը և նրա ժամանակը» գրքի հեղինակը փայլում է իր տարերքի մեջ, երբ բացահայտում է Պատկանյանի աշխարհայացքի հիմքերը, թափանցում դրանց սոցիալական ու գաղափարական ակունքները, ուրվագծում նրա տեղը 19-րդ դարի գաղափարական շարժումների ու հասարակական հոսանքների ընդհանուր կապակցության մեջ, որտում միացնող և բաժանող բոլոր ուղեգծերը։

Մեթոդաբանական ելակետի վիճարկումը ծայր է առնում հարցի սկզբունքային դրվածքից. հայկական ազատագրական շարժումները գաղափարական տարընթաց միտումների՞ էին ընդառաջում, թե՞ այն հանդես էր գալիս որպես ինչ-որ ազգային միասնական մտայնություն։ Տարօրինակ է, որ որոշ հետազոտողներ անգիտանում են պատմական իրողությունների իսկությունը և նկատելով միայն այն ընդհանուրը, ինչ միացնում էր հասարակական հոսանքների ազգային-ազատագրական ձգտումները, անտեսում են ներքին այն հակամարտությունը, որ գոյություն ուներ նույն այդ հոսանքների գաղափարական ծրագրերի ու տակտիկական որոնումների միջև։ Վերլուծելով 50—60-ական թվականների ազատագրա-

---

17 «Պատմա-բանասիրական հանդես» № 4, Երևան, 1959, էջ 250—251։

կան մտքի ներքին բարդ շարժումները, Ա. Հովհաննիսյանը գրտնում է Պատկանյանի տեղը գաղափարական այդ շարժումների ընդհանրում, ցույց տալիս նրա աշխարհայացքի ձևավորումը, նրա հայացքների սիստեմը կապակցում ազգային-պահպանողական հոսանքի ազգային ու սոցիալական մտայնության հետ: Պատկանյանի ստեղծագործության մեջ տեսնելով ազգային զարթոնքի, ազգի կոնսոլիդացման, ազգային ինքնագիտակցության ու ազատագրության պատմականորեն առաջադեմ տրամադրությունների արձագանքը, պատմաբանը, սակայն, տեղին է նշմարում այն սահմանափակությունը, որ ամենուրեք իր դրոշմն է դնում նրա հայացքների ու ըմբռնումների վրա: Այստեղ էլ նա սահմանագծում է այն էական անջրպետը, որ տարբերակում է ազգային-պահպանողական գաղափարախոսի հայացքները Նալբանդյանի հայացքներից: «Այնուամենայնիվ,— գրում է Ա. Հովհաննիսյանը,— չնայած որ և Պատկանյանը, և Նալբանդյանը տոգորված էին ջերմ հայրենասիրությամբ և ոգեշնչված ժողովրդի քաղաքական ազատագրության գաղափարով, նրանք տարբեր պատկերացում ունեին ազատագրական պայքարի ուղիների ու հեռանկարների մասին[18]»:

Դիտելով գաղափարական այդ հակամարտությունը, պատմաբանը, սակայն, ավելի լայն ուղեգծերի վրա է ներկայացնում Պատկանյանի աշխարհայացքի տարածումները, քան կարող էր հանդուրժել ազգային-պահպանողականության մտահորիզոնը: Ցույց տալով նրա աշխարհայացքի հակասությունները, Ա. Հովհաննիսյանը նկատում է այն աղերսը, որ Պատկանյանը ցուցաբերում է դեպի ազգային լիբերալիզմը և այն պրոթեկումները, որով նա պատրում է ազգային-պահպանողականության սահմանափակ կաշկանդումները և հասնում գաղափարական լայնատեսության: «Իր ստեղծագործությամբ,— գրում է Ա. Հովհաննիսյանը,— Պատկանյանը չէր անդրադարձնում բացառապես հասարակական այն խավերի մտայնությունը, որոնց անմիջորեն ընդառաջում էր կովկասահայ ազգային-պահպանողական հոսանքը: Բանաստեղծի աշխարհայեցողության վրա մեծապես ազդում էր այդ հոսանքի իշխող մտայնությունը, սակայն ազգային-պահպանողականների քաղաքական համերգում նրա մարտահույզ քնարը հաճախ հնչեցնում էր ճնշված ու հարստահարված մասսաների ջղաձգար տրամադրություններն ու տարերային տրտունջները[19]»:

18 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 2, էջ 107:
19 Նույն տեղում, էջ 119:

Մեթոդաբանական այն բանավեճը, որ առիթ տվեց «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության՝ Պատկանյանին վերաբերող հատվածները, միանգամայն որոշակի է ցուցադրում պատմաբանի հետազոտական եղանակի ճշմարտացիությունը: Կրկնում ենք Ս. Հովհաննիսյանը պատմաբան է և ոչ գրականագետ, բայց հասարակական մտքի պատմաբանի հետազոտությունը մեթոդաբանական ավելի ճշգրիտ բանալիներ է տալիս լուծելու Պատկանյանի աշխարհայացքի, գեղարվեստական մեթոդի, ստեղծագործության գրականագիտական առեղծվածները, քան մերկապարանոց ջատագովության այն հարթագիծը, որ պարտադրում է նրան վիճարկող գրականագետը:

19-րդ դարի հայ գրականության զարգացումը մի առանձնահատուկ հարաբերակցությամբ էր ենթարկված հասարակական հոսանքների գործունեությանը: Գրական կյանքը մեզանում երբևէ չունեցավ մի ինքնաբավ, անկախ հանդիսարան, որը միավորեր գրական գործիչներին՝ լուծելու գրականության, որպես մտավոր գործունեության ուրույն բնագավառի՝ հենց իրեն յուրահատուկ խնդիրները: Գրականությունն ու գեղարվեստը չունեցան իրենց ընկերությունն ու միությունը, նրանք չկարողացան առանձնանալ հասարակական մտքի ընդհանուր կապակցություններից: Գրականությունն, այսպիսով, ենթարկված մնաց հասարակական հոսանքների և սրանց սպասարկող մամուլի ազդեցությանը: Որքան էլ գրականությունը ձեղքում էր հասարակական հոսանքի գաղափարական կապանքները, որքան էլ գրողներն իրենց արվեստը դուրս էին բերում մամուլի այս կամ այն օրգանի գաղափարական սահմանափակությունից, այնուամենայնիվ, գրական կյանքը, գրական շարժումը, գրողների աշխարհայացքային կողմնորոշումներն ու հասարակական հայեցությունը մի ինչ-որ չափով ենթակա էր մնում այն մտայնությանը, որը պարտադրում էր տվյալ հասարակական հոսանքի ու մամուլի ուղղությանը: Ոստի, անտեսելի իրողություն չէ, որ 19-րդ դարի հայ գրողներն ըստ իրենց նախասիրությունների կողմնորոշված են եղել դեպի հասարակական այս կամ այն հոսանքը, հանդես են եկել մամուլի այս կամ այն օրգանում: Միամտություն կլիներ խնդիրը հանգեցնել պատահական կողմնորոշման կամ այդ ամենի հիմքում չտեսնել գրական հոսանքների գաղափարական ու գեղարվեստական սկզբունքների տարամիտ դրսևորումը: Ավելի քան կոպիտ սոցիոլոգիզմ կլիներ, իհարկե, բացառել գրականության յուրահատկությունը և գրողներին հատ-

կացնել տակ այս կամ այն հոսանքի գաղափարական նեղմիտ պիտակը, բայց և պատմական իրողության անգիտացում կլիներ վերանալ այն փաստից, որ հասարակական հոսանքները գրական ուրույն քաղաքականություն են հետամտել, դավանել են գեղագիտական ուրույն սկզբունքներ և ստեղծել են իրենց գրականությունը, կազմել գրողների ու գրական գործիչների իրենց խմբակցությունը։ Գրականության պատմության երևույթները քննել առանց այս իրողությունների հաշվառման, գրողի գեղագիտական ու գաղափարական համակարգի հարցերը քննել առանց այս առնչակցությունների, նշանակում է հրաժարվել գրականության պատմության գիտական իմացությունից, և ապավինել սահմանափակ էմպիրիզմին։ Ահա թե ինչու 19-րդ դարի գրականության պատմության գիտական լուսաբանության համար էական նշանակություն է ստանում հայ հասարակական մտքի, հասարակական հոսանքների ու ազգային կուսակցությունների պատմության գիտական ուսումնասիրությունը։ Հարկ չկա ապացուցելու, որ 19-րդ դարի հայ հասարակական հոսանքների վերաբերյալ գիտական միտքը տվայտում է խառնաշփոթ ու վայրիվերո մոլորումների մեջ, ուր մի կողմից ի հայտ է գալիս ոսոումնասիրողների անկողմնորոշվածությունը, մյուս կողմից՝ հասարակական հոսանքների միացնող ու բաժանող սահմանագծերի շփոթանքը։ Հաճախ ինչ-որ ընդհանուր թվացող դիրքորոշումների կամ առանձին հարցերի հանդեպ համընկնող վերաբերմունքների արտաքին նմանության վրա ջնջում են գաղափարական հոսանքների սահմանագծերը և հասարակական միտքը ենթարկում միագիծ-ազգային մտայնության պատրանքին։ Բավական են, ասենք, բուրժուազիայի քննադատության կամ ազգային-ազատագրության վերաբերյալ համընկնող ինչ-որ փաստարկներ, որպեսզի նույն գծի վրա շփոթվեն, օրինակ, ազգային լիբերալ և ազգային-պահպանողական հոսանքի գրողներն ու գործիչները, առանց խորամուխ լինելու երևույթների բուն էության մեջ, արտաքուստ ընդհանուր թվացող կեղևի տակ գաղտորոշելու գաղափարական հակամարտությունը՝ այդ հոսանքների ազգային-քաղաքական ու սոցիալական ծրագրերում։ Տեղին ենք գտնում ասել, որ ընդհանուր համահարթման այս մտայնությանը առավել տուրք են տալիս գրականագետները, քանի որ գրականությունը, որպես թե յուրահատուկ առանձնաշնորհ ունի բացառելու հասարակական հոսանքների գաղափարական ազդակները և ինքնորոշելու ինչ-որ վերպատմական դեմոկրատիզմ։

Ինչ խոսք, հայ հասարակական հոսանքների ուսումնասիրությունը ավելի պատմագիտական խնդիր է, քան գրականագիտական, բայց փաստ է, որ պատմագիտությունը դեռևս քիչ արդյունքների է հասել այդ կարևոր խնդրի գիտական հետազոտության ուղղությամբ։ Առայժմ հրապարակի վրա է Վ. Ոշտունու «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» արժեքավոր հետազոտությունը, որը, սակայն, վերաբերում է միայն 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հասարակական մտքի գաղափարական շարժումների քննությանը։

Այս տեսակետից հայ պատմագրության խոշոր նվաճումներին պիտի հատկացնել Ա. Հովհաննիսյանի 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական հոսանքների և ազգային-քաղաքական կուսակցությունների պատմությանը նվիրված հոդվածաշարը, որոնք լույս են տեսել «Պատմա-բանասիրական» հանդեսում (1965, № 4. 1966, № 1. 1968, № 2), Հայաստանի արխիվների «Բանբերում» (1968, № 2), Երևանի համալսարանի «Բանբերում» (1968, № 1)։ Նպատակ չունենալով հանգամանորեն գնահատել դրանց պատմագիտական նշանակությունը, սակայն առիթից օգտվելով կարող ենք ասել, որ նրանք իրենց բնույթով բացառիկ ներդրում են հայ հասարակական մտքի պատմության գիտական հետազոտության բնագավառում և առանձնահատուկ արժեք են ստանում նաև հայ գրականության պատմության մեթոդաբանության հարցերը լուծելու տեսակետից։ Ճատորոշելով 19-րդ դարի հայ հասարակական հոսանքներն ու ազգային-քաղաքական կուսակցությունները, տալով յուրաքանչյուր հոսանքի փիլիսոփայական-գաղափարական հայացքների սիստեմն ու ազգային-սոցիալական շարժումների տակտիկական առանձնահատկությունները, գիտնականը ուրվագծում է հայ հասարակական մտքի զարգացման դիալեկտիկան և տալիս յուրաքանչյուր հոսանքի կամ կուսակցության գիտական-մարքսիստական գնահատությունը, ուրվագծում յուրաքանչյուրի պատմական իմաստն ու սոցիալական-դասակարգային բովանդակությունը։

Այստեղից ինքնին հետևում է Ա. Հովհաննիսյանի աշխատության մեթոդաբանական նշանակությունը հայ գրականության պատմության ուղղությունների ու հոսանքների ներքին-գաղափարական հիմունքները ճիշտ ըմբռնելու, գրականության սոցիալ-փիլիսոփայությունը, գրողի աշխարհայացքի կնճռոտ հարցերը լուսաբանելու տեսակետից։

Ա.ՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ*

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Արաբական խալիֆայության թուլացումը հնարավորություն տվեց Բյուզանդական կայսրության 9-րդ դարի երկրորդ կեսից սկսած ծավալել իր զավթողական քաղաքականությունը դեպի Սրևելք։ 863 թ. Պոսոնի ճակատամարտը, որտեղ արաբների դեմ վիայլուն հաղթանակ տարավ բյուզանդական հայազգի զորավար Պետրոնասը՝ Թեոդորա կայսրուհու եղբայրը, շրջադարձային նշանակություն ունեցավ։ Այդ թվականից սկսած Բյուզանդական կայսրությունն սկսեց իր աստիճանական առաջխաղացումը, որին ընդդիմակայելու դուրս եկան ոչ միայն արաբները, այլև հայերն ու վրացիները, ովքեր արաբական երկարատև տիրակալությունից հետո անկախություն էին ձեռք բերել։ Նրանք շատ լավ էին հասկանում, որ ստեղծված իրադրության պայմաններում գլխավոր վտանգը կայսրությունն է, և ոչ թե թուլացած խալիֆայությունը։ Բայց դիմադրել բյուզանդական փորձված դիվանագիտությանն ու զինված ուժերին դյուրին չէր։

Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության առաջին զոհերից մեկը դարձավ Կարին քաղաքը, որն 949 թվականին գրավվեց Թեոփիլոս Կուրկուասի՝ Հովհաննես Կուրկուասի եղբոր և ապագա կայսր Հովհաննես Ձմշկիկի պապի կողմից։ Ճիշտ է, այն ժամանակ Կարինը գտնվում էր արաբների ձեռքում, բայց Կարինի բյուզանդացիների ձեռքն անցնելուն դեմ էին և՛ հայերը,

---

* Զեկուցված է ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի 1968 թ. հունվարի 30-ի նիստում։

և՛ վրացիները[1], հետևաբար Կարինի գրավումը ոչ միայն արաբների պարտությունն էր, այլև հայերի և վրացիների: Շուտով Կարինի բախտին արժանացավ Տարոնը, որ 966 թվականին «խաղաղ» ճանապարհով միացվեց կայսրությանը. դրան նախորդել էր շուրջ յոթանասուն տարի տևող Բյուզանդիայի դիվանագիտական եռանդուն նախապատրաստական աշխատանքը: Երեք և կես տասնամյակ անց Բյուզանդիային հաջողվեց տիրանալ Տայքին, իսկ երկու տասնամյակ էլ անց՝ Վասպուրականին: Վասիլ Բ կայսեր (976—1025 թթ.) թագավորության վերջին բյուզանդական տիրապետությունն արդեն տարածվել էր Կարինի, Բասենի, Տարոնի, Հարքի, Ապահունիքի, Տայքի, Վասպուրականի վրա:

Վերոհիշյալ շրջաններում Բյուզանդիան հաստատում էր իր զինվորականներին, որոնք դուքս կամ կատապան էին կոչվում:

Հայ ժողովուրդը, ինչպես ասացինք, գրկաբաց չէր ընդունում նվաճողներին, այլ համառ դիմադրություն էր ցուցաբերում: Օրինակի համար, Վասպուրականի առաջին կատապան Վասիլ Արգիրոսը շատ շուտ պաշտոնանկ արվեց՝ իրեն չարդարացնելու պատճառով: Նրան հաջորդած Նիկեփոր Կոմնենոսը (1023—1026 թթ.) կարողանում է Վասպուրականը հնազանդեցնել «և՛ համոզելով և՛ բռնությամբ»[2]: Բայց և այնպես Բյուզանդիան դեռ շատ արյուն պիտի թափեր Վասպուրականին լրիվ տիրանալու համար:

Ամրապնդելով իր դիրքերը հայկական այդ հողերում, կայսրությունը դրանք վերածեց մի հենարանի՝ Անիի թագավորության դեմ ոտնձգություններ կատարելու և ապա նաև այն զավթելու համար: Ահա այս վերահաս վտանգի պայմաններում Հայաստանի աշխարհիկ և հոգևոր պետերը պետք է որոշակի դիրքավորում ունենային: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է Գրիգոր Մագիստրոսի դիրքը, այդ զինվորականի ու փիլիսոփայի, բանաստեղծի ու քաղաքագետի:

Պատմագրության մեջ տարածված է այն կարծիքը, որ Գրիգոր Մագիստրոսը որպես ընդգծված բյուզանդասեր, չվարանեց կայսրության շահերը դերադասել հայրենիքի շահերից: Ահա թե ինչ

---

[1] *Տե՛ս* Constantine Porphyrogenitus, De Administrando Imperio, Greek text edited by *Gy. Moravcsik*, English translation by *R. J. H. Jenkins*, Budapest, 1949, p. 208 (cap. 45):

[2] *Georgii Cedreni* Historiarum compendium, t. II. Bonnae, 1838, p. 464.

է գրում այդ առթիվ Լեոն. «Իր (Կոստանդնուպոլսում) ձեռք բերած դեղեցիկ դաստիարակության հետևանքով էր, որ Գրիգոր Բջնեցին իր հայրենիքում հանդիսանում է իբրև մի գիտակից հայ, որը սակայն, այնքան էր տոգորված բյուզանդական գաղափարներով, որ հեշտությամբ կարող էր մոռանալ հայրենիքի շահերը։ Այս տրամադրությամբ էլ մտնելով քաղաքական գործունեության ասպարեզ, նա իր շուրջը խմբեց մի ամբողջ հոսանք, որ ներկայացնում էր բյուզանդասերների, նույնիսկ կարելի է ասել՝ բյուզանդամոլների կուսակցությունը[3]»։

Գրիգոր Մագիստրոսի նման բնութագրմանը համաձայն է նաև պատմական գիտությունների դոկտոր Ասատուր Մնացականյանը։ Մերժելով այն հեղինակների կարծիքը, ովքեր ջրաժան գիծ են անցկացնում Պետրոս կաթողիկոսի և Գրիգոր Մագիստրոսի քաղաքական հայացքների և կողմնորոշման միջև, նա գրում է. «Մինչև օրս իշխում է մի սխալ կարծիք, որի համաձայն այդ անձնավորություններ *(խոսքը Գրիգոր Մագիստրոսը և Պետրոս կաթողիկոսը—Հ. Բ.)* չեն դիտվում որպես նույն խմբի հիմնադիրներ և նույն նպատակների համար շարունակ միասին պայքարած պարագլուխներ»[4]։ «Բյուզանդական կայսրությունը,—շարունակում է իր միտքը Աս. Մնացականյանը,— նվաճելով Վասպուրականի թագավորությունը, ձգտում էր օր առաջ մուտք գործել նաև Անի։ Պետրոս կաթողիկոսը, Գր. Մագիստրոսը, Վեստ Սարգիսը նպատակ ունեին վերացնել Բագրատունյաց թագավորությունը և *իշխանությունը վերցնել իրենց ձեռքը*։ Նրանք իրենց նպատակն իրագործելու համար վճռական նշանակություն էին մեծ Բյուզանդական կայսրության հետ, որը, սակայն, առաջնորդվում էր լոկ իր շա-

---

3 Լեո, *Հայոց պատմություն*, հատ. Բ, Երևան, 1967, էջ 646։ Մ. Օրմանյանը (տե՛ս Ազգապատում, հատ. Ա, սյուն. 1215) Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցում երկու շրջան է տեսնում, ազգային և բյուզանդասիրական և անցումը առաջինից երկրորդը բացատրում է Պետրոս Գետադարձի ազդեցությամբ։ Կ. Կոստանյանցը, որ տվել է Գրիգոր Մագիստրոսի մանրամասն կենսագրությունը, խոսում է նրա քաղաքական գործունեության մասին լոկ 1041/1042 թթ. սկսած։ Նախորդող շրջանի նրա քաղաքական գործունեության վրա նա կանգ չի առնում։ Կ. Կոստանյանցը Գրիգոր Մագիստրոսի մոտ քաղաքական բյուզանդասիրություն (կամ բյուզանդամոլություն) չի գտնվում։ Այդպիսին չի գտնում նաև Մ. Աբեղյանը. տե՛ս նրա «Հայոց հին գրականության պատմությունը», Գիրք Բ, Երևան, 1946, էջ 17—18։

4 Ա. Ս. Մնացականյան, *Բոնդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին*, Տեղեկագիր № 3, 1954, էջ 75 (Ընդգծումներն իմն են—Հ. Բ.)։

հերից ելնելով: Քաղաքական այս բարդ իրադրության մեջ, ժողովրդի աչքի առջև օրըստօրե ծավալվում էր Պետրոս կաթողիկոսի և նրա զինակիցների կործանարար գործունեությունը»[5], գործունեություն, որի նպատակը, Աս. Մնացականյանի ասելով, հայոց «երկիրը բյուզանդական լծի տակ դնելն»[6] էր:

Կանգ առնելով Գրիգոր Մագիստրոսի՝ Բոնդրակյան աղանդավորների դեմ մղած պայքարի նպատակների վրա, նա էլ ավելի է խորացնում վերոհիշյալ միտքը: «Միամտություն կլիներ կարծել,— գրում է հոդվածագիրը,— թե Գր. Մագիստրոսը լոկ Պետրոս կաթողիկոսի շահերը պաշտպանելու նպատակով է այնպես կատաղի հարձակման անցել Բոնդրակեցիների դեմ: Այստեղ կան ընդհանուր շահեր». «յոսամբ առ աստուած, զի փրկեսցէ զմեզ հանդերձ մերով զարմիւ յայսպիսի դիւական և մոլեգնեալ հաղբից և խմորեալ զանգուածոյ Սադուկեցւոցն,— գրում է նա (իմա՛ Գր. Մագիստրոսը Հ. Բ.): Այդ «աստուածային» հուսադրության տակ,— շարունակում է Աս. Մնացականյանը,— նա նկատի է ունեցել բյուզանդացիների ճետ կապված իրենց ծրագրերի իրագործումը: Իսկ ինչպես հայտնի է,— վերջացնում է իր խոսքը Աս. Մնացականյանը,— ճրաճք այդ տեսակետից իրենց նպատակին ճասան. 1045 թվականին բյուզանդացիները նվաճեցին ողջ Հայաստանը»[7]:

Շարունակելով իր ուսումնասիրությունը Աս. Մնացականյանն աշխատել է պարզել, թե երբվանի՞ց են Պետրոս կաթողիկոսը և Գրիգոր Մագիստրոսը Բագրատունյաց Հայաստանը բյուզանդացիներին ծախելու «դավակիցներ» դարձել: «Հարց է առաջանում,— գրում է նա,— արդյոք հենց սկզբից Գրիգոր Մագիստրոսը եղե՞լ է Պետրոս կաթողիկոսի զինակիցը»: Եվ պատասխանում. «Այս ճարցը դեռ չի ճճնված, բայց ինչպես երևում է փաստերից, այո՛... Գր. Մագիստրոսը եղել է Պետրոս կաթողիկոսի գործակիցներից մեկը դեռևս 1038 թվականին, որից 7 տարի հետո միայն պիտի կատարվեր Անիի դավաճանական վաճառքը: Ավելին, այստեղ կան բոլոր հիմքերը ասելու, որ նրանց կապը ոչ թե 1038 թվականին էր սկսվել, այլ դրանից շատ առաջ»[8]:

Իր միտքը Աս. Մնացականյանը եզրափակում է հետևյալ բառերով.

---

5. Նույն տեղում, էջ 74:
6 Նույն տեղում:
7 Նույն տեղում, էջ 74—75:
8 Նույն տեղում, էջ 75:

«Այսպիսով տեսնում ենք, որ Պետրոս կաթողիկոսը և Գր. Մագիստրոսը ոչ թե պատահական մտերիմներ են եղել, այլ, որպես կենտրոնախույս կուսակցության պարագլուխներ, երկար տարիներ գաղտնի կապեր են ունեցել միմյանց հետ՝ փաստորեն ծառայելով Բյուզանդական կայսրության ևվանողական հաղթականությանը»[9]:

Բայց այդպե՞ս է իրականում արդյոք: Այս հարցում կասկածելու տեղիք է տալիս հենց ինքը, Գրիգոր Մագիստրոսը: Անսափ հայրենասիրությամբ տոգորված նրա բազմաթիվ թղթերը և մանավանդ ԺԲ թուղթը, մենք իրավունք չունենք համարելու երկերեսանիության արդասիք: Ընթերցելով դրանք մեր առաջ է կանգնում մի անձնավորություն, որին ծայր աստիճան մտահոգում է հայրենիքի հակատադիրը, նրա ապագան: Նույն եզրակացության ենք հանգում ընթերցելով նրա ՁԳ թուղթը, որի ուսումնասիրությանն է նվիրված մեր ներկա հոդվածը[10]:

* * *

Գրիգոր Մագիստրոսի պահպանված գրական ժառանգության մեջ յուրահատուկ տեղ է գրավում մի բանաստեղծություն (ՁԳ թուղթը): Միջնադարում այդ թղթերի ժողովածուն կազմողը խնդրո առարկա բանաստեղծությանը կցել է հետևյալ վերնագիրը. «Առ

---

9 «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի 1968 թ. օգոստոսի 21-ի համարում (№ 34 (161) Աս. Մնացականյանը «Գրիգոր Մագիստրոսի մի տաղի հետքերով» վերնագիրը կրող մի հոդված է հրատարակել: Խոսքը մեր սույն հոդվածի նյութ դարձած Մագիստրոսի բանաստեղծության մասին է, որի հիման վրա հոդվածագիրը «հանգել է մի քանի ուշագրավ եզրակացությունների» այդ թվում և այն մասին, թե «Գրիգոր Մագիստրոսը ոչ թե բյուզանդացիների կուսակիցն էր ու հրահրողը, այլ նրանց հակառակորդներից մեկը՝ կանգնած հայրենիքի պաշտպանության դիրքերում» որ նման բանաստեղծության հեղինակին «Բշնամու (իմա՛ բյուզանդացիների) կուսակից համարելը ոչ միայն սխալ, այլև մեղք կլիներ»:

10 Արխատակես Լաստիվերտցին ցույց է տալիս, որ Գր. Մագիստրոսը մինչև վերջ աշխատել է պահպանել Շիրակի թագավորությունը, որ նա իր դիրքերը զիջել է միայն այն ժամանակ, երբ այլևս ոչինչ հնարավոր չէր անել. «Գրիգոր որդի քաջին Վասակայ, ելեալ և նա գնաց առաջի թագաւորին (իմա Մոնոմախի Հ. Բ.), ու քանզի այր իմաստուն էր և խելամուտ յոյժ աստուածային գրոց, որպէս թէ ոչ այլ ոք, իբրև եռես երէ ոչ են բողոց զԳագիկ ի տեղի իւր: յառաջ կացեալ տայ զրանալին Բջնոյ ցթագաւորն, և զամենայն դիւր զհայրենի ժառանգութիւնն...» (Լաստիվերտցի, էջ 62):

որդին[11] իւր զօրանալ ի պատերազմին հասանելոյ ի չարաբաստ ծերունւոյն Նիկաւլայ այլաբար»։

Բանաստեղծությունը հետևյալն է.

«Լուաք թէ եկն պապն պաղակ, վարդանասարն պիսակ,
Գիշերաբուն Բուլղարաց, սպիտակափառն գեստրաս,
Այրարատեանն գագաթն և Կոդրայինն կատար,
Պատագարոն պրաքսիս, սէգ գիշերեանն ճեմօղ,
Աւարառօղ, աւերօղ, վատահամբաւն Նիկաւղաս։

Աղէ դիննա՛, դինուորեա՛, սպառազինեա՛, դու վառեա՛.
Արիաբար դու մրցեա՛ ի հանդիսի սուգին
Միամարտիկն վառիս, որ մերկանդամ մարտնչէր.
Փիղսաժանի անհառի քեզ ի դիմի հարկանի.
Արջ անտառի շիկորակ քեզ մարտնչել հանդերձի։

Արդ միլարեայն դու պնդեա՛ ղլայնալիճ հայրենին.
Ջերեքթևեանն դու մխեա՛, յառաջ մարտի՛ր և քաղեա՛.
Այս քեզ Բէլայն հաս հանդէս և Թորգոմեանն Հայկայ.
Աճապարեա՛ և փութա՛, դի ես Կադմեանն Արամեան.

---

[11] Ինչպես հայտնի է, Գրիգոր Մագիստրոսն ունեցել է մի քանի որդի։ Այս բանաստեղծության մեջ չի նշված ո՛ր որդուն է դիմում Մագիստրոսը։ Վերջինիս թղթերի հրատարակիչ Կ. Կոստանյանցը (էջ 315) առանց տարակուսանքի գրում է, որ խոսքը Վահրամի մասին է, որ հետագայում դարձավ կաթողիկոս՝ Գրիգորիս Վկայասեր կամ Գրիգոր Բ անվամբ։ Այս Վահրամը վախճանվեց 1105 թ. «ութսունն անցած» (տե՛ս **Մ. Օրմանյան**, Նշ. աշխ. հատ. Ա. սյուն. 1330), հետևաբար 1028 (1029 թթ., երբ գրվեց խնդրո առարկա բանաստեղծությունը, (այդ մասին տե՛ս ստորև), նա 5—10 տարեկան մի երեխա էր, որին հազիվ թե Մագիստրոսը դիմեր պատերազմի դնալու կոչով։ Պարզ է, որ խոսքը Վահրամի մասին չէ։ Բացի Վահրամից Մագիստրոսն ուրիշ որդիներ էլ ունեցավ, որոնցից ոմանք դեռահաս մեռան։ Մնացին Վասակը, որ հետագայում Անտիոքի դուքս դարձավ, Վասիլը և Փիլիպեն (Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 315)։ Հասկանալի է, հնարավոր չէ աներկբայորեն պընդել, թե որին է ուղղված Մագիստրոսի ոտանավորը։ Բացի այդ, որդու մասին խոսք է լինում սույն բանաստեղծության վերնագրում միայն, որ ինչպես ասացինք, Գրիգոր Մագիստրոսի գրչին չի պատկանում, այլ միջնադարում ժողովածուն կազմողին և գուցե իրականում թղթի հավցնատերը ամենևին էլ Գրիգոր Մագիստրոսի որդին չէ։

Ահա հրոսակք աճեցին, ահա հասին քեզ քաղդեայք.
Այլ դու Տէրամբ զօրացի՛ր և յիսուսիւ պարծեցի՛ր»[12]:

Բանաստեղծության վերջում Գրիգոր Մագիստրոսը տալիս է որոշ բացատրություններ՝ գրվածքի ոճի, ձևի և այլնի մասին, ավելացնելով. «առ մանկականսն քեզ կամեցայ յբստակ վճիտ շարագրել զայսոսիկ, զի մի անկարելի ոմանց թուեցեալ արտավազիկ արշաւանօք վախիցեն, այլ դիւրալուր եղեալ թերևս լսիցեն»:

Սույն բանաստեղծության կարևորությունը կայանում է նրանում, որ խոսք է լինում Հայաստան մուտք գործած ոմն Նիկաւղասի մասին՝ ծագումով բուլղար (գիշերաբուն Բուլղարաց), «աւարառօղ, աւերօղ ու վատահամբաւ» մի անձնավորության, որին դիմագրավելու կոչ է անում Գրիգոր Մագիստրոսը:

Ո՞վ է Նիկաւղաս Բուլղարը: Նրա անձնավորության պատմականությունն ապացուցելու մի անհաջող փորձ է կատարել Կ. Կոստանյանցը: Նա գրում է. «Խոսքը Նիկողայոս Կավասիլասի մասին է, որ էր ազգով բուլղար»[13]: *Կոստանյանցին շփոթության մեջ է գցել բյուզանդագետ Լբրոն, որ գրում է.* «Nicolas Cavasilas ou Chrysélios[14]»: *Նախ պետք է ասել, որ Կավասիլասի անունը Նիկողայոս չէր, այլ Կոստանդին* (Κωνσταντῖνον πατρίκιον τὸν Καβασίλαν[15]) *և երկրորդ, փաստ չունենք, որ Կավասիլասը ծագումով բուլղար էր: Բուլղար էր Քրիսելիոսը, որի անունը Նիկոլայոս էր և նա ոչ մի առնչություն չունի Կավասիլասի հետ: Նիկոլայոս Քրիսելիոսը, ինչպես մանրամասն կտեսնենք, կառավարել է Վասպուրականում Ռոմանոս Գ Արգիրոս կայսեր (12 նոյեմբեր 1028—11 ապրիլ 1034 թթ.) ժամանակ և նրա օրոք էլ պաշտոնանկ է եղել, այնինչ Կավասիլասը, ինչպես ցույց է տալիս Արիստակես Լաստիվերտցին, Վասպուրականում կառավարել է Միքայել Դ Պափ-*

---

12 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 234: Այս բանաստեղծությունը մինչ այդ հրատարակվել է երկու անգամ. տե՛ս «Всеобщая история Вардана Великого», Москва, 1861, приложение III, стр. 206—207, և *«Տաղասացութիւնք Գրիգոր Մագիստրոսի Պահլաւունւոյ», Վենետիկ, 1868, էջ 99.*

13 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 315:

14 *Lebeau*, Histoire du Bas—Empire, Nouvelle edition par *Saint—Martin*, t. XIV, Paris, 1833, p. 280.

15 Տե՛ս *Georgii Cedreni* Historiarum compendium, p. 537, 541.

լադոնացու (12 ապրիլ 1034—10 դեկտեմբեր 1041 թթ.) ժամանակ[16]։

Նիկոլայոս Քրիսելիոս Բուլղարի մասին վկայող հիմնական, եթե ոչ միակ աղբյուրը Սկիլիցես-Կեդրինոսի «Ժամանակագրությունն» է։ Այնտեղ կարդում ենք. «Բևրկրի ՝(Περκρί) բերդը՝ նրա տեր սարակինոս Ալիմը հանձնեց հռոմեների կայսեր (իմա՝ Ռոմանոս Գ-ին), հույս ունենալով արժանանալ պատրիկության և բազում այլ փոխհատուցումների։ Նա այդ առթիվ կայսեր մոտ ուղարկեց իր որդուն։ Բերդն ստացավ պատրիկ Նիկոլայոս բուլղարը մականունը՝ Քրիսելիոս (ὁ πατρίκιος Νικόλαος ὁ Βούλγαρος, ᾧ Χρυσήλιος τὸ ἐπώνυμον։) Սարակինոսի որդին եկավ Բյուզանդիոն, բայց կայսեր հիվանդության պատճառով ոչ մի ուշադրության չարժանացավ։ Դրանից վրդովված, նա վերադարձավ և համոզեց իր հորը նո՛ր վերցնել սեփական բերդը։ Վերջինս թաքուն կերպով համաձայնության եկավ սահմանակից պարսիկների (հավանաբար Ատրպատականի այլազգիների— Հ. Բ.)[17] հետ և գիշերով գրավեց բերդը։ Օգտվելով բերդի կառավարիչ Քրիսելիոսի անհոգությունից ու անգոնությունից, նա կոտորեց վեց հազար հռոմ զինվորների։ Բայց փոքր անց այնտեղ ուղարկվեց որպես կառավարիչ պատրիկ Նիկետաս Պեգոնիտեսը, որը համառ պաշարումից հետո ռուսների և հռոմեական այլ ուժերի օգնությամբ գրոհով վերցրեց բերդը, իսկ Ալիմին և նրա որդուն սպանեց[18]։

Գրիգոր Մագիստրոսի խնդրո առարկա բանաստեղծության մեջ հիշված Նիկողաս Բուլղարի անձնավորության պատմականության որոշումը պարզում է մի քանի կարևոր հարցեր։ Նախ և առաջ պարզվում է այդ բանաստեղծության գրության մոտավոր ժամանակը։ Այն գրվել է Բյուզանդական կայսր Ռոմանոս Գ-ի թագավորության ժամանակ (1028—1034 թթ.), ամենայն հավանականությամբ, թագավորության սկզբում։ Բայց ամենից կարևորն այն է, որ, ինչպես սույն հոդվածի սկզբում ասացինք, մենք իրավունք ենք ստանում այլ կերպ մոտենալ Գրիգոր Մագիստրոսի քաղաքա-

---

16 «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», էջ 48։

17 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 201։

18 *Georgii Cedreni*, Historiarum compendium, t. II, p. 502—503. Լաստիվերտցին այս դեպքը դնում է Ռոմանոսի հաջորդ Միքայել կայսեր ժամանակ։ Տե՛ս «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», Երևան, 1963, էջ 48։

կան դիրքավորման հարցին։ Վերոհիշյալ բանաստեղծությունից պարզ երևում է, որ Գրիգոր Մագիստրոսը հանդես է գալիս ընդդեմ բյուզանդական ագրեսիայի, նա հանդես է գալիս Հայաստանի անկախության պաշտպանության դիրքերում։ Այդ բանաստեղծությունը մեզ լիակատար իրավունք է տալիս այդպես մտածելու նամանավանդ եթե նկատի ունենանք վերջին տունը, որը գրված է Մովսես Խորենացու Հայոց Պատմության Առաջին Գրքի ԺԱ գլխի շատ տեղին ու վարպետ օգտագործմամբ։ Պատմահոր մոտ տվյալ տեղում ցույց է տրված, որ Բաբելոնից Հայոց նախահայր Հայկը «չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ... բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի... Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ»։ Այդ բանը Բելին դուր չի գալիս և նա պահանջում է, որ Հայկը իրեն հպատակություն հայտնի։ Վերջինս մերժում է։ «Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա (Հայկի՝ Հ. Բ). Տիտանեանն Բէլ ամբոխու հետևակ զօրաց. գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ։ Փախստական լինի Կադմոս առ Հայկ»։ Հայկն իր զորքով «հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն»։ Բելը, ընկնելով դժվարին կացության մեջ, ապաստամ է, որ հասնի իր բովանդակ զորքը և հետո մարտ տա Հայկին։ «Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զայնալիճն, դիպեցուցանէ զերեփթեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փշէ զոգին»։

Այժմ ավելորդ չէ մի անգամ ևս մեջբերել Գրիգոր Մագիստրոսի բանաստեղծության վերջին տունը։

«Արդ միլարեայն դու պնդեա՛ զայնալիճ հայրենին.
Ջերեփթեանն դու մխեա՛, յառաջ մարտի՛ր և քաղեա՛.
Այս քեզ Բէլայն հաս հանդէս և Թորգոմեանն Հայկայ.
Աճապարեա՛ և փութա՛, զի ես Կադմեանն Արամեան.
Ահա հրոսակք աճեցին, ահա հասին քեզ Քաղդեայք.
Այլ դու Տէրամբ զօրացի՛ր և Յիսուսիւ պարծեցի՛ր։

Գրիգոր Մագիստրոսն այսպիսով բյուզանդական վտանգը Հայաստանում համեմատում է բաբելացի Բելի վտանգի հետ, վերջինիս հրոսակները՝ բյուզանդական հրոսակների հետ, նա կոչ

է անում մարտի դուրս գալ «Այրարատեան կառարն» հասած Նիկողաս Բուլղարի դեմ, այսինքն Բյուզանդիայի դեմ, այնպես, ինչպես «յերկիրն Ասարաղայ» հասած Բելի դեմ դուրս եկավ Հայկը, համոզված լինելով, որ կհաղթի, ինչպես հաղթեց Հայկը: Դեպքերի աշխարհագրական միջավայրը ևս շատ բան է ասում: Հայկի և Բելի պատերազմը տեղի ունեցավ «յեղր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն»: Այդ աղի ծովակը Վանա լիճն է[19] Վասպուրականում: Տվյալ ժամանակաշրջանում Բյուզանդիան իր տիրապետությունը տարածել էր հենց Վասպուրականում, նրա կատապան էր նշանակված Նիկոլայոս Բուլղարը, որ պատերազմ էր մղում Վանա լճի մոտ գտնվող հայոց Բերկրի քաղաքը գրավելու և, հասկանալի է, Բյուզանդական ագրեսիան էլ ավելի ծավալելու համար: Կայսրությունը և՛ հյուսիսից՝ Տայքից, և՛ հարավից՝ Վասպուրականից աշխատում էր աքցանի մեջ առնել և խեղդել Բագրատունյաց պետությունը: Այդ վտանգի առաջն առնելու կոչ է անում ահա Գրիգոր Մագիստրոսը իր այդ բանաստեղծության մեջ[20]:

---

19 **Б. Б. Пиотровский**, История и культура Урарту, Ереван, 1944, стр. 283; его же, Ванское царство, Москва, 1959, стр. 7—8.

20 *Հայկական պետության ինքնուրույնությունը պաշտպանելու ձգտումը, իհարկե, չէր խանգարում, որ Գրիգոր Մագիստրոսը միաժամանակ սուր պայքար մղեր Բոնդրակյան աղանդավորների դեմ: Այդ հարցը փայլուն կերպով ուսումնասիրված է ակադ. Աշոտ Հովհաննիսյանի մեծարժեք աշխատության մեջ: Տե՛ս նրա «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», գիրք Ա, Երևան, 1957:*

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ս. Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Հայ պատմագիտական միտքը վերջին տասնամյակներում ջանքեր է գործադրում մեր ժողովրդի կյանքի ներքին, սոցիալ-տնտեսական պայմանները ուսումնասիրելու համար։

Այդ բնագավառի համար կարևոր սկզբնաղբյուրներից մեկն էլ միջնադարյան հայերեն արձանագրություններն են, որոնք և լիաոատ օգտագործվում են ուսումնասիրողների կողմից. բայց երկու հանգամանք կա, որոնք խոչընդոտում են այդ աշխատանքների կատարելությանը, դրանք հետևյալներն են. Ա. միջնադարյան հայերեն արձանագրությունները դեռևս լրիվ չեն հրատարակված, Բ. հրատարակվածների մի ստվար մասը շատ է հետու ժամանակակից գիտական պահանջները բավարարելու աստիճանից. և այդ պատճառով էլ կամ մնում է անօգտագործելի և կամ սխալմունքների պատճառ է դառնում։

Ներկա հոդվածով ներկայացնում ենք նշված այդ երկու թերությունները հաստատող, մի քանի հրատարակված և չհրատարակված արձանագրություններ և դրանց հիման վրա կարևոր դիտողություններ, որոնք ապացուցում են, որ մեր վիմական արձանագրությունների լրիվ և ժամանակակից գիտական մեթոդներով հրատարակված լինելը կարող է հայ ժողովրդի պատմության՝ հատկապես սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ, շատ նոր հարցերի ու պարզաբանումների բանալի հանդիսանալ։

ԴԵՄԵԹԱՐԱ ՀԱՐԿ

Մարտունու շրջանի ներքին Գետաշեն նախկին՝ Ադիաման, հին՝ Կոթ գյուղի եզրին է գտնվում Կոթա ս. Աստվածածին նշանավոր վանքը, որ շինել է 10-րդ դարի սկզբին Գրիգոր Սուփան

իշխանը. այդ վանքի արևելյան պատի ներքևի շարքի մի քարի վրա արտաքուստ կա հետևյալ արժեքավոր արձանագրությունը գրված տասը տողով.

Թ ՎԻՆ :ՉԻԴ: 1275 ՅԱՇԽԱՐՀ–
ԱՅԿԱԼՈՒԹԵ (ԱՆ) Ա.Պ–
ԱՂԱ (ՂԱ) ՆԻՆ ԵԻ ԽԱՐ–
ՆՈԽԻՆ ՊԱՐՈՆ ՏԱՐ–
ՍԱՅԻՃԻՆ. ԵՍ ՋՈԼԲԻԿ
ՉԱՅՍ ԹՈՂԻ. ԴԻՄԻԹ–
ԱՐԱՅ ՅԱԿՆ ՇԴՈՉՆ, Չ
ՄՇԱԿՆ, ԳՈՐՇԻՔՆ, :Ժ· (10)
ԳՐԻԻ ՀԱՅԻ ԳԵՂԱ: Ա: ԵՉ
:Ա: ԿՈՎ ԻՄ ԳԼՈՒԽ. Ա3Լ ԻԳԵ (ՂՍ)

Արձանագրությունը չի վերջացվել նույն քարի վրա այլևս տեղ չլինելու պատճառով թերևս։

Վերծանել է առաջին անգամ Սմբատյանցը[1] *խիստ սղավարումներով և կրճատումներով, որից և նույնությամբ արտագրել է Լալայանը*[2] *կարևոր սխալներն ու կրճատումները հետևյալներն են. Ջոլբէկ անունը դարձրել են Շմաւոն, պաց են թողել դեմեթարայ հակն, շղոչն, 10 գրիւ հաց ի գեղս, իմ գլուխ տերմիններն ու բառերը, որով և արձանագրությունը զրկվել է իմաստից և չի օգտագործվել ուսումնասիրողների կողմից։*

Անդրադառնանք բաց թողած այն տերմիններին, որոնք ուրիշ տեղ չեն հանդիպում. նախ դեմեթարայ հարկը դեմեթար տերմինը, բառը մեր մատենագրության մեջ մեկ անգամ է գործածված Ստ. Օրբելյանի պատմության մեջ՝ դէհմէթար ձևով. 881 թվին Տաթևի վանքին կամ ավելի ճիշտ այնտեղ պահվող մասունքին նվիրված Դարատափ գյուղի սահմանները որոշող փաստաթուղթը հաստատող վկաների մեջ է «վարդ դէհմէթար վկայ եմ[3]*»։ Աճառյանն այդ բառի դեմ ունի— «մի անծանոթ պաշտոնի անուն*[4]*» իսկ Մալխասյանցը դրան ավելացնում է նաև՝ «անստույգ նշանակությամբ»*[5] *իսկ բառի ծագման հարցով չեն զբաղվել։*

---

1 *«Տնդեկագիր Գեղարքունի ծովազարդ գավառի», Վաղարշ. 1895. էջ 533։*

2 *«Ազգագրական Հանդես», Թիֆլիս 1908 էջ 144—145։*

3 Օրբելյան, *էջ 216։*

4 Հ. Աճառյան, *Արմատական բառարան, 3 հատոր, էջ 523—524։*

5 Մալխասյանց, *Բացատրական բառարան, հ. 1, էջ 508։*

Գեղարքունի գավառի արձանագրությունների մեր ժողովածուի մեջ վերոհիշյալ արձանագրությունից բացի, կան մի քանիսն էլ այդ տերմինի հիշատակումով, որոնք առույգ կերպով պարզորոշում են նրա իմաստը և դրանք բոլորն էլ գտնվում են Նորադուզ գյուղում: Զաքարյանների տիրապետության ժամանակ Գեղարքունին պատկանում էր Իվանեին և գավառի կենտրոնը ու Իվանեի այդ շրջանի կառավարիչ պաշտոնեությունը նստում էր Նորադուզում: Հին հուշարձաններով շատ հարուստ այդ գյուղի եզրին է գտնվում նաև մի գմբեթավոր փոքր եկեղեցի, Ս. Լուսավորիչ անունով, որը հետագայում կուսանոց անապատ է եղել և կոչվել է Գափուց վանք. եկեղեցին հին բազիլիկ չենք է եղել և 10—11 դարերում վերակառուցվել է գմբեթավոր եկեղեցու[6]: Այդ եկեղեցու ներսում, արևմտյան պատի հյուսիսային մասում պահպանվել է վեց տողից բաղկացած հետևյալ արձանագրությունը.

ԵՍ ՄԽԻԹԱՐ ՆՈՐԱՏՎԱՑ ԴԻՄ–
ԵԹԱՐՍ ՈՐ ԿԱՄԱԿԻՑ ԵԻ ԱԻԳՆԱԿԱՆ Ե–
ՊԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՍԲ. ԼՈՒՍ–
ԱՒՈՐՉԻՍ ԵԻ ՆԱ ՍԱՀՄԱՆԵՑ ԻՆՁ
Ի ՏԱՐԻՆ: Բ: ԺԱՄ ՁՍԲ. ԽԱՉԻՆ ՏԱԻՆԻՆ. ԿԱ–
ՏԱՐԻՁՔ ՀՐԱՄԱՆԱՑ ՄԵՐՈՑ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ[7]:

Արձանագրության առաջին հրատարակիչ Սմբատյանցը և Լալայանը, որ արտագրել է նրանից առանց որևէ բացատրության՝ հիշատակված դէմեթար բառի տեղ գրել են առաջնորդ, հավանաբար նույն Մխիթարի պաշտոնը այլ արձանագրության մեջ առաջնորդ գրված լինելու հետևողությամբ: Այդ վերջին արձանագրությունը գտնվում է գյուղի մեծ գերեզմանատան մեջ. այստեղ կա շատ փոքրիկ շինված մի մատուռ, որի հյուսիսային պատին կից մնում է խաչաքարի մի մեծ պատվանդան, խաչաքարը կորած է, որի երեք մեծ քարերի վրա գրված է 7 տողից բաղկացած արձանագրություն, խաչքարի կանգնեցման առթիվ. սրա սկզբի հետևյալ տողերը առնչվում են մեր նյութի հետ.

Ի :ՈԿ: 1211 ԹՎ. Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ
ՄԵՐՈՑ ՁԱՔԱՐԻԻ ԵԻ ԻՒԱՆԷԻ ԵՍ ՄԽԻԹԱՐ, ՓԵՃՈՒՐԱՆՑ

---

6 Ա. Բարխուդարյան—*Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 38—41, Երևան, 1963:*

7 Սմբատյան *487, «Արվագրական հանդես» 18, էջ 120:*

ԴԱԻԹԻ ՈՐԴԻ, ՇՆՈՐՀԻՒՆ Ա.Յ ԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ՄԵԾԻՆ
ԻՒԱՆԷԻ ԵՂԷ Ա.ՌԱ.ՋՆՈՐԴ ՄԵԾԱՀՌՉԱԿ ԳԵԱՒՂԻՍ
ՆՈՐԱՏՈՒԱՅՑ[8].....

Այս արձանագրությունն, ինչպես պարզ տեսնվում է, լրացնում է նախորդ արձանագրության բոլոր թերությունները ու իմաստները, այն է՝ ճշտում է ժամանակը և բացահայտում օտար բառի հայերեն իմաստը՝ առաջնորդ գյուղի։

Ճիշտ այս դույզ արձանագրությունների նմանությամբ կա նաև մի երկրորդ դույգ, նույն իմաստը հաստատող՝ դրանցից առաջինը գրված է նույն Լուսավորիչ եկեղեցու արևմտյան պատին 7 տողով և հրատարակված չէ.

ԵՍ ԽՈՅՏԱՆ ԴԻՄԵԹԱՐՍ ՆՈՐ-
Ա.ՏՎԱՅ, Ա.ԻԳՆԱԿԱՆ ԵՂԷ ՍԲ ԳՐԻԳՈՐ-
ԻՍ ԸՆՁԱԻՔ ԻՄԱԻՔ, ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ
ՍԱՀՄԱՆԵՑ ԻՆՁ Ի ՏԱՐԻՆ :Բ: Ա.ՒՐ
Ի ԳԻՒՏ ԽԱՉԻՆ ՄԻՆՆ ԻՆՁ ԵՒ: Ա.:-ՆՆ ԿԵ-
ՆԱԿՑԻՆ ԻՄ ՔԻՍՏՈՆԷԻՆ. ԿԱ.ՏԱ.Ր-
ԻՁՔ ՀՐԱՄԱՆԱՅ ՄԵՐՈՑ Ա.ԻՐՀՆԻՆ ՅԱՅ:

Այս արձանագրության անորոշ ժամանակը պարզվում է դարձյալ մեծ գերեզմանատան մեջ կանգնած խաչքարի եռաստիճան և խորանաձև պատվանդանի վրա մնացած և չավարտված հետևյալ արձանագրությամբ.

ԻԹ (Վ.Ի) Ս :ՈՀԴ: (1225) ԵՍ ԽՈԴԱՆ
:Ե: Ա.Մ ԴԵՄԵԹԱ.Ր ԿԱՅԻ
ՆՈՐ (Ա.ՏՎԱՅ).....

Այսպիսով Գեղարքունիի արձանագրությունների մեջ գործածված ենք տեսնում դէմեթար տերմինը չորս անգամ և մեկ անգամ էլ նույն տերմինի փոխարեն նրա հայերենը՝ առաջնորդ, որով անկասկած է դառնում, որ դեռևս 9-րդ դարում հիշատակված դէմէթ-

---

8 *Հրատարակված է—Շահխաթունեանց, Ստորագրութիւն, Բ. 239։ Սմբատեանց, Գեղարքունի, էջ 485։ «Ազգագրական հանդես» XVIII էջ 118—119։ Կոստանյան, Վիմական տարեգիր, էջ 52։*

բար տերմինը կենդանի է եղել մինչև 13-րդ դարի առաջին տասնամյակները, երբ այն փոքր ինչ ձևափոխված՝ դէմաքար ձևով է գրվել և հենց իր ժամանակ նրան հայերեն փոխարինող բառը եղել է առաջնորդ կամ առաջնորդ գյուղի: Հանրահայտ է, որ գյուղի առաջնորդ է գրվել նաև տանուտերի համար (նաև գեղջավագ, քյոխվա) բայց և հայտնի է, որ գեղջավագ-տանուտեր-առաջնորդ և քյոխվանները եղել են հենց իրենց գյուղացիներից ընտրված գյուղական պաշտոնյաներ, իսկ մեր մեջ բերած արձանագրություններից պարզ երևում է, որ դէմբար—առաջնորդները նշանակված են եղել բարձր իշխաններից, ներկա դեպքում—հրամանաւ մեծին Իւանէի, հետևաբար դէմբար-առաջնորդը նույնը չէ տանուտեր-առաջնորդի հետ: Եթե ուշադիր նայենք մեջ բերված արձանագրությունների մեջ այս դէմբար-առաջնորդների գործունեության և իրավական առանձնահատկություններին կտեսնենք, որ դրանք անհամեմատ ավելի ընդարձակ են քան տանուտեր առաջնորդների գործունեության սահմանները ու իրավունքները: Նախ այն հանգամանքը որ Մխիթար և Խոյդան դէմբարները իրենց միջոցներով օժանդակում են Լուսավորիչ եկեղեցու շինությանն ու բարեկեցության և այդ առթիվ գրել տված արձանագրությունների մեջ իշխանական ոճով հայտարարում են «կատարիչ հրամանաց մերոց»: Ապա մեջ բերված առաջին՝ Գետաշենի արձանագրության մեջ Ջոլբեկի զեղջած հարկերի շարքի մեջ առաջինը դէմբարա հարկն է. ասել է որ այդ պաշտոնյայի համար հատուկ հարկ է գոյություն ունեցել. այս բոլորը հաշվի առնելով կարելի է ենթադրել, որ դէմբար պաշտոնը նման է եղել մոտավորապես բազմիցս հիշատակված ձեռնավորի պաշտոնի հետ, բայց եթե ձեռնավորը հասկանանք լոկ որպես գյուղական հարկահավաք պաշտոնյա, ինչպես այն բացատրված է ուսումնասիրողների կողմից և նշված բառարաններում, դա քիչ կլինի դէմբարների համար, որովհետև Նորադուզ գյուղում նրանց թողած գործունեությունը, տնտեսական և իրավական ավելի լայն սահմաններ են ցույց տալիս. այդ պատկերը լրիվ ցույց տալու համար նշենք մի քանի երևույթներ ևս. մեջ բերված արձանագրությունների մեջ հիշատակված առաջին դէմբարը Փեճուրանց Դավթի որդի Մխիթարն է, որը նշանակվել է Իւանէի կողմից 1211 թվին. երկրորդը՝ Խոյդանը, որի համար ունենք մի թվական՝ հավանաբար մահվան՝ 1225. մի այլ արձանագրությունից պարզվում է, որ Խոյդանը նույն Մխիթարի որդին է: Հիշատակել էինք, որ Նորադուզի մեծ գերեզմանատան մեջ կա մի մատուռ, դրա հյուսիսա-

յին պատին արտաքուստ գրված կա մի ընդարձակ արձանագրություն տաս տողով, որի սկզբի երկու տողերի կեսից ավելի պարունակող քարերը թափվել կորել են. տողավերջերի մնացորդներից հասկացվում է, որ կորել է թվականը և թագավորի անունը, որոնք հեշտությամբ կարելի է լրացնել: Թագավորը պիտի լինի Գիւորգի Լաշան, իսկ թվականը 1213—1222, որի ընթացքում էլ պետք է գրված լինի արձանագրությունը, ուր ասված է.

...ՈՐԴԻ ՄԽԻԹԱՐԱ ՈՐ ԵՂԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ՄԵԾԱՀՌՉԱԿ ԴԵՂԻՍ ՆՈՐԱՏՎԱՅ ԿԱՄ ԵՂԵԻ ԻՆՁ
ԵԻ ԿԱՆԳՆԵՑԻ ԽՈՐԱՆՆ ԵԻ ՆՇԱՆՔՍ ՏԻՐՈՒՆԱԿԱՆ
ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄՈ ԵԻ ՉՈՒՉԱԻՆ ԵԻ ՀԱՒՐ ԻՄՈ ՄԽԻ-
ԹԱՐԱ ԵԻ ՀԱՄԱՒՐԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՆԸՆՉԵՑԵԼՈՑ[9]...

Փեշուրանց տոհմը այսպիսով գոնե երկու սերունդ նշանակված է եղել Նորադուզի դեմեթար, բայց գերեզմանատան այն մասը, ուր նրանք այս մատուռն ու խաչքարերն են կանգնեցրել, ավելի ընդարձակ է. այդտեղ երկու շարքի կան կանգնած մեկ տասնյակից ավելի խաչքարերի պատվանդաններ, և ինչպես արձանագրությունն էլ նշում է —համաւրէն ամենայն ննջեցելոց—մի ամբողջ տոհմական գերեզմանոց է. կարելի է եզրակացնել, ուրեմն, որ այս տոհմը դրսից նշանակված՝ եկվոր պաշտոնյաներ չեն, այլ տեղացիներ:

Նշենք մի հանգամանք ևս. դեմեթար պաշտոն հիշատակված է Գեղարքունի գավառի երկու գյուղերում միայն, Նորադուզում և ներքին Գետաշենում. պատմական Գեղարքունի գավառը միշտ էլ բաժանված է եղել երկու վարչական մասերի (նույն և հիմա) և հայտնի է որ դրանք նաև իրենց հատուկ անուններն են ունեցել, այժմյան Կամոյի շրջանը (անցյալում նոր Բայազետի) կոչվել է Ծմակ գավառ, իսկ Մարտունու շրջանը (անցյալում Ղարանլուխի) Կղնուտի գավառ: Նորադուզն ու ներքին Գետաշենը հնում եղել են յուրաքանչյուրը այդ շրջաններից մեկի վարչական կենտրոնը և հենց այդ կենտրոններում էլ պահպանվել են դեմեթար պաշտոնյաի հիշատակություններ:

Այս երևույթը մենք համարում ենք օրինաչափ և, ըստ այսմ էլ,

---

9 Շահխաթունյանց, էջ 239, Սմբատյանց էջ 485, «Ազգագրական հանդես» XVIII, էջ 118:

դէմբարը վարչական կենտրոն ավանի պաշտոնյա։ Այդ երկու ավանները տեղադրված են հնում Արարատյան դաշտից Պարտավ տանող ճանապարհի վրա, ունեցել են կարավանների համար փոդուկներ և շուկաներ. այս միտքը հաստատող հին մեծածավալ շեն ու ավեր հուշարձաններից բացի՝ կան նաև արձանագրական վկայություններ. ներքին Գետաշենի նշանավոր Կոթա սբ. Աստվածածին եկեղեցու պատի տակ, ընկած վիճակում հայտնաբերել ենք մի քար, որի վրա գրված է

ՅԱՆՈՒՆ Ա.Յ ԵՍ...
..ՇԻՆԵՑԻ :Բ: ՓՆԴՈՒ-
Կ ԳԱԳԿԱ ԱՐԵՒՈ—
ՅՆ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՑ:

Իսկ Նորադուզ գյուղի հյուսիսային ծայրին կանգնած է մի մեծ խաչքար 11 տող արձանագրությամբ, որի մեջ հիշատակվում է Իանէն (ամիրսպասալարը) 1226 թվին. նախավերջին տողում ասված է, որ խաչքարը կանգնեցվում է «ՅԵՋՐ ՄԵԴԱՆԻՍ»— մեյդան ինչպես հայտնի է ունի հրապարակ, հավաքատեղի, շուկա իմաստը։ Մինչև այժմ էլ խաչքարի շուրջը իրոք որ մեծ և բաց տարածություն կա։

Այս բոլորը նկատի ունենալով հավանական ենք համարում որ դէմբար-առաջնորդի նշանակումի պաշտոնը կապված է այնպիսի բնակավայրի հետ, որը վարչական ու տնտեսական նշանակություն է ունեցել և ոչ մի կերպ չի կարող համընկնել գյուղական ընտրովի տանուտեր-առաջնորդի պաշտոնի հետ. այս առումով էլ նա նման է Անի քաղաքի տանուտերերի պաշտոնի հետ, որոնք նշանակվում էին վերին իշխանության կողմից և կառավարում էին քաղաքի բազմազան գործերը և համաձայն արձանագրությունների մեծ իրավունքներ ունեին։

Դէմբար պաշտոնի այս քննությունից հետո հետաքրքրում է նաև այդ բառի ճիշտ ստուգաբանությունը։

Դեմբար—պարսկերեն է և կազմված է դեհ-գյուղ, ավան, շեն և մեյբար-մեծավոր, քալանթար (քաղաքապետ) ցեղապետ և հետագայում նաև ախոռապան, ձիապան-բառերից[10]։ Մեզ մոտ այն

---

[10] Առնում ենք Հասան Ամինի «Պարսկա-անգլիերեն բառարանի» 6-րդ հրատարակությունից, Թեհրան 1344 (1965 թ.) էջեր 601, 1156։

դառնալով դէհմեթար-դէմեթար իր մէջ բովանդակում է ավանի մեծաւոր, առաջնորդ կամ պետ հասկացողութիւնը։

Ավելորդ չենք համարում նշել, որ մեյթար բառը հայերենում Մեթար դարձած գործ է ածվել որպես անձնանուն և նույն Գեղարքունիում բավական տարածված է եղել հնում։

ՇԴՈՉ

Համար 1 արձանագրության մեջ դեմեթարա հարկից հետո հիշվում է այս տերմինը, բայց որովհետև հաջորդ բառերն են մշակն, գործիքն և այլն, չի պարզվում թե այդ բառը նույնպես հարկ է թե հաջորդների նման ձրի աշխատանքի կամ գործիքի անուն. պարզ է սակայն, որ այն պարտադիր հատուցման ենթակա ինչ որ բան է կամ դրա անունը։ Ոչ որևէ բառարանում և ոչ էլ աղբագրական նյութերի մեջ այդ բառը չգտանք։ Առայժմ բավարարվում ենք հետևյալ ենթադրական համեմատությամբ միայն։

Անի քաղաքի մայր տաճարի պատին գրված է Բագրատ մագիստրոս Վիկացու ընդարձակ արձանագրությունը, որի մեջ հիշատակված են ղեղջված բազմաթիվ հարկերի անունները, որոնցից ամենավերջինը հետևյալ կապակցության մեջ է «եւ ի ճատո ինկարէնն ։600։ դրամն ազատ է»[11]։

Բազմաթիվ անգամ և տարբեր հեղինակների կողմից հրատարակված արձանագրության այդ վերջին նախադասությունը մնացել է այսպես անմեկնաբան։ Մենք ևս Դիվանի այդ պրակը կազմելիս միայն տառանջատումը փոխելով՝ դրել ենք ի ճատո ինկարէնն. Հ. Օրբելին, որը տեղում է ստուգել և որի սեպագիր աշխատությունը մեր ձեռքի տակ է, այդ նախադասությունը գրել է— «եւ ի ներտոցին Կարէնն ։n։ դրամ ազատ է»։ Լուսանկարի վրա այդ անորոշ բառերից կարէնն տառախումբը շատ որոշ է. դրան նախորդող տառերի մեջ բաց տարածություններ կան և S ու Ո տառերի մեջ էլ մի ուղղահայաց գիծ, բայց Օրբելու նշած Ը—և Յ տառերը չկան[12], բոլոր դեպքերում պարզ երևում են ՆՍՏՈՒՆ տառերը և այդ բառը մնում է անստույգ։

Մեր արձանագրությունը, ուր ՇԴՈՉ-ն է հիշատակված՝ անարվեստ ձեռքի գործ է և ոչ գլխագրերով, հետևաբար կարելի է ենթադրել, որ շղոչ գրությունը կարելի է և նղոչ վերծանել, որը ինչ-որ

---

11 «Դիվան», I, էջ 37։

12 անդ. տախտակ XII։

մոտիկություն ունի վերոհիշյալ նստո-ի հետ. բայց սա լոկ ենթադրություն է։

Արձանագրության մեջ հիշատակված մնացած հարկերի և տուրքերի անունները պարզ են և բազմաթիվ այլ օրինակների հիման վրա քննված, որով և հարկ չենք համարում դրանց անդրադառնալ։ Բայց այդտեղ մի աղավաղված միտք կա, որը կարոտ է բացատրման. վերջին տողի մեր վերծանությունը հետևյալն է. :Ա: ԿՈՎ, ԻՄ ԳԼՈՒԽ Ա3Լ Ի ԳԵ... որի դիմաց հրատարակիչները ունեն... եզ և կով Մղուխ, որով ստացվում է թե 200 գլուխ անասուն են զեղջել, որը սխալ է. մեր վերծանությունից այն իմաստն է ստացվում, որ հարկերը զեղջող Ջոլբեկը հայտնում է որ իր գլխու, այսինքն իր նախաձեռնությամբ, և ոչ թե բարձր իշխանության հրամանով է այդ գործը կատարում. մի հանգամանք, որը մատնացույց է անում Ջոբեկի սոցիալական կշիռը և հավանական է, որ ներքին Գետաշենի դեմեթարն այդ ժամանակ հենց Ջոլբեկն է։

ԳԵՐԵԶՄԱՆԱՀԱՐԿ

Թալինի շրջանի Իրինդ գյուղի կենտրոնում կիսավեր վիճակում կանգնած է ճարտարապետության կարևոր նմուշներից մեկը, 7-րդ դարի գմբեթավոր եկեղեցի։

Եկեղեցու ներսում, բեմի հարավային պատին գրված են իրար տակ երկու արձանագրություններ, որոնք այժմ խիստ քայքայված են. վերինը համեմատաբար ավելի լավ վիճակում է և ընդհանուր գծերով հասկանալի բովանդակությամբ. ահա այդ արձանագրության գծագիր պատճենն և լուսանկարը (տե՛ս էջ 82, 83)։

Արձանագրության վերականգնման աշխատանքը ներկա հոդվածի խնդրից դուրս համարելով՝ պարզ ու որոշակի տողերից երևում է, որ ոմն Նանիսեն թևրևս Ջաչիսեն թողել է, այսինքն զեղջել է իր տիրույթում գերեզմանի շարիաթը և 318 հայրապետների նզովքն է թափում խափանողների գլխին։ Թվականի հարյուրավոր տառի վերին մասը ջարդված է և մնացորդը հնարավոր է Չ կամ Ջ վերականգնել. ընդհանուր պատկերից ելնելով մենք այն Չ ենք համարում, որով և թվականը՝ :ՉԼԸ։ 1286։

Ըստ երևույթին վաղուց ի վեր այս քայքայված պատկերն է ունեցել արձանագրությունը և այդ պատճառով էլ ոչ ոք չի փորձել այն վերծանել։ Ո՞վ է եղել այդ Նանիսեն իշխանը, հայտնի չէ. բայց արձանագրության եղակի արժեքը այն է, որ այնտեղ հիշատակված

է շարիատս գեռեզմանի հարկային տերմինը, որը բացակայում է և՛ մատենագրության և՛ վիմական արձանագրությունների մեջ։

Բազմազան աղբյուրներից գիտենք, որ հոգևորականության կարևոր եկամուտներից մեկն էլ թաղման ծիսակատարություններից գոյացածներն են. հայտնի է նաև որ գերեզմանատեղի համար շատ դեպքերում դրամ են գանձել հոգևորականները, որը Մխիթար Գոշը



կանոնական չի համարում, բայց և չի էլ արգելում. հայտնի է նաև, որ պատմական աղբյուրներում երբեմն չափազանցված, երբեմն էլ իրական հիշատակություններ կան այն մասին, որ ժողովրդի վրա օտարների դրած ծանր հարկերի պատճառով բացել են գերեզմանները և թաղվածների հետ դրված արժեքավոր իրերը վերցրել։

Այսպիսի փաստ է հիշատակում օրինակ Դևոնդ պատմիչը, արաբների տիրապետության ժամանակ Աբդըլ ոստիկանի ծանր հարկապահանջության նկարագրության մեջ ուր ասում է.

— մինչև պահանջել հարկս և ի մեռելոցն[13]

նույն դեպքերի նկարագրությունն ունի Ստ. Տարոնեցին որը գրում է.

Առնուլ հարկս ի կենցաղեաց և ի մեռելոց քան մարդաթուի[14]։

Այս նույնը կրկնում է նաև Կ. Գանձակեցին[15] բայց սրանք էպիզոդիկ երևույթներ են և ի վերջո ոչ շատ հին մեռելների հաշվին կենդանիներից ավելի շատ հարկ կորզելու միջոց. իսկ մեր արձանագրության մեջ գերեզմանի հարկ է հիշատակված, որը պիտի ենթադրել կապված է եղել կայուն տեղի հետ և տևական բնույթ է ունեցել. ապա նկատի ունենալով արձանագրության մեջ հարկը վերացնող Նանիսանի ոչ հոգևորական լինելը՝ հետևում է, որ այդ հարկը տրվել է աշխարհիկ իշխանություններին։



Գերեզմանատեղի հետ կապված հոգևոր և աշխարհիկ իշխանությունների շահագործման խնդիրը պարզելու համար անհրաժեշտ ենք համարում փաստական նյութերի հիման վրա անել հետևյալ թռուցիկ դիտողությունները։

Միջնադարյան հասարակության սոցիալական հիերարխիայի ցայտուն պատկերն են ներկայացնում նաև մեռելաթաղն և հատկապես գերեզմանատեղի ընտրությունը։ Թագավորները ունեցել են իրենց հատուկ դամբարանները, նախարարները իրենց տիրույթի մի նշանավոր վանքին կից շինված իրենց տապանատները, որոնց

---

13. Դևոնդ, էջ 127։

14 Ս. Տարոնեցի էջ 131։

15 Կ. Գանձակեցի էջ 72։

ստորագաս աստիճանի վրա եղածները թաղվել են վանքերի ու եկեղեցիների բակերում, իսկ գյուղացիությունը ու հասարակ քաղաքացիները՝ հասարակաց գերեզմաններում: Թաղման ծիսակատարությունները մենաշնորհ լինելով եկեղեցուն՝ եղել են հոգևորականության եկամուտների նշանակալից մի աղբյուր. այդ փաստը հանրահայտ է, մենք այստեղ ուզում ենք թեթևորեն անդրադառնալ գերեզմանատեղի ընտրության հետ կապված եկամուտների հարցին:

Բագրատունյաց թագավորության շրջանից սկսած գրեթե հայ բոլոր նախարարական տների դամբարանատները հայտնի են և մեծ մասամբ կանգուն. յուրաքանչյուր նախարարական տուն իր տիրույթի սահմանների մեջ գտնվող մի նշանավոր վանքին կից գավթի կամ մատուռի ձևով մի շենք է ավելացրել՝ որպես տոհմական տապանատուն[16], որից հետո այդ վանքն ու տապանատունը դառնում են տոհմի հոգևոր կենտրոն ու վայելում տոհմի անդամների մշտական խնամքն ու հովանավորությունը: Յուրաքանչյուր վանքի միաբանություն կցանկանար այդ բախտին արժանանալ, որովհետև բացի թաղումների և մեռելոցների հետ կապված մշտական եկամուտներից՝ վանքն ու տապանատունը հաճախ նվեր էին ստանում նաև անշարժ գույքեր՝ արտ, այգի և այլն: Թվենք մի քանի օրինակներ.

Սմբատ Շահնշահը 1036 թվին Հոռոմոսի վանքում արձանագրել է տալիս.

ԵՍ ՍՄԲԱՏ ՇԱՀՆՇԱՀ ՈՐԴԻ ԳԱԳԿԱ ՇԱՀՆՇԱՀԻ
ԵՏՈՒ ՁԻՄ ԳԵՂԱ ՁՍԱՀԱՌՈՒՆԻՍ Ի ՄԵՐ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ
ԹԱԳԱԻՈՐԱՑ Ի ՏԻԵԶԵՐԱՀՌՉԱԿ ՎԱՆՆ ՀՈՌՈՄՈՍԻ....[17]

1239 թ. Լոռիի Մամիկոնյան իշխանները Դսեղի Բարձրաբաշ եկեղեցու իրենց տոհմական տապանատունը նվիրում են՝ «տաւեանական եւ գկարմիր քարն իւր ամէն եռանդովն»[18]:

Վանքերի մեջ նույնիսկ պայքար էր առաջանում որևէ նշանավոր իշխանի տոհմական գերեզմանատուն դառնալու համար. այսպես օրինակ, նշանավոր Քուրդ իշխանը, որի տապանատունը Սանահնի վանքումն էր, հետագայում գժտվում է վերջիններիս

16 Թ. Թորամանյան Հայկական ճարտարապետություն, 1, էջ 157, Երևան 1942 թ.:

17 Ալիշան, Շիրակ, էջ 31:

18 «Վիմական տարեգիր», էջ 81:

հետ և Դսեղի Բարձրաքաշը դարձնում իր տոհմի տապանատուն և այդ առթիվ այս վանքին է նվիրում.

...Եւ այլ զինչ ունիմ, յետ իմ անցման այս եկեղեցւոյս լինի...[19]

Բացի այս հատուկ իշխանական տապանատներից՝ հոգևորականությունը վանքերի մեջ լոկ մի գերեզմանատեղի հողն էլ դարձնում էր եկամտի աղբյուր: Ժամանակի հարուստ մարդիկ, առավել ևս քաղաքացիներ, նշանավոր չափի ինչք են տալիս վանքերին մի գերեզմանատեղ ունենալու համար. ահա նման մի քանի փաստեր. Անի քաղաքին մոտիկ Հոռոմոսի վանքի և Այունիքի Տաթևի վանքերից:

Ես Սուրհաւս եառու զճարտկանց մարգն
յԱրվաշեւ ես թաղեցա ի տեղս...[20]

Ես Սմբատ եառու զՄարանց մարդի զկէսն եւ
թաղեցա ի վանքս[21]:

Ես Յովհաննէս, Թադէոսի որդի եառու
զչորացն ի Գլիձորին եւ ես թաղեցա...[27]

Կամաւն այ ես Վարդան եւ ամուսին իմ
Աղբերացս միաբանեցաք սբ. ուխտիս եւ տուաք
:Բ: կով: Բ: եզն եւ եառուն գերեզմանի տեղ...[23]

Ի կամս այ մեք Սիսաք ու Սարգիս եւ
Ասխաթան, որդիք Շահանդուխտին
... Սիսաքին եւ վասն մեր գերեզմանացս
:Բ: տուն տվաք սբ. Առաքելոցս...[24]

Գերեզմանատեղը առուծախի և եկամուտի աղբյուր են դարձրել նաև իշխանները. հետևելով մեծ իշխանների օրինակին, նրանց ստորադրյալ փոքր իշխանիկները նույնպես չեն ցանկանում հասարակաց գերեզմանատներում թաղվել, այլ առանձին. դրա համար մեծ իշխաններից գնման կամ նվերի ձևով ակնառու տեղերում հողամաս են ձեռք բերում և տոհմական գերեզմանոց հիմնում.

19 «Վիմական տարեգիր», էջ 89:
20 անդ. էջ 61:
21 անդ. էջ 61:
22 անդ. էջ 61:
23 անդ. էջ 242:
24 Տես Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքեր, էջ 141, Երուսաղեմ, 1938 թ.:

ահա երկու փաստեր։ Օրբելյանների նստոց Եղեգիս ավանի եզրին այժմ կանգնած են մի շարքի չորս խաչքարեր, ոմն Աբլկանց տոհմի անդամների անուններով. արձանագրություններից մեկը հայտարարում է.

Ես Ապլիկ գնեցի զայս հողս իմ։ (27)
դևկան, արարի գերեզմանի հատ եվ մատ իմո[25].

Ղարաբաղի Քարագլուխ գյուղի եզրին, փոքրիկ բլրակի գլխին, մի փոքր գերեզմանոց է մնացել, որտեղ պահպանվել են երկու կանգուն խաչքարեր և մի քանի ջարդոտված բեկորներ. դրանցից մեկի ստորին մասում ուտելիքներով սեղան է քանդակված, որի շուրջը նստած են մի տղամարդ և մի կին՝ երեխան գրկին, իսկ խաչքարի թիկունքին դրված է՝

ԹԻ: ՋԲ: (1253) ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՆԱՅ ԵՍ
ՍՄՊԱՏ ԵԻ ԵՂԲԱՐՔ ԻՄ ԿԱՆԳՆԵՑԻ ՋԽԱՋՍ ԲԱՐԻ
ԽԱԻՍ ԻՆՁ ԵԻ Ա.ՄՈՒՍԻՆ ԻՄՈՅ ԿԱՏԱՅԻՆ, ՁՈՐ ԵՏ
ՊԱՐՈՆ ՄԵՋ ՀԱՅՐԵՆԻՔ ԵԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂ
ՔՍ Ա.ԻԳՆԻ ԻԻՐ ՈՐԴԵԱՅՆ Ա.ՄԵՆ[26]

Մեջ բերված այս բոլոր փաստերն ապացուցում են երկու բան նախ՝ որ հասարակության մեջ տարբեր դիրք ունեցող դասերի ու անհատների՝ կյանքում ունեցած աստիճանականությունը՝ իր անդրադարձումն է գտնում նաև գերեզմանատեղի ընտրության հարցում, ապա գերեզմանատեղի ընտրության այդ ձգտումը դառնում է շահույթի աղբյուր առավելապես հոգևոր դասի և նույնիսկ աշխարհիկ հողատեր իշխանների համար։

Սակայն թված այս երևույթները շահույթի կողմնակի աղբյուրներ են, իսկ հարկ և տուրք հասկացողությունը ընդհանուր և պետական աստիճանի երևույթներ են. բայց և ֆեոդալական իրականության պայմաններում երբ աշխարհագրական, ազգագրական և բազմաթիվ այլ պատճառներով համընդհանուր պետական օրենքների կողքին դեռևս շատ տեղերում գործում էին նաև զուտ տեղային օրենքներ, հնարավոր էր նաև զուտ տեղական որևէ հարկ կամ տուրք. թերևս Իրինդի այս նորագյուտ արձանագրության մեջ

---

25 «Դիվան», III, էջ 114։

26 Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 186, «Վիմական տարեգիր», էջ 97։

հիշատակված գերեզմանի հարկը տեղական մի իշխանական տիրույթի սահմաններում պահպանված մի հին օրենքի մնացորդ է, որը և վերացնում է Նանիսանը։

ՀԱՐՍՆԵՀԱՐԿ

Պատմաբան—ազգագրագետները անհատկանալի պատճառով աչքաթող են արել Բջնիի վանքի պատին դրված մի արձանագրության մեջ հիշատակված հարսանեկան տերմինը, մանավանդ որ այդ տերմինը գրված է նույն շարքի այլ հարկային տերմինների հետ, որոնք նկատի են առնված քննիչների կողմից[27] և այդ արձանագրությունն էլ հրատարակված է բազմաթիվ անգամներ։

Նկատի ունենալով արձանագրության կարևոր օրենսդրական և իրավաբանական ձևակերպումը և հրատարակությունների պակասավոր լինելը ներկայացնում ենք այն ամբողջովին.

Թվ. ՉՀԴ։ (1325)

Յուսով աճմաին այ. ես Զաքարէ, որդի Սաճիպ դիւանին և պարոն խոշաբին, բոռն աթապակ Աւագին, որդոյ աթապակ Իւանէի, վասն մեր երկար կենդանութեան և փրկութեան հոգոյ իմոյ ի վեր կալա, որ ի Բջնի այլ մարդոյ տիրութիւն չէլնի. եւ բողի զամէն հարկ, զամիրանակն, զհարսանէկան, զկովայհամարն, զկալայ բաղարն, զսայլին սպ(իտակ)ն, զմանկանէն։ Եւ աւտարականն հան զդամղէն այլ իրէ չտա, աղման չանեն ոչյասմնէտէ մինչև հաւիտեան հաստատուն կացէ արձանս իմ. էրէ ոհ խափանել ջանայ, յիմոց կամ յիմ զաւակաց, կամ աւտարաց, իմ մեղացն պարտական է առաջի այ։

Ի տէր Սարգսի յէպիսկոպոսութեան և ի Գրիգորոյ ամիրայութեան, Սարգսի բերդավագութեան հաստատեցաւ արձանս։

Արձանագրությունը հրատարակված է հինգ հեղինակների կողմից բացի այն օգտագործած պատմաբաններից, որոնք են՝ Շահխաթունյան[28], Ալիշան[29], Սմբատյանց[30], Լալայան[31], Կոստան-

---

27 Ս. Հակոբյան, *Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1957 թ., էջ 413։*

28 «*Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ*», *երկրորդ հատոր, էջ 183, Էջմիածին, 1842 թ.։*

29 «*Այրարատ*», *էջ 273, Վենետիկ, 1890 թ.։*

30 «*Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գավառի*», *էջ 320, Վաղարշապատ, 1895 թ.։*

31 «*Ազգագրական հանդես*», *XXIII, էջ 148, Թիֆլիս։*

յան[32]. բացի ուղղագրական մանր թերություններից, բոլոր հրատարակիչների մոտ պակասում է նախ թվականը։ Հայկական արձանագրությունների սկզբից և վերջից հաճախ փորագրվում է խաչ. ներկա դեպքում՝ սկզբում դրված խաչը սովորականից մեծ է և նրա թևերի արանքում դրված է թվականը. հրատարակիչները կամ չեն նկատել, կամ էլ, որպես խաչին վերաբերող մաս աչքաթող են արել. դրա պատճառով էլ վերահրատարակիչներից Ալիշանը մոտավոր ժամանակը որոշելու համար գրել է «ի վերջ կոյս ԺԳ դարու», իսկ Կոստանյանցը տեղավորել է իր գրքի «Անթվական արձանագրութիւնք» բաժնում։

Երկրորդ կարևոր թերությունը հրատարակիչների կողմից այն է, որ բաց են թողել արձանագրության վերջին տողերը, ուր վկաներով հաստատվելու փաստն է արձանագրված. օրենսդրական-իրավական նման ձևակերպում պարունակող մենք քիչ փաստագրերը ունենք, որով և արձանագրության արժեքը ավելի լայն նշանակություն է ստանում։

Արձանագրության այդ վերջին մասը աչքաթող է արված վերծանողների կողմից մոտավորապես թվականին վերաբերող մեր դիտողության նմանությամբ։ Բուն արձանագրությունը գրված է պատի վրա եղած ընդարձակ տարածության վրա, վեց երկար տողերով. տեղն սպառված լինելով՝ վերջին մասը 4 կարճ տողերով փորագրված է ներքևում, մի փոքր հեռու, մուտքի շրջանակի մոտ եղած փոքր տարածության վրա. որովհետև նախկին հրատարակիչները միայն մեծ և իրենց կարծիքով կարևոր արձանագրություններն են միայն արտագրել, այդ պատճառով էլ այդ փոքրի վրա ուշք չեն դարձրել և չեն հասկացել, որ մեծի մասն է։

Ըստ արձանագրության՝ Սահիպ Դիվանի որդի Զաքարեն զեղջել է Բջնիի բոլոր հարկերը, որոնք թվով 6-են և որոնց շարքում, երկրորդ տեղում, ամիրա-հարկից հետո հիշատակված է «Հարսանեհակ»։ Միանգամայն անհասկած է, որ այդ հարկը նույնքան էական է նկատվել, որքան մնացած բոլորը։ Ինչպես հայտնի է, միջնադարյան հարկանունների մեծագույն մասը միայն արձանագրությունների մեջ են հիշատակված և դրանցից շատերը բազմաթիվ անգամներ, մեզ հետաքրքրող «Հարսանեհակ» տերմինի մինչև այժմ միայն այս մեկ հատիկ հիշատակությունը կար և երևի հենց այդ պատճառով էլ ուսումնասիրողները չեն զբաղվել նրանով։

---

[32] «Վիմական տարեգիր», էջ 226—227, Ս.—Պետերբուրգ 1913 թ.։

Այժմ մեր ձեռքի տակ կա այդ հարկի ևս մի չհրատարակված հիշատակություն և մի երրորդ տարբերակը, որոնք և հնարավոր են դարձնում բացահայտել այդ հարկի բովանդակությունը։

Արդ ի՞նչ է նշանակում այս հարսանեհարկը. բառացի այս դեպքում այն նշանակում է հարսանեաց հարկ, հարսանաքի հարկ. այսինքն հարսանիք անելու համար թույլտվություն ստանալու համար իշխանությանը վճարվող հարկ։

Բայց մեր նորահայտ մի այլ արձանագրության մեջ այդ տերմինը գրված է ոչ թե հարսանեհակ ձևով, այլ հարսնեհակ, իսկ այդ ձևով այն նշանակում է հարսի հարկ։

Բայց նախ այդ երկրորդ արձանագրության մասին ընդհանրապես։

Ախուրյանի շրջանի Բարձրաշեն գյուղը հնագիտական կարևոր միջավայր է. գյուղի արևմտյան կողմի բլրի վրա մնում են ավերակները հինգերորդ դարի մի փոքր տաճարի, իսկ գյուղամիջում նույնպես մի փոքր եկեղեցու պատերը կան, շինված մաքուր սրբատաշ քարերով. այդ եկեղեցու հյուսիսային պատի արտաքին մասում, արևելյան անկյունի մոտ, բարձր տեղում փորագրված է 8 տողով և գեղեցիկ տառերով մի կարևոր արձանագրություն, որը ցավոք՝ չարամտորեն խիստ վնասել են. հատկապես տողասկզբներում պարզ երևում են մուրճով տաշվածները 7 տողերի վրա հավասարապես, իսկ տողավերջերում անկանոն կերպով ջարդվածքներ։ Արձանագրության վերականգնման աշխատանքը թողնում ենք, ներկայացնում ենք գծագիր պատճեն.



Ընդհանուր բովանդակությունը հետևյալն է. սպասալարների սրոք, երաշտի հետևանքով խանձվում են դաշտերը և դրա հետևանքով զեղջվում են մի շարք հարկեր, որոնցից չորրորդ տողում ամբողջական և անկասկած մնացել են հարսնէհարկ և շարիաթ բառերը։

Այսպիսով ունեցանք հարկային տերմինների շարքում արդեն երկու անգամ հիշատակված այս անունը, որը 14-րդ դարի արձանագրության մեջ գրված է հարսանէհարկ և 13-ում հարսնեհարկ ձևերով, բայց երկու դեպքում էլ դրանց բուն բովանդակությունը մատնացույց անող ակնարկ չկա։

Անի քաղաքի արձանագրություններից մեկը մեր համոզումով լրիվ կերպով բացահայտում է այդ հարսնէհարկի էությունը. ահա այդ արձանագրությունը.

ՓԱԹՇԱՀԻՆ ԵՐԿԱՐ ԿԵՆԱՑՆ, ԱՐՂՈՒՆ ԱՂԻՆ ԵՒ ՍԱՒՊ ԴԻՒԱՆԻՆ. ԿԱՄԱՒԻՆ Ա.Յ. ԵՍ ՏԻՐ ՍԱՐԳԻՍ, ՈՐԴԻ ՄԱՔԻՍՏՈՍԻՆ ՋԱՅՍ ՀԱՍՏԱՏԵՑԻ. ՍԱՀՄԱՆ ԷՐ Ի ՍԿԶԲԱՆԷ ՈՐ ՀԱՐՍՆ ԱՌՆՈՒՐ ՉՀՐԱՄԱՆՆ ՇԱՏ ԽԵՂՃ ԵՒ ԱՆՊԱՏԵՀ ԲԱՆ ԼԻՆԷՐ. ՋԱՅՍ ՀԱՍՏԱՏԵՑԻ, ՈՐ ԿՏՐԻՃՆ ԱՌՆՈՒ ՉՀՐԱՄԱՆՆ ԵՒ Ա.Յ. ԲՌՆԱՊՍԱԿ ԱՌՆԵԼ ՈՉ ՈՒՆԻ ՈՔ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ[33].....

Նախ ասենք, որ այս անթվական արձանագրությունը, որը առաջին անգամ հրատարակված է Դիվանում, Անիի Առաքելոց վանքի պատից թափված երկու քարերի վրա է եղել և գտնվել է 1909 թ. պեղումների ընթացքում, իսկ ժամանակը որոշվում է նշված անձնանուններով՝ այն է 13-րդ դարի երկրորդ կեսով։

Այս արձանագրությունը բացահայտում է հետևյալ կարևոր հանգամանքը. Ա. հարսնէհարկի դիմաց ունենք «հարսն առնուր զհրամանն», մի հանգամանք, որը հաստատում է, որ հարսի հարկ է տերմինի անունը. Բ. որ հարսնէ վճարում տուրքը ամուսնության իրավունք ստանալու համար. Գ. որ տուրքի հրաման առնելու այս ձևը շատ հնուց է գալիս— «սահման էր ի սկզբանէ» Դ. որ օրենսդիրը այդ երևույթը համարում է «շատ խեղճ և անպատեհ բան» և կարգադրում է որ այսուհետև կորիճն առնի հրամանը, այլևևքն փեսան վճարի տուրքը։

Այս մանրամասնությունները նկատի առնելով համարում ենք, որ հարսնէհարկը եղել է շատ հնուց և շատ ժողովուրդների՝ նույն

---

[33] «Դիվան», I, 19։

և հայոց մեջ, երբեմն գոյություն ունեցած առաջին գիշերվա օրենքը, որ հետագայում փոխարինվել է նյութական այլ բարիքներով կամ դրամով և հաստատուն տուրքի բնույթ է ստացել։ Թե երբվանից է հայոց մեջ այդ իրավունքը դրամական տուրքով փոխարինվել, պարզ չէ. արձանագրության մեջ «սահման էր ի սկզբանէ» արտահայտությունը այդ հարցին ստույգ պատասխան չի տալիս. բայց դրանից հետո եղած բնորոշումը «շատ խեղճ և անպատեհ բան լինէր» ակնարկ է այն մասին, որ դեռ արձանագրության ժամանակ 13-րդ դարում հարկ վերցնողը միշտ չէ որ համաձայնվում էր դրամական փոխհատուցմանը, այդ պատճառով էլ Անիի եպիսկոպոսը այդ խեղճ և անպատեհ երևույթին արմատական լուծում տալու համար կարգադրում է, որ փեսան վճարի այդ հարկը։ Իսկ արձանագրության վերջին նախադասությունը— «Ու այլ բռնապատակ առնել ոչ ունի ոք իշխանութիւն»— հասկանում ենք այսպես, 13-րդ դարի երկրորդ կեսում հասարակական մտածողությունը այդ խնդրի վերաբերյալ այնքան էր փոխվել, որ փեսան հրաժարվում էր ամուսնանալ իր խոսեցյալ աղջկա հետ այն դեպքում, երբ նա դրամական հարկի փոխարեն հարկադրված էր եղել վճարել իր կուսությունը. բայց սովորութային իրավունքի ուժով նրան բռնությամբ ստիպում էին ամուսնանալ։ Նոր հաստատված օրենքը, վերացնելով այս երևույթը ծնող պատճառները՝ արգելում էին նաև նրա հետևանք հանդիսացող բռնապատակը ևս։ Թե ինչ չափով Անիի եպիսկոպոսի այդ կարգադրությունը համաղգային արժեք ստացավ հայտնի չէ. միայն պարզ է, որ միջնադարի պայմաններում ընդհանրապես և հայ պետական իշխանության բացակայության հետևանքով նման օրենքները անմիջապես և խստորեն կիրառելու ոչ մի հնարավորություն չկար. դրա ապացույցը տալիս է Բջնիի արձանագրությունը, որը նույն հարկը հիշատակում է այդ եպիսկոպոսական կարգադրությունից մոտ կես դար հետո։

Առաջին գիշերվա իրավունքը ius primae noctis տարածված է եղել աշխարհի բազմաթիվ ցեղերի և ժողովուրդների մեջ և խիստ ծաղկած էր միջնադարյան ֆեոդալական իրավունքում, և չնայած քրիստոնյա հոգևորականության պայքարին, այն պարփակված ընտանիքի և հարազատների նեղ շրջանի մեջ գոյատևում է մինչև 19-րդ դարը։

Հայ մատենագրության մեջ առաջին գիշերվա իրավունքի վերաբերյալ ուղղակի նյութեր բնականաբար չկան, մեր հեղինակների քրիստոնեական բարոյականության ոգով տոգորված

լինելու պատճառով։ Բայց 19—20-րդ դարերում հավաքված ազգագրական նյութերի մեջ շատ տեղեկություններ կան այդ իրավունքի փոխանցմանը գերդաստանի ավագին և քավորին[34]։

Մեր նպատակից դուրս է արձանագրությունների ընձեռած այս նոր նյութերի լույսի տակ քննարկել հարցն իր ամբողջության մեջ, բավարարվում ենք շեշտելով այն, որ այս նոր նյութերը մի ճեղք են առաջացնում հայ ընտանեկան կյանքի պատկերը պարուրող քրիստոնեական, կրոնա-բարոյական վարագույրի մեջ, որը 19-րդ դարի բանահավաք ազգագրագետների խոստովանությամբ եղել է մի «խորհրդավոր սֆինքս»[35]։

ՁԵՌՆԱՎՈՐ-ՁԵՌՆԱՎՈՐԱՀԱՐԿ

Օձունի հնագույն եկեղեցու պատերին փորագրված են երկու արձանագրություններ «ձեռնավոր» պաշտոնյայի գործունեությունը պարզաբանող և մի քանի հարկերի հիշատակումով։ Այդ արձանագրությունները վերծանել է միայն Ջալալյանցը[36] շատ կցկտուր և աղավաղված ձևով, որ և նույնությամբ մտել են նաև «Վիմական տարեգրության» մեջ[37], հետագա ուսումնասիրողները զգալով դրանց աղավաղ լինելը չեն օգտագործել բացի Ս. Պողոսյանից[38], որը միայն երկու բառ է վերցրել «կովէ գլխահարկ»[39]։ Առաջին արձանագրությունը գրված է տաճարի արևմտյան կողմի սրահի կամարի վրա 9 տողով. այժմ բավականին մաշված են տառերը, մի երկու տեղ էլ խպատ ջարդված, որոնք վերականգնվում են ճըշտությամբ. ահա դրա գծագիր պատճեն և վերծանությունը.

ԹՎԻՆ ՉԻԴ (1275)

ԿԱՄԱՒՆ Ա.Յ ԵՍ ԴԵՂՍ, ՈՐԴԻ Ա.ՆԳԱ.ՅՈ-
ՅՆ ԾԱ.ՌԱ. ՄԵԾԻՆ ԻՎԱ.ՆԷԻ ԷՍ Ժ-
Ա.ՄՍ ՈՐ ԴԵՂՍ Է.ՀԱ.ՏԱ.Ի Ի Ա.ՆԱ.ՍՆԷ ԵՍ՝
ԻՎԱ.ՆԷԻ ՈՐԴԵԱ.ՅՆ Ա.Ր (ԵԻՇԱ.)ՏՈՒԹԵԱ.Ն ՀԱ.ՄԱ.Ր՝

---

34 Խ. Սամվելյան, *Մայրական իրավունքը*, «Ազգագրական հանդես», XVIII, էջ 77։

35 Գ. Իփեկեան, *Քավոր*, «Ազգագրական հանդես», XXIV, էջ 90։

36 Խ. Սամվելյան, անդ., էջ 82։

37 Ջալալյանց, I, էջ 91։

38 Ս. Պողոսյան, *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում*, էջ 208, Երևան, 1956։

39 «Վիմական տարեգիր», էջ 250։

ԻՄ ՁԵՌՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲԱՅ ՁԵԶԻՆ ՈՒ ԿՈՎԻ ԳԼԽԱՀԱԿ Ի ՎԵՐ ԷԿԱԼԱՔ, ՎԱՍՆ ՈՐ ՏԱՌԱՊԵԼՆ ԱՆԱՍՈՒՆ ՁԿԱՄԷՐ ՊԱՀԵԱԼ ՈՐ ԳԼԽԱՀԱԿ ԱՌՆՈՒՆ, ՈՎ Խ(ԱՓԱ)ՆԻ ՆՁՈՎԱԾ Է. (ՅԻՇԵՑ)ԷՔ:



Հրատարակիչների մոտ նախ՝ բացակայում է թվականը—1275, որը կրկնակի մեծության տառերով գրված է մեկ տողով սկզբից. այս թվականը համապատասխանում է Իվանէ II-ի շրջանին, որը 1261 թ. Անիի տերն էր և մահացել է 1284 թ.: Մեր «որդի Անգղացոյն» գլխահարկն վեր կալանք վանքի»— որով ստացվել է, թե վանքի շրջանի Կողբ գյուղի մոտ է գտնվելիս եղել Անգեղ գյուղը, որի ավերակների մեջ այժմ էլ կանգուն է մի մեծ եկեղեցի. տեղացիներն այդ վայրը կոչում են «Ագեղցի»— Անգեղի եկեղեցի:

Երրորդ տողի մեր «գեղս է հատաւ ի անասնէ» նախադասությունը հրատարակիչները գարձրել են «գեղս հատաւ յանուանէ» որ բացարձակապես անկարելի, հետևաբար և անիմաստ միտք է։

Մեր՝ «կուվի գլխահակ ի վեր կալաք» գարձրել են «կռվէ գլխահարկն վեր կալանք վանքի»— որով ստացվել է, թե վանքի հարկերն են բարձել, որը նույնպես սխալ է։

Հրատարակիչները միանգամայն վերացրել են բարբառային ձևերն ու լեզվական շեղումները, որոնք շատ հետաքրքիր են. այս գլխավոր շտկումներից հետո արձանագրությունը ստանում է արժեքավոր բովանդակություն, ըստ որի՝ հարկերի խիստ ծանրացման հետևանքով Օձուն գյուղի բնակիչները հրաժարվել են անասուններ պահելուց և այդ տնտեսական անհնազանդությունը ստիպել է իշխանությանը, որպեսզի ձեռնավորի միջոցով վերացնի եղներից ու կովերից գանձվող հարկերը։

Երկրորդ արձանագրությունը գրված է նույն տաճարի ներսում, խորանի պատի վրա 6 տողով և մեծարվեստ գրչությամբ. թեթև վնասվածքներ ունի միայն կենտրոնական մասում, որոնք լրիվ վերծանվում են, միայն չորրորդ տողում Շահուզեն բառից հետո երկու պարզ գրված փակագրեր կան, որոնք դժվարանում ենք բացել և կապակցել։

ԿԱՄԱԻՆ Ա3 ԵՍ ՍՄԲԱՏ, ՅԱՌԱ ՄԵՅԻՆ ԻՎԱՆԷԻ ԵԻ ՄԽԱՐԳՐ-
ԶԷԼԻՆ, ՈՐԴԻ ՃՈՌԼԵՆՑ ՊՈՂՈՍՈ, ՈՐ ԱՐԺԱՆԻ ԵԼԱ ՈՒՋ-



ՆԱ ՁԵՌՆԱՎՈՐՈՒԹԵԱՆ, ՊԱՐՈՆԱՅՆ ԱՐՒՎԱՇԱՁՈՒԹԵԱՆ Հ-
ԱՄԱՐ ՁՁ(Ե)ՈՆ(Ա)ՎՈՐԱՀԱԿԻ ԳԻՆԻՆ ԱՆՇԱՀՈՒՁԵՆ... ՎԵՐ
ԿԱՑԱ. ՈՎ ԼԱՓԱՆԵ ՆՁՈՎԱԾ Է ՅԱՅ ԵԻ :ՅԺԸ: (318)
ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ԵԻ (ՅՈՒԴ)ԱԻ ՄԱՍՆԱԿԻՑ Է:

Ոչ միայն գեղագիր, այլև գրագետ ու պարզ[40] ոճով գրված այս արձանագրությունը այն աստիճան աղավաղված է Ջալալյանցի և Կոստանյանցի[41] մոտ, որ անհնար է համեմատություններ կատարել. այդ պատճառով էլ ոչ մի ուսումնասիրող այն չի օգտագործել: Մինչդեռ այս ձեռնավորի իրավունքը և իր ստացած հարկի ճշգրիտ նշումը կարևոր լրացումներ են այդ պաշտոնի էությունը բացահայտելու համար:

Նախ՝ Սմբատ ձեռնավորը առանց նշելու իր տիրոջ կարգադրության մասին հայտնում է, որ հարկ է զեղչել, թեև այն իրեն պատկանող հարկ է, բայց այնուամենայնիվ նա ինքնագլուխ է այդ բանը կատարում: Երկրորդ, ինչպես բոլոր ստորին պաշտոնյանները, այնպես էլ ձեռնավորները միջնադարում ապրում էին ժողովրդի հաշվին. ձեռնավորները որպես հարկահավաք պաշտոնյաներ՝ իրենց հաշվին խիստ չարաշահություններ էին կատարում, բայց այս դեպքում պարզ երևում է՝ որ նրանց վճարվող մասը կայուն բնույթ է ունեցել և անվանվել է ձեռնավորահարկ. երրորդ, այս դեպքում պարզ նշված է, որ այդ հարկին էր ենթարկվում նաև գինին, Սմբատը թողել է ձեռնավորին, այս դեպքում հենց քրեն, վճարվելիք գինիի ձեռնավորահարկը:

---

40 «Ճանապարհորդություն», մասն Ա, էջ 91:

41 «Վիմական տարեգիր», էջ 250:

ՄԻՋՆԱԴԱՐԱՆ ՍԻՐՈ ԵՐԳԵՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՆԴՐԱՆԻԿ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՎ ՀԱՅՐԵՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

1963 թվականի վերջերին Մաշտոցի անվան Մատենադարանը հարստացավ ձեռագրերի նոր խմբով, որը ժամանակին պատկանելիս է եղել հայագետ Գր. Խալաթյանին: Այդ ձեռագրերի շարքումն է մի ընտիր տաղարան, որը Մատենադարանում ստացավ 10208 համարը: Որքան հայտնի է մեզ, այդ տաղարանի մասին ցարդ մասնագիտական խոսք չի ասվել: Գոյություն ունի սոսկ նրա նկարագրությունը՝ կատարված Մեսրոպ Մաշիստրոսի կողմից, որն անտիպ է տակավին:

Առհասարակ այդ ժողովածուն մեծ արժեք ունի մեր միջնադարյան քնարերգության համար, որովհետև բովանդակում է հարուստ նյութ, ինչպես նաև ղգալի թվով անտիպ էջեր: Վերջիններիցս ուշագրավ է, օրինակ Գրիգորիս Աղթամարցու չափածո ընդարձակ տոնացույցը (թերթ 205ա-211ա), որն ունի այսպիսի խորագիր.

Տօնացոյց բոլոր տարոյն,
Անախալ ուղիղ է իմաստնոյն,
Եթէ գիտակ է արուեստոյն.
Համառօտեալ է ներքագոյն:

Նրա սկզբնատողերն են.

Նախ յայտնութեան է տօն կարգած,
Մկրտութեան և աւետեաց...

Հեղինակի անունը պահպանված է վերջին տողերում.

Ես՝ Գրիգորիս Աղթամարցի,
Ծառա ծառայից Յիսուսի,
Ըզսոսկ տօներս ի շարն եդի՝
Մըտաւորացն ախորժելի։
Բանըս հաճո թէ ձեզ թըւի,
Նա ինձ ասեք տէր ողորմի,
Եւ ձեր տացի մասըն բարի,
Յամենազօր տեառէն ձըրի։

Այստեղ է, որ երևան է գալիս, ցարդ լոկ մի գողտրիկ երգով («Ծով աչք..») հայտնի Ղազար Սեբաստացու մի նոր երգը (թերթ 156 բ) նշված երգի հետ միասին, հետևյալ խորագրով. «Նորին Ղազարու վասն սիրո ասացեալ»։ Սկզբնատողերն են.

Ուներ ունիս զալմով քաշած,
Բերան ունիս շէքրով լցած...

Հեղինակի անունը պահպանված է նաև վերջին տան մեջ.

Ղազարըն խև դարձեր սիրուտ...

Մի նորահայտ երգ էլ կա Հովհաննես Թլկուրանցու երգերի շարքում։ «Նորին Յովանիս է տաղս» խորագրով (թերթ 145բ-146ա)։ Վերջին տան մեջ ևս հիշվում է հեղինակի անունը.

Եև Յովաննէս անպէտ հոգիս...

Երգն ունի ակրոստիքոս, որը սակայն հեղինակի անունը մի քիչ այլ ձևով է տալիս—«Այվանէսի» փոխանակ՝ «Յովաննէսի»։ Հակատուքյան մեջ են սկզբի երկուական տառերը («Այ» - «Յո»)։ Ակրոստիքոսում տառատեսակ չի կարող ենթադրվել, որովհետև բնագիրը միանգամայն հստակ է.

Այսօր տեսա պատկեր մ'աղվոր,
Կրակ ելից ու ղիս այրեց.
Կամար ուներ և համաւոր
Գաղտ նայելով զհոգիս հանեց։

Յորժամ տեսա զինքն ի կանգնած,
Զէտ լուսընկա էր բոլորած,
Աչերն էր զէտ կանթեղ վառած,
Եղա ես խև, խելքըս գնաց...

Դժվար է ասել՝ այս «Այվանես» - «Յովանէս»-ը Հովհ.Թլկուրանցի՞ն է՝ կոչված նաև «Այվանես» ձևով, թե բոլորովին մի ուրիշ երգիչ՝ շփոթված Հովհ. Թլկուրանցու հետ: Այդ տաղի այլ օրինակ կամ այլ փաստ նրա մասին մեզ հայտնի չէ: Կան նաև ուրիշ անտիպ տաղեր:

№ 10208 տաղարանը առավել հետաքրքրական է իր բովանդակած մի քանի ժողովրդական խաղիկներով ու երգերով, որոնց մասին տպագրության ենք հանձնել առանձին հոդված, այստեղ ասենք միայն, որ սույն ժողովածուի շնորհիվ ունենում ենք ժողովրդական խաղիկների մեզ հայտնի հնագույն շարքը: Այն սերտ աղերս ունի 19—20-րդ դարերում գրի առնված մի շարք խաղիկների հետ և մեծ նշանակություն ունի հայկական ժողովրդական խաղիկների հետազոտության տեսակետից:

Այս կարգի այլ նորույթներից բացի № 10208 ձեռագիրը բացառիկ արժեք ունի հատկապես իր 118—183-րդ թերթերի ընդգրկումով: Այս ամբողջությունը որոշ փոփոխություններով, իրենից ներկայացնում է առաջին անգամ հայտնի դարձող սիրո երգերի անդրանիկ ժողովածուի ընդօրինակությունը: Ինքը՝ հայերեն սիրո երգերի միջնադարյան անդրանիկ ժողովածուն ոչ միայն ցարդ երևան չի եկել, այլև առհասարակ նրա երբեմնի գոյության մասին մինչև օրս ոչինչ հայտնի չի եղել: Եվ այստեղ, № 10208 ձեռագրումն է, որ առաջին անգամ հանդիպում ենք նրա համարյա ամբողջապես արտագրված օրինակին:

Սույն հայտնության արժեքը, սակայն, միայն այսքանով չի սպառվում: Պարզվում է, որ նրա հղացողն ու ստեղծողը եղել է մեր միջնադարյան քնարերգության իր ժամանակի լավագույն գիտակներից և նրա զարգացման խնդրով մտահոգված գրականագետներից մեկը: Նա քաջ գիտակցել է և՛ նման գործի անհրաժեշտությունը, և՛ նրա առջև կանգնած դժվարությունները: Ոստի նա մի կողմից հատուկ եղանակով հավաքել, դասդասել, խմբավորել է համապատասխան երգերի մի ստվար քանակ, իսկ մյուս կողմից տեսականորեն հիմնավորել է նրա անհրաժեշտությունը, մշակելով որոշակի սկզբունքներ:

Այդ ժողովածուի մեջ, որպես երրորդ ու վերջին երգախումբ, զետեղված են եղել հայրենների շուրջ երեք տասնյակ ընտիր շարքեր, որոնցից 22-ը պահպանված է, իսկ մնացածը կորել է՝ ձեռագրից թերթեր ընկած լինելու պատճառով։ Հայրենների այս խումբը միջնադարյան ձեռագրերում հանդիպող ամենամեծ խումբն է, բազմակողմանիորեն օգտակար հայրենների հետազոտության տեսակետից։ Այստեղ առավել կարևորը՝ ժողովածուն կազմող միջնադարյան անանուն գրականագետի հաղորդած տեղեկություններն ու գիտակցական վերաբերմունքն է՝ հայրենների ժառանգության մասին։ Դրանք զարմանալիորեն համընկնում են հայրենների մեծագույն մասնագետ Մ. Աբեղյանի հայացքներին և գալիս վերջնականորեն լուծելու նրանց հետ կապված հիմնական հարցերը։

Մեր նպատակն է սույն հոդվածում կանգ առնել ահա № 10208 ձեռագրի շնորհիվ փրկված սիրո անդրանիկ տաղարանի հետ կապված վերոհիշյալ խնդիրների վրա։

Նախ՝ սիրո անդրանիկ տաղարանի երբեմնի գոյության և ներկա ընդօրինակության մասին։ Այս հարցերի վերաբերյալ հատուկ պատկերացում կազմելու նպատակով ծանոթանանք № 10208 ձեռագրի ընդհանուր կառուցվածքին։

Ժողովածուն հիշատակարան չունի. հավանաբար ունեցել է, բայց չի պահպանվել, որովհետև սկզբից և մանավանդ միջին մասերից ու վերջից թերթեր են պակասում։ Ուստի չունենք հիշատակություն ո՛չ գրչի, ո՛չ գրչության վայրի, ո՛չ ժամանակի և ո՛չ էլ գրչության այլ կարևոր պարագաների վերաբերյալ։ Հնագրական և ընդգրագիտական տվյալների համաձայն այդ ժողովածուն ընդօրինակվել է 17-րդ դարի վերջին տասնամյակներում։ Գրիչն իր առջև որպես նախագաղափար ունեցել է կամ նման մի ժողովածու, կամ էլ տարբեր աղբյուրներ, որոնցից և ընդօրինակել է սույն հատորը։

Գրչագրական առումով № 10208 ժողովածուն բաղկացած է երկու տարբեր մասերից. ա) թերթ 1—218, բ) թերթ 219—236։ Առաջին մասը բուն ժողովածուն է, իսկ երկրորդ մասը՝ մի այլ ձեռագրի մնացորդ, թերևս նույն գրչից և նույն ժամանակներից։ Նրանց մի ամբողջության օրգանական մասեր չլինելը երևում է հետևյալ փաստերից։ Առաջին մասը պրակավորված է ([Ա.]—ԻԱ), իսկ երկրորդ մասը՝ ոչ։ Առաջին մասի բոլոր բնագրերը համարակալված են ըստ ընդհանուր հաջորդականության (Ա—ՃԽԱ), իսկ երկրորդ մասում առկա է այլ համարակալում։ Այդ մասերը մի-

մյանցից տարբերվում են նաև էջերի կայուն տողաքանակներով և մասամբ էլ գրչությամբ ու այլ պարագաներով։

Քանի որ մեզ հետաքրքրող բաժինը (թերթը 118—183) գրտնըվում է ձեռագրի առաջին մասում, ուստի երկրորդի մասին այլևս ասելիք չունենք։

Բնագրագիտական առումով ձեռագրի առաջին մասը իր հերթին կարող է տրոհվել երեք բաժնի. ա) թերթ՝ 1—118, բ) թերթ՝ 118—183, գ) թերթ՝ 183—218։ Նման բաժանման գլխավոր հիմքը հենց մեզ հետաքրքրող միջին մասն է (թերթ 118—183), այսինքն, սիրո երգերի առաջին տաղարանի ընդօրինակությունը։ Ահա թե ինչու։ Ինչպես արդեն նշվեց ամբողջ ձեռագրի լոկ այս բաժինն է, որ կազմված է հատուկ նպատակով, նյութերի որոշակի խմբավորմամբ և նրբանկատ հաջորդականությամբ։ Ավելին, կազմողն այդ ամբողջին սկզբից կցել է մի առաջաբան՝ «Նախադրութիւնք մարմնաւոր երգոց» խորագրով։ Այստեղ նա բացատրում է իր նկատառումները, սկզբունքները և բնութագրում նյութերի իր կատարած խմբավորումը։ Նշելով՝ «Կարգ եդաք երրորդաբար», ըստ որի էլ երեք խմբով է ներկայացված ողջ նյութը։ Դիտակցված և հետևողականորեն կիրառված այդ սկզբունքը որոշակի դրսևորում է գտել նաև նշված երեք խմբերի սահմանագծերում։ Այսպես, օրինակ, առաջին խմբի մասին հենց սկզբից ասված է. «Հանդերձ աստուծով սկսցուք առաջներորդ հատորն։ Օգնեա՛, սուրբ հոգի աստուած» (թերթ 119 բ)։ Այդ բաժնի նյութերի վերջում համապատասխանաբար գրված է. «Կատարեցաւ գլուխ առաջ[ն]երորդ» (թերթ 143ա)։ Ապա գալիս է «Գլուխ երկրորդ» խորագիրը (թերթ 143 բ), նյութերի վերջում ունենալով «կատարեցաւ կարգ երկրորդ» նշումը (թերթ 163ա)։ Հենց այս նշումի շարունակությունն էլ կազմում է հաջորդ խմբի խորագիրը. «Կարգ երրորդ՝ հանդերձ նուագարանօք» (թերթ 162ա)։ Անշուշտ, այս խմբի նյութերի վերջում ևս պիտի հանդիպեինք համապատասխան նշումի, եթե վերջից պոկված չլիներ 13 թերթ։

Մենք դեռ ստորև էլ կանդրադառնանք № 10208 ձեռագրի այս բաժնի (թերթ 118—183) միանդամայն ուրույն կերպարանքն ու առանձին մխավոր լինելը, ուստի կարող ենք առայժմ այսքանն էլ բավարար համարել։

Արդ, ինչպիսի՞ն են այս առումով ձեռագրի մյուս մասերը (թերթ՝ 1—118, 183—218)։

Այստեղ, թե մեկում և թե մյուսում, նյութերի խմբավորման

ոչ հետք կա և ոչ էլ գաղափար։ Դրանք սովորական ընդօրինակության արդյունք են, ուր միախառնված են ոչ միայն «հոգևոր» և «մարմնավոր» երգերը, այլև տոմարական, տեղերագիտական, ժամանակագրական զանազան արձակ շարադրանքներ։ Պարզ է, որ եթե 118—183-րդ թերթերում առկա խորապես գիտակցված և հետևողականորեն կիրառված սկզբունքները պատկանեին № 10208 ձեռագրի գրչին կամ նրա նախորդին, ապա պիտի ողջ նյութը համապատասխաններ նշված սկզբունքներին։ Մինչդեռ իրականում նման բան չկա. իրենց ձեռագրագիտական սկզբունքներով այդ երեք մասերը անհամատեղելի հակասության մեջ են միմյանց հետ, ուստի և տարբեր պարագաների արդյունք։

Կարող է առաջանալ հարց. արդյոք № 10208 ձեռագրի գրիչը (կամ նրա նախորդը) սկզբնապես չի՞ սկսել մի խառն ժողովածու և հասնելով 118-րդ էջին՝ մտածել խմբավորման մասին։ Նման ենթադրության համար էլ ոչ մի հիմք չկա, որովհետև այդ խմբավորված բաժնին նորից հաջորդում է նյութերի խառնիխուռն ընդօրինակություն։ Այն հեղինակը, որը զարմանալի բծախնդրությամբ և խորհրդավորությամբ ստեղծել է 118—183-րդ էջերն ընդգրկող կուռ ամբողջությունը, նման խախտում, եթե դրանից հետո, նույն հատորում թույլ չէր տա։

Կան նաև այլ փաստեր, որոնք թվարկվածների հետ միասին անառարկելիորեն համոզում են, որ № 10208 ձեռագրի 118—183-րդ թերթերը գալիս են այդ ժողովածուն ստեղծելուց առաջ գոյություն ունեցող մի ինքնատիպ տաղարանից։ Վերջինս ստեղծված է եղել հատուկ ծրագրով և իրենից ներկայացրել է սիրո երգերի մի առանձին ու ամբողջական տաղարան։

Նորից հարց. արդյոք, № 10208 ձեռագրի գրիչն օգտվել է անմիջապես ա՞յդ բնագրից, թե նրանից կատարված որևէ ընդօրինակությունից։ Որոշ հանգամանքներ խոսում են նրա՝ միջնորդաբար օգտված լինելու մասին։ Մի բան նկատելի է, սակայն, որ № 10208 ձեռագրի գրիչը չի նկատել քննվող երգախմբի և նրա նախադրության ամբողջականության և ուրույն միավոր լինելու իրողությունը, ուստի այդ ժողովածուն արտագրել է մի սովորական աղոթք-ոտանավորի անմիջական շարունակությունից, սկսելով 118ա թերթի կեսից։ Նկատելու դեպքում նա առնվազն այդ երեսը բաց կթողներ, եթե ոչ ամբողջ թերթը, և այդ ինքնատիպ ժողովածուն կսկսեր նոր թերթից, անջատման պատշաճ նշանով։

Մյուս կողմից էլ 118—183-րդ թերթերում ամփոփված ամ-

բողոքությունն է խոսում իր երբեմնի ինքնուրույն գոյության մասին: Մենք արդեն հիշեցինք և՛ նրա նախադրության, և՛ եռահատոր կազմության փաստերը, որոնք խոսում են այդ մասին: Նշենք ևս մի փաստ, որով խնդիրն ավելի քան պարզ կդառնա: Այդ ինքնատիպ տաղարան կազմողն առաջաբանում բացատրելով իր նպատակը՝ սիրո երգերի հատուկ ժողովածուն ստեղծելու վերաբերյալ, գրում է. «Ես զայս սակաւս ի մի տուի հաւաքեալ, եդաք ի ղբոսնութիւն մտաց երբեմն ի սոյնս հակելոց»: Այսինքն, նա իր ծրագրած նյութերը փնջել է առանձին և ներկայացրել որպես մի ամբողջություն՝ «ի մի տուի հաւաքեալ»: Դա համապատասխանում է միայն ու միայն № 10208 ձեռագրի 118—183-րդ թերթերին, անառարկելի դարձնելով նրանց նախօրյակի երբեմնի ինքնուրույն գոյությունը: Ուստի և փաստ է, որ եղել է հայերեն սիրո երգերի հատուկ տաղարան:

Այժմ ծանոթանանք սիրո առաջին տաղարանը կազմողի հայացքներին և սկզբունքներին:

Այս հարցերի վերաբերյալ որոշակի տվյալներ կան և՛ տաղարանի նախադրության մեջ, և՛ երգերի խմբավորման արդյունքում:

Ինչպես հայտնի է, միջնադարյան տաղարաններ շատ կան. նրանց հնագույն նմուշները բովանդակում են հոգևոր երգեր: Հետագայում այդպիսի ժողովածուներում աստիճանաբար տեղ են գտնում նաև աշխարհիկ երգեր, հիմք դառնալով այնպիսի տաղարանների երևան գալուն, որոնք սովորաբար կոչվում են Տաղարան հոգոյ և մարմնոյ: Մեզ ցարդ հայտնի բոլոր փոքրիշատե ուշագրավ տաղարաններն այդպիսիք են՝ նյութերի տարբեր խաչաձևումներով: Բայց այնպիսի տաղարան, որը գիտակցական նպատակադրությամբ ձգտեր ամփոփել լոկ աշխարհիկ և այն էլ միայն սիրո երգեր՝ հատուկ խմբավորմամբ, երևան է գալիս առաջին անգամ: Այստեղ մենք առանձնապես ընդգծում ենք գիտակցված նպատակադրության պարագան, որովհետև այդ եղանակով ստեղծված արժեքը պատմական իրադարձությունների օրինաչափ երևույթ է և ոչ թե պատահականության արդյունք: Այնուհետև, ուշագրավ է այն իրողությունը, որ այդ ժողովածուն ստեղծողը ոչ թե բանաստեղծ է և իր սեփական սիրո երգերն է համախմբում, այլ մի դրաբկանագետ-բանասեր, որը մտահղացած է եղած համաշգային արժեքներից նման ժողովածու կազմելու հարցով: Դա նույնպես խոսում է

երևույթի պատմականորեն օրինաչափ մտահղացման (ծնունդի) մասին։

Երբ Կոստ. Երզնկացուց պահանջում էին նաև սիրո երգեր՝ ի թիվս հոգևոր և այլաբանական տաղերի, դա իր ժամանակին խոշոր երևույթ էր։ Բայց երբ արդեն պահանջ է զգացվել ոչ թե այս կամ այն երգչից ունենալ սիրո տաղարան, այլ բոլոր երգիչների լավագույն գործերից, դա արդեն բոլորովին նոր ու զարգացման ավելի բարձր աստիճան է ենթադրում։ Հասարակական այդ մեծ պահանջի բավարարման նախակարապետն է ահա մեզ հետաքրքրող սիրո տաղարանի անանուն հեղինակը։

Չպիտի կարծել, թե դա մի հեշտ գործ էր, որը պահանջում էր միայն աշխատասիրություն։ Դա մի ծանր ու դժվար իրականացնելի նախաձեռնություն էր, որովհետև խոսքը վերաբերում էր քրիստոնյա միջնադարին։ Հենց այդ դժվարությունը հաղթահարելու առջև է կանգնած եղել նաև քննվող ժողովածուն ստեղծողը։ Նա իր նախադրության մեջ ակզբում խոսում է առհասարակ սիրո երգերի տարածման անմխիթար վիճակի մասին։ Նման շատ երգեր ունենք, ասում է նա, բայց որովհետև դրանք հոգևոր առումով օգտակար չեն, մատնվում են մոռացության։ Ինքը, սակայն, չի արդարևցնում նման վիճակը, վկայակոչելով մահմեդական երգիչներին, որոնք սիրո երգերի գողտրիկ հատորներ են կազմում։ Ուստի անհրաժեշտ է համարում հայկական հին ու հարուստ երգերից ստեղծել մի հատուկ ժողովածու՝ ցանկացողների համար։

Ինչպես տեսնում ենք, հենց սկզբից նա նուրբ ակնարկով հիշում է խնդրի հոգևոր կողմը. «Բազում և աղքի-աղքի գոն ասացուածք երգողաց յայսպիսումս (իմա՝ սիրո երգեր— Ա. Մ.), սակայն վասն անաւգուտ լինելոյ ի հոգևկանս, եղեն անգտանելի...»։ Այս բացատրությունը և մահմեդական (արաբ, պարսիկ, թուրք) երգիչների օրինակը (որոնք «չինեալ են գիրք... որակ-որակ օրինակս բերեալ զսէր»), բնականաբար, քիչ կլիներ սկսված նախաձեռնությունը ապահովելու համար։ Ուստի նա փորձում է ավելի մոտիկից շոշափել հարցի հոգևոր պարագան։ Ճի՛շտ է (մտածել է տալիս նա), Պողոս առաքյալն ասել է. «Շնացողք, ո՛չ գիտէք, զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ աստուած», բայց սեր երգող հայ հեղինակները երբեք էլ չեն մոռացել երկնային տիրոջը։ «Զի թէպէտ երգեցին, այլ ոչ յոտահատեցան ի սիրոյն աստուծոյ և ի խորհելոյ զվերինն»։ Եվ որպես ապացույց նա վկայակոչում է Հովհ. Թլկուրանցու, Մարտիրոս Ղարահիսարցու և ուրիշների

սիրո երգերի այն վերջին տողերը, ուր նրանք ղղջական խոսք են ասում հիշելով հոգու և մարմնի, այս և հանդերձյալ աշխարհների միջնադարյան պատկերացումները.

Սէր աշխարհիս՝ սուր երկսայրի,
Հոգիս նուաւ վիրաւորի...
Վախեմ, թէ հուրն այրիս զհոգիդ,
Անշէջ ուտեն անքուն որդունք...

Նա իր խոսքի ուժն ավելի ազդեցիկ ու համոզիչ դարձնելու նպատակով հիշում է սիրո երգերի վաղուց մեռած երգիչներին, ընդգծում նրանց այդ ղղջական բացակայությունները և նրանց ստեղծագործությունները համարում անձեռակերտ մահարձաններ, որոնց շնորհիվ հաջորդ սերունդները պիտի փրկություն հայցեն նրանց հոգիների համար, և ասված պիտի ների նրանց: Ահա այդ հատվածը.. «...երգողք բարբառեցան ի զբօսնութիւն սրտից իւրեանց, բայց յաւարտ բանից ունին զբաւս ղղջման: Եւ ահա տեսանեմք, զի ահա մեռեալ են, ոչ են և ոչ ևս երևի տեղի նոցա: Բայց յիշատակաւ, զոր ցուցեալ են ըստգտանօք, որպես թէ գերեզմանք շինեալ են իւրեանց. և կարդամք զնոսա ի հողս իւրեանց, որ զներումն խնդրեալ են աստուծոյ և ի ընթերցողաց, որոց և ներեսցէ աստուածն ամենակալ...»:

Այսպիսով, նա միաժամանակ սիրո երգիչների հիշատակի հանդեպ պարտավորություն է հարկադրում իր ժամանակակիցներին, որպեսզի դրանով ևս արդարացնի իր կազմած ժողովածուի օրինականությունը:

Անշուշտ, նա իր ժամանակի հավատացյալներից է և նրա մտորումները դուրս չեն գալիս դարի մթնոլորտից, սակայն, նա արդեն նոր ժամանակների այն ներկայացուցիչն է, որը գիտակցորեն հիմնավորում է սիրո երգերի և աշխարհիկ մտածողության իրավունքների օրինականությունը:

Սիրո առաջին տաղարան կազմողը, իր այդ բացատրություններին զուգահեռ, մի ուրիշ, նույնքան բնական ու օգտակար միջոցի էլ է դիմել: Խոսքը վերաբերում է նրա հավաքած երգերի խմբավորման և ներկայացման եղանակին: Նա առաջին փնջի մեջ զետեղում է այնպիսի երգեր, որոնք արտաքնապես սիրո երգի տեսք ունենալով, ըստ էության, ընդհանուր բնույթ ունեն և կարող են ընկալվել բոլոր մարդկանց, սրբերի աստծու և Քրիստոսի հմայանով: Երկրորդ խմբում զետեղվում են այն բանաստեղծների սիրո երգերը,

որոնք նկատի ունեն միմիայն կին էակին, բայց վերջին տողերում ունեն ղղման արտահայտություններ։ Այսպիսով կատարված է մի բնական և խաղաղ անցում հոգևորից դեպի աշխարհիկը։ Այնուհետև դալիս է երգերի երրորդ խումբը, որն ամեն ինչով աշխարհիկ է և անհամատեղելի հոգևոր ըմբռնումների հետ։ Դրանք հայրեններն են։ Ինքը, ժողովածուն կազմողն այսպես է բնութագրում այդ խմբերը. «Առաջինն գովասանաբար առ ոմն բաղձալիս՝ Զաքարիայի և Գրիգորի Աղթամարցոյ և Խաչատրո Կեչառեցոյ։ Երկրորդն Յովանէս Թուլկուրանցոյ և այլոց՝ մի-մի և երկու-երկու (Բ. Բ.)՝ ատողաց յայտնի անուամբ։ Երրորդն անյայտ անուամբ ասացողքն աշխարհօրէն բառուք և՛ անյարմարականք, և՛ յարմարականք, որոնց ոմանք ասացուածոցս անտօնի ասեն»։

Հիրավի, որքան նուրբ դասակարգում. Խաչատուր Կեչառեցի—Հովհաննես Թլկուրանցի—Հայրեններ։ Աշխարհիկ երգերի երեք խումբ, երեք որակ։ Եվ այս օրինականացված շղթայի մեջ առաջին անգամ դիտականորեն փաստարկվում ու հիմնավորվում է հայրեննների պատմական իրավունքը։ Կազմողը դրանով միաժամանակ հարգանք է տածում և պարտավորեցնում նրանց հեղինակներին-դպրաններին հիշատակի առջև. երգիչներ, որոնց հասցեին միջնադարում հալածանքի խոսքեր էին արձանագրվում։

Ինչպես երևում է, տաղարան կազմողը՝ սիրո երգերը բնութագրելիս, նկատի է առել մի ուրիշ հատկանիշ ևս. տվյալ հեղինակի երգերում գովերգված հավաքական կերպարների կամ քնարական հերոսների քանակը։ Դա ևս ուշագրավ երևույթ է, որովհետև գրականագիտական միտքն արդեն տեսականորեն է շոշափում հավաքական կերպարի հարցը, թեկուզ և խիստ համառոտակի։ Այս առումով ուշագրավ են հետևյալ փաստերը։ Զաք. Գնունյանցից, Գր. Աղթամարցուց, Խաչ. Կեչառեցուց և նմաններից ընտրված երգերը նրա կողմից դիտված են որպես «առ ոմն բաղձալիս» ուղղված գովքեր։ Այդ «ոմն»-էական արդեն հավաքականի իմաստն ունի, որովհետև փաստորեն այդ երգերում անորոշաբար ոչ թե մեկ, այլ շատ բաղձալիներ են գովերգված։ Նրանք բոլորը բնութագրված են «ոմն բաղձալի» դարձվածքով, որով և նրանք դիտված են որպես մի կերպար։ Նույնը պիտի ասել նաև «տաճիկ» երգիչների երգերին տրված բնութագրությանը, ըստ որի դրանք չնայած շարադրված են «ցեղ-ցեղ կերպիւ և պէս-պէս դիմօք», բայց «միանգամայն ի վերայ միոյ մարդոյ գոն»։ Այստեղ այդ մեկ մարդը քնարերգության մեկ հերոսն է-սիրուհին է։ Դարձյալ հավաքական

կերպար: Նույն իմաստով է գործածված նաև «մի-մի և երկու-երկու» դարձվածքը՝ Հովհ. Թլկուրանցու և այլոց երգերի կապակցությամբ, ուր մեր հեղինակը նկատել է քնարական՝ մի դեպքում մեկ, իսկ մյուս դեպքում երկու կերպար:

Ինչպես տեսնում ենք, ի դեմս սիրո երգերի առաջին ժողովածուն կազմողի, ունեցել ենք միջնադարյան մի մտածող ևս, որը ժամանակի գրականագիտական մտքի ու գրականության աշխարհիկ գաղափարների առաջամարտիկներից մեկն է հանդիսացել:

Այժմ, երբ փոքր-ինչ պարզաբանված են տաղարանի և նրա կազմողի հետ կապված հիմնական հարցերը, անհրաժեշտ է դառնում ասել մի քանի խոսք նրանց ժամանակի մասին: Որ այդ ժամանակը պիտի ընկած լինի 17-րդ դարի վերջին քառորդից առաջ, դա անվիճելի է, որովհետև № 10208 ձեռագիրն ընդօրինակված է այդ ժամանակամիջոցում: Միաժամանակ չի կարելի մտածել, թե այն կարող է ավելի հեռուներում որոնվել, քանի որ ընտրված հեղինակների մի մասը (Գր. Աղթամարցի, Զաք. Գնունյանց և այլք) 16-րդ դարի ստեղծագործողներ են: Ուստի մնում է ենթադրել, թե սիրո երգերի առաջին ժողովածուն ստեղծվել է կամ 16-րդ դարի վերջին, կամ 17-րդ դարի առաջին կեսերին: Այս առումով տեղին է հիշել 16-րդ դարի բանաստեղծ Հովսեփ Սեբաստացուն, որը քննվող տաղարանը ստեղծողից մի քիչ առաջ նույնպես մտածում էր վաղեմի ժամանակների սիրո երգերին նոր կյանք տալու մասին. գրելով.

Յայն առաջին ժամանակին
Սիրո բաներ շատ լինեին...

Ահա այդ պահանջն էր, որ աստիճանաբար ուժեղանալով, հասունացրեց նաև սիրո երգերի առաջին ժողովածուն ստեղծելու հարցը:

Մենք վերևում քաղվածաբար օգտագործեցինք այդ տաղարանի նախադրություններ: Այստեղ, նախքան հաջորդ հարցին, այն է, հայրենների քննությանն անցնելը, հարկ ենք համարում ամբողջությամբ ընդօրինակել այդ մեծարժեք վավերագիրը, մանավանդ որ այն առհասարակ օգտակար պիտի լինի միջնադարյան հայ գրականության մասնագետներին, իսկ մեզ համար ամուր հիմք է հանդիսանալու նաև հաջորդ հարցադրումները ներկայացնելիս:

Բազում և ազգի-ազգի գոն ասացուածք երգողաց յայսպիսումս, սակայն, վասն անուգուստ լինելոյ ի հոգեկանս, եղեն անգտանելի, և այլ ոչ-ոք յայսպիսիս առատացաւ։ Բայց ի տաճիկս տեսանեմք ամէն մի շայիր՝ յոլով, քան զայս գիրքս՝ շինեալ են գիրք մի՝ ցեղ-ցեղ կերպիւ և պէս-պէս դիմօք, զանազան եղանակս, և որակ-որակ օրինակս բերեալ գաէր։ Եւ զոր ինչ ասացեալք են միանգամայն ի վերայ միոյ մարդոյ գոն և օրինակն ահա տեսանի երեսս և երկրի։ Բայց զարդարեն զբանս իւրեանց մտօք բազմօք ըստ վերոյասացելումն։

Եւ զայս սակաւս ի մի տուի հաւաքեալ, եդաք ի զբօսնուքիւն մտաց երբեմն ի սոյնս հակելոց, որոց զհոգեկանէն հանդիստ առնալ զնպրակացուքիւն պէս-պէս զղջականաւ ասացին. ումն թէ.

Հոգիս նուաւ վիրաւորի...[1]
Սէր աշխարհիս՝ սուր երկասյրի,

Եւ ումն.

Դարձիր ի մեղաց մոլար
Ի քենէ կուզեն պատասխան...[2]

Եւ ումն.

Դու աստ արա թապտիր քեզի,
Որ անոգ չլինիս ողորմ ու լալի...[3]

Են ումն.

Երբ որ մտանես ի հող գերեզմանն,
Ապա՛ աւաղիս, դառնաս փուշիմանն...[4]

Եւ ումն.

---

1 Այս տողերն առնված են Գր. Աղթամարցու մի տաղից, (տե՛ս նույն ձեռագրի 204ա թերթը)։

2 Այս տողերն առնված են Ջաք. Գնունյանցի մի տաղից, (տե՛ս նույն ձեռագրի 122բ թերթը)։

3 Այս տողերն առնված են Ջաք. Գնունյանցի մի տաղից, (տե՛ս նույն ձեռագրի 129բ թերթը)։

4 Այս տողերն առնված են Գր. Աղթամարցու մի տաղից (տե՛ս նույն ձեռագրի 140ա թերթը)։

Վախեմ, թէ հուրն այրեսս զհոգիդ,
Անշէջ ուտեն անքուն որդունք...[5]

Եւ ումն.

Զմարմինդ աղէկ կու նորոգես,
Զհոգիտ ի հուրն կու այրես...[6] *և այլն։*

Զի թէպէտ երգեցին, այլ ոչ յուսահատեցան ի սիրոյն աստուծոյ և ի խորհելո զվերինն, ուր Քրիստոս նստի, զի նայ է ամենայնի տէր։ Քանզի և այլուր ասէ սուրբն Պօղոս, թէ. Լալով ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի, որոց որովայնք՝ իւրեանց աստուած են և փառք իւրեանց։ Եւ այլուր ասէ. Շնացողք, ո՛չ գիտէք, զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ աստուած։ Զայս և երգողք բարբառեցան ի զբօսանութիւն սրտից իւրեանց, բայց յաւարտ բանից ունին զբանս զղջման։ Եւ ահա տեսանեմք, զի ահա ձեռնալ են, ոչ են և ոչ ես երևի տեղի նոցա։ Բայց յիշատակաւ, զոր ցուցեալ են բատգտանօք, որպէս թէ գերեզմանք շինեալ են իւրեանց. և կարդամք զնոսա ի հողս իւրեանց, որ զներումն խնդրեալ են աստուծոյ և ի ընդհերցողաց, որոց և ներեսցէ աստուածն ամենակալ և մի՛ մերժեսցէ յողորմութենէ իւրմէ զնոսա և զմեզ՝ յուսացեալքս ի նա, ամէն։

Առ այս կարգ եղաք երրորդաբար.

Առաջինն գովասանաբար առ ումն բաղձալիս՝ Զաքարիայի և Գրիգորի Աղթամարցոյ և խաչատրո Կեչառեցոյ։

Երկրորդն Յովաննէս Թուլկուրանցոյ և այլոց՝ մի-մի և երկուերկու («Բ—Բ.»)՝ ասողաց յայտնի անուամբ։

Երրորդն անյայտ անուամբ ասացողքն աշխարհօրէն բառուք և՛ անյարմարականք, և՛ յարմարականք, որոց ումանք ասացուածոցս՝ ԱՆՏՕՆԻ ասեն։

Հանդերձ աստուծով սկսցուք առաջներորդ հատորն։ Օգնեա՛, սուրբ հոգի աստուած»։

Այժմ քննութեան առնենք հատկապես հայրենները, որոնք անխտիր ամբողջացված են սիրո տաղարանի երրորդ բաժնում։ Վերևում նկատեցինք, որ այդպիսի խմբավորման պատճառը այդ երգերի զուտ աշխարհիկ, ժողովրդական ոգին է։ Բայց չէ՞ որ աշ-

---

5 Այս տողերն առնված են Հովհ. Թլկուրանցու մի տաղից (տե՛ս նույն ձեռագրի 144ա թերթը)։

6 Այս տողերն առնված են Մարտ. Ղարահիսարցու մի տաղից (տե՛ս նույն ձեռագրի 153ա թերթը)։

խարհիկ երգեր են նաև այդ տաղարանի առաջին և հատկապես երկրորդ խմբի երգերը։ Կազմողը քաջ գիտենալով այդ պարագան, ավելի նրբերանգային բաժանում է կատարել, որով և իրենց աշխարհիկ ոգու ուժեղությամբ հայրեններն անջատվել են մյուս բոլոր միջնադարյան աշխարհիկ, այն էլ սիրո երգերից և կազմել առանձին փունջ։ Դա ինքնին մի ուշագրավ երևույթ է, որը արժանի է հատուկ քննության։

Արդ. ի՞նչ երգերից են այդպես տարբերակվել մեր հայրենները։ Կազմողն ինքն է թվարկում նրանց հեղինակների անունները՝ Խաչ. Կեչառեցի, Զաք. Գնունյանց, Գր. Աղթամարցի, Հովհ. Թլկուրանցի, ապա նաև Կոստանդին Երզնկացի, Հովասափ Սեբաստացի, Ղազար Սեբաստացի, Մարտիրոս Ղարահիսարցի և ուրիշներ։ Իսկ դրանք մեր միջնադարյան աշխարհիկ քնարերգության ամենափայլուն դեմքերից են։ Կնշանակի, դեռևս 16—17-րդ դարերում, գիտակցման դեպքում, հայրենները իսկույն անջատվել են հայտնի բանաստեղծների համապատասխան երգերից՝ որպես այլ որակի և այլ առանձնահատկությունների արդյունք։

Բարեբախտաբար, կազմողը ոչ թե սոսկ գործնականորեն է կատարել այդ խմբավորումը, այլև աշխատել է բացատրել իր, ուստի և իր ժամանակակիցների նկատառումները։ Դրանք ամփոփված են նրա հետևյալ տողերում «Երրորդն անյայտ անուամբ ասացողքն աշխարհօրէն բառուք և՛ անյարմարականք, և՛ յարմարականք, որոց ոմանք ասացուածոցս անտօնի ասեն»։ Պիտի ավելացնել նաև այդ երրորդ խմբի խորագիրը. «Կարգ երրորդ՝ հանդերձ նուագարանօք»։ Ըստ այդմ, հայրենները մեր միջնադարյան երգիչների ստեղծագործություններից տարբերվում են հետևյալ հատկանիշներով։

ա) Նրանք պատկանում են ոչ թե մի հեղինակի, այլ շատ հեղինակների։

բ) Այդ հեղինակների անուններն անհայտ են։

գ) Հայրենները շարադրված են «աշխարհօրէն բառուք և՛ անյարմարականք, և՛ յարմարականք»։

դ) Նրանք հայտնի են նաև անտունի անունով։

ե) Հայրենները երգվել են «հանդերձ նուագարանօք»։

զ) Հայրենները իրենց էությամբ տարբերվում են հայտնի բանաստեղծների ամենաաշխարհիկ երգերից անգամ։

Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ այս հակիրճ բնու-

Պատրաստելով մեջ հանձարյա ամբողջությամբ տված ենք գրեթե այն բոլոր հիմնական դրույթները, որոնք կազմեցին Մ. Աբեղյանի՝ հայրենների մասին մշակած խորաթափանց տեսության միջուկը։ Եվ եթե Մ. Աբեղյանն իր տեսությունը շարադրում է առանց միջնադարյան նման աղբյուրի, լոկ միջնադարյան գրականության հետազոտության օրինաչափություններից ելնելով, ապա այստեղ առկա է միջնադարյան մի հեղինակ, որը թերևս հենց Քուչակի ժամանակակիցներից է ու գրչակիցներից։ Դա նույնն է, թե հենց ինքը՝ Քուչակն է մեզ այցի եկել՝ պաշտպանելու Մ. Աբեղյանին՝ քմահաճ կամակորություններից։ Սակայն այն էլ ասենք, որ սիրո առաջին տաղարանի կազմողը ոչ թե մի սովորական բանաստեղծ կամ երդիչ է, այլ իր ժամանակի լավագույն գրականագետն ու բանասերը, որի վիճակությունները առավել խորն են եղել ու համակողմանի։

Փորձենք փոքր ինչ մոտիկից ծանոթանալ այս բացառիկ աղբյուրին։

Սիրո առաջին տաղարանի կազմողը հայերենների խմբի հեղինակների մասին ասում է. «անյայտ անուամբ ասացողքն»։ Այստեղ «ասացողք» բառի տակ նա հասկանում է բազմաթիվ հեղինակներ, որոնց անունները հայտնի չեն։ Նույնն է ասում նաև Մ. Աբեղյանը։ «Այս վերջինները (իմա հայրենները—Ա. Մ) ... ոչ թե մեկ հեղինակի, այլ բազմաթիվ բանաստեղծների, մասամբ և բանաստեղծուհիների գործեր» են[7]։

Այս հարցի կապակցությամբ պարզաբանման կարիք ունի «անյայտ անուամբ ասացողքն» արտահայտությունը՝ սիրո առաջին տաղարանի կազմողի մոտ և «բազմաթիվ բանաստեղծներին» (նաև բանաստեղծուհիների) դարձվածքը՝ Մ. Աբեղյանի խոսքի մեջ։ Նրանք երկուսն էլ ընդունում են, որ հայրենների հեղինակներն անհատ բանաստեղծներ են։ Սակայն նրանք երկուսն էլ միաժամանակ այդ ստեղծագործողներին տարբերում են մեր միջնադարյան բոլոր բանաստեղծներից։ Իրոք, սիրո առաջին տաղարան կազմողը՝ իր հավաքած սիրո տաղերը խմբավորելիս, առաջնորդվել է հենց այդ գիտակցությամբ։ Այլապես, եթե նրա նշանաբանը լիներ «յայտնի» և «անյայտ» հեղինակներ ըմբռնումը, ապա նա կստեղծեր միայն երկու խումբ և ոչ թե երեք, որոնցից առաջինն ու երկրորդը հայտնի հեղինակներ են, իսկ երրորդը՝ «անյայտ»։

---

[7] Մ. Աբեղյան, Դուռանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 5։

Բացի դրանից, նա հայտնի ու անհայտ հեղինակներով առաջնորդվելիս, առաջին և երկրորդ խմբերում չէր զետեղի նաև այնպիսի երգեր, որոնք զուրկ են հեղինակների անուններից, բայց որոշակիորեն արդյունք են ժամանակավրեպ իրենց ստեղծագործողների անուններից զրկված բանաստեղծների գործունեության։ Այդպիսիներից են, օրինակ, «Աղէկ պատկեր բոլոր և գեղեցիկ ես» (125բ—126ա) «Աւրհնեալ աստուած, զքեզ տեսաք» (127ա—128ա), «Ահա հոտըն կուգա գարնան» (130ա—131ա), «Հոգի, աչերուս ես լուս» (131ա—132բ), «Այբէն մինչի ի Քէն» (132բ—133ա) և այլն։ Ու չնայած դրանց հեղինակների անունները տվյալ դեպքում անհայտ են եղել, բայց դրանք առանձին անհատներ են եղել, որոնց կարող ենք ճանաչել։ Այսպես, «Ահա հոտըն կուգա գարնան» և «Հոգի՛, աչերուս ես լուս» երգերը, որ նույնիսկ ձեռագրում միաձուլված են որպես մի ամբողջություն՝ առանց անջատման նշանի (ուստի երկրորդը զուրկ է համարակալումից), պատկանում են Կոստանդին Երզնկացուն[8]։ Ուստի սիրո տաղարան կազմողի համար տարբերելի են եղել մի կողմից այս կարգի անանուն երգերը, որոնք նա զետեղել է հայտնի բանաստեղծների շարքը, իսկ մյուս կողմից՝ հայրեննները, որ նա անհայտ ասացողների գործեր համարելով, բոլորովին առանձին խմբով է ներկայացրել։ Նրա տված վերոհիշյալ բնութագրականները («անուանի», «հանդերձ նուագարանօք» և այլն) նույնպես հավաստում են այս իրողությունը։

Այդպիսի բնկալում կա նաև Մ. Աբեղյանի մոտ. նա, չնայած հայրեննները համարում է «բազմաթիվ բանաստեղծների» գործ, բայց նրա ողջ ուսումնասիրությունից պարզ երևում է, որ նա էլ այդ բանաստեղծներին տարբերում է անհատ, պրոֆեսիոնալ բանաստեղծներից։ Ուստի նա հայրեննները համարում է «առանձին տիպի գուսանական ժողովրդական երգեր»[9]։ Ըստ որում, նա, հիմնականում, դրանք դիտում է որպես գուսանների ստեղծագործություններ, որոնք հետո ժողովրդականացել են։ Տարբերելով գուսանական երգերը առանձին բանաստեղծների երգերից, Մ. Աբեղյանն այնքան է խորանում հարցի մեջ, որ հայրեննների շարքերի մեջ նկատել է տալիս նաև առանձին անհատների ստեղծագործության նմուշներ, դրանք տարբերելով իսկական հայրեններից։

---

8 Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Երևան, 1962, էջ 153—157, 158—162։
9 Նշվ. աշխ. էջ 5։

«Դրանք գուսանների ստեղծագործություն չեն»,— որոշակիորեն հայտարարում է նա և ավելացնում,— «Դրանց մի մասի հեղինակները հայտնի են և ապագայում գուցե ուրիշներինն ևս երևան գան»[10]: Միանգամայն պարզ է, որ Մ. Աբեղյանը հայրեննների հեղինակ բանաստեղծներին տարբերում է սովորական բանաստեղծներից, ուստի և նրանց ժառանգություններն էլ՝ միմյանցից: Հենց այդպիսին է նաև սիրո առաջին տաղարան կազմողի հայացքը: Միակ նկատելի տարբերությունն այն է, որ Մ. Աբեղյանն այդ բանաստեղծներին կոչում է գուսաններ, մատնացույց անելով ժողովրդական երգիչներին, մինչդեռ առաջին սիրո տաղարանի հեղինակը նրանց համարում է «անյայտ» ասացողներ: Ըստ էության, սակայն, նա ևս նկատի է ունեցել նույն երգիչներին: Դրա օժանդակ, բայց լավագույն ապացույցը՝ «նանդերձ նուագարանօք» արտահայտությունն է: Այս բնութագրական ծանոթությունը նա տալիս է միայն երրորդ խմբի երգերին (հայրեններին), չտալով ոչ առաջին և ոչ էլ երկրորդ խմբերին: Իսկ նվագարաններով հանդես էին գալիս ոչ թե Գր. Աղթամարցին կամ Խաչատուր Կեչառեցին, այլ հենց իրենք՝ գուսանները: Բացառված չէ, որ նշված բանաստեղծներն էլ նվագել իմանային և որոշ երգեր կատարեին «հանդերձ նուագարանօք», բայց դա չէր նրանց համար գլխավոր հատկանիշը:

Հայրեննների և նվագարանների առնչության մասին ևս հատուկ քննություն ունի Մ. Աբեղյանը, փաստարկված մեր մատենադիրների հարուստ վկայություններով: Նա նույնիսկ փորձել է որոշել գուսանների օգտագործած երաժշտական գործիքների տեսակները[11]:

Հայրեննների, որպես գուսանական ստեղծագործությունների մասին մեծարժեք մի այլ վկայություն էլ կա. այն պահպանված է այսպիսի խորագրով. «Հայրեննիք սիրոյ վերայ, ասացեալ ի աշրՙեներուն[12], որին հաջորդում է հայրեննների մի ընդարձակ շարք:

Ավելորդ կլիներ փաստարկել, թե ինչպես «աշուղներ» բառի տակ կարելի է հասկանալ գուսաններին կամ ընդհակառակը, նայած, թե խոսքը պատմական որ ժամանակաշրջանին է վերաբերում:

---

10 Նշվ. աշխ. էջ 13:

11 Մ. Աբեղյան, երկեր, Բ, Երևան, 1967, էջ 192—203:

12 «Անահիտ», Փարիզ, 1932, Դ տարի, № 1—2, էջ 31—39:

Այժմ՝ անտօնի կոչումի մասին, որով ևս բնութագրվել են հայրենները՝ միջնադարում, ինչպես վկայում է սիրո տաղարանի կազմողը։ Այդ հարցին նույնպես անդրադարձել է նաև Մ. Աբեղյանը և բազմահարուստ փաստերով համոզել նրանց նույնության։ Իր ուսումնասիրության մեջ նա այդ մասը զետեղել է «Հայրենների հարատևությունը և անտունիներ» խորագրի տակ[13]։ Մ. Աբեղյանից առաջ ու հետո էլ այդ իրողությունը նկատել են ուրիշ մասնագետներ, սովորաբար հանգելով նույն եզրակացությանը։ Մ. Աբեղյանը մի այլ առիթով անտունիների և հայրենների մասին իր հետազոտությունների արդյունքն ամփոփել է այսպիսի տողերով. «Անտունիները, ուրեմն, ուրիշ բան չեն, բայց եթե բերանացի ապրած և մինչև մեր օրերը հասած, հարկավ, որոշ փոփոխություններ, վերամշակություններ ու զարգացում կրած, հին հայրենները, այլև այս վերջինների արվեստով ու նմանողությամբ, և նույն բանաստեղծական չափով, բայց մեծ մասամբ անհանգ, հորինված նորերը»[14]։ Այս ճիշտ եզրահանգումը այսօր կարող է լոկ մասնակի խմբագրման ենթարկվել այնքանով, որքանով ըստ սիրո տաղարանը կազմողի, հայրենները անտունի են կոչվել նաև միջնադարում, գնթ 16—17-րդ դարերում։ Մեզ հայտնի է այս իրողությունն ապացուցող մի ուրիշ փաստ ևս։ Քիլիսի տաղարան կոչված հայտնի ժողովածուում հայրենների մի շարք կոչվում է «Այլ բանք հայրենիք անտոնի ասացեալ»[15]։

Հայրենների մյուս առանձնահատկությունը, որ նշել են թե՝ միջնադարյան քննվող տաղարան կազմողը, և թե Մ. Աբեղյանը, վերաբերում է նրանց «և՛ անյարմարականք, և՛ յարմարականք» բնութագրականին։ Խոսքն, անշուշտ, ոչ թե ձևական կողմին է վերաբերում, այլ բովանդակությանը։ Տաղարան կազմողը նման միտք չի հայտնում միջնադարյան բանաստեղծների գործերի մասին. նա այդպես է բնութագրում լոկ հայրենները։ Ըստ էության, նա «անյարմարականք» ասելով նկատի ունի հույժ աշխարհիկ,

---

13 Մ. Աբեղյան, Երկեր, Բ, 1967, էջ 222—239։

14 Մ. Աբեղյան, Դուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 15։

15 Այդ տաղարանի լուսանկարները շնորհակալությամբ ստացել ենք մեծարգո դոկտ. Ա. Տ. Ղազարյանից (Հալեպ)։ Բուն տաղարանը ըստ նույն բանասերի նամակով տված բացատրության, պատկանելիս է եղել մի տիկնոջ, որը հետո Հալեպից տեղափոխվել է Ամերիկա (Արգենտինա)։ Ցանկալի կլիներ գրաննել այդ մեծարժեք տաղարանի հետքը և փրկել այն պատահականություններից։

խիստ բաց և գրավոր դպրության մեջ հարմար չհամարված մըտքերը, հասկացողությունները, պատկերները, որոնցով լեցուն են հայրեննները։ Այսինքն, այն ամենը, հատկապես ինչի համար միջնադարյան հոգևոր գաղափարախոսների կողմից հալածվում էին և՛ հայրեննները, և՛ գուսանները։ Մ. Աբեղյանն իր հանգամանալից հետազոտության մեջ խորանում է նաև այս հարցի ներսը, նման երգերի և երգիչների մասին գրելով. «Մորճի ճերմակ ծոցը նրանց տաճարն էր, ծծերը վառ կանթեղը կամ սաղմոսարանը, կամ ուխտատեղը (ըխտախաչեր), իրենք այդ տաճարի ժամկոչը կամ լուսարարը, որ խունկ ու մոմով լուսավոր էին պահում այն, կամ սարկավագն ու աբեղան, որ աղոթք ու աղաչանք էին անում, խոստովանում սպիտակ ծծերին, մինչև արժանանում էին «Ադամա դրախտին»—մորճի գրկին»[16]։

Եվ այս ամենն է, ահա, այն «անչարմարականք»-ը, որ նշել է սիրո առաջին տաղարան կազմողը։ Համեմատելով այս բնութագրականը միջնադարյան հոգևոր հայրերի և որոշ մատենագիրների բնութագրությունների հետ («պիղծ», «վաւաշ», «դիւական» և այլն), տեսնում ենք, թե որքան առաջադիմական լայնախոհությամբ է խնդրին մոտեցել մեր անանուն հեղինակը։ Ճշմարտանք, որ նա այդպես է որակում հայրեննների լոկ մի մասը, իսկ մյուսը կոչում է «չարմարականք», մինչդեռ հոգևոր հայրերի կողմից մերժվել են բոլոր հայրեններն ու նրանց տարածող գուսաններն առհասարակ։

Վերևում հիշված փաստերը միաժամանակ խոսում են նաև հայրեննների հնության մասին։

Եթե 16—17-րդ դարերի գործիչը դրանք համարում է նվագարանով երգվող գուսանական անանուն երգեր, ապա հենց դրանով նա հայրեննների հնությունը կապում է ավելի վաղ ժամանակների հետ, քան այդ դարերն են։ Միանգամայն իրավացի է Մ. Աբեղյանը նաև այս հարցում, երբ հայրեննների ծագման բուն շրջանը տեսնում է 10—14-րդ դարերում։ Այդ են ապացուցում նաև հետագայում ի հայտ եկած ուրիշ փաստեր[17]։

Մնում է այստեղ խոսել մի հարցի մասին ևս, որն առնչվում է սիրո առաջին տաղարանի և Մ. Աբեղյանի հայացքների հետ։

---

16 Մ. Աբեղյան, Երկեր, Բ, Երևան, 1967, էջ 218։

17 Համապատասխան փաստերի մի մասի վերաբերյալ մենք խոսել ենք «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1952, № 2-ում։

խոսքը՝ հայրենները ժողովրդական ստեղծագործություններ համարելու մասին է։

Միջին դարերում առհասարակ գոյություն չեն ունեցել ժողովրդական երգեր, ժողովրդական բանաձյուսություն և նման այլ հասկացությունները, չնայած համապատասխան ստեղծագործություններ կային։ Նմանների մասին խոսք լինելիս հին հեղինակները գտնում էին առանձին դարձվածքներ, մատնացույց անելու հատկանալի եղանակներ, որոնցով ճանաչելի էին դառնում նաև այդ ստեղծագործությունները։ Նրանք մերթ գուսանական էին համարում դրանք, մերթ վիպասանականք, մերթ գռեհկականք, մերթ «սատացեալք յառաջնոց» և այլն։ Այդ պատճառով էլ բուն ժողովրդական, գուսանական, գուսանա-ժողովրդական ստեղծագործությունները ձեռագրերում համապատասխան ճիշտ բնութագրականներ չեն ստացել, որով և դժվարացրել են նրանց ուսումնասիրության դործը։

Հայրենների մասին, ինչպես տեսանք, ձեռագրերում կան որոշակի տվյալներ, որոնցով նրանք կապվում են գուսանների անունների հետ, իսկ դրանով էլ՝ նաև ժողովրդական ստեղծագործությունների, որովհետև այդ երգիչները և՝ ստեղծագործողներ էին, և՝ ժողովրդական ստեղծագործությունների տարածողներ։

Մ. Աբեղյանն իր հետազոտություններում հայրենները համարում է գուսանական ժողովրդական ստեղծագործություններ, ցույց տալով, որ նրանք նախապես ստեղծվել են գուսանների կողմից և աստիճանաբար բռնել ժողովրդականացման ուղին։

Այս առումով էլ սիրո տաղարանի կազմողն ու Մ. Աբեղյանն ընդհանուր եզրեր ունեն։

Մեր կարծիքով, այս խնդիրը դեռ պետք է ավելի քան հանգամանորեն մշակվի, որովհետև ոչ բոլոր հայրեններն են ժողովրդականացման նույն աստիճանին հասել։ Նրանց մեջ կան այնպիսինները, որոնք գրի են առնվել և փոխանցվել գրավոր ճանապարհով դեռևս էական փոփոխության չենթարկված և ընդհակառակը, նաև այնպիսինները, որոնք այնքան են ժողովրդականացել, որ վեր են ածվել իսկական ժողովրդական երգերի։ Մենք այդպիսի երգերի մի ամբողջ փունջ ենք հրատարակել 1956 թվականին, որոնցով դժբախտաբար Մ. Աբեղյանը չէր զբաղվել[18]։ Դրանք իս-

18 Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 117—118, 119—120, 123, 124—125, 126—127, 139, 140, 141 և այլն։ Տե՛ս նաև դրանց ծանոթագրությունները՝ գրքի վերջում։

կական հայրեններ են՝ ճոխացված կրկնակներով, ձայնարկություններով, կրկնումներով։ Այդ ճոխացումների պատճառով արտաքնապես բոլորովին աննկատ է մնում նրանց հայրենային ծագումը։ Այս ինքնատիպ երգերի փունջը գրի է առնվել Ղրիմում 17-րդ դարի առաջին կեսին (ձեռ. №7709, գրի առնող՝ Խաչգոուզ)։ Ժամանակին դրանք օգտագործվել են որպես կնունքի, հարսանիքի երգեր և պարերգեր։ Եվ ամենից առաջ այս երգախումբն է, որ անառարկելիորեն գուսանական հայրենները շղթայում է ժողովրդական երգերի հետ, փաստարկելով նրանց սերտ կապն ու առնչությունները։

Եվ եթե անցյալում լոկ հետազոտական եղրակացություններով ու հետագայի գրառումներով էինք փորձում փաստարկել այդ երևույթը, ապա այսօր ի դեմս սիրո առաջին տաղարանի, ունենք մի փայլուն ապացույց ևս։ Այստեղ հայրենների շարքում տեղ է տրված հայրենային ծագում ունեցող նման մի շարքի ևս, որով հայրեններն ու ժողովրդական այդ երգերը երևան են գալիս մի ամբողջական խմբավորման մեջ։ Տաղարանը կազմողի գիտակցված և մտածված այդ քայլը թեպետ և առանձնապես չի բացատրված նախադրության մեջ, սակայն ինքնին չափազանց ուշագրավ հանգամանք է։

Խոսքը վերաբերում է № 10208 ձեռագրում եղած հայրենների 8-րդ շարքին։ Այն բաղկացած է երեք միավորից, որոնց սկզբնատողերն են.

ա) Ի յայդ լեռներ ի վայր, ա՛յ...
բ) Թէ թուխն էր առեր, ա՛յ...
գ) Յայն առաջին ղալեն, ա՛յ...

Դրանք երեքն էլ, այլ տարբերակներով, հայտնի են մեզ՝ Ղրիմում գրի առնված վերոհիշյալ շարքերի թվում[19]։ Աթապիսով փաստորեն այս շարքի միջոցով Ղրիմում գրի առնված հայրենային ժողովրդական երգերի խումբը առնչվում է սիրո առաջին տաղարանի հայրենների հետ։ Կարևորը տվյալ դեպքում, ամենից առաջ, հենց այդ առնչությունն է, սակայն, պակաս կարևոր չէ նաև տաղարան կազմողի գիտակցական մոտեցումը ժողովրդական այդ երգերին։ Երբ նրա սկզբունքով Ղրիմում գրի առնված շարքերից մեկը օրգանական ու հարազատ մաս է համարվել հայրենների

[19] Անդ, էջ 139 (նաև 481—488), 141—147 (նաև 484, 492), 150—151, նաև (492—493)։

շարքին, ապա բնականաբար այդպիսիք են համարվել նաև մյուս շարքերը։

Այսպիսով, գուսանական հայրենները և հայրենային ժողովրդական երգերը իրենց զարգացման և անցումային օղակներով դեռևս միջնադարում դիտվել են որպես միմյանց հարազատ երգախմբի անբաժանելի մասեր։ Դա ինքնին խոսում է այն տեսության օգտին, որով Մ. Աբեղյանը հայրենները կոչեց «գուսանական ժողովրդական երգեր»։ Կրկնում ենք, որ այդ խնդիրը կարոտ է լրացուցիչ հետազոտության՝ հատկապես գուսանական և ժողովրդական ըմբռնումները տարորոշելու և ըստ այդմ հայրենները ենթախմբավորելու։

Այսպես, ուրեմն, ի դեմս սիրո երգերի առաջին տաղարանի և նրա կազմողի, ունենք ոչ թե ժամանակակից հեղինակի, այլ միջնադարյան բանասեր-գրականագետի կարծիք հայրենների մասին։ Ըստ նրա՝ հայրենները անհայտ ու անանուն բազմաթիվ գուսանների ստեղծագործություններ են, որոնք երգվել են նվագակցությամբ, կոչվել են նաև անտունի և իրենց ողջ էությամբ տարբերվել սիրո երգեր գրող առաջին բանաստեղծների ստեղծագործություններից։ Հիմնականում այդպիսիք են նաև Մ. Աբեղյանի երկարատև հետազոտությունների արդյունքները, որոնք այսօր դառնում են միանգամայն անառարկելի։

Այս հենքի վրա նոր ուժ են ստանում միջնադարյան մյուս բոլոր այն տաղարանները, որոնց մեջ բուն հայրենները թեև կցկտուր խորագրերով, բայց հետևողականորեն համարվում են անհայտ երգիչների յուրատեսակ ստեղծագործություններ, երբեք չկապվելով այս կամ այն հեղինակի, այդ թվում նաև Նահապետ Քուչակի անվան հետ։

Այժմ ամփոփ գծերով ծանոթանանք սիրո երգերի առաջին տաղարանի ընդօրինակությանը։

№ 10208 ձեռագրի համապատասխան մասը (թերթ 118—183) բովանդակում է ընդհանուր ձեռագրի ամբողջական համարակալում ունեցող նյութերից ԽԱ—ՃԺԴ միավորները՝ հետևյալ խմբաբաժանմամբ.

Ա մաս՝ ԽԲ—ՇՔ[20]
Բ մաս՝ Կ—ՁՁ
Գ մաս՝ ՁԷ—ՃՄԴ

---

[20] ԽԱ համարը դուրս ենք թողնում, որովհետև այդ համարի նյութը՝ ընդհանուր «նախաբանությունն» է։

Ա և Բ մասերը բովանդակում են բացառապես մեր միջնադարյան աշխարհիկ բանաստեղծների երգերից ընտրված նմուշները, որոնց հետ կապված մանրամասնությունների մեջ մտնելն առայժմ անհարկի ենք համարում։

Դ մասն սկսվում է 162 թերթից և ավարտվում 182 թերթով։ Պրակակազման թվանշանները և հաշվումները ցույց են տալիս, որ այս մասի վերջից ընկած է մի ամբողջ պրակ (ԺԸ) և մի թերթ, ընդամենը՝ 13 թերթ։ Քանի որ առկա վերջին թերթի (182) բովանդակած հայրենների շարքը վերջից պակասավոր է՝ թերթ ընկած լինելու պատճառով, ուստի հիմք կա կարծելու, թե պակասում են նաև հայրենների ուրիշ շարքեր։ Առկա շարքերի ընդհանուր քանակը հավասար է 22-ի։ Դա ինքնին մի բացառիկ թիվ է, որպիսին չկա հայրեններ բովանդակող և ոչ մի ձեռագրում[21]։ Պատճառը հասկանալի է. միայն այդ ձեռագրի մեջ ընդօրինակված սիրո տաղարանի հեղինակն է, որ նպատակ է ունեցել կազմել սիրո երգերի հատուկ ժողովածու։ Ուստի նա ի մի է խմբել հնարավորին չափ շատ հայրեններ, նրանց շարքերի թիվը հասցնելով շուրջ երեք տասնյակի, որոնց մի մասը, դժբախտաբար մեզ չի հասել։

Ինչպես վերևում տեսանք, սիրո առաջին տաղարան կազմողը մեծ բծախնդրությամբ իր տաղարանի մեջ կիրառել է տաղերի խմբաբաժանում և հետևողականորեն կիրառել այն՝ իր տաղարան ստեղծելիս։ Առաջին և երկրորդ խմբերում նրա սկզբունքների և ոչ մի բացատրության կարիք ունեցող խախտում չենք նկատում։ Հնարավոր է, որ այդտեղ հետագայում կատարված լինեն որոշ ներմուծումներ, արտածումներ և այլ փոփոխություններ, որոնք առկա վիճակով հակասություններ չեն ցուցաբերում։

Այս առումով որոշ բացատրության կարիք ունի երրորդ շարքը, որովհետև այստեղ երկու անգամ խախտված են ինչպես հայ-

---

21 Այսպես ասելով մենք նկատի ունենք ոչ միայն Մաշտոցի անվան Մատենադարանի համապատասխան ձեռագրերը, այլև արտասահմանում պահպանվողները։ Վերջիններիս մասին բավարար տեղեկություններ ունենք (հայրենների համապատասխան բոլոր շարքերի առաքումով հանդերձ) մեծարգո բանասերներ Հ. Քյուրտյանի (Ամերիկա), Ա. Տ. Ղազարյանի (Հալեպ), Վ. Հովհաննիսյանի (Վիեննաից), Հ. Պերպերյանի (Փարիզ), Ն. Ակինյանի և Հ. Ոսկյանի (Վիեննա), Լ. Մինասյանի (Իրան) և ուրիշների սիրալիր վերաբերմունքի շնորհիվ, որոնց և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունները։ Հայրենների այդ բոլոր շարքերը պատրաստում ենք առանձին հատորով տպագրության։

բննների շարքերի կանոնավոր շղթան, այնպես էլ կազմողի սկզբունքները։ Առաջին խախտումը կատարված է հայրեննների առաջին շարքից անմիջապես հետո, ուր զետեղված են այլ բնույթի 5 երգեր, իսկ երկրորդ անգամ՝ հայրեննների 20-րդ շարքից անմիջապես հետո՝ մեկ ուսանավորի ներմուծմամբ։

Խնդրի հստակ պատկերացման նպատակով օգտակար ենք համարում նախ մեջ բերել հայրեննների բոլոր շարքերի սկզբնատողերի հաջորդական ցանկը՝ պատշաճ ծանոթագրություններով։

1. ՁԷ. Իմ աղվոր, բարակ ու երկան... 162 ա—164 ա

Մանոթ.— Այստեղ շարքն ընդհատվում է հետևյալ բանաստեղծություններով. ա) «Ես կանգիմ...» (Պետրոս, 164 ա—165 բ), բ) «Քո սէրտ իմ սրտիս...» (անանուն, 165 բ—166 բ), գ) «Հագէր ես սէրասէր...» (անանուն, 166 բ—167 ա), դ) «Առաւօտուն կելնես...»» (անանուն, 167 ա—167 բ), ե) «Սէրըն միրով պիտի...» (Մկրտիչ, 167 բ—169 ա)։ Դրանք դրված են ՁԸ—ՂԲ համարների տակ։

2. ՂԳ. Այս ծով. անիճուն գիշերս... 169 ա—169 բ
3. ՂԴ. [Ք] ան ի ըզպահրի հատուկ ես... 169 բ—170 բ
4. ՂԵ. Գիշերս ի լեռանց բարձանց... 170 բ— 171 բ
5. ՂԶ. Գեմ չեմ Յուդայի ծնած... 171 բ
6. ՂԷ. Սրտիկս է եղեր դալէմ... 171 բ—172 բ
7. ՂԸ. Գիշերս ես ի հուն էի... 172 բ—173 ա
8. ՂԹ. Ի յայտ լեռնէն ի վայր... 173 ա—174 ա
9. ՃԱ. Ամ, ինչ լինեմամ գերիս... 175 ա—175 բ
10. ՃԱ. Ամ, ինչ լինեմամ գերիս... 175 ա—175 բ
11. ՃԲ. Երեսս է կարմիր ու լան, իմ տուն... 175 բ—177 ա
12. ՃԳ. Քալայ, կարմըրվոր աղջիկ... 177ա—177բ
13. ՃԴ. Թէ սէրըն գրնով լինի... 177 բ—178 ա
14. ՃԵ. Քան գկամար ես ուներս ի վեր... 178ա—178բ
15. ՃԶ. Խօշ եար, ես գլալով սելամ... 178բ—179ա
16. ՃԷ. Այս աստրնվորիս վերա... 179 ա—179 բ
17. ՃԸ. Կարմիր ւ իսպիտակ երես... 179 բ
18. ՃԹ. Ձիմ եարն ի գնալ տեսա... 180 ա
19. ՃԺ. Այ իմ խորոտիկ եարուկ... 180 ա—180 բ
20. ՃԺԱ. Դուն ծառ ես նարընենի... 180 բ—181 ա

Մանոթ. Այստեղ շարքն ընդհատվում է «Աչերս ի լաց է արտասուօվ» (անանուն, 181 ա բ) երգով՝ դրված ՃԺԲ համարի տակ։

21. ՃԺԴ. Իմ կաւն ու բոլոր նուպա... 181 բ—182 ա
22. ՃԺԴ. Ես տրղա ու դուն տղա... 182 ա—182 բ
Մանոթ. Այստեղ շարքն ընդհատվում է, ինչպես նաև համապատասխան բաժինը՝ ձեռագրից 13 թերթ պոկված լինելու պատճառով։

Հայրենների տաղաշարքի մեջ գտնվող վերոհիշյալ 6 (5+1) երգերի հետագայում ընդօրինակությունների ժամանակ ներմուծված լինելը կարելի է ապացուցել մի շարք փաստերով։ Հիշենք դրանցից կարևորները։

Ինչպես տեսանք, սիրո տաղարան կազմողը մշակել է այնպիսի սկզբունք, որի համաձայն «յայտնի անուամբ» հեղինակների գործերը դետեղել է կամ առաջին կամ երկրորդ խմբում՝ նայած այդ գործերի բնույթին։ Իսկ երրորդ խմբի մեջ մուծել է լոկ անհայտ հեղինակների այն գործերը, որոնք կոչվել են անտօնի, երգվել են նվագարանների օգտագործմամբ և իրենցից ներկայացնում են հայրենների շարքեր։ Եվ ահա, հակառակ այս սկզբունքների և ներքանց հետևողական կիրառման, այդ տաղարանի քննվող ընդօրինակության մեջ հայրենների շարքում երևան են գալիս այնպիսի երգեր, որոնք պատկանում են երկրորդ խմբին, որովհետև դրանք սիրո երգեր են՝ գրված այս կամ այն բանաստեղծի կողմից։ Նրանցից երկուսի հեղինակները (Պետրոս, Մկրտիչ) նույնիսկ հայտնի են և՛ խորագրերից, և՛ վերջին տներից։ Ինչ վերաբերում է մյուս երգերին, ապա դրանք ևս, չնայած զուրկ են հեղինակների անուններից, սակայն բոլոր տվյալներն ունեն դետեղվելու մյուս խմբերում, ուր, ինչպես ցույց տվինք, կան նաև հեղինակազուրկ այդպիսի երգեր։

Ցույց տրված երգերի մուտքը հայրենների շարքի մեջ հետագայի գործ պիտի համարել նաև հետևյալ պատճառով. նրանք համարյա բոլորը, բացի մեկից, գտնվում են հայրենների տաղաշարքերի սկզբի մասում, ընկած առաջին շարքից անմիջապես հետո։ Հնարավոր է, որ այդ երգերը սկզբնապես կազմված լինեն երկրորդ խմբի վերջին շարքը և մեխանիկորեն կամ թերթերի խառնրվածության պատճառով հետագայում կցված լինեն հաջորդ (երրորդ) երգախմբի սկզբից։ Այս դեպքում խանգարող պարագա է հանդիսանում հայրենների առաջին շարքը, որովհետև նրանից հետո են դետեղված այդ 5 երգերը։ Կնշանակի հայրենների նախկին կարգն էլ նույն եղանակով մասնակիորեն խախտվել է, և արդի առաջին շարքը ուրիշ տեղից է տեղափոխվել այդտեղ։ Այս հավա-

նական կարծիքը ընդունելի կլիներ, եթե ունենայինք դրա օգտին խոսող հավաստի փաստ: Բարեբախտաբար որոնումներն ի հայտ են բերում նաև այդպիսի ամուր հիմքեր:

Պարզվում է, որ սիրո անդրանիկ տաղարանից ընդօրինակություն են կատարել նաև ուրիշ գրիչներ, որոնց ձյուղերից մեկը պահպանված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 9597 ձեռագրում: Այստեղ սիրո տաղարանից պահպանված է միայն հայրենների բաժինը՝ այն էլ ոչ լրիվ: Այսուհանդերձ պահպանված մասն իր շարքերի հերթականությամբ համապատասխանում է № 10208 ձեռագրին՝ որոշ տարբերություններով: Ուշագրավն այն է, որ այստեղ՝ № 9597 ձեռագրում՝ № 10208 ձեռագրում առաջին տեղը զբաղող հայրենների շարքը զբաղում է 12-րդ տեղը և մնացածի հաջորդականությունը՝ նույնն է: Պարզ է, որ դրանցից մեկն ու մեկի մեջ առկա է խախտում: Եվ քանի որ, վերևում տրված բացատրությամբ, կասկածելի է № 10208 ձեռագրում եղած հաջորդականությունը, ուստի ճիշտ է №9597 ձեռագրի շարքերի ընթացքը: Ուշագրավ է նաև այն, որ այստեղ (№ 9597) հայրենների շարքի մեջ չկան վերոհիշյալ 6 ներմուծված տաղերից և ոչ մեկը:

Ահա № 9597 ձեռագրում պահպանված հայրենների շարքերի սկզբնատողերի հաջորդական ցանկը.

1. Այս ծով, անհուն դիշերիս... 120 ա—120 բ
2. Ես փողնէս ի վար կու գի... 120 բ—122 բ
3. Ամ, ի՞նչ լինեամ գերիս... 122 բ—126 ա
4. Երեստ է կարմիր ու լան... 126 ա—128 բ
5. Դիշերս ես ի դուրս ելա... 128 բ—129 ա
6. Կանչեմ, ալանի կանչեմ... 129 ա—130 բ
7. Քալա՛, կարմըրով աղջիկ... 130 բ—131 բ
8. Թէ սէրն դինով լինի... 131 բ—132 ա
9. Քան կամար նման քո ունեդ... 132 ա—135 ա
10. Կարմիր և խոպիտակ երես... 135 ա—135 բ
11. Ջիմ եարն ի գնալ տեսայ... 135 բ—136 ա
12. Իմ աղւոր, բարակ՝ւ երկան... 136 ա—140 բ
13. Ա՛յ իմ խորոտիկ եարուկ... 140 ա—140 բ
14. Դու նման ես ծառ նարընճենի... 152 ա—153 բ
15. Փնճիկ բռեհան ես դու... 216 ա—217 ա

Եզրակացությունը պարզ է. № 10208 ձեռագրի հայրենների շարքի մեջ նկատվող երկու խախտումներն էլ կապ չունեն սիրո առաջին տաղարան ստեղծողի սկզբունքների և նրա կատարած

խմբագրման հետ։ Դրանք կամ հետագայի ընդօրինակությունների ժամանակ են ներմուծվել կամ երկրորդ մասի վերջից են մեխանիկորեն կցվել երրորդ մասի սկզբին։ Երկու դեպքում էլ գրիչները չեն նկատել կամ լրիվ չեն ըմբռնել սիրո տաղարանի խմբագրաժանռամների նրբությունները։

Այժմ մի քանի խոսք՝ № 9597 ձեռագրի հայրեննների մասին։ Այս ձեռագիրն էլ Մաշտոցի անվան Մատենադարանի «նորաբնակներից» է։ Այն անցյալում պատկանելիս է եղել Ղալաթիայի ազգային Մատենադարանին և հանգամանորեն նկարագրված է Համապատասխան ձեռագրերի ցուցակում։[22]

Ձեռագիրը ղուրկ է գրչության պարագաների մասին տեղեկություններ տվող հիշատակարաններից։ Գրվել է 18-րդ դարի առաջին քառորդում, բայց 1706 թվականից հետո, որովհետև բովանդակում է այդ թվականին գրված ստեղծագործություն։

Հարց է առաջանում. արդյոք № 9597 ձեռագրի հայրենները չե՞ն ընդօրինակել № 10208-ից՝ վերոհիշյալ տարբերություններով։ Ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու ո՛չ։ Համոզվելու համար բերենք մի փաստ։ № 10208 ձեռագրում «Երեսդ է կարմիր ու լան, իմ տուն» տողով սկսվող շարքի վերջին մասում գրիչը թողել է 3 տողի տեղ՝ նախագաղափարի այդ մասի անվերծանելիության պատճառով։ Եթե № 9597 ձեռագիրն արտագրված լիներ № 10208-ից, ապա այստեղ էլ պիտի երեք տողի համար տեղ թողներ։ Այստեղ, սակայն, ոչ միայն նման բաց չկա, այլև լրիվ է համապատասխան հատվածը։ Կնշանակի, № 9597 ձեռագիրն ընդօրինակվել է մի այլ նախագաղափարից։ Ահա համապատասխան քնագիրը, որտեղ փակագծի մեջ առնված սկզբի 3 տողերը վերցնում ենք № 9597 ձեռագրից, որովհետև № 10208-ում չկան, իսկ մնացածները՝ № 10208-ից։

[Գիշերս ես ի դուրս ելա,
Շատ աստղունք ու բարկ լուսնկա,
Մէկիկ մի զարիպ կտրիճ՝
Դռնէ-դուռ ընկեր կու դողա.
Հարսնուկ մ՝աստուծոյ սիրուն
Իր կղպած դուռըն կու բանա.
— Արեկ, որ զքեղ ծոցս առնեմ,
Մինչ որ քո կապան չորանա...

22 Բաբգեն արքեպիսկոպոս, «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանին հայոց», Անթիլիաս, 1961, էջ 881—904։

Այս փաստը միաժամանակ հիմք է տալիս մտածելու, որ սիրո երգերի առաջին տաղարանում նշված 3 տողերը չեն պակասել, որից էլ այն լրիվ փոխանցվել է № 9597-ի նախնագաղափարին։ Կնշանակի, № 10208 ձեռագիրն արտագրված է ոչ թե սիրո տաղարանից անմիջապես, այլ միջնորդաբար, այլապես այդ 3 տողերը չէին պակասի։

№№ 10208 և 9597 ձեռագրերի շարքերի մեջ կա նկատելի մի տարբերություն ևս։ № 10208 ձեռագրի 22 շարքերի դիմաց այստեղ ունենք 15 շարք, որոնցից սկզբի 13-ը մի ամբողջությամբ են ներկայացված, իսկ վերջին երկուսն արտագրված են առանձին-առանձին, այլ երգերի միջև։ Քանի որ այս վերջիններից մեկը («Ա՜յ իմ խորոտիկ եարուկ») նույնպես պատկանում է ընդհանուր շարքախմբին, ինչպես ցույց է տալիս № 10208 ձեռագիրը (տե՛ս ՃԺ երգը), ուստի պիտի ենթադրել, որ № 10208-ի շարքն այս առումով ավելի ամբողջական է։ Բացի դրանից, հիմք է ստացվում մտածելու, թե վերջին շարքն էլ («Փնճիկ ըռևհան ես դու...») սիրո անդրանիկ տաղարանի հայրեններից է։ Այսպիսով № 9597 ձեռագիրը բերում է ևս մի շարք՝ լրացնելու վաղեմի պատկերը։

Նույն ձեռագիրն ունի մի ուրիշ նոր շարք էլ («Կանչեմ, ալանի կանչեմ»), որը նույնպես այդպիսի իրողություն է ենթադրել տալիս։

Քանի որ № 10208 ձեռագրի հայրենների շարափունջն էլ վերջից թերի է, ուստի այդ երկու շարքի մասին արված ենթադրությունն ավելի քան հավանական է դառնում։ Ըստ այդմ, ունենում ենք սիրո առաջին տաղարանում եղած հայրեններից պահպանված ոչ թե 22, այլ 24 շարք։

№ № 10208 և 9597 ձեռագրերի հայրեններն շարքերի քանակային հաշիվներն ունեն նաև այլ տարբերություններ։ № 9597-ում պակասում են № 10208-ի 3—8 և 21—22-րդ շարքերը։ Դա մատնացույց է անում թուն տաղարանի և այդ ձեռագրի միջև գեթ մի քանի միջնորդ օղակներ։ Մի այլ տարբերություն էլ այն է, որ № 10208-ում գտնվող 14—16-րդ հայրենների 3 շարքերը № 9597-ում միացված են որպես 9-րդ շարք, իսկ № 10208-ի 10-րդ շարքը տրոհված է 2 մասի՝ որպես № 9597 ձեռագրի 4—5-րդ շարքեր։ Ըստ այդմ № 10208 ձեռագրի հայրենների շարքերի հաջորդականությունը № 9597-ի համեմատությամբ ունի հետևյալ պատկերը. 12 (1), 1 (2), 2 (9), 3 (10), 4—5 (11), 7 (12), 8 (13), 9 (14—16), 10 (17), 11 (18), 13 (19), 14 (20)։ Այստեղ փակագծից առաջ՝

№ 10208-ի շարքահամարներն են, իսկ փակագծերում՝ № 9597 ձեռագրինը։

Անկախ այս բոլոր տարբերություններից, որոնք մայր բնագրից ելնող ընդօրինակությունների ճյուղավորման արդյունք են, №№ 10208 և 9597 ձեռագրերի հայրենների շարքերը առայժմ մեզ հայտնի այն եզակի ընդօրինակություններն են, որոնք օգնում են պատկերացում կազմելու հայերեն սիրո առաջին տաղարանի և նրա մեջ եղած հայրենների շարքերի քանակի ու հաջորդականության մասին։ Պետք է նկատել սակայն, որ առանց № 10208 ձեռագրի, № 9597 ձեռագիրը, միայնակ վերցրած, երբեք էլ միտք չէր տա այդ տաղարանի երբեմնի գոյության մասին մտածելու, որովհետև չունի համապատասխան այն որոշակի ցուցումները (նախագրություն, խմբագրաժանում՝ խորագրերով և նշումներով), որոնք կան № 10208 ձեռագրում։ Ընդհակառակը, № 9597 ձեռագիրը կազմված է այն հին տաղարանների սկզբունքով, որոնք կոչվում էին «տաղարան հոգւոյ և մարմնոյ»։ Ահա համապատասխան տողերը, որոնք հենց ժողովածուի ընդհանուր խորագիրն են կազմում, «Տաղարան, այսինքն, երգեցմունք պանագանք քաղցրալուրք և համեղագոյնք շարադրեցեալք ի պանագանից բանաստեղծից, ի խրախճանս մանկանց Սիոնի, ի փառս ամենամեծին Աստուծոյ, բաժանեցեալ յերկուս հատորս, այսինքն, ի հոգևորս և ի մարմնաւորս։ Առաջին հատոր առ Աստուած և առ սուրբս և առ օգուտս հոգւոյ և առաքինութեանց։ Իսկ երկրորդ հատոր վասն ուրախութեանց մարմնական՝ պանագան օրինակաւ շարագրեցեալ։ Հաւաքեցեալ մանաւանդ զքաղցրանսն և զհամեղագոյնսն և վաղեմի շարադրութիւնսն՝ ի փառս ամենամեծին աստուծոյ...» (թերթ 1 ա)։

Ինքը՝ № 10208 տաղարանն էլ, ըստ էության, այդպիսին է, որովհետև լինի է և՛ հոգևոր, և՛ մարմնավոր երգերով. այստեղ բարեբախտությունն այն է, որ պատահաբար, համարյա նույնությամբ, գրիչն ընդօրինակել է սիրո տաղարանն այնպես, ինչպես եղել է նախագաղափարում։

Հենց այս երկու վկաները, №№ 10208 և 9597 ձեռագրերը ցույց են տալիս, որ հայկական միջնադարը դեռևս չէր հանդուրժում սիրո երգերի ամբողջական և առանձին ժողովածուներ, որքան էլ որ նրանք պատճառաբանված և վարպետորեն խմբավորված լինեին։ Ուստի անանուն բանաստեր-գրականագետի առաջին փորձը, որ խոշոր երևույթ էր 16—17-րդ դարերի համար, աստիճանաբար զիջում է իր տեղը նորից «հոգւոյ և մարմնոյ» տաղարաններին։

* * *

Ամփոփենք։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 10208 ձեռագիրը բացառիկ արժեք ունի հատկապես իր 118—183-րդ թերթերի ընդգրկումով։ Ըստ էության, դա՝ 16—17-րդ դարերում, առաջին անգամ, հատուկ ծրագրով ստեղծված սիրո երգերի անդրանիկ ժողովածուի ընդօրինակությունն է։ Բուն ժողովածուն այժմ կորած է և սույն ընդօրինակությունը բավարար պատկերացում է տալիս նրա մասին։ Խնդրին մասամբ օգնում է նաև Մաշտոցի անվան Մատենադարանի № 9597 տաղարանն՝ իր հայրեննների 15 շարքերով, որոնք նույնպես գալիս են վերոհիշյալ կորած ժողովածուից։

Այդպիսի ժողովածուի գոյության մասին ցարդ ոչ մի տեղեկություն չի եղել։

Պարզվում է, որ 16—17-րդ դարերում ոմն բանիմաց բանաստեղծ է ստեղծել սիրո երգերի այդ ժողովածուն և նրա «Նախադրության» մեջ փաստարկել առհասարակ նման ժողովածուներ ստեղծելու անհրաժեշտությունը։ Այդ «Նախադրությունը» մեզ հայտնի գրականագիտական-տեսական բնույթի այն առաջին թոթովանքն է, որի հեղինակը ոչ միայն հիմնավորում է սիրո երգերի ժողովածուներ ունենալու պահանջն ու հնարավորությունը, այլև համտորեն ընտրում, խմբավորում է նյութերը և սեղծում է այդ ժողովածուն։

Դա ինքնին աննախընթաց և ուշագրավ երևույթ է մեր միջնադարյան քնարերգության պատմության մեջ։

Անանուն մտավորականի այդ ջանքերը մեզ համար բացառիկ նշանակություն ունեն նաև մի այլ առումով։ Այդ նա է, որ առաջին անգամ փորձել է ի մի հավաքել հայրեննների իրեն հասու շարքերը (22-ից ավելի) և տալ նրանց մասին վերին աստիճանի ուշագրավ տեղեկություններ։ Այսպես, օրինակ, նա հայրեննները դուրս է գնում միջնադարյան բանաստեղծների ստեղծագործությունների խմբերից, դրանք դիտելով որպես անհայտ հեղինակների գործեր։ Ըստ նրա, հայրեննները տարբերվում են նշված բանաստեղծների երգերից և՛ բովանդակությամբ, և՛ լեզվով։ Նրանք տարբերվում են նաև իրենց օգտագործման եղանակով, որովհետև երգվել են «Հանդերձ նուագարանօք»։ Իսկ դա հայրեննները կապում է գուսանների արվեստի հետ։ Բացառիկ նշանակություն ունի նաև այն տեղեկությունը, որի համաձայն միջնադարում հայրեննները կոչվելիս են եղել նաև «անտօնի» անունով։

Այս ամենը միասին գալիս են անհերքելի կերպով համոզելու այն տեսության ճշմարտությունը, որ մշակեց Մ. Աբեղյանը՝ հայրեննները (անտունինները) համարելով գուսանա-ժողովրդական երգեր։ Այդ նույն ճշմարտություններն են փաստարկում նաև միջնադարյան մյուս բոլոր ձեռագրերը՝ յուրաքանչյուրը յուրովի հերքելով հայրենների վիթխարի ու հին ժառանգությունը 16-րդ դարի մի հեղինակի անվան հետ կապելու ոմանց ապարդյուն ճիգերը։ Նոր հիմքեր են ստեղծվում հայրենների ծաղկման ժամանակը 10—14-րդ դարերում ցույց տալու համար, որի գիտական հիմնավորումը նույնպես տրված է Մ. Աբեղյանի կողմից։

Սույն հոդվածը տպագրության ընթացքի մեջ էր, երբ լույս տեսավ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատություններ» հատորը (1968, № 1), ուր ընդարձակ տեղ է հատկացված Ա. Ղուկասյանի «Հայրենները անհատական ստեղծագործություններ են» շարադրանքին (էջ 313—376)։ Հեղինակի նպատակն է հերքել Մ. Աբեղյանի տեսակետը և փաստարկել հակառակը։ Բայց նա փոխանակ մտնելու բուն խնդրի մեջ, այսինքն, ցույց տալու, որ հայրենները ոչ թե 10—14-րդ դարերի ստեղծագործություններ են, այլ՝ 16-րդ դարի երդիչ Ն. Քուչակի, երկար ու ձիգ պատմում է լոկ հարցի շուրջբոլոր։ Մինչդեռ իսկական բանասերի համար բավական կլիներ գեթ մի վստահելի փաստ, ձեռագրական մի նոր ու հավաստի վկայություն, որպիսին չկա ու, ինչպես տեսանք, չի էլ կարող լինել։ Ցավալի է, որ խմբագրությունը չնայած ինքն էլ «համաձայն չէ հոդվածում եղած քննադատական մի շարք կարծիքների հետ» (էջ 313), այդքան մեծ տեղ է հատկացրել այդ ջուրծեծուքին, որն իսպառ չի համապատասխանում արդի բանասիրության ոգուն։ Այդ եղանակով կարելի է հատորներ գրել, բայց ոչինչ չապացուցել։

ՊԱՅԱԹՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16—18-ՐԴ ԴԴ. ԵՎ ՇԱՀ ՍՈՒԼԹԱՆ ՀՈՒՍԵՅՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

16—18-րդ դդ. պատմողական սկզբնաղբյուրներում, ինչպես նաև դիվանական-պաշտոնական վավերագրերում, Արևելյան Հայաստանի աշխատավոր գյուղացիության՝ ռայաթների իրավական վիճակի կամ ընդհակառակը՝ հողին ամրացված լինելու մասին որոշակի հիշատակություններ չկան։ Ուստի, ուսումնասիրողների մոտ, մինչև օրս, այդ հարցի վերաբերյալ վերջնական տեսակետ գոյություն չունի։

Հայտնի է, որ սեֆյան Իրանում չկային ճորտատիրական այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք նույն ժամանակներում և հետագայում գոյություն են ունեցել Վրաստանում և նախաառեֆորմյան Ռուսաստանում։ Նշված է հատկապես, որ Արևելյան Հայաստանի այն շրջաններում, որոնք 16—18-րդ դդ. մտնում էին վրացական վալիությունների կազմի մեջ, գյուղացիների սոցիալ-իրավական վիճակը արմատապես տարբերվում էր Հարևան Ջուխուր-Սա'դի (Արարատյան երկիր) և Ղարաբաղի (Սյունիք-Արցախ) բեկլարբեկություններում ապրող ռայաթների վիճակից։ Այդ վայրերին վերաբերող վավերագրերից բավական պարզ երևում է, որ գյուղացիներն այնտեղ գտնվում էին ճորտային վիճակում և առուծախի էին ենթարկվում կամ նվիրվում էին վանքերին։ Հողի վաճառքին կամ նվիրատվությանը վերաբերող արձանագրություններում առաջին հերթին խոսվում էր ճորտ շինականների և ապա միայն նրանց տների, հողերի, ջրի, արոտավայրերի և մյուս ստացվածքների վաճառքի մասին։

Սանահնի վանքի «Քյոթուգի» մեջ պահպանվել են այդ կարգի բազմաթիվ փաստաթղթեր։ Այսպես օրինակ 1660—1670 թթ.

վերաբերող մի արձանագրության մեջ կարդում ենք. «Կամաւն ամենազաւրին յաստուծոյ ես Զալ-բեկի որդի Գասպարս, իմ որդի Գօգիս, Բերաւս, Բեժիս, Խաւսիս մեր կամաւ և յօժարութեամբ մեր ըզդուվս մեր Ոռնակա ծիլ շինական Շիխու Մխիթարին, Ակոբն, խէչիկն ծախեցինք վերայ Սարգիս պարոնտէրին, իրենց տեղովն, իրենց հողովն, իրենց ջրովն թէ պահէզատեղ, թէ այգու տեղ, թէ հորատած իր արօտիւն, թէ սար թէ ձոր ամեն ծախեցինք ի վերա Սարգիս պարոն-տէրին: Պարոն տէրն գնեց, վախմ արաւ Սանահնա սուրբ Աստուածածնին»[1]

Ինչպես տեսնում ենք այստեղ ճորտ գյուղացիները իրենց մշակած հողերի և ամբողջ ունեցվածքի հետ վաճառվում են վանքի վանահայր Սարգիս եպիսկոպոսին և ի վերջո վակֆ են տրվում վանքին:

Նման երևույթ սակայն չի նկատվում այս վայրերի անմիջական հարևաններ հանդիսացող Արարատյան երկրում և Այունյաց ու Արցախի մերձակա շրջաններում: Մուլքերի առուծախին և նվիրատվությանը վերաբերող արձանագրություններում և կալվածագրերում հիշատակվում են սեփականության ենթակա ամեն ինչ, բացի հողագործ ռայաթներից: Գյուղերը վաճառվում էին իրենց «բոլոր սահմաններով և իրավունքներով, ենթակա և կից, հավելյալ և հարակից վայրերով, օգտագործվող և չօգտագործվող, մշակված և անմշակ հողերով, հանդերով, արոտավայրերով և խոտհարքներով, ոչխարների արոտատեղերով և կովերի ու ձիերի կայաններով լեռներով ու բլուրներով, այրերով ու ապաստարաններով, դաշտերով և մարգագետիններով, ջրհորներով, շրջակա հողերով և ստորերկրյա անցքերով, ջաղացատեղերով և այգետեղերով, քարերով և ծառերով, առուներով, ակունքներով և ջրանցքներով, երեխանների խաղատեղերով և ծերունիների ու պատանիների հավաքատեղիներով, կից և անջատ, ներքին և արտաքին ամեն ինչով և այն ամեն բանով, որ գտնվում է հիշյալ սահմանների մեջ և ենթակա է վաճառման դրամով»: Նշվում էր նաև, որ սեփականացման ենթակա չեն միայն «շարիաթական բացառություննեը՝ մզկիթներ, գերեզմանոցներ, ճանապարհներ և անցուդիներ ինչպես նաև եկեղեցապատկան հողերը»[2]: Կալվածագրերում

[1] Մատենադարան, ձեռ. 3031, էջ 208ա—208 բ, տե՛ս նաև էջ 186 բ, 187ա—187 բ, 188 բ. 201 բ, 203 բ, 204 բ, 206 ա:

[2] «Մատենադարանի պարսկ. վավերագրերը», II, կալվածագրեր, պրակ Ա, կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968, վավ. 4, նաև վավ. 5, 7, 9, 13 և այլն:

ոչ մի խոսք չկար սակայն այդ հողերը մշակող հողագործ ռայաթների մասին: Պատճառն այն էր, որ համայնքի անդամ հողագործ գյուղացին մոսուլմանական շարիաթական իրավունքով ազատ էր համարվում: Նրա կախումը կալվածատիրոջից իրավականորեն արտահայտվում էր օգտագործվող հողերից ստացվող արդյունքի որոշ մասի հատուցումով գյուղի սեփականատիրոջը:

Նշված է սակայն, որ կալվածատիրոջից անձնական կախման մեջ չլինելով հանդերձ ռայաթները ազատորեն չէին կարող մի տեղից մի այլ տեղ տեղափոխվել: Աղբյուրներում կան տվյալներ, որոնք վկայում են թե ինչպես շատ դեպքերում գյուղատերերը, մալիքներն ու թիուլդարները կարողացել են պետական իշխանությունների օգնությամբ ետ բերել գյուղից փախած կամ իրենց համայնքը լքած ռայաթներին[3]:

Այդ հարկադրական վերադարձը որոշ ուսումնասիրողների կողմից դիտվել է որպես ճորտատիրական հարաբերությունների արտահայտություն: Պ. Հարությունյանը նույնիսկ մուլքատիրական գյուղերում բնակվող ռայաթներին անվանում է «ճորտ գյուղացիներ»[4]: Նման եզրակացության համար, ինչպես ստորև կտեսնենք, բավարար հիմքեր չկան:

Առանձին գյուղերից հեռացած կամ ինչպես պարսկալեզու աղբյուրներում հաճախ հանդիպում է, «ցրված ռայաթների» («ռուայա-յե մութաֆարիկե») հարկադիր վերադարձը իրենց նախկին բնակավայրը, անշուշտ որևէ իրավական հիմք է ունեցել: Այդ հարցի վերաբերյալ ավելի որոշակի օրենսդրական տվյալներ կան իլխանական շրջանի պատմիչների, հատկապես՝ Ռաշիդ-էդ-դինի մոտ: Հարկային պարտավորություններով ռայաթների տվյալ վայրին ամրացված լինելու օրենքը պարզորոշ կերպով ձևակերպված է Ղազան-խանի յառլիղներում[5]:

Հենվելով այդ նյութերի վրա Ի. Պ. Պետրուշևսկին, Ա. Ա. Ալի-Զադեն և իլխանական շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությամբ զբաղվող այլ մասնագետներ, նշում են, որ Ղազան-խանի օրոք գինվորականությանը որպես իկթա տրված մարզերի գյուղերում բնակվող ռայաթները, եթե

---

[3] **П. Т. Арутюнян**, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, стр. 36—38.

[4] *Նույն տեղում.*

[5] **Фазлуллах Рашид-ад-дин**, Джами-ат-таварих, т. III, Баку, 1957, *պարսկերեն բնագիր, էջ 514:*

փորձեին թողնել իրենց բնակավայրը և գնային ու բնակվեին այլ վայրում, մինչև 30 տարի ենթակա էին վերադարձման։ Եթե իհարկե նրանք նոր վայրում արդեն չէին հաջողել գրանցվել հարկային դաֆթարներում։ Միաժամանակ թույլ էին կարգադրվում էր թույլ չտալ այլ վայրերից փախչող ռայաթներին գալ և բնակություն հաստատել. իրենց իկթայի սահմաններում գտնվող գյուղերում[6]։

Հետագա, ինչպես թուրքմենական այնպես նաև սեֆյան շրջանի սկզբնաղբյուրներում, թեև ռայաթների տվյալ հարկատու օբյեկտին ամրացված լինելու մասին իրավական ձևակերպումներ չկան, սակայն ինչպես վերը նշեցինք, ուսումնասիրողների կողմից վկայակոչված են ռայաթների բռնի վերադարձման առանձին փաստեր, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ նույն օրենքը, ըստ տեղի և ժամանակի որոշ փոփոխությունների ենթարկվելով, ուժի մեջ է եղել նաև հետագա՝ 15—18-րդ դարերում։

Այս առումով ավելի ուշագրավ փաստեր են վկայակոչված Ի. Պ. Պետրուշևսկու «Ակնարկներ 16—19-րդ դարի սկզբի **Ադրբեջանի և Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների** պատմության» մենագրության մեջ։ Թեև այդ փաստերի որոշ մասը, որ վերաբերում է ռազմական գործողությունների ընթացքում տեղի ունեցած մասսայական տեղահանություններին, կամ համահարակների ժամանակ ռայաթների տեղից-տեղ տեղափոխումները արգելելուն[7], թույլ են և ոչ համոզիչ, սակայն բերված այլ, թեև ոչ այնքան անմիջական օրինակները, մեծ մասամբ ցույց են տալիս, որ ռայաթները սեֆյան տիրապետության շրջանում ևս տեղափոխման ազատություն չեն ունեցել։

Սակայն ինչպես Ի. Պ. Պետրուշևսկին այնպես նաև Պ. Տ. Հարությունյանը շեշտում են, որ այդ հարցի վերաբերյալ որևէ պաշտոնական փաստաթուղթ, հրամանագիր կամ հրովարտակ իրենց չի հանդիպել և այլ ուսումնասիրողների կողմից ևս չի վկայակոչվել[8]։ Ուստի նրանց եզրակացությունները հիմնված են

---

6 **Али-Заде А. А.** Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв. Баку, 1956, стр. 179, *հմմտ.* И. П. Петрушевский, Очерки по истории феод. отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв. Л., 1949, стр. 251.

7 **И. П. Петрушевский**, *նշված աշխատությունը, էջ 252.* П. Т. Арутюнян, *նշված աշխ. էջ 37 և 38։*

8 **И. П. Петрушевский**, *նշված աշխատությունը, էջ 252,* П. Т. Арутюнян, *նշված աշխատությունը, էջ 37—38։*

միայն պատմողական կամ մատենագրական աղբյուրների, մեծ մասամբ ոչ այնքան որոշակի տվյալների վրա, որոնք չեն կարող հարցին սպառիչ պատասխան տալ։

Ներկա հոդվածով ուսումնասիրողների ուշադրությանն է ներկայացվում 1710 թ. վերջին կամ 1711 թ. սկզբին Սեֆյան Շահ Սուլթան Հուսեյնի կողմից հրապարակված մի հրովարտակի բնագիրը, որտեղ բավական պարզ շարադրված է ռայաթների տվյալ հարկատու շրջանին ամրացված լինելու վերաբերյալ օրենքը[9]։ Հրովարտակը մեզ է հասել բնագրով և ներկայումս պահվում է ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ— «Մատենադարանի» Կաթողիկոսական դիվանում (թղթապանակ 1բ, վավ. 234)։

Հրովարտակն հարտարակված է ի պատասխան Թուման-ե Նախջևանի Դարաշամբ գյուղի համայնքի կողմից ներկայացված խնդրագրի։ Նրանք դիմել են Շահ Սուլթան-Հուսեյնին հայտնելով, որ քանի տարի առաջ իրենց գյուղից 15 ընտանիք հեռացել և բնակություն են հաստատել Աստապատ գյուղում։ Չնայած դրան, հեռացողները իրենց պետական հարկերը (մալոջհաթ, ջիզյա և այլ դիվանական պարտավորություններ) հատուցել են Դարաշամբի համայնքի միջոցով։ Սակայն այդ տարին Աստապատի հարկերի կապալառուն (զաբիթը) արգելք է հարուցել և թույլ չի տվել, որ նրանք շարունակեն իրենց հարկերը նախկին ձևով վճարել։ Դարաշամբի համայնքը խնդրում է շահին, որ կամ այդ 15 տնտեսության հասնող հարկերի բաժինը դեղչվի Դարաշամբից գանձվող հարկերի ընդհանուր գումարից և կամ կարգադրվի Ջուխուր—Սա'դի (Երևան) բեկլարբեկիին, որպեսզի վերջինս նրանց վերադարձնի իրենց նախկին բնակության վայրը։

Վկայակոչելով շիա օրենսգետների շեյխ-ուլ-իսլամների ու իմամների ֆեթվաների ամփոփումը հանդիսացող «Գերագույն խոսքի», ցրված հասարակություններին (ջամ'իյյաթ-ե թաֆրիկե») վերաբերող հոդվածը, ըստ որի, իրենց բնակավայրը լքած ռայաթները մինչև 12 տարի ենթակա էին վերադարձման, շահը այս հրովարտակով կարգադրում է Ջուխուր—Սա'դի բեկլարբեկիին

---

9 Այս հրովարտակի մասին առաջին անգամ խոսել ենք 1954 թ. պաշտպանության ներկայացված «Ագրարային հարաբերությունները Երևանի խանության մեջ 17-րդ դարում» դիսերտացիոն աշխատության մեջ։ Այդ մասին նշված է նաև աշխատության ավտոռեֆերատում (А. Д. Папазян, Аграрные отношения в Ереванском ханстве в XVII веке, Ереван, 1954, стр. 23)։

Աստապատ տեղափոխված այդ 15 ընտանիքներին նորից ետ վերադարձնել Դարաշամբ։

Ինչպես տեսնում ենք հրովարտակը տրված է առանձին դեպքի առնչությամբ, սակայն որքանով որ այնտեղ ամբողջությամբ մեջ է բերված ռայաթների տեղափոխությունը արգելող օրենքը, ապա այն կարելի է դիտել որպես 16—18-րդ դդ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության կնճռոտ հարցերից մեկի լուսաբանությանը օժանդակող կարևոր մի փաստաթուղթ։

Հիշյալ օրենքի կիրառությանը և նրանից բխող տնտեսական, տեխնիկական ու այլ բարդություններին ավելի մանրամասն անդրադարձել ենք Արևելյան Հայաստանի 16—17-րդ դդ. հողատիրության պատմությանը նվիրված և ներկայումս հրատարակության պատրաստող մենագրության մեջ։ Այստեղ, սակայն, հարկ ենք համարում նշելու, որ այդ օրենքի առկայությամբ հանդերձ, որոշակի պայմաններում միշտ էլ տեղի էին ունենում հողագործ ռայաթների գյուղից-գյուղ տեղափոխություններ։ «Յրված» կամ «անչատված» ռայաթների մասին հիշատակություններ հանդիպում են ինչպես 14—15-րդ դդ., այնպես նաև 16—18-րդ և նույնիսկ 19-րդ դարի աղբյուրներում և դիվանական վավերագրերում։ 17-րդ դարից հատկապես պահպանվել են Արարատյան երկրին և Սյունյաց աշխարհին վերաբերող մի քանի արժեքավոր վավերագրեր, որոնցով կալվածատերերը բողոքում են շահին կամ Աղերբայջանի վեզիրին, թիուլդարների, պետական պաշտոնյաների ու զաբիթների կողմից բնակչության նկատմամբ կիրառվող ճնշումների ու հարստահարությունների դեմ։ Այդ ճնշումների հետևանքով էր, որ «ռայաթները թողնում էին իրենց տոմսն ու տեղը և հեռանում, մեծ վնաս պատճառելով ոչ միայն կալվածատիրոջ, այլ նաև պետությանը»[10]։

Հրովարտակի բովանդակությունից դժվար չէ եզրակացնել, որ «Գերագույն խոսքի» այդ հոդվածը գործադրվում էր հատկապես այն դեպքերում, երբ ռայաթների տեղափոխությունները տարաձայնություններ էին առաջացնում տարբեր գյուղական համայնքների միջև, և երբ բարդություններ էին առաջանում պետական հարկերի գանձման գործում։ Պարզ և նաև, որ թեև առանձին բարենպաստ պայմաններում կամ երկուստեք շահավետ իրադրու-

---

10 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1 գ, վավ. 376, թղթ. 2ա, վավ. 54, 69, 70ա 70բ, 70 գ, թղթ. 2բ, վավ. 107ա, 107բ և այլն։

թյան մեջ կարող էին տեղի ունենալ ռայաթների տեղափոխություններ, սակայն գոյություն ունեցող օրենքը միշտ էլ հնարավորություն էր տալիս կալվածատիրոջը և հատկապես թիուլդարներին՝ հետապնդելու այն ռայաթներին, որոնք առանց ֆեոդալի կամ կալվածատիրոջ համաձայնության կփորձեին լքել իրենց համայնքը և հեռանալ նրանց տիրապետության տակ գտնվող գյուղերից։

Ստորև հրապարակում ենք հիշյալ հրովարտակի հայերեն թարգմանությունը, որոշ սոցիալական և հարկային տերմինների համառոտ բացատրությամբ, տալով նաև պարսկերեն բնագրի լուսանկարը։

Սեֆյան Շահ Սուլթան—Հուսեյնի հիջր. 1122 թ. զիկա'դա ամսին (1710 թ. դեկտ. 22—1711 թ. հունվ. 20) հրապարակված հրովարտակը

(ՀՍՍՀ Միհիսարների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ—«Մատենադարան», կաթողիկոսական դիվան, թղթ. 1 թ. վավ. 234, բնագիր. մեծ, 44×18 սմ. գիր՝ շիքասթե—նաստա'լիկ)

Նա է։
Իշխանությունն աստծունն է։

Շահ Սուլթան—Հուսեյնի կնիքը

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

Ներկայումս Թուման-ե Նախիջևանի[1] *մահալներից Դարաշամ[բ] գյուղի քրիստոնյա ռայաթները խնդրարկու եղան՝ հայտնելով, որ քանի տարի է ինչ վերոհիշյալ գյուղի ռայաթներից հետևյալ 15 ընտանիքները.*

Եսայի	*1*	*ընտանիք*	*Սարգիս*	*1*	*ընտանիք*
Մարգար	*1*	*»*	*Անանիա*	*1*	*»*

---

[1] *Նախիջևանի գավառն իր շրջակայքով այսպես սկսեց կոչվել իլխանական տիրապետության շրջանում։ Երբ կայսրության ընդարձակ երկրամասերը ըստ այնտեղից հավաքագրվող ռազմիկների թվի բաժանված էին առանձին թուման-ների։ «Թուման» մոնղոլերեն նշանակում է 10 000։*

Մանգասա՞ր	1	ընտանիք	Թորոս	1	ընտանիք
Մարտիրոս	1	»	Հուսիկի որդիները	2	»
Անդրեաս	1	»	Բաբաջան	1	»
Հարութ	1	»	Պողո՞սի որդին	1	»
Առաքել	1	»	Վարդան	1	»

ցրվել են ու գնացել բնակություն են հաստատել հիշյալ մահալի Աստապատ գյուղում, որը թիուլ է նշանակված խասսե-յե Շարիֆեի[2] կառավարչության դուլամների[3] յուզբաշի[4], արքայի մերձավորներից Մուհամմադ—Իբրահիմ բեկին: Այս միջոցում, նրանք իրենց մալոջհաթը[5], ջիզյան[6] և դիվանական պարտավորությունները[7] այնտեղում, հատուցում էին ըստ իրենց բաժնի: Իսկ այժմ հիշյալ գյուղի զաբիթը[8] արգելք է հանդիսանում և չի թողնում, որ նրանք մալոջհաթը, ջիզյան և դիվանական պարտավորությունները հատուցեն իրենց (Դարաշամբի համայնքին):

Խնդրեցին որպեսզի Ջուխուր—Սա'դի[9] բեկլարբեկիի անունով սրբազան հրովարտակ հրապարակվի և կարգադրվի որ հիշյալ համայնքին, որտեղ էլ որ նրանք բնակվելիս լինեն, գաղթեցնի և ուղարկի իրենց իսկական վայրը, որտեղից հիշյալ մահալի մյուս

---

2 Արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները կոչվում էին «խասսե-յե շարիֆե» (սրբազան խասսեր): Այդ հաստատությունը ուներ հատուկ կառավարչություն, որ կոչվում էր «սարքար-ե խասսե-յե շարիֆե»:

3 Շահի արքունի գվարդիայի զինվորներ.

4 Ադրբեջաներեն հարյուրապետ.

5 Պետական հիմնական հենտա-հարկը, որ գանձվում էր բոլոր մշակելի հողերից, այգիներից, ջրաղացներից, ձիթհանքերից և այլ եկամտաբեր ստացվածքներից:

6 Ոչ մուսուլման ռայաթներից գանձվող գլխահարկ, որ կանխիկ դրամով գանձվում էր յուրաքանչյուր չափահաս աշխատունակ տղամարդուց:

7 «Հոկուկ-ե դիվանի» կամ «Թաքալիֆ-ե դիվանի» ընդհանուր տերմինով էին կոչվում ռայաթների բազմազան պարտավորությունները պետության նկատմամբ:

8 «Զաբիթ» էին կոչվում պետական հարկերի կապալառուները, որոնք նախապես որոշ գումար մուծելով պետական գանձարանը, իրավունք էինք ստանում տվյալ հարկատու օբյեկտի հարկերը գանձելու:

9 Արարատյան երկիրն այսպես սկսեց կոչվել 14-րդ դարի վերջերին և 15-րդ դարի սկզբներին այնտեղ իշխող Ամիր Սա'դի անունով «Ջուխուր-Սա'դ» նշանակում է «Սա'դի փոս», հայկական աղբյուրներում՝ «Սահաթա փոս» կամ «Երկիրն Սահաթու»:

հայ ռայաթների կարգով, սրանք ևս կատարեն իրենց մութաալջեհաթին[10] ու դիվանական պարտավորությունները։

Աղերբայջանի ավարեջի[11] կառավարչությունից հաստատեցին, որ Թոմանե-Նախջևանի Դարաշամ [բ] գյուղի մալոջհաթը, որոշակի գումարով մատյանում ի մի է բերված և հատկացված է ղուշինների[12] և այլոց համեմատելին[13]։

Իսկ անջատված հասարկության վերաբերյալ, ըստ «Գերագույն խոսքի»[14] որոշված է, որ եթե որևէ վայրի հողագործ մուսուլման ռայաթները, որոնք անջատվելով գնում են բնակության հաստատում այլ վայրում և այդ վայրում մալի ու դիվանական պարտավորությունների ենթակա որևէ բան չեն ունենում, և այդ անջատումից դեռևս տասներկու տարի անցած չի լինում, պարտավոր են վերադառնալ իրենց նախկին բնակության և վարուցանքի վայրը, մյուս ընկերների հետ միասին իրենց պարտավորությունները կատարելու։ Իսկ եթե տասներկու տարին անցած լինի, ոչ ոք իրավունք չունի նրանց այդ վայրից տեղափոխելու իրենց նախկին [բնակա]վայրը։ Իսկ մահալների հողագործ հայ ռայաթների, ցեղերի և արբաբների մասին «Գերագույն խոսք» նկատի չի առնված։ Դրա համար էլ կարգադրեցինք, որպեսզի Դարաշամ[բ]ում բնակվող և վարուցանքով զբաղվող այն հայ ռայաթները, որոնք այդ վայրից հեռացել և գնացել բնակության են հաստատել այլ վայրում, այդ տեղից քոչեն և գան նախկին բնակավայրը՝ մյուս ընկերների հետ միասին, այդ վայրի ներքո կատարելու իրենց, մալի և ջիզյայի պարտավորությունները։

---

10 Ընդհանուր հարկային տերմին է, որի տակ սովորաբար հասկացվում էին մեծ մասամբ կանխիկ դրամով գանձվող հարկերը։

11 Պետական հարկերի գլխավոր հաշվապահություն։ Ավարեջի հաշվապահական մատյանները կոչվում էին «դավթար-և ավարեջ», որոնց մեջ մանրամասն հաշվառման էին ենթարկված յուրաքանչյուր հարկատու օբյեկտից ստացվող հարկերը։

12 Թագավորական հեծյալ գվարդիայի զինվոր։

13 Նշանակում է «ամենամյա»։ Դա ռոճիկների հատուցման այն ձևն էր, ըստ որի զինվորականությունն ու պետական պաշտոնյաները իրավունք էին ստանում, ցնոր տնօրինություն, ամեն տարի նույն վայրի հարկերի հաշվից ստանալու իրենց ռոճիկները։

14 «Գերագույն կամ բարձրագույն խոսք» անվան տակ պետք է հասկանալ մուսուլման բարձրաստիճան հոգևորականության՝ շեյխ-ուլ-իսլամների, իմամների, մուֆթիների և օրենսգետ մուշտեհիդների կողմից տարբեր ժամանակներում տրված վճիռներով կամ ֆեթվաներով սահմանված և գործադրության հանձնարարված օրենքները։

Այդ գործում պատշաճ օժանդակություն ցույց տալու և որևէ մեկի կողմից ընդդիմություն թույլ չտալու պարտավորությունը դրվում է Ջուխուր—Սա'դի բարձրաստիճան բեկլարբեկիի վրա, որպեսզի [վերջինս] հատուկ մեկին նշանակի, որը գնա և ստուգելուց հետո հիշյալ ցրված համայնքին գաղթեցնի ու բերի իրենց նախկին բնակավայրը։

Եվ թող այս համարեն իրենց պարտականությունը։

Գրվեց 1122 թ. զիկա'դա ամսին. (1710 թ. դեկտ. 22—1711 թ. հունվար 20)։

Հայ: Սուքիաս — Հոսանքների Հրովարտակը

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 1496 ՁԵՌԱԳՐԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Մաշտոցի անվան Երևանի մատենադարանի № 1496 ձեռագիրը[1] *վաղուց էր գրավել մեր ուշադրությունը։ Այն օսմանյան թուրքերի պատմության է, գերազանցապես նրանց վարած պատերազմների, ինչպես նաև այդ պատերազմների հետ չծորդվող տարբեր ժողովուրդների և պետությունների պատմությունը։ Թերևս այս է պատճառը, որ նշված ձեռագրի ընձեռած տեղեկություններն արդեն մտել են գիտական շրջանառության մեջ և առիթ տվել տարբեր ուսումնասիրողների կարծիք հայտնել նաև հեղինակի ժամանակի մասին։ Մեր մի հոդվածում ձեռագրի գրչությունը համարել էինք 17—18-րդ դարերի*[2]*։ Հ. Անասյանը գրում է. «Նրան (Հակոբ Կարնեցուն—Վ. Հ.) ձայնակցում են ժամանակակից հիշատակարանները։ Մի անանուն հեղինակ 1646 թվականին գրում է թուրքական փաշաների կեղեքումների մասին»*[3] *և բերում է համապատասխան վկայությունը։ Հետևելով այս վարկածին նույնը*

---

[1] *Ձեռ. ունի. 329 թերթ, մեծությունը՝ 31×21, նոտրագիր, միասյուն, թուղթ, կաշեպատ կազմով։ Հիշատակարան չունի, ժամանակը, գրիչը և տեղը անհայտ։*

[2] Армянские источники об Украине и украинцах *(տե՛ս* «Исторические связи и дружба украинского и армянского народов» *ժողովածուում՝* Ереван, 1961, стр. 212 прим. 4)։ *Ավելի ուշ, մեր մի այլ հոդվածում, չընդունելով այդ վարկածը, սույն գործի հեղինակ համարել էինք Գեորգ Պալատցուն (1737—1812 թթ.)։* Армянские источники об Украине и украинских городах, *տե՛ս* «Исторические связи и дружба украинского и армянского народов» *ժողովածուում* (Киев, 1965, стр. 73) *որը, ինչպես ցույց կտանք ներքևում, նույնպես սխալ է։*

[3] *Հ. Ս. Անասյան, 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 37։*

կրկնում է նաև Մ. Զուլալյանը[4]։ Ուրեմն, այս պատկերացմամբ № 1496 ձեռագրի հեղինակը 17-րդ դարի անձնավորություն է։ Ավելի վաղ, իր մի աշխատության մեջ Հ. Նաջարյանը թեև որոշակի ոչինչ չի ասում հեղինակի ժամանակի մասին, բայց ձեռագրից նրա մեջբերված մի շարք վկայությունները մատուցված են այնպես, որ ընթերցողը եզրակացնում է, որ նա ևս վերոհիշյալ կարծիքին է[5]։ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերի ցուցակ կազմողները հեղինակի ժամանակի մասին արդարացիորեն ոչինչ չեն նշում, իսկ ձեռագրի գրչությունը դնում են 18-րդ դարում[6]։

Ձեռագրի հեղինակի ժամանակի մասին արտահայտած այդ կարծիքները ճիշտ չեն։ Քանի որ սույն ձեռագրի պարունակած նյութերը խիստ ուշագրավ են և հեղինակի ժամանակի մասին հետագայում էլ կարող են կրկնվել այսպիսի թյուրիմացություններ, ուստի այստեղ կքննենք նշված ձեռագրի բովանդակության, հեղինակի և նրա ժամանակի հարցերը։

Ձեռագիրն ունի «Պատմութիւն Օսմանցւոց» վերնագիրը (էջ 1ա)։ Այս աշխատությունը բաղկացած է 13 գլխից, որոնք հեղինակը անվանում է «գիրք»։ Բացառությամբ երկրորդից և երրորդից, մնացած գրքերն ունեն իրենց վերնագրերը[7], օրինակ «Յիշատակք պատմութեանց ինքնակալութեան Օսմանցւոց. գիրք առաջին» (էջ 1ա), «Յիշատակք պատմականք զարքայից Օսմանցւոց, գիրք չորրորդ» (էջ 86ա), «Յաղագս յիշատակի պատմութեանց կայսերացն Օսմանցւոցն, գիրք հինգերորդ» (էջ 113ա), «Յիշատակարան և պատմութիւն թագաւորացն Թուրքաց յամէն Քրիստոսի ՌՇՀԴ (1574). գիրք ութներորդ» (էջ 206 բ) և այլն։ Իսկ վերջինը՝ 13-րդ գիրքը վերնագրված է «Յիշատակարանք պատմականք զարքայիցն Օսմանցւոց. գիրք երեքտասաներորդ և վերջին» (էջ 312 ա)։ «Եւ վերջին» արտահայտությունը ցույց է տա-

---

4 Մ. Կ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 95։

5 Հ. Խ. Նաջարյան, 16-րդ դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տարագրությունը, Երևան, 1959, էջ 8, ծանոթ. 1, էջ 15—16, 20, 64, ծանոթ. 3։

6 «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի» հատ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյրունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1965, էջ 567։

7 Երկրորդ և երրորդ գրքերը վերնագիր չունեն, դրված է միայն գրքի հերթական համարը, այսպես «Գիրք երկրորդ» (էջ 31ա), «Գիրք երրորդ» (էջ 57բ)։

լիս, որ ձեռագրում շարադրված նյութը ավարտվում է 13-րդ գրքով, հետևապես այս աշխատությունը մեզ հասել է լրիվ:

Առաջին գրքի 1 ա—6 ա էջերը հանդիսանում են աշխատության Առաջաբանը: Այստեղ հեղինակը համառոտակի խոսում է թուրքերի էթնոգենեզի մասին, ստուգաբանում «թուրք» բառը, համառոտակի նշում նրանց տիրապետության սահմանները, խոսում թուրքերի կրոնի և ազգագրական որոշ նյութերի (հանդերձանքի) մասին: Ապա շարադրում է աշխատությունը գրելու դրդապատճառները:

Աշխատությունը սկսվում է Օսման I-ից՝ 13-րդ դարի վերջից և ավարտվում Իբրահիմ I-ի շրջանով՝ 1646 թ.:

Աշխատության ժամանակագրական հենքը հանդիսանում է սուլթանների հաջորդական կարգը և առանձին գրքերում սուլթանների գործունեությունը տարբեր չափով է լուսաբանված: Այս առումով հետաքրքիր են 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ գրքերը: 1-ին և 11-րդ գրքերում խոսվում է մի քանի սուլթանների մասին, օրինակ առաջին գրքում գրում է Օսման I-ի, Ուրխանի, Սուլեյմանի[8], Մուրատ I-ի, Բայազիդի, Օսման II[9], Մուսայի[10], Մահմեդ I-ի մասին, 11-րդ գրքում՝ Օսման III Մուստաֆայի և Մուրադ IV-ի մասին: Այս երկու գրքերում նյութը շարադրված է առանձին ենթավերնագրերի տակ, որոնց համար օգտագործել է սուլթանների անունները, օրինակ՝ Օսման, Ուրխան, Սուլեյման և այլն: Իսկ մյուս դեպքում մի սուլթանի գործունեությունը լուսաբանված է մի քանի գրքերում, օրինակ, Սուլեյման I-ի ժամանակաշրջանի մասին գրում է 4-րդ, 5-րդ և 6-րդ գրքերում, իսկ նրա հաջորդ Սելիմ II-ի մասին՝ 7-րդ և 8-րդ գրքերում և այլն:

Աշխատության մեջ շարադրված հարցերը շատ հաճախ ներքին օրգանական կապ չունեն միմյանց հետ, դրանք սկզբնաղբյուրներից վերցրած և ժամանակագրական հաջորդականությամբ շարադրված փաստեր են: Այդ է պատճառը, որ այս գործը թեև բավական ընդարձակ է, այնուամենայնիվ կրում է ժամանակագրության բնույթ: Դրանում համոզվելու համար մի երկու օրինակ,

---

8 Այս սուլթանը, որ հանդիսանում էր Ուրխանի անդրանիկ որդին, չի նշված С. Лэнь—Пул-ի մոտ (տե՛ս Мусульманские династии, СПб, 1899, էջ 166):

9 և 10 Այս երկու սուլթանները ևս բացակայում են С. Лэнь—Пул-ի մոտ (տե՛ս նույն տեղում, էջ 166):

11 Սա պատմական գրականության մեջ ընդունված Օսման II է (1618—1622 թ.):

1622—1625 թթ. միջոցում հեղինակը տեղեկացնում է կազակների և թուրքերի մի կռիվը, ուր նկարագրում է կազակների նավերը։ Դրանից հետո 1626 թ. տակ նշում է Կ. Պոլսում տեղի ունեցած մի դժգոհության և հայերից 5 վաճառականների գլխատման մասին։ Այնուհետև նշում նոր դավադրությունների, կաշառակերությունների և բռնագրավումների մասին[12], իսկ 1628 թ. դարձյալ կազակների մի ասպատակության մասին և այլն։

Աշխատությունը ներկայացնում է գրեթե Օսմանյան թուրքերի վարած պատերազմների ամբողջ պատմությունը՝ կապված մեծ մասամբ Եվրոպայում և Ասիայում կատարված նրանց նվաճումների հետ։ Ահա այս առնչությամբ էլ հեղինակը տալիս է հետաքրքիր տեղեկություններ թուրքերի կողմից նվաճված կամ նվաճման նշանախից դարձած ժողովուրդների մասին, ընդ որում, այդ տեղեկությունները չեն վերաբերում միայն պատերազմական գործողություններին կամ դիվանագիտական բանակցություններին, այլև ավելի հին դեպքերի կամ երկրի բնական պայմաններին և ազգագրական առանձին հարցերի։ Այս բնույթի մանրամասն տեղեկություններ կան հունգարների, լեհերի, ուկրաինացիների, ռուսների, մոլդավների և այլ ժողովուրդների, ինչպես նաև Վենետիկի հանրապետության, Հռոմի պապերի և իր՝ Թուրքիայի ներքին կյանքի մասին։

Այդ տեղեկությունները շատ հաճախ տրված են այնպիսի մանրամասնություններով, երբեմն կենցաղային այնպիսի մանրուքներով, որ թվում է թե հեղինակն իր նկարագրած դեպքերին ոչ միայն ժամանակակից է, այլև ականատես։ Ահա նման տեղեկություններից մի քանիսը.

1. Իբրահիմ I-ի մասին նա գրում է. «Իպրահիմս այս էր արի Հ (70) ամեայ, սակայն սպոռամարմին և տկարամիտ, որ զի յերկար կապանացն լքեալ և տկարացեալ էր և անյարմար կառավարութեան։... Իպրահիմն էր կարճահասակ, չեչոտ երես և կզային, սակաւահեր, թխամորթ, հերքն փշանման, նիհար և յար տրտում. և էր դիւալլուկ՝ աննկանէր իբրև զմեռեալ և փրփրայր...ոչ կարէր նստիլ ի ձի, զի աննկանէր յերկիր, լլկեալ ի դիւէն և զի բնաւ ոչ էր կրթեալ նստիլ ի ձի, վասն որոյ խորհէին զնա նախ վարժել. զայս ամենայն առնէր վեզիրն»[13]։

---

12 էջ 291 բ—294ա։

13 էջ 312 բ։

2. Խոսելով 1520/21 թվերին խաչակրաց արշավանք կազմակերպող ոմն Թովմաս արքեպիսկոպոսի մասին, հեղինակը գրում է. «Թովմաս արհիեպիսկոպոսն Ստրօկօնիայու... զոր ստացաւ ի տաճկաց որդի Լէօնէ պխաչակրութիւն լիակատար ներողութեան այնոցիկ, որք գնային ի պատերազմն սուրբ, հաւաքեաց զբազում դրամս ի հաւատացելոցն, սակայն ոչ առանց օգտի ինքեան. դիմեցին առաւել նախանձայոյզքն և այլք սակս ագահութեան, այսինքն ըղձիւ աւար առման...: Քառասուն հազար մարդիկք գումարեցան ի մէջ միոյ ամսոյ, ըստ մեծի մասին գիւղականք և գեհիկք, որք թոյլատուութեամբ աղնուականացն թողեալ զվարելն զարտորայս դիմէին առ բանակն, բայց տրտնջէին ի խստութենէ տեառց, ուստի կշտամբեաց զնոսա, այսինքն զաղնուականս, վասն նեղելոյ զռամիկս[14]»:

3. «Արդարեւ ոչ զարհուրեալ սասանէի եթէ միայն ժողովուրդք կամ քահանայք ևս ուրանային զՔրիստոս, այլ պապանձի լեզուիմ և չկարեմ արտաբերել, որպէս եպիսկոպոսք ոչ կարացին վասն յուսոյ արքայութեան և սիրոյն Քրիստոսի հեղուլ զարիւնս իւրեանց: Դիցուք թէ զինուորքն Թուրքաց իցեն երեք հարիւր հազարք, մեք աստ ի քրիստոնէութեան յարգանդում սնուցանեմք հինգ հարիւր հազար աթեղայս կամ վանականս, որք կարեն և աղօթիւք շիջուցանեն զբարկութիւնն աստուծոյ, որ ի վերայ մեղաց և անօրէնութեանց մերոց և կարեն սուր ի ձեռին ընկճել զանբարտաւանութիւնն Թուրքաց և յետս ընկենուլ զլուծ ծառայութեան նոցին ի պարանոցէ հաւատացելոցն»[15]:

Եվ այսպես տասնյակ վկայություններ:

Ինչպես երևում է աշխատության ուսումնասիրությունից, հեղինակը օգտվել է բազմաթիվ սկզբնաղբյուրներից: Թե ինչ աղբյուրներ է օգտագործել նա, հանվանեն չի նշում, սակայն տարբեր առիթներով և ընդհանուր ձևով հեղինակը հիշում է իր օգտագործած աղբյուրների մասին:

Ներածականում նշելով 800 տարվա՝ 6—13-րդ դարերի եղելությունների մասին, հեղինակը գրում է. «Վաստակեալ առարին գրիչին, այսինքն ծանրագոյն պատմիչ հեղինակաց. մեզ չէ փոյթ գրել կամ նշանակել, այսինքն պարզապէս և զանազանաբար սակս ծանուցանելոյ ճառել, այլ բաւական է միայն յօնօ առնել

14 Էջ 73 ա:
15 Էջ 168 բ:

համառօտաբար զսարաս և զկարգ ժամանակացն և կարևոր ճանապհացն մինչև ցամն փրկութեան զամս ՌՅ (1300)...[16]» (ընդգծումն ամենուր մերն է—Վ. Հ.):

Մի այլ դեպքում ամփոփ նշելով 1453 թվականի Կ. Պոլսի անկումը, դարձյալ գրում է. «...Վասն որոյ եթէ կամիցեր ոք առնել զլայնածաւալ պատմութիւնն իրաց, ապաքէն լինէր կարի երկար, իսկ մեք աստանօր փախչիմք ի ձանձրութենէ ընթերցողաց, գոլով բաւական գիտել միայն համառօտաբար զիրս պատահեալս ժամանակաւ, ուստի միայն առտահանեմք զծուծն կամ զգայացութիւնն...»[17]:

Խոսելով Ուրխանի որդի Սուլեյմանի մասին, որն ըստ հեղինակի թագավորել է 1348—1350 թթ.[18], գրում է. «Սա զի աւագ էր ծննդեամբ կամ անդրանիկ, նստաւ յաթոռ թագաւորութեան յաջորդ հօրն իւրոյ և եղև երկրորդ ինքնակալն Օսմանցւոց ըստ բանի հեղինակացն յունաց պատմողացն զայցանէ, տարբերին ի միմեանց պատմիչ հեղինակքն այլազեաց ի պատմելն զկեանս, զվարս նաև զմահն Սիսէյմանիս այսորիկ...[19]»

Խոսելով 1580 թ. խաղաղության դաշինք կնքելու նպատակով Կ. Պոլիս եկած պարսկական մի դեսպանության մասին, գրում է. «Գային ի հաստատել զքանի մի ամ զանց առնելն կամ ի բաց թողուլն զտալն զպատերազմ միմեանց, զոր տաճկեվար մեյլ ասեն և իդալիաներէն թրեկվայ, այս ի կախ պահել զզէնս»[20]:

Մի դեպքի կապակցությամբ գործածում է թուրքերեն ասացվածք «Եա տէվլէթ պաշայ, եա գուդկուն լէշէ»[21]: Մի այլ տեղ հեղինակը թվելով Ուկրաինայի բնական հարստությունները և բարեմասնությունները, ավելացնում է. «Արդ՝ զայսց պատմութեանց լիակատարն ընթեռնելի է ի գիրս բալատինաց»[22]:

---

16 էջ 6 ա:

17 էջ 29 ա:

18 «Յամի Քրիստոսի ՌՅՆԸ (1348) մեռաւ Օրխանն յետ ԻԱ (21) ամ թագաւորելոյն, ծերացաւ հասակաւ, այլ ոչ և սրտիւ....: Եթող սա զերկուս զաւակս՝ զՍիւլէյման և զՄուրատ» (էջ 8 դ): Այս Սուլեյմանը «զորմէ ասեն պատմիչքն յունաց, զամս երկուս միայն թագաւորեալ» (էջ 8 բ):

19 էջ 8ա:

20 էջ 223 բ:

21 էջ 264 բ:

22 էջ 284: Տե՛ս նաև Օվիդոսի աքսորի հետ կապված պատմությունը և Օվիդոպոլ քաղաքի մասին եղած տեղեկությունը 302-րդ ա էջում:

Այս բոլոր մեջբերումներից կարող ենք եզրակացնել, որ հեղինակը իմացել է հունարեն, լատիներեն, իտալերեն, թուրքերեն, գուցե և այլ լեզուներ։

Հեղինակը սոսկ բանաքաղ չէ, օգտագործած նյութի նկատմամբ նա երբեմն հանդես է բերում քննադատական վերաբերմունք, թեև այդ դեպքերն իրենից հետու են մի քանի հարյուր տարով։ Սրամիտ դիտողություններով, ժողովրդական ասացվածքներով և պատկերավոր արտահայտություններով հեղինակը համեմում է իր շարադրանքը։ Աչքի է ընկնում հեղինակի հարուստ կենսափորձը և իր առջև դրված նյութին քաջածանոթ լինելը, օրինակ. թուրքերը որոշ աշխատանք տանելով Վոլգա և Դոն գետերը ջրանցքով միացնելու միտումով, հայտարարում են, թե այդ արվում է առևտրական նպատակներով՝ Պարսկաստան գնացող վաճառականների ճանապարհը կարճացնելու համար, սակայն հեղինակը այդ վարկածը համարելով կեղծ, գրում է. «... Ստոյգն է, զի դիւրացուցանիցէին և բանայցէին զեանապարհ նաւելոյ ի Սեաւ ծովուն ի Սպիտակ *(իմա Միջերկրական —Վ. Հ.)* կամ Կասբից ծովն և ևս ապա սակս դիւրաւ *տիրապետելոյ զծովափեայս Մոսկովու և Թաթարաց և Պարսից և անտի դիւրացուցանել զառումն այնմիկ, որ ընդ ցամաքու դժուարագոյն լինի*»[23]։

Շատ տիպական է քննարկված թուրքական տիրապետությունը և ենիչերիների էությունը. «Ամենայն ապրանք թուրքացն բռնութեամբ է և անիրաւութեամբ, ուստի փաշայքն պարարտանան կար զօրութեամբ քրիստոնէից և հրէից, իսկ թագաւորն դիրանայ ընչիւք փաշայիցն, զոր օրինակ, առուքն ընուն և առատացուցանեն զգետս, իսկ գետքն հուսկ յետոյ իջանեն ի ծովն և կորուսանեն զգոլն ևս իւրեանց և զհամբաւ ջրոյն ևս»[24]։ Թուրքերը «բնաւ ոչ ախորժէն լռել ի պատերազմ. վասն որոյ երբ ոչ ունին զպատերազմ, պատերազմին ի միջի իւրեանց։ Արդ՝ թագաւորութիւնքն նման են ահագին գետոց, որ շարժմամբ պահպանեալք լինին, զի արգելումն ջրոց է ապականութիւն նոցին. զի եթէ շարժի՝ ընծայէ զմեծամեծ ձկունս, ապա թէ ոչ՝բերէ զգորտս. վասն այսորիկ սիրեն էնիչերիք զպատերազմունս...[25]»։

Նշելով մահամերձ Մուրատ IV-ի կեղծ բարեսրտությունը և ողորմածությունը դեպի աղքատները, հեղինակը նշում է. «Զայս

---

23 էջ 213 ա։

24 էջ 313 բ։

25 էջ 57 ա, համմտ. նաև էջ 137 աբ։

առնէ ըստ օրինակի սեղանաւորաց, վաշխառուաց, հացագործաց և ոսկերչաց, որք տան միով ձեռամբք, զոր գողանան երկու ձեռամբք, զոր անիրաւաբար յափշտակեն և աւազակաբար կողոպտեն՝ նուիրեն Աստուծոյ, վասն հոգւոցն ննջեցելոց, յորոց գարշի Աստուած»[26]: Նույն Մուրատ IV-ի քրոջ ամուսին Խալիլ փաշայի պաշտոնազրկման և նրանից 500.000 ոսկի բռնագրավելու մասին խոսելիս հեղինակը ավելացնում է. «Տես, որպէս արքայքն թողուն զպաշտօնեայս հարկանել և հիւթաւորիլ որպէս զսպունգ, և ապա քամեն զնա բռնցի և թողուն զնա ցամաք և դատարկ»[27]: Իսկ սուլթանության կենտրոնում և այլուր վերջ չունեցող դավադրությունները, նենգությունները և կաշառակերությունները հիշելիս հեղինակը գրում է. «Թագաւորութիւնն Թուրքաց է միշտ սպանդանոց»[28] կամ «Կոստանդնուպօլիս է շուկայ մի ուր վաճառեն և գնեն զգլուխս մարդկանց»[29]:

Հեղինակը դժգոհում է քրիստոնյա իշխաններից, կշտամբում նրանց, որոնք չեն կարողանում միասնական կերպով հանդես գալ Թուրքերի դեմ, վերջիններիս տիրապետության տակ հեծող քրիստոնյա ժողովուրդներին ազատագրելու համար: Ահա թե ինչ է գրում լեհերի և ռուսների միմյանց դեմ շարունակ պատերազմելու մասին. «Երբեմն երբեմն պատերազմին ի մէջ իւրեանց որպէս աքաղաղք վասն միոյ հաւու, կռուին և վիրաւորեն զմիմեանս, այսպէս և սոքա միոյ ևեթ աւազանի ծնունդ և նոյնոյ մօր զաւակք՝ այս է սրբոյ եկեղեցւոյ. և սակայն զմիմեանց զաչս հանեն և ջանան ծծել զարիւնս. և այս ամենայն ի վերայ չորս կորեկի լինի»[30]: Այնուհետև. «... անգութ և անխղճալի պատերազմ կամ հրդեհեալ բորբոքիւր մահաբեր մարտն ի մէջ երկուց ազգաց և իշխանութեանց, այսինքն Լեհացւոց և Մօսկոֆից, որք ի մէջ իւրեանց կազմելով զսպանդանոց բաժանելոյ զմիսն յոսկերաց միմեանց, տային զառիթ մեծի ուրախութեան Թուրքաց»[31]: Թուրքերի համաչնապարփակ տիրապետության ոչնչացումը հեղինակը տես-

---

26 էջ 311 ա:

27 էջ 293 ա:

28 էջ 299 բ:

29 էջ 303 բ: Հրեա բժիշկներից մեկը թունավորում է Բայազեդ II-ին: Հեղինակը բժշկի վարմունքը այլաբանորեն բնութագրում է այսպես. «Հաւատաց խեղճն թէ թաղելով զմատնիչն թաղի և մատնութիւնն» (էջ 57 ա):

30 էջ 321 բ:

31 էջ 212 ա:

նում է «ընդհանրական խաղաղութիւնն կամ հաշտութիւնն ամենայն քրիստոնէից ազգաց և թագաւորաց»[32]։

Այսպիսով, այս մեջբերումներից երևում են հեղինակի ոչ միայն հակասուլթանական տրամադրությունները, այլև սուլթանական Թուրքիայի անլուր հնշման լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրման քաղաքական ծրագիրը՝ ստեղծել Եվրոպայի քրիստոնյա ժողովուրդների հակաթուրքական կոալիցիա։ Դա մի գաղափար էր, որը երկար ժամանակ իշխում էր քրիստոնյա ժողովուրդների մտայնության վրա ապարդյուն կերպով։

Այժմ հեղինակի ժամանակի մասին։

Այս աշխատության ժամանակագրական վերջին եզրը, ինչպես նշեցինք վերևում, 1646 թիվն է։ Եվ ահա նշված տարեթվի տակ հունգարական իշխան Ռակոցիի մասին հեղինակը գրում է, թե ինչպես «կործանեցին զտունն Ռասկոցին և որդին փախեաւ ի Թուրքաստան, բայց որ ինչ մնացեալն է, ապա յիսրում տեղւոջ պատմեսցուք»[33]։ Այստեղից ենթադրում ենք, որ հեղինակն ապրել է 1646 թ. հետո էլ, թե ինչքան՝ ցույց կտանք ներքևում։ Երկրորդ՝ հեղինակը Ռակոցիի մասին գրել է մի առանձին տեղ և կամ 1646 թվից հետո հեղինակը շարունակել է իր աշխատության երկրորդ մասը՝ մինչև իր ժամանակները։ Մեզ հավանական է թվում վերջին ենթադրությունը, որովհետև հեղինակը, որի կյանքը հասնում է մինչև 18-րդ դարի վերջը և թերևս 19-րդ դարի սկիզբը, չէր կարող շատ մանրամասն գրել օսմանյան պատմություն և ավարտեր 1646 թվով, ուր ամբողջականացված չէ նույնիսկ Իբրահիմ I-ի ժամանակաշրջանը։ Մյուս կողմից՝ եթե կատարվել է հեղինակի խոստումը, նշանակում է այս աշխատության երկրորդ մասն առայժմ կորած է և կամ մեզ հայտնի չէ։

Աշխատության մեջ զարմանալի մանրամասնությամբ և բանիմացությամբ տրված է սուլթանների Կ. Պոլսի ապարանքների նկարագրությունը, ուր հեղինակը գրում է, թե այդ ապարանքները «երկրորդ Սիսլէյմանն հոյակապ և գերպայծառ արար[34]»։ Հայտնի է, որ Սուլեյման II-ը իշխել է 1687—1691 թթ.[35], նշանակում է հեղինակի ժամանակի հարցը ևս է գալիս մինչև 17-րդ դարի վերջերը։ Ավելին, այդ բաժնում հեղինակը, խոսելով սուլթանների

32 էջ 168 բ։

33 էջ 328 բ։

34 էջ 313 ա։

35 С. Лэнь Пул. Мусульманские династии, էջ 166։

անձնական կյանքի ու ապրելակերպի մասին, գրում է. Երրորդ Սելիմն, որ էր արբեցող, առանց ժամանակի ուտէր»[36]: Մեզ հայտնի է վերջինիս թագավորության տարիները՝ 1789—1807 թթ.[37]: Ուրեմն հեղինակի ժամանակի հարցը որոշակիորեն և հաստատ կերպով ետ է գալիս մինչև նշված ժամանակամիջոցը (տարեթվերի միջև ընկած ժամանակը): Այսպիսով, մեր հեղինակի կյանքի վերջին եղրը հասնում է 18-րդ դարի վերջերը, դուցե և 19-րդ դարի սկզբները: Այստեղից էլ կարելի է հետևցնել, որ սույն աշխատությունը հեղինակը գրել է, կամ որ ավելի ճիշտ կլինի ասել՝ ավարտել է 1789 թվականից հետո, մինչև 1807 թվականը:

Անհրաժեշտ է նաև նշել, որ աշխատության մեջ հաճախ Կ. Պոլիս ժամանած որևէ դեսպանի մասին հեղինակը նշում է. «ծկն ի Կ. Պօլիս»: Այս և այլ տվյալներ մեզ եզրակացնել են տալիս, որ հեղինակը ապրել ու գործել է Կ. Պոլսում[38]:

Սակայն ով է այս աշխատության անհայտ հեղինակը:

Ունենալով այս տեղեկությունները մատենադարանի № 1496 ձեռագրի հեղինակի և նրա ժամանակի մասին, մտաբերեցինք Գեորգ դպիր Պալատցուն (Տեր—Հովհաննիսյան Գեորգ, ծնված 1737 թ., մահացած 1812 թ.[39]), որը գործել է Կ. Պոլսում և մի քանի տեսանկյունով գրել օսմանյան թուրքերի պատմությունը: Վենտիկի Մխիթարյանների մատենադարանում պահվող Գեորգ Պալատցու աշխատությունների ցանկը հրատարակվել է «Բազմավէպ»-ում[40]: Այս երկու հեղինակները թեև ունեն ընդհանուր շրջա-

---

36 էջ 315 բ:

37 С. Лэнь Пул, Мусульманские династии, էջ 166:

38 Ի դեպ նշենք, որ մեզ հետաքրքրող ձեռագրի վերջին՝ 329 ա էջում գտնվում է հետևյալ հիշատակագրությունը. «Յիշատակարան պատմութեան Օսմանցւոյ նուիրեալ Ի Ստէփաննոսէ Խնդիրեան Փափազեանց ի գրատուն սրբոյ գահին էջմիածնի: Ընդ ձեռն. Տ. Տ. Մատթէոսի սրբազան կաթուղիկոսի և ծայրագոյն պատրիարքի ամենայն Հայոց: Ի 20-ն մայիսի 1859 ամի ի Կ. Պօլիս»: Իսկ 1 ա էջի վերևի աջ անկյունում դրված է Ստեփանոս Խնդիրեան Փափազյանցի կնիքը, որի վերևում գրված է. «Ստեփան Խնդիրեան Փափազեանց»: Վերևի ընդարձակ մեջբերումը ցույց է տալիս, որ ձեռագիրը մինչև 1859 թ. մայիսի 20-ը գտնվել է Կ. Պոլսում և եղել է Ստեփանոս Խնդիրյան Փափազյանցի սեփականություն: Այնուհետև ձեռագիրը բերվել է էջմիածին և ապա նկարագրվել Կարենյան ցուցակում 738 համարի տակ (տե՛ս Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ աթոռոյն էջմիածնի, Թիֆլիս, 1863, էջ 92):

39 Այվազյան Աբրահամ, Շար հայ կենսագրութեանց, Կ. Պոլիս, 1893, հատ. 1, էջ 11, 73:

40 1957 թ., № 7—8, էջ 166—170:

փելի մի քանի կետեր, բայց և այնպես նրանց չենք կարող նույնացնել։ Չենք կարող, որովհետև 1. «Բազմավէպ»-ում նշված Գեորգ Պալատցու աշխատությունների վերնագրերը և փոքրիկ մեջբերումները երբ համեմատում ենք մեր ձեռքի տակ եղած ձեռագրի ունեցածի հետ՝ նմանություն չենք գտնում։ Տարբեր են նշված նաև այս երկու հեղինակների աշխատությունների ընդգրկած ժամանակագրական եզրերը։ 2. Գեորգ Պալատցին հաղիվ թե այնքան մոտ կանգնած լիներ թուրքական արքունիքին, որ կարողանար այդչափ մանրամասն նկարագրել ոչ միայն արքունիքը, այլև սուլթանների ու պալատականների կենցաղավարությունը։ 3. Գեորգ Պալատցին դավանությամբ լուսավորչական էր, մինչդեռ մեզ հետաքրքրող ձեռագրի հեղինակը՝ կաթոլիկ։

Մեզ հետաքրքրող ձեռագրի հեղինակը շոշափելի կետեր ավելի շատ ունի մի այլ հեղինակի՝ Իգնատիոս Մուրաջա դ'Օսսոնի հետ։ Վերջինս ըստ Հովհաննես Հիսարյանի ծնվել է Կ. Պոլսում 1740 թվին, Թոսունյան նշանավոր ընտանիքում[41]։ Իգնատիոս Մուրաջա, դ'Օսսոնի միջավայրի մասին ահա թե ինչ են գրում նրա կենսագիրները. «ուր Կ. Պոլսի (աղաղամաս Բերայում —Վ. Հ.) երեքտասներորդ դարու իտալեան (Ճենովայի ու Վենետիկի) գաղթականութենէն ի վեր բունած էր՝ մանաւանդ Վենետիկցւոց միջոցով՝ արեւմտեան տարազ ու կենցաղ մը բաւական նպաստամատոյց Արեւելքի մայրաքաղաքին մէջ եւրոպական զարգացում մը սնուցանելու։ Այդ զարգացումին գրկիռ կըլլային նաև Ֆրանչիսկեան ու Դոմինիկեան շրջուն քարոզիչներն և ուսուցիչները, ինչպէս և դեսպանական տարրերը, որ երկու դարէ հետէ Բերայի բարձանց վրայ սկսած էին օթևանիլ՝ Կ. Պոլսի դեսպանական օթարանին յարգն անցնելէն ետև»[42]։ Այս պայմաններում Իգնատիոս Մուրաջայ դ'Օսսոնի հայրը, որ Զմյուռնիայի շվեդական հյուպատոսն էր, իր զավակին տվեց «ընտիր կրթութիւն մը»[43] և Իգնատիոսը «ստացաւ արևե-

---

41 «Բանասէր» Կ. Պոլիս, 1851, հատ. Ա, էջ 15։ Տե՛ս նաև Հ. Մրմրյան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու, 1400 էն 1900, Կ. Պոլիս, 1909 էջ 77 ծանոթ. նույնի, Ստուերք հին դէմքերու, 1635—1900, Կ. Պոլիս, 1907, էջ 25։

42 Հ. Մրմրյան, Ստուերք հին դէմքերու, էջ 25, նույնի, Մասնական պատմութիւն..., էջ 77, ծանոթ. 1։

43 Հ. Մրմրյան, Մասնական պատմութիւն..., էջ 77, ծանոթ. 1, նույնի Ստուերք..., էջ 26։ Անհիմն է Հ. Թուրշյանի այն պնդումը, թե Իգնատիոսը ծնել է ոչ թե պատմաբանը, այլ պատմաբանի հայրը, նա գրում է. «Մուրաձեայ Իգնատիոսի Թոսունեանը... ոչ թե շվեդական թագավորական գործերի Պոլսո հա-

լեան լեզուներու և պատմութեանց վրայ մանրամասն ծանոթութիւններ»[44]: Իգնատիոս Մուրաջայ դ'Օսսոն նախ լինում է դեսպանութեյան թարգմանիչ, ապա «1782-ին եղաւ Շուէտի դեսպան ու անուանուեցաւ Ստպետ Վազայի կարգին»[45]: Պաշտոնական իր գործերին զուգընթաց «օրն ամբողջ ևօթը ժամ»[46] նա զբաղվում էր Թուրքիայի պատմութեյան, բանասիրութեյան զանազան հարցերի ուսումնասիրութեյամբ: Ի վերջո 1784 թ. մարտի 9-ից թողնում է Կ. Պոլիսը հաստատվում Փարիզում[47]: Ֆրանսերեն լեզվով և յոթ հատորով դ'Օսսոնը այստեղ գրեց և հրատարակեց 1787—1790 թթ. «Ընդհանուր պատկերը Օսմանյան կայսրութեյան» կոթողական աշխատութեյունը[48]: 1792 թ. լինում է Վենետիկի Մխիթարյանների վանքում, ուր Մ. Չամչյանի և Ղ. Ինճիճյանի օժանդակութեյամբ ուսումնասիրում և հավաքում է իրեն անհրաժեշտ նյութեր[49]: Հավանաբար այս ժամանակ էլ նորից եկավ Կ. Պոլիս, ներկայացավ սուլթան Սելիմ III-ին, հետո ունենալով իր աշխատութեյունը: Սուլթանն այդ բանի համար դ'Օսսոնին արժանացրեց մեծ պարգևի և բարձր պատվի[50]:

Հ. Մրմըրյանը գրում է հետևյալ հետաքրքիր փաստի մասին.

վատարմատարն է եղել կամ թե դեսպանորդը, այլ շվեդական հավատարմատար Իգնատիոս Թոսունյանի որդին... («Գրական թերթ» 19 հունվարի, 1968, № 3, (1414): Եվ նա այս տեղեկութեյունը վերագրում է Հ. Մրմըրյանին. «Ինչպես հայ վաճառականութեյան պատմութեյան իր ուրվագծերում հաղորդում է Հարութեյուն Մրմըրյանը»: Թե Հ. Թուրշյանը նկատի ունի վերջինիս «Թուրքահայոց հին վաճառականութիւնն և վաճառականք. 1740—1890» (Կ. Պոլիս, 1908) աշխատութեյունը, ապա այնտեղ գրված է. «Թոսունեանք, որոնց նախահայրերէն էր Իգնատիոս Մուրատճայ դ'Օհսըն՝ օսմանեան երեւելի պատմիչ մատենագիրը...» (էջ 35), Հ. Մրմըրյանի վերևում նշված երկու աշխատութեյուններում էլ ասվում է նույնը, հակառակ Հ. Թուրշյանի, և այդ աշխատութեյուններում չի նշված Իգնատիոսի հոր անունը: Նույն միտքը տես Հ. Հիսարյանի հոդվածում («Բանասէր» Կ. Պոլիս, 1851, հատ. Ա, էջ 15):

44 Հ. Մրմըրյան, Մասնական պատմութիւն..., էջ 77, ծանոթ. 1, նույնի Ստուերք..., էջ 26, «Բանասէր» (Կ. Պոլիս, 1851), հատ. Ա, էջ 15:

45 Նույն տեղում, «Բանասէր» (Կ. Պոլիս, 1851), հատ. Ա, էջ 15:

46 Հ. Մրմըրյան, Մասնական պատմութիւն..., էջ 72:

47 Tableau gènèral de l'Empire Othoman. t, I, p. VIII.

48 «Բանասէր» (Կ. Պոլիս, 1851), հատ. Ա, էջ 15: Այս աշխատութեյան I և VII հատորներն են գտնվում Երևանում, մյուսները չենք տեսել:

49 Հ. Մրմըրյան, Մասնական պատմութիւն...., էջ 78, նույնի, Ստուերք.., էջ 27:

50 «Բանասէր» (Կ. Պոլիս, 1851), հատ. Ա, էջ 15—16: Տե՛ս նաև Հ. Մրմըրյանի նշված երկու աշխատութեյունները, էջ 79, էջ 27:

«Իր հրապարակային ու մատենագրական վերջին անունն էր՝ Ասպետ Օսսոնի, և աս է պատճառն, որ եւրոպացիներն յոյն կանուանեն զինքը. Շուէտի մէջ առաւ Օսսոնի ասպետութեան այդ տիտղոսն ու պատիւը, ուրկէ իբրև լիազօր դեսպան եկած էր ի Կ. Պոլիս»[51]: Իգնատիոս Մուրաջայ դ'Օսսոնը մահանում է 1807 թ. օգոստոսի 27-ին[52]: «Ընդհանուր պատկեր Օսմանյան կայսրության» աշխատության ներածականում հեղինակն իր մասին գրում է. «Ծնված և դաստիարակված լինելով հենց երկրում՝ Կ. Պոլսում, իմ ամբողջ կյանքը նվիրված է եղել արքունիքին սերտ մտերմությամբ կապված [Բ.] Դրան հետ, ես ունեցել եմ քան որևէ մեկը հնարավորություն հաղթահարելու այնպիսի դժվարություններ և կատարել այն խնդիրները, որ դրել եմ այսօր իմ առաջ»[53]: Հեղինակի վկայությամբ վերևում նշված աշխատությունը բաղկացած է երկու մասից. առաջին՝ մահմեդական օրինադրություն և երկրորդ՝ Օսմանյան կայսրության պատմություն: Այնուհետև ներկայացնում երկու մասերում քննված հարցերը[54]:

Դ'Օսսոնը ժամանակին գտնվելով արքունիքում, նա հնարավորություն է ունեցել մի կողմից իրազեկ լինել կառավարական գործերին, մյուս կողմից ջանասիրությամբ կարդալ բնագրերը, խորամուխ լինել մանրամասներին[55]: Ավելին, նա հաղորդում է, որ սուլթանների և նրանց հարեմների մասին իրեն անհրաժեշտ տեղեկություններ մատակարարել են նաև պալատականները[56]:

Քաջ գիտենալով մի շարք լեզուներ (թուրքերեն, հայերեն, ֆրանսերեն, արաբերեն, պարսկերեն, լատիներեն և այլն), նա դրանք օգտագործեց օսմանյան Թուրքիայի ընդարձակ պատմության և մյուս աշխատությունների համար անհրաժեշտ նյութեր քաղելուն: Դ'Օսսոնի ֆրանսիացի կենսագիրը գրում է, նրա «պատմական գործերը, աշխարհագրական ծանօթութիւնները և միջին դարու կէս անծանօթ ազգաց վրայ տեղեկութիւնները հիշդ են, ու թարգմանած կամ քաղած քսանուչորս արաբացի, տաճիկ և պար-

---

51 Հ. Մրմրյան, Մասնական պատմություն...., էջ 79, նույնի Ստուերք... էջ 28:

52 «Բանասէր» (Կ Պոլիս, 1851), հատ. Ա, էջ 16, Հ. Մրմրյանի նշված երկու աշխատությունները, էջ 78, տողատակ, էջ 28:

53 Tableau gènèral de l'Empire Othoman, t. I, p. V.

54 Նույն տեղում էջ XI—XXXI:

55 Նույն տեղում, էջ VII:

56 Նույն տեղում, էջ IX,

սիկ հեղինակներէ»[57]: *Ավելացնենք, որ Համմերը, ինչպես հպդորդում է Հ. Մրմըրյանը իր «Օսմանյան կայսրութեան պատմութիւն» հանրահայտ աշխատության Ա հատորում օգտագործել է դ'Օսսոնի սույն աշխատությունը*[58]:

Նկատի ունենալով Իգնատիոս Մուրաջայ դ'Օսսոնի կյանքի և գործունեության ժամանակագրական սահմանները, նրա Կ. Պոլսում 44 տարի մնալը և թուրքական արքունիքին մոտիկից ծանոթ լինելու փաստը, թեև հայ, բայց հայ միջավայրից բավականին հեռացած ու կաթոլիկ լինելը, ինչպես նաև իր աշխատության մասամբ քաղաքական բնույթը, ենթադրում ենք, որ մատենադարանի № 1496 ձեռագրի հեղինակը Իգնատիոս դ'Օսսոնն է, իսկ № 1496 ձեռագիրը պետք է լինի դ'Օսսոնի նշված աշխատության երկրորդ մասը՝ օսմանյան Թուրքիայի պատմությունը սկզբից մինչև 1646 թ.: Սակայն այլ հարց է, թե № 1496 ձեռագիրը դ'Օսսոնի նշված աշխատության հայերեն թարգմանությունն է, թե վերաշարադրությունը:

---

57 «Բանասէր» (Կ. Պոլիս, 1851), հատ. Ա, էջ 16, տե՛ս նաև Հ. Մրմըրյան, Ստուերք..., էջ 28—29. Նույնի Մասնական պատմութիւն..., էջ 78, տողատակ: Սույն մեջբերումը կատարեցինք ըստ Հ. Մրմըրյանի բերածի:

58 Հ. Մրմըրյան, Մասնական պատմութիւն..., էջ 78, տողատակ, Նույնի Ստուերք..., էջ 26, տողատակ:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Վ. Ա. ԹԻԼՈՅԱՆ

Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի պատմության ուսումնասիրության տեսակետից եզակի հետաքրքրություն է ներկայացնում էջմիածնի վանական տնտեսությունը։ Այդ հետաքրքրությունը առիթում է ոչ միայն այն խոշոր քաղաքական դերը, որ էջմիածինը, որպես հոգևոր կենտրոն, խաղացել է հայ ժողովրդի կյանքում պարսկաթուրքական տիրապետության երկարատև ժամանակամիջոցում, այլև աչքի առաջ առնելով նրա վանական տնտեսության խիստ յուրատեսակ բնույթը։ Առավել ևս մեծանում է էջմիածնի տնտեսության նշանակությունը հետազոտողների համար այն իմաստով, որ Արևելյան Հայաստանի սոցիալական պատկերի վերաբերյալ փոքրիշատե ամբողջական տեղեկություն կարելի է ձեռք բերել հիմնականում վանական դիվանի պահպանած նյութերից։ Դրանք ոչ միայն հարուստ տեղեկություններ են հաղորդում 15—19-րդ դարերի էջմիածնի վանական հողատիրության վերաբերյալ, այլև բացահայտում են երևույթներ, որոնք տարբեր ձևով են մեկնաբանել հիշյալ ժամանակաշրջանի ագրարային հարաբերությունները ուսումնասիրող հեղինակները։ Նպատակ չունենալով անդրադառնալ այդ տարաձայնություններին, սույն հոդվածում շարադրում ենք 19-րդ դարի առաջին երեսնամյակի էջմիածնի տնտեսական վիճակի պատկերը և դրա հենքի վրա էլ կառուցում մեր եզրակացությունները։

Արևելյան Հայաստանի հողատիրական սիստեմի մեջ էջմիածնի վանական հողատիրությունը յուրահատուկ տեղ էր գրավում։ Վանքին պատկանող հողատարածությունները, գյուղերով հանդերձ, որպես սեփականություն շահական կառավարության կող-

մից շնորհված էին էջմիածնին ժառանգական իրավունքով, թեպետև ամեն մի նոր շահ պետք է հատուկ հրովարտակով՝ ողջամոլ վերահաստատեր այդ իրավունքը, դրա դիմաց համապատասխան վարձահատուցում ստանալով ընծայատվության, ավելի ճիշտ, կաշառատվության ձևով:

XIX դարի սկզբին էջմիածնի համար դժվարին պայմաններ ստեղծվեցին: Էջմիածնի տնտեսական և իրավական կացության վրա հատկապես ծանր անդրադարձավ Դավիթ-Դանիելյան երկարամյա գավազանակռիվը, որը ֆինանսապես հյուծեց վանքը: Արևելյան Հայաստանի տերիտորիայում տեղի ունեցած պատերազմական գործողությունները առավել ևս սրեցին ծանր կացությունը: 1804 թ. երևանյան ողջմարշալի ժամանակ Վաղարշապատից գաղթեց 210 ընտանիք, իսկ Վաղարշապատը էջմիածնի ամենամեծ և կարևոր տիրույթն էր:

Բնակչության մյուս մասն էլ էջմիածին կատարած իր արշավից հետո գեներալ Նեսվետաևն էր եկեղեցական հարստության հետ մեկտեղ ռուսական սահմանները տարել: Աշտարակ գյուղը Մահմեդ-խանի հայրը՝ Հյուսեին-Ալի խանը խլել էր էջմիածնի ձեռքից և, փաստորեն, վերջինս պետք է բավարարվեր Օշական և Վաղարշապատ գյուղերից ստացված հասույթով:

Բացի այդ, 1804 թ. պատերազմական գործողությունների ժամանակ էջմիածնի ամբարներից ռուսական զորքերին տրվել էր 2175 սոմար ցորեն, 1000 սոմար ալյուր, 300 սոմար բրինձ[1]: 1808 թ. պատերազմական գործողությունների ժամանակ Ջաֆար-Ղուլի բեկը որպես սուրսաթ տարել էր 95 խալվար 66 լիտր ցորեն, 12 խալվար 51 լիտր գարի[2]: Մեծ քանակությամբ ցորեն, գարի և ալյուր էր տրվել նաև ռուսական զորքերին:

1807 թ., երբ Դանիել կաթողիկոսը հաստատվում է էջմիածնի աթոռի վրա, նրա մտահոգության գլխավոր առարկան դառնում է Վաղարշապատի և մյուս գյուղերի բնակչության վերադարձը, որովհետև «...թէ գեղջն շինութիւն չլինիցի, սրբոյ աթոռոյս շինութիւն չի լինիր»[3]: Էջմիածինը նույնիսկ դիմում է նոր նշանակված սարդար Հյուսեին-Ղուլի-խանին և խնդրում միջնորդել ռուսական իշխանությունների առջև, որպեսզի Թույլատրեն Վաղարշապատի և

---

[1] Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 15, վավ. 85 ա:

[2] Նույն տեղում, թղթ. 19, վավ. 116:

[3] Նույն տեղում, թղթ. 18, վավ. 100:

մյուս գյուղերի բնակչության վերադարձը, «որով օրըստօրէ պայծառասցի աթոռն[4]...»:

Հետագայում Եփրեմ կաթողիկոսի աթոռակալության օրոք էլ բնակչության վերադարձի հարցը մնում է հրատապ: Եփրեմ կաթողիկոսի Ռուսաստանից էջմիածին վերադառնալուց հազիվ մեկ տարի անց էջմիածնի բարձրագույն խորհուրդը դիմում է այլազան վանդործերի մինիստր Գոլիցինին և խնդրում միջնորդել կայսեր առջև, որպեսզի «ստանալ զհրամանն արձակման տեսչական ժողովրդեան պատրիարգական աթոռոյ էջմիածնի եղելոց ի Թիֆլիս և յայն կողմանս՝ յաղագս վերադառնալոյ նոցին իւրեանց հայրենիս ի պաշտօնատարութիւն հարկաւորացն շինութեան և պայծառութեան տաճարին աստուծոյ»: Միաժամանակ բարձրագույն խորհուրդը ռուսական կայսրից խնդրում էր պարգևագիր շնորհել «զի աթոռն Արարատեան ունիցի զայն միշտ ի պատրաստի և յամենայն հանդիպմունս հզօր զօրաց ն. կ. մ. աստ ի դաշտն Արարատեան» իրենց ձեռք չտան և հանգիստ թողնեն[5]:

Սակայն այս դիմումը ոչ մի արձագանք չգտավ ռուսական կառավարության մոտ, ինչպես որ անպատասխան էին մնացել նաև Կովկասի կուսակալ Տորմասովին և այլոց արված դիմումները: Ոստիկանության 1813 թ. օգոստոսին Եփրեմ կաթողիկոսը դիմում էր Ռտիշչևին, խնդրելով նրանց ազատ պահել հարկապահանջությունից մինչև որ կատարվի Ալեքսանդր I բարեհաճությունը նրանց իրենց նախկին բնակավայրերը վերադարձնելու վերաբերյալ[6]: Սակայն այդ գրությանը հետևում է գեներալ Սիմանովիչի մերժողական պատասխանը՝ վաղարշապատի և մյուս գյուղերի բնակիչներին իրենց նախկին բնակավայրերը վերադարձնելու, այն ոչ-համոզիչ պատճառաբանությամբ, որ նրանք, ինչպես և արտասահմանից վրաստան տեղափոխված բոլոր գյուղացիները գրանցված են որպես պետական գյուղացիներ, ուստի և նրանց վերադարձնել չեն կարող[7]:

Վրաստանի թեմակալ նշանակված Ներսես Աշտարակեցին դիմում է մի բավական խորամանկ քայլի, որպեսզի հաջողեցնի գյուղացիների վերադարձը էջմիածին, այն է «զնոսա նախ ազատել ի

---

4 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 18, վավ. 74 ա:

5 Նույն տեղում, թղթ. 21, վավ. 135 ժբ.:

6 Մատենադարան, ձեռ. № 3743, թ. 102 բ.—103 ա:

7 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 24, վավ. 78 ա և 78 բ:

հարկաց թագաւորութեան և անպիտանացուցանել վասն գանձարանին»[8]։

Միայն 1815 թ. կեսերից հաջողվում է վերադառնալու ցանկություն հայտնած ընտանիքներին գնալ իրենց բնակավայրերը։ 1815 թ. վերադառնում է 11 ընտանիք[9], իսկ 1816 թ. վերադառնալու թույլտվություն են ստանում 90 ընտանիք[10]։ Այդ նույն 1816 թ. դեկտեմբեր ամսին Կովկասի կառավարչապետ Ա. Պ. Երմոլովը թույլատրում է բոլոր ցանկացողներին ազատ վերադարձ։ Այդ թույլտվությունը, իհարկե, վերաբերում էր միայն էջմիածնա՝պատակ ժողովրդին[11] և կապված էր քաղաքական այն նոր ընթացքի հետ, որի անցկացնողը պետք է լիներ Կովկասի նոր նշանակված կառավարչապետ գեներալ Երմոլովը։

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, նախ և առաջ, որ էջմիածնի տնտեսության և նյութական բարեկեցության համար խիստ մեծ նշանակություն ունեին այն գյուղերի բնակիչները, որոնք պարսից շահերի հրովարտակներով նրան էին հանձնված իբրև «ռայա և ամալա», այսինքն հպատակներ և ծառայողներ։ Պետությանը տրվելիք բոլոր հասույթները «որպէս պատկանն է իսկական հպատակաց՝ նոյնպէս հրովարտակօք թագաւորաց պարսից յատկացեալ է վասն սբ. էջմիածնի և հոգևորականաց նորին, թէպետև երբեմն ի ձինիլ թագաւորաց պարսից յափշտակեալ են բռնաւօրք»[12]։ Իսկապես որ XIX դարի սկզբին էջմիածնի ձեռքին միայն մի քանի գյուղեր էին մնացել, այն է՝ Վաղարշապատը, Օշականը, Մաստարան։ Աշտարակ գյուղը խլված էր նրա ձեռքից խանական կառավարության կողմից, նման փորձեր էին կատարվում Եղվարդի նկատմամբ։

1810 թ., Եփրեմ արքեպիսկոպոսի կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ, Ատրպատականի կառավարիչ Աբաս-Միրզան հատուկ ռաղամ տվեց, որի համաձայն հաստատվում էին էջմիածնին տրված նախկին հրովարտակներն ու արտոնությունները և շնորհվում նորերը։

---

8 Նույն տեղում, թղթ. 24, վավ. 147։

9 Նույն տեղում, թղթ. 27, վավ. 46։

10 Նույն տեղում, թղթ. 29, վավ. 90 ա։

11 Մատենադարան, Ներսես Աշտարակեցու անձնական արխիվ, թղթ. 164ա, վավ. 285։

12 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 21, վավ. 148։

Համաձայն Աբաս-Միրզայի հրամանի. ա) «ի բեռանց կարգաւորաց կամ ախտաւորաց, որ առ աթոռն պատկանի զինչս ունիցին բախտաւոր (մաքս)՝ գումրուկչի (մաքսավորք) և ճանապարհի ղարաուլներ ոչ ոք մերձենացի առ նոսա»[13]: Այսպիսով հաստատվում էր էջմիածնի ապրանքների մաքսից ազատ լինելու նախկին արտոնությունը:

բ) «Նաև ի վարդապետաց, ի միաբանից և ի էջմիածնայ տաճարի ռայաթից և ամալայից ոչ ոք պահանջեսցէ զչափարի ձիանք»[14]:

գ) «Բոլոր կառավարութիւն քրիստոնէական վերոյ յիշեալ կաթողիկոսին է յանձնեալ», ամեն տեսակի վեճերը էջմիածնի և նրա ծառանների հետ պետք է լուծվեին շահզադայի, այսինքն Աբաս-Միրզայի ներկայությամբ[15]:

դ) «էջմիածնայ աթոռոյ վախութեան մլքերն եթէ ջրազացի՝ եթէ ձիթհանգի՝ եթէ խանութք կամ այգիք և կամ տունք. կամ գէօղօրայք, կամ անդաստանք՝ զորս ղաբալայիւ և թագաւորական հրովարտակօք ունին, ի համայն թագաւորական պահանջմանց ըստ նախնի սովորութեան ազատք լինիցին... և ոչ ոք առանց հրամանի հայրապետի վերոյ յիշեալ վախութեան մլքացն, ամենևին ձեռնամխութիւն չլինիցի»[16]: Այսպիսով, ըստ հրովարտակի, վերահաստատվում էին էջմիածնի առանձնաշնորհումները, համաձայն որոնց բոլոր մուլքերը հարկապահանջությունից պետք է ազատ լինեին:

ե) Այդ ամենի հետ մեկտեղ Սիրեմ կաթողիկոսին տարեկան ռոճիկ էր նշանակվում չորս հարյուր թումանի չափով, ըստ երեվույթին ռուսական կառավարության հետևողականությամբ, որը ռոճիկ էր վճարում ռուսահայ թեմերի թեմակալ առաջնորդներին: «Այլև յատկապէս,— ասված էր հրովարտակում,— ողորմութիւն ևս արարաք վերոյ յիշեալ հայրապետին, և տարեկան ռոճիկ հաստատեցաք չորս հարիւր թոմանի, որ յամէն տարի ի մեր տէրութենան կառավարիչքն հասուցանեն առ ինքն»[17]:

Միաժամանակ Երևանի բեգլերբեգին, այսինքն սարդարին

---

13 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 21, վավ. 148:
14 Նույն տեղում:
15 Նույն տեղում:
16 Նույն տեղում:
17 Նույն տեղում:

հանձնարարվում էր «զվերոյ հայրապետական աթոռն զոր յանձնեալ եմք Եփրեմ կաթողիկոսին, զնորին փառս և զսինոդի եպիսկոպոսաց զպատիւն և զհամայն վարդապետացն սիրով ընկալնուս, և զկատարեալ գութս ունիցիս ի վերայ ժողովրդոցն հայոց՝ եղելոցն յերևան, որք ծառայք են էջմիածնայ աթոռոյն»[18]։

Հյուսեին Ղուլի խանը Եփրեմ կաթողիկոսին հղած գրությամբ նույնպես հաստատում էր էջմիածնի իրավունքները իրեն տրված գյուղերի նկատմամբ։ Նա գրում էր. «ամենայն վարնլահողք և այլ տեղիք գեղջն էջմիածնի և այլ գիւղօրէից սրբոյ աթոռոյս են այժմ և պիտին լինիլ միշտ յանկախ յումեքէ յիշխանութեան կաթողիկոսին։ Եթէ նորին վեհափառութիւն ի վերոյիշեալ գիւղօրէից շնորհեսցէ ումեք տեղի ինչ վարելոյ կամ վասն այլ պիտոյից մի որ իշխեսցէ հակառակել նմա ոչ ի միրզայից մերոց կամ յայլ ազատիճանաւորաց, ոչ ի մեծաց և ոչ ի փոքունց։ Բայց եթէ ոք առանց հրամանի կաթողիկոսին ի վերայ հողոյն պատկանելոյն աթոռոյս ցանեսցէ ինչ, կամ վարեսցէ, նորին վեհափառութիւնն ունի իշխանութիւն ըստ այսմ հրամանագրի իմոյ զամենայնն սեպհականել ինքեան, այն է զբոլոր վարեալ տեղին հանդերձ սերմովն, առանց ինչ հատուցանելոյ նմա»[19]։

Այսպիսով ստացվում էր, որ էջմիածնի գահակալը, անկախ խանական կառավարության, կարող էր տնօրինել ըստ իր հայեցողության իր մասնավոր օգտագործման տակ եղած հողերը։ Այն դեպքում, երբ այդ հողերի վրա կողմնակի անձանց կողմից ցանք էր կատարվում, ապա կաթողիկոսն ազատ իրավունք ուներ բռնագրավելու ողջ բերքը, առանց որևէ վարձահատուցման։

Աբաս-Միրզայի քաղաքական նման վարքագիծը էջմիածնի նկատմամբ չէր բխում նրա դեպի հոգևոր այդ կենտրոնը տածած բարյացակամությունից կամ դեպի վերջինիս գահակալը ունեցած հարգալից վերաբերմունքից։ Աբաս-Միրզան, անշուշտ, լավ էր նկատում և դեպքերի զարգացման նախորդ ամբողջ ընթացքը ցույց էր տվել, որ էջմիածնի հոգևորականության ճնշող մասը ռուսական կողմնորոշում ուներ. ուստի և մեղմ քաղաքականության ու արտոնությունների շնորհմամբ նա ձգտում էր վերակողմնորոշել նրանց դեպի Պարսկաստան, խզել նրանց կապերը Ռուսաստանից, նրանց միջոցով բեկում առաջացնել նաև հայ

---

18 Նույն տեղում։

19 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 50, վավ. 528։

ժողովրդական զանգվածների տրամադրությունների մեջ և դրանով իսկ ամրապնդել շահական կառավարության դիրքերն Արևելյան Հայաստանում, մի բան, որը նրան այնպես էլ չհաջողվեց:

Սակայն միշտ չէր, որ այդ հրամանագիրը ուժի մեջ էր մնում: Իրենց իսկ կողմից տրված արտոնությունների ու առանձնաշնորհումների խախտումներ խանը և նրա միրզաներն ու մյուս պաշտոնյաները թույլ էին տալիս ամեն քայլափոխում: Այսպես, միայն 1814 թ., շնորհիվ Ներսես Աշտարակեցու ջանքերի, հաջողվեց Աբաս-Միրզայից ռաղամ ստանալ Աշտարակ գյուղը էջմիածնին վերադարձնելու մասին[20]: Սակայն վերադարձնելու համար որպես պարգև Հյուսեին Ղուլի խանը պահանջում է հազար թուման: Այդ առթիվ 1823 թ. Ներսես Աշտարակեցին գրում էր. «... մինչև ցայսօր ժամանակի ոչ աթոռն կարաց տալ նմա զայն գումար և ոչ ինքն սարդարն կամեցաւ յանձնել աթոռոյն զայն գիւղ, և ահա 13 ամ աթոռն էջմիածնի վայելէ միայն պատուելագոյն հրովարտակ արքայորդւոյն՝ և սարդարն զբոլոր գիւղն և զամենայն արդիանսն առ ի նմանէ»[21]:

Այնուհետև, չնայած այն բանին, որ ըստ Աբաս Միրզայի 1810 թ. հրովարտակի էջմիածնի բոլոր գյուղերը և կալվածները ազատ էին կացուցվում հարկերից, սարդարը նախնի սովորությամբ համաձայն հարկ էր պահանջում, մաղթա անվամբ, 400 թումանի չափով, իսկ մյուս գյուղերի բնակիչներից նույնպես 400 թումանի չափով բեկյար էին վերցնում[22]:

Այս դեռ բոլորը չէր: Մուղանլու ցեղախումբը կամովին օգտագործում էր եկեղեցական հողը, որը գտնվում էր Օշական գյուղում և դրա փոխարեն տրվելիք վարձը լրիվ չէր վճարում: Սարդարը օգնության ձեռք է մեկնում այն ժամանակ միայն, երբ 500 թուման կաշառք է ընկալում[23]:

Վաղուց ի վեր սարդարը աչք ուներ նաև էջմիածնին պատկանող նույն Օշական հարուստ գյուղի վրա: Նա բազմիցս փորձեր էր կատարում հափշտակելու այդ գյուղը: Նա սարքյարներ էր ուղարկում այնտեղ հարկ հավաքելու, թեև այն ամբողջությամբ պատկանում էր էջմիածնի վանքին, փորձում էր այդ գյուղը հարկի տակ դնել և դրա դիմաց ստանալ էջմիածնից 1000 թուման մաղթա

---

20 Նույն տեղում, թղթ. 23, վավ. 188:

21 Նույն տեղում, թղթ. 45, վավ. 142:

22 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 45, վավ. 142 բ:

23 Նույն տեղում:

և այլն[24]։ Միայն կաշառքի ու աղերսանքի օգնությամբ էին կարողանում էջմիածնի միաբանները ետ կանգնեցնել նրան այդ քայլից։

Սրանք հանգամանքներ էին, որ ավելի էին անկայունացնում էջմիածնի վանքի խախտված ֆինանսական ու տնտեսական վիճակը, ստիպում էին նետվել վաշխառուների գիրկը և ծանրածանր տոկոսներով դրամ հայթայթել՝ իրենց գոյավիճակը մի կերպ պահպանելու համար։ Շահական ու խանական հրովարտակները փաստորեն մնում էին իբրև թղթի կտորներ, որոնց վրա ուշադրություն չէին դարձնում առաջին հերթին դրանց իսկ հեղինակները։

Ա.յսպիսով, էջմիածնի վանքին վակուֆային իրավունքով պատկանում էին՝ Վաղարշապատ գյուղը, որն ուներ 441 ընտանիք 2175 շնչով, Օշական գյուղը, որն ուներ 86 ընտանիք 611 շնչով և Մաստարան, որն ուներ 97 ընտանիք 561 շնչով[25]։ Բացի սրանցից, մուլքադարական իրավունքով էջմիածնին էր պատկանում Եղվարդ գյուղի 4,5 դանգը, Հաջիղարա գյուղը և Կրխբուլաղի մահալի Գետարգել գյուղը, որը գրեթե ավերված էր և տարեկան ընդամենը 30 սոմար ցորենի մուլք էր միայն տալիս։

Էջմիածնի եկամտի հիմնական և հուսալի աղբյուրներից մեկը հանդիսանում էր գյուղերից ստացվող մուլքը և բահրան։ Վաղարշապատ և Օշական գյուղերը, որպես վանքապատկան տիրույթներ, ինչպես մուլքը, այնպես էլ բահրան վճարում էին էջմիածնին։ Այդ գյուղերի վրա իր վակուֆային իրավունքները պաշտպանելու համար էջմիածինը հարկադրված էր իր հերթին տարեկան 400 թոման մաղթա վճարել Երևանի սարդարին, թեև Աբաս-Միրզայի ռաղամով էջմիածինն ընդմիշտ ազատվում էր մաղթա վճարելուց։

Վանքապատկան գյուղացիները էջմիածնին հարկ վճարում էին ինչպես դրամով, այնպես էլ բնամթերքով։ Դրամական հարկը կոչվում էր մալիաթ։ Բնամթերային տուրքը բաժանվում էր երկու մասի՝ բահրա և մուլք։ Բահրան դա պետությանը հասանելիք մասն էր, որը, համաձայն ֆեոդալական իրավունքի, նույնպես տրվում էր էջմիածնին։ Որպես մալիաթ ամեն մի ընտանիք վճարում էր մեկուկես թոման (6 ռուբլի արծաթ դրամ)։ Բնամթերային տուրքը կազմում էր բերքի $^1/_6$ մասը։ Բացի այդ, գյուղացիները պար-

---

24 Տե՛ս նույն տեղում, թղթ. 54, վավ. 132, թղթ. 43, վավ. 377 ա և ձեռ. 3743, թ. 12։

25 **И. Шопен.** Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения ее к России. СПб, 1852, էջ 679։

տավոր էին, որոշակի վարձատրությամբ, բանվորական ձեռքեր տրամադրել վանական տնտեսությանը, ինչպես նաև սայլեր՝ հացահատիկը և այլ մթերքներ տեղափոխելու համար։ Այս վերջին պարտավորությունը գյուղացիները կատարում էին ձրի, առանց որևէ վարձատրության։ Հնձի ժամանակ յուրաքանչյուր ընտանիք տրամադրում էր մի հնձվոր։ Հնձի կատարումը նույնպես վարձատրվում էր, որոշ դեպքերում դրամով, հիմնականում բնամթերքով. բացի այդ, վանքը կերակրում էր այն մշակներին, որոնք գործում էին նրա տնտեսության մեջ[26]։ Հաճախ գյուղացիները հրաժարվում էին աշխատող ձեռքեր տրամադրելուց և նույնիսկ հարկեր վճարելուց։ Այսպես 1807 թ. Կաթողիկոսը դիմում էր Օշական գյուղի քահանաներին, տանուտերերին, քեդխուդաներին և «համայն» ժողովրդին, որպեսզի հնազանդվեն իրեն և չվարվեն նախկինի պես։ Իսկ նախկինում նրանք հրաժարվել էին ծառայողներ տրամադրել վանքին, «ձեռնտու լինիցեն» նրան և վարձվել էին աշխատանքի «այլազգիների» մոտ, հավանաբար ավելի ձեռնտու պայմաններով։ Երբ վանքը պահանջել էր իրեն հասանելիք քամբակի բահրան և մուլքը, ապա օշականցիները «քոչել» հեռացել էին գյուղից։ Կաթողիկոսը հորդորում էր նրանց «ի բաց կալ այսուհետև յայսպիսեաց անբարշտութեանց, զի որոց զվնասն կրեք ի միում աւուր»։ Ապա կրկին պահանջում էր նրանցից՝ չորս «համփա» տներից մեկական ծառայողներ ուղարկել վանքին, ինչպես նաև «թարց պատճառանաց» պատրաստություն տեսնել և վանքի քամբակը ուղարկել[27]։

Մուլքադարական գյուղերից՝ Եղվարդից, Հաջիղարայից և Գետարգելից էջմիածինը միայն մուլք էր ստանում։ Գյուղերից մուլք և բահրա հավաքելու համար նշանակվում էր հատուկ վարդապետ, որը կոչվում էր մուլքանաճի։

Բնամթերքով տրվող հարկերը վերցվում էին բոլոր մթերքներից՝ ցորենից, գարուց, չալթուկից, կտավհատից և այլն։

1818 թ. էջմիածինը Վաղարշապատ գյուղից ստացել է 1290 սմար ցորեն, 26 սմար գարի, 40 սմար կտավհատ, 106 սմար չալթուկ։ Այդ նույն թվականին Օշական գյուղը վճարել է 408 սմար ցորեն, 43 սմար գարի, 22 սմար կտավհատ, 192 սմար չալթուկ, Մաստարան՝ 14 սմար ցորեն, 18 սմար գարի, 1,5

---

26 И. Шопен, նշվ. աշխ., էջ 680—681։

27 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 18, վավ. 202։

սոմար կտավհատ, 23 սոմար չալթուկ, ինչպես նաև վերադարձրել փոխ վերցրած 18 սոմար գարին։ Բամբակ մուտք եղել է ընդամենը 429 լիտր, որից 196 լիտրը վճարել է Վաղարշապատը, 117 լիտր Օշականը, իսկ 56 լիտր ստացվել է վանքի ցանքսերից[28]։ 1820 թ. համապատասխանաբար Վաղարշապատից ստացվել է 1981 սոմար ցորեն, 18 սոմար գարի, 30 սոմար կտավհատ, Օշականից՝ 630 սոմար ցորեն, 42 սոմար գարի, 155 սոմար չալթուկ, Մաստարայից՝ 114 սոմար ցորեն և 61 սոմար գարի[29]։ Այս թվերը ցույց են տալիս, որ էջմիածինը բավական մեծ քանակությամբ բնամթերքով գանձվող հարկեր է հավաքել, որոնք ավելանում էին վանքի տնտեսությունից ստացվող եկամուտների վրա։ Միաժամանակ տարբեր տարիներին գանձված հարկերի քանակը ցույց է տալիս, որ այն առանձին տատանումներ չի տվել։

Բացի վերոհիշյալ եկամուտներից, էջմիածինը հասույթներ էր ստանում նաև Հարևան երկրներում ունեցած իր կալվածքներից ու մուլքերից, որոնք որպես հոգեբաժին կտակում էին նրան հավատացյալները։ Էջմիածինը բավական ընդարձակ կալվածքներ և մուլքեր ուներ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլևայլ տերիտորիաներում։

Բավական մեծ կալվածքներ ուներ Էջմիածինը Վրաստանում։ Անշարժ կայքերից նրան էր պատկանում Նախիջևան գյուղի մեկ քառորդ մասը և Դաղստանի սահմաններին մոտ գտնվող Թոմամալար գյուղը, որոնք սակայն մեզ վերաբերող ժամանակաշրջանում արդեն Էջմիածնին չէին պատկանում, քանի որ մեկը ռուսական գանձարանն էր սեփականացրել, իսկ մյուսը՝ լեզգիները։ Վրաստանում Էջմիածինն ուներ նաև երեք տուն, ինն ավերակ տնատեղեր, տասնմեկ այգի, որոնցից չորսը պարտքի դիմաց գրավ էին դրված։

Վրաստանում Էջմիածնի վանական վիճակին պատկանող ազգաբնակչությունը կազմում էր 2646 տուն, երկու սեռի 15607 շնչով, որոնցից 145 տունը ճորտեր էին։

Սրանց «ճորտային» պարտավորությունը Էջմիածնի նկատմամբ կայանում էր նրանում, որ պետք է յուրաքանչյուր ընտանիք տարեկան մեկ չարեք մոմ նվիրաբերեր Էջմիածնի վանքին։

Վրաստանում ունեցած վերոհիշյալ բոլոր շարժական ու ան-

---

28 Նույն տեղում, թղթ. 32, վավ. 218։

29 Նույն տեղում, թղթ. 37, վավ. 382։

շարժ կայքերից ու բնակչությունից էջմիածինը որպես եկամուտ ստանում էր 148 ռուբլի դրամ արծաթով, մեկ փութ մոմ[30]։

Այս ամենից բացի, էջմիածինը իր վիճակին պատկանող ժողովրդից նաև զանազան կամավոր տուրքեր էր ստանում, որոնք տարբեր անուններ էին կրում՝ սրբադրամ, աթոռահաս, հոգեբաժին, պտղի և այլն։ Այսպես, Վրաստանի իր վիճակից էջմիածնի աթոռահասի ընդհանուր գումարը կազմում էր ավելի քան 300 ռուբլի, իսկ տարեկան որպես հոգեբաժին ստացվում էր 200—250 ռուբլի։ Յուրաքանչյուր տնից որպես սրբադրամ վերցվում էր 10 կոպեկ։ Պտղին վերցվում էր բոլոր տեսակի գյուղատնտեսական և անասնապահական մթերքներից։

Բացի «մլքատու գեղօրայքից» էջմիածնի վանքն ուներ նաև «անդք և հողք սեփականք», որոնց մեծ մասը կենտրոնացած էր Վաղարշապատ գյուղում։ Այստեղ էջմիածինն ուներ խաղողի ութ այգի, Աշտարակում՝ երեք այգի, Օշականում՝ մեկ այգի, Շիրաքադ գյուղում՝ մեկ այգի, Նորքում՝ ութ այգի, ընդամենը քսանմեկ այգի։ Այդ այգիներից տարեկան ստացվում էր մոտավորապես 207 խալվար խաղող և պատրաստվում էր 240 կարաս գինի։ Բացի այդ, խաղողի այգիներում եղած մրգատու ծառերից ստացվում էին 800 թումանի զանազան մրգեր[31]։ Սակայն պատերազմական գործողությունների հետևանքով խաղողի այգիները ոտնակոխ էին եղել և փչացել, ուստի 1818 թ. հանձնարարվում է միաբանության անդամներին կամովին իրենց վրա վերցնել այգիների նորոգման գործը։ Վաղարշապատում ունեցած այգիները նորոգելու և խնամելու գործը իրենց վրա են վերցնում միաբանության տասնվեց անդամներ[32]։ Քանի որ, ըստ պայմանի, եկամուտները պետք է կիսվեին վանքի և այգիներին ժամանակավորապես տիրող միաբանների միջև, ապա իր ներքին պետքերը հոգալու համար էջմիածինը ստիպված էր անդամ գինի գնել դրսից։

Բացի այգիներից, էջմիածինն ուներ նաև ցանքսի հողեր, որոնք օգտագործվում էին ցորեն, գարի, կորեկ, բրինձ, բամբակ, կտավհատ, քունջութ, հաճար, զանազան բոստանային կուլտուրաներ, ինչպես նաև բազուկ, ոսպ, սիսեռ, կաղամբ, սոխ, սխտոր, գազար, մանանեխ, լոբի, բողկ ցանելու համար։ Դրանք հիմնա-

---

30 **И. Шопен,** նշվ. աշխատ., էջ 679։

31 Նույն տեղում։

32 Մատենադարան, ձեռագ. դիվան, թղթ. 32, վավ. 9։

կանում պետք է բավարարեին վանքի տնտեսական կարիքները, թեև որոշ մթերքներ վաճառքի էին հանվում։

Միջին հաշվով էջմիածինը տարեկան ցանում էր 400 սոմար ցորեն, 100 սոմար գարի, 80 սոմար կտավհատ, 60 սոմար դարի, 4 սոմար քունջութ և այլն[33]։ Աշխատող ձեռքերի պակասը հաճախ էր էջմիածնին ստիպում իր հողերը կիսարարության հիմունքներով մշակության տալ գյուղացիներին։ Այսպես, Հաջիլար գյուղի գյուղացիները էջմիածնի հանդում ցանում էին բամբակ, որից վանքը մոտավորապես 50 լիտր բամբակ էր ստանում որպես վարձագին[34]։

Սակայն միայն հողերով ու այգիներով չէր սահմանափակվում էջմիածնի ունեցվածքը։ Ջանապան տեղերում էջմիածինն ուներ 14 ջրաղաց, մեկ բրնձահան, երեք դինգ[35]։ Քիչ չէր նաև բեռնակիր և կաթնատու անասունների թիվը։ 1819 թ., օրինակ, էջմիածինն ունեցել է 556 գլուխ ոչխար, 219 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 27 ուղտ, 24 խոզ, 58 ձի և այլն, ընդամենը 884 գլուխ անասուն[36]։ 1820 թ. էջմիածինն ունեցել է 270 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, ձիեր և այլն, չհաշված մանր եղջերավոր անասունները[37]։ Շոպենի հաղորդած տվյալներով էջմիածնապատկան անասունների ընդհանուր գլխաքանակը կազմել է 1184 գլուխ[38]։

Այս բավական խոշոր տնտեսությունը կոչված էր բավարարելու էջմիածնի միաբանության կարիքները, միաբանություն, որը համեմատաբար մեծ էր։ 1813 թ. էջմիածինն ունեցել է 39 միաբաններ (եպիսկոպոս և վարդապետ), 31 սարկավագներ և դպիրներ, դպրատան 33 սաներ, 24 հրացանակիրներ (թվանքչիներ), և ջանապան այլ ծառայողներ ու պաշտոնյաներ, որոնք կերակրվել են վանքի սեղանից։ Դրանց բոլորի թիվը կազմել է շուրջ 300 հոգի։ Նրանք ոչ միայն կերակրվում էին վանքի հաշվին, այլև դրամական վարձատրություն էին ստանում։

Վանական տնտեսությունը վարելու, հողը և այգիները մշակելու համար էջմիածինը կիրառում էր վարձու աշխատանք։ Վարձու

---

33 Նույն տեղում, թղթ. 21, վավ. 117։

34 Նույն տեղում, թղթ. 19, վավ. 11։

35 И. Шопен, նշվ. աշխ., էջ 680—681։

36 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 34, վավ. 314։

37 Նույն տեղում, թղթ. 37, վավ. 382։

38 И. Шопен, նշվ. աշխ., էջ 681։

բանվորները կոչվում էին մշակներ։ Դրանց սովորաբար վարձում էին էջմիածնապատկան գյուղացիներից, ինչպես բուն Վաղարշապատից, այնպես էլ Օշականից ու Աշտարակից։ Բոլոր տեսակի աշխատանքները, սկսած այգիների բացումից, ծերատումից, փորելուց մինչև թաղելը՝ վարձատրվում էին։ Վարձատրվում էին նաև հողագործական մյուս աշխատանքները, ինչպես մարգոցումը, ցանելը, քաղհանելը, բերքը հավաքելը և այլն։ Էջմիածնի նման կալվածատիրական խոշոր տնտեսության կողմից վարձու աշխատանքի կիրառումը գալիս է մի ավելորդ անգամ ևս ապացուցելու, որ ֆիուդալության ու մուլքադարության էությունը կայանում էր հարկ—rենտայի համապատասխան մասը ստանալում, որ մուլքադարներն ու ֆիուդարները իրավական իմաստով օժտված չէին գյուղացիներին արտատնտեսական հարկադրանքի ենթարկելու իշխանությամբ, իրավունք չունեին ստիպել նրանց կոռային աշխատանքներ կատարելու, որ դրանք կատարվում էին վարձատրման հիմունքներով։

Եվ իսկապես, եթե վարձատրվում էին այնպիսի աշխատանքներ, ինչպես ձիթհանի համար փուշ կրելը, բոստան քաղհանելը, մարգոցելը, չալթուկ ցանելը, գարի հնձելը, բամբակ քաղելը, առվույտ հնձելը, քունջութ քաղելը, աթար կրելը, բակլա քաղելը և այլն, ապա խոսք իսկ չի կարող լինել կոռային աշխատանքների մասին։

Վարձատրվում էին նաև «ամալանները», մշտապես մայր աթոռի ծառայության մեջ գտնվող ծառայողներն ու մշակները, որոնք վարձատրությունից բացի կերակուր ու հագուստ էին ստանում վանքից։ Դրանցից էին կատեպանները, բաղչաչիները, նախրչիները, հորթարածները, դռնբանի հոտաղները, մեհտարները, ջրեպանները, ուղտապահները, լվացարարուհիները, ինչպես նաև շաթիրները, հրացանակիրները, ֆառաշները, աշչիները, դարբիննեը, պայտառները և այլն, որոնց տարեկան վարձը 1820 թ. կազմել է 402 թուման չորս հազար դիան, այսինքն վանքի ընդհանուր ծախսերի շուրջ մեկ քառորդ մասը[39], չհաշված այն վճարումները, որ արվել են «դրսի» մշակներին։

Էջմիածնի տնտեսության մեջ աշխատող «ամալանների» թվում մեծ տեղ էին գրավում նաև արհեստավորները։ Դրանք դարբիններն էին, մազմանները, խառատները, աշչիները, դալլաքները, պայ-

[39] Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 35, վավ. 370։

տառները և այլն։ Վանական տնտեսության մեջ մշտապես աշխատում էին՝ մեկ դարբին, որը 5 թուման վարձ էր ստանում, մալմաններ (ստանում էին 3 թուման), խառատներ, որոնցից յուրաքանչյուրի վարձը 4,5 թուման էր, մեկ սափրիչ՝ երկու թուման վարձով և ուրիշներ։ Եթե ի նկատի ունենանք, որ նկարագրվող ժամանակաշրջանում արհեստավորները կազմակերպված էին համքարությունների մեջ, ապա պարզ է դառնում, որ ստեղծվում էր համքարություններից դուրս գտնվող արհեստավորների մի փոքր շերտ, որը իր գոյավիճակով տարբերվում էր համքարությունների մեջ մտնող արհեստավորությունից և որն իր գոյությունը պահպանում էր վաճառելով իր աշխատուժը։

Էջմիածինը ձգտում էր նաև բարձրորակ արհեստավորներ հրավիրել Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայկական խոշոր գաղթավայրերից։ Այսպես, 1811 թ. նոյեմբեր ամսին Կոստանդնուպոլիս մեկնող էջմիածնի միաբան ավագ սարկավագ Մահտեսի Առաքելը սինոդից հանձնարարություն է ստանում վերադառնալիս իր հետ բերել ոչ միայն «զմի արժանաւոր վարժապետ», այլև «զմի հմուտ ճարտար արհեստաւոր կարգադրիչ հացագործութեան և կրակարանի նոցա, այսինքն է փուռն, ևս և գիտակ բարւոք արհեստակերտ յօրինուածոց ջրաղացաց և ձիթհանգից. այլև զմի կամ զերկու կամ զերիս պարտիզպաց հմուտ երկրագործ, որոց զտարեկանն և զծախսն ճանապարհորդութեանց մինչև ցժամանելն ի սբ. աթոռս, որ յԱրարատ, որպէս և խոսիլ և տնօրինել ունիցիս դու ըստ բումդ հարազատութեան, ընդունելի է լինելոց մեզ...»[40]։

1817 թ. «ամալաների» վարձը կազմել է 366 թուման հազար դիան 14 շահի, մինչդեռ վանական մյուս կարիքների համար ծախսվել է 807 թուման 3000 դիան 6 շահի։ Այսպիսով «ամալաների» վարձը 1817 թ. կազմել է ընդհանուր ծախսերի ավելի քան մեկ երրորդ մասը[41]։ Եթե «դրսի մշակներին» տրված վարձատրությունն էլ ի նկատի առնվի, ապա ծախսերի մոտ կես մասը գնացել է մշակներին և ծառայողներին վարձատրելու վրա։ Այդ արդեն խոսում է այն մասին, որ վարձու աշխատանքի սիստեմը բավական էլ կարևոր դեր էր խաղում վանական տնտեսության մեջ։ Այդ վարձատրումը մեծ չէր և հազիվ թե կարողանար էական նշանակու-

---

[40] Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 21, վավ. 135 ժա։

[41] Նույն տեղում, թղթ. 31, վավ. 177։

ջյուն ունենալ գյուղացիական տնտեսության համար։ Շատ դեպքերում գյուղացիները չէին գնում այդ աշխատանքները կատարելու և կաթողիկոսը ստիպված էր հորդորանքների դիմելու։ Երբ Օշական գյուղից ծառայողներ են պահանջում, նրանք հրաժարվում են տալուց և գնում ընկնում են «ի յայլազգիս», այսինքն օտարազգիների մոտ են վարձվում[42]։ Աշխատող ձեռքեր դժվարությամբ էին ճարվում և էջմիածինը լրիվ կերպով չէր կարողանում օգտագործել իր հողերը, իսկ պահանջներն ու հորդորները միշտ չէ, որ արդյունք էին տալիս։

Տնտեսությունը վարելու համար կաթողիկոսը նշանակում էր զանազան պաշտոնյաների, որոնք վարում էին այս կամ այն ճյուղը։ Այսպես, վարդապետներից մեկը նշանակվում էր տնտես, որը վարում էր ընդհանուր ծախսերը։ Մեկ այլ վարդապետ նշանակվում էր ամբարդար, որի մոտ կենտրոնանում էին ինչպես էջմիածնի տնտեսությունից, այնպես էլ գյուղերից ստացվող ցորենը, գարին և գյուղատնտեսական մյուս մթերքները։ Շորապանը գլխավորում էր այն պահեստները, որտեղ կենտրոնանում էին երկաթեղենը, փայտեղենը, բամբակը, բուրդը, մանածը և այլն։ Նրա ենթակայության ներքո էին գտնվում պայտառները, դարբինները, մազմաններն, որոնց պարտականությունն էր «մանել զմազ, ոլորել զլուսանս և յօրինել զթօռ վասն դարմանի, որքան պիտոյ իցէ, նաև գործել զջուալ և զջուլ և զփալանի երեսք», փալանտուզները (համեմատ.գործ), ձիթապանն, «որ աղէ և ցամաքեցուցանէ զմորթսն», մինախոռը (ախոռապետ) մեհտարները (ձիապանները), ջորեպանները, ուղտապանները և իշապանները[43]։ Բացի այդ նշանակվում էին նաև գործակալներ, որոնցից մեկը հետևում էր մշակների վարձմանը և այգիների ու հողատարածությունների մշակմանը, իսկ մյուսները՝ գյուղերից պետք է հարկերը ստանային և տեղափոխեին էջմիածին։

Գյուղերի կառավարման համար էջմիածինը նշանակում էր դարուղա, որը և պետք է հսկեր Վաղարշապատի շուկային, հետևեր չափ ու կշռին և հավաքեր տուրքեր՝ տանուտերերի միջոցով։

Ինչ վերաբերում է ջրաղացներին, ապա դրանք մեծ մասամբ կապալով էին տրվում զանազան մարդկանց, որի դիմաց ստանում էին դրամ։

---

42 Նույն տեղում, թղթ. 18, վավ. 202։

43 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 32, վավ. 242։

Ինչպես արդեն հիշատակվեց, էջմիածնի տնտեսական վիճակը այնուամենայնիվ 19-րդ դարի առաջին երեսնամյակում խիստ ծանր էր։ Ջնայած հողային տարածություններին և մյուս մուլքերին, էջմիածինը չէր կարողանում դուրս գալ ֆինանսական այն ճգնաժամից, որի մեջ ընկել էր Դավիթ-Դանիելյան պատերազմական գործողությունների հետևանքով։ Եփրեմի կաթողիկոսանալուց հետո բազմաթիվ փորձեր են կատարվում էջմիածնի վիճակը բարելավելու նպատակառումով, պլաններ և ծրագրեր են մշակվում, բայց բոլորը մնում է անարդյունք։ Պարտքերը դիզվում էին և աճելով հասնում ահռելի գումարների։ Պարտատերերի ճանկերից խուսափելու համար էջմիածինը ստիպված էր ծանր տոկոսներով, որոնք վաշխառուների կողմից տրվում էին խիստ կարճ ժամկետներով, մեկից դրամ վերցնել և գոհացնել մյուս պարտատիրոջը, մինչդեռ պարտքերը դրանից ոչ թե պակասում, այլ ավելանում էին։

Ժամանակի էջմիածնի կացությունը այսպես էր նկարագրում Եփրեմ կաթողիկոսը. «... ըստ առաջնոյն չէ այժմոյս կեցութիւն սրբոյ աթոռոյս. յառաջ երկուց կաթուղիկոսաց (Սիմեոնի և Ղուկասի—Վ. Դ.) ժամանակն, որ մեք ներկա եղեալ գիտակ եմք. գինին, բախին, բրինձն, բամբակն, ցորեանն, գարին և այլ արմտիք այնքան առատ դայր, և դեռ ևս ի նոցունց ծախիւր դրամօք...»[44]։

Այլ էր դրությունը XIX դարի առաջին քառորդում։ Խանական կառավարության ճնշումներն ուժեղացել էին, ամեն մի առիթ օգտագործվում էր, որպեսզի դրամ կորզեն էջմիածնից, քանի որ գիտեին, թե ամբողջ Արևելյան Հայաստանում դա միակ հիմնարկությունն էր, որտեղ բավական խոշոր հարստություն էր հավաքված աշխարհի տարբեր մասերում ապրող հայերից։ Դեռևս 1808 թ., սարդար դառնալուց մի տարի անց, Հյուսեին Ղուլի խանը, ռուսական զորքերի երևանյան երկրորդ արշավանքի ժամանակ վանքից վերցրել էր 2500 թուման արծաթ դրամ (Երևանի հաշվով—Վ. Դ.) և մեծ քանակությամբ ցորեն ու գարի։ Ռուսական զորքերի վերադարձից հետո նա վանքից կորզել էր ևս հազար թուման, իսկ իբր թե փոխարինաբար վերցված ցորենից ու գարուց $^1/_5$ մասն էլ չէր վերադարձվել[45]։ Եվ այդպես տարիներ շարունակ նվերների ու

---

44 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 23, վավ. 161։

45 Նույն տեղում, թղթ. 45, վավ. 142 բ։

կաշառքների ձևով էջմիածնի վանքից դրամը հոսում էր սարդարական գանձարանը: Եվ ահա «վասն այսպիսի անողոք կառավարութեանց աթոռն էջմիածնի ըստ փոքու մասին ի միջոցի հինգ ամաց՝ և ըստ մեծ մասի ի միջոցի երկու և կէս մինչև ցելանելն կաթուղիկոսի անդի» ընկնում է 33684 թուման 5018 շահի պարտքի տակ: Թեև այդ նույն ժամանակամիջոցում վանքը վճարել էր 35536 թուման 3000 և կես շահի, սակայն պարտքի գումարը դարձյալ հասնում էր 32 հազար թոմանի[46]: Դրա պատճառն այն էր, որ սարտաճուրհակները յուրաքանչյուր վեց ամիսը մեկ փոփոխվում էին, այն էլ տասին երեք շահով, չհաշված այն, որ վաշխառուները, օգտվելով խանական կառավարության թողտվությունից, դիմում էին զանազանակերպ խարդախությունների: Այսպես, 1821 թ. հունիս ամսին էջմիածինը փոխարինաբար 2050 թուման պարտք է վերցնում սարթիպ Քեալբալայի Մամուշից և փոլիցա են տալիս այն պայմանով, որ փոլիցատարը Կոստանդնուպոլիս և իզմիր ժամանելուց հետո սպասի 11, 21 ու 31 օր և այդ ժամանակվա ընթացքում այնտեղ ստանա իր գումարը: Հակառակ դեպքում, եթե վերոհիշյալ քաղաքներում այդքան գումար չվճարվի նրան, ապա էջմիածին գալով տասին հինգ շահով իր դրամն ետ ստանա: Փոլիցատարը նույնիսկ տեղ էլ չի հասնում, այլ մի քանի օրից վերադառնում է և բռնությամբ ետ է վերցնում ոչ միայն իր տված 2050 թուման, այլև տոկոսն էլ հետը, այսինքն 613 թուման ավել դրամ է վերցնում[47]:

Նման իրավիճակից դուրս գալու և պարտքատերերի ճանկերից խուսափելու միակ ելքը Եփրեմ կաթողիկոսը տեսնում է միայն փախուստի մեջ: 1821 թ., պատրվակ բռնելով, որ ուզում է Ղարաբաղի կողմերում հանգանակություն կատարել պարտքերը մարելու համար, Եփրեմ կաթողիկոսը փախուստ է գործում Վրաստան, որտեղից անցնում է Հաղբատի վանք և մնում այնտեղ մինչև Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից:

Ինչպես Հյուսեին Ղուլի խանը, այնպես էլ Աբաս-Միրզան զանազան հնարանքների է դիմում կաթողիկոսին էջմիածին վերադարձնելու համար, որպեսզի նրա փախուստը չօգտագործվի ռուսական կառավարության կողմից քաղաքական նկատառումներով,

---

46 «Համառոտութիւն անցից...», էջ 19:

47 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 32, վավ. 222:

ինչպես և չթեժացնելու համար դժգոհությունը հայ ժողովրդական զանգվածների մեջ։

Ի պատասխան բոլոր այդ փորձերի, 1823 թ. Վրաստանի թեմակալ—Ներսես Աշտարակեցին զայրույթով լեցուն դրություններ է ուղարկում և Աբաս-Միրզային և Հյուսեին Ղուլի խանին՝ մի առ մի թվարկելով այն բոլոր բռնություններն ու ճնշումները, որոնց ենթարկվել է էջմիածնի միաբանությունը, դահակալը և ժողովուրդը Հյուսեին Ղուլի խանի և նրա պաշտոնյաների կողմից։ Նա պահանջում էր ոչ միայն վերջ դնել բռնություններին ու բացահայտ կողոպուտին, այլև վերացնել բոլոր նախկին պարտամուրհակները և վճարումները, վերջ տալ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ պարտամուրհակները նորոգելուն։ Ներսես Աշտարակեցին պնդում էր, որ այդ անօրինականությունները պետք է արմատախիլ արվեն, տոկոսը տասին երկուսից ավել չպետք է լինի, իսկ պարտամուրհակները պետք է նորոգվեն տարին մեկ անգամ։ Իր պատասխան գրությունում Աբաս-Միրզան հայտնում էր, որ եղել է էջմիածնում, տեսել է նրա թշվառ վիճակը և խոստանում էր կատարել այնպես, ինչպես Ներսես Աշտարակեցին էր խնդրում, բայց պայմանով, որ կաթողիկոսը ետ ուղարկվի[48]։

Դեռ նախքան Եփրեմ կաթողիկոսի փախուստը, մի շարք փորձեր էին կատարվել բարվոքելու էջմիածնի կացությունը, խնայողաբար վարելու տնտեսությունը և խուսափելու ավելորդ ծախսերից։ Այդ նպատակով 1817 թ. Եփրեմ կաթողիկոսը հատուկ դրությամբ դիմում է սինոդին և առաջարկում մայր աթոռի բոլոր «դրամային կառավարությանց և գործավարաց» վրա կարգել մի արքեպիսկոպոսի որպես վերատեսուչ։ Այդ վերատեսչի պարտականությունը պետք է լիներ՝ հետևել բոլոր գործավարներին, իսկ իրենց պաշտոնների մեջ թերացողների և խախտումներ թույլ տվողների հարցը դնել սինոդի առջև, որպեսզի նրանց հանեին պաշտոնից։ Այնուհետև. նա պետք է հոգ տաներ որպեսզի ավելանային մայր աթոռի գյուղերից և մյուս մուլքերից ստացվող արդյունքները, ինչպես նաև միջոցներ փնտրեր ավելորդ ծախսերից խուսափելու համար։ Վերահսկիչ-արքեպիսկոպոսը պետք է վերահսկություն ունենար «ի վերայ դեօղիցն մերոց և վերայ կառավարութեան միրզայ տարուղային և բաղարին, զի լաւագոյն կերպիւ ընթանայցէ կառավարութիւնն նոցին»։ Նա պարտավոր էր

48 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 45, վավ. 80 ա։

նաև այնպես կարգադրել հարկերի հավաքումը, մշակների վարձակալումը և այլն «զի լինիցին համապատասխան գնդապետութեան մերումն վասն նոցա և վնասուց»: Վերահսկիչի նշանակումից հետո բոլոր գործավարները նրա հետ պետք է գործ ունենային, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցը վերաբերում էր կաթողիկոսին կամ սինոդին:

Վերատեսուչը պետք է ունենար նաև օգնական, որը առաջինի բացակայությամբ պետք է փոխարիներ նրան այդ պաշտոնում, պետք է ընդուներ այլազգի հյուրերի և նրանց ներկայացներ կաթողիկոսին կամ այն անձնավորությանը, որի մոտ նրանք եկել էին: Սակայն նա իրավունք չուներ որևէ հրաման արձակել առանց վերատեսչի գիտության[49]:

1819 թ. կաթողիկոսը և սինոդը կրկին անգամ անդրադառնում են էջմիածնի նյութական ու տնտեսական դրությունը բարելավելու հարցին: Նույն թվականի փետրվար ամսին որոշում է ընդունվում, համաձայն որի, նախ դրվում էր պարտքերը փակելու հարցը: Այդ նպատակով դերադասելի է համարվում մեկ կամ երկու հոգուց տասին երկու կամ երկուտուկես տոկոսով այնքան գումար վերցնել, որով հնարավոր լինի ծածկել պարտքերը և դրանով իսկ բավականաչափ պահպանել տրվելիք գումարը: Միաժամանակ ցանկալի էր համարվում այնպիսի տեղեր նվիրակներ ուղարկել, որտեղ չկային, իսկ մյուս նվիրակներին, որոնց ժամկետը լրացել էր, ետ կանչել էջմիածին: Անհրաժեշտ էր համարվում երեք տարուց ավել նվիրակներին և նպաստահավաքներին չթողնել ուղարկված վայրերում, «զի մի կորիցեն նուիրակական և այլ աթոռապատկան արդիւքն»: Ինչ վերաբերում է աթոռային ծախսերին, ապա հարկ էր դրանք չափավորել և բոլոր ծախսերը ճշտությամբ գրանցել մատյաններում: Ծախսերի համար կաթողիկոսից դրամ ստանալիս պետք է խնդրագիր ներկայացնեին և յուրաքանչյուր վեց ամիսը մեկ հաշիվ տային կաթողիկոսի և տբ. ժողովի առջև կատարված ծախսումների մասին: Մայր աթոռի «վարձաւորաց» վարձը պետք է տրվեր տարին երկու անգամ, այն էլ տումարագրությունների դիտությամբ և գրանցումով:

Անհրաժեշտ էին գտնում ցուցակագրել բոլոր իրերը, պիտանիները պահել, իսկ ոչ-պիտանիները վաճառքի հանել: Իրերը այժմ պետք է գտնվեին ոչ միայն կաթողիկոսի և մի գանձապահի տրն-

49 Մատենադարան, Ձեռագիր 2917, թ. 84—85:

տեսության և պահպանության ներքո, այլ նաև երկու տումարագիրների, որոնց միջոցով էլ պետք է ստացվեին և հանձնվեին այս կամ այն իրերը[50]։

Հավանաբար այս բոլոր որոշումները և միջոցառումները հնարավոր չէր լինում կենսագործել, հետևաբար և դրանք քիչ արդյունքներ էին տալիս։ Ուստի և 1820 թ. նոյեմբերի վերջին սինոդը միաձայն մի նոր վճիռ է ընդունում, որը նախորդների նման ուղղված էր մայր աթոռի վիճակը բարելավելուն։ Այս որոշմամբ արգելվում էր վանքի հաշվին ընծաներ տալը, հյուրերին երկար ժամանակով, եթե հարկ չկար, Ղազարապատում թողնելը, հասարակ միաբաններին, եթե արժանի չէին, հագուստ տալը։ Գանձարկղը պետք է մշտապես լիներ կնքված վիճակում, ընդ որում այն կնքելու էին կաթողիկոսը, նրա տեղապահը, ավագ լուսարարը, տեղապահի օգնականը և գանձապահները։ Ամեն չորեքշաբթի արքեպիսկոպոսները պետք է հաշվետվություն լսեին ծախսերի ու կառավարման վերաբերյալ, իսկ ամիսը մեկ անգամ սինոդի անդամները պարտավոր էին ստուգելու հաշիվների ճշտությունը։ Վաղարշապատի և նրա շուկայի կառավարումը դրվում էր տեղապահի և նրա օգնականի վրա։ Տեղապահը, առանց սինոդի գիտության, իրավունք չուներ հինգ թումանից ավել դրամ ծախսել։ Անհրաժեշտ էր համարվում ճշտել ունեցած անասունների թիվը։ Սինոդի անդամները պետք է վերահսկու լինեին նաև բոլոր տեսակի մուլքերից ստացված եկամուտների քանակին, իսկ դրանց գործակատարներն ու կառավարիչները առանց սինոդի գիտության իրավունք չունեին գործելու։ Այսպիսով, բոլոր մուտքն ու ելքը պետք է գտնվեր սինոդի հսկողության ներքո։ Հարկ էր համարվում բոլոր ավելորդ հոգևորականներին ու աշխարհականներին, որոնց վրա «ղուր» ծախս էր կատարվում, հեռացնել աթոռից։ Այլ տեղերից եկածներին հարկ էր համարվում չընդունել։ Այս անգամ էլ դրվում էր նվիրակության հարցը[51]։ Սակայն բոլոր այդ փորձերն ու որոշումները գրեթե ոչ մի արդյունք չտվեցին, իսկ կաթողիկոսի փախուստից հետո լիովին մոռացության մատնվեցին։

Էջմիածնի եկամուտների բազմապատկման համար նշանակալից աղբյուր էր նվիրակությունը։

Նվիրակները կաթողիկոսի կողմից առաքվում էին աշխարհա-

---

[50] Նույն տեղում, կաթող. դիվան, թղթ. 16, վավ. 79 լ։

[51] Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 26, վավ. 285։

սիրուտ հայ զանգվածների մոտ նպաստ հավաքելու հօգուտ էջմիածնի և կենդանի պահելու հայ եկեղեցու կապը իր ցանուցիր հոտի հետ։ Երեք տարին մեկ անգամ իրենց նվիրակության վայրերից նվիրակները հավաքում էին որոշակի գումար յուրաքանչյուր շնչից, ինչպես և տարբեր բնույթի ընծայաբերություններ։ Դրանցից էին՝ քառատնից, հիշատակի, խոստմունք, հոգեբաժին, խաչահամբույր, աջահամբույր, մատաղ, գավազանապտուղ, փոքրավորեք, ժամուց, պաշտոններից և այլ անուններ կրող նվիրատվությունները, որոնց մի փոքր մասը (գավազանապտուղ, փոքրավորեք, ժամուց) նվիրակի և նրա սպասավորների համար էր նախատեսված, իսկ մնացյալը՝ մայր աթոռի։ Ընդ որում, նվիրակները իրավունք չունեին բռնադատելու ժողովրդին վճարելու նվիրական տուրքերը, այլ պետք է «հեզութեամբ» համոզեին[52]։ XIX դարի սկզբում էջմիածնի նվիրակային արդյունքները պակասեցին, մանավանդ Եփրեմի կաթողիկոսանալուց հետո։ Արևմտյան Հայաստանից, նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ, նվազ արդյունքներ էին ստացվում, քանի որ Օսմանյան կայսրությունը Եփրեմի կաթողիկոսությունը հաստատող ֆերման չէր տվել, ուստի և արգելել էր մեռոնի առաքումը կայսրության հայկական շրջանները[53]։ Դրանից, անշուշտ, էջմիածինը խիստ մեծ վնասներ էր կրում, թեև, վառավարության արգելքից անկախ, նվիրակային գումարները շարունակվում էին հավաքել։ Կաթինում 1814 թ. էջմիածնի նվիրակին հանձնվել էր տաս հազար ղուռուշ օսմանյան դրամ[54], իսկ 1818 թ. Կոստանդնուպոլսի հայերը, որպես նվիրատվություն, էջմիածնի գանձան արկն էին մուծել 559735 ղուռուշ[55]։

Նվիրակության ինստիտուտի գոյությունը սոսկ շահախնդրական նկատառումներով չէր պայմանավորված, թեև առաջին խնդիրը դա էր։ Նվիրակները էջմիածնի, աշխարհասփյուռ հայ զանգվածների և անգամ օտար պետությունների միջև մի տեսակ հասարակական և քաղաքական հարաբերությունները շաղկապող օղակ էին հանդիսանում։ Նրանք լայն տեղեկություններ էին հաղորդում այս կամ այն երկրում ծվարած հայ ազգաբնակչության կեցության մասին, կապում էին նրանց էջմիածնի, որպես հայ ժողովրդի

---

52 Մ. Թաղիադյան Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 240—241։

53 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 47, վավ. 324։

54 Նույն տեղում, թղթ. 25, վավ. 6։

55 Նույն տեղում, կաթող. դիվ. թղթ. 29, վավ. 133։

հոգևոր կենտրոնի հետ, կենդանի էին պահում ազգային ավանդություններն ու ոգին, պայքարում էին կրոնափոխության փորձերի դեմ և շատ դեպքերում ջանքեր էին թափում թուլացնելու հալածանքներն ու ճնշումները, հատկապես Արևմտյան Հայաստանում: Նվիրակները միաժամանակ ամենայն հայոց կաթողիկոսին տեղյակ էին պահում քաղաքական այն բոլոր իրադարձություններին, որոնք կատարվում էին իրենց գտնված երկրներում, անգամ հնարավոր քաղաքական տեղաշարժերին: Այդ բոլորը հնարավորություն էր տալիս ամենայն հայոց կաթողիկոսին կողմնորոշվելու քաղաքական իրադրության մեջ և անհրաժեշտ քայլերն առնելու, եթե էջմիածնի կամ հայ ժողովրդի այս կամ այն հատվածի շահերը դա հրատապ էին դարձնում:

Սակայն նվիրակների մեջ պատահում էին եկեղեցականներ, որոնք առաջին հերթին իրենց անձնական, շահախնդրական նպատակներն էին հետապնդում, նվիրակության ժամկետը լրացնելուց հետո ձգձգում էին իրենց վերադարձը, անհրաժեշտ և մանրամասն հաշվետվություն չէին տալիս նվիրակության արդյունքների մասին: Լինում էին նաև դեպքեր, երբ կեղծ կոնդակներով նվիրակություն էին կատարում մարդիկ, որոնք ոչ մի առնչություն չունեին այդ գործի հետ և խաբելով ժողովրդին, խաղալով նրա կրոնական զգացմունքների հետ, հսկայական գումարներ էին հավաքում և յուրացնում:

1819 թ. փետրվար ամսին, էջմիածնի սինոդը, որոշում ընդունելով էջմիածնի տնտեսական ու ֆինանսական վիճակը բարվոքելու միջոցառումների մասին, միաժամանակ անդրադարձավ նվիրակության և նրա աշխատանքների կանոնավորման հարցերին: Հիշյալ որոշման երկրորդ կետում ասված էր. «Հոգատարությիւն լիցի առանց անագանութեան առաքել գնպատատահաւաքս և գնուիրակունս յայնպիսի տեղիս, ուր ոչ ունիմք այժմ ներկայացեալ և յայն տեղիս ևս, ուր եղեալ նուիրակունքն մեր մերձ են յաւարտումն գործոյն և լրացեալ է ժամանակն նուիրականութեան նոցին, որոց հարկ է և գրել, զի փութով աւարտեալ գթերին վերադարձցեն ի տուրբ գահս, և այսուհետև այնպիսի զգուշութիւն լիցի, որ յիւրաքանչիւր վիճակս մեր մինչ լրասցի երեք տարին նուիրակութեան աւելի ժամանակ մի ունիցի անցանել զի մի կորիցեն նուիրակական և այլ աթոռապատկան արդիւնքն»[56]: Այս որոշման

56 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 16, վավ. 79:

հիմնական մեխերից մեկն էլ այն էր, որպեսզի ապահովվի նվիրակների դարձը ճիշտ ժամանակին, այսինքն երեքամյա ժամանակամիջոցն անցնելուց հետո, որպեսզի հավաքված արդյունքները կորստի չմատնվեն։

Բացի նվիրակներից կային նաև նպաստահավաքներ կամ իմտատաճիներ, որոնց պարտականությունը կայանում էր բնամթերքով հօգուտ էջմիածնի նպաստներ հավաքելում։ Նրանք հատկապես ուղարկվում էին Արևելյան Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի ու Արևմտյան Հայաստանի սահմանամերձ շրջանները, որտեղից դյուրին էր անասուններ, ցորեն, գարի, աղ, յուղ, պանիր և այլ մթերքներ հավաքելն ու տեղափոխելը։

Նվիրակության ինստիտուտի հետ սերտորեն առնչվում էին էջմիածնի այսպես կոչված «առևտրա-բանկային» գործառնությունները։ Նվիրակների կողմից հավաքված դրամական գումարներն այն հիմքն էին հանդիսանում, որոնց վրա էջմիածինը կառուցում էր իր այդ գործարքները։ Հիմնականում հավաքվելով հայկական գաղթավայրերից և Արևմտյան Հայաստանի հայկական այլևայլ թեմերից, այդ դրամական գումարները նվիրակների կողմից ստացականով հանձնվում էին այսպես կոչված «վեքիլներին», առևտրական աշխարհիկ գործակալներին ի պահ։ Վերջիններս, շրջանառության մեջ դնելով հավաքված գումարները, ստացված շահույթը ուղարկում էին էջմիածին այդ նույն նվիրակների միջոցով, երբ սրանք գնում էին վերադարձի ճանապարհը։

Այդ շահույթը էջմիածին էր գալիս ինչպես դրամական, այնպես էլ եվրոպական զանազան ապրանքների ձևով։ Վեքիլների մոտ գտնվող դրամական միջոցների դիմաց էջմիածինը առևտրական գործառնությունների մեկնող վաճառականներից կամ Երուսաղեմ ու Մեքքա, ուխտագնացության եկող ուխտավորներից տեղում ստացած դրամի փոխարեն տալիս էր համապատասխան մուրհակներ, որովհետև ճանապարհների անապահովությունը և կողոպտվելու մշտական վտանգը ստիպում էր վերջիններիս դիմել այդ միջոցին։ Էջմիածնի տված մուրհակներով նրանք Բաղդադում, Կարինում, Զմյուռնիայում, Կոստանդնուպոլսում, Սպահանում, Թավրիզում, Կալկաթայում, Մադրասում և այլուր ստանում էին կանխիկ դրամ այդ նույն վեքիլների ձեռքից[57]։

---

57 **Б. Арутюнян**, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII веках, Ереван, 1940, էջ 100։

Բացի նվիրակությյան գումարներից, վեքիլներին էին հանձնվում նաև գանձանակադրամները։ Բոլոր հայկական խոշոր եկեղեցիներում էջմիածինն ուներ իր գանձանակները, որտեղ հավաքված դրամները հանձնվում էին վեքիլներին և ապա նվիրակների ձեռքով ուղակվում էջմիածին։ 1813 թ. Եփրեմ կաթողիկոսը կարգադրեց, որպեսզի գործակալները գանձանակադրամը ուղարկեն ամեն տարի և ոչ թե «նուիրակէ ի նուիրակ»։ Միաժամանակ ընդարձակվում էին գործակալների լիազորությունները։ Հոգեբաժինը, կտակները, խոստմունքները և այլ անուններ կրող եկեղեցական անուղղակի տուրքերը նույնպես պետք է «ստացեալ եղիցին ձեռամբ գործակալաց կամ վաքիլաց և մի լիցին ըստ առաջնոյն կախեալք ի նուիրակաց»[58]։

Վերոհիշյալ կարգադրությունը ի կատար ածելու նպատակով կաթողիկոսը հրամայում էր ամենուր գործակալներ կարգել, որոնք եկեղեցիների գանձապետներից պետք է ստացականով ստանային գանձանակադրամը և ուղարկեին էջմիածին[59]։

Վեքիլներ սովորաբար կարգվում էին հարուստ վաճառականներից, որոնց նյութական հարստությունը և գրաված դիրքը կասկած չէր հարուցում։ Այսպես, Բայազետում գործակալ էր հանդիսանում աղա Հակոբ Արծրունին, Երևանում աղա Խաչատուրը, Կարինում Հակոբ աղա Կետիկյանը և այլն։ Սրանք բոլորն էլ խոշոր վաճառականներ էին, իսկ նրանց մոտ ապրանքաշրջանառությունը մեծ գումարների էր հասնում։

Էջմիածնի «առևտրա-բանկային» գործառնությունները բավական մեծ ծավալ էին ընդունում և դրանցից օգտվում էր նույնիսկ խանական ընտանիքը։ 1815 թ. Հյուսեին Ղուլի խան սարդարը էջմիածնին տասին երկուս ու կես շահով և վեց ամիս ժամանակով փոխ է տալիս 1000 թուման երևանյան դրամ և միաժամանակ խնդրում է գրություն տալ, որպեսզի այն ուղարկի իր եղբայր Հասան խանին, իսկ այս վերջինն էլ, իր հերթին, Բաղդադի իր վեքիլին, որպեսզի էջմիածնի գործակալից այդ դրամն ստանան Բաղդադում, հավանաբար այնտեղ ապրանքներ ձեռք բերելու նպատակով։ Այդ առումով էլ Եփրեմ կաթողիկոսը գրում էր այդ ժամանակ Բաղդադում գտնվող Հնդկաստանի նվիրակ Վրթանես արքեպիսկոպոսին, որպեսզի իր գրությունն ստա-

---

58 Մատենադարան, ձեռագիր 3743, թ. 107։

58 Մատենադարան, ձեռագիր 3743, թ. 107։

նալուց և ստուգելուց հետո, սեպտեմբերի 20-ից հետո միայն «հատո՛նմա հազար թուման Երևանու սաղ դրամ. և թէ տակաւին վեց ամիսն չիցէ լրացեալ, ըստ այնմ պակասեցուսցես զմուդաթն»[60]: Էջմիածնի նման բնույթի գործառնությունների վերաբերյալ բազմաթիվ փաստեր կարելի է բերել:

«Միջնորդ-բանկիրի» նման դերը, որ ընդունված էր և ճանաչված աշխարհի զանազան վայրերում և, առաջին հերթին, անշուշտ Անդրկովկասում, էջմիածնի համար բավական մեծ հեղինակություն էր ստեղծում և շահույթներ բերում, թեև XIX դարի առաջին երեսնամյակում դրանք սկսվել էին կրճատվել:

Կասկած լինել չի կարող, որ պատմական հանգամանքների և ճակատագրի արդյունք հանդիսացող էջմիածնի նվիրակության ինստիտուտը ժամանակին խաղացել է դրական խոշոր դեր հայադավան եկեղեցու միասնությունը պաշտպանելու, էջմիածնի բաղաքական դերն ու հեղինակությունը ամրացնելու խնդրում: Միաժամանակ նվիրակության ինստիտուտը մեծապես նպաստել է առևտրական հարաբերությունների զարգացման գործին, Արևմուտքի ավելի բարձր կուլտուրայի առարկաները ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ ամբողջ Անդրկովկասում տարածելու գործին: Անգամ Երևանի սարդարը էջմիածնի միջոցով էր ստանում եվրոպական այնպիսի ապրանքներ, ինչպես ժամացույցներ, ակնոցներ, հայելիներ, կանացի պերճանքի առարկաներ, թանկարժեք մորթիներ և այլն:

Ընդհանուր գծերով այսպիսին էր էջմիածնի, վանական հողատիրության Արևելյան Հայաստանում այդ ամենակարկառուն ներկայացուցչի տնտեսական վիճակը XIX դարի առաջին երեսնամյակում:

* * *

Վերևում նկարագրված փաստերը մեզ իրավունք են վերապահում հանգելու հետևյալ եզրակացություններին: XIX դարի սկզբին աչքի է զարկում այն փաստը, որ նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ էջմիածնի վանական տնտեսությունը բռնել էր վայրէջքի ուղին, խիստ քայքայում էր ապրում: Դա

---

[60] Մատենադարան, ձեռագիր № 3743:

հետևանք էր ոչ միայն պատերազմական գործողությունների հասցրած հարվածների, այլև հաճախացած այն ոտնձգությունների, որոնք կատարելու ոչ մի աննշան իսկ առիթ բաց չէր թողնում խանափան վարչությունը։ Այդ բոլորի հետևանքով էջմիածինն սկսում է խրոնիկական բնույթ կրող ֆինանսական ճգնաժամ ապրել, որից դուրս գալու հնարավորություն չէին ընձեռում ոչ նվիրվող դումարները, և ոչ էլ «մլքատու» գյուղերից ու սեփական տնտեսությունից ստացվող եկամուտները։ Էջմիածնի տնտեսության օրինակը գալիս է վկայելու, որ վաշխառուությունը հիշյալ ժամանակամիջոցում խիստ մեծ չափեր էր ընդունել և լայն տարածում ուներ։

Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության հարցում խիստ կարևոր է Էջմիածնի ընձեռած օրինակը։ Վանական այդ խոշոր տնտեսության կառուցվածքը, աշխատանքի կազմակերպումն այնտեղ գալիս են վկայելու, որ սխալվում են մեր երկրի ագրարային հարաբերությունների պատմությունն ուսումնասիրող այն հետազոտողները, որոնք գտնում են, թե ճորտությունը անվիճարկելի փաստ է Արևելյան Հայաստանում։ Մինչդեռ վարձու աշխատանքի կիրառումը Էջմիածնի տնտեսության ամենատարբեր բնագավառներում խոսում է այն մասին, որ նման հարաբերությունների առկայության պայմաններում գյուղատնտեսական ամենաբազմազան աշխատանքները չէին վճարվի դրամով։ Իսկապես, եթե անգամ այնպիսի գյուղատնտեսական աշխատանքներ, ինչպես խաղողի այգիների բացումը, ծերատումը, թաղումը, բանջարանոցների մարդոցումը, քաղհանումը և այլն վարձատրվել են, ապա խոսք իսկ չի կարող լինել ճորտության գոյության մասին։ Իսկ Էջմիածնի տնտեսությունը բացառություն չէր կարող կազմել Արևելյան Հայաստանի հողատիրական հարաբերությունների ընդհանուր սխեմում։ Ինչ վերաբերում է այն պնդումներին, թե Էջմիածնի կողմից գյուղացիներին վճարված վարձը խիստ աննշան է եղել և փաստորեն սիմվոլիկ բնույթ է կրել, որպեսզի նրանց մոտ հարկադրանքից ազատ լինելու պատրանք ստեղծի, ապա դրանք հազիվ թե լուրջ կարելի է համարել։ Նման պնդումները սոսկ անհաջող ձևնածություններ են երևույթների վրա ուղիղ նայելուց խուսափելու համար։ Իհարկե, արտատնտեսական հարկադրանքի մոմենտի մասնակի առկայությունը չի կարելի ժխտել, բայց և հակագիտական է այն բացարձակ մեծության վերածելը։ Փաստն

այն է, որ էջմիածնի վանական տնտեսությունը մի խոսուն օրինակ է տալիս վարձու աշխատանքի առկայության և տարածման շրջանակների մասին: Այդ իսկ իմաստով էլ էջմիածնի վանական տնտեսության հետագա ուսումնասիրությունը հնարավորություն կտա պարզաբանելու տնտեսական զարգացման այն յուրահատկությունը, որ բնորոշ էր հիշյալ ժամանակաշրջանի Արևելյան Հայաստանի հասարակական տնտեսական հարաբերությունների համար:

ԱԲՈՎՅԱՆԻ ԵՎ ԲԵԼԻՆՍԿՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Վ. Ջ. ՂԱՋԱՐՅԱՆ

Աբովյանն ու Բելինսկին ժամանակակիցներ են բառի բուն իմաստով։ Նրանք ոչ միայն ապրել ու ստեղծագործել են պատմական նույն ժամանակահատվածում, այլև հանդես են եկել որպես նույն դարաշրջանի ծնունդ և դարձել երկրում տիրող միևնույն ռեակցիայի զոհերը։ Նրանց միջև որևէ կապ որոնելու փորձը շատերի ուշադրությունն է գրավել, բայց գրավոր փաստերի բացակայությունը ուսումնասիրողներին միշտ բացասական եզրակացության է բերել։ Մեր կարծիքով խնդրին չպետք է մոտենալ այդ տեսանկյունից, որովհետև հինգ դեկաբրիստների կախաղաններով իր թագավորությունը նշանավորած Նիկոլայ I-ի ստեղծած դաժան ռեժիմի պայմաններում առաջադեմ գործիչների անմիջական շփման մասին գրավոր փաստեր որոնելը ապարդյուն պիտի լիներ։ Այդ մի ժամանակաշրջան էր, երբ Ռուսաստանի հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա անսահմանափակորեն իշխում էր ախորհուրդ Երրորդ բաժանմունքը, որի ամենատես աչքերից չէին վրիպում անգամ մարդկանց անձնական նամակագրությունները։ «Я перо в руки взять не в силе,— *գրել է Պուշկինն իր կնոջը,—* мысль, что кто-нибудь нас с тобой подслушивает приводит меня в бешенство»[1]:

Բելինսկին գրական քննադատության մեջ մտավ լեռնային հեղեղի նման և անմիջապես վկանվեց նոր ու համարձակ խոսքի տոչորանքից տապակվող հասարակության կողմից։ Առաջին իսկ հայացքից պայքարի դրոշ բարձրացնելով պաշտոնական գաղա-

[1] Переписка, под редакцией Саитова, *հ. 3, էջ 122։*

փարախոսության դեմ, նա իր շուրջը համախմբեց համախոհների մի մեծ բանակ, ինչպես նաև իր դեմ հարուցեց ցարիզմին վտանգված գրչակների անհաշտատելությունը։ Եվ եթե Բելինսկին հրավիրվեց «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրում աշխատելու՝ այդ չպետք է վերագրել ամսագրի տնօրենի չունեցած դեմոկրատական աշխարհայացքին, այլ սոսկ ամսագրային գործարքներում վերջինիս ձեռք բերած առևտրական հոտառությանը։ Հենված ցարական արքունիքում իր հզոր պաշտպաններին ամսագրի խմբագիր Կրաևսկին Բելինսկու մեջ տեսավ դեմոկրատական տրամադրություններով տոգորված ընթերցող հասարակությանն ընդառաջող այն գրախոսին, որի հոդվածները կարող էին երաշխիք դառնալ ամսագրի տարածմանը։ Եվ նա չսխալվեց։ Հնարավոր բան է, որ հշմարտությունից հեռու չէր նույնիսկ ժամանակակիցների մոտ տարածված այն լուրը, որ ամսագրի հրատարակմանը նպաստելու համար ժանդարմերիայի շեֆ Դուբելտը Կրաևսկուց տարեկան 30 հազար ռ. էր ստանում[2]։

Բելինսկու հրապարակ գալու հենց առաջին օրից գաղափարական հակառակ լագերի ներկայացուցիչները նրա վրա հրավիրեցին երրորդ բաժանմունքի ուշադրությունը։ Սա կարևոր մի փաստ է, որը Պուշկինին ստիպել էր իր խմբագրությամբ լույս տեսնող «Սովրեմեննիկի» հատորը նրան ուղարկել երրորդ մարդու միջոցով և «тихонько от наблюдателей» նախազգուշական հանձնարարությամբ։ Այդ էր պատճառը նաև, որ Բելինսկու անունը տալու և նրա տաղանդը իր ամսագրում գնահատելու համար Պուշկինը ստեղծեց Գոգոլին ակնարկելու առիթը և թաքնվեց «Տվերցի Ա. Բ.» ծածկանվան տակ։ Հոդվածի տակ Պուշկինն այնպես խնամքով էր թաքցրել իր ինքնությունը, որ այն պարզվեց համարյա մեկ դար հետո միայն[3]։

Ժամանակի առաջավոր գրողները քաջ գիտեին, որ երրորդ բաժանմունքի լրտեսները սովերի նման հետևում են իրենց, ուստի և նրանցից յուրաքանչյուրը մեծ զգուշություն էր բաներնում մյուսների հանդեպ։ Հայտնի փաստ է, որ Բելինսկին ու Լերմոնտովը 1837 թ. ամբողջ ամռանը եղել են Պյատիգորսկում և համարյա ամեն օր միասին են եղել։ Մինչդեռ այդ մասին ոչ մեկի և ոչ էլ

---

2 Տե՛ս «Дело Петрашевцев»— Մ—Լ, 1951, հ. 3, էջ 363։

3 Տե՛ս **Д. Благой**, Белинский и Пушкин в сборнике «Белинский историк и теоретик литературы», Մ—Լ, 1949, էջ 258—259։

մյուսի մոտ դրավոր ոչ մի հետք չկա։ Եվ այնուամենայնիվ մի՞թե հնարավոր էր տաք չրեր եկած սահմանափակ մարդկանց շրջանում Մոսկվայի համալսարանի միևնույն ժամանակաշրջանում սովորող ուսանողների իրար հետ հանդիպում չունենալը այն դեպքում, երբ նրանցից մեկն արդեն մեծ քննադատի համբավ ուներ, իսկ մյուսը՝ Պուշկինի մահվան առթիվ գրած իր բանաստեղծությամբ ողջ Ռուսաստանում լայն ճանաչում էր գտել։

Կայսրության մեջ տիրող քաղաքական նման իրադրության պայմաններում, իրազեկ ցարական գաղտնի ոստիկանության կողմից իր վրա դրված հսկողությանը[4] Աբովյանը երբեք գրավոր փաստ չէր թողնի ոչ Բելինսկու, ոչ Պուշկինի և ոչ էլ ռուս մյուս առաջադեմ գործիչների մասին։ Այդ իսկ պատճառով Աբովյանի ժառանգության մեջ նման անսքող փաստերի որոնումը պետք է ապարդյուն անցներ։

Բոլոր այս պատճառներով Աբովյանի ժառանգության մեջ պաշտոնական գաղափարախոսության կողմից թույլատրված Լոմոնոսովի, Դերժավինի, Կարամզինի (հասկանալի է՝ նաև Ժուկովսկու) անուններից բացի չկա և չէր կարող լինել իշխող գաղափարախոսության այնպիսի հակառակորդների անուններ, որոնցից մեկը հայտնի էր իր «խռովարարությամբ» (Պուշկին) և այդ պատճառով պաշտոնական դասագրքերից հանված և արգելված[5] հեղինակ էր, մյուսը՝ Պուշկինի մահվան առթիվ գրած իր հանդուգն բանաստեղծությամբ լայն ճանաչում գտած ապստամբ (Լերմոնտով), երրորդը՝ ցարական գաղտնի ոստիկանության կողմից հեղափոխական պայքարի կենտրոնական «շտաբի պետ» անուն վաստակած (Բելինսկի) և այլն։ Աբովյանն անգամ, բացառությամբ մի մասնավոր նամակի, չի նշել նույնիսկ հաշտվողականության ուղին բռնած ռուս հայտնի առակագիր Կռիլովի անունը, թեև վաստակից դուրս է, որ ինքը թարգմանել է նրա առակներից ավելի քան տասը։

Նման իրադրությունը մեզ հարկադրում է վերնագրված նյութին մերձենալ ոչ թե փաստերի պարզ արձանագրության, ակնհայտ

---

4 Տե՛ս մեր «Խ. Աբովյանը և ցարական գրաքննությունը» «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, (հասարակական գիտություններ) 1965, № 9, էջ 49—62։

5 Տե՛ս **В. В. Стасов**, Училище правоведения 40 л. тому назад, «Русская старина», 1881, № 2, էջ 410։ **Н. И. Пирогов**, Севостопольские письма и воспоминание, М. 1950, էջ 245։

անհաջողության դատապարտված ուղիով, այլ դիմել գաղափարական ռնալ առնչությունների որոնման եղանակին։

Արովյանի և Բելինսկու գաղափարական առնչության վերաբերյալ կանդ կառնենք Արովյանի երկու ստեղծագործությունների, այն է՝ «Ֆեոդորա կամ որդիական սեր» դրամայի և Ներսես Աշտարակեցուն Արովյանի գրած հայտնի նամակի վրա, որոնց համադրումը մեր կարծիքով առավել հավանական է դարձնում Բելինսկուց կրած Արովյանի գաղափարական ազդեցությունը։

«Ֆեոդորա» դրամայի սյուժեն վերցնելու մասին խոսելիս Արովյանի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության 4-րդ հատորի համապատասխան ծանոթագրության մեջ հանդուցյալ բանասեր Հ. Մուրադյանը անհավանական է համարում, այն՝ նույն թեմայով ֆրանսիացի երկու հեղինակներից վերցնելու գաղափարը և ավելացնում «Կամ Ա.-ը սխալվում է պրույցի ծագման ժամանակի վերաբերմամբ, կամ, որ նույնպես հավանական է՝ հնում գոյություն ունեցող պրույցը նորոգվել է՝ կապվելով 1812 թ. անցքերի հետ»[6]։

1. Մեր կարծիքով հիշյալ դրամայի սյուժեն Արովյանը վերցրել է ոչ ֆրանսիացի Մարի Կոտտեն և Քսավիե դը Մեստր հեղինակներից և ոչ էլ նույն սյուժեով Ն. Պոլևոյի գրած դրամայից, այլ՝ 1840 թ. Պոպովի թարգմանությամբ ռուսերեն լույս տեսած Քսավիե դը Մեստրի «Երիտասարդ սիբիրուհին» վիպակի առթիվ Բելինսկու գրած գրախոսականից, որ լույս էր տեսել նախ «Լիտերատուրնայա գազետա»-ի 1840 թ. փետրվարի 3-ի, ապա նաև՝ «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի մայիսյան համարներում[7]։

Սույն ենթադրության համար հիմք են ծառայում, նախ տեղի ունեցած դեպքի թվագրությունը։ Զրույցի հին լինելու Հ. Մուրադյանի փաստարկն այն է, որ այդ սյուժեով գրող ֆրանսիացի հեղինակներից մեկը՝ Մարի Կոտտեն մահացել է 1807 թ., այսինքն 1812 թ. առաջ, որի հետ Արովյանը կապում է այդ զրույցը։ Մինչդեռ իսկությունը այն է, որ ինչպես ֆրանսիացի գրողների «Եղիզավետա Լ***, կամ Սիբիր աքսորվածները» վեպի և «Երիտասարդ սիբիրուհին» վիպակի, այնպես էլ Ն. Պոլևոյի «Պարաշա սիբիրյաչկա» դրամայի հիմքում ընկած է իրական մի դեպք։ 1804 թ. Պրոսկովյա Լուպալովա անունով մի աղջիկ, հոր նկատ-

---

6 Խ. Արովյան *Երկ*, հ. 4, էջ 3245։

7 *Տե՛ս* В. Г. Белинский, Полн. собр. соч., 1954, հ. 4, էջ 169—170, 625։

մամբ ունեցած սիրուց մեծ չարչարանքներով ու զրկանքներով Սիբիրից հետիոտն գալիս է Պետերբուրգ և հասնում այն բանին, որ աքսորված իր հոր համար ցարից ձեռք է բերում ազատություն։ Ուրեմն զրույցը հին չէ և Մարի Կոտտեն էլ դեպքի ժամանակակից է։

Աբովյանի կողմից դեպքը 1812 թ. հետ կապելու հանգամանքը գալիս է Բելինսկու գրախոսականից, ուր հեղինակը գրում էր, թե «երիտասարդ սիբիրուհին» ոչ այլ ինչ է, քան չհորինված իրական անցքի պատմություն, որ տեղի է ունեցել հանգուցյալ Ալեքսանդր կայսեր թագավորության սկզբնական շրջանում»[8]։

Աբովյանը իր հերթին գրել է. «Շատ մարդ կըլի լսած, որ Ալեքսանդր կայսեր ժամանակին, երբ Ռուսք, ֆրանցուզին ջարդեցին... մեկ ջահել աղջիկ Սիբիրուցը փախած՝ եկավ Մոսկով»[9] և այլն։

Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ տեղի ունեցած դեպքի որոշակի թվագրում չկա, մի դեպքում Ալեքսանդր I թագավորության սկզբնական շրջանն է, մյուս դեպքում երբ ռուսները ֆրանսիացիներին ջարդեցին, այսինքն 1812 թ., որ նույնպես Ալեքսանդրի թագավորության սկզբնական շրջան կարող էր նկատված լիներ։

2. Տեղի ունեցած դեպքի վայրի ընտրության հարցը։ Իրականում դեպքը տեղի է ունեցել Պետերբուրգում և Քսավիե դը Մեստրը հավատարիմ է մնացել իրականությանը։ Ն. Պոլևոյը դեպքը տեղափոխում է Մոսկվա՝ Կրեմլյան հրապարակը։ Իր գրախոսականում Բելինսկին տալով պատմվածքի սյուժեն, սակայն ցույց չի տալիս կատարված դեպքի վայրը։ Աբովյանը Թեոդորային ցարի հետ հանդիպեցնում է Մոսկվայից Պետերբուրգ տանող ճանապարհին ընկած մի գյուղում։ Սա նշանակում է, որ Աբովյանի աղբյուրը եղել է ոչ Մեստրի վիպակը և ոչ էլ Պոլևոյի դրաման, այլ Բելինսկու գրախոսականը, որտեղ չգտնելով դեպքի վայրի մասին ոչ մի նշում, ինքը ենթադրաբար գրել է երկու մայրաքաղաքների միջև։

3. Դրամայի հասարակ կառուցվածքը։ Վիպակի մեջ Բելինսկին ամենից բարձր գնահատում է իրականության նկատմամբ հեղինակի ցուցաբերած հավատարմությունը, նրա պատմելու

8 «Неизвестные страницы Белинского», «Литературное наследство», հ. 56, էջ 30։

9 Խ. Աբովյան *երկ*, հ. 4, էջ 241։

կենսագրական, հասարակ ձևը: Անպաճույճ, կյանքից վերցրած և իր իսկությամբ հուզիչ այդ փոքրիկ վիպակի թողած ուժեղ տպավորությունը համեմատելով Կոտտենի «ռոմանտիկական զառանցանքներով» իրականությունը խեղաթյուրած վեպի, և Պոլևոյի թատերական տպավորություն գործող տեսարաններով պարուրված դրամայի հետ, Բելինսկին գրում է. «Առանց խանդաղատանքի անհնարին է կարդալ նրա իսկապես դրամատիկական կյանքի այդ հասարակ նկարագրությունը»[10]:

Ընդառաջելով Բելինսկու իրականությանը հավատարիմ լինելու պահանջին Աբովյանը չնայած սյուժեն վերցրել է ռուսական կյանքից և գործող անձինք էլ ռուս հերոսներ են, բայց այնպես հասարակ, հայ գյուղացուն հարազատ աչնսրհի դարձվածքներով ու լեզվով է ներկայացնում, որ կարծեք այդ բոլորը հայ կյանքից է վերցված:

Գրախոսականի վերջում Բելինսկին ավելացնում է. «Խորհուրդ ենք տալիս այն տալ երեխաների ձեռքը, իսկ ով կարող է, նաև գրագետ հասարակ ժողովրդին. հասարակ ժողովրդի համար այն սքանչելի վիպակ է»[11]:

Հայտնի է, որ Աբովյանը այդ դրաման գրել է իր մասնավոր պանսիոնի երեխաների և նրանց ուժերով ցուցադրելու համար: Այդ աշակերտներից մեկը Գևորգ Աքիմյանը, վկայում է, որ «1841 թ. օրհնյալ թվի ամառը հուլիս ամսին մեզ համար (Աբովյանը Վ. Ղ.) մի պիես էլ էր սարքել՝ «Որդիական սեր» վերնագրով[12]: Ինչ մնում է այդ վիպակը հասարակ ժողովրդի համար գրելուն (կամ թարգմանելուն), ապա այդ մասին վկայում է ինքը Աբովյանը. «Մախսուս էս լեզվովը գրեցի, որ գեղցիք էլ հասկանան, քաղաքացիք էլ: Մի՞թե գեղըցին մարդ չի, չի ուզիլ, որ մեկ նոր բան էլ նա լսի, կամ կարդա»[13]:

Եթե մեր այս առաջին համոզեցուցիչ գաղափարական կապը կարող է փոքր կասկածանքի ենթարկվել Բելինսկու հոդվածի անստորագիր լինելու պատճառով, ապա այն փարատվում է 1847 թվականի հուլիսին Գոգոլին գրված Բելինսկու հռչակավոր նամա-

---

10 «Литературное наследство», հ. 56, էջ 31:

11 Նույն տեղում:

12 Ժամանակակիցները Աբովյանի մասին, ե, 1941, էջ 112:

13 Խ. Աբովյան, երկ, հ. 4, էջ 241:

կի[14] և նույն թվականի վերջին Ն. Աշտարակեցուն դրած Աբովյա՛ն Հայտնի նամակի համառոտությունից։ Սույն երկու վավերագրերի մի շարք ընդհանրությունների համեմատությունը անկասկած են դարձնում մեր պնդումը։

1. Ժամանակի հասարակական-քաղաքական հնչեղություն ունեցող ամենահրատապ հարցերի բարձրացումը երկուսի կողմից։

Բելինսկին առաջ է քաշում Ռուսաստանի համար ամենակենսական ազգային արդիական հարցերը՝ ճորտատիրական իրավունքի ոչնչացում, մարմնական պատժի վերացում և այլն։

Աբովյանը նույնպես առաջ է քաշում Հայաստանի քաղաքական ազատության ամենակարևոր հարցերը։ «Ինչո՞ւ են խաբում մեզ Կովկասի կեղծավոր լրագրերը,— դրում է նա,— թե մեր ազգը փառքի և բարեբախտության մեջ է, որ ճշմարտության օդաձայն շռինդ է միայն։ Ի՞նչ օգուտ և փառք մեր ազգին Հայաստանի ազատությունից, երբ նույնիսկ ինքը Հայաստանը գտնվում է ավելի խավար տգիտության մեջ, քան նախկին ժամանակները... Ի՞նչ բարեբախտություն ներկայումս և ապագայում, քանի որ քաղաքական բռնակալության լծի վերանալուց հետո, այժմ խառնաբարոյության, ժողովրդի բարքերի ապականության լուծը, խաբեբայությունը... մեր հայրենիքի ազատության 20 տարվա ընթացքում էլ ավելի արմատացած են երևում, քան թե բարբարոսների բռնակալության դարավոր ժամանակներում։ ...Պարսիկների ու տաճիկների դահիճների ու մահակների տակ մխիթարում էր մեզ սուրբ հավատը, այժմ ամենաօրհնված Ռուսաց Տերության խնամքի թևերի տակ անառակությունը և անկարգությունները կեղեքում են ամեն մի տեսնող անցավորի անմեղ սիրտը միայն։... Պոլսում, Զմյուռնիայում անտերունչ ազգը բարբարոսների ժանիքների մեջ ընկերություններ է կազմում[15], ինքնահորդոր զոհաբերությամբ դպրոցներ է բաց անում[16], էջմիածնում ազգի հավատի և լույսի աղբյուրին կից մեծացնում են

---

14 Վ. Ի. Լենինն այդ նամակը համարել է Բելինսկու գրական գործունեության հանրագումար և գրաքննության չհնթարկված դեմոկրատական մամուլի լավագույն երկ։ Տե՛ս Լենին, երկեր, ե. 1950, հ. 20, էջ 298։

15 Խոսքը «Համազգյաց ընկերության» մասին է, ստեղծված Թուրքիայում 1846 թ.։

16 Աբովյանը նկատի ունի Վենետիկի Ռաֆայելյան վարժարանը (1836) և Իսկյուտարի Ճեմարան ս. Խուսաղեմի կոչված դպրոցը (1838)։

Դոմշագյոլը[18] և բարեզարդում անասունների գոմը:... Անմահ Աբբան[19], առանց ազգի, առանց օգնականի մի քանի աշակերտների հետ միասին ազգի կեսը գրավեց և կայսրները ցանկանում են ապրել նրա տոնելի դամբարանի մոտ, իսկ այժմ հայրենասերներն անդամ խորշում են մինչև իսկ նայել այն արքայավայրերին, որտեղ հանգչում են մեր ազգի առաքինազարդ հովվապետները: Բարբարոսների օրերով իսկ Սիմեոն կաթողիկոսը, Պետրոս Բերդումյանը հոգում էին ծաղկեցնելու Հայոց աթոռի վիճակը, իսկ մեծատոր Նիկողայոս արքայի և ռուսաց հզոր տերության օրերին, գոմեշները և էշերը պետք է զովանան լճերի մեջ և պարարտանան մեծակառույց գոմերի մեջ:... Ո՞րտեղ է այստեղ բարեբախտությունը, ո՞ւր է իր անգին հատկությանը արժանի ազատության պտուղը,... Թող այժմ խաբեբա լրագրերը դարձյալ շարունակեն մեզ ցույց տալ իրենց կեղծուպատիր դիմակները. նրանք միայն անձնասկան շահ են որոնում և մարդկանց հաճոյանալու համար խոսում, ուստի և ստում են, և ինձ, ականատեսիս... ազգի այսպիսի տարաբախտության կարեկցիս, մնում է միայն արձակ-համարձակ, առանց ակնառության ասել, թե խաբված ակնկալությունն ու հույսը ավելի սուր, քան ամերիկացիների սլաքը (իմա՝ ամերիկյան հնդիկների նետը—Վ. Ղ.), ավելի թունավոր, քան իժի խայթը կկոցոտեն մարդու, չեմ ասում արդեն բովանդակ ազգի, սիրտը»[20]:

2. Պաշտոնական Ռուսաստանից ժողովրդի խաբված լինելու փաստի ընդգծումը:

3. Նկեղեցու՝ որպես մտրակի հենարանի դերի ընդգծումը:

Բելինսկին գրում է՝ «չի կարելի լռել, երբ կրոնի քողի և մտրակի պաշտպանության տակ սուտն ու անբարոյականությունը քարոզում են որպես ճշմարտություն և առաքինություն»[21]:

Արովյանն իր հերթին գրում է՝ «տգիտությունը, որ զորեղ բռնակալության ներքո սասանում էր, իսկ այժմ օրենքի պաշտ-

---

18 Դոմշագյոլը էջմիածնի լճակն է, որը Ներսեսը շինել տվեց նախկին «Գոմշագյոլի» տեղում:

19 Արովյանի խոսքը Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու մասին է:

20 «Դիվան Խ. Արովյանի» հ. 2, էջ 51—53:

21 Բելինսկի. Նամակ Գոգոլին, էջ 11—12:

պանության վարագույրի տակ, ինչպես անբաժանելի ժանտախտ վարակել և դրավել է ամենքի միտքն ու հոգին»[22]։

4. Ժողովրդի մեջ կրոնասիրության, կրոնական հավատի ուշնշացման փաստի ընդգծումը։

«Ավելի ուշադիր նայեցեք և կհամոզվեք,— Բելինսկին գրում է Գոգոլին,— որ նա (ռուս ժողովուրդը—Վ. Դ.) իր բնությամբ խորապես աթեիստ ժողովուրդ է։ Նրա մեջ դեռևս շատ անհավատության կա, բայց կրոնասիրության նշույլ անգամ չկա»[23]։

Աբուլյանն Աշտարակեցուն գրում է. «Այն ժամանակները թշնամիների հարստահարությունները վարում և կրթում էր ժողովրդին կրոնի ջերմեռանդության և աստվածապաշտության մեջ, այժմ քաղաքական աղատությունները վերացնում և արմատախիլ է անում մեր առաջին և վերջին առաքինությունը, որով հայոց ազգը անկման օրերից մինչև այսօր բարձրացրել էր բոլոր ազգերի մեջ. հավատի հաստատության մասին եմ ասում, բարեբի մաքրության և անկեղծ ջերմեռանդության մասին, իր կրոնի և ազգակիցների հանդեպ (ընդգծումը հեղինակինն է, տես ԽԱ. ԵԼԺ հ. 10, էջ 296)[24]։

5. Հոգևորականության վարքաղրկումը ժողովրդի աչքում։

Բելինսկին գրում է. «Ո՞ւմ մասին է ռուս ժողովուրդը անպատկառ բաներ պատմում. տերտերի, երեցկնոջ, տերտերի աղջկա և տերտերի աշխատողի մասին։... Մի՞թե տերտերը Ռուսիայում բոլոր ռուսների համար որկրամոլության, ժլատության, ստորաքարշության, անամոթության ներկայացուցիչը չէ։... Իսկ մեր հոգևորականության մեծամասնությունը միշտ աչքի է ընկել միայն հաստ փորով, սխոլաստիկական թծախնդրությամբ և վայրի տգիտությամբ»[25]։

Այս մասին իր հերթին Աբուլյանը գրում է՝ «Հայաստանում հավատի և աթոռակալները և առենակալները քնելու, պարապության, խոովարարության, ծուլության, բամբասանքի և որկրամոլության մեջ տքնում են գերազանցել միմյանց... Հարուստ առավ էլ ավելի ոճրագործ մի թշնամի... մեր հոգևորականների կուրությունը և խավարամտությունը, որոնք կորցնելով ազդի

---

22 «Դիվան Խ. Աբովյանի», հ. 2, էջ 51—52։

23 Բելինսկի, նույն տեղում, էջ 20։

24 «Դիվան Խ. Աբովյանի», էջ 51։

25 Բելինսկի, նամակ Գոգոլին, էջ 19, 21։

առաջ իրենց հարգ ու վարքը, կորստյան են մատնում և նախնիքների և ազգապետների բոլոր սրբությունները»[26]:

6. Հասցեատիրոջ և ցարիզմի միջև հաստատված սերտ հարաբերությունների մասին արված հեգնանքը:

Քննադատելով ռուս ժողովրդի և նրա տերերի փոխհարաբերության մասին Գոգոլի ներկայացրած կեղծ պատկերը, Բելինսկին գրում է. «Ինչ վերաբերում է անձամբ ինձ, ձեր խղճին եմ թողնում հափշտակվելու ինքնակալության աստվածային գեղեցկության հայեցումով (դա հանգիստ է և ասում են, շահավետ է ձեզ համար)... իսկ բարձրագույն իշխանություններին ուղղված օրհներգը լավ է դասավորում բարեպաշտ հեղինակի երկրային դրությունը»[27]:

Աբովյանը քննադատելով Աշտարակեցու գործունեության հետադիմական շրջադարձը գրում է. «Եթե ճիշտ չեմ խոստովանում, ձգեցեք ինձ, խնդրում եմ, ամենախիստ նզովքի տակ, ապա թե ոչ թանկ է և ձեր մի րոպեն, որը զուր տեղը կորցնում եք Տփխիսում, զուր եմ ասում, որովհետև ես ինքս ականատես եղա մեր ազգային աթոռի թշվառության, որտեղ միայն տգիտությունն է, որ բազմած է լուսավորչի գահի վրա»[28] և այլն:

Ինչ է ակնարկում Աբովյանը գրելով, թե հայոց կաթողիկոսը, որ կոչված է բազմելու լուսավորչի գահին և հոգալու ժողովրդի կենսական կարիքները, այն թողել է տգետներին և անգործ նստել Թիֆլիսում: Աբր. Զամինյանը գրում է, թե «Ներսես կաթողիկոսը չէր սիրում էջմիածնում մնալ, թողնելով այնտեղ տեղապահ Ղուկաս եպիսկոպոս Արագածոտն՝ ինքը կյանքի մեծ մասը Տփղիս էր անցկացնում»[29]: Իր հերթին Կ. Կոստանյանցը ավելացնում է. «Ինչ վերաբերում է նրա կաթողիկոսության, ճշմարտության դեմ մեղանչած չենք լինի, եթե ասենք, որ նա ունեցավ անհաջող հայրապետություն:... Նա հաճախ շփոթեց սկզբունքը հաճույքի հետ: Զգալով գործել իբրև ծայրագույն հոգևոր պետ ինքնուրույնաբար, շատ անգամ նա ինքն իրեն հակասում էր, հակասելով և իր անցյալին»[30]:

Եթե ավելի քան կես դար հետո Աշտարակեցու կենսագիրները

---

26 «Դիվան Խ. Աբովյանի», էջ 52, 53:

27 Բելինսկի, նույն տեղում, էջ 21—22:

28 «Դիվան Խ. Աբովյանի», էջ 53:

29 Ա. Զամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, էջ 165:

30 Կ. Կոստանյանց, Տ. Ներսես է... էջ 49—50:

չէին հասկանում նրա «իր անցյալին հակասելու» պատճառը, ապա ի պատիվ Աբովյանի պետք է ասել, որ նրան շատ լավ հայտնի էր հայ լուսավորչական եկեղեցու գերագույն վարչության և ցարական ղեկավարող օրգանների ներքին կապը և այդ լավատեղյակությունն էր, որ լինելով Ներսեսի կուսակցության կողմնակից, նրան «սիրելի» անձնավորություն, Աբովյանը այնուամենայնիվ նամակի տակ չստորագրեց, որպեսզի նրա ձեռքը քաղաքական մեղադրանքի իրեղեն հիմք չտա: Նման համոզմունքն էր հիմք տալիս Աբովյանին, որպեսզի կովկասյան կեղծավոր լրագրերի «օդաճայն շռինդների» համար Ներսեսին դիմի, նրան մեղադրի:

7. Ռուսաստանի համեմատությամբ եվրոպական պետություններում քաղաքական ազատությունների գերադասելի վիճակի ընդգծումը:

Բելինսկին գրում է. «Ռուսաստանում ապրած ժամանակս ես չէի կարող այդ բանն անել (ճշմարտությունը բացարձակ հայտնել— Վ. Ղ.), որովհետև այնտեղի «Շպեկինները» ուրիշների նամակները բաց են անում ոչ միայն անձնական բավականության համար, այլև պաշտոնի բերմամբ՝ մատնությունների համար»[31]:

Աբովյանը արձագանքում է. «Եվրոպայի աերությունների մեջ ուրախ են լինում, որ արդարն է խոսվում և մտածվում, չգիտեմ այստեղ ինչպես է, միմիայն կարելի է լրագրերի միջոցով նախատել իմ հանդգնությունը» (ասել է թե մատնել— Վ. Ղ.)[32]:

8. Հեղինակների և հասցեատերերի միջև եղած գաղափարական նախկին սերտ մերձակցությունը և արդի անհաշտությունը:

«Այո,— գրում է Բելինսկին,— ես ձեզ սիրում էի այն ամբողջ կրքով, որով իր երկրի հետ արյունակցորեն կապված մարդը կարող է սիրել երկրի հույսը, պատիվը, փառքը, նրա մեծ առաջնորդներից մեկին՝ գիտակցության, զարգացման, առաջադիմության հանապարհին»: Ապա՝... «Մտրակի քարոզիչ, տգիտության առաքյալ... ի՞նչ եք անում դուք: Նայեցեք ձեր ոտքերի տակ, չէ՞ որ դուք կանգնած եք անդունդի եզրին»[33] և այլն:

«Սույն եռանդով և ես,— գրում է Աբովյանը,— Արամյան տոհմի որդիներից նվաստս ոտքի տակ տալով շատ հեռավոր

---

[31] Բելինսկի, նույն տեղում, էջ 32:

[32] «Դիվան Խ. Աբովյանի» հ. 2, էջ 53:

[33] Բելինսկի, նամակ Գոգոլին, էջ 12, 17—18:

երկրներ, դիմեցի մեր հավատի մորը սրբազան ուխտով հաղորդակից լինելու տենչալի տիրոջդ աշխարհաքարող հայտնության ու փառքին...» և ապա՝... «և ձեր դարը, որ օվսաննայով գովաբանեցինք, արցունքի մաղթանքներով խնկարկեցինք, ավելի քան հնգապատիկ խոր ցած գցեց ոչ միայն մի դար, այլ տասնյակ դարեր, և շատ շատերին ձեր հետնորդներից, որոնց խաբված ազգն այլևս չի հավատալ»[34] և այլն:

9. Հասցեատերերից հեղինակների ակնկալությունները և նրանց արդի գործունեությունից խոր հիասթափությունը.

Գոգոլի մոտ Բելինսկին գնահատելով իրականությունը մերկացնող նրա ռեալիզմը, գրում է, որ իր հիանալի գեղարվեստական ստեղծագործություններով նա հզոր թափով նպաստում էր Ռուսաստանի ինքնագիտակցությանը, հնարավորություն տալով նրան ինքն իրեն, ինչպես հայելու մեջ, նայելու: Մինչդեռ այժմ հանդես է գալիս մի գրքով, որտեղ հանուն Քրիստոսի, բարբարոս կալվածատիրոջը սովորեցնում է ավելի շատ շահագործել գյուղացիներին և ավելի շատ հայհոյել նրանց՝ անվանելով անլվա մռութ, միևնույն ժամանակ «խրատում» մուժիկներին, որոնք չեն լվացվում հենց նրա համար, որ հավատալով իրենց տերերին իրենց մարդ չեն համարում:

Դիմելով Աշտարակեցուն Աբուլյանն ընդգծում է թե Հովհաննես հայրապետի օրոք ղրկվելով լուսավորչի գահի հովանավորությունից ինքը փափագել է Հայոց աթոռին Ներսեսի գալստյան օրերին: «Սակայն այժմ ո՞ր նորոգությունը, ո՞ր առաքինագործությունը կարող են տաքացնել մեր սառած սրտերը,— գրում է նա,— Դոմշագյո՞լը, թե՞ դպրոցների բացակայությունը, հոյակապ գո՞մը, թե՞ արդարացի անբավականությունը և բարեփույթ մարդկանց սրտունջը ազգի մեջ... թե՞ Ձերդ վեհափառության անընկճելի պատերազմը... քաղաքների և առաջնորդների դեմ, որի հետևանքով մեր ազգը կրկին ոտնահար է լինում լուսավոր և բարեխոհ մարդկանց առաջ»[35]:

10. Անգամ ոճական դարձվածքները. ա) համեմատությունը ամերիկական նեգրերի հետ, բ) երկուսն էլ խոսում են ոչ թե իրենց, այլ ժողովրդի անունից, գ) ասելու շատ բան ունեն, բայց կարճ են կտրում.

---

34 «Դիվան Խ. Աբովյանի», էջ 51, 52:

35 «Դիվան Խ. Աբովյանի», հ. 2, էջ 52:

«Եթե ես չիակատար աղատություն տայի իմ զգացմունքին, այս նամակը շուտով կվերածվեր մի հաստ տետրի»[36]— գրում է Բելինսկին: «Այլև շատ բան ունեի երկար ու ձիգ ասելու, բայց իմ վիրավորված սիրտը ինձ ուժ և զորություն չի տալիս շարունակելու խոսքիս ընթացքը»[37] գրում է Աբովյանը, և այլն:

11. Վերջապես ողջ նամակի մարտական շունչը:

Այսպիսով, որ Աբովյանը գիտեր ու կարդում էր Բելինսկուն և նույն ոգով անդրադառնում Հայաստանում իշխող իրադրությանը անտարակուսելի ենք համարում: Ցմոռանանք նաև, որ մեզ հասածը Աշտարակեցուն ուղղված Աբովյանի գրության սևագիրն է, մաքրագիրը անկասկած ավելի կատարյալ է եղել: Բայց բանը Բելինսկուն իմանալու կամ չիմանալու մեջ չէ միայն, թեկուզ ինքնըստինքյան դա գիտական մեծ հետաքրքրության խնդիր է: Ամենակարևորը այն երևույթն է, որ Աբովյանը կայսրության գաղութային հետամնաց ծայրամասում իր մոտ ուներ հակացարական, հակակառավարական այնպիսի գրականություն, որի գոյության մասին տվյալ ժամանակ ոչ միայն մայրաքաղաքներում, այլև ընդհանրապես Ռուսաստանում երկրի առաջադիմական շրջաններին հայտնի չէին[38], և որի համար մարդկանց առանց դատ ու դատաստանի Սիբիր էին քշում: Մյուս կողմից Աբովյանի այդ գրականության առկայությունն իսկ կասկած չի թողնում, որ նրա ակտիվ ընթերցողն արդեն պարզ գիտակցում էր, իրար հակոտնյա երկու Ռուսաստանի գաղափարը և հակառակ ցարական, պաշտոնական Ռուսաստանի կանգնած էր դեմոկրատական ժողովրդական Ռուսաստանի պաշտպանության դիրքերում:

Կարծում ենք այս փաստերը կարող են նոր ճշտումներ մտցնել Աբովյանի կյանքի ու գործունեության սակավ ուսումնասիրված կողմերի վրա և օգնել դրանք նոր լույսով մեկնաբանելու:

---

36 Բելինսկի, նույն տեղում, էջ 32:

37 «Դիվան Ս. Աբովյանի», էջ 53:

38 Խոսքը Գոգոլին գրած Բելինսկու նամակի մասին է, տես՝ «Письмо Белинского к Гоголю», статья и публикация К. Богаевской, «Литературное наследство» հ. 56, էջ 526:

ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

ՄԱՅԻՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

Միքայել Նալբանդյանի համարյա բոլոր աշխատություններում չնչին բացատրությամբ, շոշափվում են հայ հին գրականության հետ կապված հարցեր, բայց առավել մանրամասնորեն դրանք արծարծվում են նրա «Յաղագս հայկական մատենագրության» ճառում (1854—1855 թթ.), «Թափառական հրեայի» թարգմանության առաջաբանում (1857), «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» (1858), «Մեռելահարցուկ» (1859), «Հիշատակարաններ» (1858—60), «Երկու տող» (1861), «Ղազար Փարպեցու թուղթը» (1864), «Նկատողություններ» (1864—65) աշխատություններում։ Սրանցից զատ Նալբանդյանն զբաղվել է նաև հայ հին գրական երկերի ժողովրդականացումով՝ թարգմանությամբ և ծանոթագրություններով։

Նալբանդյանի աշխատությունների այս ժամանակագրական թվարկումն ապացույց է այն բանի, որ հայրենի գրականության անցյալ ու ներկա վիճակը նրան զբաղեցրել է ողջ գիտակից կյանքի ընթացքում, և ինչպես ցույց է տալիս վերոհիշյալ ցանկը, ավելի մանրազնիտորեն և խորացված՝ կյանքի վերջին շրջանում։

*Միքայել Նալբանդյանի՝ հայ հին գրականությանը նվիրված առաջին և ամբողջական աշխատությունը «Յաղագս հայկական մատենագրության» ճառն է, գրված 1854—55 թվականներին, երբ նա նոր էր Նախիջևանից Մոսկվա փոխադրվել և ուսանում էր Մոսկվայի համալսարանում**։

---

* «Յաղագս հայկական մատենագրության» ճառը առանձին քննության է առնված մեր «Միքայել Նալբանդյանը և հայ հին գրականությունը» անտիպ ուսումնասիրության մեջ։ Այստեղ ուրվագծվում են ճառի հիմնական դրույթները միայն։

Մ. Նալբանդյանի «Յաղագս հայկական մատենագրութեան» ճառը նվիրված է նոր գրական լեզվի և նոր գրականության դաոի պաշտպանությանը: Ժամանակի բոլոր լուսավորիչների նման նրան հետաքրքրում է լուսավորական գաղափարների տարածման հարցը, ժողովրդին «մոլախոտեալ ճանապարհից» «արքունի պողոտա» հանելու նպատակը: Դրա առաջին պայմանը նրան մատչելի լեզվով խոսելու, գրականության լեզուն ժողովրդին ըմբռնելի դարձնելու մտահոգությունն է: Բայց լեզուն միայն միջոց է. «Զի՞նչ արդեօք կարէ բարբառիլ դժբաղդ լեզուն՝ աղաչեմք ասել... Եթէ բանականութիւնն ծածկեալ և դեռևս փշովք և մամռովք՝ ոչինչ ոմն հանելոյ ի հրապարակ»[1]: Ժողովրդին լուսավորելու ճանապարհը՝ մատչելի լեզվով լուսավոր գաղափարներ մատուցելն է: Հակառակ դեպքում լեզվի նորամուծությունը մնում է սոսկ ինքնանպատակ «ձգտողություն»: «Այն լեզուագիտութիւն, որ ոչ հարըստացուցանէ զմիտս ուղիղ գաղափարօք... ի բնաւս՝ էր միայն անխորհուրդ մեքենապաշտ ձգտողութիւն գիտելոյ զլեզուն, առանց մշակելոյ զանշէն մնացեալ բանականութիւնն...»[2]: Գրականությունը պետք է մշակի ազգի «անշէն մնացեալ բանականությունը», այն պետք է օդնի հարստացնելու ժողովրդի միտքը կյանքի բազմազան երևույթների ճանաչողությամբ:

Գրականությունը պետք է հագուրդ տա մարդու, առաջին հերթին երեխայի, հետաքրքրասեր հոգուն, նրան դարձնի բազմակողմանի գիտելիքներով զինված հասարակության անդամ: Այնինչ հայկական մանուկները «ի բերան առեալ զանուղ և զանծուծ ուղղականն և զսեռականն զդուին և նոցկտան, ցամաքին և չորանան հոգւով»[3]: Պետք է կյանքի կոչել հայ երեխաների և ազգի «աննջեցեալ բանականությունը» խավարը լույսով փարատել, «և կենդանութեամբ կյանքի կոչել զնիրհեալ հոգի հայկական մանկըտւոյ...» առանց բեռնելու նրան դժվար ուսանելի հին հայախոսությամբ:

Այս տեսանկյունով Նալբանդյանն ակնարկ է գրում հայ նշած մատենագրության վրա և գտնում, որ գրականությունն իր նշած վիճակով անօգնական է տնօրինելու հայ երեխաների դաստիարակության ու կրթության գործը:

---

1 Մ. Նալբանդյան, երկ, հատ. 2, էջ 24:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 22:

Հայ հին գրականության մեջ, ըստ Նալբանդյանի, «հազիւ ուրէք գտանեմք զայնպիսի ինչ, որ կարող էր մշակել զանշէն մնացեալ բանականութիւն ազգի մերոյ»[4]: Ժողովրդին լուսավորելու համար անհրաժեշտ են ոչ թե մեր հին, թեկուզ և անգուգական գործերը, այլ «Պէտ գոն հայկական նոր-նոր մատենից, յորս ատանդեալ լիցին այն ամենայն գիտութիւնք, որք հասարակաց են այժմուս յԵւրոպայ»[5]: Նա ցույց է տալիս այդ պահանջի ժողովրդական բնույթը. «Ազգն ինքնին խոստովան լինի թէ օտարացեալ է ի սեպհական գրականութենէ և օտարին ապրի ժառանգութեամբ... և պահանջէ, զի գրուածքն մեր լիցին նմա հասկանալի, կիրթ և մաքուր նոր հայախօսութեամբ, զոր ընթերցեալ և աճեսցի բարոյապէս և աճեցուսցէ զբողբոջ լեզուին»[6]:

Եթե մի հայացք նետենք դեպի 19-րդ դարի 30—40-ական թվականները, ապա այս մտքերի արտահայտությունը կգտնենք Խաչատուր Աբովյանի ստեղծագործություններում և, հատկապես, հայ նոր գրականությունը նշանավորող անմահ «Վերք Հայաստանի» վեպում:

Բայց այն ժամանակ, երբ Նալբանդյանը գրում էր իր «Յաղագս հայկական մատենագրութեան» ճառը, Աբովյանի «Վերքը» դեռևս անհայտ էր ժողովրդին: Այն հրապարակ եկավ մի քանի տարի հետո միայն: Եվ երբ լույս տեսավ Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, այն, ըստ Նալբանդյանի, նշանավորեց հայ նոր գրականության սկիզբը:

***

Նալբանդյանը հայ հին գրականության գնահատության հարցում ելնում էր ոչ միայն ժամանակի լուսավորական գաղափարների տեսանկյունից, այլև հասարակական անհրաժեշտություն դարձած նոր ռեալիստական գրականության պահանջներից: Դեռևս «Յաղագս հայկական մատենագրութեան» աշխատության մեջ, քննադատելով ու մերժելով կղերական գրականության սխոլաստիկական էությունը և նշելով եվրոպական ու ռուսական գրականությունների ռեալիստական ուղղությունը, Նալբանդյանը պա-

---

4 Նույն տեղում, էջ 50:
5 Նույն տեղում, էջ 60:
6 Նույն տեղում, էջ 58:

հանդում էր հայ իրականության մեջ ևս հրաժարվել դրական հին ձևերից և ստեղծել ժողովրդի կյանքն արտացոլող ռեալիստական գրականություն։

Բնութագրելով գեղարվեստական գրականությունն իբրև ազգի ոգու, նրա հայացքի, նրա ընկերական կյանքի ռեալիստական արտացոլում, Նալբանդյանը դրանով իսկ սահմանում էր իր «էսթետիկական չափանիշը»։ «Այն մատենագրությունը,— գրում է նա Ս. Նազարյանի «Հանդէս նոր հայախոսութեան» գրքի մասին հոդվածում,— որ անքակտելի կապված չէ մի ազգի հոգու հետ, այն մատենագրությունը, որի մեջ, իբրև հայելու մեջ չէ երևում ազգի կյանքը, նրա և ամենանուրբ գծագրությունքը, այդպիսի մի մատենագրություն, թող ներեն մեզ այսպես ասել ճշմարտությունը, նման է ճիզվիթների կրոնավորությանը... այդպիսի մատենագրությունը այնքան դաստիարակիչ կլինի ազգին, որքան մի խորթ մայր օտարի զավակներին»[7]։ Կյանքի արտացոլման այս չափանիշով նա նորից նայում է հայ գրականության անցյալին և սրտի անհուն ցավով արձանագրում, որ մեր մատենագրության մեջ չեն երևում հայ ժողովրդի «գծագրությունը»՝ նրա հոգին, նրա «ընկերական կյանքը»։ Այստեղ նա հանդում է այն հետևության, թե հայերը դեռևս չունեն իսկական մատենագրություն։ «Մեր սիրտը արյունով է լցվում այս ճշմարտությունքը ասելու ժամանակ,— գրում է Նալբանդյանը,— որովհետև մի չար բաղդով այս րոպեիս այնտեղ ենք հասած, որ չենք կարող առանց մեր խղճմտանքը արատավորելու ասել, թե մեր ազգը ունի մատենագրություն»[8]։ ... «լավ ու վատ եղել է և կա աբեղայական դպրություն»[9]։

Գրականության ժողովրդայնության պահանջի այս չափանիշով արդեն հասկանալի է դառնում և՛ այն բացասական գնահատականը, որ տալիս է Նալբանդյանը Սայաթ-Նովայի և միջնադարի մի շարք հեղինակների ու տաղերգուների ստեղծագործությանը, մյուս կողմից՝ այն ծայրահեղ բարձր գնահատականը, որ տալիս է նա Մ. Թաղիադյանի «Տէր կեցո՛ զՀայս» բանաստեղծությանը, որի առանցքային հարցը ամեն մի հայի հուզող Հայաստանի ու հայության դժբախտ ճակատագրի խնդիրն էր։ Այս բա-

---

7 Մ. Նալբանդյան, նշվ., հատ. 2, էջ 146։

8 Նույն տեղում, էջ 146։

9 Նույն տեղում, էջ 65։

նաստեղծության հայրենասիրական բովանդակությունը դրավել է Նալբանդյանին ավելի, քան մեր դրականության մեջ մինչ այդ եղած որևէ բանաստեղծություն։ «Այս երգը,— ասում է Նալբանդյանը,— թե՛ յուր բովանդակությամբ, թե՛ յուր բանաստեղծական վաւերուն հորինվածքի և թե՛ հայոց ներկա վիճակի նշգրիտ պատկերը հանդիսացնելու և դրա բարվոքելու համար հարկավոր եղած հնարները խնդրելու մասին, արժանի է ազգի մասնավոր ուշադրության։ Եթե հնար ունենայի ես, ամենասուրբ պարտականություն կըդնեի ամեն մի հայի վերա անգիր ուսանել այս երկը։ Մինչև այսօր իմ կյանքի մեջ չեմ տեսած կամ լսած մի այսպիսի երգ. ահա բուն ազգային երգ»[10]։

Այսպիսով, Նալբանդյանը հայ հին գրականության մեջ չտեսնելով հայ ժողովրդական կյանքի գեղարվեստական արտացոլում, ոչ թե հին գրականությունից էր պահանջում այդ, այլ տեսնելով այդ հնի պահպանումը և հարստացումը իր օրերի գրականության մեջ ժխտում էր այդ ավանդները, ջանալով ուղի հարթել և լայն ասպարեզ բացել նոր գրականության համար։ Սրանով հայ հին գրականության հարցը Նալբանդյանի համար կրկին անգամ դառնում էր մի զենք նոր դաղափարների արծարծման համար։

* * *

Եթե «աբեղայական» գրականության ոգին չշարունակվեր նաև Նալբանդյանի օրերում, եթե նրանց գաղափարները չհեղեղեին հայ գրականությունը և չարգելակեին նոր ռեալիստական, ժողովրդային գրականության զարգացմանը, հազիվ թե Նալբանդյանն այդքան կարևորություն տար հին գրականության հարցերի լուսաբանմանը։ Նալբանդյանը, իհարկե, դեմ չէր անցյալի ուսումնասիրության, նա, ինչպես կտեսնենք, անցյալի արժեքների ամենագործունյա պրոպագանդիստն է, բայց ամեն մի անցյալ, ըստ նրա, այն չափով է միայն օգտակար, որ չափով նա կարող է «պատուղ տալ ներկայումս» «օգտակար լինել ապագային»։ Նալբանդյանն, օրինակ, գտնում է, որ պետք է ուսումնասիրել հեռավոր անցյալից եկող ավանդությունները. «ազգային ավանդությունքը որքան կա-

10 Մ. Նալբանդյան, երկ, հատ. 1, էջ 267։

բելի է, անշուշտ արժան է ֆրֆրել և դուրս բերել փոշիների տակից. բայց ավանդությունը ենք ասում, որ իբրև մի պատմական սերմ, միշտ կարող են ազգի կյանքի մեջ ծլել, ծաղկել և պտուղ բերել»[11]: Բայց ոչ ամեն հնություն պետք է իբրև սրբություն պաշտել և դրա քարոզի ու անվերջ կրկնության մեջ տեսնել ժողովրդի լուսավորության և փրկության ուղին: «Պետության և լուսավորության խորհուրդը այն չէ,— գրում է Նալբանդյանը «Կրիտիկայում»,— որ ամեն անցած խավար լույս ֆարոզե, ամեն դարերի ծանրության տակ ննջվածին անխոհեմ ծունր դնե, այլ որպեսզի փարատէ այդ խավարը»[12]: Այնինչ միջնադարյան խավարը փարատելու փոխարեն մեր «պրագետ պարոնները, անդադար այդ միջին դարերի կպրե կարասում լողալով ազգության և լուսավորության անունով, աշխատում են նորոգել և հաստատել ազգի վերա այդ խավար ուղղության .տիրապետությունը»: Այդ գրագետներն իրենց պահպանողական հայացքներով անկարող են առաջնորդել ժողովրդին լուսավոր ուղիներով, որովհետև «հասարակ ժողովուրդը շատ անգամ ավելի ազատ է միջնադարյան լուծից, քան մեր պատվելի գրագետը»: Կյանքն առաջ է գնացել, իսկ գրականությունը մնացել է ետ, և իբրև այդպիսին արգելակում է նորի զարգացմանը, ժողովրդի առաջընթացին: Ժողովրդի կյանքն առաջ մղելու համար պետք է հրաժարվել միջնադարյան մտածողությունից. ժողովուրդը «ոչ թե վնաս կրելու չէ միջնադարյան ուղղությունքը մերժելուց, այլ դորա հակառակ այդ մերժողությունը միակ պայման է նոցա առաջադիմության»[13]:

* * *

Հայ նոր ռեալիստական-ժողովրդական գրականության պահանջի տեսանկյունից անդրադառնալով հայ հին գրականությանը և մերժելով նրա՝ իբրև նոր գրականության մնուցիչի պիտանիությունը, Նալբանդյանը միաժամանակ մեծ սիրով և հիացմունքով է խոսել հայ հին գրականության արժեքների մասին: Նալբանդյանը ոչ միայն չի ժխտում, այլ մեծ հայրենասիրությամբ և ազ-

11 Մ. Նալբանդյան, նշվ, հատ. 3, էջ 137:
12 Նույն տեղում, էջ 140:
13 Նույն տեղում, էջ 139:

գային հայարտության զգացումով է վեր հանում իր ժողովրդի անցյալի մշակութային ժառանգությունը, նրա լավագույն նմուշները, հարկ եղած դեպքում վարպետորեն օգտագործելով ժամանակի հարցերի արծարծման համար։

Ղազար Փարպեցու «Պղպի» թարգմանության ծանոթագրություններում նա իր ամենաջերմ խոսքն է ուղղում այդ «Պղպի» անհայտ ընդօրինակողի և պահպանողի հասցեին, որը միաժամանակ արժեքավոր տեղեկություններ է հաղորդել Ղազար Փարպեցու կյանքի մասին։ Այդ գործը ձեռնարկողը, ըստ Նարանդյանի, եղել է «մի արժանավոր մարդ, որ քաջ էր ճանաչում Ղազար Փարպեցու արժանավորությունը։ Անտարակույս, նորան ենք պարտական, որ այս հրաշալի Թուղթը կարդում ենք այսօր մենք, մեր նախահարց օրերից հեռացած, նոցա սրտերից օտարացած, կորած ու շվարած որդիքս։ Այս պատվական մարդը միտք է արել, որ Փարպեցու պատմության քամակում դնե և նորա այս Թուղթը, որ մոռմոքելով ենք ասում, մի քանի տողերում աղճատված է այսօր, և որ ավելի ցավալի է, երկու թերթ էլ իսպառ պակաս»[14]։

Նալբանդյանը հայ հին գործիչների լավագույն արժեքավորողն ու գնահատողն է։ Նա սքանչացած է հայ հեղինակների ջերմ հայրենասիրությամբ, որոշ հեղինակների մտքի խորաթափանցությամբ ու սրությամբ, նրանց վարպետությամբ, գեղարվեստական հարուստ հնարանքների առկայությամբ, լեզվի ճոխությամբ, մտքի և նրա դրսևորման զարմանալի ներդաշնակությամբ, և որ ամենակարևորն է՝ իրենց ժամանակի հարցերի խոր անդրադարձումով։ Շատ քչերը հայ հետագա գրողներից ու հրապարակախոսներից կարողացան այնպես արժեքավորել ու գնահատել հայ հին գրականության առանձին արժեքներ, ինչպես Նալբանդյանը։

Նալբանդյանը հայ հին գրականության ամենաարժեքավոր շրջանը համարում է 5-րդ դարը, որտեղ ամենից ավելի են արտացոլված ազգային կյանքի որոշ կողմերը, այն էլ գեղարվեստական բարձր դրսևորումով։ Հետագա հեղինակների (պատմագիրների) մոտ էլ կա ազգային պատմության արտացոլում, բայց այստեղ բացակայում է աշխարհայացքի ավելի լայն հորիզոնն ու գեղարվեստական համապատասխան ձևը։ Այս իմաստով էլ և՛ իրև

---

14 Մ. Նալբանդյան, *նշվ.*, հատ. 3, էջ 251։

առանձին անհատ հեղինակներ, և՛ իբրև ամբողջություն, Նալբանդյանը բաղմիցս առանձնացնում է 5-րդ դարը և 5-րդ դարյան հայ գործիչներին։ 5-րդ դարն առանձնացրել ու գովերգել են նաև կղերական և լիբերալ պատմագրության և գրականագիտության ներկայացուցիչները, սակայն Նալբանդյանի մոտեցումը միանգամայն տարբեր է նրանցից։ Տարբեր է նրանով, որ մինչդեռ առաջիններն 5-րդ դարի գործիչներին համարում են հայ եկեղեցական գրականության ամենափայլուն և տիպական ներկայացուցիչներ, Նալբանդյանն առանձնացնում է սրանց իրենց գործունեությամբ և հակադրում կղերա-եկեղեցական գործիչներին, որպես նրանցից տարբեր և նրանց հարկադրվող ուժեր, ցույց տալով նրանց բախտամբ շրջապատի հետ և ոչնչացումը, իբրև արդասիք այդ հակադրությունների ու պայքարի։

«Երկու տող» պամֆլետում Նալբանդյանը որոշակի է արտահայտում իր հայացքն այդ մասին. «Մեր այս խոսքերը հոգեվորների ընդդեմ,— գրում է նա,— չէ վերաբերվում մեր տոնելի թարգմանիչներին կամ նոցա հետևող փոքրագույն մասին։ Ինքյանք, այդ սուրբ թարգմանիչքը, ախտորվեցան և հալածվեցան մինչև ի մահ, ընդհանուր հոգևորականության ձեռքով»։

Նրանց հալածանքն ու մահը Նալբանդյանն ուրիշների պես չի բացատրում սոսկ դավանաբանական կամ անձնական հանգամանքներով, այլ հասարակական առաջատար և հետահայաց ուժերի պատմական բախմամբ։ Ժամանակի լուսավոր մտածողները ոչնչացվել են տիրող մեծամասնության կողմից։

Նալբանդյանը բազմաթիվ փաստեր է բերում իրեն քաջ ծանոթ հայ մատենագրությունից. «Ինկելի Խորենացին, այդ հրեշտակ ծերունին չարաչար հալածվեցավ...

Հայոց եկեղեցականությունը և մահո՛վ չհաշտվեցավ այդ պատվառելի ծերունու հետ. նորա ոսկերքը փորեց հանեց գերեզմանից և գետը թափեց։

Ղազար Փարպեցուն ոտքը բորիկ քշեցին վանքից։ Վանքից ազատելու ժամանակ նորա բոլոր ինչքը հափշտակեցին, նաև հունարեն գրքերը, թեև մարդ չկար վանքում հունարեն կարդացող։

Խորովրիկը, դեռևս Հայաստան չմտած, երբ լսեցին թե գալիս է, փրփրեցան նախանձով և վառեցին բորբոքեցին յուրյանց հալածանքը, մինչև որ հայրենիքի անձուկով այրված տոչորված

երիտասարդը, որ աշխարհից աշխարհ գնացել էր բան ուսանելու ազգը լուսավորելու համար, լսելով այս մահաձայն աղեղների դռնչյունքը աղոթեց առ տեր և վճարեց յուր կյանքը, որի ոսկերքը օտար երկրը և ո՛չ մեր արժանի եղանք ընդունելու»[15]:

Այսպիսով բացահայտ է Նալբանդյանի վերաբերմունքը 5-րդ դարի հայ գործիչների նկատմամբ: Իրենց վսեմատեսությամբ ու մտահորիզոնով ժամանակակիցներից բարձր կանգնած լինելով, նրանք ջանացել են ծառայել ժողովրդի լուսավորության գործին ու հասարակության առաջընթացին, բայց բախվելով ժամանակի խավարամիտ ուժերին, ոչնչացվել են հենց այդ բախման մեջ: Այս է Նալբանդյանի առանձնահատուկ համակրանքի ու բարձր գնահատականի սկզբնաղբյուրը:

Սրանից ակնհայտ է, որ Նալբանդյանը հայ հին գրականությունը չի դիտում իբրև միասնական մի գրականություն: Նա չի դասում հեղինակներին մեկը մյուսի հետևից՝ մի գծի վրա, այլ հայ անցյալ գրական ժառանգության մեջ տեսնում է երկու միմյանցից տարբեր ուղղություններ. մեկը՝ իշխող, հետահայաց աբեղայական ուղղությունը, և մյուսը՝ նրանից տարբեր՝ առաջադեմ, լուսավոր գաղափարներ, համազգային առաջամարտ տենչանքներ արտահայտող ուղղությունը:

Հայ հին գրական դեմքերից ոչ ոք այնքան չի արժանացել Նալբանդյանի հիացմունքին, որքան Մովսես Խորենացին: Եվ այս արտահայտվել է նրա ողջ կյանքի ընթացքում: Ամենաջերմ ակնածալից խոսքերով է բնութագրված Խորենացին Նալբանդյանի երկերում՝ «Իմաստուն փիլիսոփա», «անմահ», «խնկելի, «անզուգական» և բոլոր դեպքերում էլ իբրև որոշակի գիտակցված գնահատություն:

Նալբանդյանը Խորենացուն գնահատել է իբրև մեծ հայրենասերի, խիզախ մտածողի և լուսամիտ մարդու: Նալբանդյանին հիացմունք է պատճառել Խորենացու շրջահայեցությունն ու մեծ միտքը՝ հայ ժողովրդի պատմական անցյալը հայ ժողովրդական բանահյուսությամբ լրացնելու հանճարեղ միտքով: Խիզախ այս նախաձեռնությունը անգնահատելի է մեր հնէաբանական և վաղ մշակույթի պահպանման տեսակետից և ապացուցում է Խորենացու, իբրև մտածողի, զարմանալի մեծ ուժը: Խոսելով հայ

---

15 Մ. Նալբանդյան, *Երկ*, հատ. 3, էջ 27—28: Համմտ. նաև նույնի հատ. 2, էջ 207—208:

ժողովրդի մեջ պահպանված ավանդությունների օգտագործման մասին, Նալբանդյանն այն միտքն է ղարգացնում, որ բանահյուսական հնագույն նմուշների մեջ իսկ անդրադարձված է հայ կյանքի պատմությունը, որ նույնիսկ ամենավերացական թվացող ավանդությունն էլ իր հիմքով պատմական է, իրական։ «Որ ապգի մեջ կամենա թող լինի,— գրում է Նալբանդյանը,— բայց և այնպես չկա աշխարհիս երեսին մի ավանդություն, որ առանց ամենայն պատճառի առաջանար... Բայց և այնպես անհնար է թե նոցա հիմքը եղած չլինի կամ մի ստույգ պատահած իրողություն կամ մի գաղափար, որի այլաբանությունը, վերջի սերունդը ընդունում է պատկերաբար, առանց նոցա մեջ թաքնված ճշմարտության կամ փիլիսոփայության վերահասու լինելու։ Բայց ասիական այլաբանությունքը մի աննշան բաներ են համեմատելով հունական դիցաբանության հետ»[16]։

Այս բնութագրումը հիշեցնում է Խորենացու խոսքերը այդ առթիվ, որը և հիացմունքով բերում է ինքը Նալբանդյանը. «Մի արդեօք յունական պերճ և ողորկ առասպելքն իցեն, հանդերձ պատճառաւ, որ զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թագուցեալ»։ «Այսպես էր գրում մեր անդուգական քերթողահայրը Սահակ Բագրատունուն»— ավելացնում է Նալբանդյանը։

Այնուհետև Նալբանդյանը գնահատել է Խորենացուն իբրև իր դարի ամենազարգացած մարդկանցից մեկը, որը մեծ հայրենասիրությամբ մինչև կյանքի վերջը ժողովրդի լուսավորության հարցերն էր առաջ քաշում, ձգտելով տեսնելու մի լուսավոր բարգավաճ հայրենիք, խաղաղ ու շեն, ապահով ժողովուրդ։ Խորենացին խոսելով Հայոց աշխարհում տիրող խավարի թագավորության մասին, նախանձով հիշում է հունաց երկիրը, որի պետական գործիչները աշխատել են մարդկության ստեղծած վուլտուրան իրենց ժողովրդին տալու։ «Բազմաթիվ անվանի և գիտությամբ պարապած մարդիկ հունաց աշխարհից,— գրում է Խորենացին,— հոգ տարան հույն լեզվի թարգմանելու ոչ միայն ուրիշ ազգերի թագավորների դիվանների ու մեհյանների գրքերը... այլև և մեծամեծ զարմանալու արժանի արվեստները, որոնք այս և այնտեղ դժվարությամբ գտնելով փոխադրեցին հույն լեզվի...։ Եվ գովելի են ինչպես ուսումնասիրողները՝ իրենց ջանքի և գիտությունը ուրիշ ազգերից ձեռք բերելու համար, նույնքան և ավելի

16 Մ. Նալբանդյան, *նշ.*, հատ. 3, էջ 144։

նրանք որոնք գիտության այդպիսի գյուտերն ընդունեցին և պատվեցին»[17]: Խորենացու այս խոսքերը արդիաբար են հնչել Նալբանդյանի ականջին:

Տարբեր դարերում և տարբեր հասարակական պայմաններում տարբեր ձգտումներ ունեցող գործիչներին հարազատացրել է իրենց ժողովրդին ծառայելու անսահման տենչն ու ձգտումը, գաղափարի համար յանձը ի սպաս դնելու վեհ ղեգացումը: Նալբանդյանին չէր կարող չհմայել Խորենացու ջերմ հայրենասիրական ոգին, այդ ոգին մարմնացնող նրա Հայոց պատմությունն իր անմահ ողբով: Խորենացու պես Նալբանդյանն էլ այրվում է հայրենիքի վշտով. «Ո՛վ նախախնամություն,— բացագանչում է նա խռովված հոգով,— ինչո՞ւ ապա վառեցիր, բորբոքեցիր իմ մեջ մի ազգասիրության անշիջանելի կրակ, ինչո՞ւ այդպես անգթաբար պատժեցիր ինձ բորբոքելով այդ կրակը, մինչ նա, փոխանակ ջերմացնելու իմ սիրելի ազգակիցների պաղած սիրտը, խորովելու էր իմ ներսը»[18]:

Նալբանդյանը չէր կարող չգնահատել Խորենացու Պատմության համարյա ամբողջությամբ աշխարհիկ բովանդակությունը, իբրև հայ ժողովրդի կյանքն արտացոլող մի հուշարձան:

Խորենացու Պատմության մեջ ամենագովված և երանելի գործիչները մինչքրիստոնեական շրջանի գործիչներն են, վիպական գույներով նկարագրված Արամը, Արտաշեսը, Տիգրանը: Սրանք, ըստ պատմահոր, այն գործիչներն են, որոնք շենություն և խաղաղություն են բերել երկրին, և նրա համար չկա ավելի դուրալի դործ, քան հայրենի այսպիսի գործիչների հերոսացումը: Խորենացու պատմության մեջ բարձրացված են ժողովրդի լուսավորությանը ծառայող ու նպաստող գործիչները, և դրանց թվում ամենից ավելի Սահակն ու Մաշտոցը:

Խորենացին անհամեմատ ավելի շրջահայաց է մեր մյուս պատմիչներից, նրան հետաքրքրում են ժողովուրդներն իրենց պատմությամբ, կոստուրայով, որոնց «շարադրած գրվածքները կարդալիս աշխարհական կարդերի դիտություն ենք ձեռք բերում և քաղաքական կարգեր ենք սովորում»[19]:

Խորենացին հիացրել է Նալբանդյանին իր Պատմության գի-

---

17 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգ. Ստ. Մալխասյանի, 1940, էջ 5:

18 Մ. Նալբանդյան, երկ, հատ. 1, էջ 363:

19 Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, էջ 7:

տական հիմունքներով, աղբյուրների ճշգրտությամբ, քննական հայացքով ու լայն ընդգրկմամբ։ Այս բոլորի հետևանքով, Նալբանդյանը բաղմիցս նշելով Խորենացու, իբրև գործչի և նրա Պատմության մեծ արժանիքները, Ղազար Փարպեցու «Պղծի» թարգմանության մեջ նորից ասիթն օգտագործում է Քերթողահոր մեծությունը մեկ անգամ ևս ընդգծելու համար։ «Հայոց մեջ եղել են հեղինակներ,— գրում է նա,— որ Փարպեցուն դասել են Եղիշեից հետո. եթե որպես պատմագիր, Եղիշեից երկրորդ պիտի համարվի Փարպեցին, այդ մենք չենք ընդունում, պատճառ՝ մի միայն մարդ կա, որ կարող է Փարպեցուց առնուլ նորա առաջնություն, և այդ մարդը է անզուգական Մովսես Խորենացին»[20]։

Խորենացու նկատմամբ Մ. Նալբանդյանի վերաբերմունքն արտահայտվում է և այն բանավեճի մեջ, որ նա տանում է Խուդաբաշևի և Իսահակյանի դեմ, քննադատելով Խորենացու և նրա Պատմության մասին նրանց հակագիտական, հակապատմական հայացքները։ Նալբանդյանն անողոք հարվածներ է հասցնում իր հակառակորդներին, ապացուցելով նրանց իմաստակությունն ու տգիտությունը՝ Խորենացուն գնահատելու և նրա Պատմությունն արժեքավորելու խնդրում։ Խուդաբաշևի «Обозрение Армении» գրքում Խորենացին անվանված է թեթևամիտ հեղինակ։ Նալբանդյանը, մի կողմ թողնելով այդ գրքում եղած բոլոր «ծուռ ու սխալ հայացքները ազգային պատմության մեջ երևացած իրողությունների վերա», իր զայրույթն է հայտնում Խորենացու մասին այդպիսի վայրիվերո կարծիք հայտնելու համար. «Ի՛նչպես չհարցանենք Պ. Խուդաբաշևից, թե Խորենացու ո՞ր բանը իրավունք է տվել նորան, որ նա Խորենացին անվանե թեթևամիտ (ընդգծոմը Նալբանդյանինն է)։ Խորենացին, մեր պատմության հայրը, յուր ժամանակի անզուգական փիլիսոփան, ազգի համար մինչև ի մահ աշխատողը և այն խոհե՛մ, ծա՛նր, խելացի և իմաստուն ծերունին, մի թեթևամիտ հռչակել... Ո՞չ ապաքեն առավել քան թեթևամի՛տ է նա, որ այսպիսի անհիմն և անտեղի կարծիք ունի այն երկնաքաղաքացի ծերունու վրա։ Առաջին անգամ լսելով այս բանը Պ. Խուդաբաշևից, բնավ չտարակուսեցանք, որ պարոնը, կամ ամենևին չի կարդացել Խորենացին, կամ թե չէ՝ հաս-

---

20 Մ. Նալբանդյան, *երկ*, հատ. 3, էջ 259—260։

կանում նորա գրվածքը»[21]: Նալբանդյանի այս խոսքերը վերաբերում են ոչ միայն անձնապես Խուդաբաշևին, այլև այն բոլոր հայ և օտարազգի «գրագետներին», որոնք Խորենացու Պատմության մեջ տեսնում են ամեն տիպի կեղծիք ու հերյուրանք, թերություն և արատ, բայց ոչ իսկական պատմություն: Նալբանդյանը ցույց է տվել, որ սրանք ունակ չեն տեսնելու ու գնահատելու Խորենացու Պատմության իրական արժեքներն ու նրա դերը հայ մատենագրության պատմության մեջ:

Բարձր գնահատականի է արժանացել Նալբանդյանի ստեղծագործության մեջ և Եղիշեն, որի մասին խոսելիս Նալբանդյանն առանձնապես ընդգծում է նրա հայրենասիրական զվարթ հոգին ու բանաստեղծական մեծ շունչը:

Դեռևս իր առաջին գործում, երբ ցանկանում էր ցույց տալ հայ հին գրականության աղքատությունը մանուկներին հոգեպես սնելու գործում, Նալբանդյանը Եղիշեին՝ Խորենացու և Փարպեցու հետ մեկտեղ, առանձնացնում էր իբրև լավագույն հեղինակ: Նալբանդյանը չէր կարող անտարբերությամբ անցնել Եղիշեի Պատմության պատմական մեծ արժանիքների կողքից, հայ ժողովրդի կյանքի այն նկարագրի կողքից, ինչպիսին չի տվել մեր պատմիչներից և ոչ մեկը. «Բայց, ո՞վ կարող է պատմել, թե ինչպիսի ծանր տուրքեր ու սակեր, բաժեր ու հասեր էին նշանակված լեռների, դաշտերի և անտառների վրա: Առնում էին ոչ թե ինչպես վայել է պետական արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին՝ թե մի տեղից, որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ի՞նչպես է շեն մնում այդ աշխարհը»[22]: Ճիշտ է, Եղիշեի նկարագրածը օտարների հարկահանության էն է, բայց, միևնույն է, այնտեղ պատկեր է առել հայ ժողովրդի տնտեսական վիճակը:

Նալբանդյանին գրավել է Եղիշեի Պատմության «առողջ և կենդանի հայեցողությունքը»: Սրանք այն չափազանց հետաքրքրքրական մտքերն են լուսավոր բանականության և գաղափարական հերոսի կատարյալ կերպարի մասին, որոնք Եղիշեի Պատմության մեջ մարմնավորվում են Վարդանանց նահատակների մեջ: «Բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնու-

---

21 Մ. Նալբանդյան, երկ, հատ. 1, էջ 475:

22 Եղիշե, Վարդանանց պատմությունը, թարգմ. ե. Տ. Մինասյանի, 1946, էջ 115:

թյունից։ Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից։ Լավ է աչոք կույր լինել, քան մտոք կույր»։ Կամ թե. «Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է. և ինչպես որ մի մարդու վերաբերմամբ է, այնպես էլ ամբողջ աշխարհի վերաբերմամբ»[23]։ Այս և նման մտքերն են, որի մեջ, Նալբանդյանի խոսքերով, լծորդված են ոճի պարզությունը փիլիսոփայական մտքի հետ։ Այս մտքերը Նալբանդյանին գրավել են նաև իրենց այժմեությամբ։

Սղիշեի այն խոսքերը, թե «Ամ հոգիները թուլացած են երկնավոր առաքինությունից, սաստիկ երկյուղի մեջ է ընկած (նրանց) մարմնի բնությունը. ամեն հողմից շարժվում է և ամեն խոսքից վրդովվում և ամեն բանից դողում. այդպիսի մարդը երազական բաներով է անցկացնում իր կյանքը, իսկ մահվան ժամանակ էլ անդառնալի կորստյան է մատնվում։ Ինչպես որ հներից մեկն ասել է՝ չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն»[24] ո՞ւմ ավելի, քան Մ. Նալբանդյանին պիտի ոգեշնչեին։

Նալբանդյանի հայացքների հետևողականության հետաքրքրական նմուշ է Սղիշեի Պատմության տված նրա ընդհանուր գնահատականը։ Նալբանդյանը, բարձր գնահատելով Սղիշեին իբրև հեղինակի, այնուամենայնիվ, ինչպես վերը տեսանք, Սղիշեի Պատմությունը ետ է դասում Ղազար Փարպեցու Պատմությունից։ Նալբանդյանի այս վերաբերմունքը միանգամայն հասկանալի է հետևյալ պատճառաբանությամբ։ Նալբանդյանը, որի պայքարի հիմնական ալաքներից մեկն ուղղված էր հայ կղերի ու կղերամտության դեմ, չէր կարող անուշադրության մատնել Սղիշեի Պատմության կրոնական շղարշն ու վկայաբանական շունչը։

Բայց, չնայած սրան, Նալբանդյանը օգտագործում է Սղիշեի Պատմությունը ժամանակի հուզող հարցերի արծարծման համար։ Իր «Հիշատակարան»-ում, բարձրացնելով հայ երեխաների դաստիարակության հարցը, նա քննադատում է ժամանակի հայ կանանց բարքերը, որոնք իրենց մեջ ոչինչ հայկական չունենալով, «տալիս են աղգին «կեղևով միայն հայ զավակներ»։ Հայ կանանց մեջ ազգային արժանապատվության զգացում արթնացնելու և

23 Նույն տեղում, էջ 108։

24 Նույն տեղում, էջ 108։

ներշնչելու համար, Նալբանդյանն օգտվում է Եղիշեի Պատմության ջերմ հայրենասիրական ոգուց և, փորձում դրանով շարժել նրանց մեջ պատվասիրության ոգին. «Հա՛յ կանայք, ձեզ պես չէին ձեր մայրերը, նոցա սիրտը զարկում էր ազգության համար. ազգին հասած հարվածներին քաջությամբ մասնակից եղան նոքա, յուրյանց ամուսինների հետ միասին: Նոքա չուրացան ազգի օգուտները, նոքա այրություն ցույց տվեցին յուրյանց կանացի վերպարանքի տակ և երբեք չկամեցան, որ նայեին նոցա վերա, որպես մի խաղալիքի, կամ որպես մի նագված զուգված պանուճապատանճի վերա: Հինգերորդ դարում, երբ հայոց ընտիր որդիքը զոհ գնացին պարսկական վիշապին, նոցա մայրերը, կանայքը, քույրերը և դստերքը պակաս չերևացան այն քաջերից, որ ազգի պահպանության համար քաջությամբ ընկան պատերազմի դաշտումը: Նոքա մոռացան յուրյանց կանացի տկարությունը, յուրյանց փափկասնունդ կյանքը, դուրս եկան յուրյանց փառահեղ բնակարաններից և պարզ երկնքի տակ, գետնի վերա տարածվելով չարչարակից գտանվեցան առաքինի դինվորներին... Փոշոտվեցան և ծխոտվեցան սենյակները և առագաստները նորահարսների, և սարդի ոտայն պատեց նոցա նախկին շքեղության վերա: Շատ ձմեռներ անցան, շատ գարուններ եկան, նոցա հետ միասին և գարնան ծիծեռնակներ, բայց նոցա տղամարդիկը հետ չդարձան. նոքա յուրյանց այրիությունը նախատինք չհամարեցին ինքյանց, այլ մանավանդ պարծանք, առաքինի ժուժկալությամբ հարնանալով երկնավոր անմահ փեսային: Այսպէս էին մեր հին մայրերը և քույրերը, այսպես էին մեր կանայք, բայց ի՞նչ մնաց այն օրից...»[25]:

Հայ հին գրականության արժեքավորման ամենալավագույն փաստերից մեկն է Ղազար Փարպեցու ստեղծագործության օգտագործումը:

Բացի այն բնութագրումից, որ Նալբանդյանը տվել է Փարպեցուն իր «Յաղագս հայկական մատենագրության» ճառում և 5-րդ դարի թարգմանիչների մասին զանազան հիշատակություններում, Փարպեցու ստեղծագործության բարձր գնահատման ամենացայտուն արտահայտությունն է նրա կողմից 1864 թվին Պետրոպավլովսկի բերդում կատարած «Թղթի» աշխարհաբար

---

25 Մ. Նալբանդյան, երկ, հատ. 1, էջ 455—456:

թարգմանությունը՝ չափազանց արժեքավոր առաջաբանով և բանասիրական հմուտ ծանոթագրություններով։

Նալբանդյանին Փարպեցու Թուղթը հետաքրքրել է մի՛ իբրև պատմական վավերագիր, և, նամանավանդ, իբրև զենք ժամանակակից պահպանողական հոգևորականության դեմ պայքարելու համար։ Այս իմաստով էլ նա անհրաժեշտ է համարել այդ «Թուղթը» հասարակության սեփականությունը դարձնել։ Նալբանդյանին դրավել է «Թղթի» մեջ ակնառու դարձած այն պատմական ճշմարտությունը, թե հայ հոգևորականությունը երբեք միատարր չի եղել և որ նրա առաջադեմ, լուսամիտ գործիչները կոթծանվել են խավար պահպանողական ուժերի դեմ պայքարում։ Նա «Թուղթը» թարգմանել է հենց այս ցույց տալու նպատակով։ «Առհասարակ, այս հիշատակարաններից ենթադրելով միայն պիտի դուշակել այն դառը հանդամանքը, որոնց մեջ փակված էր Փարպեցին։ Նորա «Թուղթը» և հատաջաբանը, պարզ երևում է, որ պահել են իրենց մեջ եղած բաների ճագիվ մի ճարյուրերորդ մասը»[26]։

Եվ հենց այս կիսատն ու պակասը լրացնելու ու ամբողջական ներկայացնելու նպատակով, Նալբանդյանը մանրակրկիտ բանասիրական աշխատանք է թափում և հատուկ ծանոթագրություններով աշխատում ընթերցողին ճիշտ ներկայացնել Փարպեցու երբեմն մշուշապատ կամ այլաբանական մտքերը։ Կարելի է ասել, որ առանց Նալբանդյանի այս ծանոթագրությունների զգալի չափով կտուժեր Ղազար Փարպեցու երկի գաղափարական կողմի ըմբռնումը և հեղինակի՝ իբրև անվեհեր գործչի, կերպարը կներկայանար ոչ ճշմարտացի։ Այսպես, օրինակ, Վահան Մամիկոնյանին ուղղած Թղթի այն հատվածում, որտեղ Փարպեցին իր մասին է խոսում, նրա դարձվածքների մի մասը բացատական տպավորություն է թողնում իր ինքնանվաստացման, ինքնաստորացման, իսկ երբեմն էլ ամբարտավան դրսևորումներով։ Միայն Նալբանդյանի բանասիրական ճշտումների ու ծանոթագրությունների հետևանքով այն դիտակցվում է իբրև Փարպեցու կողմից աստվածաշնչական Պավղոսի կերպարի և նրա ոճերի օգտագործման մի փաստ՝ իր վիճակի նույնությունը նկարագրելու համար։

Իր ծանոթագրություններով Նալբանդյանը մի կողմից նպատակ ուներ հստակ ու դիպուկ դարձնել Փարպեցու «Թղթի» գաղափարները, մյուս կողմից նրանց միջոցով հարվածել հայագիտու-

---

26 Մ. Նալբանդյան, *նշ. հատ.*, 3, էջ 251։

թյան սխոլաստիկ ուղղությանը, դույց տալու էմինի ծանոթագրությունների գիտական-բանասիրական միակողմանիությունը: Ինչպես ընդհանրապես, այս դործում ևս, Նալբանդյանի յուրաքանչյուր բառը և կետը կշռված է և նրա ամեն մի քայլ հետապնդում է որոշակի նպատակ: «Մեր ուսումնական եղբարքը չնեղանան մեզ,— գրում է նա «Թղթի» ծանոթագրություններից մեկում,— որ այդպիսի մանրամասն ծանոթագրություններ ենք գնում ամեն ֆայլափոխ. նոքա ազատ են չկարդալ. մենք հասարակ ժողովուրդի համար ենք գրում»[27]:

Ժողովրդի համար գրելով, Նալբանդյանը բանասիրական մանրուքներին իսկ տալիս էր բանավիճական-հրապարակախոսական ուժ և մանր փաստերի ճշտումն իսկ դարձնում հակառակորդների մերկացման միջոց:

Նալբանդյանը բարձր է դնահատել նաև Ղազար Փարպեցու «Պատմությունը» համեմատելով այն Տակիտոսի Տարեգրության հետ: Խոսելով այն մասին, որ Փարպեցին իր Պատմությունը համարում է երրորդը՝ Ագաթանգեղոսից և Բուզանդից հետո, Նալբանդյանն ասում է, որ այդ հիշատ է ժամանակագրական խմաստով, իսկ նայելով նրանց իրրև պատմական աշխատությունների՝ «ապա ուրեմն այս երեքի մեջ առաջինն է Ղազար Փարպեցին, որի Պատմությունը սուրբ, անցքերի դասակարգայնությունը պարզ, և ժամանակագրական հաջորդությունքը անշփոթ: Արդարև, Փարպեցու «Պատմությունը» շատ տեղ և մեծ մասով նմանություն ունի Տակիտոսի հոյակապ Տարեգրության, թե իր անաչառակիր ոգու և թե ճարտարության մասին: Եվ մեզ թվում է, թե այս համեմատությունը էր ամենամեծ գովասանությունը, որ կարող ենք տալ Փարպեցու «Պատմության», առանց վախենալու եվրոպական գիտության դատաստանից»[28]:

Հայ հին գրականությունից բերված այս մի քանի նմուշները ապացույց են այն մեծ գնահատականի, որ տվել է Մ. Նալբանդյանը այդ գրականության մնայուն և մեծարժեք ստեղծագործություններին ու հեղինակներին:

Նալբանդյանի ծրագրային ելակետից բխող որոշ դրույթներ ու հայ հին և միջնադարյան առանձին հեղինակների գնահատականներ այսօր կարող են վերապահելի լինել մեզ համար, բայց

---

27 Մ. Նալբանդյան, *նշ.*, հատ. 3, էջ 277:

28 Մ. Նալբանդյան, *նշ.*, հատ. 3, էջ 259:

նրանք միանգամայն հասկանալի են պատմական իրենց ժամանակաշրջանում նոր—դարի մարտնչող գաղափարախոսության կրքոտ ու շիկացած պայմաններում:

Նալբանդյանը հասկացել ու գնահատել է հայ անցյալի ժառանգության պատմական նշանակությունը. մերժելով այն իբրև հասարակական նոր հանգամանքների համար իր դարն ապրած մի ժառանգություն, նա այդ ժառանգության լավագույն մասի արժեքավորման և օգտագործման նախանձախնդիրներից մեկն է եղել իր ողջ կյանքի ընթացքում:

ԲԵԼԻՆՍԿՈՒ, ԴՈԲՐՈԼՅՈՒԲՈՎԻ, ՉԵՐՆԻՇԵՎՍԿՈՒ ԵՎ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

1.

Հասարակական-քաղաքական մտքի անցյալի տարբեր հոսանքների ներկայացուցիչների կողմից ժողովրդական բանահյուսությանը տրված բնութագրումների ու գնահատականների մեջ, պիտական առանձնակի արժեք են ներկայացնում 19-րդ դարի ռուս նշանավոր հեղափոխական-դեմոկրատների մտքերը։ Դրանք ծընունդ են առել և զարգացել են ժամանակի ազնվականական և բուրժուական բանապիտության դեմ մղված դաղափարական պայքարի ընթացքում և յուրովի արտացոլում են իրենց մեջ հասարակական լայն դանգվածների ձգտումներն ու ակնկալությունները։

Հակադրվելով ժամանակակից պաշտոնական գիտության մեջ իշխող հետադիմական տեսակետներին, ռուս հեղափոխական-դեմոկրատները հանձին Բելինսկու, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու ճշմարտացի կերպով բացահայտել են ժողովրդական բանահյուսության հասարակական էությունը, վեր են հանել նրա դաղափարական և գեղագիտական արժեքն ու նշանակությունը։

Ռուս հեղափոխական-դեմոկրատների հայացքով ժողովրդական մասսաների բառ ու բանը սերտորեն կապված է պատմական կոնկրետ իրականության և առաջին հերթին ժամանակակից կյանքի հետ. այն զարգանում ու նորոգվում է յուրաքանչյուր նոր դարաշրջանում, տնտեսական-հասարակական և կուլտուր-կենցաղային նոր հարաբերությունների համեմատ և դրանց հետ միասին։ Այս հիման վրա էլ ահա նրանք ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունները (հեքիաթ, վեպ, երգ, առած և այլն) իրավացիորեն համարել են ժողովրդի կյանքի, պայքարի ու աշխարհայացքի ճանաչողության կարևոր սկզբնաղբյուրներից մեկը։

Հակառակ առաստելաբան բանագետների և այսպես կոչված պաշտոնական ժողովրդագրության ներկայացուցիչների, որոնք իդեալականացնում էին անցյալը և ժողովրդական բանահյուսության մեջ առաջին հերթին փնտրում էին այդ անցյալի կենցաղի ու բարքերի պահպանողական կողմերի արձագանքները, ռուս հնաոփխական-դեմոկրատներին ժողովրդական հեքիաթների, էպոսի, երգերի մեջ հետաքրքրել է գլխավորապես գյուղացիության ժամանակակից կյանքի ու աշխարհայացքի առաջավոր կողմերի, նրա պայքարի ու ոգևորումների արտացոլումը։

Խոսելով ռուսական ժողովրդական քնարական երգերի մասին, Բելինսկին նրանց մեջ արտահայտված է տեսնում ռուս ժողովրդի ազգային բնավորության լավագույն հատկությունները, նրա «հոգու ամրությունը, հզորությունն ու անխորտակելիությունը»։ Այդ երգերի մեջ առկա թախծի և տխրության մոտիվները նա համարում է ոչ թե ժողովրդի թուլության դրսևորում, ոչ թե նրա անօգնականության ու դատապարտվածության հոռետեսական արձագանք, այլ իրրև արտահայտություն նրա բողբոջող առնացի և ուժեղ ոգու. «Ռուսական ոգու թախիծն ունի յուրահատուկ բնավորություն. ռուս մարդը չի տարրալուծվում թախծի մեջ, չի ընկնում նրա ճնշող լծի տակ... Նրա թախիծը չի խանգարում ոչ նրա հեգնանքին, ոչ սարկազմին, ոչ խրախճանքին, ոչ կորճական հանդգնությանը. դա ամուր, հզոր, անխորտակելի ոգու թախիծն է»[1]։

Միանգամայն դրական վերաբերմունք ունենալով ժողովրդական բանահյուսության լավագույն ստեղծագործությունների ընկատմամբ իրրև, աշխատավոր ժողովրդի առողջ ու առաջավոր ձգտումների արտահայտությունների, Բելինսկին առաջ է քաշել այդ ստեղծագործությունների դրառման և ուսումնասիրության անհետաձգելի անհրաժեշտության հարցը, դրվատանքի ջերմ խոսք ասել տվյալ ուղղությամբ հրապարակ եկած լավագույն գրքերի հասցեին։ «Ինչպիսի շնորհակալության են արժանի այն համեստ, անշահախնդիր մշակները, որոնք չթուլացող հետևողականությամբ, անծագույն դժվարություններով ու զոհողություններով հավաքում են ժողովրդական պոեզիայի գանձերը և փրկում են դրանք մոռացության կործանումից»[2]։

---

1 **В. Г. Белинский.** Собр. соч., под ред. Венгерова, *հատ. VI, էջ 477*։

2 **В. Г. Белинский,** Собр. соч., *հատ. III, էջ 448*։

Ուշագրավ են նաև Դոբրոլյուբովի մտքերը ժողովրդական բանահյուսության մասին։ Հակառակ առասպելաբանական ուղղության ներկայացուցիչների, որոնք ժողովրդական բանահյուսությանը մոտենում էին իբրև հնության յուրօրինակ մի թանգարանի Դոբրոլյուբովն այդ բանահյուսության մեջ առաջին հերթին տեսել է ժամանակակից իրականության արտացոլման միասը։ «Ժողովուրդը մինչև հիմա էլ չի դադարում երգել, չի դադարում բանաստեղծական ստեղծագործությունների մեջ դրսևորել ավանդությամբ ստացած իր հայացքները, հասկացությունները, հավատալիքները, մերթ հորինելով նորերը, մերթ էլ իր ժամանակակից վիճակի համապատասխան վերափոխելով այն, ինչ առաջուց արդեն ստեղծված էր»[3]։

Ժողովրդական հեքիաթների, երգերի, առածների մեջ Դոբրոլյուբովի կարծիքով արտացոլվում է ժողովրդի աշխարհայացքը, նրա կենցաղը, նրա կրթական մակարդակը։ Այդ ստեղծագործությունները, քննադատի խորը համոզմամբ, հանդիսանում են այն միջոցներից մեկը, որով հնարավոր է որոշել ժողովրդի զարգացման աստիճանը։ Այս հիման վրա էլ ահա Դոբրոլյուբովը չափազանց կարևոր է համարում, որպեսզի ժողովրդական հեքիաթների ու երգերի գրի առնողները, չբավարարվեն միայն վերջիններիս սկզբնաղբյուրների սոսկական գրանցումով, այլ տան «ողջ պայմանները, ինչպես ղուտ արտաքին, այնպես էլ ավելի ներքին, բարոյական, որոնց մեջ նրանց հաջողվել է լսել այդ երգերը կամ հեքիաթները»[4]։

Հակառակ ժամանակի լիբերալ-բուրժուական էսթետներին, որոնք թերագնահատում էին ժողովրդական բանաստեղծության բարոյական և գեղագիտական արժանիքները, Դոբրոլյուբովը նրա մեջ տեսել է իսկական պոեզիա, բարձր իդեալներ և մեծ արվեստ, զգացումների հարստության ու նրբության։ «Հին արմատացած սովորությամբ, մենք մինչև այժմ ժողովրդի վրա նայում ենք ինչ-որ կանխակալ կարծիքով։ Նա մեզ տակավին ներկայանում է իբրև կոպիտ ամբոխ, որն անընդունակ է բարձր կամ ազնիվ ու նուրբ զգացումների։ Իսկ մինչդեռ, ընդհակառակը, այդ բոլոր զգացումները մեր հասարակության մեջ շատ ավելի քիչ են զար-

---

3 **Н.А. Добролюбов**, Собр. соч., *հատ. I, էջ 593։*

4 *Նույն տեղում, էջ 433, 522։*

գացած: Եթե դեռ աշխարհում կա պոեզիա, ապա այն պետք է փնտրել ժողովրդի մեջ»[5]:

Բելինսկու և Դոբրոլյուբովի նման Չերնիշևսկին ևս իր գրական-հրապարակախոսական աշխատություններում մեծ ուշադրություն է նվիրել ժողովրդական բանահյուսությանը: Նա տարբեր առիթներով խոսել է ժողովրդի բանավոր ստեղծագործության հասարակական-քաղաքական և բարոյական արժանիքների մասին: Ժողովրդական բանահյուսության նկատմամբ իր ունեցած բարձր կարծիքը Չերնիշևսկին բացատրում է միևյն և միևյն ճշմարտության պահանջով, և ոչ երբեք ինչ-որ կողմնակի նկատառումներով, ինչպես այդ լինում է հաճախ[6]:

«Իր անվանն արժանի ժողովրդական պոեզիայի էական հատկությունները,— Չերնիշևսկու համոզմամբ,— ակնհայտ է ժողովրդի հատկություններից, որին այն պատկանում է, նրա ծագման ու դերի հանգամանքներից, որպիսին այն կատարում է ժողովրդական կյանքում... Նա պատկանում է ողջ ժողովրդին, դրա համար էլ նրան խորթ է ամեն տեսակ մանրունք և դատարկություն... Այն ընդհանրապես լեցուն է կյանքով, եռանդով, պարզությամբ, անկեղծությամբ, շնչում է բարոյական առողջությամբ: Ինչպիսին նրա բովանդակությունն է, այդպիսին է և ձևը՝ պարզ, անարվեստ, աղնիվ, կենսունակ»[7]:

Ժողովրդական բանահյուսության հարստության չափանիշը Չերնիշևսկին համարում է նրա հասարակական-քաղաքական բովանդակությունը: «Ժողովրդական պոեզիան միայն այնտեղ էր հարուստ, ուր ժողովրդական մասսան ապրում էր ուժեղ և աղնիվ զգացումներով, որտեղ ժողովրդի ջանքերով կատարվում էին մեծ անցուդարձեր. կյանքի այդպիսի շրջաններ են եղել խալանացիների համար մավրերի հետ պատերազմները, սերբերի և հույների համար՝ թուրքերի հետ կռիվները, մալոռուսների համար՝ լեհերի դեմ մղած պատերազմները»[8]:

Ուշագրավ է նաև Չերնիշևսկու հայացքը ժողովրդական հեքիաթների գեղարվեստական բարձր հատկությունների, և անցյալի դրականության նշանավոր հուշարձանների վրա նրանց

---

5 Н. А. Добролюбов, Собр. соч., *հատ. I էջ 465:*

6 Н. Г. Чернышевский, Полное собр. соч., *հատ. II 1949, էջ 294:*

7 *Նույն տեղում, էջ 297—298:*

8 Н. Г. Чернышевский, Полное собр. соч., *հատ. II, էջ 295:*

ունեցած աննախընթաց ազդեցության մասին: «Կան հեքիաթներ ոչ-մանուկների համար: Դրանց ժողովածուներով, ավելի քան Դանտեով, հռչակված էր վերածնության դարաշրջանի իտալական գրականությունը: Նրանց հմայիչ ազդեցությունը իշխում է Շեքսպիրի պոեզիայի վրա. ինչ-որ լուսավոր է՝ վերջինիս մեջ զարգացել է այդ ազդեցությամբ... Ես երիտասարդ ժամանակս սքանչանում էի «Հազար ու մեկ գիշերներ» հեքիաթներով, որոնք նույնպես բնավ «երեխաների համար հեքիաթներ» չեն. հետագայում, հասուն տարիներիս, ամեն անգամ նոր հիացմունքով ես վերընթերցանում էի այդ զմայլելի ժողովածուն: Ես դիտեմ ոչ պակաս սքանչելի պոետական ստեղծագործություններ, ավելի սքանչելիները չգիտեմ»[9]:

Կարևոր և ուսանելի են Բելինսկու, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու մտքերը գրականության ժողովրդայնության գործում ժողովրդական բանահյուսության ունեցած դերի մասին:

Բելինսկու կարծիքով ժողովրդական բանահյուսության օգտագործումը գրականության մեջ ընդունելի է միայն ստեղծագործական ինքնուրույն մտահղացման պայմաններում: Նա անթույլատրելի է համարում, երբ գրողը բռնում է սովորական ընդօրինակման ուղին: Ժողովրդական պոեզիայի ստեղծագործական օգտագործման այդպիսի օրինակ է նա համարում Լերմոնտովի «Песнь о купце Калашникове». հռչակավոր ստեղծագործությունը: «Մեր բանաստեղծը մուտք է գործել ժողովրդայնության աշխարհը, իբրև նրա տերը և, ներշնչվելով նրանով, ձուլվելով նրա հետ, դրսևորվել է ոչ թե իր նույնությունը, այլ իր հարազատությունը. ստեղծագործության բուն պահին անգամ նա տեսել է նրան իր առջևում, իբրև առարկա և դուրս է եկել նրանից դեպի այլ ոլորտներ, դարձյալ իր իսկ կամքով»[10]:

Դոբրոլյուբովը՝ ժողովրդական բանահյուսության և գրականության փոխհարաբերության հարցը սերտորեն շաղկապել է հեղափոխական-դեմոկրատական էսթետիկայի կենտրոնական հարցերից մեկի՝ գրականության ժողովրդայնության հարցի հետ: Ժողովրդայնության գլխավոր գրավականը համարելով «ժողովրդի առօրյա շահերի» արտացոլումը, «ժողովրդի կարիքների» իմացությունը, Դոբրոլյուբովը դրա հետ մեկտեղ կարևոր տեղ է հատ-

9 Նույն տեղում, հատ. XII, էջ 130:

10 В. Г. Белинский, Собр. соч., հատ. II, էջ 35:

կացրել նաև ժողովրդական բանահյուսության իսկական ակունքներին մոտ լինելու հանգամանքին, համարելով այն ժողովրդայնության հասնելու պայմաններից մեկը։ Ի թիվս մի շարք այլ հեղինակների, նա «ըստ ամենայնի» ժողովրդական բանաստեղծ է անվանում ուկրաինական ժողովրդի մեծ կոբզար Տարաս Շևչենկոյին, նախ այն բանի համար, որ նա իր ստեղծագործության մեջ ցայտուն կերպով արտացոլել է ժողովրդի ազատասիրական ձգտումները, և ապա նաև այն բանի համար, որ Շևչենկոն «մոտ է ժողովրդական երգին, որն ընդգրկում է իր մեջ ժողովրդի առօրյա կենսական շահերի ողջ շրջանակը»[11]։

2.

Ինչպես քաղաքական, փիլիսոփայական, տնտեսագիտական և դեղագիտական հարցերում, այնպես էլ ժողովրդական բանահյուսության բնութագրման ու գնահատման գործում Բելինսկու, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու հայացքներին շատ կողմերով մոտ ու համահունչ են Մ. Նալբանդյանի հայացքները։ Եվ դա բնական ու հասկանալի է։ Իրրև համոզված ու հետևողական հեղափոխական ու դեմոկրատ, կանգնած լինելով շահագործվող մեծամասնության շահերի պաշտպանության դիրքերում, Նալբանդյանը, Բելինսկու, Դոբրոլյուբովի ու Չերնիշևսկու նման, բարձր գնահատական է տվել աշխատավորական մասսաների բառ ու բանին, նրանց տենչանքները, ակնկալությունները, պայքարն ու ոգորումները արտացոլող բանավոր գեղարվեստական ստեղծագործությանը (ժողովրդական բանահյուսությանը)։ Իր գրական-քննադատական և հրապարակախոսական աշխատություններում նա արժանի ու պատշաճ տեղ է հատկացրել այդ ստեղծագործության հարցերին, մատերիալիստական և պատմական մոտեցում ցուցաբերելով դրանց լուծման ժամանակ։

Բելինսկու, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու նման Միքայել Նալբանդյանի բանաքննական հայացքները ևս ծագել ու կազմավորվել են ժամանակի պահպանողական ու հետադիմական մտահայեցողության դեմ մղված գաղափարական պայքարի մեջ և արտացոլում են նրա լուսավորական և հեղափոխական-դեմոկրատական

---

[11] Н. А. Добролюбов, Собр. соч., հատ. I, էջ 566։

համառոտ ակնարկը հասարակական կյանքում ժողովրդական լայն զանգվածների ունեցած բախտորոշ դերի և նույն այդ զանգվածների առնչված հոգևոր մեծ արժեքների մասին:

Իրեն հատուկ սրությամբ Նալբանդյանը քննադատության է ենթարկել բոլոր նրանց, ովքեր մեզանում ազգի կողմից ստեղծված հոգևոր արժեքները կապել են միայն հասարակական վերնախավերի հետ: Իսկ ազգ ասելով, ինչպես հայտնի է, նա հասկանում էր «հայոց հասարակ ժողովուրդը» և ոչ «այն մի քանի մարդիկը, որ արծաթի սանդուղքով վեր էին բարձրացել ազգի մակևևույթից»[12]:

«Մենք կարծում ենք,— գրել է նա այդ առթիվ,— թե իրավունք չկա առանց դրական ապացույցներ ունենալու, ամեն մի հին ավանդության մնացորդ տեսնելու ժամանակ վաղել թագավորների քամակիցը. ազգը մինչև թագավորության հասնելը, տառնում է և ստեղծում է իր ավանդությունքը, ծեսերը և արարողությունքը, որոնք, այո՛ թե՛ թագավորների ժամանակ և թե՛ նոցանից հետո ընկնում են դարերի ազդեցության տակ»[13]:

Ժողովրդին համարելով հոգևոր արժեքների հիմնական ստեղծողը, Նալբանդյանը ըստ այդմ գրականության ակունքները տեսնում է անգիր բանահյուսության մեջ: Նրա հայեցակետով բոլոր ժողովուրդների մոտ էլ գրականությանը անմիջապես նախորդել է մի շրջան, երբ գեղարվեստական ստեղծագործությունը արտահայտվել է երգերի, առածների և ուրիշ ժանրերի միջոցով: Իր խոսքը մանրամասնորեն հայ գրականության «մանկության» շրջանով, Նալբանդյանը գտնում է, որ «Գրականութիւն լեզուիս, որչափ լուսս տան մեզ նշխարք մնացեալք առ հինաւուրցն Խորնոյ, յար և նման առ ամենայն ազգս՝ սկսանի վիպասանական երգովք ղբաջադրութեանց դիւցազանց, զորս դեռ ի չորրորդ և ի հինգերորդ դարս երգիչքն ի Գողթան բամբռամբ երգէին»[14]:

Հակառակ այն մարդկանց, ովքեր ժողովրդական բանահյուսության մեջ տեսնում էին միայն հետավոր անցյալի արձագանք-

---

12 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 452 («Հիշատակարան»):

13 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 163 («Կրիտիկա»):

14 Նույն տեղում, հատ. 2, էջ 25 («Յաղագս հայկական մատենագրութեան»):

ները, Նալբանդյանը գտնում է, որ ավանդական բանահյուսությունը անցյալից ոչ պակաս արտացոլել է նաև ժողովրդի ժամանակակից կյանքը: Նալբանդյանի կարծիքով ժողովրդական բանահյուսությունը կապված լինելով ժողովրդի կյանքի ու աշխարհայացքի հետ, զարգանում, փոխվում ու նորոգվում է յուրաքանչյուր նոր դարաշրջանում, համապատասխանելով տնտեսական, հասարակական, քաղաքական ու կենցաղային նոր երևույթներին ու հարաբերություններին: Ահա թե ինչու նա խորություն չի դնում պատմական տարբեր դարաշրջաններում ստեղծված բանաբվեստի հուշարձանների մեջ, ըստ արժանվույն գնահատելով թե՛ վաղնջական դարերից եկող առասպելների և թե՛ նոր ժամանակների դյուցազական խաղիկների ճանաչողական և գեղարվեստական նշանակությունը[15]:

Ի տարբերություն հակապատմական այն ըմբռնման, որի համաձայն ժողովրդական բանահյուսությունը դիտվել է իբրև համաշխարհային՝ մի երևույթ, Նալբանդյանը այդ բանահյուսության մեջ բուն ժողովրդական ստեղծագործությունները որոշակիորեն տարբերում է հասարակական վերնախավերի հոգեբանությունն ու տրամադրություններն արտացոլող հորինվածքներից: Նա իրավացիորեն վեր է հանում առաջինների արժանիքները և ընդհակառակը, քննադատության ենթարկում վերջիններին հետադիմական էությունը:

Նալբանդյանը հիացմունքով է արտահայտվել, օրինակ, Արտավազդի ավանդության մասին, համարել այն իսկական անտիկյան մի ստեղծագործություն, ուր հանճին դարբիններին խորհրդանշված է հայ ժողովրդի կորովն ու կամքը սանձահարելու աշխարհին կործանում սպառնացող դիվային չար ուժը[16]:

Ճիշտ հակառակ կարծիք է արտահայտել նա մոգական դավաղանով չոր տեղից ջրի առու հանող Սուրբ Ականատեաչ կրոնական ավանդության վերաբերյալ, համարելով այն «ութերորդ ամենանախամար դարի արձագանքը»[17]:

Չհամաձայնվելով ժամանակին ընդունված այն տեսակետի հետ, ըստ որի տարբեր ժողովուրդների բանահյուսական հուշարձաններում եղած նմանությունները բացատրվում էին կամ ժողովուրդների նախապատմական ցեղային աղգակցությամբ, կամ էլ

---

15 Նույն տեղում, հատ. 3, էջ 161—163:

16 Նույն տեղում, էջ 137—138:

17 Նույն տեղում, էջ 138:

փոխառությամբ, Նալբանդյանն այդ երևույթի հիմնական պատճառը համարում է ժողովուրդների «բնական կամ ընկերային պայմանների» ընդհանրությունը: «Թող ինչ կամին խոսին, բայց մարդկային հոդին ցոլացնում է արտաքին բնությունը»[18]:

Հիմնական շեշտը դնելով յուրաքանչյուր ազգի բանավոր ստեղծագործության ինքնուրույնության վրա, Նալբանդյանը բոլորովին չի անտեսել նաև փոխազդեցության հնարավորությունը: Ինչպես նմանության, այնպես էլ այս դեպքում նա մեկնակետ ունի տնտեսական, հասարակական և քաղաքական այն պայմանները, որոնք պատճառ են հանդիսանում դրան:

«Մեկ մարդ տասը տարի մնալով մի օտար ընկերության մեջ, քիչ-շատ ընկնում է այդ օտար լեզվի, օտար ազդեցության տակ. հայը հազար տարի ընկած լինելով թուրքի, թաթարի և ուրիշների ազդեցության տակ, ինչպե՞ս կարելի է պահանջել, որ պատմական իրողությունքը իրենց կնիքը խոր չդրոշմեին ազգի սրտի և հոգու վրա. ինչպե՞ս կարելի է, որ այդ դրոշմը չցոլանար նորա լեզվի և մտածելու ձևերի վրա»[19]:

Հատուկ հետաքրքրություն ու արժեք են ներկայացնում այն ճշմարտացի ու դիպուկ բնութագրումները, որ տվել է Նալբանդյանը ժողովրդական բանահյուսության առանձին ժանրերին:

Վիպասանական երգերի հետ հնագույն ստեղծագործություններ համարելով դիցաբանական առասպելներն ու ավանդությունները, Նալբանդյանը գտնում է, որ դրանց մեջ բանաստեղծական ձևով դրսևորված են ժողովուրդների հեթանոսական շրջանի հավատալիքներն ու պաշտամունքի առարկաները, նրանց պատկերացումները արևի, կրակի և բնության մյուս ուժերի ու երևույթների մասին[20]:

Բերելով լուսավորչի կանթեղի հայտնի առասպելական ավանդության օրինակը, նա բացահայտում է նման կարգի ստեղծագործությունների էությունն ընդհանրապես: Արագածի կատարին կախված հրաշալի կանթեղի լույսը, որի մասին պատմում է հիշյալ ավանդությունը, Նալբանդյանը բացատրում է «բնության մեջ եղած կրակներով կամ լույսերով»[21]:

---

18 Նույն տեղում, էջ 183—184:

19 Նույն տեղում, հատ. 3, էջ 184—185:

20 Նույն տեղում, հատ. 1, էջ 21:

21 Անհերքելի է «Լուսավորչի կանթեղին» Նալբանդյանի տված վերհիշյալ բացատրությունը, իբրև բնության մեջ եղած լույսերի յուրօրինակ մի

«Հայոց ազգը,— գրում է նա,— Արագածի վրա կրակ կամ լույս եթե չտեսներ, անհնար է, թե չեղած տեղից կանթեղ հնարեր և լուսավորչին ուղարկեր այնտեղ Նարեկ քաղելու։ Մենք այդ լույսը կամ կրակը Արագածի վրա ընդունում ենք որպես իրողություն»[22]։

Դիցաբանական ստեղծագործությունների ծագումն ու գոյությունը բացատրելով բնության երևույթներով Նալբանդյանը միաժամանակ ճիշտ կերպով ընդգծում է, որ այդ երևույթները ժողովրդի երևակայության մեջ, նրա զարգացման ցածր աստիճանի պատճառով, վաղնջական դարերում, ստացել են ոչ իրական, ֆանտաստիկ մեկնաբանություն։

«Որքան մոլորություններ որ կան աշխարհի երեսին, այդ բոլորը սկզբնաբար ծագել են կամ բնությունը թյուր հասկանալուց, կամ իսպառ չհասկանալուց։ Եվ այդ մոլորությունքը ոչինչ ուրիշ բանով չեն փարատիլ, մերժվիլ, եթե ոչ բնության ուղիղ հասկանալով»[23]։

Ուշագրավ է այն հետաքրքրությունը, որ ցուցաբերել է Նալբանդյանը երեխաների միջավայրում պահպանված Նուրինի երգի նկատմամբ, խելամտորեն կռահելով նրա մեջ հնուց եկող և ժողովրդի մոտ խոր արմատներ ունեցող մի ստեղծագործություն։

«Ներաշխությանն ընդդեմ Նուրինի ավանդությունը թեև իսպառ չգիտենք թե ի՞նչ բան է այդ և ի՞նչ արարողության մնացորդ, բայց և այնպես կարծում ենք, թե հին բան լինի։ Սաստիկ գրգռում է այդ բանը մեր հարցասիրությունը, մանավանդ, երբ տեսնում ենք, որ շատ խոր արմատացած է նա ազգի հասկացողության մեջ և մեծ վարկ ունի ազգը նորա մասին»[24]։

Եվ Նալբանդյանը չի սխալվել իր կռահման մեջ։ Նուրինի երգը համապատասխան ծիսական արարողության հետ միասին, որի միջոցին կատարվում է այն, իրոք արժանի է այդպիսի հետաքրքրության։ Նրա մեջ յուրովի անդրադարձել է Հայաստանի բնակիչների համար կենսական բացառիկ կարևորություն ունե-

---

անդրադարձման։ Ավելի ճիշտը, սակայն, ոչ թե Արագած լեռան խոռոչներում եղած ծծմբից կամ ֆոսֆորից առաջ եկած լույսերն են, ինչպես նշում է նա, այլ այն լույսերը, որ գոյանում են հիշյալ լեռան կատարին համապատասխան էլեկտրական պարպումներից։

[22] Նույն տեղում, հատ. 3, էջ 144—147։

[23] Նույն տեղում, էջ 146—147։

[24] Նույն տեղում, էջ 141։

ցող ջրի պաշտամունքը: Դա ոչ այլ ինչ է, բայց եթե ջրի դիցուհու առնի օրը մեղանում ժամանակին գոյություն ունեցող ջուր ցրելու, նույն դիցուհու արձանը գետը տանելու, ջրեղբին կամ ջրերի մեջ կանդնեցնելու հնօրյա ծեսի մի վերապրուկ, որը կատարվում է երաշտ ժամանակ ոռոգման առուների ջուրը շատացնելու համար[25]:

Առավել կարևոր են այն դիտողություններն ու դատողությունները, որ արել է Նալբանդյանը պատմական ավանդությունների վերաբերյալ:

Նալբանդյանին առաջին հերթին զբաղեցրել է այն հարցը, թե ինչ հողի վրա են առաջ եկել այդ ավանդությունները, ուրիշ խոսքով, որո՞նք են նրանց ծնունդ տվող հասարակական պատճառները: Ինչպես ժողովրդական բանահյուսության մյուս ստեղծագործությունների, այնպես էլ ավանդությունների առաջացման պատճառները, իրրև մատերիալիստ մտածող Նալբանդյանը բնականորեն համարել է «կյանքի և ընկերական պայմանքը», «մի ստույգ պատահած իրողություն» կամ էլ՝ «մի դաղափար»: «Որ ազգի մեջ կամենա թող լինի, բայց և՝ այնպես չկա աշխարհիս երեսին մի ավանդություն, որ առանց ամենայն պատճառի առաջանար»[26]:

Մատերիալիստական նույն այդ դիրքերից էլ Նալբանդյանը մեկնաբանել է պատմական ավանդությունների մեջ դարերի ընթացքում կատարված նշանակալից փոփոխությունները, այդ երևույթը դարձյալ բացատրելով հասարակական կյանքում կատարված համապատասխան տեղաշարժերով: Նրա կարծիքով պատմական ավանդությունները որքան հեռանում են իրենց ծագման ժամանակից, այնքան ավելի են կերպարանափոխ լինում: Ընկնելով ժամանակների և հասկացողությունների աղդեցության տակ, դրանք այնքան են այլափոխվում, որ շատ անգամ դժվար է լինում հասկանալ կամ մեկնել նրանց իմաստը[27]:

Ուշագրավ է նաև ըստ ամենայնի դիտական այն բացատրությունը, որ տվել է Նալբանդյանը պատմական ավանդությունների մեջ հաճախակի հանդիպող ժամանակաբանական տեղա-

---

25 Տե՛ս Մ. Աբեղյան, Վիշապներ կոչված կոթողները, Երևան, 1941, էջ 89, 91:

26 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 144—145:

27 Նույն տեղում, էջ 144, 163:

շարժերին, որը կարելի է տարածել ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերի և հատկապես էպոսի վրա։ Այդ կարգի տեղաշարժերի պատճառները նա իրավացիորեն կապում է ավանդությունների մեջ հանդես եկող պատմական անձանց ու հերոսների «աղգի մեջ ունեցած խորհրդի, արժանավորությունների ու հատկության» հետ, գրելով. «Հայտնի է, թե մի պատերազմ, մի քաջագործություն, մի հաղթություն չի վերագրվիլ մի սուրբի, որպես նաև մի հրաշագործություն մի երևելի ղորավարի։ Եթե աղգը Թորոսի օրով տեսել է մի խորհրդավոր անցք, բայց Թորոսի վրա բնավ համարում չունի, աղգի հետագա զավակները այդ անցքը անպատճառ կխլեն Թորոսից և կվերագրեն մի մարդու, որ կամ առաջ է ապրել Թորոսից կամ վերջը, որի վրա աղգը մեծ համարում ունի քաղաքականապես կամ կրոնապես, նայելով անցքի բնավորության։ Ավանդությունքը, զրկվելով այսպես ժամանակագրական ճշտությունից, շատ անգամ այնքան շատ հավաքվում են մի մարդու վրա, որ այդ մարդը շատ դարեր հետո դառնում է մի պահարան, մի շտեմարան աքանչելի անցքերի և գործերի, իսկ մյուս բոլոր մարդիկը, այն մեկ նշանավոր մարդու օգտի համար զրկվում են իրենց ստուգապես ունեցածից»[28]։

Տիկյալ վիպասից Նալբանդյանը տրամաբանորեն բխեցնում է մի ուրիշ կարևոր եղրակացություն ևս։ Նրա կարծիքով որևէ անվան առկայությունը այս կամ այն ավանդության մեջ՝ բավական չէ վերջինիս ստեղծման ժամանակը որոշելու համար։ Իբրև օրինակ բերելով Լուսավորչի կանթեղի ավանդությունը, Նալբանդյանը գրում է. «Լուսավորչի անունը այդ ավանդության հետ խառը տեսնելով չէ կարելի պնդել, թե ստուգապես չորրորդ դարումն է երևել այդ կրակը։ Այո՛, կարող էր և այն ժամանակ երևիլ. մեր խոսքը այդ չէ, այլ այն, թե լոկ անունը չէ կարող ընդունվիլ որպես ապացուցություն ժամանակի, ավանդության մեջ»[29]։

Դիցաբանական առասպելներին և պատմական ավանդություններին Նալբանդյանի տված վերոհիշյալ բնութագրումները դրսևորում են հեղինակի խորաթափանց միտքը և ընդհանրացումներ անելու կարողությունները։ Այդ բնութագրումների լույսի տակ բացահայտվում են բանահյուսական տվյալ ժանրերի ոչ

---

28 Նույն տեղում, հատ. 3, էջ 145։

29 Նույն տեղում։

միայն հասարակական-դաղափարական էությունն ու ճանաչողական նշանակությունը, այլև պարզվում դարերի ընթացքում նրանց կրած փոփոխությունների ճշմարտացի պատկերը։

Նալբանդյանի բանագիտական հայացքների հետ ուղղակիորեն առնչվող հարցերից մեկն էլ գրականության ժողովրդայնության հարցն է։ Իրրև դեմոկրատ լուսավորիչ գրականության հիմնական խորհուրդը համարելով «հասարակ ժողովրդի», իմա ազգի մեծամասնության հոգու, վերջինիս հասկացողության, վարք ու բարքի, սովորությունների, ծեսերի և բարոյական վիճակի արտացոլումը, Նալբանդյանը այդ գործի մեջ կարևոր տեղ է հատկացնում գրողի՝ ժողովրդական ստեղծագործության ակունքներին մոտ լինելուն և այդ ստեղծագործության լավագույն նյութերով գրականությունն առողջացնելուն ու թարմացնելուն։ Ահա թե ինչու նա ջերմորեն ողջունել է հայոց նոր գրականության այն ներկայացուցիչներին, որոնց գրվածքներում տեսել է ժողովրդական բանահյուսության այդ բարերար ազդեցությունը։

Նալբանդյանի կարծիքով այս տեսակետից ուսանելի են նախ և առաջ Աբովյանի, և ապա՝ նրա հետևողությամբ, Պռոշյանի օրինակները, որոնք տեղին ու հաջող օգտագործել են ժողովրդական բառ ու բանը, դրանով իսկ «աղ ու համ» և «հոգի ու սիրտ» տալով իրենց գրվածքներին[30]։

Իր «Կրիտիկա»-ում խոսելով Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի մասին, Նալբանդյանը այդ առթիվ գրում է. «Արդո հեղինակը հետևելով պ. Աբովյանի ուղղության, իր բովանդակ գործի մեջ միշտ աչքի առջև ունեցել է գործ դնել ազգային առածներ, ասացվածքներ։ Մենք լիասիրտ շնորհակալություն ենք հայտնում մեր հեղինակին»[31]։ Եվ ապա. «Պ. Պռոշյանի ոտանավորքը մեծ հարազատություն ունին Արարատյան աշխարհի և տեղ-տեղ էլ ամբողջ ազգի ոգու և ձևի հետ»։ Եվ իրրև նմուշ մեջ բերելով «Սոս և Վարդիթերի» 74-րդ էջում տեղ գտած «Ջան գյուլումը», Նալբանդյանը ավելացնում է. «Շատերը կան նույնպես ազնիվ, նույնպես գեղեցիկ, բայց մենք ուզում ենք միայն «Նանիկը» մեջ բերել (եր. 100), ուր հայ պառավի ոգին ու սիրտն ամեն հարազատությամբ թափել է հեղինակը»[32]։

---

30 Նույն տեղում, հատ. 1, էջ 275, 279, հատ. 3, էջ 165, 168, 183, 187—188։

31 Նույն տեղում, հատ. 3, էջ 183։

32 Նույն տեղում, էջ 187—188։

Քան արժանվույն բարձր գնահատելով ինչպես Ս. Աբովյանի, այնպես էլ Պ. Պռոշյանի դրական փորձը ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունների և մասնավորապես առածների ու ասացվածքների դրականության մեջ օգտագործելու բնագավառում, ինքը Նալբանդյանը ևս թե իր գեղարվեստական երկերում և թե մանավանդ հրապարակախոսական դրվածքներում բազմիցս դիմել է ժողովրդական բառ ու բանի (նաև առածների ու ասացվածքների) օգնությանը: Վերջիններիս տեղին ու հաջող օգտագործման միջոցով նա ավելի պատկերավոր, հասկանալի ու դիպուկ է դարձրել դաղափարական հակառակորդների դեմ ուղղված իր քննադատական խոսքը, առավել լավ ներկայացրել ու դիմակազերծել կղերա-պահպանողական և բուրժուական պատակարգների ներկայացուցիչներին: Այսպես, «Թափառական հրեա»-ի թարգմանության առաջաբանում խոսելով պատմականության երդվյալ ջատագով Իգնատիոս Փափազյանի «Եկեղեցական պատմություն» դրքի մասին, Նալբանդյանը ծաղրանքով նկատում է, որ «Պարոն Փափազյանի նման մարդիկ աշխատություն են կրում մեր համար եկեղեցական պատմություն գրելու. հայոց ազգը շեն տում հաց կգնա Փափազյանից ուսանելով իւր եկեղեցու պատմություն»[33] (այս և հաջորդ ընդգծումները մերն են. Ա. Ղ.):

«Հիշատակարանի» մեջ անդրադառնալով «Ճռաքաղ» և «Մեղու Հայաստանի» պարբերականների աշխատակից Հովսեփ Չերքեզյանի «Հյուսիսափայլի» և սրա գործակիցների դեմ դրած ամբաստանական հոդվածներին, Նալբանդյանը գրում է. «Պ. Չերքեզյանցը իւր բոլոր կյանքում միշտ գտնվել է վարագույրի քամակում և իւր հակայական դիտութեան ապացույցը գրավորական կերպով բերած դրած չէ հանդիսի մեջ, որ հասարակութիւնը կարող լինի բան հասկանալ և չհավատալ այնուհետև չար լեզուների խոսածին, թե՝ դատարկ տակառը մեծ ձայն է տալիս»[34]:

«Եվրոպագործությունը որպես ուղիղ ճանապարհ» խորագրով իր նշանավոր աշխատության մեջ խստորեն դատապարտելով Եվրոպայի բուրժուական ազգերի փոխադարձ ոչնչացման գիշատիչ միտումը, Նալբանդյանը զայրույթով բացականչում է. «Հերի՛ք է, որչափ կույր և ֆանատիկական ազգությունը ունի իւր եսական

---

[33] Նույն տեղում, հատ. 2, էջ 67:

[34] Նույն տեղում, հատ. 1, էջ 458:

կողմերը. Հերի՛ք է, ասում ենք, որ մի ազգությունն յուր մի չամփուր խոռոված֊ի համար մոռթում է մյուս ազգի եզը»[35] և այլն։

Աշխատավոր ժողովրդի և նրա ստեղծած հոգևոր արժեքների պաշտպանության նշանաբանով, Նալբանդյանը մերկացրել է հասարակական մտքի հակառակորդ հոսանքների ներկայացուցիչների հայացքները ժողովրդական բանահյուսության մասին։

Նրա սկզբունքային ու անողոք քննադատությանն է արժանացել օրինակ 50—60-ական թվականների այդպիսի հայազգի գործիչներից մեկի՝ Ա. Խուդաբաշևի «Обозр. Арменин в геогр. историч. и литературном отношении» խորագրով դիրքը, ուր այն թեզն է զարգացվում, թե որի հին Հայաստանում, հեթանոսական շրջանում մտավոր զարգացումը եղել է չափազանց ցածր աստիճանի վրա, և որ իբր այնտեղ գոյություն չեն ունեցել քիչ թե շատ ուշագրավ բանահյուսական ստեղծագործություններ[36]։

Հակառակ Խուդաբաշևի վերոհիշյալ պնդմանը, Նալբանդյանը վեր է հանել հայ ժողովրդական բանահյուսության հնագույն շրջանից մեզ հասած մի շարք թանկարժեք գոհարների մեծ արժեքը՝ նրախատագիտության ջերմ խոսք ասելով այդ գոհարները փրկող Մ. Խորենացու հասցեին։ Նա գրել է «Հայոց հին դպրությունը ևս ունեցել է երգեր, ավանդություններ և առածներ, որոնցից մի քանիսը Խորենացի պատվական ծերունու միջնորդությենովը կամ այլ Ոսկեփորիկների միջնորդությենով հասած են մեզ. որպես «Երկներ երկին և երկիր», «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն», «Հեծաւ արի արքայն Արտաշէս» և այլ մի քանիսը, որոնց շատերը բաղդի անդթանալովը այժմուս զրկված ենք. և այս քչիցը, որ մեր ձեռքը հասած է, եղրակացնում ենք, որ պիտո է անհամար շատ ունեցայինք այսպիսի երգեր մեր քաջերի վերա, որոնք կացած էին նահապետական ժամանակներում. պիտո է, որ ունեցայինք և մեհենական կամ նվիրական երգեր, որովհետև դիցապաշտ, արևապաշտ և կրակապաշտ էինք, իսկ ինքն ըստ ինքյան դիցաբանությունը բանաստեղծություն է, և ի՞նչ հնար կար, որ առանց նվիրական երգերի կատարվեին նոցա պաշտամունքը»[37],

Հերքելով բանահյուսական ստեղծագործությունների գոյու-

---

35 Նույն տեղում, հատ. 3, էջ 82։

36 Նույն տեղում, հատ. 3, էջ 418։

37 Նույն տեղում, հատ. 1, էջ 21։

թյան փաստը հին Հայաստանում, խուդաբաշևը դրանով հաստատում էր իր նիհիլիստական վերաբերմունքը ժողովրդի ստեղծագործական կարողությունների նկատմամբ։

Փաստացի օրինակներով և տրամաբանական դատողություններով հաստատելով ժողովրդական հարուստ բանահյուսության գոյությունը հին Հայաստանում, Նալբանդյանը դրանով իսկ հերքում էր խուդաբաշևի ու նմանների միտումնավոր նիհիլիզմը։

Մի ուրիշ անգամ անդրադառնալով Մ. Էմինի «Վեպք հնոյն Հայաստանի» աշխատությանը (Մոսկվա, 1850 թ.) և գնահատելով հեղինակի գիտելիքները տվյալ ասպարեզում, Նալբանդյանը միաժամանակ քննադատում է նրան այն բանի համար, որ նա միակողմանիորեն տարվելով հեռավոր անցյալի բանահյուսական նյութերի ուսումնասիրությամբ, մոռացության է տվել հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության հետագա դարերի հուշարձանները։

Էմինի աշխատության մյուս նկատելի թերությունը Նալբանդյանը համարում է այն, որ այնտեղ Խորենացու Պատմության շատ հատվածներ անհիմն կերպով դիտված են իբրև բանահյուսական նյութեր։ Քաջ գիտակ լինելով Պատմահոր աղբյուրներին և ունենալով բանասերի հոտառություն, Նալբանդյանը գտնում է, որ այդ հատվածները ոչ մի կապ չունեն ժողովրդական բանահյուսության հետ։

Տեղին է հիշել, որ տասնամյակներ հետո, զբաղվելով Խորենացու Պատմության մեջ բերված ժողովրդական առասպելների ուսումնասիրությամբ, Մ. Աբեղյանը փաստական հարուստ նյութերով և գիտական անառարկելի փաստարկներով հաստատեց Էմինի աշխատության մասին Նալբանդյանի արած վերոհիշյալ դիտողության ճշտությունը[38]։

Մ. Նալբանդյանի մտքերն ու կարծիքները ժողովրդական բանահյուսության այլ և այլ հարցերի մասին, մոտիկից հիշեցնում են այն մտքերն ու կարծիքները, որ ժամանակին արտահայտել են նրա ռուս նշանավոր գաղափարակիցները՝ Բելինսկին իր՝ «Письмо к Гоголю» և «Общ. взгляд на народн. поезию» («Отеч. записки» 1841, «Полярная звезда», 1855), Դոբրոլյուբովը իր՝ «О степени участия народности в разв.

---

38 Մ. Աբեղյան, *Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ*, Վաղարշապատ, 1899, էջ 3, 7—8։

русск. литературы» («Современник», 1858), Չերնիշևսկին իր՝ «Песни разных народов», «Полемич. красоты» («Современник», 1854, 1861) և ուրիշ հոդվածներում, նույն հարցերի մասին։

Հայ մեծ հրապարակախոսին ամենայն հավանականությամբ ծանոթ էին Բելինսկու, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու վերոհիշյալ հոդվածները, քանի որ նա, ինչպես հայտնի է, հետևել է թե՛ «Отечественные записки»-ին, թե՛ «Полярная звезда»-ին, և թե մանավանդ «Современник»-ին։

Ճիշտ չէր լինի սակայն Նալբանդյանի և ռուս հեղափոխական-դեմոկրատների խնդրո առարկա հայացքներում առկա նմանությունները համարել առաջինի կրած ուղղակի ազդեցության կամ փոխառության հետևանք, չնայած այդ փաստն ինքնին կվկայեր ազդողի ու ազդվողի հոգեհարազատության և հայացքների ընդհանրության մասին։

Միքայել Նալբանդյանի բանագիտական հայացքների հողն ու գինարանը եղել են հայ ժողովրդի ավանդական բանահյուսության ու դիցաբանության փաստերը, հայկական բնաշխարհը, հայոց պատմությունն ու գրականությունը։

Ինչ վերաբերում է վերը դիտված նմանություններին, ապա դրանք պետք է բացատրվեն ոչ թե սովորական ազդեցությամբ կամ փոխառությամբ, այլ հասարակական, քաղաքական, փիլիսոփայական, գրական, գեղագիտական ըմբռնումների այն ընդհանրությամբ և գաղափարական զինակցությամբ, որ ունեցել է հայ մեծ հրապարակախոսը Բելինսկու, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու հետ։

Շարունակելով ու զարգացնելով Թաղիադյանի, Աբովյանի, Ալիշանի, Ախվերդյանի լուսավորական-դեմոկրատական և ազգային-ռոմանտիկական հայացքները ժողովրդական բանահյուսության վերաբերյալ և յուրովի արձագանքելով Բելինսկու, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու այդ առթիվ արտահայտած մտքերին ու կարծիքներին, Միքայել Նալբանդյանը մի նոր էջ բաց արեց հայ բանագիտական մտքի պատմության մեջ։ Նրա տեսակետները ժողովրդական բանահյուսության մասին իրենց հիմնականում ճիշտ մեկնակետի և մատերիալիստական բնույթի շնորհիվ, արժանի են հատուկ ուշադրության։ Այդ տեսակետները ունեն ոչ միայն պատմական, այլև արդիական արժեք ու նշանակություն։

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Կ. ԴԱՐՈՆՅԱՆ

1859 թ. «Հյուսիսափայլ» ամսագրում «Գ. Յ. Պախալյան» ստորագրությամբ տպագրվել էր երեք ստեղծագործություն՝ «Անթառ», «Մի զարմանալի պատմություն. Կարլոս տասն և մի երրորդի տեսիլը» և «Մունէջիմ-բաշի»։

Ո՞վ էր «Գ. Յ. Պախալյանը» և գոյություն ունեցե՞լ է արդյոք նման ազգանունով իրական հեղինակ։ Բանասիրական մանրակրկիտ հետախուզումներից հետո մենք եկանք այն համոզման, որ «Գ. Յ. Պախալյանը» Միքայել Նալբանդյանի կեղծանուններից մեկն է[1]։ Որքանով որ «Հյուսիսափայլ»-ի արխիվը չի պահպանվել, և հնարավոր չէ վերահիշյալ ստեղծագործությունների հեղինակի ինքնությունը պարզել ձեռագրի միջոցով, մեր առաջադրած հիպոթեզի փաստարկումը կառուցված է, հիմնականում, անուղղակի տվյալների վրա։

Սկսենք արևելյան «Անթառ» վիպակից։[2] Մինչև վերջերս այն կարծիքն էր տիրում, որ դա ոմն Գ. Յ. Պախալյանի գրչին պատկանող ինքնուրույն ստեղծագործություն է և գրված է արաբական ժողովրդական «Անթարի գործերը» վեպի մոտիվներով՝ 6-րդ դարի արաբ կիսալեգենդար բանաստեղծ Անթարի կյանքի մասին[3]։

---

1 *Այդ մասին առաջին անգամ կարճ հաղորդում հրապարակել ենք «Գրական թերթ»-ի 1967 թ. մարտի 24-ի համարում։*

2 *«Հյուսիսափայլ» 1859, № 1, էջ 15—41։*

3 *Տե՛ս Մ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևանի պետ. համալսարանի հրատարակչություն, 1958, էջ 174, «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 2-րդ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1962, էջ 428—430։*

Սակայն, ինչպես պարզեցինք, «Հյուսիսափայլ»-ում տպագրված «Անթառ» արևելյան վիպակը ինքնուրույն ստեղծագործություն չէ, այլ ռուս հայտնի արևելագետ, լրագրող և գրող Օ. Ի. Սենկովսկու համանուն վիպակի թարգմանություն: Այն առաջին անգամ տպագրվել է «Նովոսելյե» ժողովածուում (1833 թ.), իսկ հետո մտել է հեղինակի երկերի ժողովածուի եռմահու հրատարակության մեջ: «Անթառ»-ի հրատարակչության կողմից արված ծանոթագրության մեջ ասված է. «Այս վիպակը արաբական «Անթառ» վեպի թարգմանությունը չէ, այլ ինքնուրույն ստեղծագործություն՝ գրված արաբական պոեզիայի ոգով»[4]:

Համոզվելու համար այն բանում, որ «Հյուսիսափայլ»-ի «Անթառ»-ը թարգմանություն է, համեմատենք թեկուզ ակզբնական տողերը:

Սենկովսկու վիպակի սկզբում. «Прекрасна Шамская пустыня; прекрасны в Шамской пустыне развалины волшебного Тедмора»:

«Հյուսիսափայլ»-ում. «Գեղեցիկ է Շամ անապատը, գեղեցիկ են Շամ անապատի մեջ կախարդական Թադմորի ավերակները»[5]:

Նման ճշտությամբ թարգմանված են Սենկովսկու «Անթառ» վիպակի ողջ տեքստը, ինչպես և հեղինակի տողատակի ծանոթագրությունները:

Եվ այսպես, առաջին բանը, որ մենք համոզիչ կերպով իմանում ենք, այն է, որ «Հյուսիսափայլ»-ում հրապարակված «Անթառ» արևելյան վիպակը Սենկովսկու համանուն վիպակի թարգմանություն է և, հետևաբար, Գ. Յ. Պախալյանը սոսկ թարգմանիչ է և ոչ հեղինակ, ինչպես ընդունված է եղել կարծել առ այսօր: Եվ դա զարմանալի չէ. «Հյուսիսափայլ»-ի թարգմանչական պրակտիկայում համանման դեպքերը հազվադեպ չէին, երբ թարգմանվող ստեղծագործության հեղինակին չէին հիշատակում: Այսպես, օրինակ, «Հյուսիսափայլ»-ի նույն համարում, «Անթառ»-ից անմիջապես հետո, Ստ. Նազարյանցի ստորագրությամբ տպագրված է «Թե ի՞նչ բարոյական խորհուրդ ունի մի ազգային թեատրոն» հոդվածը, որը, ինչպես հայտնի է, Ֆ. Շիլլերի «Թատրոնը իբրև բարոյական հիմնարկության» «նորացված» հոդվածի թարգմա-

---

4 Сенковский (Барон Брамбеус), Собрание сочинений, т. I, СПб, 1858, էջ 321:

5 «Հյուսիսափայլ», 1859, № 1, էջ 15:

նությունն է։ «Հյուսիսափայլ»-ի նույն թվականի № 10-ում տպագրվել է Անանիա Սուլթանշահի «Հայոց աղգի լուսավորիչքը» կոմեդիա—պամֆլետը, որը Ս. Ֆյոդորովի «Դասախարակիչներ» («Современник», 1858, № 9) պիեսի «հայացված» թարգմանութիւնն է։ Հենց ինքը՝ Մ. Նալբանդյանն էլ ազատ թարգմանութիւններ էր կատարում Հայնեից, Բերանժեից, Բենեդիկտովից և ուրիշներից, ընդ որում չնշելով թարգմանվող հեղինակին։

Բայց ինչո՞ւ ենք մենք կարծում, որ Սենկովսկու «Անթար»-ի թարգմանիչը պետք է հենց Մ. Նալբանդյանը լիներ և ոչ թե մեկ ուրիշը։ Բանն այն է, որ Նալբանդյանն էլ պատրաստել է «Հյուսիսափայլ»-ի համար Սենկովսկու «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» (1858—1859) ֆելյետոնի թարգմանութիւնը, որը չէր տպագրվել, հավանաբար, գրաքննական նկատառումներով (Նալբանդյանի «հայացրած» թարգմանութիւնը հայ հասարակութեան կղերա-պահպանողական շրջանների սուր քննադատութիւնն էր պարունակում)։

Սենկովսկու հիշյալ ֆելյետոնը նույնպես տպագրված է նրա երկերի ժողովածուի առաջին հատորում, ինչպես և «Անթար»-ը։ Այդ իսկ պատճառով էլ տրամաբանական է եղրահանգել, որ «Անթար»-ն էլ Մ. Նալբանդյանն է թարգմանել։

Նալբանդյանի հետաքրքրութիւնը դեպի Սենկովսկին պատահական չէ։ Ֆ. Ի. Սենկովսկու (1800—1858) անձնավորութիւնը բարդ է և հակասական։ Մինչև վերջերս «Գրագարան ընթերցանութեան համար» հրատարակութեան խմբագրին կապում էին Բուլգարինի և Գրեչի հետ։ Բայց ահա 1966 թ. գրող Վ. Ա. Կավերինը լույս ընծայեց իր պատմա-գրական «Ֆ. Ի. Սենկովսկի (Բարոն Բրամբեուս). կյանքը և գործունեութիւնը» աշխատութեան վերամշակված և լրացված հրատարակութիւնը, որն առաջին անգամ լույս էր տեսել 1929 թ.։ Նոր խմբագրութեամբ նա փորձ է կատարել (մեր կարծիքով, ամբողջութեամբ վերցրած, հաջողված) տալ Սենկովսկու օբյեկտիվ բնութագիրը, ջրաժան դիծ անցկացնել նրա և, այսպես կոչված, «ամսագրային եռապետութեան» մյուս երկու անդամների միջև։ «Բարդ հանգամանքների բերումով,— գրում է Կավերինը իր աշխատութեան ներածականում,— Սենկովսկու անունը ընկել Բուլգարինի և Գրեչի անբնդունելի անունների շարքը։ Բայց արդյո՞ք միևնույն չափանիշն ունեն Գրեչի և Բուլգարինի ոմնունները մի կողմից և Սենկովսկունը՝

մյուս։ Ես փորձել եմ այդ հարցին պատասխանել իմ գրքում»[6]։ Փաստական հարուստ նյութի հիման վրա Կավերինը բավական համոզիչ հերքում է Սենկովսկու մասին կազմված նախապաշարմունքը, թեև երբեմն չափազանցության մեջ է ընկնում և իդեալականացնում է նրա կերպարը։

Ի՞նչն է անկասկած «Գրադարան ընթերցանության համար»-ի խմբագրի դրական հաշվեկշռում։ Նա լայն գիտելիքների տեր պիտանական էր, ռուս արևելագիտության հիմնադիրներից մեկը։ Եվ նա անսովոր կերպով սրամիտ ձիրքաշատ մարդ էր։ «...Նա գեղում է իր ամբողջ սրամտությամբ, սեմիտական լեզուների իմացությամբ, յոթ գրականություններով, աշխույժ հիշողությամբ, կարուկ շարադրանքով»[7],— գրում էր նրա մասին Գերցենը «Կոլոկոլ»-ում 1859 թ., Սենկովսկու մահից մի տարի անց։

Սենկովսկին, ինչպես պարզված է այժմ, Պետերբուրգի ռուսական գրականության սիրողների ընկերության մասնակից էր, որը հեղափոխական գաղտնի «Բարօրության միություն» ընկերության տեղական մարմիններից մեկն էր, հիմնված 1818 թ., ապագա դեկաբրիստների կողմից։ 1821 թ. վերջերին Սենկովսկուն ընտրեցին ռուսական գրականության սիրողների ընկերության մեջ (դեկաբրիստ Ա. Օ. Կոռնիլովիչի հետ մեկտեղ)։ Նրա լեհերեն ստեղծագործությունները, Ա. Ա. Բեստուժևի թարգմանությամբ, ընթերցվում էին այդ ընկերության նիստերում։ Լինելով Ադամ Միցկևիչի բարեկամը, Սենկովսկին, ինչպես ցույց է տալիս Կավերինը, լեհական ազգային շարժման գործիչներից մեկն էր, շարժում, որը 1818—1819 թթ. համախմբված էր Վիլնոյի համալսարանի շուրջը, որտեղ այդ ժամանակ ուսանում էր Սենկովսկին։ Նա բարեկամական կապերի մեջ էր լեհական ապստամբության ապագա գրեթե բոլոր ղեկավարների հետ։

Սենկովսկին տաղանդավոր գրող և ժուռնալիստ էր։ Նրա արևելյան վիպակներն ու արաբերենից և պարսկերենից կատարած թարգմանությունները 1823—1825 թթ. տպագրվել են դեկաբրիստների «Պոլյարնայա զվեզդա» ամսագրում։ Ա. Վ. Դրուժինինի բնորոշմամբ, Սենկովսկին ռուսական ժուռնալիստիկայում հիմք է դրել հանրագիտական ուղղության (դրան էին ձգտում

---

[6] **В. Каверин**, Собрание сочинений в шести томах, т. VI, изд. «Художественная литература», М., 1966, էջ 285—286։

[7] «А. И. Герцен о литературе», Гослитиздат, М., 1962, էջ 381։

նաև «Հյուսիսափայլ»-ի հրատարակիչները)։ Լրագրային գործում նրա կազմակերպչական ընդունակությունները գնահատել են Բելինսկին, Գոգոլը, Ժերնիշևսկին։

Սենկովսկին նույնը քննադատ և հոդվածագիր էր։ Առաջինը նա (ըստ ձեռագրի կարդացած «Պիկովայա դամա»-ի առաջին երկու գլուխների) բարձր գնահատեց պուշկինյան արձակը (բայց նաև նա էր, որ Բուլգարինի և Գրեչի հետ մեկտեղ մասնակցեց Պուշկինի, որպես պոետի, անժամանակ «հոգեհանդստին» և դնում լույս չտեսած «Սովրեմեննիկ»-ի դեմ գրոհին)։ Սենկովսկին չերմ կերպով պնդում էր Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կոմեդիայի հրապարակման վրա, որն այն ժամանակ ձեռագիր էր տարածվում։ «Անծանոթ կինը» ֆելյետոնում («Անթար»-ի հետ միասին մտել է Սենկովսկու երկերի ժողովածուի առաջին հատորում) նա գրում էր, որ «Խելքից պատուհաս»-ը «հայտնվեց հորիզոնում որպես իր հետ լույսի հեղեղ բերող ահեղ երկնաքար»[8] (բայց այդ նույն ֆելյետոնում նա կոպիտ հարձակումներ էր կատարում Պուշկինի դեմ)։

«Գրադարան ընթերցանության համար»-ի առաջին համարներում Սենկովսկին իսկապես գրական անունների «շքերթ» բացեց—Ժուկովսկի, Կռիլով, Պուշկին, Վյազեմսկի, Բարյատինսկի, Օդոևսկի, Լերմոնտով և այլն։ Այստեղ տպագրվում էին թարգմանություններ Բալզակի, Ժորժ Սանդի, Թեքքերեյի, Էժեն Սյուի (որին թարգմանել է նաև Մ. Նալբանդյանը) և ուրիշների ստեղծագործություններից։ Բայց ավելի ուշ ամսագիրը կորցրեց իր բոլոր խոշոր հեղինակներին։ Սենկովսկին «հուշակվել էր» իր խմբագրական չլսված կամայականությամբ, բայց միաժամանակ նա գրեթե ձեռք չէր տալիս Ժուկովսկու, Կռիլովի, Պուշկինի, Վյազեմսկու, Բարյատինսկու և մյուս ականավոր գրողների ձեռագրերին։

Կարելի էր շարունակել այդ ինքնատիպ անձնավորության գործունեության այդչափ հակասական գծերի թվարկումը։ Գեբցենը այսպես էր բացատրում Սենկովսկու, այդ, ըստ նրա խոսքերի, «նիկոլաևյան ժամանակաշրջանի Մեֆիստոֆելի» արատները։ «Ի՞նչ էր պակասում նրան,— հարց էր տալիս նա «Կոլոկոլ»-ում, 1859 թ. և պատասխանում.—այն, որ այնպես լիուլի ունեին Բելինսկին, Գրանովսկին,— սիրո և զայրույթի այն հավերժ

---

[8] Сенковский (Барон Брамбеус), Собрание сочинений, т. I, էջ 365։

տագնապող դևը, որը երևում է արցունքի և ծիծաղի մեջ։ Նրան պակասում էր այնպիսի համողմունք, որը լիներ նրա կյանքի գործը, խաղաթուղթ, որի վրա դրված է ամեն ինչ, կիրք, ցավ...։ Բայց մենք հեռու ենք այն բանից, որպեսզի Սենկովսկուն դատապարտենք անպայմանորեն, նա արդարացվում է կապարե այն ժամանակաշրջանով, որում ապրում էր»[9]։

Այսպիսին է Սենկովսկու գործունեության օբյեկտիվ բնութագիրը։ Նալբանդյանին նա կարող էր հետաքրքրել որպես գիտնական, Պետերբուրգի համալսարանի արևելյան բաժնի պրոֆեսոր (որտեղ Սենկովսկու մահից մի տարի անց սովորել է նաև նա)։ Սենկովսկին շատ էր ճանապարհորդել, եղել էր Արևելքի մի շարք երկրներում (այդ թվում նաև Թուրքիայում), գրել էր մի քանի հետաքրքիր աշխատություններ, այդ թվում նաև Հայաստանի մասին։ Այսպես, «Գրադարան ընթերցանության համար»-ում (1834, № 7) նա հրապարակել էր մի ընդարձակ հոդված՝ «Հայ ժողովրդի պատմության տեսություն» խորագրով, իսկ իր «Ճանապարհորդություն Եգիպտոսում, Նուբիայում և Հաբեշստանում» (1821) աշխատության մեջ մեծ ջերմությամբ էր խոսում նաև հայ թարգմանիչ Բողոս—Յուսուֆի մասին[10]։

Սենկովսկին գիտա-փիլիսոփայական վիպակի ժանրը ստեղծողն էր, ժանր, որի հիմքում ընկած էր բնական գիտությունների ներկայացուցիչների հետ սուր հակաճառությունը։ Պ. Սավելևը, Սենկովսկու երկերի ժողովածուի առաջաբանում (քանիցս նրան է վկայակոչում նաև Վ. Կավերինը) նշում էր. «Գիտնականը (Սենկովսկին—Ս. Դ.), տանում էր ընթերցողին դեպի գրական լուսավորություն..., երգիծանքի ղենքով մտրակում էր սխոլաստիկան, մշուշապատ տեսությունները, միստիկականությունը, բնափիլիսոփայությունը, հետամնաց գաղափարները և երազկոտ մտատեսությունը, քրքիջով վայր նետելով պատվանդաններից անարժան հեղինակություններին և հպարտ շառլատանություն։ Առարկայի կարևորությունը երգիծաբանի հայացքից չէր թաքցնում նրա ծիծաղելի կողմերը և հենց այդ ոտնձգություններն էլ գիտության անկատարելության, սխոլաստիկ գիտության դեմ, նրա «քրմերի» սխալների և ինքնավստահության և ոչ թե իրեն՝ գիտության դեմ, ընդունում էին իբրև կանխամտածված օբսկուրանտիզմ, որի օգտին

---

9 «А. И. Герцен О литературе», стр. 381—382։

10 **Сенковский** (Барон Брамбеус), Собрание сочинений, т. I, էջ 4—6։

երբեք և ոչ մի տող չէր տպագրվել «Գրադարան ընթերցանության համար»-ում[11]։

Ս. Սեններովսկի-երգիծաբանի և հակաճառողի ստեղծագործական անհատականության այդ գծերը շատ մոտ էին Նալբանդյանին։ Հիշենք նրա «Յաղագս հայկական մատենագրութեան» հոդվածը պոլեմիկականորեն սուր, մերկացնող էջերը սխոլաստիկայի և խավարամոլության դեմ, էժեն Սյուի «Թափառական հրեա» վեպի առաջին գրքի թարգմանության իր առաջաբանում (1857 թ.), «Մինին խոսք, մյուսին հարսն» (1858)[12] վիպակում, «Մեռելահարցուկ» (1859) վեպում, «Հիշատակարան»-ում (1858—1860), «Կրիտիկա «Սոս և Վարդիթեր» (1864) հոդվածում, նամակներում և այլն։

Իհարկե, ճիշտ չէր լինի Նալբանդյանի երգիծանքը ամբողջովին դուրս բերել Սեններովսկու երգիծանքից, բայց այն, որ վերջինս որոշակի ազդեցություն է թողել հայ հրապարակախոսի և գրողի վրա, անկասկած է։

Սեններովսկու լրագրության սրամիտ ձևը այնքան է հրապուրել Նալբանդյանին, որ նա «Մինին խոսք, մյուսին հարսն» վիպակի գլխավոր հերոսներից մեկին անվանել է Սեններովսկու առաջին կեղծանունով՝ Թյուֆյունճի-օղլի։ Ավելին, ինչպես ենթադրում ենք մենք, իր հիմնական կեղծանունը, «Կոմս էմմանուել», Նալբանդյանը հնարել է Սեններովսկու հայտնի կեղծանունի՝ «Բարոն Բրամբեուսին» ձևով։ Այդ կեղծանունով Նալբանդյանը սկսեց տպագրել իր ստեղծագործությունները «Հյուսիսափայլ»-ում 1858 թ., այսինքն Սեններովսկու «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» ֆելյետոնը և «Անթառ» վիպակը թարգմանելու շրջանում։

Նալբանդյանին չէր կարող չգրավել նաև Սեններովսկու գեղարվեստական արձակը, գրված Արևելքի երկրների խոր իմացության

---

11 Сенковский (Барон Брамбеус), Собрание сочинений, т. I стр. XXIX—XXX.

12 Այդ վիպակը մինչև վերջերս համարվում էր կորած։ Տպագրված լինելով Մոսկվայում 1858 թ., այն, հեղինակի կամքով, լույս չի տեսել։ 1966 թ. պրոֆ. Մ. Հասրաթյանը Բեյրութից Նալբանդյանի վիպակի մեկ օրինակը նվեր տվեց ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանին։ Այդ մասին մանրամասն տե՛ս М. Налбандян, Сочинения в 2 томах, т. II, изд. АН Арм. ССР, Ереван, 1970, стр. 354—359):

և ուսումնասիրության հիման վրա[13]։ Ահա թե ինչու նա, Սենկովսկու հիշյալ ֆելյետոնի հետ մեկտեղ, թարգմանում է նաև նրա «Անթար» վիպակը։

«Անթար» արևելյան վիպակը հետաքրքրել է Նալբանդյանին ոչ միայն որպես բանաստեղծական ստեղծագործություն սիրո անմահության մասին,[14] այլև նրանով, որ վիպակի հերոսի՝ Անթարի ռոմանտիկական կերպարը մոտ էր նրան իր խռովահույզ ոգով։ Հետաքրքիր է այդ իմաստով Անթարի խոստովանությունը։ Նա հիասթափված է մարդկանցից, որոնք իր քարի գործերի ճշմարտության համար նրանից շնորհակալ լինելու փոխարեն «հարուցին իմ վերա նոցա քամբասանքը և նախանձը։ Բացի վշտերից, ծանր ու անտանելի վշտերից, ես ոչինչ այլ բան կրած չեմ նոցա հասարակության մեջ»[15]։ Անթարի այդ դառն խոսքերը որքա՜ն են հիշեցնում 1858 թ. «Հիշատակարան»-ում Նալբանդյանի գրառած տողերը. «...Ճշմարտությունը հալածվում է միշտ և պատճառ է լինում յուր պաշտոնեի հալածանքին... Ի հարկե կարդացած կըլինիք Լերմոնտովի Մարգարեն...

«Ակսեցի սեր քարոզել,
Սուրբ ուսումը ճշմարտության,
Եվ իմ բոլոր մերձավորքը
Կամեին ինձ քարկոծ առնել»[16]։

Դժվար չէ այստեղ հոգեկան մերձավորություն նկատել Անթարի և մարգարեի (Նալբանդյանի) միջև։

Անթարի կերպարը երկար ժամանակ մնաց Նալբանդյանի

---

13 «Սենկովսկու թարգմանություններից և ծանոթագրություններից («Շանֆարիի մահը»— Ս. Դ.),— գրում էր Պ. Սավելևը,— օգտվել է Միցկևիչը «Շանֆարի» պոեմը լեհերեն վերածելիս։ Նրա «Ֆարիս» և «Ալմո-ս-Նսաբրի» և «Ղրիմյան սոնետներ»-ը իրենց արևելյան ճիշտ երանգավորումով նույնպես պարտական են Սենկովսկու ազդեցությանը» (Сенковский, Собрание сочинений, т. I, стр. CXX: տե՛ս նույնպես՝ В. Каверин. Собрание сочинений, т. VI, էջ 312)։

14 Ի միջի այլոց, Ավ. Իսահակյանի «Հավերժական սեր»-ը ցողված է այդ լեգենդի շորշոփներով։

15 «Հյուսիսափայլ», 1859, № 1, էջ 27։ Ինչպես հայտնի է, Նալբանդյանը այդ շրջանում իր գաղափարական հակառակորդների կողմից, որոնց մերկացնում էր «Հյուսիսափայլ»-ի էջերում դաժան հարձակումների էր ենթարկվում։

16 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1-ին, էջ 316—317։

հիշողության մեջ։ Կալկաթայից 1861 թ. հունիսի 26-ին Անանիա Սուլթանշահին հղած նամակում նա գրում էր. «Կարմիր ծովից դուրս գալու ժամանակ, կանգնեցանք չորս ժամ Ադեն քաղաքի առջև։ Սա հին Թառմորն է արաբական, որ երբեմն Սողոմոնը շինեց և որ վերջումը, նյութ եղավ արաբական բանաստեղծներին. իհարկե, հիշում ես Անթարը»[17]։

Կասկած չի հարուցում, որ Նալբանդյանն այստեղ իր մերձավոր ընկերոջը հիշեցնում էր ոչ այլ ինչ, քան Սեննկովսկու «Անթար» վեպի իր թարգմանության։ Բառերի համաձայնությունից «Անթար»-ը ընկալվում է ոչ թե որպես անուն, այլ՝ ստեղծագործության։ Իսկ չակերտների բացակայությունը բացատրվում է նրանով, որ այն ժամանակ դրանք միշտ չէ, որ դրվում էին նամակներում, անգամ տպագիր աշխատություններում։

Նալբանդյանի նամակում հետաքրքիր է նաև մի այլ պարագա։ Նա շոշափում է հենց «Անթար» վիպակի բովանդակությունը, որտեղ մի քանի էջ նվիրված է Սողոմոն արքայի կողմից Թադմորի շինության լեգենդին և «արաբ պոետներին», որոնց համար Արաբական անապատը «նյութ եղավ» իրեն Անթարի, ինչպես նաև Շանֆարիի և Լեբիդի համար[18]։ Թադմորի (Թեդմոր կամ Պալմիրա) ավերակների նկարագրությունից սկսվում է Սեննկովսկու վիպակը, և հենց հիմնական իրադարձություններն էլ կապված են այդ լեգենդական քաղաքի հետ։

Այս ամենը պերճախոս վկայություն է այն մասին, որ «Անթար»-ի թարգմանությունը պատկանում է Նալբանդյանին. նշանակում է, «Գ. Յ. Պախալյանը» Մ. Նալբանդյանի կեղծանունն է։

Մեր վարկածի օգտին են խոսում նույն աստղագրությամբ հրատարակված երկու ուրիշ ստեղծագործություն ևս։

Ղրիմի թաթարների «Մունեջիմ-բաշի»[19] (Աստղագետ) առակի հիմքում ընկած է Ղրիմի Գիրեյ-խանի թանկագին մատանու դողության պատմությունը և այն, թե ինչպես է այդ մատանին գտել աստղագետը։ Հետաքրքրական է, որ Գիրեյ-խանի կախարդական մատանու հափշտակման մասին առակի տարբերակը Նալ-

---

17 Նույն տեղում, հատ. 4-րդ, էջ 109. (ընդգծումը մերն է—Ս. Դ)։

18 Սեննկովսկու երկերի ժողովածու 1-ին հատորում մտել է արաբական «Շանֆարիի մահը» վիպակի թարգմանությունը, իսկ «Անթար» վիպակից առաջ՝ արաբերենից «Մոալլակի» լեգենդի թարգմանությունը։ Պարզ է, որ Նալբանդյանը կարդացել էր նաև Սեննկովսկու այդ գործերը։

19 «Հյուսիսափայլ», 1859, № 5, էջ 337—360։

բանդյանը բերում է իր «Մինին խոսք, մյուսին հարսն» (գլուխ 9-րդ) վիպակում։ Ընդ որում, տեղ-տեղ նույնիսկ տեքստը համընկնում է (օրինակ, Բախչիսարայի խանական ապարանքը, Գիրեյ խանի դաժանությունները և այլն նկարագրելիս)։ Ինչպես ցույց կտրվի, «Աստղագետ» առակը գրի է առնված և մշակված իրենն՝ Նալբանդյանի կողմից։ Հետևաբար, այս դեպքում էլ «Գ. Յ. Պախալյանը» ոչ այլ ոք է, եթե ոչ Մ. Նալբանդյանը։

Մնում է ոչ մեծ «Մի զարմանալի պատմություն. Կարլոս տասն և մի երրորդի տեսիլը»[20]։ Անկասկած է, որ դա էլ ինքնուրույն գործ չէ, որ պարզ երևում է շվեդական Կարլոս 11-րդ թագավորի «տեսիլի» ֆանտաստիկական պատմվածքի թեմայից և բովանդակությունից։ Առայժմ չհաջողվեց պարզել, թե ո՞վ է այդ պատմվածքի հեղինակը։ Բայց հայտնի է, որ այդ տարիներին Նալբանդյանը արևմտյան գրողներից թարգմանել է Կլեմանս Իոբերտի «Դքսուհի դը Նևերսը» («Հյուսիսափայլ», 1858, № 2, նույն թվին լույս է տեսել և առանձին հրատարակությամբ) և Գաբր դ'Օլիվիեի «Թալիսմաններըը» («Հյուսիսափայլ», 1858, № 12)։ Այդ երկու վիպակներն էլ նախատեսված էին «Թեթև» ընթերցանության համար։ Նույն շարքին են պատկանում նաև Սենկովսկու «Անթար»-ը, և «Աստղագետ»-ը, և «Մի զարմանալի պատմությունը...»։ Ինչ վերաբերում է վերջինիս, ապա իր շարադրանքի ոճով այն հիշեցնում է այն անսովոր պատմությունները, որոնց մասին Նալբանդյանը խոսում էր իր «Հիշատակարան»-ում։ Այդ տեսակետից բնորոշ է «Պատմության» եզրափակիչ պարբերությունը։ Պատմելով շվեդական Կարլոս 11-րդ թագավորի «զարմանալի տեսիլի» մասին, հեղինակը վերջում գրում է. «Թուղթերը, որ հաստատում են այս զարմանալի անցքը, գտնվում են այժմս Պետերբուրգի մեջ...»[21]։ Երևում է, որ «Գ. Յ. Պախալյանի» այդ ավելացումը արված է առավել համոզչության համար։ Բայց գրական այդ հնարը Նալբանդյանը մեկ անգամ չէ, որ օգտագործել է իր «Հիշատակարան»-ում, որպես ապացույց տարբեր անսովոր պատմությունների «ճշմարտանմանության»։ Եվ անգամ Պետրոպավլովյան ամրոցում հարցաքննության ժամանակ, պատմելով Միլանից ոմն Պետրոս-բեյի (!) անհավանական արկածների մասին, իբրև «հաստատումն» իր իսկ հնարած պատմության, նա

---

20 Նույն տեղում, 1859, № 1, էջ 60—65։

21 «Հյուսիսափայլ», 1859, № 1, էջ 65։

հենվում էր ինչ-որ թղթերի վրա, որոնք իբր պահվում են... Պետերբուրգում:

Մի խոսքով, «Մի զարմանալի պատմության...» վրա էլ երևում է Նալբանդյան-Պախալյանի ձեռքը:

Եվս երկու կարևոր պարագա՝ կապված «Գ. Յ. Պախալյանի» հետ: Ստորագրությունն ինքնին անվան սկզբնատառերի մատնանշումով (և ոչ թե պարզապես անվան և ազգանվան, որը բնորոշ է հայկական ստորագրություններին) հիշեցնում է Նալբանդյանի «Հիշատակարան»-ի թղթակիցներին՝ «Ս. Խ. Շահբեգ», «Ա. Դ. Բաբկենյան» և ուրիշներ: Իսկ Պախալյան ազգանունը բավականաչափ տարածված էր նոր Նախիջևանի հայերի մեջ[22], և Նալբանդյանը, ըստ երևույթին, հաշվի էր առնում նրա տարածված լինելը՝ «Գ. Յ. Պախալյանի» «իրական լինելը» առավել ևս շեշտելու համար, ինչ-որ հատուկ էր նաև «Հիշատակարան»-ի հեղինակի գրելաձևին, երբ նա իր «Ս. Խ. Շահբեգին» մտցնում էր «Հյուսիսափայլ»-ի իրական բաժանորդների շարքը:

Վերջապես, «Գ. Յ. Պախալյան» ստորագրությամբ հիշյալ բոլոր երեք ստեղծագործությունները էլ հանդիպում են «Հյուսիսափայլ»-ի այն համարներում, որտեղ հրապարակված են միայն Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանի երկերը: Եվ ահա, որպեսզի անընդհատ աչքի չընկնեին միևնույն ազգանունները, Նալբանդյանը, ինչպես այդ ընդունված էր ժամանակի պարբերականների պրակտիկայում (երբ փոքրաթիվ հեղինակներ և աշխատակիցներ կային), զանազանության համար հնարել է ևս մի կեղծանուն իր համար՝ «Գ. Յ. Պախալյան»: Իսկ Ստ. Նազարյանը «Հյուսիսափայլ»-ի 1859 թ. № 5-ում (որտեղ տպագրված է «Ատղագետ»-ը) իր երկու նյութերը ստորագրել է «Թեդորոս Լազարյան» կեղծանունով (ըստ երևույթին, համահնչունության համար իր ազգանվան և Լազարյան ճեմարանի հետ, որտեղ նա պրոֆեսոր էր):

Եվ այդպես, բոլոր այս փաստարկումների համադրումը հիմք է տալիս պնդելու, որ «Գ. Յ. Պախալյանը» Մ. Նալբանդյանի մինչև այժմ անհայտ ևս մեկ նոր կեղծանունն է, որով նրա գրական ժառանգության մեջ, հարկ է ընդգրկել ևս երեք ստեղծագործություն:

Եթե «Անթառ» վիպակը այսպես թե այնպես հայտնվել է

---

22 Տե՛ս օրինակ, Ռ. Պատկանյանի 1887 թ. հուլիսի 25-ի նամակը Բ. Պախալյանին: Գրականության և արվեստի թանգարան, Ռ. Պատկանյանի ֆոնդ:

գրականագիտական աշխատություններում (Թեկուզ և հեղինակի ոչ ուղղակի նշումով), ապա «Մի զարմանալի պատմությունը...» և «Աստղագետ»-ը ընդհանրապես չեն հիշատակվել, թեև վերջին գործը կարող էր մեծ հետաքրքրություն ներկայացնել բանահավաքների համար (հեղինակի ինքնությունից անկախ). այն հայ գրականության մեջ հեքիաթների, առակների և այլն առավել վաղ մշակումն է, այն դեպքում, երբ մինչև հիմա համարվում էր, որ այդ ժանրի հիմքը մեզ մոտ դրվել է Ղազարոս Աղայանի «Անահիտ» (1881) հեքիաթով[23]: Իսկ հիմա, երբ «Աստղագետ»-ը շաղկապում ենք Մ. Նալբանդյանի անվան հետ, հետաքրքրությունը դեպի այդ գործը աճում է կրկնակի չափով:

«Աստղագետը» ժողովրդական առակը Նալբանդյանի ստեղծագործության մեջ պատահական երևույթ չէ: Արդեն «Յաղագս հայկական մատենագրության» հոդվածում նա հիացմունքով էր գրում հին հայկական վիպերգությունների մասին, լեգենդար Գողթն գավառի մասին, որը հռչակված էր իր ժողովրդական գուսաններով: Հ. Գևորգյանին հղած 1855 թ. մայիսի 12-ի նամակում Նալբանդյանը գրում էր. «... Ամենայն ազգի գրականությունը սկսանում է՝ երգերով, առածներով և տաղաչափություններով... Հայոց հին դպրությունը ևս ունեցել է երգեր, ավանդություններ և առածներ, որոնցից մի քանիսը Խորենացի պատվական ծերունու միջնորդությեանովը կամ այլ ոսկեփորիկների միջնորդությեանով հասած են մեզ. որպես «Երկնէր երկին և երկիր», «Հատուած գնացեալ վարդգէս մանուկն», «Հեծաւ արի արքայն Արտաշէս» և այլ մի քանիսը, որոնց շատիցը բաղդի անգթանալովը այժմուս զրկված ենք, և այս քչիցը, որ մեր ձեռքը հասած է, եղրակացնում ենք, որ պիտո է անհամար շատ ունեցայինք այսպիսի երգեր մեր քաջերի վերա, որոնք կացած էին նահապետական ժամանակներում. պիտո է, որ ունեցայինք և մեհենական կամ նվիրական երգեր, որովհետև դիցապաշտ, արևապաշտ և կրակապաշտ էինք, իսկ ինքն ըստ ինքյան դյուցաբանությունը բանաստեղծություն է... Այժմուս մեր լեզվի վերանորոգության դարումը... ամենայն տեղից լսվում են երգերի ձայներ, տեսնվում են առակներ, բանաստեղծություններ—հատված բաներ, որոնք

---

23 Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3-րդ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, Երևան, 1964, էջ 312:

դարձյալ մի գալոց հանդիսամարմին նոր հայախոսության սաղմն են...»[24]:

Կարդում ես այս տողերը և թվում է, թե կարծես դրանք վերցված են Նալբանդյանի կողմից անձամբ գրի առնված հայ ժողովրդական բանահյուսության նրա մտահղացած ժողովածուի առաջաբանից: Ինչպես պատմում են ժամանակակիցները, Նալբանդյանը հավաքում էր ժողովրդական ստեղծագործությունները և անգամ մտադիր էր հրատարակել դրանք: Բայց, ցավոք, այդ մտահղացումը մնաց չիրագործված:

Նալբանդյանի «Կրիտիկա «Սոս և Վարդիթերի» հոդվածը սկսվում էր հետևյալ բառերով. «Ազգային սևիսական դպրությունը էապես հիմնվում է ազգային բանաստեղծության վրա և այնպիսի աշխատությանց, որ հայկական հոգու բղխվածք լինելով հայ ազգին էին վերաբերվում դարձյալ»[25]: Եվ այդ ծրագրային թեզը նա համոզիչ կերպով բացահայտել է Պ. Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի օրինակով:

Այդ հոդվածում Նալբանդյանը նորից վերադառնում է բոլոր այն տարիներին նրան հուզող հարցին՝ հայ բանահյուսության հավաքումին. «Ազգային ավանդությունքը,— գրում էր նա,— որքան կարելի է, անշուշտ, արժան է քրքրել և դուրս բերել դարավոր փոշիների տակից. բայց ավանդություն ենք ասում, որ իբրև մի պատմական սերմ, միշտ կարող են ազգի կյանքի մեջ ծլիլ, ծաղկիլ և պտուղ բերել»: Ժողովրդական նման ավանդությունների շարքն էր նա դասում Արա Գեղեցիկի և Շամիրամի, Արտավազդի շղթանները կռող դարբինների մասին ավանդությունները: Խոսելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ Արտավազդի մասին բերված և Պ. Պռոշյանի կողմից իր վեպում վերարտադրված ավանդության մասին, Նալբանդյանը նշում էր. «...Ավանդությունը կենդանի է և այն պատմական ավանդությունը, որի լոկ հիշելը բերում է մարդու երևակայության առջև ամբողջ հայ աշխարհը, որի վրայից արդեն գլորվել են շատ դարեր»[26]: Նա այնքան էր տարված «Սոս և Վարդիթեր» վեպում եղած բանահյուսական նյութերով, որ արտադրեց «Ջան գյուլում» խաղը և

---

24 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2-ին, էջ 21:

25 Նույն տեղում, հատ. 3-րդ, էջ 119:

26 Նույն տեղում, էջ 137—138:

օրորոցայինը (հոդվածը նախատեսված էր «Հյուսիսափայլ»-ի «Կրիտիկայի» բաժնում տպագրվելու համար)։ Նալբանդյանը հավանություն էր տալիս Պռոշյանին այն բանի համար, որ նա «Հետևելով պ. Աբուլյանի ուղղության, իր բովանդակ գործի մեջ միշտ աչքի առջև ունեցել է գործ դնել ազգային առածներ, ասացվածներ»[27]։

Մ. Նալբանդյանի ստեղծագործություններից երևում է, որ նա կենդանի հետաքրքրություն էր ցուցաբերում դեպի աշխարհի բազմաթիվ ժողովուրդների բանահյուսությունը։ Դրան նպաստում էր և այն պարագան, որ Նալբանդյանը շատ էր ճանապարհորդել, եղել էր Եվրոպայի և Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում։

Նալբանդյանը առանձին հետաքրքրություն էր տածում առակների, զվարճալի պատմությունների և մյուս այլաբանական երկերի նկատմամբ։ «Յաղագս հայկական մատենագրության» մեջ հայ գրականության ուժը և հզորությունը վկայող ստեղծագործությունների թվում նա հիշատակում էր նաև Մխիթար Գոշի խրատաբանական առակները, իսկ Մ. Նալբանդյանի անձնական գրադարանում պահպանվում է 1854 թ. Վենետիկում հրատարակված Մ. Գոշի առակների ժողովածուն։

Նալբանդյանը լավ ծանոթ էր աշխարհի շատ ժողովուրդների առակներին (հայերեն և ռուսերեն թարգմանություններից) և հաճախ էր օգտագործում դրանք իր երկերում ընդարձակածավալ այլաբանության կամ պատկերավոր համեմատության ձևով։ Նա քարձր կարծիքի էր հին հույների մտածողության ալեգորիկ ձևի մասին։ Այսպես, «Սոս և Վարդիթերի» կրիտիկայում, խոսելով հնության զանազան ավանդություններում ալեգորիաների և նրանց ետևում թաքնված ճշմարտության մասին, Նալբանդյանը գերադասությունը տալիս էր հունական ալեգորիային, իսկ որպես հիմնավորում իր մտքի նա քաղվածաբար բերում էր Մովսես Խորենացու ուղերձը իր մեկենաս Սահակ Բագրատունուն։ «Յաղագս հայկական մատենագրության» մեջ, մերկացնելով կղերամիտներին, նա օգտագործում է Եղիվարդի հայտնի «Ոչխարներ և գայլեր» առակը, իսկ «Հռոմեական նամակում»՝ («Հյուսիսափայլ», 1861, № 10) Եղիվարդյան սառած օձի և երախտավոր մարդու առակի միտքը»[28]։

---

27 Նույն տեղում, էջ 183։

28 Նույն տեղում, հատ. 2-րդ, էջ 380։

Լավ գիտեր Նալբանդյանը և ռուսական առակները։ Նրա գրադարանում կա Կռիլովի, Դմիտրիևի, Խեմնիցերի առակների ժողովածուն Հ. Գեոքչեյանի թարգմանությամբ (Մոսկվա, 1849)։ 1864 թ. հունվարի 1-ին Պետրոպավլովյան ամրոցից Ա. Սուլթան-շահին հղած նամակում, անդրադառնալով Ն. Նախիջևանում հկեղեցական գումարների հափշտակության գործին, որում խառն էին Գ. Այվազովսկին և ընկ., Նալբանդյանը բերում էր Կռիլովի «Անապատականը և արջը» առակի բովանդակությունը։

«Հայոց լեզվի ուսումնասիրությունը Եվրոպայում և հայ գրականության գիտական նշանակությունը» (1860) թեկնածուական դիսերտացիայում Նալբանդյանը, նշելով հայ գրողների հետաքրքրությունը դեպի սիրիական գրականությունը, հիշատակում է նաև «Հետաքրքրական պատմությունների գրքի» հեղինակին՝ Գրիգորիոս Աբուլ-ֆարաջին (13 դար)։ Սիրիական այդ գրողի անունը լայնորեն հայտնի էր Մերձավոր Արևելքում և Հայաստանում, որտեղ նրան գրկաբաց էին ընդունում (նա գիտեր, նաև հայերեն)։ Սիրիացի նշանավոր այդ գրողը մահացավ Մարաղայում, 1286 թ., իսկ նրա թաղմանը մասնակցեցին նաև հայերը։ Իր «Հետաքրքրական պատմություններում» և առակներում Աբուլ-ֆարաջը հմտորեն օգտվում էր եղուկպոսյան լեզվից։

Նալբանդյանի մեծ հետաքրքրությունը դեպի արևելյան առակները վկայում է նաև այսպիսի մի փաստ։ Իր գիտա-մասսայական «Թե ինչպես է երկրագունդի ներքին կազմակերպությունը» ակնարկում (Հյուսիսափայլ, 1858, № 9), պատմելով այն մասին, թե ինչպես է սարսափը համակում մարդկանց բնական տարերքի առջև, Նալբանդյանն այդ կապակցությամբ բերում է արևելյան մի կարճ առակ (հավանաբար արաբական)։

Նալբանդյանի անձնական գրադարանում պահպանվել է Գրիմմ եղբայրների գերմանական հեքիաթների հանրահռչակ գրքի հայկական թարգմանության ժողովածուն (ՍՊբ, 1864), իսկ «Կրիտիկա «Սոս և Վարդիթեր» հոդվածում հիշատակվում է 18-րդ դարի գերմանական ականավոր լուսավորիչ Գեորգ Լիխտենբերգի անունը, որի երգիծական տաղանդով և աֆորիզմներով սքանչանում էին Գյոթեն, Գերցենը և Տոլստոյը։

Նալբանդյանը, ծնված և մեծացած լինելով Դոնի հայկական գաղութում, իհարկե, ամենից առաջ պետք է հետաքրքրվեր հայրենի վայրերի բանահյուսությամբ, որին լավ ծանոթ էր մանկուց։ Այսպես, «Կրիտիկա «Սոս և Վարդիթեր» հոդվածում, անդրադառնալով Պռոշյանի նկարագրած ավանդությանը Նուրիի (ջրի և ամձրևի աստվածուհու) մասին, որը գալիս էր հեթանոս դարերից, Նալբանդյանը հիշում է. «...Այդ ոտանավորի հետքը կա Նոր Նախիջևանում, գոնե շատ տարի առաջ, ես լսել եմ պառավներից։ Որքան միտքս գալիս է, այնտեղ մի փոքր այլայլված է այդ ոտանավորները և ասվում է սալիտակաբար, առանց որևէ արարողության կամ խորհրդի։ Ջորս տող միայն հիշում եմ... Լավ գիտեմ, որ մի քանի տող էլ կար։ Նախիջևանի մեջ բնավ ավանդություն չկա այս Նուրինի մասին. լավ գիտեմ, որ տղայությանս ժամանակ, շատ եմ զղվացուցել պառավներին, որ պատմեն ինձ, թե ով է այս Նուրինը կամ Նազարեթը, բայց ոչինչ չեմ լսել նոցանից, որովհետև իրենք էլ չգիտեին»[29]։

Նալբանդյանի հավաքած Նախիջևանի բանահյուսությունը մասամբ իրացվեց արդեն «Մինին խոսք, մյուսին հարսն» վիպակում, որտեղ բերված են պաշտամունքային երգեր և անեծքներ, ավանդություններ, առածներ, ասացվածքներ և այլն։ Վիպակի վերնագիրն էլ, ասենք, արձագանքում է ժողովրդական ասացվածքին՝ «Մեկը հարս կըլլա, մեկալը փեսա, խեը մեջը կը խաղա»[30]։ Ասացվածքն է դարձել և Մ. Նալբանդյանի մեզ չհասած «Կուտանք հաղարը, կըլլա-բազարը» կոմեդիայի վերնագիրը[31]։

18-րդ դարի վերջին Ղրիմից Ազովի ափերը տեղափոխված Նախիջևանցի հայերը պահպանել էին իրենց բանավոր ժողովրդական ստեղծագործությունը[32]։ Իսկ ինչպես հայտնի է, Ղրիմի հնագույն հայկական գաղութում, բացի զարգացած գրավոր գրականությունից, եղել է հարուստ բանահյուսություն[33]։ Բավական է

---

29 Նույն տեղում, հատոր 3-րդ, էջ 14։

30 Խ. Փորֆչեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965, էջ 163։

31 Տե՛ս К. П. Патканов, Нахичеванский говор, СПб, 1875, էջ 121—122։

32 Տե՛ս Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.), Երևան, 1967։

33 Տե՛ս Վ. Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964։

ասել, որ հենց Ղրիմում են 18-րդ դարի սկզբին առաջին անգամ գրի առնվել հայկական ժողովրդական երգերը[34]: Եվ քանի որ Ղրիմի հայերը դուրս էին եկել Արևելյան Հայաստանից, և միաժամանակ կրում էին արևմտահայ լեզվի ու մշակույթի ազդեցությունը, նրանց բանահյուսությունը համապատկերային կնիք ուներ:

Նալբանդյանը գրում էր. «... Նախիջևանցին անեցի է և տատն և չորրորդ դարում Հայաստանից դուրս եկած.[35] հայտնի է, թե շատ ավանդություններ կամ առասպելներ և այլ այսպիսիք որ վերաբերություն չունեին կրոնի հետ, պիտի կորչեին: Թեև խեղճ բաներ, բայց և այնպես կարելի է տակավին հավաքել բավական վիճակախաղեր և մի քանի առասպելներ Աստվածածնի և ուրիշ սրբերի վրա: Դեղացիք, որ առաջ ավելի ավանդապահ էին քան թե այժմ, ունեին զանազան երգեր, մանավանդ հարսանիքի վերաբերյալ, որ հայտնի են անունովս «պար»[36]:

Նախիջևանի հայերը ղրիմահայերից ժառանգել էին և այն ազդեցությունը, որ դարերի ընթացքում ունեցել էին նրանց վրա թաթարները: Նախիջևանի հայերի լեզվի և մշակույթի վրա այդ ազդեցությունը Նալբանդյանը նշել էր արդեն «Մինին խոսք, մյուսին հարսն» վերտակում: «Նորա (Թյությունճի-օղլու կնոջ— Ս. Դ.) հագուստը, ինչպես առհասարակ նախիջևանցի կնիկ մարդերի հագուստը, շատ հավատարիմ էր մնացած թաթարի տարազին, որ 1779-ին բերել էին Ղրիմից»[37]: Իսկ Թյությունճի-օղլի անունը (ավելի ճիշտ մականունը) թուրք-թաթարական է և նշանակում է ծխախոտագործի որդի, որը և ցույց է տալիս նրա ծագումը Ղրիմի հայերից:

Ղրիմի թաթարների՝ Նախիջևանի հայերի վրա ունեցած ազդեցության մասին ավելի ընդարձակ Նալբանդյանը խոսում է իր «Հիշատակարան»-ում. «Նախիջևանի ժողովուրդը երկար ժամանակ Ղրիմում կենակից լինելով թաթարների հետ, վեր է առել նոցա շատ սովորություններ... Բնակիչների զգեստը, որ սկզբումը բոլորովին համաձայն էր թաթարի ձևերին, այժմ ենթարկված է մեծ փոփոխության... ժողովրդի կենակցությունը թաթարի հետ, որպես և

---

34 Տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 10—11:

35 Ըստ այլ տվյալների՝ 11—13-րդ դարերում: Տես՝ Վ. Ա. Միքայելյան, նշված աշխատությունը, էջ 26:

36 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3-րդ, էջ 142:

37 Մ. Նալբանդյան, Մինին խոսք, մյուսին հարսն, Մոսկվա, 1858, էջ 16:

նորա ձևերը ընդունելը մեծ ազդեցություն է ունեցել և հայկական լեզվի վերա... Նախիջևանի լեզուն, որպես և ղրիմեցոց լեզուն, ունի յուր մեջ շատ և շատ թուրքի և թաթարի բառեր ու ոճեր, այնպես որ, այդ լեզուքը չիմացողը կը դժվարանա հասկանալ նախիջևանցուն, և այդ բառերը գործ են ածվում անխտիր որպես բուն ազգային բառեր»[38]:

Իսկ ահա թե ինչ է գրում այդ հարցի վերաբերյալ մեր ժամանակակից հետազոտողը. «Ղրիմում հյուսված ժողովրդական բնաբերդությունը իր վրա կրում է թաթարական ազդեցություն... Ղրիմի հայոց լեզուն մինչև այժմ Նախիջևանում պարունակում է իր մեջ շուրջ 30 տոկոս թաթարական բառեր: Ժողովրդական բանահյուսությունը նույնպես պարունակում է իր մեջ բազմաթիվ թաթարական բառեր»[39]: Այսպես, մասնավորապես, նախիջևանցի հայերը, թաթարների պես, հնքիաթը, առակը և այլն մի բառով «մասալ» են անվանում: «Աստղագետը» առակը անվանված է «Ղրիմյան թաթարների մասալ», իսկ այդ բառին տրված է այսպիսի ծանոթագրություն. «Մասալ—արաբական բառ է և նշանակում է առակ: Իսկ մասալճի—առակախոսող»: Առակի վերնագիրն էլ թուրք-թաթարական է՝ «Մունեջիմ-բաշի»: «Մունեջիմ-բաշի» նշանակում է «արքունի կամ պալատի աստղագետ»[40]:

Հարկ է նշել, որ անցյալում Ղրիմի և Նախիջևանի շատ մասալճի հայեր տիրապետում էին երկու լեզուներին էլ՝ հայերենի և թաթարերենի, դրա համար էլ նրանց դիսպետուարում կային թաթարական առակներ և հնքիաթներ[41]: Ըստ երևույթին, նման մի անանուն մասալճիից էլ գրի է առել Նալբանդյանը Ղրիմի թաթարների «Աստեղագետը» առակը: Այն նա կարող էր լսած լինել Նոր Նախիջևանում, ավելի շուտ՝ Ղրիմում, ուր հաճախ էր լինում ծառայության գործերով, հանդիսանալով Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի թեմական խորհրդի քարտուղարը (1848—1853):

Իսկ այժմ անցնենք բուն առակի բնութագրմանը:

---

38 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 1-ին, էջ 351—352:

39 Խ. Փորխեչյան, *Նշված աշխատություն*, էջ 31—32: Համմ. К. П. Патканов, Нахичеванский говор; Исследования о диалекте армянского языка, СПб, 1869.

40 «*Հյուսիսափայլ*», 1859, հ. 5, էջ 337:

41 *Հետաքրքիր է, որ 20-րդ դարի 30-ական թթ. թաթարական հայտնի «Վիգենդ Արվի մասին»-ը գրի է առնվել մի ղրիմահայ կնոջից (տես,* «Сказки и легенды татар Крыма», Симферополь, 1936, стр. 373:

4.

«Աստեղագետը» առակի (հեքիաթի) սյուժեն՝ երևակայական և հաջողակ աստղագետի (գուշակի, հեքիմի, վհուկի և այլն) մասին, համաշխարհային բանահյուսության մեջ ամենատարածվածներից մեկն է: Ըստ ֆինն գիտնական Ա. Աարնեի տիպաբանական սխեմայի, այն մտնում է «պատահական երջանկություն» (№. № 1641[42]) խորագիրը կրող հեքիաթների խմբի մեջ: Այդ նույն խմբի մեջ է մտցվում երևակայական հերոսի մասին ոչ պակաս տարածված հեքիաթների ցիկլը, ինչպես հայկական «Ջիկոն», ռուսական «Ֆոմա Բերեննիկովը», Գրիմմ եղբայրների «Քաջ դերձակուհին» և այլն, ցիկլ, որը խիստ մոտ է երևակայական աստղագետի մասին հեքիաթներին:

Երևակայական աստեղագետի (հեքիմի) մասին հեքիաթի հնագույն տարբերակը 2000 տարվա հնություն ունի: Այն մտել է հին հնդկական բանաստեղծ Գունա-Ադիի «Մեծ ասք» պոեմի մեջ, որը մեզ հասել է ավելի ուշ վարիանտով՝ Սամադևիի (11-րդ դար) «Օվկիանոս ասքերի հեղեղից» պոեմում:

Կախարդ-հեքիմի մասին հնդկական հեքիաթը կա նաև «Վետալի 25 պատմվածքները»[43] ժողովրդական գրքում (նույնը մոնղոլների մոտ՝ «Կախարդական մեռյալը»[44]): Ինչպես ենթադրում են գիտնականները, այն երբեմն մտնում էր վերոհիշյալ «Մեծ ասք» պոեմի մեջ:

Գերմանական հայտնի արևելագետ և սանսկրիտագետ Տ. Բենֆեյը «Պանչատանտրա»-ի վերամանության (1859) առաջաբանում, բազմաթիվ զուգահեռների հիման վրա, ցույց է տվել երևակայական հեքիմի մասին հնդկական հեքիաթի անցումը Արևելքի և Արևմուտքի այլևայլ երկրներ: Հեքիաթային այդ սյուժեին է նվիրել իր առաջին «Ռուսական մի հեքիաթի արևելյան և արևմտյան աղբյուրները» (1870) աշխատությունը հայտնի ռուս

---

[42] **Н. П. Андреев**, Указатель сказочных сюжетов по системе Аарне, Л., 1929, стр. 98:

[43] «Двадцать пять рассказов Веталы», перевод с санскритского И. Серебрякова, Гослитиздат, М., 1958, стр. 140—146:

[44] «Волшебный мертвец», монгольские сказки, перевод акад. Б. Я. Владимирцова, изд. Восточной литературы, М., 1958, стр. 38—46. *(«Խոզի գլխով հեքիմը» հեքիաթը)*: Տե՛ս նույնպես «Монгольские сказки», пер. М. Орловской, Гослитиздат, М., 1962, 111—114.

արևելագետ Վ. Ֆ. Միլլերը։ Այդ նույն թեմայով հատուկ հոդված է գրել ակադեմիկոս Ա. Կրիմսկին 1900 թ., իսկ 1964 թ. լույս է տեսել հույն գիտնական Յունգմանի պատկառելի մենագրությունը։

Երևակայական աստեղագետի (հիմքի) մասին հեքիաթների հրատարակությունը Արևելյան Եվրոպայում սկսվել է բավական վաղ՝ 1506 թ. լատիներեն, իսկ 1703 թ. ֆրանսերեն լեզուներով։ 1812 թ. Գրիմմ եղբայրները հեքիաթների իրենց նշանավոր ժողովածուի մեջ մտցրին դրա գերմանական տարբերակը՝ «Ամենագետ բժիշկը»[45]։ Հետագայում սանսկրիտ և գերմաներեն լեզուներով լույս տեսավ վերոհիշյալ «Օվկիանոս ասքերի հեղեղից» (1835) պոեմը։ Մյուս բոլոր տարբերակները հրատարակվեցին 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարում. ռուսական և ուկրաինական «Հեքիմը»[46], թուրքական «Մունեջիմ-բաշին»[47], ադրբեջանական «Վախկոտը»[48], պարսկական «Դուշակը»[49], մոնղոլական «Հաջողակ ծույլիկը», կարմիկական «Թե ինչպես ծույլ ծերունին աշխատել սկսեց»[50] և շատ ուրիշներ։ Հայկական տարբերակը («Թամբալը») գրի է առնվել 1913 թ. Վաղարշապատում և հրատարակվել Ե. Լալայանի հայտնի «Մարգարիտներ» (1914—1915) ժողովածուներում. հետագայում այն մտել է հեքիաթների բազմաթիվ ժողովածուների մեջ[51]։

Այսպիսով, Նալբանդյանի «Մունեջիմ-բաշի»-ն պատկանում է այդ հեքիաթի առավել վաղ գրառումների և հրատարակումների շարքին։ Նրա հիմքում ընկած է Ղրիմի թաթարական տարբերակը, որի հրատարակումը մեզ չհաջողվեց պարզել։ Բոլոր հայտնի տար-

---

45 **Братья Гримм**, Сказки, перевод с немецкого Г. Пятникова, Гослитиздат, М., 1949, стр. 411—414:

46 «Народные русские сказки А. Н. Афанасьева», т. III, Гослитиздат, М., 1957, стр. 159—160: «Украинские народные сказки», пер. Г. Пятникова, М., 1955, стр. 114—115.

47 «Турецкие народные сказки», пер. Н. А. Цветинович-Грюнберг, изд. «Наука», М., 1967, стр. 387—390:

48 «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XIII, Тифлис, 1892, стр. 295—297:

49 «Персидские сказки», пер. А. Розенфельд, Гослитиздат, М., 1956, стр. 84—93:

50 «Калмыцкие народные сказки», пер. И. И. Попова, Элиста, 1961, 183—186:

51 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. 2-րդ, Երևան, 1959, էջ 507—512։

բերականների համեմատությամբ, նրա մեջ առավել շատ են էպիզոդները, իսկ սյուժեով նա ավելի մոտ է համանուն թուրքական հեքիաթին և հատկապես պարսկական «Գուշակ»-ին:

Նալբանդյանի «Աստեղագետ»-ում, ինչպես և պարսկական ու թուրքական տարբերակներում, բացակայում է այդ հեքիաթի գլխավոր մոտիվներից մեկը՝ հերոսի ծովուրդյունը: Ընդհակառակը, այստեղ ընդգծվում է նրա աշխատասիրությունը: Եվս մեկ կարևոր առանձնահատկություն. Նալբանդյանի «Աստեղագետը» և պարսկական «Գուշակը» հեքիաթ-նովելներ են՝ ծավալուն սյուժեով, մանրամասն նկարագրություններով, այն, ինչ որ գրեթե չկա մյուս բոլոր տարբերակներում: Նալբանդյանի մշակմամբ «Աստեղագետը» ձեռք է բերել ռեալիստական նովելի գծեր, և այդ իմաստով այն կարելի է համեմատել Ղ. Աղայանի «Անահիտ» և Ալ. Իսահակյանի «Աղա Նազար» հեքիաթների հետ (հոգեբանական կողմը, ծավալուն դիալոգները՝ հեղինակային միջամտությամբ, շարադրանքի ձևը, ուշադրությունը դեպի մանրամասները և այլն):

Մ. Նալբանդյանի «Աստեղագետ»-ի սյուժեն համառոտակի հետևյալն է.

Բախչիսարայում ապրում էր խանական աստղագետ Սալեհ-էֆենդին, որի փառքը տարածվել էր ամբողջ արևելյան աշխարհում: Այդ նույն քաղաքում էր ապրում նաև աղքատ բեռնակիր Մեյն-խոջան, որի կինը՝ Մենգլիղը նախանձում էր պալատական աստղագետի կնոջ՝ Շերֆեի հարստությանն ու զգեստներին: Մենգլիղը ստիպում է իր ամուսնուն նույնպես աստղագետ դառնալ, թեև դրա համար նա ոչ մի տվյալ չուներ, անգրագետ էր: Բայց նա ստիպված էր համաձայնվել:

Վերջին փողերով գնելով մի հին գիրք, Մեյն-խոջան գնում նստում է Բախչիսարայի մուտքի ամենանկատելի տեղում: Պատահաբար նրան հաջողվում է «գուշակել», թե որտեղ են սայլապանի կորած ուղտերը, և նոր աստղագետի համբավը արագ տարածվում է ամբողջ մայրաքաղաքում:

Այդ ժամանակ Ղրիմի խան Գիրեյից գողանում են նրա թանկարժեք մատանին: Այդ կապակցությամբ դիվան են հրավիրում: Բայց պալատական աստղագետ Սալեհ էֆենդին ոչինչ չի կարողանում անել, որպեսզի գտնի գողացված մատանին: Այն ժամանակ որոշում են պալատ հրավիրել նորահայտ աստղագետ Մեյն-խոջային: Վերջինս քառասուն օր է խնդրում խանի գողացված մատանին գտնելու համար:

Մեյն-Խոջայի վճռականությունը սարսափեցնում է պալատական քառասուն մարդկանց, որոնք գողացել են մատանին: Եվ նրանք որոշում են հետևել Մեյն-Խոջային, որը փակվել էր իր տանը և ոչ մի տեղ չէր գնում: Երբ առաջին գողը դիշերը մոտենում է աստղագետի տանը և սկսում ականջ դնել, լսում է, թե ինչպես Մեյն-Խոջան ասում է. «Ահա քառասունից մինը անց կացավ»: Գողը վախենում է, մտածելով, որ այդ իր մասին է ասված: Ուղարկում են երկրորդին, երրորդին... Եվ ամեն անգամ կրկնվում է նույնը: Սարսափած գողերը սոխրված են լինում Մեյն-Խոջային խոստովանել իրենց գողությունը: Վերջինս առաջարկում է նրանց մատանին տալ խանական սադերից մեկին կուլ տալու և ջարդել սագի ոտքը, ինչ և նրանք անում են:

Քառասուն օրը անցնում է: Բոլորը հավաքվում են խանի պալատում: Մեյն-Խոջան առաջարկում է պալատ բերել բոլոր կենդանիներին: Երբ անցնում են սագերը, նա տեսնում է ջարդված թաթով սագին և կարգադրում է բացել նրա փորը, և հանում են մատանին: Դրանից հետո խանը Մեյն-Խոջային նշանակում է գլխավոր աստղագետ: Բայց վերջինս մշտական սարսափի մեջ է, մտածելով, որ ամեն ինչ կբացվի: Դաժան խանից ազատվելու համար նա որոշում է խելագար ձևանալ: Բաղնիքում տեղի ունեցած դեպքը օգնում է նրան. Մեյն-Խոջան մերկ խանին դուրս է հրում բաղնիքից: Բայց մի րոպե էլ չի անցնում, որ բաղնիքը քանդվում է, և, այդպիսով, աստղագետը փրկում է խանի կյանքը: Խանը Մեյն-Խոջային առաջարկում է խնդրել ինչ որ ուզում է: Եվ վերջինս խնդրում է իրեն բաց թողնել (քանի դեռ ուշ չէ): Խանը համաձայնվում է, և Մեյն-Խոջան վերադառնում է տուն:

Ինչպես տեսնում ենք, այս սյուժեն բոլորովին մոտ է թուրքական և հատկապես պարսկական տարբերակին:

Երևակայական աստղագետի մասին բոլոր վերսխանները, չնայած սյուժետային ընդհանրությանը, իրենց վրա կրում են ազգային ինքնատիպության ցայտուն կնիքը: Դա բնորոշ է նաև Նալբանդյանի «Աստեղագետ»-ի համար: Նրանում պահպանվել է Ղրիմի թաթարների հեքիաթների համար ավանդական սկիզբ. «Կարող խաներից մինի ժամանակ,— և այս կարող խանը էր Մենգլի-Գիրեյ-խանը,— այսպես սկսեց առակախոսը յուր ղրույցը,— ապրում էր մի երևելի մունեջիմ...»[52]:

---

52 «Հյուսիսափայլ», 1859, № 5, էջ 337: Շմմտ.

Նման սկիզբով, որտեղ հիշատակվում էր Ղրիմի առաջին խաներից մեկը, հեքիաթասացը շեշտում էր հեքիաթի հնությունը։ Ազգային կոլորիտը պահելու համար Նալբանդյանը տեքստում անփոփոխ է թողել թաթարական անունները, տիտղոսները, պալատականների կոչումները, թաթարական որոշ արտահայտություններ, կենցաղային մանրամասներ և մահմեդական կրոնական հասկացություններ, դրանց կողքին զուգահեռաբար դնելով հայկական թարգմանությունները[53]։

Ինչպես և թաթարական շատ հեքիաթներում, «Աստեղագետ»-ում որպես գործող անձինք հանդես են գալիս խանը, բեյը, ուլեմը, հաճին (սովորաբար աղքատները) և մյուսները՝ ավանդական էպիտետներով։

Նալբանդյանի «Աստեղագետը» դեպի օտարազգի նյութը ունեցած խնամքի օրինակ է։ Միաժամանակ այն գործոն է հանդիսացել հայ երիտասարդ գեղարվեստական գրականության։ Համեմատելով այդ առակը «Մինին խոսք, մյուսին հարսն» վիպակի և «Մեռելահարցուկ» վեպի հետ, մենք դրանց մեջ պատմելու ձևի, արտահայտությունների, կառուցվածքի, բառապաշարի և այլն շատ ընդհանրություններ ենք գտնում։

«Աստղագետը» առակը հետաքրքրական ընթերցանության նյութ էր, գրված աշխարհաբարով, որի կրքոտ պրոպագանդիստի դերում բոլոր այդ տարիներին «Հյուսիսափայլ»-ի էջերում հանդես էր գալիս Նալբանդյանը։ Բայց նրանում դրված էր նաև այլաբանական խոր իմաստ, որ բնորոշ էր առհասարակ Նալբանդյանի ստեղծագործության՝ նրա գեղարվեստական և հրապարակախոսական գործերին։ Բացատրելով ընթերցողներին իր գրվածքների այլաբանական բնույթը, «Հիշատակարան»-ի հեղինակը 1859 թ. ասում էր. «Իմ համար ասում են, թե շատ բաներ ունիմ առակի ձևերով, և թե իմ բովանդակած բաների մասին նախընթաց տեղեկություն չունեցողը կը դժվարանա շատ անգամ հասկանալ բանի ըորությունը. ճշմարի՞տ է այս։ Ճշմարի՞տ է, որ

---

53 Օրինակ. «Կափու-խալխ—նշանակում է արքունի դրան ծառայող մարդ, մի խոսքով պալատական պաշտոնյա»։ «Բոզա—մի խմելիք է, և սորան շատ են գործածում Ղրիմի թաթարները»։ «Հեքիմ—բժիշկ»։ «Փեք էի փեք էի—շատ բարի շատ բարի»։ «Խայիր օլսուն, խայիր օլսուն—շնորհավոր լինի, շնորհավոր լինի»։ «Ալլահ աքբար. Ալ համդու լիլլահ—աստված մեծ է. փառաբանություն աստուծո»։ «Կալբ ուլ ահմազա ֆի ֆիհի վա լիսան ուլ ակիլի կալբիհի—հիմարի սիրտը բերանում է, իսկ խոհեմի լեզուն նորա սրտումը» և այլն։

ասում են, թե ես ներկարարի կարաս ունիմ և թե կենդանիք, որ ընկել էին այդ կարասի մեջ, երևում են այնուհետև հասարակութեանը ներկված և դժվարճանաչելի բրդով»։ «Այո, կա այդ բանի մեջ ճշմարտութիւն,— պատասխանում է Նալբանդեանը,— բայց դու զուգահեռաբար հառաջ գնալով ազգի կեանքի հետ, ամենայն առողջամտութեամբ հարկադրված ես այդպես ընթանալ։ Ճշմարտութիւնը ավելի շուտով ըմբռնելի է լինում անդաստիարակ և ասիացի ազգերին. այդ վնաս չունի, միայն դու հառաջ գնա։ Կը գա օր, կը ծագի և քո համար այն արշալոյսը, երբ քո ընթերցողքը կարող կը լինին նայել եգիպտական աստվածուհու երեսը առանց քողով ծածկելու նորան»[54]։

Իր «Հիշատակարան»-ի վերջում Նալբանդեանը կրկին է անդրադառնում այդ հարցին. «Ազգի լուսավորութեան և հասկացողութեան աստիճանը, այլև այն շրջապատը, որի մեջ կանք մեք (Թափանցիկ ակնարկ ցարական գրաքննութեան մասին— Ս. Դ.) վաղուց արդեն հարկադրել են մեզ հայկական դպրութեանը տալ այն ակնարկական ուղղութիւնը, որ երբեմն հայտնի էր Ֆրանսիայում անունով «Litérature allusionnelle[55]».

Եվ այդպես, «եղուկպոսյան ձևերը» Նալբանդեանը բացատրում էր որպես իր իսկական մտքերի քողարկման միջոց (գրաքննութեունից), այլև որպես այլաբանութեան գեղարվեստական միջոց, որը մատչելի է մասսաներին և սկիզբ էր առնում հայկական և համաշխարհային առակային գրականութեան և ժողովրդական ստեղծագործութեան հարուստ ավանդներից։

Մ. Նալբանդեանի «Աստեղագետը» նույնպես ունի իր «երկրորդ պլանը», այլաբանական իմաստը կամ ենթատեքստը։ Դա սոցիալական կծու երգիծանք է, որը խթանում է բոլոր նրանց, ովքեր անարժան կերպով բարձրանում են հասարակութեան մեջ և պարծենում իրենց ենթադրյալ վաստակներով։ Ինչպես որ Նալբանդեանը պատկերծում է երևակայական աստղագետին, նույնպես և պատկերծում էր երևակայական գիտնական Մսեր Մսերյանցին «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետում և մեծահարուստ Հովնաթանյանցի թեու հայրենասիրութեյունը՝ «Մեռելահարցուկ» վեպում։

---

54 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1-ին, էջ 411։

55 Նույն տեղում, էջ 487։

Միաժամանակ Նալբանդյանը, լինելով լուսավորիչ-դեմոկրատ, առակում ծաղրում էր աստղագիտական «գիտությունը»։ Ահա թե ինչպես է մեկնաբանվում աստղագետ Սալեհ-էֆենդու ճառը դիվանում։

«Սա նստած էր այս տեղ և որպես իմաստուններից իմաստունը, մի խոսք բերանից հանած չէր... Սալեհ իմաստունը լսելով Դիվանի վճիռը, նախ և առաջ ցանկանում էր սրտումը, որ բարձր աստիճան ուլեմաները գետին մտանեն, և նույնպես կամենում էր մտքումը թքել ոչ թե միայն բոլոր ներկա գտանվողների մորուքի, այլ և նոցա նախահարց մորուքի վերա. սակայն ամրացնելով սիրտը, թևև ցույց չտալով որպես թե այդ վճիռը, ամենևին հավանելի չէր նորան, հանապազորդեց յուր խոր լռության մեջ... Սակայն Սալեհ-էֆենդին, որչափ և լուռ մնար, պարտ էր հավանություն տալ մատանու գողացողը որոնելու յուր հնարագիտության զորությամբ... ժողովելով հոգու ամենայն զորությունը, վեր կացավ տեղից, և շփելով յուր փառավոր մորուքը, ասաց վերջապես. «Իմաստուն Դիվանը,—թող պահպանի Ալլահը,—չէ սխալվում։ Աստեղաբանության մեծ գիտության օգնությամբը կարելի է երբեմն (վերջին բառը արտասանեց շատ ցածր ձայնով) իմանալ ծածուկ գաղտնիքը։—Ճառի սկիզբը, ինչպես տեսնում եք, չէր վատ, և բարձրաստիճան Դիվանի անդամքը, որպես նշան ուրախության, շփեցին յուրյանց մորուքները։— Սակայն...,— այստեղ նորա ձայնը սկսավ հայտնի թուլանալ,— սակայն դեռ երեկ, բոլոր դիշերը նստած էի պալատական ջամիա մինարեթոմը (Սալեհ-էֆենդին սուտ ասեց), հարցրեցի աստղերից, բայց նոքա,—ավաղ-իմ սիրտը «քյաբաբ» (խորոված) դարձավ,— ոչինչ հաստատ բան չասացին ինձ։—Ժողովի անդամքը քիթերը կախեցին։—Ես խնդրում եմ,—խոսքը հառաջ տարավ Սալեհ-էֆենդին,—ես խնդրում եմ բարձրաստիճան Դիվան, առաջարկել մեր ամենազոր և ամենիմաստ իշխանապետին,—թող պայծառանա նորա ստվերը երկրի վերա,—հրամայել ժողովելու մունեջիմները յուր բոլոր թագավորությենից։ Կարող է պատահել, որ մինը իմանա մի ուրիշ առանձին բան իմ գիտությանս մեջ, որ ինձ հայտնի չէ, և այդպես կը գտանե խանի գանձը գողացողին»[56]։

Այդպես է Նալբանդյանը հեգնում «մեծ գիտությունը»՝ աստղագիտությունը։ Ճիշտ նույնպես «Մինին խոսք, մյուսին հարսն»

56 «Հյուսիսափայլ», 1859, № 5, էջ 346—347։

վիպակում նա ծաղրում էր հնքիմությունը և աստղագիտությունը, ալքիմիան՝ «Մեռելահարցուկ» վեպում, իսկ «Կրիտիկա «Սոս և Վարդիթեր» հոդվածում՝ կախարդությունը և այլ շառլատանությունը, այն ամենը, ինչով հոգևորականությունը թմրեցրել էր ազգա ժողովրդին: Նա Նալբանդյանը ամեն կերպ ձգտում էր ձերբազատել ժողովրդական զանգվածներին նախապաշարումներից և անհավատությունից: Ամենից առաջ այդ խնդիրն էր հետապնդում Նալբանդյանը, հրատարակելով «Աստեղագետը» առակը: Այն նրան հետաքրքրել է հենց սոցիալական խոր բովանդակությամբ, ճիշտ այնպես, ինչպես հետագայում հետաքրքրել է Քաջ Նազարի կերպարը բազմաթիվ հայ նշանավոր գրողների[57]:

Մ. Նալբանդյան-Պախալյանի «Աստեղագետը», ինչպես և Ղ. Աղայանի «Անահիտ»-ը, Հ. Թումանյանի «Քաջ Նազար»-ը, Ավ. Իսահակյանի «Ազա-Նազար»-ը, Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»-ը, իր արժանի տեղը կգրավի հայ գեղարվեստական գրականության պատմության մեջ:

---

57 Այդ մասին տե՛ս Ս. Գուլակյանի հոդվածները՝ «Фольклорные истоки сказки «Кадж Назар», «Некоторые особенности комедии Д. Демирчяна «Храбрый Назар» («Литературная Армения», 1964, № 10; 1966, № 2).

ԷՋԵՐ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

19-րդ դարի վերջին քառորդի արևելահայ լրագրության պատմության համար գրեթե անփոխարինելի դեր են կատարում հայ պարբերականների գրաքննության հետ կապված արխիվային փաստաթղթերը։ Այդ առավել մեծ կարևորություն է ստանում մանավանդ այն պատճառով, որ մեր նույնիսկ շատ նշանավոր պարբերականների արխիվները չեն պահպանվել։ Այս առումով եթե Ս. Արեշյանի, իր տեսակի մեջ եզակի մենագրությունը բազմաթիվ հարցերում հստակ կողմնորոշում է տալիս 19-րդ դարի արևելահայ հասարակական միտքն ուսումնասիրող բանասերներին և պատմաբաններին, ապա Կովկասյան գրաքննական կոմիտեի արխիվի նյութերը հնարավորություն են տալիս ոչ միայն ինչ-որ չափով վերականգնել հայ մամուլի առանձին օրգանների պատմությունը, այլև առավել տեսանելի են դարձնում այն քաղաքական մթնոլորտը, որում գործել են հայ լրագրողները։ Օգտվելով այդ արխիվի նյութերի ընձեռած հնարավորություններից, կփորձենք ցույց տալ 1875—1900-ական թվականների ժամանակաշրջանի Կովկասյան գրաքննական կոմիտեի աշխատանքի մի շարք առանձնահատկությունները և Կոմիտեի վերաբերմունքը դեպի ժամանակի հայ պարբերականները։

19-րդ դարի 50-ական թվականների վերջերին, ցարական Ռուսաստանում դյուղացիական ռեֆորմի նախապատրաստման շրջանում որոշակի քայլեր են կատարվում և գրաքննական ողջ սիստեմը վերակառուցելու ուղղությամբ։ Այլևս անհնար էր հանդուրժել 1848—1855 թթ. «ցենզուրային տեռորի» դաժան տարիներին ստեղծված գրաքննական ոչ բանական օրենքները։ Ժամա-

նակները փոխվել էին. Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանը ստիպված էր դրել տնտեսական կյանքի վերանորոգումների ուղին և այդ երևույթը իր արտահայտությունն էր գտնում նաև գրքերի ու մամուլի աշխարհում: Երկրում հեղափոխական ճգնաժամի այս օրերին ինքնաբերաբար վերանում են գրաքննական մի շարք սահմանափակումներ ու խոչընդոտներ: Անհամեմատ լայն հնարավորություններ են ստեղծվում ինչպես ռուսական, այնպես էլ կովկասյան ժողովուրդների մամուլի զարգացման համար:

Սակայն Ռուսաստանում հասունացած գյուղացիական հեղափոխությունը չհասավ հաղթական վախճանի. ցարական կառավարությունն անցավ հակահարձակման և 1863 թվականին երկրում ծավալվող շարժումները ճնշելուց հետո ձեռնամուխ եղավ գրաքննական սիստեմի խստացմանը: Ամեն բանից առաջ գրաքննության գլխավոր վարչությունը դուրս բերելով ժողովրդական լուսավորության մինիստրության ենթակայությունից, (որի ղեկավարության տակ գտնվում էր՝ սկսած 1804 թվականից), Ալեքսանդր երկրորդն այն հանձնում է ներքին գործոց մինիստրության տնօրինությանը: Այնուհետև վերջնականապես խմբագրվում և 1865 թվականին կիրառության մեջ է դրվում վաղուց ի վեր մշակվող գրաքննական նոր կանոնադրությունը, որը մայրաքաղաքի հրատարակություններին մեծ մասը ազատում էր նախնական պարտադիր գրաքննությունից:

Հայ գրականության և պարբերական մամուլի գրաքննության գործը, որը 1849 թվականից դրված էր Կովկասի գրաքննական կոմիտեի վրա, մինչև 1863 թ. ղեկավարում էր Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձությունը: 1863 թվականից, համապատասխանաբար, Կովկասի գրաքննական կոմիտեն ենթարկվում է Կովկասի փոխարքայությանը: Թեև վարչականորեն Կովկասի գրաքննական կոմիտեն ենթարկվում էր մամուլի գործերի գլխավոր վարչությանը, բայց իրականում այն գործում էր փոխարքայության ղեկավարությամբ: Այն բանից հետո միայն, երբ Ալեքսանդր երկրորդը սպանվում է և նրան հաջորդած Ալեքսանդր երրորդը ձեռնամուխ է լինում հաշվեհարդար կատարելու մամուլի և գրականության հետ, իրավիճակը փոխվում է և Կովկասում: Այստեղ 1882 թվականին փոխարքայությունը վերակազմվում է կառավարչապետության: Կովկասի առաջին կառավարչապետ իշխան Ա. Մ. Դոնդուկով-Կորսակովի նախագահությամբ ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որը մշակում է Կովկասի կառա-

վարման նոր կանոնադրությունը։ 1882 թ. մարտի 21-ին նոր կառավարչապետը հրավիրելով Կովկասի մամուլի 12 խմբագիրներին, ծանոթանում է նրանց հետ և հույս հայտնում, որ հետագայում իրենք համերաշխ կհամագործակցեն, միաժամանակ նրանց հայտնելով գրաքննական կոմիտեի գերատեսչական առաջիկա փոփոխության ծրագիրը, նա խմբագիրներին խորհուրդ է տալիս հանդես գալ համապատասխան առաջարկներով։

Ի՞նչ փոփոխության մասին էր խոսքը։

Վրացական կենտրոնական պետական արխիվում պահպանվում է «Կովկասյան երկրամասի կառավարման կանոնադրությունը մշակող հանձնաժողովին» ուղղված մի զեկուցագիր, որտեղ խոսվում է Կովկասի գրաքննական կոմիտեի գործերի վրճակի և իրավունքների մասին։ Զեկուցագրի ստեղծման շարժառիթը՝ Ներքին գործոց մինիստրության պաշտոնական գրությունն էր, ուր հայտնվում էր, թե առաջիկայում Կովկասի պարբերական մամուլը և ողջ տպագրական գործը (տեղական լեզուներով գրված պիեսներից բացի), պետք է անմիջականորեն ղեկավարի մամուլի գործերի գլխավոր վարչությունը։

Քանի որ ննթակայության այս նոր սիստեմը կաղմակերպական բարդություններից բացի ննթադրում էր և քաղաքական որոշ անհարմարություններ, և օգտվելով այն առիթից, որ Դոնդուկով-Կորսակովը առաջարկում էր արտահայտվել այդ հարցի մասին, գրաքննական կոմիտեի նախագահ Լ. Ն. Մոճալևսկին կազմում է վերոհիշյալ զեկուցագիրը, որտեղ հանգամանորեն շարադրում է կոմիտեի հայացքը՝ առաջիկա վերակառուցումների հարցի շուրջը[1]։ Այստեղ, փաստորեն, տրվում է Կովկասի ժողովուրդների ժամանակի հասարակական տրամադրությունների պաշտոնական գնահատականը։ Զեկուցագրում վեր է հանվում Կովկասի և մայրաքաղաքի թերթերի փոխհարաբերության շատ հետաքրքրական հարցը, ինչպես և բնութագրվում է տեղական մամուլը՝ իր իրավունքների, արտոնությունների, զանցանքների ու պատժի խաչուղիներում։

Ջափազանց հետաքրքրական է Մոճալևսկու հայացքը մայրաքաղաքի և տեղական թերթերի գնահատականի հարցում։ Կովկասյան իշխանավորի համար նարոդնիկական շարժումների տագ-

---

1 «Записка о положении и правах цензуры на Кавказе», *(վրացական կենտրոնական պետական արխիվ, ֆոնդ 480, ցուցակ լրացուցիչ I, գործ 74)։*

նպատակ ապրող մայրաքաղաքները հեղափոխության վտանգավոր օջախներ էին, բարձիթողի արած լրագրային բարքերով։ Մինչդեռ Կովկասը, ըստ նրա, ապրում էր քաղաքական կուսական կյանքով. «Տեղական մամուլը,— գրում է Մոձալևսկին,— օգտվելով գրաքննական ազատության շնորհներից, և շահելով դրանից, իր նշանակությամբ ուժեղ հակակշիռ է ներկայացնում մայրաքաղաքի ռուսական պարբերականների նկատմամբ։ Այն՝ տեղի ժողովուրդներին հեռացնում է ռուսական հասարակությանը հուզող քաղաքական և սոցիալական խնդիրներից և նրանց ուշադրությունը կենտրոնացնում տեղական, իրենց ավելի մոտ խնդիրների վրա։ Այդ առավել ևս օգտակար է,— շարունակում է նա,— քանի որ մեր մայրաքաղաքի մամուլը վերջին ժամանակներս դավաճան, առավելապես Կովկասի նկատմամբ ստանձնել է գրեթե այն դերը, ինչ դեր երբեմնապես խաղում էր Ռուսաստանի համար Լոնդոնի և Ժնևի մամուլը։ Կովկասյան գրաքննության մերժած հոդվածների, մասնավորապես բանաստեղծությունների մեծ մասը հրապարակվում են մայրաքաղաքի պարբերականների էջերում և ապահորեն կարդացվում նաև Կովկասում, և այդ առանձնապես այն ժամանակ, երբ նման հոդվածները ինչ-որ վիրավորական կամ հանդուգն արտահայտություններ են պարունակում պետական իշխանության կամ օրենքով հաստատված տեղական կարգերի հասցեին»։

Այնուհետև ոչ առանց հպարտության՝ Մոձալևսկին ընդգծում է, թե Կովկասում չեն հայտնաբերվել ոչ քաղաքական գաղտնի խմբակներ, ոչ ընդհատակյա տպարան, ոչ մամուլի անլեգալ օրգաններ։ Հիշելով Ալեքսանդր երկրորդի սպանության փաստը, նա ապահովագրում է իրեն հանձնված հաստատությունը, հավաստիացնելով, թե իր քաղաքականության շնորհիվ Կովկասում չեն եղել ոչ միայն տեռորի դեպքեր, այլ անգամ քաղաքական ելույթներ կամ սոցիալիստական պրոպագանդայի մասնակի փորձեր։

Լիովին սահմանազատվելով Ռուսաստանից, Կովկասի դրաքննական վարչության պետը հույս ունենալով, թե առաջիկայում ևս կհաջողվի պահպանել իր հոմիտեի ամբողջականությունը, կշտամբանքի խոսք է ներտում կենտրոնին. Կայսրության մայրաքաղաքից է, գրում է նա, որ այս խաղաղ և իր ծագավորին նվիրված երկիրն են մտնում ռուսական ընդհատակի զանազան հրատարակությունները, «այժմ չնչին չափով իսկ արձագանք չգտնելով մեր տիրապետ հասարակության կողմից»։ Նա համոզ-

ված է միանգամայն, որ այլ միջոցառումների հետ մեկտեղ Կովկասում գործող գրաքննական համեմատական ազատության սիստեմն է, որ տեղի երիտասարդությանը հեռու է պահում «այն չարության ոգու, ժխտման և քաղաքական անբարեհուսության արտահայտություններից, որոնք այնքան ակնառու են Ռուսաստանի այլ դավառներում, որտեղ, ի դեպ, ամբողջ խստությամբ կիրառվում է ներկայումս գործող գրաքննական սիստեմը»։

Մոձալևսկին իր առաջարկի քաղաքական հիմնավորումից անցնում է զուտ տեղական, ազգային նկատառումներին, որոնք բացահայտում են փոխարքայության քաղաքականությունը տեղական ազգությունների նկատմամբ։ Խոսվում է այն մասին, որ Կովկասի իշխանավորները առանձնահատուկ նշանակություն են տվել մամուլի ռուսական օրգաններին, որոնք իրենց թվական և որակական գերակշռությամբ նշանակալից դեր են կատարել՝ բնակչության մեջ հետաքրքրություն և սեր արթարծելով դեպի ռուսաց լեզուն[2]։ Ռուսաց լեզվի իմացությունը,— գրում է նա,— աստիճանաբար մտել է տեղի ազգաբնակության մտավոր պահանջմունքների և կենցաղի մեջ, այդ ազգաբնակությանը մոտեցնելով ռուսական հայրենիքին։

Պետք է ենթադրել, որ հայերին ու վրացիներին ռուսական պետականության հետ կապելու ձգտումը Կովկասյան գրաքննական վարչության ծրագրային գործերից մեկն էր, որը իրականացվում էր մի կողմից ռուսական անհամեմատ ազատ պարբերականների հրատարակության ճանապարհով, մյուս կողմից, գրաքննական օրենքների թեթևակի մեղմացումով։

Մինչ 80-ական թվականների սկիզբը գրաքննական կոմիտեն փոքրիկ ազատություններ տալով Կովկասյան թերթերին, իրականացնում էր Ալեքսանդր երկրորդի քաղաքականությունը՝ առհասարակ արևելյան քրիստոնյա ժողովուրդներին սիրաշահելու հարցում։ Անհրաժեշտ էր առանձնապես հայերի մեջ ամրապնդել ռուսական պետության անվերապահ գերադասության գաղափարը՝ հարևան օսմանյան և պարսից պետություններից։ Ալեքսանդր երկրորդը 60-ական թթ. հնարավորություն տալով հայ պարբերական մամուլի ազատ զարգացմանը, նպատակ ուներ դրա

---

2 70-ական թվականներին Կովկասում ռուսերեն լեզվով հրատարակվում էին 7 պարբերականներ։ 1882 թ. երկրամասում հրատարակվող 30 թերթերից 5-ը՝ ռուսական օրգաններ էին։

միջոցով արևմտահայությանը նույնպես կապել ռուսահայ մամուլի, և հետևապես՝ ռուսական քաղաքակրթության հետ[3]:

Առաջնորդվելով այս հայացքով, Մոռալևսկին իր զեկուցագրում հիշում է վերջին Արևելյան պատերազմի իրադարձությունները և հայտնում այն միտքը, թե մամուլի աղատությամբ կարելի կլիներ հետագայում ևս կաշառել Փոքր Ասիայի հայերին և հույներին, որոնք ռուս-թուրքական պատերազմների շրջանում բացահայտ համակրանքով էին վերաբերվում ցարական պետությանը:

80-ական թվականներին իրավիճակը փոխվում է և կյանքից հետ մնացած կովկասյան գրաքննական կոմիտեի պաշտոնյաները զարմանքով հաճախակի բախվում են Ներքին գործոց մինիստրության անհաշվենկատ հրահանգներին ու հրամաններին: Այսպես, Ներքին գործոց մինիստրության և մամուլի գործերի գլխավոր վարչության կողմից արվում են մի շարք հարցումներ, ուղարկվում հրահանգներ, «որոնք դրդում են տեղական գրաքննական կոմիտեին՝ ավելի ուժեղացնել առանց այն էլ ուժեղացված խստությունները՝ տեղական պարբերական հրատարակությունների նկատմամբ»: Դիտողություն է արվում «Մշակին», թուրքական ադմինիստրացիայի չարաշահումների մերկացման և էջմիածնի սինոդի մասին գրած հոդվածների համար: Զանազան զեղծարարությունների մերկացման համար հետապնդվում են վրացական մամուլը և ռուսական „Гусли“ օրգանը:

Այս խստությունները, Մոռալևսկու կարծիքով, կարող էին ոչ միայն թուլացնել Կովկասում ռուսական մամուլի ազդանակությունը և տեղացիներին ստիպել, որ նրանք հետևեն կենտրոնական թերթերում արծարծվող սոցիալական հարցերին, այլև կարող էին սասանել Կովկասյան ազդարարակչության հավատը ռուսական պետականության հանդեպ և նրան բերել այն համոզման, թե մամուլի համար հարևան Թուրքիայում շատ ավելի ազատություններ կան, քան Ռուսաստանում:

Մոռալևսկու զեկուցագրից երևում է, սակայն, որ տեղական մամուլին տրված «ազատությունները» պայմանական հասկացություն է: Այսպես, թեև պաշտոնապես մինչ այդ չէր փակվել ոչ մի թերթ, բայց գրաքննական «պետական խիստ պահանջ-

---

3 Մ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, էջ 31; С. Арешян, Армянская печать и царская цензура, էջ 178:

ներին» չհարմարվելու պատճառով փակվում են «Тифлисский вестник», «Кавказский курьер», «Судебные порядки» պարբերականները։ Նշվում է նաև, որ դատական օրգանները զանազան զանցանքների և գրաքննական օրենքների խախտումների համար բազմիցս պատասխանատվության են կանչել և՛ խմբագիրներին, և՛ տպարանատերերին։ Ուշագրավ է հենց միայն այն հայտարարությունը, թե ընդամենը երեք հոգուց բաղկացած գրաքննական կոմիտեի կազմում վերջին վեց տարում (1877—1882) փոխվում են վեց գրաքննիչներ։ Նախագահը ստիպված էր խոստովանել «գրաքննական և վարչական... խիստ միջոցառումներին դիմելու տխուր անհրաժեշտության» փաստերը։

Կովկասյան գրաքննական կոմիտեի ինքնուրույնությունը պահպանելու նպատակով կոմիտեի նախագահը քաղաքական և ազգային շարժառիթներից զատ վկայակոչում է խմբագրական-հրատարակչական մի շարք կենսական հարցեր, որոնք կարող էին տուժել՝ Պետերբուրգի ենթակայության հետևանքով։ Իբրև ժուռնալային գործի գիտակ՝ Մոձալևսկին նշում է, թե պետերբուրգյան գրաքննիչները դժվարությամբ կկողմնորոշվեն ազգային հարցերում, իսկ մամուլի գործերի գլխավոր վարչությունը իրավեկ չլինելով տեղական իշխանությունների շահագրգռություններին, նույնպես կդժվարանա ղեկավար ցուցումներ տալ։ Այդ հնարավոր կասկ, անտարակույս, կաղդի և պետական թերթերի հրատարակության նորմալ ընթացքի վրա, քանի որ վիճելի խնդիրների պարզաբանման կամ բողոքի դեպքում հեղինակը, խմբագիրը, տպարանատերերը Պետերբուրգի հետ գրագրություն ունենալով՝ հսկայական ժամանակ պետք է կորցնեին։

Այս ամենի պատճառով գրաքննական կոմիտեի նախագահը անհապաղ միջոցառում է գտնում գրաքննական վարչության վերակազմության նախագիծը և հետևցնում է, թե այդ միջոցառումը վերջնականապես կքայքայի տեղական պարբերականների ունեցած որոշ ինքնուրույնությունը և գոյություն ունեցող «գրաքննական միասնագամայն նպատակահարմար սիստեմը»։

Մատնանշի այս ազատությունները, որոնց անունից խոսում է Մոձալևսկին, և որ տրվել էին տեղական թերթերին, հասկանալի էին 70-ական թվականների վերջին։ Այս ժամանակ եթե կովկասյան իշխանությունները համեմատական ազատություններ էին տալիս վրացերեններին, նրանց համար տեսանելի դարձնելու ռուսական տիրապետության առավելությունները, ապա նույն այդ

տարիներին մայրաքաղաքի դրաքննիչները համեմատական ազատություն էին տալիս դեմոկրատական բանակի գործիչներին («Отечественные записки» -ի աշխատակիցներին), նրանց գործունեությունը լեգալ շրջանակներում պահելու համար։ Թե՛ մեկ, թե մյուս դրաքննական սիստեմները ապրում են իրենց օրհասը՝ նարոդովոլցիների դեմ 1881 թվականին ակաված դաժան պայքարի պայմաններում։ Ուստի և, չնայած կովկասյան դրաքննական կոմիտեի նախագահի կազմած պերճախոս զեկուցագրին, Կովկասի ղեկավարման նոր կանոնադրության հետ, որը կիրառվում է 1883 թվականից, Կովկասյան դրաքննական կոմիտեն սկսում է աշխատել մամուլի գործերի գլխավոր վարչության անմիջական հսկողության տակ։ Այս նոր ընթացքը միանգամայն նոր ժամանակաշրջան է սկզբնավորում Կովկասի լրագրության աշխարհում։

Կոմիտեի նոր նախագահ Յակիմովը իր գործունեության առաջին իսկ քայլերից հրաժարվում է Մոձալևսկու լավատեսական, ինչ-որ չափով բարեհոգի քաղաքականությունից։ Ամեն բանից երևում է, որ նա հատուկ հրահանգավորում ուներ անզիջում հետապնդելու ոչ միայն հեղափոխական շարժումների, սոցիալիզմի գաղափարախոսության, այլև ազգային-ազատագրական շարժումների հետ առնչվող բոլոր դրսևորումները։ Մայրաքաղաքից ստացված հրահանգները Կովկասի կառավարչապետության և սրա միջոցով՝ գրաքննական կոմիտեի աստիճանավորների հիշողության մեջ թարմացնում էին «Երիտասարդ Հայաստան» կուսակցության անունը, որն ուղղակի իր իմաստով ահազանգում էր սեպարատիզմի վտանգը։

Մեր քանասիրության մեջ առաջին անգամ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանն իր «Անտիպ երկերում» խոսելով Նալբանդյանի անվան հետ ինչ-որ չափով առնչվող «Երիտասարդ Հայաստան» տերմինի մասին, բացատրում է դրա ստեղծման հանգամանքները։ Ի սկզբանե այն ծագել էր Կովկասյան ուսումնական մասի տեսուչ Նևերովի զեկուցագրից, որի համաձայն Թիֆլիսում հայտնաբերել էին մի քանի գիմնազիստներից կազմված «Երիտասարդ Հայաստան և երիտասարդ Վրաստան» կոսսակցությունը։ Այդ բավական էր, որպեսզի երրորդ բաժանմունքի լրտեսները Նալբանդյանին, Շահազիզին, Պատկանյանին և հայ մտավորա-

կաններից ոմանց մեղադրելին հիշյալ կուսակցության պատականելիության մեջ[4]։

Ակադեմիկոս Հովհաննիսյանը այդ կուսակցությունից սահմանազատելով Նալբանդյանին, նրա գլխավորած հեղափոխական-դեմոկրատական կուսակցությունը իր քաղաքական կողմնորոշումով և սոցիալական բնույթով համարում է կովկասահայ ազդային-պահպանողական հոսանքի հակապատկերը։ Ա. Հովհաննիսյանը «Երիտասարդ Հայաստան» կուսակցությանը վերագրվող ազդային-քաղաքական տրամադրությունները առավելապես կապում է Թիֆլիսի ազդային-պահպանողականների շրջանակների հետ։ «Դեպի Արևելքի շուվանները հայող կամ դեպի Արևմուտքի տերությունները թեքված այս խմբակցության մարդիկ ներկայացնում էին եվրոպական տրանզիտով շահագրգռված կովկասահայ բուրժուազիայի օրիենտացիան[5]»։ Այնուհետև ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը կանդ է առնում այն աղմուկի վրա, որ բարձրացնում է Կատկովի ռեակցիոն թերթը «Московские ведомости» -ն՝ «Երիտասարդ Հայաստան» կուսակցության շուրջը մանավանդ 1865 թ. Թիֆլիսի համքարական հոլույթից հետո։ Պատասխան հոդվածներով «С. Петербургские ведомости» թերթում հանդես է գալիս Կ. Սոյանը, որը թեև մերժում է հայ ազգի մտավորականության մեծ մասի հակումը դեպի այդ կուսակցությունը, բայց չի էլ ժխտում «երիտասարդության սակավաթիվ այն հատվածի» գոյությունը, «որ ապրում է գիրադանցորեն Պետերբուրգում», և որը կարող էր հարել այդ կուսակցությանը[6]։

Տասնհինգամյա դադարից հետո, 80-ական թվականների սկզբին «Երիտասարդ Հայաստան» անվան հիշատակությունը մենք արդեն գտնում ենք Կովկասի գրաքննական կոմիտեի արխիվներում։ Կառավարության ռեակցիոն քաղաքական կուրսի սկզբնավորումով՝ Կովկասը նույնպես առնվում է կասկածների ոլորտի մեջ։ Եվ քանի դեռ այստեղ նարոդնիկական-հեղափոխական շարժման ակնառու փաստեր չկային, ներքին գործոց միևնիստերությունը ուշադրություն է դարձնում Արևմտահայաստանի նկատմամբ հայկական շրջանակներում ծավալվող աշխույժ հե-

---

[4] Տե՛ս Ա. Հովհաննիսյան, «Անտիպ երկեր», Երևան-Մոսկվա, 1935, էջ 706։

[5] Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք Բ, էջ 11։

[6] Նույն տեղում, էջ 15—16։

տաքրքրության վրա։ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը նոր էր ավարտվել և ողջ հայությունն ապրում էր արևմտահայերի աղատագրման ակնկալությունների պատրանքը։ Այդ վիճակն ավելի է մերձեցնում երկու հատվածի հայությանը։ Արևելահայերը զանազան միջոցներով օգնում են օսմանյան բռնապետության ճիրաններում հեծող իրենց եղբայրներին, մամուլի էջերում շարունակաբար խոսվում է Բեռլինի կոնգրեսի ընդունած 61-րդ հոդվածի կենսագործման անհրաժեշտության հարցի շուրջ, նորանոր փաստեր են բերվում արևմտահայության վիճակի ծանրացման մասին։ Սակայն ռուսական կայսրության շրջադարձը դեպի օսմանյան պետության քաղաքականությունը՝ նրան պարտադրում էր չոևցնել և արևելահայ մամուլը։

Աշխուժացած օսմանյան կառավարության դիվանագետները բողոք են ներկայացնում Ռուսական կայսրությանը՝ Կովկասի հայ մամուլի դեմ, որը, իբրև թե իր թշնամական ելույթներով վրդովում էր երկրի խաղաղությունը։ 1880 թ. սկզբին Պոլսում արգելվում է «Փորձ», «Մշակ», «Մեղու Հայաստանի» պարբերականների մուտքը (տե՛ս հավելված № 1)։

«Մշակը» և «Փորձը» ներկայացնում էին Կովկասում 50-ական թվականներից առկա երկու տարբեր հասարակական հոսանքներ և արտահայտում էին դրանց գաղափարախոսությունը։ Իր «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրության, ինչպես և «19-րդ դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները» մեծարժեք ուսումնասիրության մեջ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը առաջին անգամ հայ պատմագրության մեջ սիստեմի է բերում հայ հասարակական-քաղաքական հոսանքների զարգացման պատմությունը։ Ի հակակշիռ հայ լիբերալ պատմագրության, որը 19-րդ դարի հայ հասարակական կյանքում նշմարում էր սոսկ երկու հոսանք (ռեակցիոն կղերապահպանողական և առաջադիմական-լուսավորական), Աշ.Հովհաննիսյանը տեսնում է չորս հոսանքի առկայությունը։ Նա մանրազնին վերլուծության է ենթարկում հոսանքներից յուրաքանչյուրի տնտեսական ու քաղաքական շահագրգռությունների ակունքները, վեր հանում նրանց գործունեության նպատակը։ Աշ. Հովհաննիսյանը նշում է երկու նոր՝ ազգային-պահպանողական և ազգային-լիբերալ հոսանքները, որոնք 50—60-ական թվականներին որոշակիորեն սահմանազատվում էին հեղափոխական-

դեմոկրատական հոսանքի ուղեգծից և հետապնդում այլ նպատակներ։

«Պայքարի լայն ճակատ բացելով կղերա-աղայական ռեակցիայի դեմ՝ սրանք ընդառաջում էին հայ ժողովրդի ազգային-մշակութային և ազգային-քաղաքական գիտակցության զարթոնքին, նպաստում աշխարհական մտայնության, աշխարհիկ դրականության, լեզվի ու մշակույթի ժողովրդական տենդենցների հաղթանակին»[7]։ Սակայն ընդհանուր այս շահախնդրությունների հետ մեկտեղ վերոհիշյալ երկու հոսանքները տարբեր վերաբերմունք ունեին ցարական կառավարության նկատմամբ։ Ազգային-պահպանողականները «Ազգի գոյության, նրա ինքնապահպանության, նրա «կենդանության» ու «շարժողության» տեսանկյունից էին քննում ու վերագնահատում ընթացիկ կյանքի բոլոր երևույթները»։ Ուստի, «վտանգված համարելով ազգի ու ձկեղեցու գոյությունը Ռուսաստանում, նրանք յուրովի ընդդիմակայում էին ցարիզմին, նրա դաղութային քաղաքականությանը Կովկասում, որոնելով հայ ազգային անցյալի ու ներկայի հաստարանը Ռուսաստանից դուրս, Արևմտյան Հայաստանում, ուր հայ ժողովուրդը ազգային-մշակութային վերանորոգության զարթոնք էր ապրում և թևակոխում էր նույնիսկ ազգային-քաղաքական ինքնորոշման համար մղվող աշխույժ պայքարի շրջանը»[8]։

Ազգային-լիբերալ հոսանքի պարագլուխները, որ իրենց գործունեությամբ նպաստում էին կապիտալիզմի զարգացմանը, 60-ական թվականների համառուսական հեղափոխական ճգնաժամի տարիներին նահանջում են բուրժուա-դեմոկրատական, ազգային-քաղաքական ինքնորոշման պահանջներից։ Հետագա երկու տասնամյակներում բուրժուազիայի զարգացմանը զուգընթաց ազգային-լիբերալ հոսանքի պարագլուխները ակտիվ են պրոպագանդել ազգային-քաղաքական համախմբման գաղափարները։ Այդ հոսանքի «ազգային-քաղաքական» եռանդը բորբոքող գործոնները, սակայն, Ա. Հովհաննիսյանը պայմանավորում է սոսկ այն բանով, որ «արևելահայ բուրժուազիան նկատում էր իր գլխավերևը ցարական քաղաքականության հովանին»։

---

7 Ա. Հովհաննիսյան, 19-րդ դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4։

8 Նույն տեղում։

Այս ընթացքն իր գագաթնակետին է հասնում ռուս-թուրքական պատերազմի տարիներին: Դրանից հետո, ելնելով օսմանյան կառավարության նկատմամբ ցարիզմի բարյացակամության նոր քաղաքականությունից, արևելահայ բուրժուազիայի լիբերալ գաղափարախոսները թողնում են նախկին ակտիվ ուշադրությունը հայկական հարցի նկատմամբ և «Մշակը» առաջնորդվում է նոր ժամանակներին պատշաճ ծրագրով:

Լիբերալ-պահպանողական հոսանքի օրգան «Փորձի» խմբագիրը, սակայն, դատապարտելի ոչ մի բան չգտնելով իր ուղղության մեջ, հետագայում արդեն «Արձագանքի» էջերում շարունակում է հաստատակամորեն խոսել արևմտահայության վիճակի բարվոքման մասին, ինչ-որ հույսեր կապելով նաև Լաֆոդիկոսի գործունեության, հայ ազգային կյանքի կոնսոլիդացման հեռանկարի հետ:

Այս բավարար հիմք էր Ներքին գործոց մինիստրության համար, աշխուժացնելու «Երիտասարդ Հայաստանի» ստվերը: Աշ. Հովհաննիսյանի այն ենթադրությունը, թե ազգային-պահպանողական հոսանքը Կովկասում ամենից ավելի հարմար էր «Երիտասարդ Հայաստանի» պիտակին, ամբողջովին հաստատվում է գրաքննական կոմիտեի արխիվի նյութերով: Մենք հակված ենք ենթադրել, անգամ, որ հետագա երկու տասնամյակներում «Երիտասարդ Հայաստան» ասելով ցարական աստիճանավորները նկատի ունեին հենց ազգային-պահպանողական գործիչներին, որոնք մեկընդմիշտ առնվելով մամուլի գործերի գլխավոր վարչության հսկողության տակ, դիտվում էին փրկև հիմնական վտանգը Կովկասում: Այդ է ապացուցում «Արձագանքի շուրջը ստեղծված գրագրությունների փաստը (որն առանձին ուսումնասիրության թեմա է), այդ է ապացուցում և այն հանգամանքը, որ հայ հրապարակախոսներին տրվող բնութագրերում գրաքննական կոմիտեն նրանց վստահելի լինելու աստիճանը որոշում էր այդ կուսակցության գաղափարախոսության հետ ունեցած նրանց առնչությունների չափով (տե՛ս Հավելված № 8):

Եվ այսպես, հայ լրագրությունը 1883 թ. ոտք էր դնում իր համար ճակատագրական մի նոր ժամանակաշրջան: Կովկասի կառավարչապետը նույն թվականին կարգադրում է գրաքննական կոմիտեի նոր նախագահ Կ. Վ. Յակիմովին՝ ուշի-ուշով հետամուտ լինել ազգային սեպարատիստական շարժումներին: Թե որքան

լուրջ նշանակություն էր տալիս կառավարչապետությունը այդ մտացածին շարժմանը, երևում է այն բանից, որ իշխան Դոնդուկով-Կորսակովը Ալեքսանդր երրորդից թույլտվություն է խնդրում՝ դրաքննություն ուժեղացնելու «հայերի մեջ սկսվող քաղաքական շարժումների դեմ»։ Շուտով նա ստանում է թագավորի կամքը հավաստող ներքին գործոց մինիստրի հրահանգը՝ «ուժեղացնել դրաքննական խստությունները տեղական և արտասահմանյան հայ մամուլի նկատմամբ»[9]։ Այնուհետև արդեն սկսվում է ջրապտույտը։ Հայ մամուլը, իբրև պոտենցիալ վտանգ ներկայացնող մի գործոն, պետք է շարունակ պաշտպանվեր դրաքննական հարձակումներից։ Կառավարչապետի հրահանգչական գրությանն իր պատասխան Յակիմովը նույնպես հաստատում է, թե, հիրավի, հայ լրագրերը առերես խոսելով Թուրքիայի հայությանը խոստացված բարենորոգումների իրականացման մասին, փաստորեն ձգտում են Հայաստանի վերածննդությանը՝ իբրև քաղաքական մի ամբողջական մարմնին։ Արմատապես պայքարելու համար այդ շարժման դեմ, նա թույլտվություն է խնդրում արգելելու հայկական հարցին և էջմիածնին նվիրված բոլոր հոդվածների տպագրությունը։ Այդ առաջարկն ընդունվում է[10]։ Յարակից բյուրոկրատիայի համոզմունքով էջմիածնի աթոռն էր խրախուսում «Երիտասարդ Հայաստան» անվանված կոսակցության գործիչներին, որոնք իբր ձգտում էին վերածնել Հայաստանը, անջատելով այն և՛ Թուրքիայից, և՛ Ռուսաստանից։ Էջմիածնի Աթոռը, ճեմարանում կրթություն ստացած գործիչները, առհասարակ հոգևորականությունը համարվում էին կառավարության դեմ գործող օպոզիցիայի արտահայտիչները։ Այս պայմաններում ցարական կառավարության համար վճռականորեն անհրաժեշտ է դառնում կաթողիկոսական գահի վրա տեսնել կառավարությանը նվիրված արևելահայ եկեղեցականներից մեկին։ Այնինչ Գևորգ 4-ի մահից հետո (1882 թ.), նախընտրական ժողովներում և պարբերական մամուլի էջերում հոլովվում էին միմիայն արևմտահայ հոգևորական գործիչներ Ն. Վարժապետյանի, Մ. Խրիմյանի և Մ. Մուրադյանի անունները։ Կանխելու համար հարցի անցանկալի լուծումը, կառավարությունը առաջարկում է ընտրությունները, ի տար-

---

[9] Տե՛ս Մ. Մխիթարյան, «Հրապարակումներ», «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 148։

[10] Նույն տեղում։

բերություն նախորդ երկուսի, անցկացնել Պոլոժենիայի պահանջներին համապատասխան[11]։

Արևմտահայ մամուլում սկսում են երևալ հոդվածներ, որոնց հեղինակները այդ փաստի մեջ տեսնում էին ոչ միայն իրենց Ազգային սահմանադրության նսեմացումը, այլև Աթոռի իրավունքների սահմանափակման փորձ։

Ընտրությունները նախապատրաստվում և անց են կացվում բուռն խանդավառությամբ։ Ընտրվում է Ներսես Վարժապետյանը։ Նա իր բացառիկ հեղինակությամբ մեծ հույսեր էր ներշնչում հայերին, թե կարող էր տեղից շարժել եվրոպական դիվանագետների կողմից փակուղի մտցված հայկական հարցը և Արևելահայաստանում խթանել Գևորգ 4-ի գործունեությամբ սկսված հայ մտավոր կյանքի վերածնումը։

Հարցի մասին, սակայն, ինչպես ասացինք այլ հայացք ուներ Ալեքսանդր երրորդը, որը վարում էր հայկական լուսավորական և մշակութային կենտրոնները կաթվածահարելու քաղաքականություն։ Այդ քաղաքականության իրագործման ճանապարհին նա պետք է հաղթահարեր մի մեծ պատվար, էջմիածնի դիմադրությունը։ Ահա թե ինչու, երբ Ներսեսի ընտրությունից հետո հայ ժողովուրդը տոնում էր իր հաղթանակը, թագավորը ընտրությունների կարգի խախտման պատճառաբանությամբ (թեև կառավարության ներկայացուցիչը տեղում գոհունակություն էր հայտնել ընտրական կարգի ճշգրիտ պահպանման համար), բեկանում է ընտրությունները և նշանակում նորը։ Կառավարությունը վճռում է այս անգամ ակտիվ մասնակցություն ունենալ նոր ընտրություններին։ Հարկավոր էր հաղթահարել արևմտահայ մամուլի պրոպագանդը և հասնել այն բանին, որ Աթոռի համար առաջադրվեր արևելահայ եկեղեցականներից մեկը (թագավորը նկատի ուներ Մակար արքեպիսկոպոսի թեկնածությունը)։ Մամուլի գործերի գլխավոր վարչության պետ Ֆեոկտիստովն այս առիթով դիմում է Յակիմովին։ Պոլսահայերը, զգուշացնում է նա, նոր ուժով են ջանում արևելահայերի մեջ ևս տարածել իրենց սեպարատիստական

---

11 Վերջին երկու ընտրությունները արևմտահայերը անց էին կացրել Ազգային սահմանադրության համաձայն, որը հեշտացնելու համար գավառների ընտրողների գործը, Ազգային ժողովին լիազորում էր կատարել վերջնական ընտրությունները և արդյունքները ներկայացնել էջմիածնի ընտրական հանձնաժողովին։ Պոլոժենիայի համաձայն, սակայն, բոլոր թեմերի պատգամավորները ընտրություններին պետք է մասնակցեին անձամբ՝ էջմիածնում։

ձգտումները։ Նրանք ցանկանում են կաթողիկոսական աթոռ բարձրացնել անպայման իրենց նվիրված և իրենցից կախված մի արևմտահայ եպիսկոպոսի։ Արևելահայերն ընդառաջելով նրանց ցանկությանը, շարունակում է Ֆեոկտիստովը, պրոպագանդում են՝ ընտրությունների ժամանակ ձեռք-ձեռքի ընթանալ Ազգային ժողովի հետ։ Այս շարժման արտահայտիչը Կովկասում՝ Ֆեոկտիստովը համարում է «Արձագանք» թերթը, որը պայքարում է Հայաստանի վերածնության համար և «խանգարում հայության ձուլմանը՝ ընդհանուր պետական էլեմենտի հետ»։ Քանի որ Պոլսի մամուլի և «Արձագանքի» ուղղությունը հակադրվում է կառավարության նկատառումներին և գործելակերպին, ապա առաջարկվում է գրաքննիչների զգոն ուշադրություն հրավիրել և՛ «Արձագանքի» և՛ Պոլսից ստացվող թերթերի ուղղության վրա[12]։ Իր գրության Ֆեոկտիստովը կցում է մի հավելված, որը քաղվածքներ էր պարունակում «Թէրջումանի էֆքյար», «Մասիս» և «Հայրենիք» թերթերից։ Այն փաստը, որ Ֆեոկտիստովն իր տրամադրության տակ ուներ արևմտահայ մամուլից կատարված, այսպես կոչված, ֆշնամական հոդվածների նմուշները, խոսում է այն մասին, որ կառավարությունը խիստ քաղաքական կուրջ նշանակություն էր տալիս կաթողիկոսական ընտրություններին հարցին, այն կապելով «Երիտասարդ Հայաստանի» գործունեության հետ։ Հայ լրագրողների համար սկսվում է գործունեության մի նոր, առավել խճճված ժամանակաշրջան։ Ֆեոկտիստովի գրության հետքերով կովկասյան գրաքննիչները նոր հանձնարարություններ են ստանում, կազմվում է մի հատուկ զեկուցագիր՝ տեղի լրագրության վիճակի մասին և ուղարկվում մամուլի գործերի գլխավոր վարչություն։ Յակիմովը անձամբ զրույց է ունենում «Արձագանքի» խմբագիր Արդար Հովհաննիսյանի հետ և սպառնում է փակել սրա թերթը, եթե Հովհաննիսյանը չփոխի իր ընթացքը։ «Ամեն մի կառավարություն,— ասում է նա,— իրավունք ունի իր երկրում հրատարակվող մասնավոր թերթերից օժանդակություն սպասելու՝ իր պետական քաղաքականությունը անցկացնելու գործում»։ Հովհաննիսյանը խոստանում է լռությամբ անցնել կաթողիկոսական ընտրությունների հարցի կողքից[13]։ Սակայն այս զրույցից մի քանի

---

12 Տե՛ս Մ. Մխիթարյան, «Հրապարակումներ», «Պատմա-բանասիրական հանդես» 1968, № 2, էջ 152։

13 Նույն տեղում։

օր անց, իրավիճակը փոխվում է։ Հոկտեմբերի 26-ին վախճանվում է Ներսես պատրիարքը։ Աբգար Հովհաննիսյանը մոռանալով իր տված խոստումները, վճռում է պատրիարքի հոգեհանգստի առիթով «Արձագանքը» հրատարակել սև շրջանակի մեջ և երբ գրաքննիչը առարկում է, խմբագիրը իրավունք է վերապահում իրեն՝ առանց թույլտվության տպագրելու թերթը։ Սակայն նրան հաջողվում է լույս ընծայել միայն 200 օրինակ (700-ից). տպարանատիրոջ միջամտությունից հետո շրջանակը հանվում է։ Ու թեև գրաքննիչից չէր հաջողվել առանալ լույս ընծայման տոմսակը, Հովհաննիսյանը տպագրված համարները բռնությամբ հանում է տպարանից և տարածում[14]։ Վրա հասած տպարանների տեսուչ Ենգալիչևը շտապում է արձանագրություն կազմել տեղի ունեցածի մասին և զեկուցել գրաքննական կոմիտեի նախագահին։ Յակիմովը խնդրում է կառավարչապետից իսկույն կապվել Ներքին գործոց մինիստրի հետ և վարչական տույժ տալ խմբագրին։ Նա միաժամանակ պահանջում է դատական պատասխանատվության կանչել տպարանատիրոջը և գրաշարներին։ Յակիմովը, սակայն, նպատակահարմար չի գտնում խմբագրին դատական պատասխանատվության կանչել և երբ հետագայում օկրուգային դատարանի դատախազը անհրաժեշտ է համարում վկայը հիշված մեղավորների հետ դատական գործ հարուցել և խմբագրի դեմ, Յակիմովը ստիպված է լինում խնդրել, որ մյուսներին էլ հանգիստ թողնեն։ Ինչո՞ւմն էր գաղտնիքը։ Յակիմովը այդ բացատրում է Ցևոկտիստովին ուղղած իր մի գրության մեջ։ Նա վախենում էր, թե Աբգար Հովհաննիսյանը դատական պրոցեսը քաղաքական ցույցի կվերածեր։ Նա չարող էր իր ճառում խմբագրին և նրա թերթը համարել գրաքննական արգելքների զոհ և դրանով խորհրդածություններ առաջ նյութ տալ մյուս թերթերի խմբագիրներին։ Այնուհետև վալ հասկանալով, որ սոսկ սև շրջանակի խնդիրը օրենքով նախատեսվող ծանր հանցանքներից չէ, Յակիմովը նույնիսկ ենթադրում էր, թե դատարանը կարող էր արդարացնել Հովհաննիսյանին։ Իսկ «Ըմբռնել այն առանձնահատուկ քաղաքական ու հանցավոր իմաստը, որ տվյալ դեպքում ուներ սև շրջանակը, դատարանը, հարկավ, չէր կարողանա»[15]։ Այո, Յակիմովը

---

14 Այս մասին տե՛ս Ս. Առեշյան, Армянская печать и царская цензура, Երևան, 1957, էջ 455—458։

15 Վրացական կենտրոնական պետական արխիվ, ֆոնդ 480, ցուցակ 1, գործ № 607։

երկյուղ էր կրում, թե քաղաքացիական գործերի քննարկումներին վարժված դատարանը անձեռնհաս կլինի քաղաքական երանդավորում տալու Հովհաննիսյանի վարքագծին և ամբողջ հույսը դնում է Ներքին գործոց մինիստրի վրա։ Յակիմովը չէր սխալվում։ «Արձագանքը» ութ ամսով դուրս է բերվում շարքից և այս կերպ միայն հնարավոր է դառնում արևելահայ լրագրության էջերում դադարեցնել բանավեճը և խորհրդածությունները՝ կապված կաթողիկոսական ընտրությունների հետ։

1885 թ. հունվարից սկսում են փակվել հայկական դպրոցները։ Նույն թվականին տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությունների ժամանակ թեև միաձայն ընտրվում է առաջին թեկնածու Մելքիսեդեկ Մուրադյանը, բայց թագավորը հաստատում է երկրորդ թեկնածու Մակար արքեպիսկոպոսին։ Ալեքսանդր 3-ը բացահայտ հակահարձակում է սկսում հայկական առաջավոր մտքի, էջմիածնի աթոռի ինքնուրույն գործունեության դեմ, արդելակում է ազգային լեզվի ու մշակույթի զարգացման բնականոն ընթացքը։ Այդ ամենը կոչվում էր պայքար՝ «հայկական շարժման դեմ», մտացածին մի հակառակորդ, որը պարզապես սիմվոլացնում էր Ռուսաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մեկի՝ բռնական կյանքով ապրելու արդար և մարդկային ձգտումը... Սակայն ազգային այդ փոքրամասնության դեմ սկսած հարձակումը նշանավորում էր մի ողջ պետական քաղաքականության ընթացքը և ուղղությունը։ Այդ ներհաստանում տարվող քաղաքականության մի նոր տերանդն էր Անդրկովկասում, և կամ ուկրաինական ազգային լեզվի նկատմամբ մշտապես ձեռնարկված ոտնձգությունների շարունակությունը։ 90-ական թվականներին հայ թերթերի խմբագիրները օրվա հասարակական-քաղաքական խնդիրներին կարող էին անդրադառնալ միայն ռուսական հեռագրական գործակալության միջնորդությամբ։ Չնայած դրան, հայ խմբագիրները փորձում էին ազգային հրատապ հարցերը լուսաբանել միջազգային որոշ հարցերի արծարծումով։ Հիրավի, մի անգամ չէ, որ «Արձագանքի» խմբագիրը ռուսական թերթերից վերցրած թարգմանական հոդվածների միջոցով խոսելով լեհական ազգային լեզվի բախտի, ցարական կառավարության ռուսիֆիկացման քաղաքականության աննպատակահարմարության մասին, հաստատում էր այդ քաղաքականության անշահեկանությունը՝ նաև Կովկասյան ազգային լեզուների ճնշման ջանքերի մեջ։ Հանգամանալից հոդվածներ զետեղելով

չեխ ժողովրդի հետևողական պայքարի մասին՝ ազգային լեզվի և մշակութային հաստատությունների պահպանման ուղղությամբ, Հովհաննիսյանը անուղղակիորեն մատնացույց էր անում սեփական լեզվի և մշակութային հաստատությունների պաշտպանության անհրաժեշտությունը՝ չեխ ժողովրդի արժանապատվությամբ ու հաստատակամությամբ։ Հունգարական և բուլղար ժողովուրդների ձեռք բերած համեմատական ազատությունները դրվատելով՝ հայ հրապարակախոսը նշում էր ազգային հարցում պայքարի և կամքի դրսևորման նշանակությունը։ Հույն և հունգար ժողովուրդների ազգային-ազատագրական կռիվների անցյալի դրվագները վերաշարադրելով՝ «Արձագանքի» խմբագիրը իր արևմտահայ և արևելահայ ընթերցողներին խրախուսս էր կարդում օրինակ առնել այդ ժողովուրդների փորձից։ Այդ տարիներին գրաքննությունը, թույլատրելով վերոհիշյալ հոդվածների մի մասը (իսկ ղպալի մասը դարձյալ դուրս նետելով թերթի էջերից), հետևողականորեն ջնջում էր ազգային դպրոցների հետ կապված ամեն մի հաղորդում։ Այսպես, 1885 թ. սկզբին «Աղբյուր» հանդեսից արգելվում է հետևյալ հաղորդումը. «Փետրվարի 22-ից կառավարության հրամանով սկսեցին փակվել նոր կանոններին չենթարկվող հայոց եկեղեցական ուսումնարանները»։ 1886 թ. «Մեղու Հայաստանի» թերթից արգելվում է մի այլ պաշտոնական հաղորդում. «Էջմիածին, 20-ին հունվարի։ Երեկ ստացվեցավ Կովկասի գլխավոր կառավարչից հեռագիր հայոց դպրոցների բացման մասին, համաձայն միջնորդության Նորին մեծության վեհափառ կաթողիկոսին։ Սպասում են գրություն նույն առարկայի վերաբերությամբ»[16]։ Այդ օրերին արգելվում են բոլոր հեռագրերը և լուրերը, կապված դպրոցական հանդեսների, էջմիածնում կատարված մաղթանքի, ուրախության ցույցերի հետ[17]։ Արգելվում են և հաղորդումները՝ կաթողիկոսական ընտրությունների մասին։ Կառավարությունը առաջին մեծ հաղթանակը տանելուց հետո հայկական դպրոցների դեմ, ընդառաջելով նորընտիր Մակար կաթողիկոսի միջնորդությանը, թույլատրում է կրկին բանալ

---

16 Նույն տեղում, գործ № 717։

17 «Մեղու Հայաստանի» թերթի Նոր Նախիջևանի թղթակիցը, օրինակ, հաղորդում էր դպրոցների բացման առիթով տեղի ուսուցչության կազմակերպած խնջույքի մասին, որտեղ «պ. Շահապիղյանը խոսեց դպրոցի նշանակության վերա ազգայնության համար, որ կեցցեով ընդունվեցավ»։ (Տե՛ս վրաց. կենտ. պետ. արխիվ, ֆոնդ 480, ց. 1, գործ № 717։

ծխական հոգևորականության դպրոցները։ Երկդիմի խաղ էր այս, որ ինչպես արդեն նշված է մեր բանասիրական գրականության մեջ, եթե մի կողմից սիրաշահում էր հայերին, նրանց հաշտեցնելով Մակարի կաթողիկոսացման փաստի հետ, մյուս կողմից բացելով սոսկ ծխական դպրոցները, հիմնովին փշրում էր տասնամյակների ընթացքում ստեղծված հայկական դպրոցական ամբողջ սիստեմը[18]։ Ապագային դպրոցների հարցին Ալեքսանդր 3-ը դեռ ժամանակ ուներ անդրադառնալու։

1891 թ. մեռնում է Մակար կաթողիկոսը։ Կաթողիկոսական ընտրություններն անհամեմատ խաղաղ են անցնում։ Կար մեկ անվերապահ թեկնածու, Խրիմյան Հայրիկը, որի հեղինակության հետ դժվար էր խաղալ և նա էլ հաստատվում է կայսեր կողմից։ Սահայն կառավարության քաղաքականությունը մնում էր անփոփոխ։ Ալեքսանդր 3-ի և ապա Նիկոլայ 2-ի պետությունը աստիճանաբար սահմանափակելով կաթողիկոսի իրավունքները, անշեղ քայլերով դիմում էր դեպի նրա գործունեության բացարձակ չեզոքացումը։ Ահա թե ինչու, երբ 1893 թ. օգոստոսին «Каспий» լրագրի խմբագրությունը հոդված է նվիրում Խրիմյանին, թե՛ կոմիտեի նախագահը և թե՛ կառավարչապետը տագնապի մեջ են ընկնում։ Վերջինս ավելորդ է համարում թերթում խոսել ոչ միայն կաթողիկոսական ընտրությունների հարցի, այլև առավել ևս՝ Խրիմյանի կարծեցյալ վերանորոգչական գործունեության մասին (տե՛ս հավելված № 3)։

* * *

1894 թ. Արևմտահայաստանում սկսվում են հայկական ջարդերը, որոնք մեծ չափերի են հասնում 1895 և 1896 թվականներին։ Հայ հասարակական միտքը հուզվում է անօրինակ կերպով. լրագրությունը փորձում է իր խոսքն ասել ճակատագրական իրադարձությունների մասին, սակայն ներքին գործոց մինիստրությունը նորից ոտքի է հանում Կովկասյան գրաքննության։ Հայ լրագրողները պետք է բավականանային արտասահմանյան և ռուսական թերթերից կատարած արտատպություններով։ Կովկաս են հասնում գաղթականների առաջին խմբերը։ Փոքր Ասիայի հա-

18 Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970։

յության ֆիլիալ ներկայացուցիչները, որ այժմ համալրում էին Բաքվի և Թիֆլիսի մշակների ընտանիքները, Կովկասի հայոց եկեղեցիներում հոգեհանգստի մաղթանք են կատարում Արևմտահայաստանում զոհվածների հիշատակին:

Հայ հրապարակախոսները փորձում են արձագանքել այս դեպքերին, սակայն... ոտնձգությունում են գրաքննական կոմիտեի արխիվները: 1894 թվականին «Արձագանքի» նյութերից մերժվում է 83 հոդված, 1895-ին 141, 1896-ին՝ 145 և 1897 թվականին՝ 89 հոդված[19]: Այդ հարցին վերաբերող նյութերի տպագրությունը մերժվում է նաև «Նոր-Դար» ու «Մշակ» թերթերում: Տեսնենք, թե ինչպիսի՞ օրենքներով և ցուցումներով էին ղեկավարվում գրաքննության կոմիտեի աստիճանավորները: Այն բանից հետո, երբ վախճանվում է Մակար կաթողիկոսը, մամուլի գործերի գլխավոր վարչության անդամ Ֆ. Ելենևը շտապում է մի գրությամբ նախազգուշացնել գրաքննական կոմիտեի ղեկավարությանը, թե տեղական մամուլի իրավունքները պետք է խիստ սահմանափակվեն՝ հայկական եկեղեցական-հասարակական խնդիրների քննարկումների ժամանակ: Կովկասի նոր կառավարչապետ Ս. Ա. Շերեմետևը, որը ավելի մոտ էր կանգնած տեղական շրջանակներին, կշռադատելով իրավիճակը և դժգոհ մնալով Ելենևի ինքնագործ կարգադրությունից, անձամբ դիմում է Ներքին գործոց մինիստրին: Նա խորհուրդ է տալիս թույլատրել վերոհիշյալ հարցերի քննարկումը այն հաշվով, որ գրաքննության միջամտությամբ հասարակությունն ստանա ճշգրիտ (իմա՛ պաշտոնական) հայացքներ՝ իրերի դրության մասին: Դրանով, գրում է նա մինիստրին «կառավարական հայացքը իշխող կդառնա մամուլի էջերում» (տե՛ս հավելված № 2):

Ավելի ուշ՝ Կովկասյան գրաքննության կոմիտեն կրկին դիմում է կառավարչապետին՝ խնդրելով սահմանել Արևմտահայաստանում ծավալվող իրադարձությունների լուսաբանման կարգը: Սակայն 1894 թ. դեկտեմբերի 2-ին, երբ Սասունն այլևս ավերակների կույտի էր վերածված և հայ թերթերը մեծ տագնապի մեջ էին, Շերեմետևի գրասենյակից կարգադրում են գրաքննա-

19 Թվական տվյալները վերցված են Ս. Արեշյանի «Армянская печать и царская цензура» գրքից և միանգամայն համապատասխանում են Վրացական կենտրոնական պետական արխիվում պահպանվող մերժված նյութերի քանակին (տե՛ս Վրաց. կենտրոնական պետական արխիվ, ֆոնդ 480, ցուցակ 1, գործ № №1236, 1273, 1404 և 179 (ց. լրացուցիչ 1):

կան կոմիտեի նախագահ Մ. Պ. Դակկելին, ուժի մեջ պահել նախկինում հայ պարբերականների վրա դրված արգելքը, խոսելու ազգային շարժման և Փոքր Ասիայի իրադարձությունների մասին։ 1895 թ. նույնպես՝ ողջ եվրոպական և ռուսական մամուլը իրեն օրվա առաջնահերթ հարց քննարկում էր բնաջնջվող հայության ճակատագրի հարցը, այնինչ Դակկելի հարցմանն ի պատասխան (տեղական թերթերին խոսելու իրավունք շնորհելու մասին), Շերեմետևը կարգադրում է չզբաղվել միջազգային հարցերով, ինչպիսի նշանակություն արդեն ձեռք էր բերել հայկական հարցը։ Նա հայ թերթերին առաջարկում էր զբաղվել տեղական հարցերով միայն[21]։

Դեկտեմբերին «Новое обозрение» «Тифлисский листок» թերթերում հրապարակված այդ թերթերի սեփական թղթակիցների հեռագրերի առիթով կառավարչապետությունը կարգադրում է գլխավոր դրաքննիչին՝ արգելել հեռագրերի տպագրությունը և սահմանում է դրանց հրապարակման բացառիկ դժվարին մի եղանակ։

«Նոր-դարում» տպագրված մի հոդվածի առիթով Ֆեոկտիստովը դիտողություն է անում դրաքննական կոմիտեին և սրա նախագահը գլխացավանքից ազատվելու համար հատուկ որոշում է կայացնում՝ առհասարակ մերժելու հայկական հարցի հետ կապված բոլոր հոդվածների տպագրությունը[22]։

Սակայն ամբողջությամբ դուրս նետել այդ հարցը՝ անհնար էր։ Խմբագիրները սպառել էին իրենց իմաստության բոլոր հնարավորությունները՝ պատասխանելու համար օրվա հուզող խնդիրներին։ Տպագրվում էին ռուսական և եվրոպական երկրների հեռագրական գործակալությունների հաղորդումները, զանազան թղթակցություններ և ականատեսների ուղեգրական նոթերը (քաղված արտասահմանյան թերթերից), ջարդերից փրկված հայերի պատմությունները և այլն։ Տպագրվում էին սոսկ փաստեր, առանց մեկնաբանությունների, կամ՝ տրվում էին միայն արտասահմանյան լրագրերի մեկնաբանությունները։ Հրապարակվում էին արտասահմանյան ցույցերի, ժողովների նկարագրությունները, հայերի համար հանգանակվող նպաստների ցուցակները և այլն։

---

20 Տե՛ս Մ. Մխիթարյան. «Հրապարակումներ», «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 157։

21 Նույն տեղում, էջ 158։

22 Նույն տեղում, էջ 159։

Այս օրերին կաթողիկոսը հարցում է անում Պոլսում ռուսաստանի կառավարության դեսպան Նելիդովին, թե ինչ վիճակում է տեղի հայկական համայնքը: Իր արտասահմանյան կոլեգաների պարկեշտային տրամաբանությանը հետևելով, Նելիդովը հայտարարում է, թե սուլթանն արդեն ընդունել է նրան ներկայացված բարենորոգումների պահանջները և նախապատրաստվում է իրագործել դրանք: Այնուհետև կաթողիկոսին հանգստացնելով այն բանով, թե Պոլսի հայության կյանքն ապահովության մեջ է, Նելիդովը իրեն թույլ է տալիս հանդիմանել հայերին. թե նրանք է, որ բորբոքում են թուրքերի վրեժխնդրությունը. կաթողիկոսը պետք է հնազանդության կոչի իր ըմբոստ հոտին (տե՛ս հավելված № 4):

1895 թ. դեկտեմբերին, հավանաբար, առաջնորդվելով սեփական լրտեսների զեկուցագրերի տվյալներով, Ներքին գործոց մինիստրը անձամբ զբաղվում է Կովկասի հայ մամուլի հարցով: Մինիստրության գործերի կառավարիչը հայտնում է Կովկասի փառավարչապետին, թե մինիստրը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել տեղի «հայ մամուլի վնասակար ուղղության վրա»: Նա հայտնում է մինիստրի կամքը՝ նախկինում ևս բնավ երբեք իր բարեհուսությամբ աչքի չընկած հայ մամուլի էջերում առանձահարելու հայկական [հարցի] պրոպագանդան[23]:

Այնուհետև Կովկասում դեպքերը զարգանում են մի զարմանալի հետևողականությամբ: 1896 թվականին վերջնականապես փակվում են հայկական դպրոցները: Օրավուր սահմանափակվում են հայ եկեղեցու իրավունքները: 1897 թ. օգոստոսին թագավորի կարգադրությամբ «Արարատ» ամսագրից հետ է վերցվում նրան շնորհված ազատությունը և պարտադիր է դառնում նախնական գրաքննությունը: Սահմանափակվում է այդ պարբերականի ծրագիրը. այն զրկվում է գրական, բանասիրական, մանկավարժական բաժիններից: 1898 թ. հունվարին, փոքրիկ մի պատրվակով Ներքին գործոց մինիստրության կողմից նախ ութ ամսով, ապա ընդմիշտ դադարեցվում է «Արձագանք» լրագիրը, իսկ Աբգար Հովհաննիսյանը զրկվում է որևէ այլ թերթ հրատարակելու իրավունքից:

Ցարական բյուրոկրատիան չէր կարող հանդուրժել այն ընդգծված քաղաքականությունը, որով առաջնորդվում էր լիբերալ-

23 Նույն տեղում, էջ 160:

պահպանողական «Արձագանքը»։ Աբգար Հովհաննիսյանը հետևողականորեն պայքարում էր ազգային լեզվի ու մշակույթի անվթար պարգացման համար, ջանում էր մամուլի էջերում պաշտպանել հայոց դատը, այս խնդիրների շուրջ մարտական հոդվածներով բանավիճում էր ռուսական ռեակցիոն օրգաններ «Кавказ» և «Новое время» թերթերի հետ։ Էջմիածնի իրավունքների պաշտպանության ոգով գրված նրա հոդվածները, որոնք անբարեխիղճ տեսաբանների կողմից մեկնաբանվում էին իբրև Արևելյան Հայաստանի անջատման սեպարատ ծրագրի արտահայտություն, «Արձագանքի» վրա են բևեռում Ներքին գործոց մինիստրության ուշադրությունը։

Սակայն «Արձագանքը» իրո՞ք պրոպագանդում էր «հայկական սեպարատիզմի» գաղափարախոսությունը և Հովհաննիսյանի ելույթները որքանո՞վ էին ուղղված ցարական կառավարության դեմ։

Ինչպես տեսանք, Ֆեոկտիստովի Յակիմովին ուղղած գրություններում անց էր կացվում այն միտքը, թե «Արձագանքը» գլխավորում է «Երիտասարդ Հայաստան»-ի գործունեությունը, և այն հրահրում՝ կառավարության դեմ ուղղված հոդվածներով։ Այդ գրություններից մեկի մեջ, ի դեպ, նշվում է վերը հիշված հոդվածների տեղը։ Իրականում այդ հոդվածներում Հովհաննիսյանը պաշտպանում էր կաթողիկոսական ընտրություններին արևմտահայերի մասնակցության այն կարգը, որն ընդունում էր Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը։ Անդրադառնալով կաթողիկոսական թեկնածուների հարցին, Հովհաննիսյանը առանց այլևայլության նշում էր միմիայն արևմտահայ գործիչների անունները, անգիտանալով այն փաստը, որ թագավորը միանգամայն հակառակ սկզբունքն էր պաշտպանում։ Այս հարցում հիմնավորելու համար իր ելակետը, Հովհաննիսյանը «Արձագանքում» դետեղում է թերթի տեսաբան Ն. Տեր-Ղևոնդյանի պարզաբանող հոդվածը «Ո՛վ պետք է լինի հայոց ազգի կաթողիկոսը»։ Թերթի բարձրացրած հարցը իր հետ ուներ և պատրաստի պատասխան, չափանիշ. կաթողիկոսության թեկնածուն անվերապահ ընդունակություններ մեր մի գործիչ պետք է լինի, որն ունենա Սինոդը գլխավորելու հմտություն, գիտական ու գրական ձիրք։ Կա՞ այդպիսի մի թեկնածու ռուսահայերի մեջ, հարցնում է հոդվածագիրը.— եթե այո, կարելի է առաջադրել և նրա՛ թեկնածությունը։ Սակայն հարցումն ինքնին ժխտում էր առաջադրված խնդրի

լուծման հնարավորությունը[24]։ Արևելահայ եկեղեցին կաթողիկոսության թեկնածու չուներ։ Այս հարցի նկատմամբ իր վերաբերմունքը Աբգար Հովհաննիսյանը ավելի հստակորեն արտահայտում է այն բանից հետո, երբ պարզվում է, որ արևմտահայերը Ն. Վարժապետյանի և Մ. Մուրադյանի հետ մեկտեղ առաջարկել և քվեարկել են նաև Մակար արքեպիսկոպոսի թեկնածությունը։ Ի՞նչ ակզբունքով, —հարցնում է Հովհաննիսյանը, —միթե այդ արվել է նրա համար, որպեսզի հարգանքի տուրք մատուցվի Ռուսաստանին։ «Արձագանքի» խմբագիրն ավելորդ է համարում քաղաքավարական այդ ժեստը, գտնելով, թե հարցի լրջությունը երբեք չի կարելի զոհաբերել ձևական շարժառիթների[25]։

Ինչ վերաբերում է Աբգար Հովհաննիսյանի դեմ հարուցված մյուս մեղադրանքին, նրա կարծեցյալ սեպարատիստական հայացքներին, ապա այս հարցին ստահոչ պատասխան է տալիս ինքը, Հովհաննիսյանը, գրաքննության կողմից արգելված «Խալաթամիտ ռուս օրագրության մեղադրանքները» բանավիճային հոդվածում[26]։ Ի՞նչ է նշանակում սեպարատիզմ, հարցնում է նա։— Ռուսաստանից անջատվելու և անկախություն ձեռք բերելու ձգտում, որը իբր պաշտպանում են և զարգացնում հայոց հոգևորականները, ինտելիգենցիան և մանավանդ գրականությունը։ Առանց հայոց վեղուն իմանալու, սկզբնաղբյուրները կարդալ կարողանալու, առանց որևէ փաստի «Кавказ» և «Новое время» թերթերի տեսաբանները այնքան անհիմն մեղադրանք են հարուցում հայ գործիչների դեմ, որ դրանք հերքում է նույնիսկ «Русская Мысль» հանդեսը։

Աբգար Հովհաննիսյանը թվարկում է այն խնդիրները, որոնք առաջ էր քաշում իր հոսանքը, և որն ստացել էր, «հայկական սեպարատիզմ» անունը։ Նախ հայերը (իմա՛ ազգային պահպանողականները) պաշտպանում են կրոնական հանդուրժողականության քաղաքականությունը և համոզված են, որ այդ ոչ միայն չի հակասում պետական քաղաքականությանը, այլև նպաստում է պետության զարգացմանը։ Իրրև ապացույց այդ բանի, նա հիշում է այն պետական հրահանգը, որը չեղյալ է հայտարարում կիրակի և տոն օրերին բոլոր ազգությունների դպրոցականներին օրթոդոքս եկեղեցի հրավիրելու պարտադիր

24 Տե՛ս «Արձագանք» 1883, № 46։

25 Նույն տեղում, № 11։

26 Վրաց. կենտր. պետ. արխիվ, ֆ. 480, ց. 1, գ. № 1404։

օրենքը։ Այնուհետև, հայ լրագրողները տեղական ռուսական մամուլի գործիչների հետ մեկտեղ քաջալերում են տեղական ինքնավարությունների ստեղծումը, կրթական, կուլտուրական, բարեգործական և այլ խնդիրների ոլորտներում։ Ի վերջո, հայ լրագրողները այն խորին համոզմունքն ունեն, որ առանց մայրենի լեզվին կատարելապես տիրապետելու՝ անհնար է սովորել ռուսաց լեզուն, հաղորդակցվել ռուսական մշակույթին։ Մի՞թե իրերի մասին այս հայացքը նշանակում է մեղանչել ռուսական պետականության հանդեպ ունեցած պարտավորությունների դեմ, հարցնում է Աբգար Հովհաննիսյանը. «Ո՛չ, պարոն համառուսական խավարամիտներ,— ավարտում է նա իր խոսքը,— իղուր է ձեր ջանքը հայերի մեջ գտնել սեպարատիզմի նշույլ, իսկ ձեր անվանած սեպարատիզմը մենք խոստովանում ենք, բայց անենք և ոչ ամաչենք։ Մենք ուրախությամբ կրկնում ենք մի լեհական լրագրի հետևյալ խոսքերը, թեպետ և գիտենք, որ դրանք նույնքան անտանելի են ձեզ համար, որքան եկեղեցու զանգակի ձայնը Մեֆիստոֆելի ականջին։

«Մենք ցանկանում ենք ամրապնդել մեր կապերը ընդհանուր Ռուսիայի պետության հետ։... Միևնույն ժամանակ այնպիսի անսահման (սիրով) սիրում ենք մեր մայրենի կրոնը, մայրենի լեզուն և մայրենի գրականությունը, որ ավելի լավ կհամարենք կատարելապես ոչնչանալ, քան կորցնել նրանց, զրկվել աստվածային այդ ամենաարժեր ձիրքերից, կորցնել մեր հոգը, դիմազուրկ լինել և ոուս դառնալ[27]»։

Ռուսաստանում մանր աղգությունների նկատմամբ ռուսիֆիկացման քաղաքականությունը կյանքում իրագործելու կրիտիկական պահին Հովհաննիսյանի արած հայտարարությունը դրսևորում էր ցարիզմի քաղաքականությանը դիմադրելու նրա անվարան կամքը։ Աբգար Հովհաննիսյանի ճակատագիրը որոշված էր, և «Արձագանքի» դադարեցումը, փաստորեն, վաղուց արդեն ձևակերպված վճռի իրականացումն էր միայն։

* * *

Ցարական գրաքննությունն անհամեմատ հանդուրժող էր Պետրոս Սիմեոնյանցի «Մեղու Հայաստանի» լրագրի նկատմամբ։

---

27 Աբգար Հովհաննիսյանը մեջբերումը վերցրել է «Санкт-Петербургские ведомости» թերթից։

Կոմիտեի աստիճանավորները բավարարված էին նրա ուղղությամբ, ոչինչ չասող և ոչ ոքի չանհանգստացնող նրա պասիվ հրապարակախոսությամբ։ Այս անվերապահ վստահությունն էր պատճառը, որ «Մեղու Հայաստանի» թերթը 1885 թ. ավագ գրաքննիչ Ս. Մելիք-Մեհրաբովի միջնորդությամբ ազատվում է նախնական գրաքննությունից։ Այս արտոնության շնորհիվ թերթը լույս էր տեսնում առանց գրաքննական կոմիտեի լույս ընծայման տոմսակի։ Տպարանատերը պետք է հետևեր միայն, որ հրապարակվող նյութերը կանխապես ստացած լինեին գրաքննության թույլտվությունը։ Այս արտոնությունից «Մեղվի» խմբագիրը օգտվում է միայն երկու տարի, որովհետև նրա թերթը 1886-ի վերջին դադարում է լույս տեսնել։

Այլ էր վերաբերմունքը Սպանդար Սպանդարյանի նկատմամբ։ 1886 թ. վերջին, երբ հայտնի է դառնում, որ Պետրոս Սիմեոնյանցը դադարեցնում է «Մեղու Հայաստանի» թերթի հրատարակությունը, Սպանդարյանը միտք է հղանում ձեռք բերել այդ թերթի հրատարակման իրավունքը և «Մեղուն» լույս ընծայել իբրև ամսագիր։ Այդ հարցով էնֆիաճյանը դիմում է մամոլի գործերի գլխավոր վարչություն։ Ցեռկտիատովը 1886-ի դեկտեմբերին դիմելով Կովկասի գրաքննական կոմիտեի նախագահին, հարցնում է նրա կարծիքը՝ էնֆիաճյանի և Սպանդարյանի դիմումին ընդառաջելու նպատակահարմարության մասին։

Իրենց պատասխան գաղտնի գրությամբ կոմիտեի ղեկավարները բացասական պատասխան են տալիս հարցմանը։ Առաջին, և իհարկե ձևական պատճառաբանությունն այն էր, թե քանի որ հայ իրականության մեջ թերթերը վատ են տարածվում, հազիվ թե Սպանդարյանին հաջողվի «Նոր-Դարի» հետ միասին բավարար քանակով բաժանորդներ հավաքել և «Մեղվի» համար (սա ուներ 480 բաժանորդ, իսկ «Նոր-Դարը»՝ 900)։ Հիմնական պատճառաբանությունն այն էր, սակայն, որ Սպանդարյանն անհրաժեշտ չափով վստահություն չէր ներշնչում կառավարությանը։ «Սպանդարյանը,— ասված է այդ գրության մեջ,— իբրև «Նոր-Դարի» խմբագիր, իրեն չի դրսևորել որպես ծանրակշիռ, լուրջ և կառավարության նկատառումներին համաձայն աշխատող գործիչ և գրաքննությունը մշտապես (ստիպված է եղել) արգելել նրա ձեռնարկումները՝ մամուլի միջոցով անցկացնելու դանդաղան նեղ ա-

օրենքը։ Այնուհետև, հայ լրագրողները տեղական ռուսական մամուլի գործիչների հետ մեկտեղ քաջալերում են տեղական ինքնավարությունների ստեղծումը, կրթական, կուլտուրական, բարեգործական և այլ խնդիրների ոլորտներում։ Ի վերջո, հայ լրագրողները այն խորին համոզմունքն ունեն, որ առանց մայրենի լեզվին կատարելապես տիրապետելու՝ անհնար է սովորել ռուսաց լեզուն, հաղորդակցվել ռուսական մշակույթին։ Մի՞թե իրերի մասին այս հայացքը նշանակում է մեղանչել ռուսական պետականության հանդեպ ունեցած պարտավորությունների դեմ, հարցնում է Աբգար Հովհաննիսյանը. «Ո՛չ, պարոն համառուսական խավարամիտներ,— ավարտում է նա իր խոսքը,— իզուր է ձեր ջանքը հայերի մեջ գտնել սեպարատիզմի նշույլ, իսկ ձեր անվանած սեպարատիզմը մենք խոստովանում ենք, բայց անենք և ոչ ամաչենք։ Մենք ուրախությամբ կրկնում ենք մի լեհական լրագրի հետևյալ խոսքերը, թեպետ և գիտենք, որ դրանք նույնքան անտանելի են ձեզ համար, որքան եկեղեցու զանգակի ձայնը Մեֆիստոֆելի ականջին։

«Մենք ցանկանում ենք ամրապնդել մեր կապերը ընդհանուր Ռուսիայի պետության հետ։... Միևնույն ժամանակ այնպիսի անսահման (սիրով) սիրում ենք մեր մայրենի կրոնը, մայրենի լեզուն և մայրենի գրականությունը, որ ավելի լավ կհամարենք կատարելապես ոչնչանալ, քան կորցնել նրանց, զրկվել աստվածային այդ ամենաբարձր ձիրքերից, կորցնել մեր հոգը, դիմադուրկ լինել և ռուս դառնալ[27]»։

Ռուսաստանում մանր ազգությունների նկատմամբ ռուսիֆիկացման քաղաքականությունը կյանքում իրագործելու կրիտիկական պահին Հովհաննիսյանի արած հայտարարությունը դրսևորում էր ցարիզմի քաղաքականությանը դիմադրելու նրա անվարան կամքը։ Աբգար Հովհաննիսյանի ճակատագիրը որոշված էր, և «Արձագանքի» դադարեցումը, փաստորեն, վաղուց արդեն ձևակերպված վճռի իրականացումն էր միայն։

* * *

Ցարական գրաքննությունն անհամեմատ հանդուրժող էր Պետրոս Սիմեոնյանցի «Մեղու Հայաստանի» լրագրի նկատմամբ։

---

27 Աբգար Հովհաննիսյանը մեջբերումը վերցրել է «Санкт-Петербургские ведомости» թերթից։

Կոմիտեի աստիճանավորները բավարարված էին նրա ուղղությամբ, ոչինչ չասող և ոչ ոքի չանհանգստացնող նրա պասիվ հրապարակախոսությամբ։ Այս անվերապահ վստահությունն էր պատճառը, որ «Մեղու Հայաստանի» թերթը 1885 թ. ավագ գրաքննիչ Ս. Մելիք-Մեհրաբովի միջնորդությամբ ազատվում է նախնական գրաքննությունից։ Այս արտոնության շնորհիվ թերթը լույս էր տեսնում առանց գրաքննական կոմիտեի լույս ընծայման տոմսակի։ Տպարանատերը պետք է հետևեր միայն, որ հրապարակվող նյութերը կանխապես ստացած լինեին գրաքննության թույլտվությունը։ Այս արտոնությունից «Մեղվի» խմբագիրը օգտվում է միայն երկու տարի, որովհետև նրա թերթը 1886-ի վերջին դադարում է լույս տեսնել։

Այլ էր վերաբերմունքը Սպանդար Սպանդարյանի նկատմամբ։ 1886 թ. վերջին, երբ հայտնի է դառնում, որ Պետրոս Սիմեոնյանցը դադարեցնում է «Մեղու Հայաստանի» թերթի հրատարակությունը, Սպանդարյանը միտք է հղանում ձեռք բերել այդ թերթի հրատարակման իրավունքը և «Մեղուն» լույս ընծայել իբրև ամսագիր։ Այդ հարցով էնֆիաճյանը դիմում է մամոլի գործերի գլխավոր վարչություն։ Ցեռկտիատովը 1886-ի դեկտեմբերին դիմելով Կովկասի գրաքննական կոմիտեի նախագահին, հարցնում է նրա կարծիքը՝ էնֆիաճյանի և Սպանդարյանի դիմումին ընդառաջելու նպատակահարմարության մասին։

Իրենց պատասխան գաղտնի գրությամբ կոմիտեի ղեկավարները բացասական պատասխան են տալիս հարցմանը։ Առաջին, և իհարկե ձևական պատճառաբանությունն այն էր, թե քանի որ հայ իրականության մեջ թերթերը վատ են տարածվում, հազիվ թե Սպանդարյանին հաջողվի «Նոր-Դարի» հետ միասին բավարար քանակով բաժանորդներ հավաքել և «Մեղվի» համար (սա ուներ 480 բաժանորդ, իսկ «Նոր-Դարը»՝ 900)։ Հիմնական պատճառաբանությունն այն էր, սակայն, որ Սպանդարյանն անհրաժեշտ չափով վստահություն չէր ներշնչում կառավարությանը։ «Սպանդարյանը,— ասված է այդ գրության մեջ,— իբրև «Նոր-Դարի» խմբագիր, իրեն չի դրսևորել որպես ծանրակշիռ, լուրջ և կառավարության նկատառումներին համաձայն աշխատող գործիչ և գրաքննությունը մշտապես (ստիպված է եղել) արգելել նրա ձրգտումները՝ մամուլի միջոցով անցկացնելու դանազան նեղ ազ-

գայնական տենդենցներ[28]»։ Այս ոգով էր կազմված և գրաքննական կոմիտեի նախագահի գրությունը, ուղղված կառավարչապետին։ 1887-ի փետրվարի թվակիր այս գրության մեջ Յակիմովը խորհուրդ է տալիս Դոնդուկով-Կորսակովին՝ վերոհիշյալ պատճառաբանություններով մերժել էնֆիաճյանի դիմումը[29]։

«Նոր-Դարը» շարունակում է հրատարակվել՝ գրաքննական մշտական հետապնդումների պայմաններում։ Այս թերթի էջերից նույնպես դուրս են ընկնում հայկական դպրոցներին, հայ մշակութային կյանքին նվիրված հոդվածները, բազմաթիվ հաղորդումներ և հոդվածներ՝ կապված հայկական ջարդերի, եվրոպական և ռուսական դիվանագիտության գործունեության մերկացման հետ։ Ել այս հասկանալի է, քանի որ և՛ կոմիտեի, և՛ կառավարչապետության զեկուցագրերում «Նոր-Դարը» և «Արձագանքը» ներկայացվում են մեկ բանակում, որպես ռուսական շահերի նկատմամբ թշնամական դիրք բռնած արտասահմանյան հայ մամուլի գործակիցներ[30]։ 1891 թ. «Մշակի» և «Նոր-Դարի» բանավեճի առիթով մամուլի գործերի գլխավոր վարչության հարցմանն ի պատասխան՝ գրաքննական կոմիտեն նորից բնութագրելով հայ լրագրության ասպարեզում գործող երկու հակադիր հոսանքները, «Նոր-Դարն» անվանում է կղերա-պահպանողական օրգան, որը ձգտում է հայ հասարակությանը հեռու պահել եվրոպական քաղաքակրթությունից, այն դեպքում, երբ «Մշակը» իր խնդիրն է դարձրել ուսումնասիրել ռուս գրականությունը, հետևել ռուս իրականության իրադարձություններին և հայ հասարակությանը ծանոթացնել ռուսական կյանքի երևույթների հետ[31]։ Զեկուցագրի հեղինակները անթաքույց հրճվանքով ավելացնում էին, թե բանավեճում «Նոր-Դարը» գլխովին ջարդվել է։

* * *

Աղմկալից էր Գրիգոր Արծրունու մուտքը հայ լրագրության ասպարեզը։ Իր հրապարակախոսական անմերժելի տաղանդով նա հենց սկզբից մեծ ժողովրդականություն ձեռք բերեց ընթերցող հասարակության մեջ։ «Մշակում» արծարծվում էին օրվա

---

28 Վրաց. կենտր. պետ. արխիվ, ֆ. 480, ց. 1, գ. № 742։

29 Նույն տեղում։

30 **С. Арешян**, Армянская печать и царская цензура, էջ 243։

31 Վրաց. կենտր. պետ. արխիվ, ֆ. 480, ց. 1, գ. 1061։

շնչին համահնչյուն՝ ժողովրդի կրթության, մտավոր առաջընթացի, հոգևոր վերածնության և տնտեսական կյանքի բարգավաճման հետ կապված բազմապիսի հարցեր: Ժամանակին Արծրունին հրահրում էր արևմտահայ դատի պաշտպանությունը: Սակայն 80-ական թվականների սկզբին նկատելիորեն փոխվեց նրա ուղեգիծը: Մեր բանասիրության մեջ վերջերս պատմաքննական հայացքով տրվեց «Մշակի» խմբագրի 80-ական թթ. առաջին կեսի գործունեության գնահատականը: Ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը հանգամանորեն վերլուծելով հայկական հարցի նկատմամբ ցարիզմի դիրքի փոփոխության քաղաքական ակունքները, միաժամանակ վեր է հանում այն տեղաշարժերը, որոնք այդ հարցում կատարվեցին հայ հասարակական հոսանքների և խմբավորումների միջև: Նա գրում է. «Եթե արևելահայ բուրժուազիայի լիբերալ գաղափարախոսները երես էին շուռ տալիս ազգային ակտիվ քաղաքականությունից, ապա կովկասահայ գյուղի և քաղաքի հոծ բազմությունը և նրանց սպասարկող մտավորականությունը, ընդհակառակը, դիմադիր ընթացք էին բռնում ցարիզմի քաղաքականության հանդեպ: Այս նշանակում է, թե ուղեբաժանվելով լիբերալիզմի իշխող մտահայեցողությունից՝ հայկական ազգային-քաղաքական և ազգային-մշակութային պահանջների արծարծման գլխավոր հոգսը իր վրա էր առնում արևելահայ դեմոկրատիան[32]: Իրերի նոր դրությունը խղճան է հասցնում վերը հիշված հոսանքների պարագլուխներ Գր. Արծրունուն և «Մշակի» աշխատակից, հայ գրող, հրապարակախոս Րաֆֆուն: Իր հոդվածում Աշ. Հովհաննիսյանը վեր է հանում և այդ խղճան հետ կապված իրադարձությունները:

80-ական թվականների սկզբին Արծրունին դեռևս պայքարում էր այն բանի համար, որ կյանքում կիրառվեն 61-րդ հոդվածով նախատեսվող բարենորոգումները, և այն կարծիքին չէր բնավ, թե դրանով ինչ որ չափով հակադրվում է պետական քաղաքականությանը: 1883 թ., սակայն, Երևանում սկսված «Հայասեր-ազգասեր» կազմակերպության դատական գործի առիթով Թիֆլիսի ոստիկանությունը խուզարկում է և «Մշակի» խմբագրությունը, իսկ Արծրունին և նրա գլխավոր աշխատակից Րաֆֆին առնվում են ոստիկանական հսկողության տակ: Միակ կարծեցյալ

32 Ա. Գ. Հովհաննիսյան, *Արծրունու և Րաֆֆու գաղափարական ներհակության ակունքը*, «Բանբեր Երևանի համալսարանի» 1968, № 1:

հանցանքը, որ նրանք կարող էին առնել իրենց վրա, այդ դրաքննության թույլտվությամբ «Մշակի» էջերում տպագրված պրոպագանդն էր արևմտահայության օգտին: Սակայն Րաֆֆին հակված էր ենթադրել նաև, թե իրենց մեղադրում են «հայկական սեպարատիզմի» իբրև թե Անդրկովկասում և Տաճկաստանում գործող գաղտնի ընկերությունների մասնակցություն ունենալու մեջ: Անդրադառնալով այդ մտքին, նա նախ հերքում է այդ «հրևակայական» ընկերությունների գոյությունը, և ապա հայտնում այն միտքը, թե «բոլոր Եվրոպայից ստորագրված 61-րդ հոդվածի իրագործումը պահանջելու համար հարկ չկար գաղտնի ընկերություններ ստեղծել»[33]: Մի այլ նամակում Րաֆֆին արդեն մոտենում է կառավարության քաղաքական նոր կուրսի մեկնաբանմանը, համոզված, թե՝ «հրամանը վերևից է եղել: Կառավարությունը ցանկացել է մի կողմից տեղևկանալ, թե մինչև որ սահմանն է հասնում հայ երիտասարդության «չափազանց» եռանդը, մյուս կողմից կամեցել է փոքր ինչ շողոքորթել Թուրքիային, իբր թե խեղդում է ամեն մի վնասակար ձգտում հայկական հարցի առիթով, այն հարցի, որ ինքն ստեղծեց Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով»[34]: Ի վերջո Րաֆֆին համոզվելով իրենց դեմ ծավալված հալածանքի քաղաքական և դիվանագիտական տրամաբանության մեջ, հանգում է միակ ճիշտ եզրակացությանը. «Ես ինձով եմ մեղավոր, որ կառավարության տրամադրությունը հայկական հարցի վերաբերությամբ այժմ, ինչպես երևում է, փոխվել է»[35]: Րաֆֆին, սակայն չէր էլ մտածում գնալ այդ տրամադրության հունով: Այս դեպքերը տեղի ունեին 1883-ի երկրորդ կեսին: Այդ օրերին և 1884-ի սկզբին Րաֆֆին իզուր էր ջանում խմբագրի հետ համաձայնության գալ թերթի հետագա ծրագիրը ճշտելու հարցում: Նա առաջարկում էր «Մշակի» խմբագրական կազմը թարմացնել երիտասարդ, կարող ուժերով: Արծրունին հարմարվելով կառավարության քաղաքականությանը, գերադասում է շրջանցել հայկական հարցը: Րաֆֆին փաստորեն հեռանում է «Մշակից»:

Կովկասի գրաքննական կոմիտեի արխիվում պահպանվող նյութերը մեկ անգամ ևս հաստատում են ակադեմիկոս Հովհան-

---

33 Րաֆֆի, Երկեր, հատ. 10, էջ 591:

34 Նույն տեղում, էջ 595:

35 Նույն տեղում, էջ 592:

նիսյանի այս հարցին տված մեկնաբանությունները, ապացուցում այն ճշմարտությունը, որ 1884 թ. սկզբից, երբ գրաքննությունը անվստահությամբ էր նայում Բաֆֆուն և նրա ընկերներին, ապա անվերապահ հավատ էր տածում Արծրունու նկատմամբ։ Ծանոթանանք «Մշակի» գրաքննության պատմությանը։

Երբ 1880 թ. հայտնի է դառնում, որ թուրքական կառավարությունը արգելել է «Փորձի», «Մշակի» և «Մեղվի» տարածումը Թուրքիայում, գրաքննական կոմիտեն Պետերբուրգ ուղարկելով «Մշակի» համապատասխան համարը (№ 46), պահանջում է այն ներկայացնել Պոլսի դեսպանին և ապացուցել, որ «Մշակինն» ներկայացված մեղադրանքն անհիմն է[36]։ Մի այլ առիթով, 1882 թ. պատասխանելով արտաքին և ներքին գործերի մինիստրների այն հարցմանը, թե ինչու են «Մշակում» քննադատական հոդվածներ զետեղվել էջմիածնի հոգևոր վարչության չարաշահումների և Փոքր Ասիայի թուրքական ադմինիստրացիայի մասին, գրաքննությունը կրկին պաշտպանության տակ է առնում Արծրունուն։ Գրաքննիչ Մելիք-Մեհրաբովը նույնիսկ հակահարձակման է անցնում. Նա այն միտքն է հայտնում, թե թուրքական (իմա՛ արևմտահայ) մամուլի էջերում տպագրված քննադատական հոդվածները, Ռուսաստանի քաղաքականության մասին արևելյան հարցում, շատ-շատ ավելի հեռուն են անցնում, քան «Մշակում» զետեղված հոդվածները[37]։

1884 թ. Գր. Արծրունին կորցնում է հայրական կալվածքները և հուլիսի 11-ին «Մշակի» վերջին համարը լույս ընծայելուց հետո ժամանակավորապես դադարեցնում է թերթի հրատարակությունը և մեկնում արտասահման։ Բաֆֆու նամակներից երևում է, որ նա, Ն. Աբելյանը և Գ. Միրզոյանը համաձայնության էին եկել Արծրունու հետ՝ շարունակելու «Մշակի» հրատարակությունը, խմբագրին ամսական մի որոշակի գումար ուղարկելով արտասահման։ Թվում է, թե վերջապես պետք է կատարվեր մեծ վիպասանի և հրապարակախոսի իղձը՝ երիտասարդական թարմ ուժերի օգնությամբ ստեղծել իր թերթը։ Այդ նպատակը, սակայն, չի իրագործվում։

Մեկնելուց առաջ Արծրունին մի դիմումով խնդրում է գրաքննական կոմիտեին՝ իր բացակայության շրջանում «Մշակի»

36 Վրաց. կենտր. պետ. արխիվ, ֆ. 480, ց. լրաց. 1, գ. 52։
37. Նույն տեղում։

ժամանակավոր խմբագիր հաստատել ուսուցիչ Գ. Միրզոյանին[38]։ Պատասխանն ուշանում է. արխիվային փաստաթղթերից պարզվում է, սակայն, որ գրաքննական կոմիտեի նախագահն իր հերթին դիմելով կառավարչապետի գրասենյակի պետին, և հաշվի առնելով իր լսած լուրերն այն մասին, թե իբր Արծրունին այլևս չի վերադառնալու, նպատակահարմար է գտնում Միրզոյանին հաստատել տալ ոչ թե ժամանակավոր, այլ մշտական խմբագիր-հրատարակիչ։ Վերջինիս դիմումի հետ կոմիտեի նախագահը ներկայացնում է համապատասխան դրական բնութագիր, Թիֆլիսի քաղաքային արհեստագիտական դպրոցից, որտեղ պաշտոնավարում էր նա։ Մինչ հարցի լուծումը, Միրզոյանը, որին հայտնի էր դարձել կոմիտեի նախագահի նկատառումն իր մասին, նոյեմբերի 12-ին կրկին դիմում է կոմիտեի նախագահին՝ խնդրելով իրեն հաստատել գեթ ժամանակավոր խմբագիր, որպեսզի թերթի հրատարակման գործը հունի մեջ ընկնի։ Բաֆֆու նամակներից երևում է, որ «Մշակի» նոր խմբագրության երիտասարդ անդամներն շտապում էին։ Հայ իրականությանը հուզող հարցերն անսահման շատ էին և ապրել սոսկ կողմնակի դիտողի վիճակում, նրանք չէին ուզում։ Գրաքննական կոմիտեի նախագահը երկրորդ անգամ դիմում է կառավարչապետին՝ այս անգամ Միրզոյանին ժամանակավոր խմբագրի պաշտոնում հաստատելու հարցով։ Սակայն նրա դիմումները մերժվում են։ Կառավարչապետության հունվարի 8-ի գրությունից հայտնի է դառնում, որ Միրզոյանը ուսանողական տարիներին հեղափոխական շարժումներին մասնակցելու պատճառով հեռացվել է Կիևի համալսարանից, զրկվելով հետագայում ուսումը շարունակելու իրավունքից։ Այդ փաստը փակում էր նրա առաջ նաև լրագրության դռները (տե՛ս հավելված № 7)։ Այսպիսով, հաստատվում է այն դրույթը, թե 1883—85 թվականներին զատվելով ցարական կառավարության ռեակցիոն քաղաքականության կողմը հակված Արծրունուց, Բաֆֆին քաղաքական մերձավորություն է ստեղծում «Թիֆլիսի հայ ազգային-նարոդնիկական կազմակերպության մեջ խմբված դեմոկրատական երիտասարդության» հետ։ Հովհաննես-

---

38 Այս առիթով Բաֆֆին գրում է. «Նոր խմբագրի պաշտոնը կընդունեմ մեդանից մեկը, Պ. Միրզոյանցը, ես անկարող էի խմբագիր լինել, նախ այն պատճառով, որ ռուսաց հպատակ չէի, երկրորդ, անցյալ տարվա գործերի քննությունը տակավին վերջացած չէ» (տե՛ս Բաֆֆի, երկեր, հատ. 10, էջ 614)։

յանը այդ միտքը հաստատելու համար՝ ի թիվս այլ փաստերի, բերում է նաև Րաֆֆու և «Հայրենասերների միության» կազմակերպիչ Ն. Աբելյանի գաղափարական կապերի փաստը։ Րաֆֆի-Աբելյան-Միրզոյան խմբի գաղափարական ընդհանրությունը արդելք էր դառնում, որպեսզի «Մշակը» նոր խմբագրության ձեռքն անցներ։

1885 թվականին Արծրունին վերադառնում է Ռուսաստան։ Կովկասի գրաքննական կոմիտեն «Մշակը» մեխանիկորեն դադարած համարելով, Արծրունուն մերժում է՝ վերսկսել թերթի հրատարակությունը։ Արծրունին դիմում է Ֆեոկտիստովին։ Վերջինս այդ դիմումի կապակցությամբ հարցնում է կոմիտեի կարծիքը։ Ինչպես երևում է այդ պատասխանից, եթե հեղափոխական-նարոդնիկական և ազգային-դեմոկրատական շրջանակների հետ կապված Րաֆֆու և Միրզոյանի համար փակ էր հրապարակախոսության ասպարեզը, ապա այն միանգամայն մատչելի էր, և անգամ ցանկալի՝ Արծրունու համար։ Կոմիտեն լիուլի երաշխավորում է Արծրունու քաղաքական բարեհուսությունը (տե՛ս հավելված № 5)։ Արծրունուն թույլատրելով վերսկսել ընդհատված լրագրի հրատարակության գործը, Ֆեոկտիստովը միաժամանակ ընդառաջում է նրան և տալիս նաև «Մշակը» ամենօրյա թերթ դարձնելու իրավունք։ Արծրունին բաժանորդագինը 7 ռուբլուց դարձնում է տասը ռուբլի։

1890 թ. մայիսի 6-ին տեղի է ունենում Գրիգոր Արծրունու գրական-հրապարակախոսական գործունեության 25-ամյա հոբելյանը։ Այն անցնում է մեծ շուքով և հանդիսավորությամբ։ Տոնական երեկոյին մասնակցում էին Յակիմովը և Թիֆլիսի նահանգապետ Շերվաշիձեն. երբ վերջինիս հարցնում են, թե ինչու է մասնակցել երեկոյին, նա ցույց է տալիս ներքին գործոց մինիստրի հեռագիրը, որով իրեն կարգադրվում էր օժանդակել հոբելյանի կազմակերպմանը, որովհետև հոբելյարը ինչպես գրում էր մինիստրը, «ռուսական գաղափարների կրողն է»[39]։

Հոբելյանի օրերին հավուր պատշաճի հոդվածներ են տպագրվում ոչ միայն կովկասյան թերթերում, այլև ռուսական մի շարք օրգաններում («Сын отечества», «Русские ведомости», «Новое время» և այլն)։ Կովկասյան հայ թերթերի հետ մրցատական թշնամանքի մեջ գտնվող Սուվորինը իր «Новое время»-ի

---

39 **С. Арешян**, Армянская печать и царская цензура, стр. 241.

էջերում բարձր է գնահատում Արծրունուն, նրա «Մշակը» համարելով «մի տեսակ կապող օղակ հայ հասարակության և ռուս քաղաքացիականության (гражданственность) մեջ», այսինքն,— մեկնաբանում է Արծրունին,— նայում է մեզ վրա որպես հայոց մտավոր առաջադիմությունը ընդհանուր քաղաքակրթությանը մուտեցնող մի ուժի վրա, քանի որ ռուս քաղաքացիականությունը ուրիշ բան չէ, եթե ոչ համամարդկային քաղաքականության արգասիք»[40]:

Սհա թե ինչու, երբ 1892 թ. դեկտեմբերի 19-ին մահացավ Գր. Արծրունին, գրաքննության կոմիտեն կանգնեց մեծ դժվարության առաջ: Ո՞վ պետք է հաստատվեր «Մշակի» խմբագիր: Լրագրի աշխատակից Հովհաննես Տեր-Մարկոսյանին թույլատրվում է միայն երկու համար հրատարակել՝ տարին փակելու համար: Այնուհետև գրաքննական կոմիտե է դիմում Արծրունու այրին՝ Մարիամ Մելիք-Աղամալյանը: Նա խնդրում է իրեն հաստատել ժամանակավոր խմբագրի պաշտոնում. մինչ հարցի լուծումը՝ Մելիք-Աղամալյանին արգելվում է հայտարարություն տպագրել «Մշակի» հրատարակության մասին: Նրա դիմումը կոմիտեի նախագահ Գակկելը իր նկատառումներով հանդերձ՝ ուղարկում է կառավարչապետի դրասենյակի պետին: Կոմիտեի ունեցած տվյալներով, գրում է Գակկելը, Մ. Մելիք-Աղամալյանը չունի ոչ անհրաժեշտ կրթություն և ոչ գրական աշխատանքի փորձ, «որպեսզի կարողանա ինքնուրույնաբար և միահեծան ղեկավարել այնպիսի մի բազմակողմանի և առաջավոր թերթ, ինչպիսին է «Մշակը»: Կոմիտեն երկյուղ է կրում, շարունակում է Գակկելը, թե իսկական պատասխանատու խմբագրի փոքր ի շատե տևական բացակայության ընթացքում լրագիրը հեշտությամբ կարող է ենթարկվել ծայրահեղ ուղղության պատկանող անձանց միանգամայն անցանկալի ազդեցության, որոնք արդեն հասցրել են արտահայտվել գրաքննության բռնագրաված հոդվածներում: Գակկելն այնուհետև վկայակոչում է այն անհարմարությունը, որ կարող էր առաջ գալ կին խմբագրի համար՝ պրակտիկ խմբագրական աշխատանքում (գրաղվածությունը օրվա բոլոր ժամերին, գրաքննիչների և կոմիտեի ղեկավարների հետ ունենալիք անխուսափելի հանդիպումները, բացատրությունները և այլն): Որ ղեկուցագրի հիմնական նպատակը, այնուամենայնիվ, լրագրի

40 «Տարազ» 1890, № 97:

ուղղությունը անփոփոխ պահելու մտահոգությունն էր, և ոչ կին խմբագրի աշխատանքային պայմանների անհարմարության հարցը, այդ վեր է կասկածից։ Պետք էր պահպանել «Մշակը»՝ նրա վաղեմի ոգով, իսկ Մելիք-Ադամալյանը կարող էր տեղի տալ «անբարեհույս» որևէ աշխատակցի։ Այս նկատառումով էլ կոմիտեի նախագահը դեկուցագրի ավարտից հետո անհրաժեշտ է գտնում կրկին հիշեցնել. «Եթե այս ամենից հետո կառավարչապետին հաճո կլինի հարցը լուծել Մելիք-Ադամալյանի օգտին, ապա այդ պետք է ձևակերպել որոշակի (իմա՝ սահմանափակ) ժամկետի համար[41]։

Հունվարի 4-ին կառավարչապետը մերժում է Մելիք-Ադամալյանի դիմումը, իսկ Ֆեոկտիստովը հաստատելով հանդերձ նրա իրավունքը իբրև հրատարակիչ (մի բան, որ նա ժառանգել էր Արծրունու կտակով), Կովկասի գրաքննական կոմիտեի նախագահին ուղղած իր գրության մեջ խոստանում է՝ հաշվի առնել կոմիտեի կարծիքը, եթե Մելիք-Ադամալյանը առաջիկայում իրեն դիմելու լինի խմբագրի պաշտոնում հաստատվելու հարցով[42]։

Պետք է ենթադրել, թե Մ. Մելիք-Ադամալյանը արդեն հասկացել էր իրադրությունը։ Նա իր նոր դիմումով խնդրում է խմբագրի պաշտոնում հաստատել Հ. Առաքելյանին, ապա, հունիսին ներկայացնում է Ալ. Քալանթարի թեկնածությունը։ Համապատասխան բնութագրի շնորհիվ Մամուլի գործերի գլխավոր վարչությունը «Մշակի» խմբագիր է հաստատում Ալեքսանդր Քալանթարին (տե՛ս հավելված № 8)։

Արծրունու հաջորդների խմբագրական աշխատանքի ժամանակ ևս «Մշակը» պահպանում է իր նախկին ուղղությունը, հիմնականում խաղաղ անցնելով իր ճանապարհը։ Միայն 1903 թվականին այն երկու ամսով դադարեցվում է Զալխուշյանի «Ի՞նչ աննենք» հոդվածի պատճառով (№ 227) Գոլիցինյան դաժան ռեակցիայի օրերն էին Կովկասում, երբ յուրաքանչյուր արտահայտության համար խմբագիրը պետք է պատասխան տար։ Զալխուշյանի հոդվածի առիթով կառավարչապետությունը հասցեագրած իր բացատրության մեջ գրաքննիչ Կարախանովը հովանավորում է խմբագրությանը, «Մշակի» ուղղությունը հակադրելով

41 Վրաց. կենտր. պետ. արխիվ, ֆ. 480, ց. 1, գ. 669։
42 Նույն տեղում։

հայ մտավորականության այն խավերին, որոնք հայկական եկեղեցուն տալիս էին քաղաքական մեծ նշանակություն։ «Իշնչ աննենք» հոդվածը Կարախանովը համարում է պատահական վրիպում և միայն դրսից եկած երևույթ, քանի որ, ինչպես հայտարարում է նա, այն իր ոգով չի համապատասխանում բերքի ընդհանուր ուղղությանը[43]։

* * *

Չնայած Գր. Արծրունու անվերապահ համարմանը, նրա թաղման ժամանակ տեղի ունեցած անկարգությունները (բազմության բախումը ոստիկանության հետ), զգաստացնում են կառավարության ներկայացուցիչներին։ Անհրաժեշտ էր զսպել ժուռնալիստների ոգևորությունը և կանխել անցանկալի հաղորդումների հրապարակումը թերթերում։ Թաղման օրը, դեկտեմբերի 27-ի երեկոյան, Թիֆլիսի ոստիկանապետը հայտնում է Կոմիտեի նախագահին կառավարչապետի բանավոր հրահանգը՝ հաջորդ օրվա թերթերից հանելու թաղման հետ կապված բոլոր նյութերը։ Մեկ օր դեռևս կարելի էր հապաղել, բայց կոմիտեի նախագահը անկարելի է գտնում առհասարակ արգելել խոսել թաղման մասին. նա հաջորդ օրն առավոտյան հարցում է ուղարկում կառավարչապետի գրասենյակի պետին։ Գակկելը հայտնում է, որ ինքն արդեն արգելել է Տիգրան Նազարյանին՝ «Տարազի» ողջ համարը նվիրել Արծրունու թաղման նկարագրությանը։ Բայց լրագրողներին բնավ թույլ չտալ խոսել այդ մասին, շատ անհարմար կլինի, քանի որ լռությունը կարող է լուրջ նշանակություն տալ փողոցային միջադեպին։ Եթե կառավարչապետը հատուկ հրահանգներ չտա, ապա իր կողմից առաջարկում է թույլատրել թաղման պրոցեսի նկարագրությունը, բայց թողնելով ոստիկանության հետ կապված միջադեպի պատմությունը։ Գակկելը հնարավոր է գտնում թույլատրել և որոշ ոչ տենդենցիոզ ճառեր, թվարկել պսակների քանակը և այլն։ Նա միաժամանակ խնդրում է կարգադրությունն անել շտապ, «մինչև այս երեկո» քանի դեռ հաջորդ օրվա պարբերականների էջերը չէին մտել կոմիտե[44]։ Նույն օրն իսկ ստացվում է կառավարչապետի հանձնարարականը, որը մեծ հետա-

43 Նույն տեղում, գ. 1903։

44 Նույն տեղում, գ. 669։

քրքրություն է ներկայացնում։ Արծրունի-հրապարակախոսը և հասարակական-գրական գործիչը քաղաքային թերթերում պետք է ներկայացվեր իբրև մի համեստ գրական աշխատող, հեռու՝ քաղաքական, հրապարակախոսական, հասարակական հարցերի հետ ունեցած իր առնչություններից (տե՛ս հավելված № 6)։

Հիրավի, Գրիգոր Արծրունու թաղման նկարագրությունը հայկական թերթերում ներկայացվեց շատ զուսպ։

Այդ զգուշավորությունը այնքան շատ վստահված գործչի հիշատակի առաջ արդյոք չի՞ խոսում այն մասին, որ կառավարչապետությունը կանգնած էր երկրամասում հեղափոխական շարժումների առկայության և դրանց լուրջ սպառնալիքի հանդիման։ Իսկապես, եթե չկար հստակ ձևավորված «Երիտասարդ Հայաստան» կոչվող կուսակցությունը և այդ անունը սոսկ սիմվոլացնում էր «Արձագանքի» հրապարակախոսների գործունեությունը, և կամ, Բաֆֆու իսկ խոստովանությամբ՝ «Մանուկ Հայաստան» տերմինը որոշ ռեակցիոն գործիչների ստեղծած լեգենդը պետք էր համարել, ապա սրա հետ մեկտեղ որոշակիորեն երևում են և ազգային-դեմոկրատական շարժումների առկայության փաստերը Կովկասում։ Հայտնի է, որ Կովկասում 80—90-ական թվականներին գործում էին ազգային-նարոդնիկական շարժման մի շարք մասնակիցներ, որոնք վտարված մայրաքաղաքի կամ Ռուսաստանի այլ քաղաքների բարձրագույն հաստատություններից, իրենց աշխատանքները շարունակում էին Կովկասում։ Պետք է ենթադրել, որ այդ երիտասարդության ներկայացուցիչներն էին հենց, որոնք 1891 թվականին Թիֆլիսում հրատարակվող «Новое обозрение» թերթում տպագրում են «Русская мысль» Ռուսական առաջադիմական հանդեսի խմբագրությանը հղած իրենց ցավակցական հեռագիրը՝ հանդեսի աշխատակից, ռուս հեղափոխական-դեմոկրատ Ն. Վ. Շելգունովի մահվան առիթով։ Այս նշանակալից երևույթը աննկատ չի մնում և Ֆեոկտիստովը հատուկ հրամանով ի ցույց է դնում Կովկասի գրաքննական կոմիտեի նախագահին[45]։

Արդեն 90-ական թվականներին սկզբնավորվում է մարքսիզմի գաղափարների պրոպագանդը երկրամասում։ 1894 թ. գրաքննական կոմիտեն արգելք է դնում արտասահմանում հրատարակված մի շարք գրքերի վրա, որոնց թվում հայկական հարցի հետ

45 Նույն տեղում, գ. 1060։

առնչվող աշխատություններից բացի, տեսնում ենք Մարքսի, Պլեխանովի, Լաֆարգի գրքերի անունները։ Կոմիտեի եզրակացության մեջ ասված էր, թե տենդենցիոզ այդ գրքերը սոցիալ-հեղափոխական բնույթի վտանգավոր տեսություններ են պարունակում[45]։

Գրաքննական խստությունները Կովկասում, դարավերջին առավել ևս ուժեղանում են՝ հեղափոխական շարժման դեմ սկսված պայքարի և փոքր ազգությունների նկատմամբ կիրառվող ռուսիֆիկացման քաղաքականության պատճառով։ Միայն 1905 թ. հեղափոխությունից հետո է, որ Ռուսաստանում առաջին հեղափոխության հզոր ալիքներից հետո ընկրկած Նիկոլայ 2-ը հոկտեմբերի 17-ի մանիֆեստով հարկադրված եղավ ի թիվս այլ զիջումների՝ մեղմացնել և գրաքննական օրենքները։

№ 1

Отношение директора канцелярии наместника Кавказа председателю Кавказского цензурного комитета

13 марта 1880 г., № 52

Конфиденциально

От 23 минувшего февраля за № 102 наш поверенный в делах в Константинополе сообщает, что издаваемые в Тифлисе на армянском языке газеты «Пордз», «Мшак» и «Мегу» с некоторых пор систематично печатают статьи враждебного относительно турецкого правительства направления и что ввиду этого Оттоманская Порта решила воспретить ввоз означенных газет в Турцию, так как обращение их в Оттоманской империи могло бы угрожать общественному спокойствию.

О вышеизложенном канцелярия по поручению г. начальника Главного управления наместника имеет честь уведомить Ваше превосходительство для сведения.

---

1 Տե՛ս «Հրապարակումներ» («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2)։

№ 2

Отношение главноначальствующего гражданскою частью на Кавказе генерал-адъютанта Шереметьева председателю Кавказского цензурного комитета М. П. Гаккелю

2 января 1892 г.

Конфиденциально

По поводу сообщенного в минувшем августе месяце тайным советником Еленевым предложения Кавказскому цензурному комитету о тесном ограничении местной прессы в обсуждении армянских церковно-общественных вопросов, а также ввиду того, что означенное распоряжение г. Еленева последовало без предварительного со мною сношения и не согласовалось с моими взглядами и указаниями, я счел нужным обратиться к г. министру внутренних дел, причем высказал со своей стороны, что обсуждение упомянутых вопросов в печати при надлежащем ее регулировании цензурою может принести несомненную пользу в том отношении, что этим путем проводились бы в общество правильные взгляды на известные вопросы, а через это в значительной степени достигались бы и правительственные цели.

В полученном ныне отзыве статс-секретаря Дурново упомянутое распоряжение тайного советника Еленева объясняется лишь недоразумением.

Вследствие сего я нахожу полезным и возможным предложить Кавказскому цензурному комитету вновь разрешить к печатанию статьи по армянским церковно-общественным вопросам с тем условием, чтобы при этом не допускалось ничего резкого, а тем более оскорбительного для духовных учреждений и лиц, чтобы печать относилась с должным уважением к правительственным установлениям и требованиям и чтобы устранялись всякие попытки к тенденциозному противоправительственному направлению, как о том уже было указано Главным кавказским начальством Цензурному комитету от 22 мая 1884 года за № 247[1]. Для большей осторожности в

---

1 Տե՛ս «Հրապարակումներ» («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2)։

этом деле я бы находил полезным, чтобы Ваше превосходительство приняли непосредственно на себя предварительный просмотр статей упомянутой категории, причем предоставляю Вам, в целях уяснения некоторых частных вопросов и желательного отношения цензуры к печати по вопросам, касающимся армянского духовного ведомства, ознакомиться лично с данными, имеющимися в делах моей канцелярии. За сим, в случае сомнений или затруднений со стороны цензуры в отношении пропуска к печатанию каких-либо статей по армянским церковно-общественным вопросам, рекомендую Вам входить в сношение и соглашение с директором канцелярии, который в особенно сомнительных или серьезных случаях имеет испрашивать мои указания.

Об этом имею честь сообщить Вашему превосходительству для руководства.

№ 3

Отношение вице-директора канцелярии главноначальствующего гражданскою частью на Кавказе председателю Кавказского цензурного комитета М. П. Гаккелю

8 августа 1893 г., № 367

Конфиденциально

Милостивый Государь,
Михаил Павлович!

Вследствие письма Вашего превосходительства на имя директора канцелярии от 19 минувшего июля за № 1863, по поводу фельетона и передовой статьи в № 149 газеты «Каспий» за текущий год, посвященных характеристике личности нового Патриарха—Католикоса всех армян Мкртича и касающихся агитации и партийной борьбы, бывшей во время прошлогодних патриарших выборов, имею честь уведомить Вас, милостивый государь, что г. Главноначальствующий вполне разделял изложенные в означенном письме взгляды Ваши о несвоевременности ныне возбуждать вновь, и при том искус-

ственно, успокоившиеся страсти и личные партийные счеты путем обсуждения в печати минувшей выборной агитации и партийной борьбы и находя, кроме того, совершенно излишним допускать в печати, в особенности на столбцах русских газет, преувеличенные толкования об ожидаемой обновляющей и реформаторской будто бы деятельности нового армянского Патриарха, изволил приказать дать в этом смысле и согласно с означенным заявлением Вашим секретные указания бакинскому вице-губернатору чрез губернатора, о чем поставить в известность Ваше превосходительство.

Исполняя сим приказание г. главноначальствующего, считаю долгом присовокупить, что о вышеизложенном сообщено мною вместе с сим бакинскому губернатору.

№ 4

Отношение вице-директора канцелярии главноначальствующего на Кавказе Соловьева в Кавказский цензурный комитет.

2 ноября 1895 г., № 722

Конфиденциально

Патриарх—Католикос всех армян обратился к послу нашему в Константинополе с просьбою сообщить ему о положении дел по поводу последних событий в Турции. Действительный тайный советник Нелидов шифрованною депешою от 22 минувшего октября сообщил чрез главноначальствующего просимыя Католикосом сведения, каковыя и переданы Его святейшеству.

Так как означенный ответ посла может появиться в местных периодических изданиях в искаженном виде, то генерал-адъютант Шереметьев изволил приказать препроводить в Цензурный комитет копию с упомянутой шифрованной телеграммы с тем, чтобы комитет допускал печатание в местных периодических изданиях телеграмм и всякого рода сообщений по сему предмету не иначе, как только под тем условием, чтобы эти телеграммы и сообщения в точности соответствовали содержанию депеши и притом без всяких комментариев.

Разбор шифрованной депеши из Константинополя генерал-адъютанту Шереметьеву, от 22 октября 1895 года

Армянский Католикос телеграммою просит меня, ввиду тревожных известий о происходящих в Турции избиениях армян, сообщить ему о положении здешней его паствы, церкви и Патриарха.

Благоволите передать Его святейшеству, что Патриарх здоров и ни ему, ни церкви, ни здешним армянам, значительно успокоившимся, не угрожает никакая опасность. Что же касается провинции, то там происходят весьма печальныя столкновения, в которых зачинщиками, к сожалению, по большей части бывают армяне, подстрекаемые революционными комитетами, после чего месть турок и потери христиан весьма жестоки. Реформы, предложенныя тремя державами, утверждены султаном, исполнение их подготовляется, но для этого важно, чтобы вожди народа указывали ему на необходимость, отказавшись от тщетных упований на успех революционных движений и на иностранное вмешательство, прекратить всякия волнения и способствовать всеобщему умиротворению и улучшению положения участием в применении новых мер.

Подлинную подписал Нелидов.

№ 5

Отношение Кавказского цензурного комитета в канцелярию главноначальствующего гражданскою частью на Кавказе

2 августа 1885 г., № 1619

Вследствие отзыва от 23 минувшего июля за № 7544 Цензурный комитет имеет честь уведомить канцелярию для доклада кн. главноначальствующему, что издававшаяся под редакциею дворянина Григория Арцруни на армянском языке газета «Мшак» («Работник») в течение двенадцатилетнего

своего существования не давала повода заметить в ней какое-либо антиправительственное направление или проведение вредных идей, а напротив, она являла нередко оппозицию тем местным и заграничным армянским органам, которые проводили какия-либо несочувственныя к нашему правительству мысли и рассуждения; наконец, газета «Мшак» всегда отличалась безусловным выполнением указаний и распоряжений цензуры.

Поэтому Цензурный комитет от своей стороны находит возобновление издания газеты «Мшак» желательным.

№ 6

Отношение директора канцелярии главноначальствующего гражданскою частью на Кавказе В. Шатилова председателю Кавказского цензурного комитета М. П. Гаккелю

28 декабря 1892 г.

Милостивый государь,
Михаил Павлович!

Г. главноначальствующий поручил мне Вас уведомить, что Его высокопревосходительство не встречает препятствий к допущению в местных газетах статей и заметок о похоронах Арцруни. Предоставляя Вашему личному усмотрению разрешить в каждом отдельном случае вопрос о том, может ли та или иная статья быть допущена к печати, генерал-лейтенант Шереметьев признает нужным передать Вашему превосходительству от себя нижеследующие общие указания.

1. Описание церемонии похорон может быть разрешено без пропусков.

2. Из числа произнесенных на похоронах речей надлежат воспрещению речи, если таковые были, которые касаются воображаемой политической роли покойного и приписывают ему значение агитатора в известном направлении и носителя затаенных идей известной партии армянской интеллигенции. Равным образом подлежат безусловному воспрещению статьи подобного же содержания.

3. Оценка литературной деятельности покойного и даже с восхвалением оной допускается, но желательно удержать эти статьи в умеренном тоне, без малейших поползновений к разжиганию страстей вражды партий и без особенного преувеличения значения понесенной утраты.

4. Для газеты «Кавказ» признается уместною лишь спокойная оценка умершего как литератора, без превозношения как его деятельности, так и личности.

5. По поводу происшедшего на похоронах нарушения порядка и столкновения с полициею допускается лишь простое указание на имевший место беспорядок и отзывы, осуждающие это грубое явление.

По поручению главноначальствующего, сообщая об этом, имею честь присовокупить, что сейчас я виделся с господином Милютиным и имел объяснения по поводу включения в статью о похоронах заметки относительно сказанных беспорядков.

№ 7

Отношение директора канцелярии главноначальствующего гражданскою частью на Кавказе исправляющему должность председателя Кавказского цензурного комитета

4 декабря 1884 г., № 1195

Конфиденциально

По докладу г. главноначальствующего собранных вследствие письма председателя Цензурного комитета от 3 августа сего года за № 1454 сведений о личности **Мирзоева.** Его сиятельство, усматривая, что Мирзоев, в бытность свою студентом Киевского[2] университета, за произведенные им, совместно с другими студентами, в 1878 г. беспорядки был исключен из университета, с учреждением над ним полицейского надзора и с лишением права на поступление в высшие учебные заве-

[2] *Դրաքննական կոմիտեին ներկայացված բնութագրում նշվում է, որ Միրզոևը սովորել է Կազանի համալսարանում. գրասենյակի աշխատակիցը գրությունը կազմելու ժամանակ, թերևս, կիևը շփոթել է Կազանի հետ։*

дения, изволил выразить, что ввиду этих сведений едва ли удобно передать Мирзоеву издание и редактирование газеты «Мшак», хотя он, Мирзоев, за время пребывания с 1878 г. в Тифлисе, по удостоверению полицейского начальства, ни в каких предосудительных поступках не замечен и в настоящее время не находится под надзором полиции.

Об этом канцелярия имеет честь уведомить Ваше превосходительство, вследствие отзыва от 15 минувшего ноября за 2127.

№ 8

Отношение председателя Кавказского цензурного комитета главноначальствующему гражданскою частью на Кавказе

По имеющимся в вверенном мне Комитете сведениям г. Калантар считается серьезно образованным человеком, с установившимися солидными убеждениями, чуждыми радикальным увлечениям так называемой молодой Армении. Г. Калантар оставляет обеспеченное положение на государственной службе для публицистической деятельности и, следовательно, материально заинтересован в продолжительном существовании газеты «Мшак», что может служить некоторым ручательством в благонамеренном направлении этой газеты.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՆԱՄՅԱԿԻ ՀԱՅ ՊԱՏՄԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Շահական Պարսկաստանի բռնատիրությունից Արևելյան Հայաստանի ազատագրումը և նրա միացումը Ռուսաստանին անկյունադարձային նշանակություն ունեցավ հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։ Նրա արևելյան հատվածի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման համար ստեղծվեցին համեմատաբար նպաստավոր պայմաններ։

Չնայած Անդրկովկասում ցարիզմի վարած գաղութային քաղաքականության բազմապիսի խոչընդոտներին ու արգելակներին, հայ ժողովրդի արևելյան հատվածը աստիճանաբար դուրս էր գալիս մահմեդական գերիշխանության շրջանի հետամնացության, անշարժության դարավոր թմբիրից և կատարում էր մշակութային առաջընթացի նշանակալից քայլափոխերը։ Նրա բախտը անքակտելիորեն միահյուսվում էր այն պայքարին ու նպատակին, որ իր մեծ գալիքը նախապատրաստող ռուս ժողովուրդը մղում էր ընդդեմ ինքնակալության։ Դանդաղորեն ծիլեր էր արձակում արևելահայ գրականությունն ու մամուլը, քայլ առ քայլ ավելի բովանդակալից անդրադարձնելով կյանքի ու գույքի անձեռնմխելիությունից օգտվող արևելահայերի նոր կացության փոփոխություններն ու հակասությունները։

Ռուսական տիրապետության ներքո հայ ժողովրդի կյանքում կատարվող սոցիալ-տնտեսական և մշակութային տեղաշարժերը խորհրդածությունների և մտորումների առարկա դարձան ոչ միայն ժամանակակիցների համար այլև հետագա հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ։

20-րդ դարի առաջին քսանամյակին առավել, քան նախորդ պատմաշրջաններում, բյուրեղացել էր այն ճշմարտությունը, որ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացմամբ հայ ժողովուրդը շարունակեց ենթարկվել ցարիզմի ազգային և գաղութային դաժան ճնշման ու հարստահարման քաղաքականությանը։ Այնուամենայնիվ հասարակական-քաղաքական մտքի ամենատարբեր դավանանքի տեր մարդկանց մեծ մասի համար դաղտնիք չէր և այն, որ Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության համեմատությամբ ռուսականը՝ առաջընթաց քայլ էր։

Սակայն հայ բուրժուական պատմագրության առավել պահպանողական թևի ներկայացուցիչներից ոմանք չկարողացան ազատվել իրենց դասակարգային նեղմտությունից. այսպես, Եղիշե քահանա Դեղամյանը, որն արձագանքում էր ազգը հուզող հարցերին, ազգապաշտպանության կղերական դիրքերից, այդ նեղմտությունից էլ դրշահարում էր ցարիզմի հնօրյա քաղաքականությունը և նրա ընթացքը դյուրացնող հայ գործիչներին։ Ըստ նրա՝ բոլոր հայ քաղաքական գործիչները, Ի. Օրուց մինչև Ն. Աշտարակեցին և Լազարյան իշխանները՝ մեծամեծ զոհեր են մատուցել ռուսական դիվանագիտությանը և միշտ խաբվել իրենց ակնկալությունների մեջ։ Աշտարակեցին «փոքր ի շատե քաղաքագիտական հոտառություն չուներ» և նույնիսկ չէր հասկանում իր մասնակցությամբ կատարվող մեծ ու փոքր դեպքերը. նա նույնիսկ չգիտեր, որ «այդ դեպքերի առաջնորդողը, նրանց շարժողն ու պարացնողը արտաքին քաղաքականությունն է գլխովին»[1]։ Դեղամյանը չկարողացավ բացահայտել այն կապը, որ գոյություն ուներ հայ գործիչների նպատակասլաց գործունեության և հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների օրինաչափ զարգացման միջև։ Ուստի և տալով հայ ազատագրական շարժման անցած ուղու համառոտ ակնարկը, Դեղամյանը պատգամում էր իր ընթերցողներին «մի անգամ ընդմիշտ» հեռու մնալ «որևէ քաղաքական շարժումներից, քաղաքական գործերի ու հաշիվների միջամտություններից և բոլոր սրտով ու հոգով «նվիրվել» քաղաքակրթական խաղաղ, շինարար աշխատանքի»[2]։

Դեղամյանն աշխատում էր վարագուրել ազգային քաղաքա-

---

1 Եղ. Ք. Դեղամյան, Պատմական քաղվածքներ, պրակ 7, Բաքու, 1905, էջ 490։

2 Եղ. Ք. Դեղամյան, Պատմության դասերը, Բաքու, 1915, էջ 34—35։

կան իր իմաստասիրությունը և հակադեմոկրատական գաղափարախոսությունը երկդիմի տրտունջներով և նույնիսկ հայրենասիրության մասին նետված շատ զգուշավոր և միշտ քողարկված խրատներով։ Հայտնի լինելով իբրև դեմոկրատական հայացքների մոլի հակառակորդ, նա միշտ ասում էր, որ ինքը չի կարող ձայնակցել ռուսական կողմնորոշումը պաշտպանող հայ գործիչների ուղեգծին[3]. «ԺՀ-րդ դարու վերջերից և ԺԹ-ի սկզբներին,— գրում է նա,— հայն իր պատմական փորձված ճանապարհից սկսեց շեղվել, իր աչքը դեպի սիրուն եկեղեցին ու պանծալի հավատը վարագուրեց օտարների բերած փայլուն թաշկինակով և իրար կորցնելով գազանաշատ անտառների, անդնդախոր ձորերի, մաշող առապարների կողմերն ուղղեց իր մոլար քայլերը»[4]։ Դեղամյանը աչք էր գոցում այն ճշմարտության առջև, որ ռուսական օրիենտացիան Ն. Աշտարակեցու և, ընդհանրապես, հայ ազատագրական շարժման մյուս գործիչների համար «հյուսիսային արծվի» թևերով արտահանված և հայերին պարտադրված գաղափարներ չէին, այլ՝ պարսկա-թուրքական բռնատիրության դեմ նրանց հարդարած ազատագրական պայքարի միակ առաջադիմական ուղեգիծը։ Պատմա-քաղաքական երևույթները ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակից անջրպետված քննության արատավոր իր մեթոդով նա դուռ էր բացում ինքնահակասումների և էկլեկտիկ մտածողության առջև։ Պատահական չէ, որ նա մերթ գովեստի տողեր էր նվիրում ռուսական տիրապետությանը և դրվատում հայ ազատագրական շարժման գործիչներին, որոնց «մի քանի տասնյակ տարիների ջանքերից, տառապալից փորձերից հետո վերջապես հասավ ցանկալի օրը և հայ մելիքների երկիրը և Արարատյան աշխարհը ցանկալի դիրկն ընկան»[5]։ Մերթ վերհիշում իր այն նախորդներին, որոնք տակավին «հիսունական թվականներից սկսած, իրենց ժամանակակիցներին խրատել են և աշխատել համոզել, որ մեր փոքրաթիվ ցիր ու ցան և տկար ազգի ապագան կարելի է ապահովել այն ժամանակ միայն, երբ հայ ազգն ընդհանրապես և նրա ղեկավար շրջանները մասնավորապես իրենց համար անշեղ կանոն ընդունեն անցյալի վերաբերմամբ

---

3 Ս. Կարինյան, *Րաֆֆին և նրա ռեակցիոն քննադատը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» 1954, № 6)։*

4 *«Հովիտ» 1916, № 5, էջ 65։*

5 *«Հովիտ» 1916, № 5, էջ 66։*

սիրել ու հավատարիմ մնալ հայ ազգության դարավոր առանձնահատկություններին, որպիսիք են՝ ազգային եկեղեցի, մայրենի լեզու, հայ գրականություն և պատմություն. իսկ ներկայի վերաբերմամբ՝ շարունակ և անընդհատ աշխատել և առաջադիմել ուսման և գիտության մեջ, արհեստների և արվեստների մեջ, արդյունաբերության և վաճառականության մեջ։

Մեր ազգի քաղաքական ձգտումների վերաբերյալ մեր նախորդները միշտ խրատել են հավատարիմ մնալ ամենուրեք սիրող պետության և իր վարկն ու ապագան չվտանգել թեթևամիտ բախտախնդրությամբ, քանի որ մեր աշխարհագրական և քաղաքական դիրքը այսպես է պահանջում»[6]։

Գեղամյանը հակակրանքով էր խոսում «համազգային հոգու ղորության վրա» երկաթին գերապատվություն տալու Խրիմյանի, Արծրունու և Րաֆֆու «ինքնահնար գյուտի» մասին, որովհետև սրանք «համազգային զարգացած, հասուն գիտակցության զորությունն արհամարհելով՝ միայն երկաթի մեջ որոնեցին հայ ժողովրդի ազատագրությունը, որը մեծ մոլորություն էր, իր մեծ ու չարաշար հետևանքներով»[7]։

Հայ ազատագրական շարժման հարցերին նվիրված Գեղամյանի, մասնավորապես վերջին շրջանի աշխատություններում խստորեն բացակայում էր իրադարձությունների զարգացման պատճառականությունը։ Դրանք կառուցված էին պատմության մեխանիկական ընկալման և կիրառական պրագմատիզմի՝ գիտական առումով ամուլ և էկլեկտիկ մեթոդով, ուր մասնավոր իրողությունները ապարդյուն կերպով փորձում էին ապառնալ հայ ազատագրական շարժման լուսավոր փաստերին, իսկ հեղինակի վերացական մտքի դեզերումները՝ երևույթների պատմա-հասարակական կապերին ու օրինաչափություններին։ Գեղամյանը հայ ժողովրդի ազգային-քաղաքական և ազգային-կուլտուրական զարգացման ներկան ու ապագան պատկերացնում էր հայ եկեղեցու և բուրժուական կարգերին համակերպված՝ կղերի ղեկավարությամբ, ուստի պատահական չէ հոգեկան այն խռովքը, որ երևան էր բերում նա հայ կղերի ազգային-կուլտուրական գործունեությունը խաթարող ցարիզմի քաղաքականության նկատմամբ։

Գեղամյանի կարծիքով ցարական կառավարության անբար-

---

6 Նույն տեղում, № 6, էջ 86։

7 Նույն տեղում, № 5, էջ 82։

յացական քաղաքականությունը՝ հայ եկեղեցու ու կղերական մտավորականության նկատմամբ կաշկանդել է հայ մշակույթի զարգացմանը։ Բայց «սրանով չենք ուզում ասել,— գրում էր նա,— թե կառավարությունից որևէ փոխարինություն, պարտքի որևէ հատուցումն ենք պահանջում կամ խնդրում։

— Ո՛չ, քավ լիցի։

— Ընդհակառակը՝ շնորհակալ ենք կառավարությունից այն բարիքների համար, որ 75 տարի վայելել ենք նրա հովանու ներքո՝ իր տրիտուր մեր մատուցած մեծամեծ ծառայություններին։ Բայց եթե կառավարությունից որևէ պահանջ անելը մեզ իրավունք չենք համարում, գոնե լիակատար իրավունք են համարում և բաց ճակատով միշտ կարող ենք պահանջել, որ կառավարությունը մեզ ազգովին ողջակեզ (ընդգծումը հեղինակինն է— Ն. Ս.) չբերե իր այն քաղաքականության նպատակին, որ վերջին Արևելյան պատերազմից հետո սկսել է գործադրել մեզ վրա»[8]։

Գեղամյանը նշում էր ամեն կարգի ազգային-ազատագրական ու դասակարգային շարժումները, որովհետև որչափ հայերը հանգիստ ու խոնարհ են եղել, այնչափ վայելել են տիրողների «առատ շնորհները»։

Ըստ Գեղամյանի, մահմեդական աշխարհում հայերի անդորրը խանգարել են հատկապես նրանց ռուսական կողմնորոշումը և Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը։

Գեղամյանը ջուր էր լցնում, առաջին հերթին, թուրք ջարդարարների ջրաղացին, երբ գրում էր, թե՝ «Մինչև Պետրոս Մեծի Արևելքի վրա աչք ունենալն, Տաճկաստանի հայ քրիստոնյաներն ընդհանրապես հանգիստ և լավ էին ապրում օսմանյան գահի հովանավորության տակ, կրոնի և լեզվի կատարյալ ազատություն էին վայելում, տնտեսապես բարեկեցիկ վիճակ ունեին, առևտրի և արհեստների մեջ առաջին տեղն էին բռնում օսմանյան կառավարության մյուս հպատակների մեջ, պետական ու հասարակական գործունեության ասպարեզը նրանց համար միշտ բաց էր լինում։... Ընդհանուր կոտորած, ժողովրդի ջարդ, քաղաքների և գյուղերի ավարառություն և ավերում, կանանց հափշտակում և առևանգում, արտագաղթումն և այլ այսպիսի աղետներ՝ գոյություն չունեին Տաճկաստանում, մինչև այն օրը, երբ օսմանյան

---

8 Եղ. Ֆ. Գեղամյան, *Մտորումներ*, «Հուլիս» 1906, № 39, էջ 618։

կառավարությունը ոչ մի կասկած չուներ տաճկահայերի բարեհուսության վրա»[9]։

Հայերի ռուսական կողմնորոշումը և նրա հետևանքները նույն հակագիտական դիրքերից էր քննում և Եղիշե քահանայի գործընկեր Սեդրակ Ավագյանը։ Հանդուրժող չափավորությամբ քննադատելով ցարիզմի ազգային-կրոնական քաղաքականությունը, նա ևս այդ «քննադատության» անվան տակ սևացնում էր հայ ազատագրական շարժումները։

Ռուս-մահմեդական պինաբախումների ժամանակ հայերը «կուրորեն օգնել և աջակցել են» ռուսներին. «Ահա թե ինչու,— գրում էր նա մեծ եղեռնի նախօրեին,— տասնյակ տարիներ տաճիկը մեզ հալածում, կոտորում ու բնաջինջ է ուզում անել մեր հարազատ երկրում»[10]։ Տրամաբանորեն սխալ այս միտքը չէր կարող չանդրադառնալ նաև դրան հարակցող այլ ըմբռնումների վրա։ Այստեղ, Ս. Ավագյանը աննախապաշար հակակրանքով էր խոսում պարսկահայերի ներգաղթի մասին։ «Նախքան 1828 թվականը,— հարում էր նա այդ առիթով,— Խոյը եղել է Պարսկաստանի ամենահայաշատ կենտրոններից մեկը, սակայն վերջին ռուս-պարսկական պատերազմից հետո, շնորհիվ Պասկևիչի և հայ գեներալ Լազարյանի ջանքերի 40 հազար պարսկահայ ընտանիք (պետք է լինի՝ 40 հազար պարսկահայեր—Ն. Ս.) թողնում են Ատրպատականը և բնակվում Շարուր-Դարալագյազի շրջանում։ Այդ հսկայական գաղթը, որի դրդապատճառը եղել է, իմիջիայլոց, Լազարևի կողմից պարսկահայերին տրված «ոսկյա սարերի» խոստումը, պիտի համարել պատմական Հեր և Ջարևանդի համար առաջին մահացու հարվածը...»[11]։

Արժեքավորելով Հայաստանի արևելյան հատվածի Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու իրողությունը և արտահայտելով իր մտահոգումը Ռուսաստանին ու պարսկահայ ներգաղթին, հայ պահպանողականության ինքնատիպ ներկայացուցիչ Մաղաքիա Օրմանյանը (1841—1918 թթ.) գրում էր. «Հայերը ավելի շատ հարստահարություններեն կփախչեին, և ապագա բարօրություն կինարեին և այդ մասին հուսախաբ չեն եղած,

9 Եղ. Ֆ. Գեղամյան, Հայերի ազատագրական շարումները ԺԲ դարում, Բաքու, 1915, էջ 420—421։

10 Ս. Ավագյան, Ազատ Հայաստան Ռուսաստանի հովանավորության տակ, «Հովիտ» 1915, էջ 10։

11 Մ. Ավագյան, Ավերակների աշխարհից, «Հովիտ» 1916, № 8, էջ 117։

քանզի պաշտոնական վիճակագրություններն ալ, միայն Երևանի և Նախիջևանի մեջ 60 տարիների ընթացքին եռապատիկ անցած կգուցանեն տեղի հայաբնակությունը[12]»:

Օրմանյանը զերծ էր անցյալի ազգային-քաղաքական իրողություններին, դարասկզբի ռեակցիոն պահպանողականներին բնորոշ կրքային ու հախուռն գնահատականներից: Իրրև պատմաբան, նա ուներ երևույթներն ու անցքերը դիտելու ու վերլուծելու տրամաբանական մեթոդ և անաչառ եղանակ: Նա չուներ նաև անցյալի հայ կղերական պատմիչների նախապաշարումները, կողմնակալությունն ու նեղմտությունը: Օրմանյանը խոհուն ու շրջահայաց էր հատկապես իրօրյա կացությունը գնահատելիս: Հայոց պատմության մեջ նախօրինակը չունեցող 1896—1908 թթ. դժնդակ տարիներին[13], երբ Թուրքիայում խաթարված էր հայերի ոչ միայն հանգիստը, այլև ֆիզիկական գոյությունը՝ «Ինձի կմնար,— գրում էր նա հետագայում,— հարմար կերպով, ճարտար դարձվածքներով, հնարավոր միջոցներով, Համիդի հայերուն դեմ ունեցած ատելությունը, մեղմացնել, հալածանքները թեթևացնել, ազգային կացությունը բարվոքել, ներքին կազմակերպությունը պահպանել, մեկ խոսքով՝ քիչ ու շատ տանելի վիճակ մը պատրաստել: Այդ ծրագիրը Համիդի ուզածը չէր, և երբ ես անոր կհետևեի, Համիդի հետևող չէի ըլլար...[14]»:

Նա խիստ վնասաբեր էր դիտում արևմտահայերի ապստամբական գործողությունները և մասնավորապես անարգում դրանք ղեկավարելու հավակնություն ունեցող հայ ազգային կուսակցություններին[15]: Իր ու Ն. Աշտարակեցու գործունեության նմանությունը նկատի ուներ Օրմանյանը, երբ գրում էր, թե Ներսեսը որքան «բուռն ու հախուռն էր» գործնական ձեռնարկներում, «նույնչափ էլ հանդարտ ու խոհական՝ պարագաները կշռելու և հանգամանքներին հարմարվելու մեջ»[16]:

Օրմանյանի համար ամեն ինչից վերը մայր հայրենիքն էր, հայ ժողովրդի ինքնապահպանումը, որի համար պետք է աշխա-

---

12 Մ. Օրմանյան, *Ազգապատում*, հատ. Գ, Երուսաղեմ, 1927, էջ 3581:

13 Այդ տարիներին Օրմանյանը վարում էր Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունը:

14 Մ. Օրմանյան, *Խոհք և խոսք*, Երուսաղեմ, 1929, էջ 28:

15 Գարեգին վ. Հովսեփյան, *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան*, Թիֆլիս, 1908, էջ 25:

16 Մ. Օրմանյան, *Ազգապատում*, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 3779:

տեին բոլոր հայերը՝ հասարակ բեռնակրից սկսած մինչև «վեհ պատրիարքն ու կաթողիկոսը»։

Նա իր հիմնական աշխատությունները գրեց պատրիարքական աթոռը թողնելուց հետո, երիտթուրքերի սանձարձակ տիրապետության ժամանակաշրջանում։

Անդրադառնալով այն հարցին, որ դեպի Անդրկովկաս ցարական զորքերի առաջխաղացման, 19-րդ դարի քսանական թվականների համազգային ներշնչանքի այդ պահին՝ «Նիկողայոս Ա կայսրը յուր խոստումները առանձնապես ընդարձակեց, մինչև իսկ հայերու աչքին ինքնուրույն իշխանության ակնկալություն փայփչեցուց, և այդ խոստումները երաշխավորելու դիտմամբ, պահ մը հայկական նահանգ անուն ալ տուավ նոր տիրապետած գավառներուն», Օրմանյանը դիտում էր, որ «այդ ամենը քաղաքագիտական ճարտարություններ եղան և տիրապետությունը դյուրացնելու առաջնորդեցին։ Երբ որ տիրապետությունը լրացավ և հաստատուն ձև առավ, ռուսական կառավարությունը մինչև իսկ հայոց կրոնական կամ հոգևորական գործերուն վրա ալ ազդեցություն ուննենալու ձեռք զարկավ»[17]։

Քննադատելով ցարական իշխանությունների ուխտադրժությունը, Օրմանյանն այսուհանդերձ ռուսական տիրապետությունն ընդունելի էր համարում։ Նա ռեալիստորեն էր գնահատում պատմա-քաղաքական անցումներն ու կանգառները։ Քիչ չեն պատահել դեպքերը, գրում էր նա, երբ ռուսական տիրապետության ներքո սաստկացել էր հայության նկատմամբ ճնշումներն ու հալածանքները, փակվել մշակութային հաստատությունները ու դպրոցները, բռնադրավել եկեղեցական գույքը, բայց աքսորականիվ հեղինակը գոհ էր ռուսական տիրապետությունից, որովհետև այն համատարած մեռելություն չէր սփռում և երբեք «երեք հարյուր հազարներու խողխողում» «մոլեռանդ խուժանի մը ձեռքով խաղաղ ապրող տարրին վրա հարձակում և ջարդ» «երեսուն հազար անմեղ կյանքերու անողորմ կոտորած» չէր կազմակերպում[18]։

Այս տեսակետից ուշագրավ է հատկապես հայ լիբերալ բուրժուական պատմագրության տաղանդավոր ներկայացուցիչ Լեոն (Առաքել Բաբախանյան-1860—1932 թթ.)։ Գրեթե չկա մեր ժո-

---

17 Մ. Օրմանյան, Հայ եկեղեցին և իր պատմությունը, Կ. Պոլիս, 1913, էջ 121—122։

18 Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 5426։

ղովրդի պատմության որևէ պրոբլեմ, որին այսպես թե այնպես անդրադարձած և գնահատած չլինի հայ պատմագրության այդ երախտավոր մշակը։ Նրա բեղմնավոր գրիչը հեղեղել է հայոց պատմության ամենատարբեր սահմանները։ Նրա թողած ժառանգությունը ոչ միայն իր ժամանակին որոշակի դեր կատարեց, այլև այսօր էլ պահպանում է իր ղգալի մասի անուրանալի արժեքը։

Լեոի գիտական ուղղությունը ռեալիզմն էր, համոզմունքը կամ դավանանքը՝ լիբերալիզմը։ Նրա բոլոր նախահեղափոխական գրվածքները չէին խոտորվում այն սկզբունքներից, որոնց պաշտպանն էր Գր. Արծրունու «Մշակ»-ը։ Լեոի համար մարդկային հասարակության մեջ չկան հանկարծակի թռիչքներ, այլ ամեն ինչ, այդ թվում և ազգերը՝ բարձրանում են աստիճաններով։

Լեոն իր գործունեությունն սկսեց անցյալ դարի վերջին տասնամյակներին, մի ժամանակաշրջանում, երբ սքոլաստիկայի հիմքով հասակ առած կղերա-ֆեոդալական պատմագրությունը նահանջում էր իր դիրքերից՝ տեղի տալիս պահպանողական և լիբերալ բուրժուական ուղղություններին։ Ընտրելով վերջին ուղղությունը, նա կարողացավ զգալիորեն առաջ անցնել Ստ. Պալասանյանից և Ալ. Երիցյանից։ Լեոն այնքան էր մարսում պատմական փաստաթղթերը, որ երբեմն չէր վկայակոչում դրանց, այլ պատմում էր իրրև գրող։ Այս առումով նա կարծեք թե անմահ Րաֆֆիի գործունեության շարունակողն էր, այն տարբերությամբ միայն, որ եթե Րաֆֆու մոտ բնորոշը վիպականն էր, ապա Լեոի մոտ իշխում էր պատմականը։

Թե՛ կենսագրական բնույթի և թե՛ պատմագիտական աշխատություններում Լեոն աշխատում էր հատկապես վեր հանել հայ ազատագրական պայքարի վերջին դարերի մանրամասները։

Մինչհեղափոխական շրջանի իր աշխատություններում («Ստեփանոս Նազարյանց» «Գրիգոր Արծրունի» «Հայկական տպագրություն» «Հովսեփ կաթողիկոս Արղության» «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի» և այլն) Լեոն շատ բարձր էր գնահատում հայերի ռուսական կողմնորոշումը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։

«Ռուսաց ղենքը ոչ միայն բերում էր խաղաղություն և հանգստություն, —գրում էր նա, —այլև կապող մի կամուրջ էր այնքան դժբախտություններ տեսած մեր երկրի և եվրոպական քաղաքակրթության միջև։ Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդներն այլևս ոչ մի հոգս չէին կարող ունենալ,

ցայի մտավոր ու կուլտուրական առաջադիմության»[19]։ Դժվար չէ գտնել ծայրը այն կարմիր թելի, որ կարում անցնում էր հայ լիբերալ բուրժուական պատմագրության և հրապարակագրության բոլոր հյուսվածքների միջով՝ խաղաղ տնտեսական կյանք և կուլտուրական ոգորում։ Հայ լիբերալներին ուրախացնում էր, թե ինչպես ազգայնորեն համակենտրոնացվող արևելահայությունը զարգացնում էր իր կուլտուր-ազգային կյանքը, հասունանում բուրժուական զարգացման համապատասխան ազգային-կուլտուրական կյանքի ու գիտակցության համար։ Ռուսաստանը, գրում էր Լեոն, վերջ դրեց Անդրկովկասում իշխող պարսկա-թուրքական անիշխանությանը, տեղական ժողովուրդներին ընձեռեց անձի, գույքի, տնտեսական ու մշակութային զարգացման հնարավորություն, նորանվաճ երկրամասի հայկական շրջանները Ռուսաստանի հետ միացան կանոնավոր և անխափան ճանապարհներով։ Ռուսական տիրապետությունը նախադրյալներ ստեղծեց արևելահայերի ազգային համախմբման համար։ Լեոի համար հայ ժողովրդի վերջին դարերի պատմության ուսումնասիրությունը չուներ մի այլ վեհ կոչում, քան ժողովրդի ազգային ինքնագիտակցության կողմնորոշիչի դերը։ Ստ. Նազարյանի և Գր. Արծրունու նման՝ Լեոն այն կարծիքն ուներ, որ ռուսական կուլտուրան բարերար ներգործություն է ունեցել հայերի ազգային-կուլտուրական զարգացման վրա։ Այս առումով ուշագրավ է Գր. Արծրունուն նվիրված նրա տողերը. «Կովկասը, —գրում էր Լեոն,— նրա (Գր. Արծրունու —Ն. Ս.) առջև ներկայանում էր մի այսպիսի երևույթ, Ռուսաց տիրապետությունը հաստատել է քաղաքական խաղաղություն. երկիրը այլևս պատերազմի դաշտ չէ և նրա մեջ ապրող ազգերը միայն մի նպատակ, մի ձգտում պիտի ունենան՝ գնալ առաջադիմող մարդկության հետևից, յուրացնել եվրոպական լուսավորությունը, ապրել քաղաքակիրթ ազգերի կյանքով»[20]։ Այն, ինչ Լեոն վերագրում էր Գր. Արծրունուն, վերաբերում էր և իրեն։

Հարկավ, շատ ավելի լավ կլիներ, եթե իրականանային հայ ազգային-քաղաքական ակնկալությունները, բայց ստեղծված նոր կացության պայմաններում՝ «Ազատվել պարսկական բարբարոս ռեժիմից առանց նույնիսկ պայմանների, —գրում էր նա, —այդ էլ հավասար չափով փափագելի էր հայության համար»[21], քանզի

---

19 Լեո, Ստեփանոս Նազարյանց, առաջին հատոր, Թիֆլիս, 1902, էջ 3։

20 Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. երկրորդ, Թիֆլիս, 1903, էջ 240—249։

21 Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 88։

Ռուսաստանը «հրավիրում էր իր նոր հպատակներին խաղաղ ու հանգիստ ղբաղվել կրթության, առաջադիմության և բարոյական վերածնության նպաստող գործերով»[22]։

Լեոն շատ մեծ կարևորություն էր տալիս դեպի Անդրկովկաս 140 հազար պարսկահայերի և արևմտահայերի գաղթին։ «Երկու պատերազմներին հաջորդած գաղթականությունները,— գրում էր նա,— փոխում էին հայերի ազգաբնակչական հանգամանքները։ Նրանք ամուր շեշտված ազգագրական միասպազության և զանգվածային հոծության կերպարանք էին տալիս Հայաստանի այն մասին, որ զետեղված էր Անդրկովկասում և անվանվում էր Պարսկահայաստան։ Այժմ այդ անունն իսկապես պատմական ավանդություն էր դառնում և տեղի էր տալիս ռուսական Հայաստան անվան, որ դառնում էր Ռուսաստանում ապրող ամբողջ հայության, ամբողջ ռուսահայ հատվածի բարոյական և քաղաքական հենարանը»[23]։

Ռուսաստան փոխադրված գաղթական հայերի տնտեսական դժվարությունների ու զրկանքների մասին պատմող բազում փաստաթղթեր կային պատմաբանի տրամադրության տակ։ «... Բարի էր մեզ ծառայել օսմանցիներին,— կարդում ենք կաթողիկոսին և Ն. Աշտարակեցուն հղած՝ գաղթական հայերի բազմաթիվ դիմումներից մեկում,— քան այսպիսի ճորտական դրության մեջ ընկնել»[24]։ Ավելին, Լեոին հայտնի էին 1829—1830 թթ. սահմանն անցնելու, գաղթականների հետադարձ շարժման հարյուրավոր փաստեր։ Սակայն դրանք չկարողացան ճնշել պատմաբանին, երբ վերջինս արժեքավորում էր զանգվածային տունդարձի ամբողջական երևույթը։ Դրա շնորհիվ էր, ասում էր Լեոն, որ ավերված ու դատարկված երկիրը սկսեց արագորեն շենանալ, սկսեց մեր ժողովրդի դանդաղ, բայց հաստատուն զարգացումը։ Լեոն ճիշտ այն տեսակետն ուներ, որ ռուսական տիրապետությունը բարերար ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի տնտեսական զարգացման վրա։

Միշտ չէ, սակայն, որ նշանավոր պատմաբանը հավատարիմ մնաց տակավին 80-ական թվականներին իր խոկ կողմից առաջ

---

22 «Մշակ», 1900, № 92։

23 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոի անձնական ֆոնդ, ֆ. 1, ց. 1, էջ 171։

24 Նույն տեղում, գ. 27։

քաշած այն մտքին, թե պատմաբանը պետք է ճանաչի ժողովրդի ոգին, նրա կյանքի հոսքը և կեցության կերպը[25]։ Հետագայում, հետհոկտեմբերյան շրջանի իր մի շարք ստեղծագործություններում, նա չկարողացավ օբյեկտիվորեն արտացոլել հայ ազատագրական պայքարի առանձին կողմերն ու առանձնահատկությունները։ 1919—1920 թվականներին գրած «Հայոց պատմության» 3-րդ հատորում, հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի մասին Երևանի համալսարանում կարդացած դասախոսություններում, «Անցյալից», «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», «Խոջայական կապիտալ» և այլ աշխատություններում Լեոն սուբյեկտիվիստական վերաբերմունք էր հանդես բերում դեպի հայերի ռուսական կողմնորոշումը, հայ ազատագրական շարժումն ու նրա գործիչները։

Գտնելով, որ ցարական ռեժիմի պայմաններում «անկարելի էր պատշաճավոր խորությամբ ու խստությամբ քննադատորեն վերաբերվել դեպքերին ու գործիչներին» և որ միայն սովետական կարգերի ժամանակ է հնարավոր «անաչառ գիտական-քննադատական վերլուծումների» ենթարկել պատմությունը և այդ ճանապարհով հասնել «իսկապես արդարև և ճշմարիտ խոսքի»[26] Լեոն քննադատության տակ առավ ամենից առաջ Կ. Եղյանին, որը, ըստ նրա «խնամքով» թաքցրել ու ոսկեզօծել է «ցարական և հայ կղերական քաղաքականության մեղքերը»[27]։

Ճիշտ բնութագրելով Կ. Եղյանին, Լեոն սխալվում էր սակայն, երբ բացարձակ քար էր նետում Ռուսաստանին՝ չզատորոշելով Անդրկովկասը նվաճող ճորտատերերի և վաճառականության շահերի պաշտպան ցարիզմը՝ նույն ցարիզմի կողմից ստրկացված ռուս ժողովրդից։ Ռուսական ցարիզմին ու նրա բյուրոկրատիային մեղադրելով հայերի քաղաքական ակնկալությունների կործանման մեջ, Լեոն ռուս ցարերի արտաքին քաղաքական խարդավանքներին աշխատում էր մեղսակից դարձնել նաև հայ ազատագրական շարժման գործիչներին, որոնց թվում նաև Հովսեփ Արղությանին ու Ն. Աշտարակեցուն։ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի մա-

---

25 Տե՛ս «Փորձ», 1883, № 19, էջ 118։

26 Լեո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, պրակ առաջին, Երևան, 1926, էջ 130։

27 Նույն տեղում։

սին Եզյանի այն տողերը, թե «նա հաստատեց յուր ամբողջ հոտի գիտակցության մեջ այն գաղափարը, թե հայ ազգի ուղիղ հասկացած շահերը լիովին համակերպ են Ռուսաստանի շահերին և դրա բարձր կոչմանն Արևելքում...»[28]: Լեոն հայտարարեց «ստրկային հպատակություն»[29]: Մասնավորապես հայ ազատագրական շարժման անցանկալի հետևանքները նա որոնում էր այն բանում, որ ռուսական «խարդախ» քաղաքականությանն ընդառաջում էր հայ կղերական «ստրկամիտ» դիվանագիտությունը: Պատմաբանի կարծիքով Աշտարակեցին «ամենքից ճանաչված և գնահատված մի լրտեսապետ էր, որ ամեն տեղից հավաքում էր տեղեկություններ և հայտնում էր Կովկասյան գլխավոր հրամանատարին»[30]:

Կյանքի վերջին շրջանում Լեոի այս գնահատումների էությունը կարելի է բանաձևել այսպես՝ ցարիզմը չկատարեց հայերին տված բազում իր խոստումները: Մերկացումների առարկան և հարվածների ենթական Լեոի մոտ ամենից առաջ և բոլորից շատ ցարիզմն էր՝ վերջինիս երկդիմի քաղաքականությունը, սակայն Լեոն ավելի շատ մեղադրում, քան բացատրում ու բացահայտում էր քննարկվող երևույթների հիմքերն ու պատճառները, մոռանալով, որ չափազանցությունը երբեք առաքինություն չէ, մանավանդ իրողություններին լավատեղյակ պատմաբանի համար, որից պահանջվում է պատմական դեպքերի անաչառ ու խոհուն կշռադատում:

Սակայն ինչքան էլ Լեոն աչք փակեր պատմական իրողությունների առջև, մոռացության տար Վ. Ի. Լենինի ասույթները երկու Ռուսաստանի մասին ու խտացներ ցարիզմի «խարդախ» քաղաքականության գույները՝ հարկադրված էր խոստովանելու, որ «ծաղմոլ ու շահամոլ» ռուսական նվաճողականությունը, այնուամենայնիվ «նման չէր նախընթացներին գեթ նրանով, որ անհպատի ամայություն չէր բերում երկրներին և կոտորած ու ավերում՝ նրա բնակիչներին»: Այս նշանակում է, որ Լեոն շարունակում էր ունենալ այն խոր գիտակցությունը, որ նվաճելով Մերձավոր Արևելքը, Ռուսաստանը նրան ենթարկում էր իր ցարական

---

28 «Լումայ» 1904, № 6, էջ 42:

29 Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, պրակ առաջին, Երևան, 1926, էջ 182:

30 Նույն տեղում, պրակ երկրորդ, 1927, էջ 126:

ծանր ռեժիմին, բայց նվաճած երկրները ակամա ներգրավում Ռուսաստանում ծավալվող հզոր շարժումների մեջ՝ հնարավորություն տալով նվաճված ժողովուրդներին հաղորդակից դառնալու եվրոպական մշակույթին[31]։ Հարկ է, մանավանդ, նշել գոհունակությամբ, որ հայ մշակույթի այդ մեծ երախտավորը իր կյանքի վերջին շրջանում մեկընդմիշտ կանգնեց սովետական կարգերի պաշտպանության դիրքերում։

Իր «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ Լեոն բարձր գնահատեց հայ հայրենիքի բնօրրանում սովետական կարգերի հաղթանակը ոչ միայն այն տեսակետից, որ այն ժողովրդին բերեց սոցիալական ազատագրություն, այլև այն տեսակետից, որ «իսպառ ոչնչանալու վտանգը կախված էր և արևելահայության վրից, եթե Անդրկովկասը խորհրդային իշխանության տակ չմտներ և նրա կարմիր բանակը չգար մեր երկիրը՝ ազգերի մեջ խաղաղություն և հաշտություն հաստատելու համար»[32]։

* * *

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացնելու պրոբլեմին բաղում առիթներով անդրադարձան նաև 20-րդ դարի առաջին քսանամյակի հայ հասարակական-քաղաքական մտքի նաև այլ ներկայացուցիչներ։

Դաշնակրգային հարաբերությունների բյուրեղացման, բուրժուազիայի առանձին թևերի միջև եղած նախկին տարբերությունների համահարթման այդ պահին, գոհ ցարիզմի ընձեռած բարիքներից, նրանից մատնակի բարեշրջումներ հայցող հայ լիբերալիզմի համախոհները անտարբեր չէին անցնում Ռուսաստանի հետ Վրաստանի «կամավոր» միացման 100-ամյակի հանդիսավոր տոնակատարության կողքով։

Շավալուն մենագրություններ նրանք չնվիրեցին, հարկավ, բայց մամուլում հրապարակած հոդվածներում, մի ավելորդ անգամ, ակնբախ դարձրին իրենց ազգային-քաղաքական մտածողության սահմանափակությունը։ Ալեքսանդր Առաջինի 1801

---

31 Լեո, Հայոց Պատմություն, Նորագույն շրջան, մասն առաջին, էջ 162։

32 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատոր Ա, Փարիզ, 1934, էջ 5։

թվականի սեպտեմբերի 12-ի հրովարտակի՝ «Հիմնել Վրաստանում կառավարություն, որ կարողանա հաստատել անձի, գույքի ապահովության և յուրաքանչյուրին տա օրենքի համահավասար պաշտպանություն» տողերի մեկնաբանությունն իսկ բավարար է որոշելու համար դրանց հեղինակի դիրքավորման լիբերալ բնակավապետությունը: «Այդ խոսքերի մեջ ամփոփված են այն հիմնական պայմանները,— գրում էր նա,— առանց որոնց չի կարող ոչ մի երկրում գոյություն ունենալ խաղաղ, կուլտուրական զարգացում: Այդ Sine gua non պայմաններից զուրկ էր ոչ միայն Վրաստանը, այլև նրա բախտակից Հայաստանը, ինչպես և առհասարակ ասիական բռնության ենթարկված ամեն մի երկիր: Այդ պայմաններից զուրկ են դեռևս այսօր մեր հարևան Թուրքիան և Պարսկաստանը և այդ է գլխավոր պատճառը դրանց ժողովուրդների թշվառության և հետամնացության»[33]:

Հիրավի, հեղինակի նշված երկրներում 20-րդ դարի արշալույսին այնպիսի խավար էր թագավորում, որոնք սովորական էին հարյուր տարի առաջ Անդրկովկասում, երբ ստեղծարար աշխատանքով զբաղված ժողովուրդը ենթակա էր ոչ միայն ավազակաբարո ցեղերի մշտական արշավանքներին ու սպառնակություններին, այլև սեփական իշխանավորների ու պաշտոնյաների անսահման կամայականություններին ու հարստահարություններին:

Լևոն Սարգսյանը մի զգալի չափով հաղթահարել էր ռուսական ցարիզմին «ազատագրական միսիա» վերագրող ռուս պաշտոնական պատմագիտության և 19-րդ դարի 80—90-ական թվականների հայ հեղինակների մոլորությունը: «Վրաց իշխաններից և հայ մելիքներից շատերը, —գրում էր նա, —դեռ մի քանի դար առաջ դիմումներ էին անում Ռուսաստանին և նրա պաշտպանություն խնդրում: Սակայն մինչև որ Ռուսաստանի սահմանները չհասան Կովկասյան լեռների վիթխարի պատնեշին՝ ռուսաց ցարերը առանձին նշանակություն չէին տալիս այդ դիմումներին»[34]: Լ. Սարգսյանին ու նրա համախոհներին չէր հրապուրում Վրաստանի և ռուսական Հայաստանի քաղաքական հեռանկարները: Նրանք բավարար ու գոհ էին այնքանով, որքանով բովանդակ

---

33 Լ. Սարգսյան, Վրաստանի միացումը Ռուսաստանին, «Մուրճ» 1901, № 9, էջ 218—219:

34 «Մուրճ» 1901, № 9, էջ 220:

Կովկասն այդ պահին գտնվում էր «եվրոպական քաղաքակրթության շավղի վրա» և քանի գնում ավելի «հեռանում էր նախկին բախտակից ասիական երկրներից»[35]: Իսկ վրացիների ու հայերի համար, ըստ հեղինակի, ռուսական տիրապետության ամենաշոշափելի օգուտն այն էր, որ «ամեն օր կյանքի, գույքի և պատվի համար դողացող թշվառ վրացին ու հայը վերջապես հանգիստ շունչ քաշեցին եվրոպականաձև կառավարության ներքև»[36]: Ավելին, հեղինակի կարծիքով, Վրաստանի համար մի մեծ կայսրության գավառ լինելն ավելին արժեր, քան թագավորություն կոչվելու ունայն փառքը, որովհետև նրա անցյալի գահակալները միայն վեհափառության սուվերներ էին՝ գահի վրա բազմած, մինչդեռ իրական տերերը լեզգիներն ու ուրիշ արշավողներն էին, որոնք ոտնակոխ էին անում երկիրը և հափշտակում պետության հեղինակությունը:

Հեղինակը ոչինչ չէր ասում 1801 թ. Վրաստանի՝ Ռուսաստանին միացման այլևայլ հանգամանքների մասին: Ավելին, ցարական «մեծահոգի» հրովարտակի նրա մեկնաբանությունից ստացվում է այն տպավորությունը, որ միայն ռուսահպատակության աղերսանք էր լսվել Վրաստանի լեռներից: Լ. Սարգսյանը չբացահայտեց նաև ցարիզմի սոցիալ-դասակարգային էությունից բխող նրա քաղաքականության կեռմանների էությունը: Հայ իրականության տիրող դասակարգը՝ բուրժուազիան լծորդված իր ավագ գործընկեր ռուսական բուրժուազիային և ընդօրինակելով նրան՝ պահանջում էր միմիայն տնտեսական գործունեության լայն հնարավորություններ և համապատասխանորեն՝ որոշ իրավունքներ[37]: Հատկանշական էր, որ հայկական եկեղեցու ավանդական իրավունքների ջերմ պաշտպան, պահպանողական հայացքների տեր Օրմանյանն անգամ հայ եկեղեցական գույքի բռնագրավման օրենքի դեմ բավարարվեց միայն կրավորական բողոքարկումով:

Հայ իրականության տիրապետող դասակարգը՝ բուրժուազիան երկչոտ էր, նրան սպասարկող կամ հարող մտավորականությունը՝ նույնպես: Նա ոչինչ չէր ակնարկում հայ ազգային-քաղաքական «կորուսյալ դրախտի» մասին, այլ բավարարվում ռու-

---

35 Նույն տեղում, էջ 221:

36 Նույն տեղում:

37 Դ. Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Երևան, 1964, էջ 91:

սական տիրապետության ու Կովկասի նրա նախկին տեղապահների հասցեին օրհներգներ ձոնելով։ «Բախտի բերմամբ, —գրում էր ազգային լիբերալ հրապարակագիր Լ. Սարգսյանը,— այդ կարևոր մոմենտում Կովկասի վարչական ղեկը գտնվում էր այնպիսի լուսավոր, մարդասեր և աշխարհաշեն անձանց ձեռքում, ինչպես էին Վորոնցովը և ապա մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը։ Այդ երկու փոխարքայությունների ժամանակ սկսեց վերածնվել արևվելյան բռնակալությունների օրոք ավերված ու ամայացված երկիրը։ Ազգաբնակչությունը աճեց, տնտեսական կյանքը կենդանացավ, քաղաքական կարգեր ներմուծվեցին մշտական խոռվությունների և արյունահեղությունների երկրում։ Դարեհի և Լանկթամուրների ժամանակներից սկսած բռնակալ սատրապների անսանձ քմահաճույքներին վարժված ասիացիները՝ սկսում էին նոր-նոր գաղափար կազմել իսկական կուսակալների մասին»[38]։

Դժվար չէ տեսնել, որ Անդրկովկասում Ռուսաստանի կատարած առաջադիմական դերը և այստեղ ցարիզմի գաղութատիրության առաջադրած խնդիրները կենսագործող կուսակալների գործունեությունը Լ. Սարգսյանը չէր զատորոշում միմյանցից։ Խորամուխ չլինելով հայ ժողովրդի վերջին հարյուրամյակի պատմական զարգացման օրինաչափությունների մեջ, նա, փաստորեն, մեծ էր համարում զարգացման առաջընթացի բուն գլուղափարը, իսկ փոխարենը, առաջարկում՝ խոսել միայն «տիրողների փոփոխության» մասին։

Ռուսական տիրապետության գնահատման հարցում միանգամայն այլ ելակետ ուներ արևմտահայ հայտնի հրապարակագիր Արշակ Չոպանյանը։ Ըստ նրա, պատմությունը չի կարող չանտեսել ցարիզմի գաղութային քաղաքականության նպատակները և ոչ էլ թերագնահատել ռուսական տիրապետության առաջադիմական իրողությունը։

Ա. Չոպանյանը տարանջատում էր ռուս ժողովրդի «ընդհանուր քաղաքակրթական» դերը՝ ցարիզմի գաղութային քաղաքականության առաջադրած խնդիրներից»[39]։

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմին նույն դիրքերից էր մերձենում և «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության («սպեցիֆիկներ») ղեկավար-

---

38 «Մուրճ» 1901, էջ 121։

39 Ա. Չոպանյան, Ռուսիա և հայերը, «Անահիտ» 1906, թիվ 3—4—5, էջ 41։

ներից մեկը՝ Դավիթ Անանունը (Դավիթ Տեր-Դանիելյան)։ Նրա «Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում» եռհատորյակը և մամուլում հրապարակած բազմաթիվ հոդվածները՝ իրենց անընդունելի մեթոդոլոգիայով ու սխալներով հանդերձ, ուշագրավ որոշ մտքեր և նյութ են պարունակում ուսումնասիրվող հարցի վերաբերյալ։ Նա ճիշտ էր բացատրում Ռուսաստանի կողմից Արևելյան Հայաստանի և ողջ Անդրկովկասի գրավման հապաղման պատճառները։ Ըստ Անանունի, Անդրկովկասին տիրելու և Արևելքի հետ անմիջական հաղորդակցություն ունենալու Ռուսաստանի իղձերը՝ ընդհուպ մինչև 18-րդ դարի վերջերը մնացին անկատար, որովհետև «նա դեռ այնքան հզոր և պատրաստ չէր այդ քայլերի համար»։ Հենց դա էր պատճառը, որ ստիպված «նա հուսադրում էր Պարսկաստանի հպատակ քրիստոնյաներին, վրացիներին ու հայերին, թելադրում էր նրանց պատրաստվել ապագայի համար, խոստանում էր նրանց անկախություն և հովանավորություն և այլն»[40]։

Հեղինակը ճիշտ էր վարվում, երբ Վրաստանի միացման վերաբերյալ Ալեքսանդր Առաջինի հրովարտակը հայտարարում էր «ռուսական նվաճողական քաղաքականության առաջին քայլ»...

Իբրև դրա լավագույն օրինակ, հեղինակը վկայակոչում էր Վրաստանը, որտեղ իր դիրքերն ամրապնդելուց հետո ցարիզմը «ամեն կերպ ջանում էր արմատախիլ անել անկախ Վրաստանի հիշողությունը»[41]։ Այդ քաղաքականությունը նույնն էր նաև Հայաստանում, ուր ցարիզմը հետամուտ էր. նախ՝ արգելակել ու հնարավորություն չտալ ոչ միայն ինքնուրույն, այլև ներքին ինքնավարության ձևով ազգային պետականության հանդես գալու հնարավորությունը, երկրամասը լիովին ենթարկել ցարական կառավարությանը, այնտեղ մտցնել գաղութային կառավարման ռազմա-բյուրոկրատական սիստեմ և այն վերածել կայսրության ծայրամասային սոսկ մի գավառի։ Երկրորդ՝ Հայկական մարզի բնական ռեսուրսների գիշատիչ շահագործման, հարկային-ֆինանսական քաղաքականության և մայր երկրի համար վաճառահանման շուկա դարձնելու միջոցով այն ենթարկել գաղութային տնտեսական կեղեքման։ Երրորդ՝ ազգային լեզվի ու մշակույթի

---

40 Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում, հատոր 1-ին, Բաքու, 1916, էջ 1։

41 Նույն տեղում, էջ 111։

նկատմամբ հալածանքների միջոցով ժողովրդական զանգվածներին պահել խավարի ու տգիտության մեջ, խեղդել բոլոր տեսակի առաջադեմ դաղափարները և սիստեմատիկաբար իրականացնել ռուսացման քաղաքականություն։ Եվ վերջապես՝ նորագրավ երկրում վերաբնակեցնել ռուս գաղթականներ և արտոնություններ տալ տեղի ֆեոդալական վերնախավին, նրան օգտագործել իբրև հենարան իր տիրապետության ամրապնդման և գաղութային քաղաքականության իրականացման համար։ Գաղութային քաղաքականության այս բոլոր գծերը, ասում էր Դ. Անանունը, ցարիզմը սկսեց իրագործել աստիճանաբար՝ սկսած Անդրկովկասի գրավման առաջին իսկ տարիներից[42]։

«Գաղտնիք չէ,— գրում էր Անանունը,— որ մենք հայերս, շատ վատություններ կրելով ռուսական ռեժիմից՝ այնուամենայնիվ երախտապարտ ենք Ռուսաստանին։ Ռուսաստանի իրավարար ուժը Անդրկովկասում զորավիգ է եղել, որ մեր նկատմամբ հավասար տեղ ու իրավունք նվաճվի երեկվա տիրողների հետ»[43]։ Դ. Անանունը քննադատում էր Վրաստանի քաղաքական տերիտորիալ ինքնավարության այն կողմնակիցներին, որոնք իրենց պահանջին նեցուկ էին կանչում ոչ միայն հնօրյա պատմությունը, այլև վերջին ռուս-վրացական բանակցությունները, 1783 թ. դաշնագիրը, որի համաձայն Վրաստանը ճանաչում էր Ռուսաստանի հովանավորությունը, բայց պահպանում էր իր օրենսդրությունն ու կառավարությունը, իր գանձարանը, դատարանն ու եկեղեցին։

Իսկ ինչպե՞ս գնահատել այն փաստը, որ «Ռուսաստանի տիրապետությունը ստեղծեց միաձույլ Վրաստան»։ Համենայն դեպս դրա մեջ հետադիմության տեսնել հնարավոր չէ, որովհետև ռուսական տիրապետությունը հնարավորություն ընձեռեց տանջված ու բզկտված ժողովուրդներին գոնե ապահով լինել վեհանականներից և դրսեկ մյուս թշնամիներից։ «Վրաց հեղինակներն այս հանգամանքը հաշվի չեն առնում, որով և ցույց են տալիս, որ տարբերել չգիտեն անխուսափելի չարիքներից փոքրագույնը»[44]։

Ռուսական տիրապետությունը նա «բացարձակ բարիք» էր համարում Անդրկովկասի ժողովուրդների համար, որովհետև

---

42 Նույն տեղում, էջ 128—134։

43 Դ. Անանուն, Անդրկովկասի վարչական բաժանումը, «Գործ» 1917, № 10, էջ 163։

44 Դ. Անանուն, Ազատություն և անհրաժեշտություն, «Գործ», 1917, № 5—6, էջ 149։

«Վրաստանի հնդհեղուկ և անապահով կյանքի փոխարեն Ռուսական տիրապետությունը իր հետ բերից հաստատ կարգ ու կանոն[45], իսկ հայկական «տարբեր գավառ խանություններում... նախ փլվեցին բոլոր խանական միջնադարիսպները, որ դժվարացնում էին ամեն մի փոխանակություն։ Ապա Անդրկովկասը մտավ անմիջական հարաբերությունների մեջ մի լայնածավալ և համեմատաբար բարձր կուլտուրա ունեցող երկրի հետ, ինչպիսին էր Ռուսաստանը։ Երկրորդ՝ Անդրկովկասում մշտական բնակություն հաստատեց մի ստվար տարր՝ ռուս պաշտոնեությունը և զորքը, որը, որպես տպատող, նոր պահանջներ առաջադրեց երկրի առևտրին և արհեստին։ Եվ ի նկատի ունենք, որ այդ տարրը, որպես տպատող, նման չէր նախկին պետական կազմի պաշտոնեությանը. նա միայն բաժին չէր ստանում երկրի արտադրած բարիքներից, այլև վճարում էր ստացած բաժնի արժեքը։ Ռուսները խոշոր քանակությամբ դրամ մտցրին Անդրկովկաս։ Մշտական պատերազմները խոշոր ծախքերի դուռն էին բանում։ Ծախքերի խոշոր մասը կատարվում էր Անդրկովկասում։ Բնակչությունն այսպիսով հնարավորություն ուներ հնչուն դրամի վերածել իր մթերքները և արհեստի արտադրանքները։ Իսկ դա նշան էր, որ հին կայուն դրությունը տեղի է տալիս, երկրի բնական տնտեսության հիմքերը խախտվում են, որ ծայր է տալիս և հաղթական արշավ հրապարակ գալիս ապրանքներ արտադրող, ապրանքներով փոխհարաբերություններ ստեղծող հասարակարգը»[46]։ Այսպիսով, եթե Ա. Երիցյանը տրտնջում էր ռուսական կապիտալի քայքայիչ գործունեության հետևանքներից, ապա ուղիղ քառորդ դար ուշ Դ. Անանունի համար նույն այդ կապիտալը Անդրկովկասի տնտեսական կյանքի համար ունեցավ կարևոր նշանակություն, քանի որ այն երկրի «արհեստի ու ձեռագործի» դեմ հրապարակ հանեց Վ. Ի. Լենինի արտահայտությամբ՝ բուն Ռուսաստանի և արտասահմանի գործարանների մրցակցությունը։ Եթե «պարսիկն ու օսմանցին կարող էին պատերազմել ու կողոպտել», ապա կողոպուտն ու թալանը ռուսի համար սիստեմ չէր, ընդհակառակը՝ «Ռուսական տիրապետությունը 300 հազար հայերի համար բերում էր քաղաքական կյանքի նոր պայմաններ։ Այլևս այդ 300-հազարանոց

---

45 Դ. Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարթացումը 19-րդ դարում*, Հատ. 1, Բաքու, 1916, էջ 7։

46 Նույն տեղում, էջ 112։

բազմութիւնը սկսում էր զարգանալ միևնույն հասարակական և քաղաքական կարգերի տակ, մի առավելություն, որ դոյություն չուներ հին՝ իրարից բաժան-բաժան և իրար բղկտող մանր-մունր իշխանությունների մեջ»[47]:

Քննարկվող պրոբլեմի վերաբերյալ վերոհիշյալ ճիշտ դրույթների ու մտքերի կողքին՝ մենք Դ. Անանունի մոտ հանդիպում ենք նաև մի շարք սխալների, որոնք հանգում են հետևյալին.

Իրեն մատերիալիստ ու մարքսիստ համարող Դ. Անանունը ընկնում էր վոլյունտարիզմի ոստայնը, երբ հայկական պետականության և իշխանական տների անկման պատճառը բացատրում էր «զարգացած և ուժեղ քաղաքների»[48] բացակայությամբ:

Նա սքողում կամ սևացնում էր 19-րդ դարի առաջին երեսնամյակի հայ ժողովրդի պատմությունը, երբ գրում էր, թե լուսավորյալ Ռուսաստանի և ավատական-ցեղապետական Պարսկաստանի բախման մոմենտին հայությունը «գլխակորույս հոտ էր և չուներ որևէ առանձին նպատակ: Նա մուրացիկ էր և նրան փերկում էին»[49]»:

Իդեալիստական էր հեղինակի այն հարցադրումը, թե ռուսական տիրապետությունից հայերը առավել բարիքներ կստանային, եթե «քաղաքական նկատումներով գուրգուրված հայ և թուրք բնիկներից կուլտուրական արիստոկրատիա»[50] ստեղծվեր:

Անանունը դժգոհ էր, որ «Երկրի նոր տերը խտրության ոգին չմերժեց: Թուրք բեկը և հայ մելիքը ճանաչվեցին հավասար: Ճիշտ է, թուրք բեկությունը իր ուժի շնորհիվ և քաղաքական նկատումներով ավելի էր արժանանում ուշադրության և հարգանքի, սակայն հիմնական խնդիրներում իրավահավասարության սկզբունքը չէր խախտվում»[51]: Նա աղաղակող հակասություն էր տեսնում՝ ցարիզմի հայերին տված երեսնի խոստումների և 1840-ական թվականների իրականության միջև, մոռանալով, որ այդպես էր թելադրում նորեկ իշխանության սոցիալ-դասակարգային էությունն ու երկրամասի գաղութացման նրա միտումները:

Դ. Անանունը «...ողբալով հայերի բախտը, մոլորված ու

---

47 Նույն տեղում, էջ 110:

48 Նույն տեղում, էջ 2:

49 Նույն տեղում, էջ 107—108:

50 Նույն տեղում, էջ 149:

51 Նույն տեղում, էջ 171:

տարակուսած լինելով հայ ժողովրդի ապագայի նկատմամբ, այնուամենայնիվ, հավատարիմ լինելով մանր ազգերի իդեոլոգների տրադիցիային... աշխատում է ամենից առաջ հավատացնել, որ հայ ազգը սեպարատիստական ձգտումներ չունի, որ նա՝ հանձինս իր բոլոր հասարակական-քաղաքական հոսանքների՝ միանգամայն լոյալ ու հավատարիմ է եղել միշտ ռուս պետության վերաբերմամբ»[52]:

Ռուսաստանում հայ ժողովրդի փրկության բարեհուսո ապագան Դ. Անանունը տեսնում էր «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» մեջ, մի տեսություն, որի պաշտպան էր կանգնած՝ «Ին տերտերական» «Հովիտը» թե հայ վաճառականների օրգան «Մշակը» և թե մանր-բուրժուական և քաղքենիական ինտելիգենցիայի բերան «Հորիզոնը»[53]: Եվ վերջապես շեշտը դնելով «հայության հավաքման» պրոցեսի ոսոումնասիրության վրա՝ հեղինակը տրամադիր է շրջանցելու դասակարգային հակամարտության այն պրոցեսները, որոնք բուռն ընթացք էին ստանում ռուսահայերի հասարակական զարգացման այդ էտապում և ազդեցության կնիք դնում նրանց մտքի պատմության վրա:

Անհրաժեշտ են համարում քննարկվող պրոբլեմների առնչությամբ մի քանի խոսք ասել նաև Վրթանես Փափազյանի պատմագիտական ըմբռնումների մասին, որն իր ստեղծագործություններում արտահայտում էր քաղաքի ու գյուղի մանր-բուրժուական շերտերի դեմոկրատական տրամադրությունները:

Որքան ցասկոտ ու կրքոտ էր պարսկա-թուրքական բռնատիրական կարգերի նկատմամբ Վ. Փափազյանի քննադատությունը, նույնքան դրվատական ու բարյացակամ էին նրա խոսքերը՝ կովկասահայերի տնտեսական ու մշակութային զարգացումն ապահովող ռուսական տիրապետության հասցեին:

«Կովկասի մեծ մասը հայաբնակ նահանգների հետ ռուսաց ձեռքն ացնելուց հետո,— ասում էր նա,— վերջնականորեն, հայերը տնտեսապես սկսեցին կազդուրվել, տեղավորվել, երկրագործության ու վաճառականության նվիրել իրենց և դարմանել բոլոր կրած անցյալ դառն նեղությունները: Նյութական ապահովությունը շուտով ստեղծեց նաև կուլտուրական (կենսակրթական) կյանք:

Իրենց նպաստավոր դրության շնորհիվ, ռուսահայերը շատ

52 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. երկրորդ, Երևան, 1957, էջ 376:
53 Նույն տեղում, էջ 272:

քիչ ժամանակում մեծ առաջադիմություն սկսեցին անել, քան թուրքահայ, դեռևս մահմեդական լծի տակ սմքած՝ եղբայրները»[54]:

Հեղինակն իր երախտապարտությունն էր հայտնում Ռուսաստանին, մասնավորապես այն բանի համար, որ նրա հովանուներքո Արևելյան Հայաստանը դարձել էր հայ զանգվածների համախմբման կենտրոնատեղին: Փափազյանը, այս տեսակետից, պարսկահայ ներգաղթից պակաս կարևորություն չէր տալիս և արևմտահայ գաղթականությանը, որի շնորհիվ «Ռուսական Հայաստանը շենանում էր, բազմահայ դառնում և իր ուրույն կյանքը ունենում»[55]: Արևելահայերի «ուրույն կյանքի» ամենահատկանշական կողմն այն էր, որ ժողովուրդը հնարավորություն ստացավ ազատ շունչ քաշել, օգտվել երկրի ապահովությունից ու անտեսապես շենանալ: Ավելին, բարեհաջող պայմանները լայնորեն բացարին երկրի դռները «արդյունագործական ձեռնարկների, առևտրական երթևեկության, այլև Եվրոպայից և Ռուսաստանից եկող հանապարհորդների առաջ»[56]:

Բարձր գնահատելով արևելահայ կյանքում ռուսական տիրապետության դրական հետևանքները, Վ. Փափազյանը սխալվում էր սակայն, երբ տուրք էր տալիս ռուս ցարերի «քաջալերիչ ձեռնարկներին» և իդեալականացնում ցարական օրենքները: Նա հստակ պատկերացում չուներ հասարակության զարգացման հիմնական զսպանակների՝ արտադրողական ուժերի, արտադրական հարաբերությունների, դասակարգային պայքարի ու նման երևույթների մասին: Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի պատմության նրա ըմբռնումը իդեալիստական էր: Նվ դա էլ նկատի ուներ Ստ. Շահումյանը, երբ «Վ. Փափազյանը պատմագետի դերում» իր աշխատության մեջ սուր քննադատության էր ենթարկում «Բաքվի հայոց կուլտուրական մխության» հրատարակությամբ լույս տեսած «Դրվագներ հայոց պատմությունից» իրենց բոլոշյուրները, որի կազմողներից մեկն էլ Փափազյանն էր:

Շահումյանը ցույց է տալիս, որ այդ դրքույկները խեղաթյուրում են պատմության իսկական իրողությունները և անհիմն կեր-

---

54 Վ. Փափազյան, Պատմություն հայոց դրականության, Թիֆլիս, 1910, էջ 321:

55 Նույն տեղում, էջ 317:

56 Նույն տեղում, էջ 335:

պրակ դուրս գրում «իմաստուն ու ժողովրդասեր թագավորներին, իշխաններին ու ոչինչ չեն տալիս ընթերցողի մտքին։ Մինչդեռ դեմոկրատ պատմագրողը պետք է ներկայացնի ժողովրդին, քանի որ «պատմության ընթացքը պայմանավորողն ու որոշողը ոչ թե արտաքին դեպքերն են, որքան էլ աղմկահույզ ու էֆեկտավոր լինեն նրանք, այլ ժողովրդական մասսաների առօրյա, ընթացիկ «խաղաղ» տնտեսական կյանքը, նրանց արդյունաբերական պրոցեսը, նրանց ներքին դասակարգային հարաբերությունները»[57]։ «Ժողովրդի պատմությունը ներկայացնել կարողանալու համար, Շահումյանը անհրաժեշտ էր համարում, որ «գրողն ունենա քիչ թե շատ պատմական աշխարհայացք, պատմական տեսակետ, որի օգնությամբ նա կարող լինի քննադատորեն վերաբերվել իր նյութին և իր գրվածքով կրթական ու դարգացուցիչ ազդեցություն ունենա ընթերցողի վրա»[58]։

Այսպիսով, հետևելով մեր շարադրանքին և առաջնորդող սկզբունք ընդունելով պատմաբանին ներկայացվող Ստ. Շահումյանի պահանջը, դժվար չէ դիտել, որ 20-րդ դարի առաջին քսանամյակի հայ հասարակական մտքի և պատմագրության ներկայացուցիչները, մնալով իդեալիստական աշխարհայեցողության նեղ շրջանակներում, չկարողացան հաղթահարել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պրոբլեմի բարդությունը։ Հարկավ, նրանցից ոմանք ազատագրվել էին ցարիզմին «ազատագրական» միսիա վերագրող անցյալի հեղինակների մոլորությունից, սակայն լիբերալ և պահպանողական մտածողությունը, նման պայմաններում, անարգել դուռ էր բացում էկլեկտաիզմի և մեթոդոլոգիական սխալների առջև։

Հայ պատմա-հասարակական մտքի ներկայացուցիչները միապես չէին ընկալում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական իրողությունը։ Վերջինիս նրանց մեկնաբանությունը ոչ միայն տարբեր էր, այլև հաճախ ուղղակի հակադիր։ Նրանք, իբրև կանոն, ելնելով իրենց դասակարգային նեղմտության, կամ խոցում էին ցարիզմի գաղութային քաղաքականության դույները, կամ լոկ ներբողում ռուս ցարերին, սրանց տեղապահների «աշխարհաշեն» հրամաններն ու ձեռնարկները։

---

57 Ստ. Շահումյան, երկեր, հատ. 2-րդ, Երևան, 1957, էջ 215։

58 Նույն տեղում, էջ 200։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պրոբլեմի գիտական և բազմակողմանի ուսումնասիրությունը սկսվեց սովետական պատմաբանների կողմից։ Այս ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Աշ. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Աբ. Հովհաննիսյանը, Ծ. Ազայանը, թղթակից-անդամ Վ. Ռշտունին, պրոֆեսորներ Վ. Պարսամյանը, Զ. Գրիգորյանը և ուրիշներ։

Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի ամուր դիրքերի վրա կանգնած և հետևողական դիալեկտիկական մոտեցողությամբ առաջնորդվող սովետահայ պատմագրությանը միայն հաջողվեց արևելահայերի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման օրինաչափությունների բացահայտման հանգամանքով, ցույց տալ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու շրջադարձային իրողության պատմական նշանակությունը։

«ՆՈՐՔ» ՀԱՆԴԵՍԸ

(ընդհանուր բնութագրություն)

Հ. Հ. ՖԵԼՆՔՅԱՆ

Խորհրդային հայ պարբերական մամուլը 20-ական թվականների սկզբներին, հասարակական-քաղաքական և սոցիալ-մանավանդ այլևայլ խնդիրների քննարկմանը զուգընթաց՝ կոչված էր կարևոր դեր խաղալու նաև նոր պայմաններում ձևավորվող գրականության, արվեստի ու գիտության զարգացման գործում։ Առաջընթացի ճշմարիտ ուղիների որոնման մի ժամանակաշրջան էր դա, երբ ծնվում էին նոր ըմբռնումներ և նոր սկզբունքներ էին արմատավորվում ներդրական սուր բախումների ոլորտում, արվեստի դեմոկրատացման, գիտության խնդիրները սովետական երկրին սոցիալիզմի կառուցման գործնական պահանջների հետ շաղկապելու սևեռուն ջանքերի մեջ։

Նորօրյա այդ ձգտումները, բնականաբար, առաջադրեցին համապատասխան տպագիր օրգաններ ունենալու պահանջը, որի բավարարումը, ինչ խոսք, առանձին անհատների եռանդուն նախաձեռնությունից ավելի՝ հասարակական անհրաժեշտության արդյունք էր նախ և առաջ։ Այսպես ծնունդ առան Հայաստանում գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական և գիտական առաջին պարբերականները։ Սրանց մեջ մի շարք առումներով առանձնանում է «Նորք»-ը, որը սպարեզ եկավ 1922 թ. վերջերին և գոյատևեց մինչև 1928 թվականը։ Հանդեսի 8 գրքերից 7-ը հրատարակվել են 1922—1926 թվականներին, վերջին համարը լույս է տեսել երկամյա ընդհատումից հետո. այնպես որ՝ սխալ չի լինի այն վերապահումը, թե «Նորք»-ի հրատարակությունը հիմնականում համընկել է ժողովրդական տնտեսության

վերականգնման ժամանակաշրջանին։ Այդ տարիներին են լույս տեսել Հայաստանում նաև «Մուրճ»-ը (1922—1923) «Պայքար»-ը (1923), «Վերելք»-ը (1924, մեկ համար էլ լույս է տեսել 1926-ին), «Նոր ակոս»-ը (1925), մի քանի մեծարյա գրական հրատարակություններ, գրական թևերում ունեցող մանկա-պատանեկան ու երիտասարդական պարբերականներ, երգիծական հանդեսներ, որոնք նույնպես որոշ չափով նպաստել են գրական-կուլտուրական կյանքի աշխուժացմանը, աշխատավորության քաղաքական դաստիարակմանը։

Անհրաժեշտ է նկատի առնել նաև, որ խորհրդային մյուս հանրապետություններում հրատարակվող հայերեն պարբերականներում ևս քննարկվել են հայ գրականության ու արվեստի խնդիրները։ Այլ հենց այստեղ է, որ ընդգծվում է խորհրդային հայ պարբերական մամուլի յուրահատկություններից մեկը. եթե անտեսական շինարարության հարցերը վերոհիշյալ օրգաններում արծարծվում էին ավելի հանրապետության առջև ծառացած կոնկրետ խնդիրների առնչությամբ, ապա գրականությունն ու արվեստը հենց այն բնագավառն էր, որտեղ հավասար պատրաստականություններ ու շահագրգռություններ ունեին բոլոր հայերեն պարբերականները՝ անկախ հրատարակության վայրից։

Բայց մեր խոսքն այստեղ Հայաստանում հրատարակվածների մասին է։ «Մուրճ»-ը լույս էր տեսնում իբրև գրական, գեղարվեստական-քննադատական պարբերական, «Պայքար»-ը, որ սկզբնապես «Խորհրդային Հայաստան» թերթի հավելվածն էր, համարվում էր գրական-գեղարվեստական հրատարակություն. սրան փոխարինելու եկած «Վերելք»-ը, ապա և «Նոր ակոս»-ը գրական-գեղարվեստական և հասարակական հանդեսների պարբերականների համարումն ունեին և հիմնականում արդարացնում էին իրենց այդ կոչումը։

* * *

«Նորք»-ը հրապարակ իջավ իբրև գրական, գիտական և բաղաքական հանդես։ Իր այդ բնույթից ելնելով էլ այս պարբերականը, ինչպես ծրագրել էր խմբագրությունը[1], հետամուտ էր երեք

1 Տե՛ս «Նորք», դիրք առաջին, 1922, «Խմբագրության կողմից»։

հիմնական նպատակի՝ ա) «արձանագրել այն արդյունքները, որոնց հասնում է հայ աշխատավորը նոր շինարարության ընթացքում». բ) «հանդես բերել մեր անելիքները քաղաքական, տնտեսական ու կուլտուրական բնագավառներում և լուսաբանել մեր անցյալը մարքսիստորեն». գ) ամեն կերպ սատարել նոր, սոցիալիստական հայ գրականության կազմավորմանը։ «Մեր հին գրականությունը հանդիսանալու վրա է և նոր գրական դեմքեր են վառվում». ելնելով այս իրողությունից, խմբագրությունը հավատում էր, որ իր «համակրանքը լինելու է նրանց կողմը, որոնք նոր աչքով կնայեն աշխարհի և կյանքի վրա, որոնց համար զուր չեն անցել վերջին տարիների արյունոտ վայրիվերումները, որոնք տեսնում են գալիքը և նշմարում նրա տարրերը նոր հատնատվող կենցաղի մեջ»։

Եվ երբ այս ծրագրային նպատակադրումների տեսանկյունից այսօր, ավելի քան քառասուն տարի անց, նորից անդրադառնում ենք «Նորք»-ի անցած ուղուն, միանգամայն պարզ ուրվագծվում է մեր առջև այն իրոք նշանակալից դերը, որ կատարել է այս հանդեսը 20-ական թվականներին՝ թե՛ արդիական հասարակական խնդիրների ընդգրկման ծավալով, թե՛ ժուռնալիստական-հրապարակախոսական օրինակելի մակարդակով և թե՛, մանավանդ, գրական քաղաքականության ճշմարիտ ըմբռնումով ու կիրառումով՝ իրարամերժ տեսակետների խաչաձևման բավականին բարդ իրադրության պայմաններում։

Իսկապես էլ, եթե մի պահ վերհիշենք այդ իրադրությունը, ապա ավելի ակնհայտ կդառնա «Նորք»-ի վաստակը մասնավորապես գրական ուղիներում։ 20-ական թվականների սկզբին նոր գրականության ստեղծման հնարավորությունների ու զարգացման հեռանկարների հարցը կենտրոնական ու կենսական էր նաև պարբերական մամուլի համար։ Այդ հիմնական, առանցքային պրոբլեմի շուրջն էին մերձենում կամ տարբերակվում գրական-գեղարվեստական ավանդների կենսունակության, «հին» ու «նոր» կադրերի փոխհարաբերության, «ազգային» և «համաշխարհային» բովանդակության, «մեռած» ու «ծնվող» ձևերի, գրական մթնոլորտի ու կենցաղի հետ առնչվող բազմաթիվ խնդիրներ, որոնց ուսումնասիրման համար այսօր բավականին հետաքրքիր և օբյեկտիվ նյութ է մատուցում գրականության պատմաբանին ժամանակի պարբերական մամուլը։ Այստեղ մենք հանդիպում ենք և՛ Հայաստանում պրոլետարական գրականության ստեղծման վաղաժամության վերաբերյալ կարծիքների, և՛ անցյալի ժառանգության

ցուցաբերվող «ձախ» պրոլետկուլտականության դրսևորումների, և՛ գրականության խնդիրների ճշմարիտ ընկալման ու առողջ մեկնաբանությունների:

Այս ամենը մամուլում լայն քննարկման նյութ դարձավ հատկապես այն բանից հետո, երբ «Խորհրդային Հայաստան»-ում լույս տեսավ «Դեկլարացիա երեքի» գրական մանիֆեստը[2], Ե. Չարենցի, Ա. Վշտունու և Գ. Աբովի ստորագրությամբ: Պատմականորեն պայմանավորված մի քանի գրական կողմերի, կամ ինչպես ճիշտ կերպով նկատված է՝ «գրական լիցքի» հետ մեկտեղ (գեղարվեստի մեջ քաղքենիական նացիոնալիզմի, ապադաստակարգայնության, ապոլոտիկ «չեզոքության» և էմֆեուիզմի մերժում-բացասում, արվեստի նոր ձևերի հայտագործման պահանջ և այլն), գրական բուռն բախումների տեղիք տվեց դեկլարացիայի «բացասական լիցքը», որը այրում-մոխրացնում էր անցյալի հետ կապող բոլոր կամուրջները, կլասիկան լրիվ դուրս էր նետում «արդիականության նավից»[3]:

«Դեկլարացիա»-ի սկզբունքների կողմնակիցների ու հակառակորդների միջև մամուլում բռնկվեց իսկական մի բանավեճ: Երկու կողմերն էլ հանդես էին գալիս իրենց տեսակետների պաշտպանությամբ: «Խորհրդային Հայաստան»-ում լույս տեսան Ե. Չարենցի, Գ. Աբովի, Ա. Վշտունու և այլոց հոդվածները, որոնց մեջ այսպանվում էր անցյալի կուլտուրական-գրական պրոգրեսիվ ավանդները նոր գրականության ստեղծմանը ծառայեցնելու անհրաժեշտությունը: «Մենք պետք է կազմակերպված պայքար մղենք հին արվեստի տրադիցիաների դեմ»[4],— գրում էր Ե. Չարենցը: «Անցել են Թումանյաններն իրենց կիսաֆեոդալական ու կիսագյուղացիական միամիտ ապրումների հետ, անցնում են նաև Տերյանները»[5],— ասում էր Գ. Աբովը: «Մեր» «վաստակավոր» և «հայտնի» գրողները,— հավաստիացնում էր Ա. Վշտունին,— իրենց քաղաքական համոզմունքով և հոգեկան խառնվածքով այնքան են հեռու կանգնած պրոլետարական գրականությունից, որքան Մասիսը Հիմալայան լեռնաշղթայից»[6]: Հին գեղարվեստը «բոլորո-

---

2 «Խորհրդային Հայաստան», 1922, № 130:

3 «Սովետահայ գրականության պատմություն», հ. 1, Երևան, 1961, էջ 65—67:

4 «Խորհրդային Հայաստան», 1922, № 136:

5 «Խորհրդային Հայաստան», 1922, № 158:

6 «Խորհրդային Հայաստան», 1922, № 229:

վին անհարազատ է բանվորական մասսաների ապրումներին»,— պնդում էր Ն. Դարաղյանը և առաջարկում՝ որպես հնություն այն դնել «թանգարաններում, նախամարդկանց կմախքների կողքին»[7]:

Եվ ահա, այն ժամանակ, երբ այդպես հախուռն կերպով ժխտվում էր դասական գրականության ավանդների կարևորությունը, նույնիսկ պիտանիությունը պրոլետարական գեղարվեստի ձևավորման համար, երբ հիմքից մերժվում էին Տերյանն ու Թումանյանը, «Նորք»-ը առաջին իսկ համարում տպագրեց մեր այդ երկու մեծերի բանաստեղծությունները, ավելին՝ հատարակչությանը ներկայացրեց նաև նրանց թարգմանությունները՝ նույնպես դասական հեղինակներից (Խաչանիի քառյակները՝ Հ. Թումանյանի և Ռուսթավելու «Ընձեռնավոր»-ի նախերգանքը՝ Վ. Տերյանի թարգմանությամբ). այն օրերին, երբ «Երեքի դեկլարացիան» անխուսափելիորեն մահվան դատապարտված «մի թոքախտավորի» ախտորոշումն էր գրանցում «ներկա հայ բանաստեղծության» «հիվանդության թերթիկ»-ում, «Նորք»-ը, «օրենսդիր»— Չարենցին հակադրում էր Չարենց-ստեղծագործողին, այդ համեմատությամբ ղգաստության և ռեալականության կոչ անելով ծայրահեղ «հրապարակներով» մոլորվածներին[8]. և, վերջապես, այն պահին, երբ պրոլետարական գրականության վերաբերյալ բարձր կոչերով հրենց ծննդյան էին ազդարարում մի շարք պարբերականներ ու խմբակ-խմբակցություններ, «Նորք»-ը, առանց ավելորդ ռեկլամի, անում էր առավելագույնը հենց այդպիսի գրականության ստեղծելու համար՝ իր էջերում ճաշակավոր պատրաստականությամբ տեղ տալով խորհրդային հայ գրականության առաջին լավագույն նմուշներին...

«Նորք»-ի գրական ելույթները կարելի է բաժանել երեք հիմնական ենթամասերի, որոնք լրացնում են միմյանց և ամբողջական տեսք տալիս հանդեսի «գրական քաղաքականությանը»: Հիմնական տեղը այստեղ բռնում են խորհրդային հայ գրողների երկերի հրապարակումները. «Նորք»-ում են լույս տեսել Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» էպոպեան, «Քամին», «Ասպետական բռնադրյա», «էլեգիա, գրված Վենտիկում», «Ստիննեսի մասին», «Դեպի Ստամբոլ», «Ես և Իլյիչը» և այլ ստեղծագործությունները, Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»-ը, «Պատերազմի դաշտում»-ը,

---

7 Նույն տեղում, № 13:

8 Տե՛ս «Նորք», 1922, գիրք առաջին, էջ 288—299:

«Հաղթական սիրո երգը», Ստ. Զորյանի «Ձմռան գիշեր»-ը, «Մեծատունը», Ա. Բակունցի «Իվան բեյը», «Դրոգաբան Գևոնն», Արաղու «Ընկեր Մուկուչը», «Ապրողները», Մ. Դարբինյանի «Գլուխ պահող կիկոսը», Մ. Մանվելյանի, Ն. Զարյանի, Գ. Մահարու, Վ. Նորենցի, Մ. Արմենի և ուրիշների մի շարք հաջողված գործերը։ «Հներից» «Նորք»-ը հրապարակել է, ինչպես արդեն նշվեց, Վ. Տերյանի բանաստեղծությունները, Հ. Թումանյանի մի քանի ստեղծագործությունները, ինչպես նաև «Անբուն կկուն», «Սասունցի Դավթի» Բ մասի հատվածները, Շիրվանզադեի «Հայր Անուփրիոսի վիշտը», Լեոի «Մանկությանս գրկում» պատկերը։

«Նորք»-ի գնահատման համար կարևոր է այստեղ հիշել, որ վերը նշված գործերից մի քանիսը ուղենշային արժեք ունեցան խորհրդային հայ գրականության ձևավորման ու զարգացման տեսակետից։ Եվ առնվազն տարօրինակ է հնչում «Մուրճ»-ի գրախոսի այն հայտարարությունը, թե՝ «Նորք»-ի շուրջ համախմբված չկան նոր խոսք ասող գրական ուժեր»[9]։ Իհարկե, ինքնին հասկանալի է, որ «դասականների պառնասը» գրոհող մուրճականներին «հրեշավոր հանցանք» էր թվում, երբ «Նորք»-ում կարդում էին Թումանյանի և Տերյանի բանաստեղծությունները (Թումանյանը, ասում էին նրանք, «թեքվում է դեպի միստիցիզմը, դեպի պեսիմիզմի ճահիճը», «այս մեծ և ահավոր ժամին երկչոտորեն փախչում է և իրեն խորթ համարում «վայրի մարդկանց», իսկ Տերյանի երգերը «այժմ, մեր պայքարի օրերին արդեն կորցրել են իրենց կարևորությունը»[10])։ Սա դեռ կարելի է արդարացնել հեղինակների «ակզբունքի» տեսակետից. բայց առանց խմբակայնության և նեղ-կաստայական նկատառումների հաշվի առնելու չի կարելի բացատրել «Նորք»-ի գրական նյութերի հախուռն ժխտումը նրանց կողմից, ըստ որում նաև այնպիսի մի երկի այպանումը, ինչպիսին «Երկիր Նաիրի»-ն է, որը «Մուրճ»-ի նույն գրախոսը ամենաանպատշաճ կերպով համարում էր մի գործ, որ «կարելի է գրել տրամվայի մեջ» կամ ««Կաֆե Նաիրիում» նարդի խաղալիս»[11]։ Ահա թե մինչև ուր էր հասնում աղանդավորությունը գրական քննադատության մարզում։ Մինչդեռ, ինչպես վկայում էր «Խորհրդային Հայաստան»-ի «Պայքար» հավելվածը՝ «Նորք»-ը առա-

---

[9] «Մուրճ», 1923, № 5։

[10] «Մուրճ» 1923, № 4։

[11] Նույն տեղում, № 5։

չին իսկ համարից ջերմ ընդունելություն գտավ ընթերցողների և անկողմնակալ քննադատության կողմից, իսկ նույն «երկիր Նաիրի»-ն համարվեց «միանգամայն նոր խոսք մեր վիպագրության մեջ»[12]:

«Նորք»-ի գրական ելույթների հաջորդ էական մասը գրական-քննադատական նյութերն են: Ե. Չարենցի երկերի, Գ. Աբովի «Դանակը բկին» գրքույկի, Ստ. Զորյանի «Գրադարանի աղջիկը» վիպակի, Ա. Վշտունու «Neo—Orientalia»-ի, Ն. Զարյանի, Գ. Մահարու, Վ. Նորենցի, Արաքսի և այլ հեղինակների ժողովածուներին նվիրված գրախոսականները, ինչպես նաև դասական գրականության վաստակները գնահատող ակնարկները վկայում են հանդեսի միանգամայն ճիշտ դիրքորոշումը, մեծապես գնահատելի դարձնելով ժամանակի անընդունելի գրական նկրտումներից զերծ մնալու նրա հետևողական ձգտումը: Առանձին դեպքերում շեշտը այս կամ այն գրական երկի գեղարվեստական-նության կողմի վրա դնելը պետք է բացատրել գեղագիտական պահանջները ոտնահարելու ակնհայտ դրսևորումներին հակադրվելու այն միտումով, որն այսօր ավելի է ընդգծում հանդեսի գրական դերը 20-ական թվականների գրական պայքարում: Հատկապես դեպքում կարելի է հեշտությամբ ընկնել շփոթմունքի մեջ և պարբերականի այդ արժանիքը համարել... Թերություն, ինչպես տեղի է ունեցել «Սովետահայ գրականության պատմության» առաջին հատորում, ուր «Նորք»-ին դիտողություն է արված, իբր թե, դեպի «զուտ արվեստը» ունեցած նրա մատնանկի հակման համար[13]: Մինչդեռ, ընդհակառակը, «Նորք»-ի վրիպումն այն էր, որ նրա էջերում երբեմն սպրտում էին արվեստի դասակարգայնության ոչ ճիշտ ըմբռնումից ածանցվող այնպիսի գռեհիկ սոցիոլոգիական նկրտումներ, որոնք հետևանք էին ժամանակի հախուռն ձախլիկ պատկերացումների: Նույնիսկ «զտարյուն էսթետ» համարվող այնպիսի մի գրականագետի մոտ, ինչպիսին Յ. Խանդաղյանն էր, այն ժամանակվա թյուրըմբռնումներն ակամա ստացան ցավալիորեն ծայրահեղ դրսևորում: «Կարմիր Արև» դասագրքին նվիրված մի գրախոսության մեջ[14] նշելով, որ նրանում տեղ են գտել նոր սերնդի կրթության համար ոչ օգտակար,

---

12 «Գայքար», 1923, № 2, էջ 23:

13 Տե՛ս «Սովետահայ գրականության պատմություն» հ. 1, էջ 60:

14 Տե՛ս «Նորք», № 5—6, 1926:

ժամանակի ոգուն խորթ, պարզապես հակադաստիարակչական մի շարք նյութեր, ճշմարիտ և դիպուկ շատ օրինակների կողքին քննադատը բերում է հետևյալ փաստարկ-հավաստումը ևս՝ «ի դեպ՝ միանգամայն անտեղի է նաև Մ[illegible]. Նալբանդյանի ոտանավորը՝

Ազատն աստված այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել
Իմ հողանյութ շինվածքին...»:

Թերևս ընդգծված բառերով գրականագետն ուզում էր ղգաստացնե՞լ դատախարակներին, հուշելով նրանց, որ մատաղ սերնդին ղեր ծ պիտի պահել կրոնական նախապաշարումների ամենահետադիմական շորշոփից անգամ... Բայց մեջբերված տողերից հետո նրա արած դատողությունները, առավել ևս այն գնահատականը, որին արժանացնում է քննադատը Նալբանդյանի ամբողջ բանաստեղծական վաստակը, վկայում են, որ նա ուղղակիորեն տուրք էր տալիս նիհիլիստական մտածելակերպին: «Նմանապես մի անմտություն,— ասում էր նա վերոհիշյալ տողերի հասցեին,— որով չի կարելի դատախարակել մեր մատաղ սերունդը»: Մի կողմ թողնենք դեռ այն «մանրուքը», որ պարզապես անտես էր առնվում հայանի բանաստեղծության բուն ոգին ու շունչը և այն պատմական դերը, որ խաղացել էր Նալբանդյանի այդ մարտաշունչ կոչը ժողովրդյան ազատագրական պայքարումների մեջ: Մեր ակնարկած սայթաքման տեսակետից առավել բնորոշ է քննադատի վերջնական եզրակացությունը. «Մ[illegible]. Նալբանդյանը մեր հայրերի-պապերի համար է եղել բանաստեղծ, մեզ համար նա միայն հրապարակախոս է և բանասեր» (էջ 353):

Ահա, եթե կուզեք, «Նորք»-ի վրիպումը գրական հարցերում: Բարեբախտաբար սա և նման մեկ-երկու փաստերը սոսկ նման-օրինակ վրիպումներ էին և հակասում էին հանդեսի ընդհանուր առմամբ ճիշտ ու առողջ այն կողմնորոշմանը, որ ուներ խմբագրությունը թե՛ դասական գրականության ավանդները արժեքավորելիս և թե՛ ժամանակակից երկերի գնահատության մեջ:

Վերջապես, «Նորք»-ի «գրական վարքագծի» լրացուցիչ դրսևորումն են նրա էջերում ամփոփված թարգմանությունները, որոնք նույնպես հաստատում են հանդեսի ընդհանուր, ելակետային սկզբունքները գրական հարցերում: Մ՞ր գրողներից կատարված թարգմանություններին է տեղ տվել «Նորք»-ը: Խաքանիի և

Դուսթավելու մասին արդեն նշվեց։ Մնում է ավելացնել Ա. Բլոկին, Ու. Ուիտմենին, Էմ. Վերհարնին, Ս. Եսենինին, գերմանական հեղափոխական գրող Կուրտ Կլեբերին, և պարզ կդառնա Հանդեսի նախասիրությունների ոլորտը գրական և էսթետիկական-ճանաչողական այնպիսի մի կարևոր բնագավառում, ինչպիսին գեղարվեստական թարգմանությունն է։

* * *

Խմբագրության խոստման համաձայն՝ «Նորք»-ը մոռացության չտվեց հայոց պատմության տարբեր շրջանների լուսաբանության խնդիրը, որը սերտորեն առնչվում էր Հանդեսի գիտական-հասարակական նպատակադրմանը։ Ու նաև իր գործունեության այդ կողմով է, որ «Նորք»-ը տեսական պարբերականի համարումն ուներ այն ժամանակ և այսօր էլ չի կորցրել իր հետաքրքրությունն այդ խոկ առումով։ Եվ իսկապես, հայոց պատմության և հասարակական մտքի հետազոտողը չի կարող անտարբեր անցնել «Նորք»-ում տպագրված այնպիսի ուսումնասիրությունների և վավերագրերի կողքով, ինչպիսիք են Թադ. Ավդալբեկյանի «Բահրան ու մուլքը XVII և XVIII դարերում» (գիրք երկրորդ, 1923 թ.), «Երկրագործական հավելյալ արդյունքի նորման XVII և XVIII դարերում և XIX-ի սկզբներում» (գիրք № 3, 1924 թ.), Ս. Կասյանի «Ռուսական ինքնակալության քաղաքականությունը Անդրկովկասում» (նույն տեղում), Եր. Շահազիզի՝ «Մ. Նալբանդյանի բանտից գրած նամակները» (գիրք № 3, 1923, գիրք № 4, 1924, գիրք № 5—6, 1925) և Աշ. Հովհաննիսյանի՝ «Ֆր. Էնգելսի նամակը «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն թարգմանության նախաբանի փոխարեն» հրապարակումները (գիրք № 4, 1924), Աշխարհբեգի «Քարե դարը Հայաստանում» (գիրք № 5—6, 1925), Ս. Կարինյանի «Հին Թուրքիան և թուրքահայերը» հոդվածները (գիրք առաջին և երկրորդ, 1926) և այլ նյութեր։

Ճիշտ է, դրանցում արտահայտված ոչ բոլոր տեսակետներն ու ելակետներն են ընդունելի և հիմնավորված թվում այսօր. մի շարք դեպքերում հեղինակները որոշակի տուրք են տվել ժամանակի «ձախ» ըմբռնումներին ու քաղաքական կոնյուկտուրային. գիտության հետագա զարգացումը կուտակել է նոր փաստեր, ՍՄԿԿ XX և XXII համագումարների պատմական որոշումներից հետո հասա-

քաղաքականության, այդ թվում և հայ ժողովրդի պատմության մի շարք պրոբլեմներ ստացել են նոր մեկնաբանություններ, ճշտվել են շատ թյուր ու քոնապրոսիկ տեսակետներ... Այնպես որ՝ «Նորք»-ի, ինչպես և յուրաքանչյուր պարբերականի գնահատության ժամանակ ևս ամենևին էլ ոչ երկրորդական նշանակություն ունի պատմականության չափանիշի կիրառումը։ Ինքնին հասկանալի է, իհարկե, որ այդպես վարվել՝ երբեք էլ չի նշանակում արդարացնել ամեն ինչ և ամենքին։ Այնուամենայնիվ, «Նորք»-ի՝ նույնիսկ սխալներ պարունակող հոդվածները օգնում են մեզ պատկերացնելու դիտական մտքի և հասարակական ըմբռնումների այն օրերի մակարդակը, դրանով իսկ ճնռք բերելով պատմա-ճանաչողական արժեք։

Ուշագրավ են «Մոտիկ անցյալից» խորագրի ներքո ամփոփված նյութերը (հուշագրություններ, վավերագրեր, մեկնաբանություններ և այլն), որոնք վերաբերում են XX դարի առաջին երկու տասնամյակների հասարակական-քաղաքական կացությանը Անդրկովկասում, հատկապես Հայաստանում, ինչպես և հեղափոխական պայքարի առանձին դրվագներին, ազգային կուսակցությունների վարքագծին՝ ժողովրդի համար բախտորոշ պահերին։ Այս բաժնում են տպագրվել Ասատուր Կախոյանի (Բանվոր Խեչո) «Լոռվա հեղափոխականն անցյալից» հուշագրությունը, Եր. Մելիքի «Իսահակ Լալայան» կենսագրական նյութերը, «Հնչակյանների հարումը ռուսական հեղափոխության ու սոցիալիզմին», «Նժդեհի դեկուցումը Լեռնահայաստանի անկման պատճառների մասին» հաղորդումը, «Մշակ» լրագրի արխիվից հանված՝ «Հայ սոցիալիստական գաղութը Ժնևում (տեղական ուսանողության կյանքից)» և «ՌՍԴ (բ) Կ Լոնդոնի համագումարը» նյութերը, «Լենինը և հայկական հարցը», «Դաշնակցական Հայաստանի գործերից» փաստաթղթերը, Մոսկվայի նահանգական ժանդարմական վարչության պետին ուղղված Թիֆլիսի ժանդարմական վարչության 1903 թ. փետրվարի 12-ի զեկույցը «Հայերի հեղափոխական շարժումների մասին», «Վարդան Դոլուշյան և իր շրջանը» հին նամակների շարքը, «Հայ բանվոր հեղափոխականների «Ասոցիացիայի» տեղը հայ բանվորական շարժման պատմության մեջ» և վավերագրական բնույթի այլ հրապարակումներ՝ համապատասխան պարզաբանումներով։

Խմբագրությունն այս կարգի նյութերի այնպիսի ընտրություն էր անում, որ մի կողմից՝ փաստական հիմք էր տալիս

...«մոռիկ անցյալի» պատմությունն ուսումնասիրողին և մյուս կողմից՝ յուրովսանն լրացնում-ամբողջացնում էր իր իսկ հանդեսի էջերում լույս տեսնող հասարակական-քաղաքական բովանդակություն ունեցող ելույթները, մասնավորապես ազգային կուսակցությունների, դաշնակցության դեմ ուղղված բուռն քննադատությունը։ Ի դեպ՝ «Նորք»-ի վերջին գրքում տպագրված Աշ. Հովհաննիսյանի «Դաշնակցության սոցիալական ծագումը» հոդվածից հետո, որը հեղինակի անտիպ աշխատության լոկ մի հատվածն էր և հրապարակվել էր դիսկուսիոն կարգով, նրա բնութագրումներին անհամաձայն քննադատներն իրենց ընդդիմախոսության մեջ հասան այնպիսի մոլեգնության, որ անտեսում-ժխտում էին ոչ միայն Աշ. Հովհաննիսյանի անցյալ հեղափոխական-գիտական վաստակը, այլև «Նորք»-ի դերը առհասարակ, և մասնավորապես հանդեսի հետևողական ելույթները դաշնակցության դեմ։ Հախուռն ժխտման կիրքն այնտեղ էր հասել, որ «Նորք»-ը նույնացվում էր, ոչ ավելի, ոչ պակաս... էջմիածնի միաբանության օրգան «Արարատ» ամսագրի հետ[15]։ Ու երբ հիմա անդրադառնում ես այդ ամենին, չես կարող ակամա չզարմանալ, թե «Նորք»-ը դադարելուց հետո հանդես եկած այդ քննադատներն ինչպե՞ս էին կարողանում անգիտանալ, որ այդ հանդեսի էջերում են տպագրվել Ալ. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի, Ա. Մռավյանի, Ա. Կարինյանի, Ս. Կասյանի ու այլ ականավոր բոլշևիկների հրապարակախոսական կամ գիտական հոդվածները, Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Ա. Բակունցի և խորհրդային մյուս ականավոր գրողների նորաշունչ ստեղծագործությունները, որ «Նորք»-ում պետեղվել են մարքսլենինյան ուսմունքի մասսայականացմանը նվիրված բազմաթիվ նյութեր, որ նրա էջերում մերկացվել է կրոնական գաղափարախանությունը, որ, վերջապես, այդ հանդեսում կրքոտ պայքար է մղվել դաշնակցության դեմ[16]։

Եվ այնուհետև՝ չէ՞ որ այս ամենին զուգընթաց «Նորք»-ը

---

15 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1928, № 154։

16 Տե՛ս, օրինակ, Աշ. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, («Նորք», գիրք երկրորդ, 1923), նույնի «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը» (գիրք երրորդ, 1923), Հ. Ազատյան, Խորհրդային իշխանությունը և միջազգային կապիտալը (դաշնակցության քննադատության առթիվ) (1926, գիրք առաջին), Ե. Ամիրխանյան, Քաղաքական կացությունը Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, (1926, գիրք երկրորդ) և այլն։

իր ելույթներով ակտիվորեն մասնակցում էր սոցիալիստական շինարարության հարցերի քննարկմանը, միաժամանակ նպաստելով բնակչության լայն խավերում տարվող քաղաքական-բացատրական աշխատանքների հաջող ծավալմանը։ Նոր տնտեսական քաղաքականության պարզաբանում, ռոդգման և կոոպերացիայի տնտեսության պլանավորման և գյուղում կատարվող սոցիալիստական հեղափոխության խնդիրներ, արդյունաբերության վարդացման ուղիների լուսաբանություն, Անդրֆեդերացիայի և ՍՍՀՄ ստեղծման պատմական նշանակության բազմակողմանի գնահատում,— ահա մի քանիսն այն կարևոր պրոբլեմներից, որ արծածվել են հանդեսի էջերում՝ սոցիալիստական շինարարությանը նվիրված տեսական և հրապարակախոսական-պրոպագանդիստական հոդվածներում[17]։

Սրան պիտի ավելացնել նաև Սովետական Միության միջազգային դրության, արտաքին քաղաքականության, միջազգային բանվորական շարժման, գործադուլային պայքարի և հարակից այլ խնդիրների լուսաբանումը, որով ավելի ամբողջական ու ավարտուն է դառնում հանդեսի քաղաքական դիրքորոշման ու հասարակական կոչման նկարագիրը[18]։

Բազմազան ու ընդգրկող էր «Նորք»-ի գրախոսության բաժինը՝ թե՛ իր բնույթով և թե՛ թեմատիկայի ու պրոբլեմատիկայի տեսակետից. հանդեսը պարբերաբար անդրադառնում և պատշաճ ուշադրություն էր հատկացնում ինչպես գրական, գեղագիտական հարցերին՝ սկսած հնագույն գրողների երկերից, մինչև «երեկ

---

17 Տե՛ս, օրինակ, Ա. Մռավյան, *Խորհրդային հանրապետությունների Միության մասին*, Հ. Ագաթյան, *Խորհրդային իշխանության հին և նոր տնտեսական քաղաքականությունը*, Գ. Գևորգյան, *Էլեկտրիֆիկացիայի խնդիրը Խորհրդային Ռուսաստանում ու մեզ մոտ* («Նորք» 1922, գիրք առաջին), Հ. Տեր-Հարությունյան, *Մեր խնդիրները և ռոդգոմը*, (գիրք № 3, 1923), Ս. Համբարձումյան, *Աշխատանքը գյուղում*, Ս. Այվազյան, *Տարերքից դեպի պլան*, Ա. Մանանեդյան, *Արդյունաբերության ուղիները Հայաստանում*, (գիրք № 5—6, 1925), Աշ. Հովհաննիսյան, *Մեր հեռանկարները և լենինիզմը (14-րդ համագումարի ընդունած որոշումների առթիվ)*, Ա. Քարամյան, *Սոցիալիզմի ճանապարհին* (1926, գիրք առաջին) և այլն։

18 Տե՛ս, օրինակ, Ա. Մռավյան, *Լոզանի կոնֆերենցիան*, Հ. Ագաթյան, *Ռուրի գրավումը և նրա դասակարգային ատաոը*, (գիրք երկրորդ, 1923), նույնի՝ «*Խորհրդային իշխանությունը և միջազգային կապիտալը*» (1926, գիրք առաջին), նույնի՝ «*Տնտեսական ճգնաժամը և ընդհանուր գործադուլը Անգլիայում*» (1926, գիրք երկրորդ), Աշ. Հովհաննիսյան, *Ամերիկահայ կոմունիստական շարժումը*, (գիրք № 5—6, 1925) և այլն։

լույս տեսած» գրքերն ու գրքույկները, այնպես էլ պատմության, տնտեսագիտության, հասարակագիտության տարբեր բնագավառներին վերաբերող գրականության վերլուծությանը՝ հաճախակի տալով ընդարձակ անոտացիա-նկարագրություններ, անելով մեթոդոլոգիական բնույթի դիտողություններ, քաղաքական ու տնտեսագիտական տերմինաբանության վերաբերող ճշտումներ՝ մասնավորապես Կ. Մարքսի աշխատությունների հայերեն թարգմանությունների առիթով։ Հանդեսի ութ գրքերում զետեղված է մոտ 70 գրախոսական։ Հատկանշական է, որ խմբագրությունը չի սահմանափակվել սոսկ հայերեն հրատարակություններին անդրադառնալով, այլ հաճախակի տվել է նաև ռուսերեն և այլ լեզուներով (օրինակ՝ վրացերեն) լույս տեսած գրքերին կամ ժողովածուներին նվիրված անոտացիոն-ներկայացնող բնույթի գրախոսականներ՝ նպատակ ունենալով ընդլայնելու իր ընթերցողների մտահորիզոնը։

Եվ վերջապես, «Նորք»-ի էլույթների կողքով անտարբեր չի կարող անցնել խորհրդային հայ պարբերական մամուլի պատմաբանը։ Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ այս հանդեսն ինքը հենց կարևոր օղակներից մեկն է այդ մամուլի ընդհանուր շղթայի մեջ, այլև այն առումով, որ «Նորք»-ը զգալի նյութ է մատուցում Հայաստանում հրատարակված մամուլի մի շարք օրգանների պատմության համար։ Առանձին պարբերականների նոր լույս տեսած համարներին նվիրված փոքրիկ տեսությունները ու անոտացիաները արժեքավոր են թե՛ մամուլի խնդիրների՝ այն ժամանակվա ըմբռնումները պատկերացնելու և թե՛ տվյալ պարբերականի անցած ուղու նկարագրության տեսակետից։ Այդ բնույթի նյութերում «Նորք»-ը հաղորդում է այս կամ այն պարբերականի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ (ե՛րբ է հիմնադրվել, ի՛նչ պարբերականություն է ունեցել, ի՛նչ նպատակների է հետամուտ եղել և այլն), ուշագրավ դիտողություններ է անում առանձին նյութերի մասին, հայտնում է արժեքավոր նկատառումներ, անում գործնական առաջարկներ։ Այս ամենն էլ, ահա, «Նորք»-ը դարձնում է 20-ական թվականներին Հայաստանում լույս տեսած պարբերական մամուլի ուսումնասիրման աղբյուրներից մեկը։ «Նորքի» առաջին իսկ գրքում զետեղված է ընդարձակ գրախոսություն «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» հանդեսի Ա և Բ

գրքերի մասին[19]: Ուշագրավ տվյալներ և արժեքավոր դիտողություններ կան «Ազդարար վիճակագրական կենտրոնական վարչության», «Գյուղատնտեսական կյանք», «Հայաստանի կոոպերացիա», «Экономический Вестник ССР Армении» և այլ պարբերականներին նվիրված տեսությունների մեջ[20]: Գրականության զարգացման գործում խորհրդային հայ պարբերական մամուլին վերապահված դերի ճիշտ ըմբռնման արդյունք էր այն ընդհանուր գնահատականը, որ տրված է «Վերելք» հանդեսի №№ 1 և 2—3-ին նվիրված գրախոսության մեջ: Այստեղ բնութագրված են գրական ուղղություն ունեցող պարբերականներից յուրաքանչյուրի առջև դրված կոնկրետ խնդիրները, ելնելով ընթերցող այն շրջանների մակարդակից ու պահանջներից, որով և ըստ էության պայմանավորվում էր այս կամ այն հանդեսի թե՛ բովանդակությունը, թե՛ նյութերի մատուցման ձևը և թե՛ գրական-հասարակական պրոբլեմատիկայի արծարծման յուրահատկությունը: Դիպուկ է նկատված, մասնավորապես, հաջորդականության այն շղթան, որ ի մի էր ձուլում և առավել նպատակասլաց դարձնում մամուլի ջանքերը գեղագիտական ու քաղաքական դաստիարակության ասպարեզում. «Պատկումից»-դեպի «Վերելք» և «Վերելք»-ից դեպի «Նորք»,— ահա այն գրական ուղին, որ գալիս է հաջորդական ձևով խորացնելու և զարգացնելու կոմունիստական գաղափարախոսությունը մեր երկրի աշխատավորության և աճող սերնդի գիտակցության մեջ»[21]:

Ի դեպ՝ «Standart»-ում[22] Ե. Չարենցը «Վերելք»-ի նույն համարներին նվիրված գրախոսականում չի համաձայնում այս տարբերակմանը և որոշ արհամարհանքով է արտահայտվում «Նորք»-ի գիտական բնույթի վերաբերմամբ՝ անտեսելով այն իրոք խոշոր տարբերությունը, որ առկա էր այս տեսակետից «Նորք»-ի և «Վերելք»-ի միջև ու ամեն ինչ վերագրելով «Նորք»-ի դրախոսի

---

19 «Նորք», գիրք առաջին, 1922, № 287:

20 «Նորք», գիրք չորրորդ, 1924, էջ 312—314, 314—315, 315—316:

21 «Նորք», գիրք չորրորդ, 1924, էջ 321:

22 «Standart»-ի առաջին և միակ համարը հրատարակել են Ե. Չարենցը, Կ. Հայաբյանը և Մ. Մազմանյանը Մոսկվայում, 1924 թ. մայիսին: Ի դեպ՝ Մ. Մազմանյանը հետագայում վերհիշում է. «Չարենցը «Ատանդաբաժ» մի օրինակը տվել էր Ալեքսանդր Մյասնիկյանին, որ այդ օրերին գտնվում էր Մոսկվայում: Մյասնիկյանը կարդացել էր ու մի լավ քննադատել մեր ամսագիրը իր անընդունելի գաղափարների համար (խոսքը գեղագիտական նկատա-

«տեղասիրական զգացմունքին»[23]։ Չարենցի փաստարկումներից մեկն էլ այն էր, թե՝ «ինչպես գեղարվեստական, այնպես էլ մյուս բաժինների երկու այդ օրգանների աշխատակիցները նույնն են, նյութերը նույնը, գրելաձևը նույնը»։ Երկու հանդեսների նյութերի համադրումը վկայում է սակայն, որ, ինչպես ճիշտ կերպով նկատել է Չարենցի երկերի ժողովածուն կազմող և հմուտ ծանոթագրող գրականագետ Ա. Զաքարյանը՝ Չարենցը սխալվում էր «Նորք» հանդեսը գնահատելիս[24]։

Այլ հարց է, իհարկե, որ «Նորք»-ի դիտական, բառիս լավագույն իմաստով ակադեմիական բնույթը չէր խանդարում, որ նրա էջերում տեղ գտնեին նաև հրապարակախոսական շնչով տոգորված ելույթներ՝ հատկապես հասարակական-քաղաքական խնդիրների քննարկման ժամանակ. բայց սա արդեն ուղղակիորեն բխում էր հանդեսի կոչումից (չպետք է մոռանալ, որ «Նորք»-ը համարվում էր «գրական, գիտական և քաղաքական» հանդես)։ Բացի այդ, ակնհայտ հրապարակախոսական շեշտվածություն ունեին Ալ. Մյասնիկյանի, Ա. Մռավյանի, Աշ. Հովհաննիսյանի, Հ. Ազատյանի և կուսակցության մյուս ղեկավար գործիչների՝ նաև «Նորք»-ում ունեցած ելույթները, և դա ինքնին հասկանալի է։ Միանգամայն ավելորդ ենք համարում այստեղ այս իրողության հաստատումը համապատասխան օրինակներով ու քաղվածքներով, քանի որ դա ավելի շուտ տվյալ գործիչների ժառանգության ուսումնասիրողի պարտականությունն է։ Բավարարվենք միայն այն հավաստումով, որ խմբագրությունը կարողացել է նպատակասլաց կերպով օգտվել նրանց աշխատակցությունից՝ դրանով իսկ թարմ ապատկելով հանդեսի հասարակական-քաղաքական կշիռը։

Ինչ վերաբերում է Ե. Չարենցի վերոհիշյալ նկատողությանը, ապա այն սոսկ հպանցիկ մի խոսք պիտի համարել։ «Նորք»-ի գնահատման համար առավել նշանակալից են այն սերտ կապերը, որ ունեցել է նա հանդեսի հետ՝ թե՛ ստեղծագործողների և թե՛ գոոծ-

---

ոումների մասին է—Հ. Ֆ.) և խորհուրդ էր տվել ոչնչացնել բոլոր օրինակները։ Չարենցը տխուր վերադարձավ ու հայտնեց մեր անելիքների մասին։ Հենց նույն երեկոյան, հուլիսի 1-ին, վառեցինք մեր հանրակացարանի խոհանոցի մեծ պիտան ու կրակին տվինք այնքան սիրով գլուխ բերած մեր «Ստանդարդը» («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», 1961, էջ 69)։

23 Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. VI, Երևան, 1968, էջ 112։

24 Նույն տեղում, էջ 627։

նականապես։ «Նորք»-ի անդրանիկ համարը բացվում է «Երկիր Նաիրի» վեպով։ Դեռևս հանդեսը լույս տեսնելուց առաջ նրա քարտուղար Մ. Գևորգյանին Մոսկվայից գրած նամակում պոետը հետաքրքրվում էր. «Ի՞նչ է անում «Նորքը», ե՞րբ է լույս տեսնելու։ Ի՞նչ նոր նյութեր են ստացվել»[25]։ Նման վկայություններ շատ կան Ե. Չարենցի երկերի ժողովածուի VI հատորում ամփոփված նամակներում։ Չարենցն առաջարկում էր իրեն «ձևակերպել» հանդեսի «կորեսպոնդենտ» ամսավճարով։ Մոսկվայում այդ մասին նա խոսել էր «Նորք»-ի խմբագիրներից Ա. Մռավյանի հետ։ Ամենայն հավանականությամբ՝ ֆինանսական ձևակերպումների հետ կապված դժվարությունների հետևանքով Ե. Չարենցը պաշտոնապես չի համարվել «Նորք»-ի թղթակիցը, բայց եղել է հանդեսի ամենաակտիվ աշխատակիցներից մեկը։ «Նորք»-ի յուրաքանչյուր համարում, բացի վերջին գրքից, Չարենցի անվանը հանդիպում ենք մեկից ավելի անգամներ։ Իր ստեղծագործություններից բացի նա այստեղ տպագրել է մի շարք թարգմանություններ ու դրախոսականներ, իսկ 1926 թ. աշխատել է որպես «Նորք»-ի պատասխանատու քարտուղար՝ միաժամանակ լինելով խմբագրական կոլեգիայի անդամ։

* * *

«Նորք»-ը հրատարակվում էր Աշ. Հովհաննիսյանի և Աս. Մռավյանի խմբագրությամբ։ 1926 թ. առաջին գրքում խմբագրական կոլեգիայի մեջ հիշատակված են նաև Ա. Կարինյանն ու Ե. Չարենցը։ Նույն թվականի երկրորդ գրքում իբրև պատասխանատու խմբագիր նշված է միայն Աշ. Հովհաննիսյանը, իսկ վերջին՝ 1928 թվականի համարն ունի «Խմբագրական կոլեգիա» ստորագրությունը։ Առաջին գրքի խմբագրմանը մասնակցել է նաև Պ. Մակինցյանը։

Ինչպես վկայում են ժամանակակիցները և մամուլից հայտնի մի շարք նյութեր՝ «Նորք»-ի խմբագրման պարտականությունն ընկած է եղել հիմնականում Աշ. Հովհաննիսյանի վրա. զբաղված լինելով կուսակցական պատասխանատու աշխատանքով, նա, այնուամենայնիվ, ղգալի ջանք է նվիրել հանդեսի հրատարակ-

25 Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 389։

ման գործին: Եվ պատահական չէ ամենևին, որ ինչպես հանդեսի գոյատևման օրերին, այնպես էլ հետագայում «Նորք»-ը ամենից շատ կապվել է Աշ. Հովհաննիսյանի անվան հետ: Ըստ որում՝ այդպես վարվել են թե՛ «Նորք»-ը դրվատողները և թե՛ առանձնապես հանդեսի ա՛յն քննադատները, ովքեր հետադարձ հայացք ձգելով ամբրերականի վրա՝ «դնահատում» էին նրա պարունակությունը անհատի պաշտամունքի շրջանում հետզհետե կարծրացող դոգմատիկ չափ ու կշռով: Նրանք օբյեկտիվ ու անաչառ չեն եղել իրենց որակումների մեջ, քանի որ անտեսելով հանդեսի կոնկրետ բովանդակությունը, հանիրավի ամբաստանել են անհատ հեղինակներին կամ խմբագրության անդամներին: Այդպիսի մոտեցումից խեղաթյուրված է ներկայացվել «Նորք»-ը: Մինչդեռ, ինչպես փորձեցինք ցույց տալ ընդհանուր գծերով, այս հանդեսը եղել է ժամանակի հետաքրքիր ու ծանրակշիռ պարբերականներից մեկը և թերություններով ու վրիպումներով հանդերձ՝ իր պատշաճ տեղն ունի խորհրդային հայ մամուլի պատմության մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի ե ս տ ի տ ու տ ի կ ո ղ մ ի ց 7

Վ. Ա. Թիլոյան— *Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան* 9

Ա. Ն. Սարինյան— *Հայ պրականության պատմության մեթոդարանության մի քանի հարցեր* 29

Հ. Մ. Բարթիկյան— *Դրիզոր Մադիստրոսի քաղաքական կոմմնորոշման հարցի շուրջը* 63

Ս. Գ. Բարխուդարյան— *Սոցիալ տնտեսական բովանդակության արձանագրություններ և դիտողություններ* 73

Ա. Ն. Մնացականյան— *Միջնադարյան սիրո երգերի նորահայտ անդրանիկ ժողովածուն և հայերենի հարցը* 96

Հ. Գ. Փափազյան— *Հայաբնակների իրավական պատասխանության հարցը Արևելյան Հայաստանում 16—18-րդ դդ. և շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակը* 127

Վ. Ա. Հակոբյան— *Մաշտոցի անվան մատենադարանի № 1496 ձեռագրի ժամանակի և հեղինակի հարցի շուրջը* 137

Վ. Ա. Թիլոյան— *Էջմիածնի վանական տնտեսությունը 19-րդ դարի սկզբին* 153

Վ. Ջ. Ղազարյան— *Աբովյանի և Բելինսկու գաղափարական առնչությունների հարցի շուրջը* 180

Մայիս Ավդալբեկյան— *Հայ հին պրականությունը Միքայել Նալբանդյանի դնահատությամբ* 193

Ա. Ղանալանյան— *Բելինսկու, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու և Նալբանդյանի բանագիտական հայացքների ընդհանրությունը* 211

Ս. Դարոնյան— *Մ. Նալբանդյանի պրական ստեղծագործության մի քանի հարցերի մասին* 228

Մ. Հ. Մխիթարյան— *Էջեր արևելահայ պարբերական մամուլի դրաբննության պատմությունից* 254

Ն. Բ. Սահուխանյան— *Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 20-րդ դ. առաջին քառամյակի հայ պատմա-հասարակական մտքի դնահատմամբ* 298

Հ. Հ. Ֆելիքյան— *«Նորք» հանդեսը (ընդհանուր բնութագրություն)* . . 323

Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Կազմը՝ ՅՈՒ. Հ. ՍՌՍԱՔԵԼՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Ա. Ա. ՂԱՓԼԱՆՅԱՆ

ՎԴ 03453 Պատվեր 1690 Տպաքանակ 7000
ԽՀԽ 1207, Հրատ. 3152։ Հանձնված է արտադրության 30/VII 1969 թ.։Ստորագրված է տպագրության 22/II 1971 թ., տպագր. 21,29 մամուլ+ներդիր, հրատ. 17,22 մամուլ։ Թուղթ № 1, 60×90¹/₁₆։ Գինը 1 ռ. 54 կոպ.։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220046355

ЦЕНА
А 11
46355